Antares
PER ASPERA AD ASTRA
Издательство «Текст»

CANCER

COLOSSE

Жизнь одного
Жизнь многих

Тайны сердца
Тайны души

Человеческий документ

HENRY MILLER

թվայնացրել է 1915.info կայքը

HENRY MILLER

TROPIC OF CANCER

ԱՐԳԵԼՎԱԾ ԳՐՔԵՐ ԱՐԳԵԼՎԱԾ ԳՐՔԵՐ ԱՐԳԵԼ

ՀԵՆՐԻ ՄԻԼԵՐ

ԽԵՑԳԵՏՆԻ ԱՐԵՎԱԴԱՐՁԸ

ԱՐԳԵԼՎԱԾ ԳՐՔԵՐ ԱՐԳԵԼՎԱԾ ԳՐ

Երևան
«Անտարես»
2012

թվայնացրել է 1915.info կայքը

ՀՏԴ 820 (73) - 31 Միլեր
ԳՄԴ 84.7 ԱՄՆ - 44
Մ 681

ՋԱՎԵՆ ԲՈՅԱՋՅԱՆԻ
թարգմանությամբ
և ծանոթագրություններով

Միլեր Հենրի
Մ681 Խեցգետնի արևադարձը: Վեպ/Հենրի Միլեր; անգլերենից թարգմանեց Ջ. Բոյաջյանը:- Եր.: «Անտարես», 2012.- 352 էջ:

Արդի գրականության անկյունաքարերից մեկը հռչակված «Խեցգետնի արևադարձը»՝ Հենրի Միլերի ինքնակենսագրական վեպը, որը պատմում է ամերիկացի տարագիր գրողի փարիզյան կյանքի ու սեքսուալ արկածների մասին, անպատշաճ համարվելով՝ 30 տարի արգելված է եղել նրա հայրենիքում: Միայն դատարանի պատմական վճիռը, որ փոխեց ամերիկյան գրաքննության չափանիշները՝ ազատության նոր դարագլուխ բացելով գրականության մեջ, թույլ տվեց հրապարակել այս անմոռանալի ինքնախոստովանանքը՝ երբևէ գրված թերևս ամենաանկեղծ գիրքը: Միլերի գլուխգործոցը, թոթափելով տաբուները, ոչ միայն ընդմիշտ փոխեց ամերիկյան գրականության դեմքը, այլև դարձավ նրա նշանակալից ավանդը՝ ի նպաստ ազատ խոսքի:

Ныне провозглашенный краеугольным камнем современной литературы, "Тропик Рака", автобиографическая проза Генри Миллера о жизни и сексуальных похождениях американского писателя экспатрианта в Париже, в течение 30 лет была запрещена в его стране. Только историческое постановление суда, которое пересмотрело стандарты американской цензуры, провозгласив новую эру свободы в литературе, позволило опубликовать этот незабываемый роман - исповедь, возможно, самую искреннюю книгу, написанную когда-либо. Шедевр Миллера, разрушив табу, стал не только актом, которому суждено было изменить лицо американской литерауры, но и его значительным вкладом в пользу свободы слова.

Now hailed as a cornerstone of modern literature, *Tropic of Cancer*, this autobiographical fiction about Henry Miller's life and bawdy adventures as an expatriate American writer in Paris, was deemed obscene and banned from publication in his country for 30 years. Only a historic court ruling that changed American censorship standards, ushering in a new era of freedom in literature, permitted the publication of this unforgettable novel of self-confession, maybe the most honest book ever written. Miller's masterpiece, shattering every taboo, is now considered not only an act that would forever change the face of American literature but also his significant contribution to the cause of free speech.

ISBN 978-9939-51-389-8 (կոշտ)
ISBN 978-9939-51-907-4 (փափուկ)

Originally published under the title TROPIC OF CANCER
Copyright ©1934 by Henry Miller. The Estate of Henry Miller. All rights reserved.
© Ջ. Բոյաջյան, թարգմանության և ծանոթագրությունների համար, 2012
© «Անտարես», 2012

թվայնացրել է 1915.info կայքը

ՆԱԽԱԲԱՆ

Հենրի Միլերը Փարիզ եկավ 1930-ի մարտի 4-ին, որպեսզի փորձի հաջողակ գրող դառնալ[1]: Նա տասը դոլար ուներ գրպանում (հին ընկերը՝ Էմիլ Շնեյդքն էր պարտքով տվել), մի անտուկ կոպեյում (դերձակ հոր կողմից), որոնք, գիտեր, կարող է գրավ դնել, երբ փողը վերջանա, և երկու վեպի պատճենահանված օրինակ, որոնք գրել էր Նյու Յորքում և հույս ուներ վերաշխակել. «Մողոքը» (իր առաջին ամուսնության ու «Ուեսթերն Յունիոն»-ում աշխատելու մասին) և «Գժված աքլորը» (Ջուն Միլերի հետ երկրորդ ամուսնության ու սրա լեսբիական սիրավեպի մասին, որը տանջել էր նրան[2]): Թեև Միլերը լրջորեն գրում էր արդեն վեց տարի և հրապարակել էր մի քանի փոքրիկ ստեղծագործություն, դեռ վեպ լույս չէր ընծայել, չէր իրագործել «աշխատավոր դասի Պրուստը», բրուքլինցի Պրուստը դառնալու իր երազանքը[3]: Կինը՝ Ջունը, հավատացրել էր նրան, թե Փարիզում կարող է իր արվեստը հղկել և ֆինանսական հաջողության հասնել:

Մինչեռ իրական պատճառը, որ Ջունին դրդել էր համոզել ամուսնուն թողնելու Նյու Յորքը, սա էր. նա բեռ էր դարձել կնոջ վզին, և Ջունն ուզում էր (միամտաբար) նրան դուրս մղել իր կյանքից, քանի դեռ հեռատեսը էր իրենց երկուսի համար փող աշխատելու իր ծրագրերից մեկին: Ջունը կապվել էր մի տարեց ու հարուստ երկրպագուի հետ, որն անցողակի հայտնվում է «Խեցգետնի արևադարձում» որպես «միգարը բերանին մի վիժվածք»՝ Միլերի տան դիմաց կանգնած հետևելով, թե նա ինչպես է մեկնում Եվրոպա:

Թեև Ջունը հորդորել էր Միլերին գրող դառնալու համար հրաժարվել «Ուեսթերն Յունիոն»-ի աշխատանքից և զորավիգ էր նրան՝ տարբեր գործեր անելով որպես վարձու պարընկերուհի, մատուցողուհի և

թվայնացրել է 1915.info կայքը

հասարակաց կին, կորցրել էր հավատն ամուսնու նկատմամբ: Հակառակ կնոջ թափած ջանքերին՝ ոչ մի նշան չկար, որ Միլերը դառնում է այն, ինչ Ջունը կարծում էր, թե կդառնա՝ մի գրող, որը կանմահացներ Ջունին իր գործերում, կփառաբաներ նրա ինքնազոհությունը, կիրամցներ աշխարհին իբրև կիսաառասպելային ճակատագրական կնոջ, ինչպիսին նա համարում էր իրեն, դոստոևսկիական հերոսուհի, որը Նյու Յորքի փողոցներն էր չափչփում՝ արկած որոնելով[4]:

Միլերի կյանքը Ջունի հետ ձևավորել է նրա ամբողջ հասուն արձակի հենքը: 1927-ի մայիսի 21-ին, Միլերը, խոր հուսահատության մատնված, քանի որ Ջունը սիրուհու՝ Ջին Կրոնսկու հետ, մեկնել էր Փարիզ, մի խոշոր գրական գործ ուրվագծեց, որը պետք է ներկայացներ իր և Ջունի հասարեղ կյանքի հոգեվարքը: Թեպետ Ջունը կապ էր պահպանում իրեն հարուկ անկանոն եղանակով՝ էյֆելյան աշրաբակի, Հաղթական կամարի և Ասրվածամոր տաճարի մի քանի բացիկ ուղարկելով, նա չէր պատասխանում Միլերի նամակներին, որտեղ վերջինս աղաչում էր վերադառնալ և զգում, որ եթե իր ամուսնությունն ավարտին չի էլ հասել, այնմս երբեք առաջվանը չի լինի:

Մենությունից հուսակրտր և խանդից խենթացած՝ Միլերը Ջունուսում նպրեց Ջբոսայգիների վարչության իր աշխատասենյակի գրամեքենայի առաջ՝ ուրվագրելու մի վեպ, որը կպատմեր իր և Ջունի հասարեղ կյանքի ու նրա դավաճանության մասին: Միլերը 36 տարեկան էր և ապրում էր ծնողների հետ, քանի որ ի վիճակի չէր մենակ իր ապրուսրը հոգալ: Ջունի միրքն էր, թե նա կարող է գրող դառնալ: Չնայած ճշմարրությունն այն էր, որ Միլերը ինքն էլ միշտ ուզեցել էր գրող դառնալ, նա «վախենում էր». չէր կարծում, թե ընդունակ է: Ոչ հարուսր էր, ոչ արրոնյալ, ոչ էլ քոլեջ էր ավարրել, թեև արրակարգ կարդացած էր. մի կարճ շրջան հաճախել էր Նյու Յորքի Սիթի քոլեջը, բայց շուրով ուսումը թողել՝ Սփենսերի «Դիցանուշների թագուհու» հետ ունեցած «անհուսալի բախումից» հետո «ուսումնական դասընթացից զզված»[5]: Որպես աշխարհավոր դասակարգի մարդ, ամերիկաբնակ գերմանացիների առաջին սերնդի զավակ, որը ծնվել էր Նյու Յորքում 1891-ի դեկրեմբերի 26-ին, Միլերը հաճախ էր կրկնում ինքն իրեն. «Ես ո՞վ էի, որ ասեի՝ գրող եմ»[6]:

թվայնացրել է 1915.info կայքը

Այդ երեկո Միլերն սկսեց իր նոթերը մեքենագրել մի բանի համար, որը պիտի դառնար կյանքով մեկ ձգված գրական նախագիծ: Նոթերը ծնվում էին «առանց ճիգի». բանը վերաբերում էր իր ու կնոջ «կռվշտոցին, խրախճանքներին», Ջունի ստերին ու դավաճանություններին: Միլերը կազմում էր իրենց գլխով անցած «դեպքերի ու ճգնաժամերի» ցանկը: Նա ցուցակագրում էր իր տրամադրության տակ եղած ձեռագրերը, որոնք կարող էր օգտագործել, գրած նամակները, որոնք կարող էր փորփրել մանրամասների համար: Ապրած ամեն ինչ, գրած ամեն ինչ պիտի նրա արվեստի աղբյուրը դառնային: Երբ վաղ առավոտյան Միլերը գործն ավարտեց, 32 էջանոց, խիտ մեքենագրված թղթերի կրցակ դուրս եկավ, որը նա վերնագրեց «Ջուն»:

Միլերն ուրվագծել էր իր կյանքի գործերի մեծ մասի՝ «Գծված աքլորի», մասամբ էլ «Խեցգետնի արևադարձի», «Այծեղջյուրի արևադարձի» և «Վարդաբեր խաչելության» հենքը: Իսկ որ ավելի կարևոր էր, ամրակայել էր խիստ ինքնակենսագրական այն ձևը, որն ընդունելու էին նրա կյանքի գործերը: Այդուհետ նա պիտի լիներ իր ստեղծագործության և՛ հեղինակը, և՛ թեման: Նա պիտի ապրեր իր կյանքը, ասես դա արվեստի հում նյութ էր, իսկ հետո իր ապրած կյանքը պիտի վերածեր արվեստի[7]:

Երբ 1930-ին Հենրի Միլերը եկավ Փարիզ, քաղաքը, Նյու Յորքի նման, տնտեսական անկման շրջանում էր: Նրա Փարիզը Էռնեստ Հեմինգուեյի կամ Ֆ. Սքոթ Ֆիցջերալդի Փարիզը չէր: Միլերը, կամավոր աղքատության բերումով, կարող էր պատկերել Փարիզի այն կողմը, որը զբոսաշրջիկները (և նույնիսկ նրանից առաջ այնտեղ հաստատված տարագիրները) երբեք չէին տեսել: Դա ոչ թե նրբահամ խորտիկների, այլ քաղցի, կծված յուղի ու մգլած պանրի, պատառոտված պաստառներ ու արյունաշաղ, փայտոջիլներով լի գորշ սավաններ ունեցող էժանագին հյուրանոցների, դռնապանքերին բնող պառավների, փայտե ծայրանդամներով պոռնիկների, կեղտաջրով լի դույլերի, «կարոտի և տրտմության» Փարիզն էր:

«Խեցգետնի արևադարձը» ներկայացնում է Հենրի Միլերի փարիզյան առաջին երկու տարիների պատմությունը: Սա թերևս առաջին

թվայնացրել է 1915.info կայքը

վեպն է, որը վերաբանաձևում է ստեղծագործական ընթացքը աշխատավոր դասի գրողի համար: Սա Ջեյմս Ջոյսի (մի գրող, որին Միլերն արհամարհում էր՝ կոչելով «մանկավարժ սադիստ»[8], բայց և գիտակցաբար հեղևում նրա օրինակին) «Երիտասարդ արվեստագետի դիմանկարի» կամ Մարսել Պրուստի (Միլերի պաշտած գրողներից մեկի) «Ի որոնումն կորուսյալ ժամանակի» վիպաշարի (ոչ) ամերիկյան, անբարեկիրթ, անուս (բայց ոչ անգետ), անկաշկանդ, միջին կարիքի մարդուն հատուկ կարբերական է: Սա խորհրդածություն է արվեստի թե՛ աշխատիկ, թե՛ ստրվածային կողմերի մասին, արվեստ, որի արմատները թե՛ կարիքի մեջ են, թե՛ անձկության:

Շատ քննադատներ են արտահայտվել վեպի աննախադեպ-ջախջախիչ սեքսուալ նկարագրությունների մասին: Բայց «Խեցգետնի արևադարձի» մի ուրիշ թեման նույնիսկ ավելի հեղափոխիչ է. վեպը ցույց է տալիս, թե ինչի միջով պիտի անցնի աշխատավոր դասի մարդը, որպեսզի ապրի ստեղծագործական կյանքով, և ինչպես պիտի վերահաստատի իրեն, որպեսզի սեփական ձայնով, սեփական կենսափորձի մասին վեպ գրելու քաջություն դրսևորի: «Մի կարի, նույնիսկ կես կարի առաջ,– պատմում է հեղինակը,– մտածում էի, թե արվեստագետ եմ: Հիմա արդեն չեմ մտածում դրա մասին, արվեստագետ եմ»: Սա աշխատանք է, ընթացիկ աշխատանք՝ ինքն իրեն հիշեցնելու համար, թե դեռ ինչ կա, որ պետք է գրել: Նա բառարանից հանած բառերի ցանկերն էր ճշտում, որոնք ուզում էր իր վեպում ընդգրկել: Ի վիճակի էր աշխատել անգամ ուրիշների ներկայությամբ: Հաճախ մեքենագրում էր ու խոսում միաժամանակ: (Ըստ երևույթին, երբեմն այդ խոսակցությունները, մեքենագրելով, մտցնում էր վեպ): Ժամանակ առ ժամանակ «աշխատանքի կեսին ձայնապնակ էր դնում ու փոքրինչ երաժշտություն լսում: Կամ ինքն էր հանկարծ սկսում երգել: Նրա գործը երգելով է ստեղծվել»[9]:

Հետո գնում էր երկար զբոսանքների՝ ծոցատետրը տանելով: Նոր փողոցներ էր գտնում՝ նկարագրելու, նոր տեսարաններ՝ հավելելու, փողոցի նոր բնակիչների՝ իր գործի մեջ ներառելու համար: Նրան գրավում էին «Փարիզի ավելի խղճուկ մասերը»[10], օրինակ, Կոմբա

թվայնացրել է 1915.info կայքը

հրապարակին մերձակա Սիրե Նորտյեն, որը փայտով շինություններով եզերված ներքնաբակ ուներ, սալաքարերը լորձնոտ էին, լպրծուն, թափոններով լի «մարդկային աղբակույտ» էր: Կամ էլ նա հեծանիվով հասնում էր Փարիզի հեռավոր մասերը:

Ճաշից հետո (դարձյալ ընկերների հաշվին) Միլերը հաճախ դառնում էր աշխատանքին:

Թեև «Խեցգետնի արևադարձը» ստեղծելու ընթացքում նա դեռ ամուսնացած էր Ջուն Միլերի հետ, այս շրջանը նաև Միլերի և բանկիր Հյու Գիլերի կնոջ՝ Անայիս Նինի սիրավեպի գագաթնակետն էր: Միլերին Անայիս Նինի հետ ծանոթացրել էր ընկերը՝ Ռիչարդ Օգբորնը, 1931-ին[11]:

Միլերը մուրք գործեց Նինի կյանք, երբ վերջինս հաստատացել էր սեքսուալ փորձարարության համար, Դ. Հ. Լորենսի մասին մի գիրք լույս ընծայելուց քիչ անց: Միլերն ինքը հենց նոր քննախոսություն էր պատգրել Լուիս Բունյուելի «Ոսկեդարի» վերաբերյալ և դեռ աշխատում էր իր «Գժված աքլորը» վեպի նոր տարբերակի վրա, որը պատմում էր նրա առողջությանը կնոջ լեսբիական կապի հաստրած մասին մասին[12]: Երբ նրանք հանդիպեցին, Նինը գրեց իր օրագրում. «Տեսա մի մարդու, որն ինձ դուր եկավ: Իր գրվածքներում նա վատ է, առնացի, կենդանական, հրաշալի: Այս մարդուն կյանքն արբեցրել է իմ կարծիքով: Նա ինձ նման է»[13]:

Սկզբում այս երկուսը հանդիպում էին իրենց աշխատանքի մասին զրուցելու և մտքեր փոխանակելու համար: Բայց երբ Նինը ծանոթացավ Միլերի կնոջ՝ Ջունի հետ, հարաբերություններն իսկույն բարդացան: Նինը սիրահարվեց Ջունին՝ կրկնելով այն սիրային եռանկյունին, որը Միլերին այդքան ցավ էր պատճառել:

Երբ Ջունը վերադարձավ Միացյալ Նահանգներ, Նինն ու Միլերը սիրեցյալներ դարձան: Նինի վկայությամբ, նա հիանալի սիրեկան էր, որն արթնացրեց իր ցանկասիրությունը. կրքոտ էր, բայց և հոգատար, բավարարում էր իրեն այնպիսի եղանակներով, որոնք չէր պատկերացրել երբեք, թե հնարավոր են: Միլերի վկայությամբ, Նինն օգնում էր իրեն ֆինանսապես և իր մտքին խաղաղություն բերեց ու «Խեցգետնի

թվայնացրել է 1915.info կայքը

արևադարձը»՝ իր կյանքի կարևորագույն վեպը, սկսելու արիություն: Նինը համոզում էր, որ նրա ստեղծագործությունն ավելի կարևոր է, քան Ջույսինը, և նա պետք է պայթուցիկ ու հրահրիչ լինի այդ ստեղծագործության մեջ, ինչպես խոսելիս: Նինը հուսալի հող էր ապահովում, որի վրա Միլերն իրեն ազատ էր զգում փորձարարություններ անելու:

Նինը և Միլերը փարիներ շարունակ մնացին սիրեկաններ, խոսում էին ամուսնության մասին, Սյորա վիլլայում սենյակակիցներ էին և համարեա երեխայի էին սպասում (որից Նինն ազատվեց): Բայց Նինը երբեք լուրջ չի վերաբերվել հանուն Միլերի ամուսնուն լքելու մրքին, թեև հորդորում էր, որ Միլերը լքի Ջունին, և օգնեց վերջ դնել նրա ամուսնությանը՝ Ջունին գեղյակ պահելով, որ ինքն ու Միլերը սիրեկաններ են: Նախ՝ ամուսնու փողի շնորհիվ էր Նինն ապրում ազատ կենսաոճով: Նա հասկանում էր, որ Միլերի վրա չի կարելի հույս դնել, թե կնոջը կպահի: Եվ ապա՝ ոչ Նինը, ոչ էլ Միլերը հակված չէին մենամուսնության: Իրենց սիրավեպի ընթացքում Նինը սերտսւսյ կապեր ուներ ոչ միայն Միլերի, այլև ամուսնու, զարմիկի՝ Էդուարդո Սանչեսի, և իր երկու հոգեվերլուծողների՝ Ռընե Ալենդիի ու Օտտո Ռանքի հետ: Իսկ Միլերը շարունակում էր ժամանակ անցկացնել պոռնիկների կողքին: Թեպետ նա կարծես թե հավանություն էր տալիս Նինի պահվածքին, վերջինս հաճախ էր զայրանում Միլերի արարքների վրա:

Նինի ամբողջովին չհրապարակված օրագրերում (լույս են տեսել «Հենրին և Ջունը», «Արյունապղծություն» վերնագրերով) և նրա արձակում («Ներքին քաղաքներ») Միլերի՝ որպես սիրեկանի և գաղամարդու վարքագծի նկարագրությունը ուսանելի է «Խեցգետնի արևադարձում» Միլերի անձի սեփական նկարագրության ֆոնին: Դա երևան է բերում «իրական» Հենրի Միլերի և ստեղծագործության մեջ նրա կերտած իր կերպարի տարբերությունը: Ինքնանկարում Միլերն իրեն ներկայացնում է սերտսւսյ առումով անհագուրդ, կոշտ ու կոպիտ, կնատյաց, թեև կարոտում է կնոջը՝ Մոնային: Նինի գործերում, սակայն, Միլերը կրքոտ ու քնքուշ սիրեցյալ է, հարգալից նրա կանացիության հանդեպ, թեպետ և երկչոտ, թույլ ու խոցելի՝ որպես տղամարդ: Նինի գծած դիմանկարը բնավ նման չէ «Խեցգետնի» բիրտ

թվայնացրել է 1915.info կայքը

ու ամրակամ անձնավորությանը և հուշում է, որ Միլերի ստեղծած կերպարը շատ բանով իր հակոտնյան է:

Միլերը, Նինի խոսքերով, «կարիքավոր երեխա» էր, «(կանանց) զոհ, որը ստոտանք է փնտրում», «գոյության միջոցներ որոնող անզոր արարած»[14]:

Հենրի Միլերը «Խեցգետնի արևադարձի» պատումը քաղել է Փարիզից ընկերոջը՝ Էմիլ Շնելոքին, ինչպես և Անայիս Նինին գրած նամակներից (հատկապես դասավանդման իր սոսկալի փորձը նկարագրող դիժոնյան նամակներից[15]), Փարիզի փողոցներում դեգերելիս կատարած նշումներից և ընկերների հետ վարած զրույցներից, որոնք վերաբերում էին գրականությանն ու հոգեվերլուծությանը (Անայիս Նինի հետ), սեքսին (փարիզյան սյունակագիր Ոսմբլի Բոյդի հետ, որը հայտնվում է վեպում որպես հեշտամոլ Վան Նորդեն), մահվանը (Մայքլ Ֆրենքելի հետ) և պատերազմին: Նա իր արձակում առաջին անգամ կիրառել է, ըստ սեփական խոսքերի, «առաջին դեմքով հանդես գալու տպավորիչ ներկայացումը»[16]: Արձակի վաղ փորձերում Միլերը հետևողականորեն խույս էր տալիս այս դիտանկյունից, թեև դա համապատասխան էր իրեն, քանի որ նա մագնիսական հմայքի տեր պատմող էր ու վերապատմող:

Որոշ իմաստով՝ «Խեցգետնի արևադարձը» խաթարված «ես»-ը պատմություններով ամոքելու մասին է, մի բան, որ գովերգում է ու առասպելացնում նրա և իր ընկերների հանդուգն արարքները: Անայիս Նինը կարծում էր, որ Միլերի ստեղծագործությունը հոգու աշխարհանքն ավելի մեծ խորությամբ է լուսաբանում, քան Ջեյմս Ջոյսինը և, մի էական իմաստով, նա իրավացի էր: Որովհետև եթե Ջեյմս Ջոյսը արձանագրում է գիտակցության բովանդակությունը, Միլերի ստեղծագործությունն ի ցույց է դնում այն ընթացքը, որով կազմավորվում է գիտակցության բովանդակությունը պատմություն անող «ես»-ի կողմից: Միլերի բացահայտ նպատակը, ինչպես ինքն է ձևակերպել «Խեցգետնում», խելքին փչածը գրի առնելն է՝ առանց ինքնասահմանափակման: Միլերը ցույց է տալիս, թե ինչպես, կյանքդ պատկերելու ձևն ընտրելով, կարող ես ցանկացածդ գիտակցությունը կազմավորել: Չապաշելով, որ

թվայնացրել է 1915.info կայքը

աշխարհը փոխվի՝ կարող ես ինքնությունդ փոխել այն պատմություններով, որ անում ես քեզ ու մյուսներին ինքդ քո մասին:

Բայց նրա պատմությունները ոչ միայն ամոքում են, այլև զվարճացնում: Միլերն ընտրել է ժամանակակից ձեռնածուի կեցվածք, ձեռնածու, որն ինքնացուցադրումը վերածել է արվեստի ձևի, կառնավալային ներկայացման՝ օգտագործելով բացառապես իր իսկական հեղինակային ձայնը, որը դեռ թղթին չէր հանձնվել:

Չնայած Միլերն իր «Մողոք» վեպում գրել է, թե ոչ մի հաջող գրական գործ չի կարող տեղ գտնել Բրուքլինում կամ էլ Բրուքլինի թեմայով լինել, «Խեցգետնի արևադարձը» գրված է բրուքլինցի տղայի ձայնով: Դա այն բանիմաց փողոցային երեխայի ձայնն է, որն ընկերների հետ, ովքեր անկյունում կախ գցած, պատմություններ է փոխանակում իր սիրանքների մասին և գործի դնում մյուսների հանդեպ առավելության հասնելու շնորհքը՝ դիրք ձեռք բերելու համար: Դա այն տղաևարտու ձայնն է, որն իր ցավը թաքցնում է հայհոյական խոսքերի շարանի տակ, գռեհկացնում կանանց, քանի որ տղաևարտուն վայել չէ ընդունել, թե ինքն ինչքան շատ ունի նրանց կարիքը, և այդ տղաևարտը չափազանցում է, թե ինչ անպիտան է ու կոշտ, որպեսզի զոհ չերևա: Բայց Մոնայի (կնոջ՝ Ջունի) կարոտը քնքշորեն ու փանջագին է պատկերված և կազմում է «Խեցգետնի» հուզական հենքը, որի ֆոնին էլ պիտի վերծանել նրա անբարյացակամ վերաբերվածությունը կանանց նկատմամբ: Տոփաձոլ Վան Նորդենի հանդեպ տածած խորշանքն արտահայտելով՝ հեղինակը եզրակացնում է, որ անկիրք սեքսը «պատերազմական վիճակի պես բան է»:

Թեկուզ և Միլերի հերոսը փողոցի երկրպագու է, գրական «կլոշար», նրան չի հաջողվում թաքցնել, թե ինչ խորագիտակ է: «Խեցգետնում», սեփական փորձառությանը դիմելուց բացի, Միլերն ամոթխածորեն օգտագործել է այնպիսի նախապատիկեր ու աղբյուրներ, ինչպիսիք են Քնութ Համսունի, Դ. Հ. Լորենսի և Մարսել Պրուստի արձակը[17], Շեքսպիրի և Ջեյմս Ջոյսի մենախոսությունները, Ֆրանսուա Ռաբլեի անպարկեշտ հումորը[18], ճապոնական յունգային և հնդկական քանդակագործությանը բնորոշ՝ սեքսի բացահայտորեն աշխարհիկ, բայց և արբազան պատկերումը, Ուոլթ Ուիթմենի գովերգական թվարկումները,

թվայնացրել է 1915.info կայքը

Բրասայի լուսանկարչությունը, Դիկասոյի մերկուհիները, Անայիս Նինի ինքնավերլուծական օրագրերը և սյուրռեալիստների տեխնիկան (ներառյալ սասամբլաժը[19]), եթե սահմանափակվենք այսքանով: Նա նկարագրում է, թե ինչպես կարող են գրականությունն ու արվեստը հարստացնել աշխատավոր դասի անդամների, համալսարանական ուսում չստացած մարդկանց կյանքը:

«Խեցգետնի արևադարձը» 1934-ի սեպտեմբերի 1-ին լույս է ընծայել Ջեք Քահանը Obelisk Press փարիզյան փոքրիկ հրատարակչությունում, Անայիս Նինի ձեռք բերած գումարով, որը նրան տրամադրել էր Օտտո Ռանքը[20]: Անպարկեշտության դեմ ուղղված օրենքները, որ գործում էին Անգլիայում և Միացյալ Նահանգներում, հրապարակումն արգելում էին, բայց Ֆրանսիայում «հավանականորեն «անպարկեշտ» գրքերը կարող էին հրատարակվել, եթե անգլերեն լինեին»[21]: Առաջին հրապարակության կազմը, փողը խնայելու համար, նկարազարդել էր Քահանի 16-ամյա որդին: Դա պատկերում էր «չանչերով մերկ կին ճանկած խեցգետին»[22] և, Միլերի կարծիքով, «սարսափելի» էր: Շապիկին նախազգուշացում կար գրավաճառներին, որ «Խեցգետինը» «չպետք է դրվի ցուցափեղկում»[23]:

Հարգելի ընթերցող, այս գրքի էլեկտրոնային տարբերակը ստեղծել է 1915.info կայքը: Եթե ցանկանում եք որևէ գրքի էլեկտրոնային տարբերակ և չեք կարողանում գտնել այն, կարող եք դիմել մեզ:

ԼՈՒԻՋ ԴԵ ՍԱԼՎՈ

թվայնացրել է 1915.info կայքը

ԱՂԲԻՒՐՆԵՐ

1. Henry Miller, Letters to Emil, ed. By George Wickers (New York: New York Directions, 1969), p. 15.
2. Erica Yong, The Devil at Large (New York: Turtle Bay, 1993), p. 21; տե՛ս J, Gerald Kennedy, Imagining Paris (New Haven: Yale University Press, 1993).
3. Jay Martin, Always Merry and Bright (Santa Barbara: Capra Press, 1978), p. 139: Robert Fergusson, Henry Miller (New York: W. W. Norton), p. 14; Mary V. Dearborn, Henry Miller (New York: Simon & Schuster, 1991), p. 108, Luise DeSalvo, Conceived with Malice (New York: Dutton, 1984).
4. Ferguson, p. 81.
5. Jong, p. 55.
6. Martin, p. 18, p.129; Dearborn, pp. 100-1; Heny Miller, My Life and Times (New York: Playboy Press, n. d.), p. 33.
7. Տե՛ս Martin, p. 520; Dearborn, p. 323;, Miller, My Life and Times, p. 50.
8. Henry Miller, Moloch (New York: Grove Press, 1992). p. 8.
9. Alfred Perles, My Friend Henry Miller (New York: John Day, 1956), p. 70.
10. Perles. p. 72.
11. Տե՛ս Noel Riley Fitch, The Literate Passion of Anais Nin & Henr Miller in Whitney Chadwick and Isabelle de Courtivron, eds., Significant Others (New York: Thames and Hudson, 1993), pp. 155-72.
12. Fitch, p. 155.
13. Anais Nin, Heny and June (New York: Harcourt Brace Jovanovich, 1986), p. 6.
14. Anais Nin, Letters to Fire in Cities of the Interior (Athens: Swallow Press/Ohio University Press, 1959, 1975), p. 48.
15. Տե՛ս Dearborn, p. 126, p. 149.
16. Miller, Moloch, p. 65.
17. Ferguson, p. 69.
18. Perles, p. 112.
19. Ferguson, p. 181.
20. Martin, p. 303; Dearborn, p. 175.
21. Jong, p. 132.
22. Martin, p. 303.
23. Perles, p. 104.

թվայնացրել է 1915.info կայքը

ԽԵՅԳԵՏՆԻ ԱՐԵՎԱԴԱՐՁԸ

Այս վեպերը հետզհետե տեղը կզիջեն օրագրերին ու ինքնակենսագրություններին՝ հրապուրիչ գրքերի, եթե միայն մարդ իմանա, թե ինչպես կենսափորձ կոչվածից ընտրի այն, ինչ, իրոք, իր կենսափորձն է, և ինչպես ճշմարտությունը հավաստի դրոշմի:

ՌԱԼՖ ՈՒՈԼԴՈ ԷՄԵՐՍՈՆ

թվայնացրել է 1915.info կայքը



Ման Ռեյ. «Հենրի Միլերը և Մարգարեթ Նայմանը», 1942

թվայնացրել է 1915.info կայքը

1

Ես ապրում եմ Բորգեզե վիլլայում: Չորս կողմը կեղտի նշույլ անգամ չկա, ոչ էլ տեղը չդրած աթոռ: Մենք մեն-մենակ ենք էստեղ ու մեռած:

Անցած իրիկուն Բորիսն իր վրա ոջիլներ հայտնաբերեց: Ստիպված էի սափրել թևատակերը, թեպետ դրանից հետո էլ քորը չանցավ: Ո՞նց կարելի է ոջլոտել սրա պես ընտիր տեղում: Բայց կարևոր չի: Մենք երբեք չէինք մտերմանա, Բորիսն ու ես, եթե էդ ոջիլները չլինեին:

Բորիսը հենց նոր շարադրեց իր տեսակետները: Նա եղանակի գուշակ է: Վատ եղանակը կշարունակվի, ասում է: Էլի փորձանքներ, էլի մահ, էլի հուսահատություն: Ոչ մի տեղ փոփոխության թեթևակի նշան էլ չկա: Ժամանակի քաղցկեղը շարունակում է մեզ կրծել: Մեր հերոսները կամ ինքնասպան են եղել, կամ դրանով են զբաղված: Ուրեմն հերոսը Ժամանակը չէ, այլ՝ Ժամանակի Բացակայությունը: Մենք պետք է համաքայլ շարժվենք, մեկտեղ ընթանանք դեպի մահվան բանտը: Փախչելու հնար չկա: Եղանակը չի փոխվելու:

Սա իմ երկրորդ աշունն է Փարիզում: Թե ինչի համար եմ հայտնվել էստեղ, չեմ էլ հասկանում:

Ոչ փող ունեմ, ոչ հոգեպահուստ, ոչ էլ հույս: Աշխարհի ամենաերջանիկ մարդն եմ: Մի տարի, նույնիսկ կես տարի առաջ մտածում էի, թե արվեստագետ եմ: Հիմա արդեն չեմ մտածում դրա մասին, արվեստագետ *եմ*: Ինչ կար-չկար, որ գրականություն էր, պոկվել է ինձնից: Փառք Աստծու, էլ պետք չի գրքեր գրել:

Իսկ սա՞: Դե, սա գիրք չի: Ջրպարտանք է, չարախոսություն, անվանարկում: Գիրք չի սովորական իմաստով: Չէ, երկարատև անարգանք է, մի կում թուք Արվեստի սֆաթին, աքացի Աստծու, Մարդու, Ճակատագրի, Ժամանակի, Սիրո, Գեղեցկության... ինչ որ կուզեք, դրա քամակին: Ես կերգեմ ձեզ համար, մի քիչ լարից ընկած, բայց կերգեմ: Կերգեմ, մինչ դուք շունչներդ եք փչում, կպարեմ ձեր կեղտոտ դիակի վրա...

թվայնացրել է 1915.info կայքը

Երգելու համար պիտի բերանդ բացես: Պիտի երկու թոք ունենաս ու մի փոքր էլ երաժշտությունից գլուխ հանես: Պարտադիր չի ակորդեոն կամ կիթառ ունենալ: Էականը երգելու *ցանկությունն* է: Ուրեմն սա երգ է: Ես երգում եմ:

Քեզ համար եմ երգում, Տանյա: Կուզենայի ավելի լավ երգել, ավելի քաղցրահունչ, բայց էդ դեպքում երևի չէիր համաձայնի ինձ ականջ դնել: Դու լսել ես ուրիշների երգը, ու նրանք քեզ անտարբեր են թողել: Կամ շատ լավ են երգել, կամ էլ բավականաչափ լավ չեն երգել:

Հոկտեմբերի քսանքանիսն է: Էլ չեմ հետևում օրացույցին: Կասես՝ երա՞զս է շարունակվում անցյալ տարվա նոյեմբերի 14-ից: Ընդմիջումներ էլ կան, բայց երազների միջև են, և գիտակցությունը դրանք չի դրոշմել: Աշխարհն իմ շուրջը տարրալուծվում է՝ տեղ-տեղ ժամանակի կղզյակներ թողնելով: Աշխարհը ինքն իրեն խժռող քաղցկեղ է... Կարծում եմ, որ երբ մեծ լռությունն իջնի ամենուր և ամեն ինչի վրա, վերջապես երաժշտությունը կթագավորի: Երբ ամեն բան նորից կքաշվի ժամանակի արգանդը, վերստին քաոս կտիրի, իսկ քաոսն այն պարտիտուրն է, որով ստեղծվել է իրականությունը: Դու, Տանյա, իմ քաոսն ես: Դրա համար եմ երգում: Ես չեմ նույնիսկ, այլ մեռնող աշխարհը, որի վրայից պլոկվում է ժամանակի կաշին: Իսկ ես դեռ ողջ եմ, թավալ եմ տալիս քո արգանդում. դա է իմ պատկերելիք իրականությունը:

Ննջում եմ: Սիրո ֆիզիոլոգիան: Հանգստացող կետաձուկն իր երկումետրանոց անդամով: Չղջիկը՝ pénis libre[1]: Ոսկրավոր անդամ ունեցող կենդանիներ: Ուրեմն՝ *ggnukp*... «Բարեբախտաբար,– ասում է Գուրմոնը,– մարդը կորցրել է այդ ոսկրավոր կառուցվածքը»: Բարեբախտաբա՞ր: Այո, բարեբախտաբար: Պատկերացրեք ggոսկրով շրջող մարդկային ցեղը: Կենգուրուն երկու անդամ ունի, մեկը՝ առօրյայի, մյուսը՝ տոների համար: Ննջում եմ: Նամակ մի կնոջից, որը հարցնում է, թե գրքիս համար վերնագիր գտա՞: Վերնագի՞ր: Իհարկե. «Գողտրիկ լեսբուհիները»:

[1] Ազատ առնանդամ (ֆրանս.):

Ձեր անեկդոտի՞կ կյանքը: Պարոն Բորովսկու արտահայտությունն է: Չորեքշաբթի օրերը ճաշում եմ նրա հետ: Կինը՝ մի սմքած կով, սեղանի գլխին է: Հիմա անգլերեն է սովորում. նրա սիրած բառը «նողկալին» է: Վռազ հասկանում ես, թե էդ Բորովսկիներն ինչ ոռի ղեմքեր են: Բայց սպասեք...

Բորովսկին վելվետե կոստյումներ է հագնում ու ակորդեոն նվագում: Անդիմադրելի համակցություն, մանավանդ եթե նկատի առնենք, որ վատ նկարիչ չի: Հավատացնում է, թե լեհ է, բայց չէ, իհարկե: Հրեա է Բորովսկին, հայրն էլ ֆիլատելիստ է եղել: Փաստորեն ամբողջ Մոնպառնասը հրեաներ են կամ կիսահրեաներ, որ ավելի վատ է: Կարլն էլ, Պոլան էլ, Քրոնստադտն էլ, Բորիսն էլ, Տանյան էլ, Սիլվեստրն էլ, Մոլդորֆն էլ, Լյուսիլն էլ: Բոլորը, բացի Ֆիլմորից: Հենրի Ջորդան Օսվալդն էլ հրեա դուրս եկավ: Լուիս Նիքոլսն էլ: Նույնիսկ Վան Նորդենն ու Շերին են հրեա: Ֆրենսիս Բլեյքն էլ է հրեա կամ հրեուհի: Տիտուսը հրեա է: Մի խոսքով, հրեաները ձյան պես պատել են ինձ: Սա գրում եմ ընկերոջս՝ Կարլի համար, որի հայրը ևս հրեա է: Էս ամենը կարևոր է հասկանալ:

Բոլորի մեջ ամենահաճելի հրեան Տանյան է. հանուն նրա ես էլ հրեա կդառնայի: Ինչո՞ւ չէ: Արդեն հրեայի պես եմ խոսում: Հրեայի պես էլ անճոռնի եմ: Բացի դրանից, ո՞վ է հրեայից շատ ատում հրեաներին:

Վերջալույսի ժամն է: Կապույտ ապակե ջուր, ցոլցլան ու տարրալուծվող ծառեր: Ժորես պողոտայի մոտ ռելսերն իջնում են ջրանցք: Լաքապատ կողերով երկար թրթուրը գահավիժում է, ասես «ռուսական բլուրներ» ատրակցիոնում: Սա Փարիզը չի: Քոնի Այլենդը չի: Եվրոպայի ու Կենտրոնական Ամերիկայի բոլոր քաղաքների մթնշաղոտ խառնուրդն է: Իմ տակ երկաթուղու կայաններն են, ռելսերի սև ոստայնը, որ կարծես ճարտարագետի նախագծածը չի, այլ քմայական նախշ, բևեռային սառույցի էն երկարուն ճաքերի նման, որոնք դրոշմվում են լուսանկարներում սևի տարատեսակներով:

Ուտելիքն ինձ անսահման հաճույք պատճառող միակ բանն է: Իսկ մեր չքնաղ Բորգեզե վիլլայում գրեթե երբեք փշուր անգամ չկա:

թվայնացրել է 1915.info կայքը

Ինչ խոսք, ահավոր է մեկ-մեկ: Քանի անգամ խնդրել եմ Բորիսին, որ նախաճաշի համար հաց պատվիրի, բայց միշտ մոռանում է: Ըստ երևույթին, ինքը դուրսն է նախաճաշում: Վերադառնալով՝ քչփորում է ատամները, իսկ այծմորուքին ձվի մնացորդներ կան: Դու մի ասա՝ նրբանկատությունից է ռեստորան գնում. սիրտը չի տալիս աչքիս առաջ կուշտ նախաճաշել:

Ինձ Վան Նորդենն է դուր գալիս, բայց չեմ բաժանում նրա կարծիքն իր մասին: Համաձայն չեմ, օրինակ, որ փիլիսոփա է կամ մտածող: Պցմեռ է, էդքան բան: Նրանից երբեք գրող դուրս չի գա: Ոչ էլ Սիլվեստրից դուրս կգա, թեկուզ անունը շողշողա 50.000 մոմանոց էլեկտրական կարմիր տառերով: Հիմա ես գրող եմ համարում միայն Կարլին ու Բորիսին: Գրելացավով են բռնված: Հուր-կրակն է ներքուստ այրում: Խենթ են, իսկ լսողությունից զուրկ: Տառապյալներ են:

Մյուս կողմից՝ Մոլդորֆն էլ է յուրովի տառապում, բայց խենթ չի: Մոլդորֆը խոսքի հարբեցող է: Ոչ երակներ ունի կամ արյունատար անոթներ, ոչ սիրտ, ոչ էլ երիկամներ: Շարժական պահարան է՝ անհամար դարակներով, իսկ դարակների վրա՝ պիտակներ, որ գրված են սպիտակ թանաքով, շագանակագույն թանաքով, կարմիր թանաքով, կապույտ թանաքով, բոսորագույնով, զաֆրանով, բաց մանուշակագույնով, սուսրով, ծիրանագույնով, փիրուզով, օնիքսով, Անժուի գինով, հարինգով, սիգարով, պղնձականաչով, գորգոնձոլա պանրով...

Գրամեքենան տարել եմ մյուս սենյակը, որտեղ գրելիս կարող եմ ինձ հայելու մեջ տեսնել:

Տանյան Իրենի նման է: Հաստ նամակների է սպասում: Բայց ուրիշ Տանյա էլ կա, մեծ պտղի պես Տանյա, որն ամենուր ծաղկափոշի է սփռում, կամ, ասենք, Տոլստոյից մի փոքրիկ հատված, ախորի տեսարան, որտեղ թաղում են վաղածնին: Տանյան տենդ է, նաև՝ les voies urinaires[1], «Լիբերտե» սրճարանը, Վոգեզների հրապարակը, Մոնպառնաս բուլվարի վառ փողկապները, զուգարանների մութը, անխառն պորտվեյնը, «Աբդուլլա» սիգարետը, «Պաթետիկ սոնատի» աղաջոն, ձայնի ուժեղացուցիչները, անեկդոտների երեկոները,

[1] Միզուղիներ (ֆրանս.):

թվայնացրել է 1915.info կայքը

սուսրով թրծված կուրծքը, լայն գուլպակալները, «ժամը քանի՛սն է», շագանակներով լցոնված ոսկերանգ փասիանները, նրբագեղ մատները, գիշերվա փոխվող միգամած աղջամուղջը, փղախտը, քաղցկեղն ու զառանցանքը, տաք ծածկոցները, պոկերի խաղանիշերը, արյունավառ գորգերն ու փափուկ ազդրերը: Տանյան ի լուր ամենքի ասում է. «Ես նրան սիրում եմ»: Եվ մինչ Բորիսը վիսկիով սիրտը կվառի, վրա է բերում. «Նստիր էստեղ... Օ, Բորիս... *Ռուսաստան...* Ի՞նչ անեմ: Դրանով եմ բերնեբերան լի»:

Գիշերը, Բորիսի այծմորուքը բարձին տեսնելիս, ծիծաղս բռնում է: Օ, Տանյա, ո՛ւր են հիմա տաքուկ ծակդ, հաստ, լայն գուլպակալներդ, փափլիկ, պարարտ զիստերդ: Մահակիս ոսկորը վեց մատնաչափ է: Քունջուպուճախդ լրիվ կքրքրեմ, սերմից փքված Տանյա... Քեզ փորատակի մղկտոցով ու թարսած արգանդով կուղարկեմ տուն՝ Սիլվեստրիդ մոտ: Հա, նա գիտի կրակ անել, ես էլ գիտեմ բոցը բորբոքել: Շամփրում եմ քեզ թեժ նետերով, Տանյա, ձվարաններդ եմ հրով շիկացնում: Սիլվեստրդ սկսել է մի քիչ խանդե՛լ: Ինչ-որ բա՛ն է գլխի, հա՛:

Գերանիս թողած հետքերն է զգում քո մեջ: Պոռնկներդ լայնացրել եմ, ինչքան ծալք կա՝ հարթուկել: Ինձնից հետո կարող ես ձիերի, ցլերի, ոչխարների, բադերի, սանբեռնարների տակը մտնել: Կարող ես գորտեր, չղջիկներ, մողեսներ խոթել հետանցքդ: Կարող ես արպեջո նվագելով քաքել կամ պորտիդ փանդիռի լարեր քաշել: Քեզ խրելիս, Տանյա, տեղը տեղին եմ խրում: Եթե քաշվում ես հրապարակավ կոխվելուց, առանձի՛ն կխրեմ: Մի քանի մազ էլ կպոկեմ քո ծակուլիկից ու կկպցնեմ Բորիսի դնչին: Համփ կանեմ ծլիկդ ու երկու ֆրանկանոց մետաղադրամներ կթքեմ...

Կապտամանուշակ երկինք՝ իսպառ զերծ խուճուճ ամպերից, անվերջանալիորեն ձգվող ազազուն ծառեր, սև ճյուղեր, որ նման են լուսնոտի ժեստերի... Մոայլ, ուրվակերպ ծառեր՝ թանկանոց սիգարի մոխրի պես դալուկ բներով... Վսեմ լռություն, լիովին եվրոպական: Փակ փեղկեր, կողպված խանութներ: Սիգարետի կամիր ցոլքեր տեղ-տեղ՝ ի նշան տեսակցության: Շենքերի հատու ճակատներ՝

թվայնացրել է 1915.info կայքը

գրեթե խստաշունչ, անթերի, եթե ծառերի նետած ստվերների վետ-վետանքը չլինի: Օրանժրիի մոտով անցնելիս ես ուրիշ Փարիզ եմ հիշում՝ Մոեմի, Գոգենի Փարիզը, Ջորջ Մուրի Փարիզը: Մտածում եմ էն սարսափելի իսպանացու մասին, որն ապշեցնում էր աշխարհին՝ ակրոբատիկ ցատկեր գործելով մի ոճից մյուսը: Մտածում եմ Շպենգլերի ու պետական հեղաշրջման նրա ահազդու կոչերի մասին, և ինձ թվում է՝ «ոճը», «մեծ դպրոցի ոճը» արդեն չկա: Ասում եմ՝ էս մտքերով եմ տարված, բայց ճիշտ չի. Սենը անցնելուց, լույսերի կառնավալը հետևում թողնելուց հետո է միայն, որ ուղեղիս թույլ եմ տալիս նման մտքերով խաղալ: Իսկ էդ պահին ոչինչ էլ չեմ մտածում, բացի մի բանից, որ համակ զգայնություն եմ՝ մի ամբողջ մոռացված աշխարհի արտացոլող այդ ջրերի հրաշքից շանթահար: Ափերի ամբողջ երկայնքով ծառերը ծանրորեն կքված են գետի պղտոր հայելու վրա: Երբ քամի է ելնում և սրանց համակում մեղմիկ շրշյունով, սրսփում են ու արտասուքի կաթիլներ թափում հորձանք տվող ջրի մեջ: Շունչս կտրվում է դրան ի տես: Ոչ ոք չկա, որին կարողանայի իմ զգացածի թեկուզ մի մասնիկը փոխանցել...

Խնդիրն էն է, որ Իրենինը ոչ թե հեշտոց է, այլ՝ ճամպրուկ: Հաստ նամակներ է ուզում ճամպրուկը խցկելու համար, հսկայական. avec des choses inouïes[1]: Այ, Իլոնան տեղով ծակ է:

Գիտեմ, որովհետև ցայլքից մի քանի մազ էր ուղարկել մեզ: Իլոնան վայրի էշ է, որ հոտոտելով՝ հաճույք է գտնում: Ամեն բլրի վրա բոզություն է արել, երբեմն էլ՝ հեռախոսախցերում ու պետքարաններում: Մահճակալ է առել Կարոլ թագավորի համար ու սափրվելու բաժակ՝ նրա անվանատառերով: Պառկել է Լոնդոնի Թոթնեմ Քորթ փողոցում ու փեշը վեր քաշած՝ ձեռնահարել իրեն: Մոմեր, կերոններ, դռան բռնակներ էր գործի դնում: Ամբողջ երկրում նրան հարմար չափսի անդամ չկար... *Ոչ մի հայր*: Տղամարդիկ ոտքով-գլխով մտնում էին նրա մեջ ու գունդուկծիկ դառնում: Նրան աճող-երկարող անդամներ էին պետք, ինքնապայթուցիկ հրթիռներ, զմուռսով

[1] Չտեսնված չափսի բաներ (ֆրանս.):

թվայնացրել է 1915.info կայքը

ու կրեոզոտով քլքլթացող յուղ: Եթե թողնեիր, պլոր-շլորդ կկտրեր և ընդմիշտ իր ներսում կպահեր: Էս Իլոնան միլիոնից մեկն էր. ծակը՝ լաբորատոր նմուշ, ու աշխարհում լակմուսյան թուղթ չկար, որով հնար լիներ դրա գույնը որոշել: Փչան էլ էր մեր Իլոնան: Ոչ մի մահճակալ էլ չէր առել իր Կարոլ թագավորի համար: Վիսկիի շիշը գլխին բամփելով էր թագադրել, իսկ լեզուն ստով ու կեղծ խոստումներով էր պտտվում: Խեղճ Կարոլ. կարող էր միայն գունդուկծիկ դառնալ նրա մեջ ու հանգել: Իլոնան շունչ քաշեր թե չէ՝ դուրս էր պրծնում սատկած կակղամորթի պես:

Ամեհի, հաստափոր նամակներ, avec des choses inouies: Անբոնակ ճամպրուկ: Անբանալի հոր: Նա գերմանական բերան ուներ, ֆրանսիական ականջներ, ռուսական քամակ: Պուցը միջազգային էր: Դրոշդ բարձրանալու հետ կաս-կարմիր էր կտրում: Ժյուլ Ֆերի բուլվարում մտնում էիր դրա մեջ, դուրս գալիս Պորտ դը Լա Վիլետում: Փորոտիքդ սայլին էիր շպպացնում, կարմիր սայլին, որ, իհարկե, երկանիվ էր: Ուրք և Մառն գետերի միախառնման տեղում ջուրը, հոսելով ամբարտակներից, ապակու պես անշարժ է կամուրջների տակ: Իլոնան պառկած է էնտեղ, և ջրանցքը լի է ապակով ու տաշեղներով. պատկառուկներն արտասվում են, իսկ լուսամուտները քրտնել են մշուշամած տոոցից: Իլոնան միլիոնից մեկն է: Համակ ծակ ու ապակե ոռ, որտեղ կարելի է Միջնադարի պատմությունը կարդալ:

Առաջին հայացքից Մոլդորֆը մարդու ծաղրանկար է. աչքերը՝ վահանագեղձ, շրթունքները՝ «Միշլեն» դողեր, ձայնը՝ սիսեռի ապուր: Ժիլետի տակ տանձիկ է սրտի տեղ: Որ կողմից էլ նրան նայես, պատկերը միշտ նույնն է. պաճուճազարդ ծխախոտատուփ, փղոսկրե գավազանագլխիկ, շախմատի քար, հովհար, տաճարի հարթաքանդակ: Նա էնքան երկար է խմորվել, որ դարձել է տձև զանգված: Թթխմոր է՝ առանց խմորաննկի, թաղար՝ առանց ֆիկուսի:

Կանայք երկու անգամ են իրոք բեղմնավորվել. 9-րդ դարում և մի անգամ էլ Վերածնության շրջանում: Մեծ գաղթերի ժամանակ Մոլդորֆին կրել են դեղին և սպիտակ որովայններում: Ելքից շատ առաջ մի թաթար էլ է թքել նրա արյան մեջ:

թվայնացրել է 1915.info կայքը

Մոլդորֆի երկընտրանքը գաճաճի երկընտրանքն է: Դուրս պրծած աչքերով նա իր ուրվագիծը տեսնում է վիթխարի էկրանին արտապատկերված: Ձայնը, որ համապատասխան է մժղուկի իր չափերին, արբեցնում է նրան: Մինչ մյուսները ծվծվոց են լսում, ինքը՝ մռնչյուն:

Բա մի՛տքը: Ամֆիթատրոն է, որտեղ բոլոր դերերում մի դերասան է հանդես գալիս: Մոլդորֆը բազմազանորեն ու հավաստի է խաղում իր դերերը՝ ծաղրածու, աճպարար, ակրոբատ, քահանա, անառակ, խաբեբա: Ամֆիթատրոնը շատ փոքր է նրա համար: Պայթուցիկ է դնում: Հանդիսատեսը կլանված է: Մոլդորֆը նվաճում է նրան:

Ես ապարդյուն ջանում եմ մոտենալ Մոլդորֆին: Բայց դա նույնն է, թե Աստծուն մոտենաս, որովհետև Մոլդորֆն Աստված է. ուրիշ բան չի էլ եղել: Ես ուղղակի բառեր եմ շարում...

Հին կարծիքներս նրա մասին մի կողմ եմ նետել: Նոր կարծիքներս էլ վերանայում եմ: Հենց որ նրան քորոցի ծայրին հագցրի, մի բան հասկացա. կոյաբզեզ չի, այլ՝ ճպուռ: Վիրավորում էր ինձ իր կոպտությամբ, իսկ հետո ապշեցնում քաղաքավարությամբ: Շատախոսում էր խեղդամահ անելու աստիճանի, իսկ հետո հանդարտվում Հորդանանի նման:

Երբ տեսնում եմ նրան թաթիկները տարածած և աչքերը քրտնաթաթախ իմ կողմը սնգսնգալիս, թվում է, թե ինձ ընդառաջ է գալիս... Չէ, ուրիշ կերպ է պետք նկարագրել:

"Comme un œuf dansant sur un jet d'eau"[1].

Նա ընդամենը մի սովորական գավազան ունի: Գրպանում թղթի կտորտանք է՝ Weltschmer[2]-ի բաղադրատոմսերով: Ապաքինվել է արդեն, իսկ փոքրիկ գերմանուհին, որ լվացել է նրա ոտքերը, սիրտը փշրված է մնացել: Նա Նանիր տատիի նման է. ամենուր հուշարաթերենի բառարանով է շրջում:

«Ամենքի համար անիրատեսի»-ն, անկասկած, նշանակում է *«անիրաժեշտ»*: Այս ամենը Բորովսկու հասկացողությունից վեր է:

---

[1] Ջրի շիթի վրա պարող ձվի պես (ֆրանս.):

[2] Համաշխարհային թախիծ (գերմ.):

թվայնացրել է 1915.info կայքը

Բորովսկին շաբաթվա ամեն օրվա համար հատուկ գավազան ունի, մեկն էլ՝ Զատկի համար:

Ինչևէ, մեր ընդհանրություններն էնքան շատ են, որ ասես ճաքած հայելու մեջ ինձ տեսնելիս լինեմ:

Աչքի անցկացրի ձեռագրերս. շտկումներով լի էջեր: *Գրականության* էջեր: Սա մի քիչ վախեցնում է ինձ: Շատ է հիշեցնում Մոլդորֆին: Ուղղակի ես հրեա չեմ, այլահավատ եմ, այլահավատներն էլ յուրովի են տառապում: Նրանք տառապում են առանց նևրոզների, իսկ Սիլվեստրի ասելով՝ նևրոզի երես չտեսած մարդը չգիտի, թե տառապանքն ինչ է:

Պարզորոշ հիշում եմ՝ ինչպես էի վայելում տառապանքս: Դա նման էր գազանիկի հետ անկողին մտնելու: Մերթընդմերթ նա ճանկռում է քեզ, և սիրտդ ահ է ընկնում: Իրականում վախ չունես. միշտ էլ կարող ես նրան բաց թողնել կամ գլուխը թռցնել:

Կան մարդիկ, որոնք ի վիճակի չեն դիմադրել վայրի գազանի վանդակը մտնելու ցանկությանը, թեկուզև խեղվեն: Նույնիսկ առանց ատրճանակի կամ խարազանի են մտնում: Վախը նրանց դարձնում է անվախ... Հրեայի համար աշխարհը վայրի գազաններով լի վանդակ է: Դուռը կողպված է, իսկ ինքը՝ ներսում՝ առանց ատրճանակի կամ խարազանի: Նրա արիությունն էնքան մեծ է, որ անկյունի կղանքի հոտը չի հասնում քթին: Հանդիսականները ծափահարում են, իսկ նա չի էլ լսում: Դրաման, նրա կարծիքով, ծավալվում է վանդակի ներսում: Վանդակը, նրա կարծիքով, արար աշխարհն է: Մենակ ու անօգնական կանգնած դուռը փակ վանդակում՝ նա հայտնաբերում է, որ առյուծները չեն հասկանում իր լեզուն: Ոչ մի առյուծ երբեք չի լսել Սպինոզայի մասին: Ի՞նչ Սպինոզա, եթե ատամներդ չես կարող խրել դրա մեջ: «Մի՛ տվեք»,– մռնչում են առյուծները, իսկ հրեան, քար կտրած, սառած, կանգնել է վանդակում, իր Weltanschauung[1]-ն էլ անհասանելի ճոճաձող է: Առյուծի թաթի մի հարված, և նրա տիեզերագոյացման հետքն էլ չի մնա:

[1] Աշխարհայացքային դիրքորոշում (գերմ.):

Առյուծներն էլ են հիասթափված: Նրանք ծարավի էին արյան, ոսկորների, կոճիկների, ջլերի: Ծամում են ու ծամում, բայց էդ ամենը խոսքեր են, ծամոն, իսկ ծամոնն աննմարսելի է: Հենքն է ծամոնը, որին ավելացնում են շաքար, պեպսին, ուրց, մատուտակ: Պիտանի է, եթե հարավամերիկացի «չիկլերոների»[1] հավաքածն է: «Չիկլերոները» եկել են սուզված մայրցամաքի լեռնապարի մյուս կողմից: Երկրաչափական լեզու են իրենց հետ բերել: Արիզոնայի անապատում նրանք հանդիպել են հյուսիսի մոնղոլներին, որոնք նման էին ողորկ բադրիջանների: Դա Երկրի գեոֆիզիկական առանցքի փոփոխությունից քիչ անց էր, երբ Գոլֆստրիմն առանձնացավ Ճապոնական հոսանքից: Հողի ընդերքում նրանք տուֆաքար գտան: Երկրի աղիքներն ասեղնագործեցին իրենց գրով: Կերան մեկմեկու փորոտիքը, և անտառը կլանեց սրանց՝ իրենց ոսկորների ու գանգերի, տուֆե ժանյակների հետ: Նրանց լեզուն անհետացավ: Տեղ-տեղ դեռ կարելի է գտնել էդ գազանանոցի մնացորդները՝ նախշազարդ գանգատուփ:

Էս ամենն ի՞նչ կապ ունի քեզ հետ, Մոլդորֆ: Խոսքը քո բերանում անարխիա է: Ասա էդ խոսքը, Մոլդորֆ, սպասում եմ: Ոչ ոք չգիտի՝ քրտինքի ինչ գետեր են հոսում, երբ իրար ձեռք ենք սեղմում: Մինչ մտքերդ ես ձևակերպում կիսաբաց շրթունքներով, թուքդ այտերիդ շաղ տալով, ես Ասիայի կես ճանապարհին անցնում եմ: Եթե վերցնեի գավազանդ, քո սովորական գավազանն ու կողքդ ծակեի, էնքան նյութ կհավաքեի, որ Բրիտանական թանգարանը կլցվեր: Հինգ րոպե կանգնում ենք, հարյուրամյակներ խժռում: Դու մաղ ես, որի միջով իմ անարխիան անցնում է, խոսքերի վերածվում: Խոսքի հետևում քաոս է: Ամեն մի խոսք թել է, երիզ, բայց չկա ու երբեք էլ էնքան խոսք չի լինի, որ ցանց գործենք:

Իմ բացակայության ընթացքում վարագույրներ են կախել: Լիզոլով թաթախված տիրոլյան սփռոցների տեսք ունեն: Սենյակը շողշողում է: Ապշած նստում եմ մահճակալին՝ մտածելով դեռ չծնված մարդու մասին: Հանկարծ զանգեր են ողողանջում. արտասովոր,

[1] Կաուչուկ հավաքողներ (իսպ.):

թվայնացրել է 1915.info կայքը

աներկրային երաժշտություն է, ասես փոխադրվել եմ Կենտրոնական Ասիա: Որոշ զանգեր երկար ծոր են տալիս, մյուսները՝ պոռթկում հարբած ու լացակումած: Հետո ամեն ինչ նորից խաղաղվում է, և միայն մի վերջին նոտա է ծլնգում՝ հազիվ քերծելով գիշերվա լռությունը, ինչպես մարող գոնգը, որ հանգչում է կրակի պես:

Լուռ պայման եմ կապել ինձ հետ ոչ մի տող չփոխել իմ գրածից: Չեմ ուզում կոկել ոչ մտքերս, ոչ էլ արարքներս: Տուրգենևի կատարելության կողքին դնում եմ Դոստոևսկու կատարելությունը («Հավերժական ամուսնուց» կատարյալ բան կա՞): Ուրեմն նույն արվեստում գոյություն ունի երկու տեսակի կատարելություն: Բայց Վան Գոգի նամակներում կատարելությունն այս երկուսից էլ վեր է: Դա անհատի հաղթանակն է արվեստի նկատմամբ:

Լոկ մի բանի եմ սրտանց հետամուտ. գրի առնել էն ամենը, ինչ գրքերում բաց են թողել: Ոչ ոք, ինչքան տեսնում եմ, չի օգտվել օդում պտտվող տարրերից, որոնք ուղղություն և իմաստ են տալիս մեր կյանքին: Միայն մարդասպաններն են կարծես որոշակի բավարարություն ստանում կյանքից: Դարը թափ է պահանջում, իսկ մեր ունեցածը անպտուղ բռնկումներ են սոսկ: Հեղափոխությունները խեղդվում են օրրանում կամ էլ շատ արագ հաղթանակում: Խանդավառությունը շուտ է շնչասպառ լինում: Մարդիկ, comme d'habitude[1], դառնում են նույն մտքերին: Ոչինչ չի առաջարկվում, որ քսաներորս ժամից ավելի դիմանա: Մենք միլիոնավոր կյանքեր ենք ապրում ամեն մի սերնդում: Միջատաբանության, ծովի ընդերքի կամ բջջի կառուցվածքի ուսումնասիրությունից ավելին ենք քաղում...

Հեռախոսն ընդհատեց միտքս, որը, մեկ է, ավարտին չէի հասցնի: Ինչ-որ մեկն ուզում է տունը վարձել...

Երևում է՝ կյանքս Բորգեզե վիլլայում մոտենում է ավարտին: Ի՛նչ արած, կվեցնեմ թղթերս ու կգնամ: Կյանքն ամենուր շարունակվում է: Կյանքը միշտ էլ շարունակվում է: Երևի ուր էլ գնամ, դրամա է: Մարդիկ ոջիլների պես են. մտնում են մաշկիդ տակ և տեղավորվում:

[1] Սովորաբար (ֆրանս.):

թվայնացրել է 1915.info կայքը

Քորվում ու քորվում ես արյունոտվելու աստիճանի, բայց անզոր ես ընդմիշտ ազատվել ոջիլներից: Ամեն տեղ էլ, ուր գնում եմ, մարդիկ իրենց կյանքը խառնաշփոթ են դարձնում: Ամեն մեկը իր անձնական ողբերգությունն ունի: Դժբախտությունը, տաղտուկը, վիշտը, ինքնասպանության միտքը հիմա արյան մեջ են: Մթնոլորտը հագեցած է աղետի, հուսալքման, ապարդյունության շնչով: Քորվիր ու քորվիր, մինչև որ մաշկահան լինես: Ինչևէ, դա առույգություն է տալիս ինձ: Վհատվելու կամ ընկճվելու փոխարեն հաճույք եմ ստանում: Ես նորանոր աղետների, ավելի մեծ փորձանքների, ավելի տպավորիչ ձախողումների եմ կարոտ: Թող աշխարհը փուլ գա, թող բոլորը քորվեն մահու չափ:

Հիմա ստիպված եմ էնքան հապճեպ ու բուռն կյանքով ապրել, որ նույնիսկ էս կցկտուր գրառումների համար հազիվ է ժամանակ մնում: Հեռախոսազանգից հետո մի պարոն եկավ կնոջ հետ: Ես գնացի վերև՝ բանակցությունների ընթացքում պառկելու: Մահճակալին մեկնված՝ անելիքս էի մտմտում: Հո հետ չէի դառնա էն կնիկ շան անկողինն ու ամբողջ գիշեր շուռումուռ գայի՝ հացի փշուրներ թափ տալով ոտքերիս մատների արանքներից: Զզվանքի մեկն էր լրբի վաստակը: Իգացողից վատ մեկ էլ ժլատն է: Էդ լեղաճաք, դողդոջան ոռատուն ապրում էր օրերից մի օր անփող մնալու մշտական վախը սրտում, չլինի՞ մարտի 18-ին, թե՞ հաստատ մայիսի 25-ին: Սուրճը՝ առանց կաթի ու շաքարի: Հացը՝ առանց կարագի: Միսը՝ առանց սոուսի, կամ էլ ի՞նչ միս, ի՞նչ բան: Առանց սրա, առանց դրա... Կեղտոտ գծուծ շուն... Մի անգամ բացեցի պահարանի դարակն ու գուլպայի մեջ թաքցրած փող գտա: Երկու հազար ֆրանկից ավելին էր, հետն էլ՝ չեկեր, որ կանխիկի չէր վերածել: Ոչինչ, դա էլ բանի տեղ չէի դնի, եթե բերետիս վրա միշտ սուրճի մրուր չլիներ, իսկ հատակին՝ զիբիլ, էլ չեմ խոսում քոլդկրեմի ամանների, յուղոտ սրբիչների ու անվերջ աղբակալած լվացարանի մասին: Ասեմ, որ էդ մանրապճեղ թշվառականից շան հոտ էր գալիս, եթե օծանելիք չէր ցանում: Ականջները կեղտոտ էին, աչքերը՝ կեղտոտ, քամակը՝ կեղտոտ: Թքով կպցրած էր, ասթմատիկ, ոջլոտ, ճղճիմ, գարշելի: Էլի ամեն ինչ նրան կներեի, եթե գոնե

թվայնացրել է 1915.info կայքը

պատշաճ նախաճաշ տար: Բայց մի մարդ, որ երկու հազար ֆրանկը պահում է անվա գուլպայի մեջ ու հրաժարվում մաքուր վերնաշապիկ հագնել կամ մի քիչ կարագ քսել հացին, միայն կնիկ շուն չի արդեն, ոչ էլ նույնիսկ գծուծ, տեղով ապուշ է:

Դե լավ, հերիք է էդ հոգավորի մասին: Պիտի ականջս սրած պահեմ, որ իմանամ՝ ներքևում ինչ է կատարվում: Ջանգելուց հետո ոմն պարոն Ռենն է կնոջ հետ եկել բնակարանը նայելու: Ասում են՝ կոզենային վարձել: Փառք Աստծու, դեռ *միայն ասում են*: Տիկին Ռենը անզուսպ ծիծաղ ունի. բարդությունների նշան է: Հիմա *պարոն* Ռենն է խոսում: Ձայնը հատու է, ճոճռան, թնդուն. ծանր բութ զենք, որ դեմ է տալիս մարմնիդ, ոսկորներիդ ու կոճիկներիդ:

Բորիսն ինձ կանչում է ցած՝ ներկայացնելու: Վաշխառուի պես ձեռքերն է շփում: Նրանք քննարկում են պրն Ռենի գրած պատմվածքը կաղ ձիու մասին:

– Իսկ ես կարծում էի՝ պարոն Ռենը նկարիչ է:

– Ճիշտ է,– ասում է Բորիսն ու ինձ աչքով տալիս,– բայց ձմռանը գրում է և լավ է գրում, արտակարգ լավ:

Ես փորձում եմ պարոն Ռենին խոսակցության մեջ քաշել, որպեսզի մի բան ասի, ինչ ուզում է լինի, թեկուզ կաղ ձիու մասին: Այնինչ պարոն Ռենը համարյա թոթով է: Իսկ երբ ջանում է խոսել գրելու հոգեմաշ ամիսների վերաբերյալ, անընկալելի է դառնում: Ամիսներ ու ամիսներ են անցնում՝ նախքան մի բառ կհանձնի թղթին: (Ձմեռն էլ հո ընդամենը երեք ամիս է): Ի՞նչ է մտորում ձմռան էդ բոլոր ամիսներին: Աստված էլ իջնի վերևից, հավատս չի գալիս, թե էս մարդը գրող է: Բայց, տիկին Ռենի պատմելով, երբ նստում է գրելու, ասելիքը *հեղեղի պես գալիս է*:

Խոսակցությունը չի կպչում: Դժվար է հետևել պրն Ռենի մտքի ընթացքին, որովհետև նրա բերանից խոսք դուրս չի գալիս: Իսկ տիկին Ռենի ասելով, «նա խոսելիս է մտածում»: Տիկին Ռենն ակնածանքով է արտահայտվում պարոն Ռենի մասին: *«Նա խոսելիս է մտածում»*. հրաշալի է, իրոք հրաշալի, ինչպես կասեր Բորովսկին, բայց և խիստ ցավալի, մանավանդ որ մտածողը ինքն էլ կաղ ձիուց ավելին չի:

թվայնացրել է 1915.info կայքը

Բորիսն ինձ փող է տալիս, որ խմիչք առնեմ: Խմիչքի գնալիս արդեն հարբում եմ: Գիտեմ՝ ինչ պիտի ասեմ, երբ վերադառնամ: Փողոցում քայլելիս մեծ ճառս սկսում է կարկաչել իմ մեջ, ինչպես տիկին Ռենի անզուսպ ծիծաղն է կարկաչում: Ինձ թվում է՝ նրա կատարն արդեն թեթևակի տաք է: Հիանալի ունկնդիր է խմած ժամանակ: Գինու խանութից դուրս գալիս միզարանի կարկաչն եմ լսում: Չորս կողմն ամեն ինչ անզուսպ է ու շաղ անցած: Ես ուզում եմ, որ տիկին Ռենը լսի...

Բորիսը դարձյալ ձեռքերն է շփում: Պարոն Ռենն էլի կմկմում է ու կզկզում: Ես շիշը դրել եմ ոտքերիս արանքը և խցանահանը մխրճել դրա մեջ: Տիկին Ռենի բերանը կիսաբաց է սպասողական վիճակում: Գինին շաղ է գալիս ոտքերիս արանքում, արևի շողերը շաղ են գալիս՝ լուսամուտից ներս թափանցելով, իսկ երակներիս մեջ հազարավոր խելառ մտքերի շաղն է, քլթքլթոցը, մտքեր, որ խառնիխուռն դուրս են հորդում իմ ներսից: Էս մարդկանց ասում եմ՝ ինչ խելքիս փչի, ինչ փակված է եղել իմ մեջ, և տիկին Ռենի անզուսպ ծիծաղը ազատ է արձակել: Շիշը՝ ոտքերիս արանքում, ներթափանց արևի շաղ անցած շողերը՝ դեմքիս, ես վերապրում եմ էն թշվառ օրերի պերճանքը, երբ առաջին անգամ եկա Փարիզ. շփոթահար ու աղքատ՝ թափառում էի փողոցներում խնջույքից անմասն ուրվականի պես: Ամեն ինչ միանգամից միտքս է գալիս. չաշխատող պետքարանները, կոշիկներս փայլեցնող իշխանը, «Սպլենդիդ» կինոթատրոնը, որտեղ քնում էի տիրոջ վերարկուի վրա, պատուհանի վանդակաճաղերը, շնչահեղձության զգացումը, չաղլիկ ուտիճները, հարբեցողությունն ու կերուխումը ժամանակ առ ժամանակ, Ռոզ Կանաքը և արևի տակ հանգչող Նեապոլը, անոթի պարերը փողոցներում, երբեմն էլ այցելությունները տիկին Դելորմի պես տարօրինակ մարդկանց: Թե ինչպես հայտնվեցի տիկին Դելորմի մոտ, արդեն չեմ էլ պատկերացնում: Բայց հայտնվեցի, ինչ-որ կերպ մտա, խաբս տվեցի սենեկապետին, փոքրիկ սպիտակ գոգնոց կապած սպասուհուն և հենց ապարանք խցկվեցի իմ որսորդական բաճկոնով ու վելվետե շալվարով, որի խանութը ոչ մի կոճակ չուներ:

թվայնացրել է 1915.info կայքը

Նույնիսկ հիմա են հիշողությանս մեջ կենդանանում էն սենյակի ոսկեհուռ հարդարանքը, որտեղ տիկին Դոլորմը՝ տղամարդու հագուստով, նստած էր ինչ-որ գահի, ոսկե ձկնիկները ակվարիումներում, հին աշխարհի քարտեզները, շքեղակազմ գրքերը: Նորից եմ զգում ուսիս դրած պինդ ձեռքը, վերհիշում, որ նա փոքր-ինչ վախեցրեց ինձ իր թունդ լեսբիական շարժուձևով: Սեն Լազար կայարան լցվող հոծ ժխորի մեջ ավելի հաճելի էր. դռների տակ՝ պոռնիկներ, ամեն սեղանին՝ սելտերյան ջուր, կեղտատար առուներով վազող սերմնահեղուկի թանձր հոսք: Խռնվել էդ ամբոխին ժամը 5-ից 7-ը՝ սրունքի կամ գրավիչ կրծքի հետամուտ, լողալ հոսանքն ի վար ու գլխապտույտ ապրել. դրանից էլ լավ բա՞ն: Տարօրինակ բավարարվածություն ունեի էդ օրերին: Ոչ տեսակցություններ, ոչ ճաշի հրավերներ, ոչ անելիք, ոչ էլ փող: Ոսկե շրջան, երբ ոչ մի հատիկ ընկեր չունեի: Ամեն առավոտ՝ հուսակտուր զբոսանք մինչև «Ամերիքըն էքսպրես», և ամեն առավոտ՝ բանկի աշխատողի անփոփոխ պատասխանը: Փայտոջիլի պես դեսուդեն էի ընկնում, ծխուկներ հավաքում՝ մերթ գաղտագողի, մերթ անամոթաբար, տեղավորվում էի մի նստարանի ու փորս ներս քաշում, որ աղիքներիս նվոցը կտրվի, կամ էլ շրջում էի Տյուիլրիի այգում ու նայում անխոս արձաններին, որոնք էրեկցիա էին առաջացնում: Գիշերները թափառում էի Սենի ափերին, անվերջ դեգերում՝ խենթանալով նրա գեղեցկությունից, գետի վրա թեքված ծառերից, սրանց աղճատ արտացոլումներից, կամուրջների արնակարմիր լապտերների ներքո ջրի հորձանքից... Դոնատակերին, թերթերի վրա, անձրևի տակ քնած կանայք և ամենուր՝ տաճարների մամռակալած սանդուղքներ, մուրացիկներ, ոջիլներ, Սուրբ Վիտուսի կայթին պատրաստ պառավ ջադուներ, նրբանցքներում գինու տակառների պես իրար գլխի շարած ձեռնասայլակներ, հատապտուղների բույր շուկայի հրապարակում և կանաչեղենով ու կապույտ լույսերով շրջապատված հին մատուռ, թափոններից սայթաքուն առուներ և կերպասե կոշիկներով կանայք, որոնք, կեղտ ու ցեխի մեջ երերալով, վերադառնում են ամբողջ գիշեր տևած կերուխումից... Խաղաղ ու ամայի Սեն Սյուլպիս հրապարակը, որտեղ

ամեն օր, կեսգիշերին մոտ, շարքից դուրս եկած հովանոցով ու աներևակայելի քողով մի կին էր գալիս. ներս ընկած կողերով, ոսկրոտ մատներով ու հնությունից կանաչած շորով էդ կինը քնում էր նստարանին, իր պատառոտված հովանոցի տակ. նրա մարմնից մգլահոտ էր փչում: Առավոտյան ես ինքս էլ նստում էի էնտեղ, հանգիստ նիրհում արևի տակ՝ հայհոյելով ամենուրեք փշրանքներ հավաքող անիծված աղավնիներին: Սեն Սյուլպիս... Չաղլիկ զանգակատներ, ճչացող ազդագրեր դռան վերևում, խորանի վառվող մոմեր... Մի հրապարակ, որ էդքան սիրում էր Անատոլ Ֆրանսը, խորանից հասնող գվվոց ու բվվոց, շատրվանի ճողփյուն, ղունղունացող աղավնիներ, ասես կախարդանքով չքացող հացի փշուրներ և դատարկ աղիքների խուլ գոգոռոց միայն... Օր օրի նստած էստեղ՝ ես մտածում էի Ժերմենի և Բաստիլի մոտի փոքրիկ, կեղտոտ փողոցի մասին, որտեղ ապրում էր նա, ականջս՝ խորանից եկող գվվոցին: Սլացող ավտոբուսներ, ասֆալտն այրող արև, ասֆալտը, որ լցվում էր իմ ու Ժերմենի մեջ, ասֆալտն ու ամբողջ Փարիզը՝ իր հաղթ, չաղլիկ զանգակատներով:

Բոնապարտ փողոցում էր, որ ընդամենը մի տարի առաջ ես ու Մոնան ամեն երեկո քայլում էինք Բորովսկուն հրաժեշտ տալուց հետո: Ոչ Սեն Սյուլպիսը, ոչ էլ մի ուրիշ բան Փարիզում ինձ համար դեռ ոչինչ չէին նշանակում: Բթացել էի խոսակցություններից, զզվել դեմքերից, սիրտս խառնում էր տաճարներից, հրապարակներից, կենդանաբանական այգիներից ու մնացած ամեն ինչից: Կարմիր ննջարանում, մի գիրք վերցնելով, նստում էի անհարմար հյուսածո բազկաթոռին. հոգնել էի ամբողջ օրը հետևս մաշելուց, հոգնել կարմիր պաստառից, հոգնել մարդկանց դատարկաբանությունից: Կարմիր ննջարանը՝ միշտ բաց անդուկով, նրա ցիրուցան, թափթփված շորերով... Կարմիր ննջարանը՝ իմ կրկնակոշիկներով ու գավազաններով, նոթատետրերով, որոնց չէի էլ դիպչում, սառն ու անշունչ ձեռագրերով... Փարի՛զը: Դա «Սելեկտ» սրճարանն էր, «Դոմ» սրճարանը, հնոտիքի շուկան, «Ամերիքըն էքսպրես» բանկը: Փարի՛զը: Դա Բորովսկու ձեռնափայտերն էին, Բորովսկու գլխարկները,

թվայնացրել է 1915.info կայքը

Բորովսկու գուաշները, Բորովսկու նախապատմական ձուկն ու նախապատմական կատակները: 28 թվականի էդ Փարիզից լոկ մի երեկո է հառնում հիշողության մեջ՝ Ամերիկա մեկնելուս երեկոն. արտակարգ երեկո՝ Բորովսկու հետ, որը թեթևակի գինովցած է ու մի քիչ թթված ինձ վրա, որ պարում եմ տեղի բոլոր պոռնիկների հետ: Ախր առավոտյան գնո՛ւմ ենք Ամերիկա: Դա եմ ասում ձեռքս ընկած ամեն քածի. *«Գնո՛ւմ ենք առավոտյան»*: Ագաթե աչքերով շիկահերին էլ եմ ասում: Իսկ մինչև կասեմ, նա բռնում է ձեռքս ու սեղմում ոտքերի արանքում: Վեհաշուք էրեկցիայով կանգնած եմ միզարանի առաջ. անդամս թվում է ծանր ու միաժամանակ թեթև, թևավոր արճճի նման: Քանի դեռ կանգնած եմ էդպես, երկու պուց են ներս ընկնում՝ ամերիկուհիներ: Սրտագին բարևում եմ՝ դագանակս բռնած: Աչքով են տալիս ու գնում: Լվացարանում, առաջս կոճկելիս, տեսնեմ դրանցից մեկը սպասում է, որ ընկերուհին դուրս գա: Երաժշտությունը դեռ նվագում է, ու մեկ էլ տեսար՝ Մոնան եկավ իմ հետևից, կամ էլ Բորովսկին՝ ոսկե գլխիկով գավազանը ձեռքին, բայց ես արդեն սրա գրկում եմ, բռնել է ինձ, ու մեկ է, թե ով կգա, կամ ինչ կլինի: Խցկվում ենք պետքարան, նրան կանգնեցնում եմ, դեմ տալիս պատին ու փորձում մեջը դնել, բայց բան դուրս չի գալիս, տեղավորվում ենք նստոցին, էդպես փորձում, բայց էլի չի ստացվում: Ինչ անում ենք՝ գլուխ չի գալիս: Էս ընթացքում նա մահակս ձեռքից բաց չի թողնում, պինդ կառչել է, ոնց որ փրկագոտուն, բայց ի՞նչ օգուտ, շատ ենք գրգռված: Երաժշտությունը դեռ հնչում է, մենք, վալս պարելով, պետքարանից էլի լվացարան ենք գալիս, ու քաքանոցում էդպես պարելիս թափում եմ նրա սիրուն շորին, նա էլ ահավոր կատաղում է դրանից: Ես, օրորվելով, հետ եմ դառնում սեղանի մոտ, իսկ էնտեղ Բորովսկին է՝ շառագունած դեմքով, և Մոնան՝ դատապարտող հայացքով: Բորովսկին ասում է, «Եկեք վաղը բոլորով Բրյուսել գնանք», ու մենք համաձայնում ենք: Երբ վերադառնում ենք հյուրանոց, հետ տալս բռնում է. ինչ-կա չկա՝ նախշում եմ. անկողինը, լվացարանը, հագուստ-կապուստը, կրկնակոշիկները, գավազանները, ձեռք չդիպած նոթատետրերը, սառն ու անշունչ ձեռագրերը:

Մի քանի ամիս անց: Նույն հյուրանոցն է, նույն սենյակը: Մենք նայում ենք բակին, որտեղ հեծանիվներն են կանգնեցնում, իսկ դրանց վերևում՝ հենց ձեղնահարկի տակ, փոքրիկ սենյակ է, որի ջահել կենվորը՝ ոմն խելոք, ամբողջ օրը միացնում է պատեֆոնն ու ձայնը գլուխը գցած՝ զանազան իմաստուն արտահայտություններ կրկնում: Ասում եմ՝ «մենք», բայց առաջ եմ ընկնում, որովհետև Մոնան վաղուց չկար, և ես այսօր եմ նրան դիմավորելու Սեն Լազար կայարանում: Իրիկնամուտին կանգնած եմ էնտեղ՝ դեմքս սեղմած ճաղերին, իսկ Մոնան չկա, նորից եմ կարդում հեռագիրը, բայց դրանից բան չի փոխվում: Վերադառնալով Լատինական թաղամաս՝ մի լավ ճաշում եմ, ասես ոչինչ էլ չի եղել: Շատ չանցած՝ «Դոմ» սրճարանի մոտով քայլելիս հանկարծ տեսնում եմ մի գունատ, տրտում դեմք, հուրհրան աչքեր և թավշե կոստյում, որը միշտ պաշտել եմ, քանի որ փափուկ թավշի տակ նրա տաք կուրծքն է, մարմարե ոտքերը՝ զով, ձիգ, ուժեղ: Նա ելնում է դեմքերի ծովից ու փաթաթվում ինձ, գորովագին փաթաթվում. հազարավոր աչքեր. քթեր, մատներ, ոտքեր, շշեր, լուսամուտներ, դրամապանակներ, պնակներ են հառվել մեզ, իսկ մենք ինքնամոռացման մեջ ենք ընկել մեկմեկու գրկում: Ես նստում եմ նրա կողքին, և նա սկսում է խոսել. խոսքի հեղեղ է: Հիստերիայի, այլասերման, բորի մոլեգին, հյուծախտավոր շեշտեր: Ես ոչ մի բառ չեմ լսում, որովհետև նա չքնաղ է, և ես սիրում եմ նրան, արդեն երջանիկ եմ ու պատրաստ մեռնելու:

Մենք Շատո փողոցում ենք, Եվգենիին ենք փնտրում: Անցնում ենք երկաթգծի կամրջով, որտեղից մի ժամանակ նայում էի մեկնող գնացքներին և կարոտից մոկտալով՝ փորձում պատկերացնել, թե նա ուր կլինի: Ամեն ինչ մեղմ է ու թովիչ կամուրջն անցնելիս: Մեր ոտքերի արանքից վեր ելնող ծուխը, երկաթգծերի շառաչը, լուսազդանշանները՝ ամեն ինչ մեր արյան մեջ է: Ես զգում եմ նրա մարմնի մոտիկությունը, մարմին, որ լրիվ իմն է հիմա, և կանգ եմ առնում՝ տաք թավիշը շոյելու: Չորս կողմն ինչ որ կա՝ անէանում է, անէանում, և տաք մարմինը՝ տաք թավշի տակ, ձգտում է դեպի ինձ...

թվայնացրել է 1915.info կայքը

Էլի նույն սենյակում ենք՝ հիսուն ֆրանկ էլ գրպանումս. ապրի Եվգենին: Նայում եմ բակ, բայց պատեֆոնը լուռ է: Սնդուկը բաց է, և Մոնայի հագուստ-կապուստը՝ առաջվա նման, թափված ամենուր: Նա՝ առանց հանվելու, պառկում է մահճակալին: Մի անգամ, երկու, երեք, չորս անգամ... Վախենում եմ, որ խելքը թռցնի... Ի՛նչ լավ է անկողնում, ծածկոցի տակ նորից զգալ նրա մարմինը: Բայց ինչքա՞ն: Երկար կտևի՛ էս անգամ: Սիրտս արդեն վկայում է, որ չէ:

Նա էնքան հուզված, տենդագին է խոսում, ասես վաղը օր չի անելու: «Հանգստացի՛ր, Մոնա: Ուղղակի նայիր ինձ... մի՛ խոսիր»: Ի վերջո, քուն է մտնում, և ես ձեռքս հանում եմ նրա տակից: Աչքերս փակվում են: Նրա մարմինը կողքիս է... Մինչև առավոտ հաստատ կողքիս կլինի: Փետրվարին էր, նավահանգստում. բուքը կուրացնում էր աչքերս: Վերջին անգամ նրան նավախցի լուսանցույցից տեսա. ձեռքը թափահարելով՝ հրաժեշտ էր տալիս ինձ: Փողոցի մյուս կողմի անկյունում մի մարդ էր կանգնել՝ գլխարկն աչքերին քաշած, ճարպակալած այտերը կախվել էին օձիքին: Վիժվածքը հետևում էր ինձ, սիգարը բերանին մի վիժվածք: Մոնան ձեռքն էր թափահարում: Դալուկ, տրտում դեմք, քամու բերանն ընկած անհնազանդ վարսեր... Հիմա էլ՝ տրտում սենյակ, նրա կանոնավոր շնչառությունը, ոտքերի արանքից դեռ ծոր տվող ավիշը, կատվի տաքուկ հոտը և նրա մազերն իմ բերանում... Աչքերս փակ են: Մենք տաք-տաք շնչում ենք բերան բերանի: Մոտ ենք, միասին, իսկ Ամերիկան երեք հազար մղոն հեռու է: Էլ չեմ ուզում ոչ մի Ամերիկա տեսնել: Ինձ համար հրաշք է, որ նա կողքիս է անկողնում, շնչում է վրաս, մազերն էլ՝ բերանիս մեջ: Մինչև առավոտ արդեն ոչինչ չի պատահի...

Արթնանում եմ խոր նիրհից՝ նրան նայելու: Լույսի աղոտ շող է ներս թափանցում: Նայում եմ նրա հրաշալի, անհնազանդ վարսերին: Զգում եմ՝ ինչ-որ բան է վզիս սողում: Նորից եմ նայում նրան, մոտիկից: Վարսերը կենդանի՛ են: Սավանը հետ եմ գցում. ավելի շատ են: Բարձի վրա խլրտում են:

Լույսը նոր է բացվել: Հապճեպ հավաքում ենք մեր ունեցածչունեցածն ու հյուրանոցից ծլկում: Սրճարանները դեռ փակ են: Քայլում ենք ու քորվում: Օրը բացվում է կաթնային ճերմակությամբ, երկնքում՝ մարջանագույն զոլեր, խխունջներն են դուրս սողում խեցիներից: Փարիզ: Փարիզ: Ինչ ասես, որ չի լինում էստեղ: Հին, թափվող պատեր և ջրի դուրեկան քչքչոց միզարաններում: Բեղը լիզող տղամարդիկ՝ կանգնակի մոտ: Շրխկոցով բացվող փեղկեր և առուները թափվող բարալիկ վտակներ: «Ամեր Պիկոն»՝ հսկայական ալ տառերով: «Զիգզագ»: Ո՞ր կողմը գնանք, ինչո՞ւ, որտե՞ղ կամ որպես ի՞նչ:

Մոնան քաղցած է, զգեստն էլ՝ բարակ: Ոչ մի բան չունի, միայն իրիկնային թիկնոցներ, օծանելիքի սրվակներ, բարբարոսական ականջօղեր, ապարանջաններ, մազահեռացման միջոցներ: Նստում ենք Մեն պողոտայի բիլիարդանոցում և տաք սուրճ պատվիրում: Ջուգարանը շարքից դուրս է եկել: Նստենք մի քիչ, մինչև ուրիշ հյուրանոց կգտնենք: Առայժմ փայտոջիլներն ենք հանում մեկմեկու մազերի միջից: Նյարդայնություն: Մոնայի համբերությունը հատնում է: Պետք է լոգանք ընդունի: Պետք է էս անի, պետք է էն անի: Պետք է, պետք է, պետք է...

– Ինչքան փող ունե՞ս:

Փող... Լրիվ մոռացել էի:

«Միացյալ Նահանգներ» հյուրանոց: Վերելակ: Օրը ցերեկով պառկում ենք քնելու: Երբ վեր ենք կենում, մութ է, և առաջին բանը, որ պիտի անեմ, փող ճարելն է Ամերիկա հեռագիր տալու համար. հեռագիր՝ երկար, թաց սիգարը բերանին էն շնից ընկածին: Բայց ինչ էլ որ լինի, Ռասպայ բուլվարում մի իսպանուհի կա, որը միշտ էլ տաք ուտելիք կտա: Առավոտյան մի բան կլինի: Համենայն դեպս, միասի՛ն կքնենք: Էլ ոչ մի փայտոջիլ: Անձրևների շրջանն է սկսվել: Սավանների վրա ոչ մի բիծ չես գտնի:

Հարգելի ընթերցող, այս գրքի էլեկտրոնային տարբերակը ստեղծել է 1915.info կայքը: Եթե ցանկանում եք որևէ գրքի էլեկտրոնային տարբերակ և չեք կարողանում գտնել այն, կարող եք դիմել մեզ:

թվայնացրել է 1915.info կայքը

2

Նոր կյանք է սկիզբ առնում ինձ համար Բորգեզե վիլլայում: Դեռ ժամը 10-ն է, իսկ մենք արդեն նախաճաշել ենք ու նույնիսկ զբոսնել: Հիմա մեզ հետ մի Էլզա կա: «Գոնե մի քանի օր համը չհանես»,- զգուշացնում է Բորիսը:

Օրը հոյակապ է սկսվում. պայծառ երկինք, թարմաշունչ քամի, մաքուր լվացված տներ: Փոստատան ճանապարհին Բորիսն ու ես գիրքն ենք քննարկում՝ «Վերջին գիրքը», որ պիտի աննանուն գրվի:

Նոր կյանքի սկիզբն զգացի այսօր առավոտյան, երբ կանգնած էինք Դյուֆրենի պլպլան կտավներից մեկի առաջ, որ 13-րդ դարի յուրատեսակ déjeuner intime[1] է՝ sans vin[2]. մի խոշորիրան, մսեղ մերկուհի՝ պնդակազմ, կենսալի, եղունգի պես վարդերանգ, մարմնի պլպլան ալքերով: Բոլոր երկրորդական հատկանիշներն առկա են, մի քանիսն էլ՝ առաջնային: Մարմին, որ երգում է, որ արշալույսի տամկություննն ունի: Նատյուրմորտ, որտեղ ոչ մի անշարժ, մեռած բան չկա: Սեղանը ջարդվում է ուտելիքից, էնքան լիքն է, որ քիչ է մնում դուրս գա շրջանակից: 13-րդ դարի ճաշկերույթ՝ ջունգլիի խառնուրդով, որ դրոշմված է շատ բարեհաջող: Վիթերի և զեբրերի ընտանիքը արմավենու տերևներն է պոկոտում:

Ուրեմն հիմա Էլզա ունենք: Առավոտյան նվագում էր մեզ համար, մինչ անկողնում էինք: *«Գոնե մի քանի օր համը չհանես»*... Լավ: Էլզան սպասուհի է, իսկ ես՝ հյուր: Բորիսն էլ վերի արտի ցորենն է: Նոր դրամա է սկսվում: Ինձ ու ինձ ծիծաղում եմ սա գրելիս: Բորիսը՝ էդ աղվեսը, գիտի կատարվելիքը: Հոտառություն ունի: *«Համը չհանես»*...

Բորիսն ասեղների վրա է: Ամեն պահ կինը կարող է հայտնվել: Էդ կինն ութսուն կիլոյից ավել քաշ ունի: Իսկ Բորիսը մի բուռ է: Դա է վիճակը: Երեկոյան տուն գալիս փորձում է բացատրել ինձ: Ամեն ինչ էնքան ողբերգական է ու միաժամանակ ծիծաղելի, որ մերթընդմերթ կանգ առնելով՝ ծիծաղում եմ նրա երեսին: «Ի՞նչ ես ծիծաղում»,-

---

[1] Մտերմիկ նախաճաշ (ֆրանս.):

[2] Առանց գինու (ֆրանս.):

մեղմորեն հարցնում է նա, հետո ինքն էլ միանում ինձ իր հեծկլտուն, հիստերիկ ծիծաղով, անօգնական տղայի նման, որը հանկարծ հասկանում է, թե ինչքան էլ սերթուկներ հագնի, մեկ է, երբեք տղամարդ չի դառնա: Բորիսն ուզում է փախչել, անունը փոխել: «Թող ամեն ինչ մնա էդ կովին, միայն թե ինձ հանգիստ թողնի»,– նվում է նա: Բայց նախ՝ պետք է բնակարանը վարձով տա, թղթերը ստորագրի, հազար ու մի մանրուքներով զբաղվի, ինչի համար էլ սերթուկը պետք է: Էդ կնկա չափե՛րը. այ թե ինչն է նրան իրոք մտահոգում: Եթե, տեղ հասնելով, Բորիսի կողակցին հանկարծ տեսնեինք դռան շեմին, նրա ուշքը կգնար. ահա թե ինչքան է հարգում կնոջը:

Ուրեմն մի որոշ ժամանակ պիտի համը չհանեմ Էլզայի հաշվով: Էլզան էստեղ է միայն նախաճաշ պատրաստելու և սրան-նրան տունը ցույց տալու համար:

Բայց Էլզան արդեն բարոյալքում է ինձ: Գերմանական արյուն: Մելամաղձոտ երգեր: Առավոտյան, աստիճաններից իջնելիս, սուրճի հոտը ռունգերիս մեջ, մոլտում էի քթիս տակ. «Es wär' so schön gewesen»[1]: Դա՝ նախաճաշին: Հետո էլ՝ վերևի էդ անգլիացի տղան իր Բախով: Էլզան ասում է. «Կին է ուզում»: Էլզան էլ է բան ուզում: Ջգում եմ: Բորիսին չասեցի, բայց առավոտյան, երբ նա մաքրում էր ատամները, Էլզան ականջս էր լցնում Բեռլինի, էնտեղի կանանց մասին, որոնք թիկունքից շատ գրավիչ են, իսկ հենց շուռ են գալիս, *ohո՛, սիֆիլիս է:*

Էլզան ինձ նայում է կարծես տխրագին, ինչպես նախաճաշի մնացորդին: Այսօր ցերեկը գրում էինք՝ արվեստանոցում մեջք մեջքի տված: Նա սկսեց նամակ գրել Իտալիայում գտնվող իր սիրեկանին: Գրամեքենան լռվեց: Բորիսը գնացել էր էժան սենյակ գտնելու, որ բնակարանը վարձով տալուց հետո միանգամից տեղափոխվի: Էլզայի հետ սեր անելուց բացի, էլ բան չէր մնում: Ինքն էր ուզում: Բայց, մեկ է, մի քիչ մեղքս եկավ: Միայն մի տող էր գրել սիրեկանին. նրա կողմը թեքվելիս աչքիս պոչով կարդացի: Դե, ի՛նչ արած: Ախր էդ անտեր գերմանական երաժշտությունը շատ է մելամաղձոտ, շատ է սրտաճմլիկ: Ջլատում է ինձ: Բա նրա ուղունքանման աչուկները, որ հրայրքոտ են ու թախծալի միաժամանակ...

[1] Դա հոյակապ կլիներ (գերմ.):

թվայնացրել է 1915.info կայքը

Երբ ամեն ինչ վերջացավ, նրան խնդրեցի մի բան նվագել ինձ համար:

Երաժիշտ է մեր Էլզան, թեպետ նվագածը նման է աման-չաման ջարդելուն ու գանգեր փշրելուն: Նվագելիս էլ լաց էր լինում: Ի՞նչ մեղադրեմ: Ամեն տեղ նույն բանն է, ասում է: Ամեն տեղ տղամարդ կա, իսկ հետո ստիպված է հեռանալ, աբորտ անել, հետո՝ նոր գործ գտնել, հետո էլ ուրիշ տղամարդ է հանդիպում, ու ոչ մեկի տանձին չի ինքը, բոլորը միայն օգտագործել են ուզում: Եվ էս ամենն ասում է ինձ համար Շուման նվագելուց հետո, Շուման՝ մի լալահառաչ, քնքշանվաղ գերմանացի թշվառական: Ինչ որ է, շատ եմ խղճում Էլզային, բայց և թքած ունեմ: Նրա պես նվագել իմացող պուցը պիտի էնքան խելք ունենա, որ ամեն պատահած հաստ կլրին չխաբվի: Բայց էդ Շումանը սիրտս է մտնում: Էլզան դեռ ֆսֆսում է, իսկ ես մտովի արդեն հեռու եմ: Մտածում եմ Տանյայի մասին, որը չանչերով ծվատում է իր աղաջոն: Հազար ու մի բանի մասին եմ մտածում, որ արդեն անցել-գնացել է, հետքն էլ չի մնացել: Հիշում եմ էն ամառային օրը Գրինփոյնթում, երբ գերմանացիք Բելգիայի հաշիվն էին մաքրում, իսկ մենք դեռ էնքան փող տանուլ չէինք տվել, որպեսզի մտահոգվեինք ինչ-որ չեզոք երկրի բռնաբարության համար: Դեռ էնքան անմեղ էինք, որ պոետների էինք լսում ու մթնշաղին շարվում սեղանի շուրջը, թխթխկացնելով՝ ոգի կանչում: Ամբողջ ցերեկն ու երեկոյան մթնոլորտը հագեցած էր գերմանական երաժշտությամբ. Նյու Յորքի գերմանական թաղամասը ավելի գերմանական էր, քան նույնիսկ Գերմանիան: Մենք մեծացել ենք՝ Շուման և Հուգո Վոլֆ լսելով, մեր կերած-խմածը կաղամբի թթուն, չամանօղին ու կարտոֆիլի կոլոլիկներն են եղել:

Իրիկնադեմին, վարագույրները քաշած, նստել էինք մեծ սեղանի շուրջը, և մի աղջիկ՝ հիմարի գլուխ, կանչում էր Հիսուս Քրիստոսի ոգին: Ձեռք ձեռքի էինք տվել սեղանի տակ, կողքիս տիկինն էլ երկու մատը խանութս էր մտցրել: Վերջը հայտնվեցինք դաշնամուրի հետևում, հատակին փռված, քանի դեռ ինչ-որ մեկը թախծալի երգ էր ծոր տալիս: Սենյակում խեղդոց էր, հետիս կնոջ շունչն էլ՝ խմածի:

թվայնացրել է 1915.info կայքը

Դաշնամուրի ոտնակը վերուվար էր անում, աներեր, մեքենայաբար. խոլ, անհարկի մի շարժում՝ թրիքի կույտի պես, որ քսանվեց տարում է գոյացել, բայց տակտը անթերի է պահում: Ականջս՝ դաշնամուրի արձագանքարանին, էդ կնոջը հագցրի ինձ վրա: Սենյակում մութ էր, իսկ ուղեգորգը՝ կպչուն թափված չամանօղուց: Հանկարծ ինձ թվաց, թե լույսն արդեն բացվում է, ասես ջուր խոխոջեր սառույցի վրա, սիռվող մեգի տակ կապույտ սառույցի. սառցադաշտերը թաղված էին զմրուխտ կանաչի մեջ, քարայծն ու այծքաղը, ոսկեփայլ պերկեսները, լամանտինները դեսուդեն էին գնում, ծովափիղը ոստնում էր Բևեռային շրջանի վրայով...

Էլզան նստել է ծնկներիս: Աչքերը պորտիկների են նման: Նայում եմ նրա մեծ բերանին, որ թաց է ու փայլուն, և ծածկում եմ իմով: Հիմա նա է մոլտում. «Es wär' so schön gewesen...»: Ախ. Էլզա, դեռ չգիտես՝ ինչ է ինձ համար քո «Trompeter von Säckingen»-ը: Գերմանական երգչախմբային ընկերություններ, Շվաբեն Հալե, Turnverein... links um, rechts um[1]..., իսկ հետո՝ շառաչուն հարված քամակին պարանի պոչով:

Է՛հ, գերմանացիք... Բոլորիդ վերցնում են հանրակառքի պես: Նրանցից ստամոքսի խանգարում ես ստանում: Ոչ ոք չի կարող մի իրիկվա մեջ ընդգրկել դիարանը, կլինիկան, գազանանոցը, կենդանակերպի նշանները, փիլիսոփայության խորխորատները, իմացաբանության բավիղները, Ֆրոյդի և Շտեկելի խորհուրդները խորին... Կարուսելով տեղ չես գնա, այնինչ գերմանացիների հետ Վեգայից կհասնես Լոպե դե Վեգային, ու ամեն ինչ՝ նույն երեկոյան, և կհեռանաս Պարսիֆալի պես հիմար:

Արդեն նշեցի, որ օրը հոյակապ սկսվեց: Միայն էս առավոտ էր, որ մի քանի շաբաթվա ամայությունից հետո նորից ֆիզիկապես ընկալեցի Փարիզը: Երևի պատճառը գիրքն է, որ սկսել է աճել իմ մեջ: Ամեն տեղ ինձ հետ է: Քայլում եմ քաղաքում՝ երեխան կրծքիս տակ, և ոստիկանները փողոցն են անցկացնում: Կանայք վեր են կենում՝

[1] «Ձեքինգենի շեփորահարը»... Մարզիկների միություն... ձախ դարձ, աջ դարձ... (գերմ.):

թվայնացրել է 1915.info կայքը

տեղները զիջելու: Էլ ոչ ոք չի հրմշտում: Հոգի եմ: Տնգտնգում եմ ծանրումեծ. հսկայական փորս դեմ է եղել աշխարհին:

Առավոտյան փոստատուն գնալիս էր, որ գրքին վերջնական հավանություն տվեցինք: Մենք գրականության նոր տիեզերագոյացում ենք հորինել, ես ու Բորիսը: Դա նոր Աստվածաշունչ է լինելու՝ *Վերջին գիրքը*: Բոլոր նրանք, ովքեր ասելիք ունեն, գրքի էջերում իրենց խոսքը կասեն՝ անանուն: Մենք կքամենք դարը: Մեզնից հետո ոչ մի գիրք չի լինի, առնվազն մի սերունդ: Մինչև օրս խարխափում էինք խավարում, և միայն բնազդն էր մեզ առաջնորդ: Իսկ հիմա մի անոթ կունենանք, որի մեջ կլցնենք կենարար հեղուկը, ռումբ, որը կպայթեցնի աշխարհը, երբ նետենք: Մենք բավականաչափ լցոն կդնենք՝ վաղվա գրողներին այուժեներ, դրամաներ, պոեմներ, առասպելներ, ուսմունքներ տրամադրելու համար: Աշխարհը կնվի այդ ամենով հազարամյակներ շարունակ: Մեր հղացումը վիթխարի ներուժով է օժտված: Միայն դրա միտքը դողահար է անում մեզ:

Արդեն հարյուրավոր տարիներ աշխարհը, մեր աշխարհը, շունչը փչում է: Եվ ոչ ոք էդ հարյուրավոր տարիներին էնքան հանդգնություն չի ունեցել, որ մի ռումբ խցկի արարչագործության քամակն ու պատրույգը վառի: Փտում է աշխարհը, մաս-մաս մեռնում: Բայց նրան coup de grâce[1] է պետք, պայթյուն, որ ամեն ինչ փշուր-փշուր կանի: Ոչ ոք մեզնից ամբողջական չի, այնինչ բոլորիս մեջ էլ մայրցամաքներ կան, ծովեր՝ մայրցամաքների միջև ու երկնքի թռչուններ: Մենք գրի կառնենք էս մեռած, բայց անթաղ աշխարհի զարգացման ընթացքը: Լողում ենք ժամանակի մակերևույթին, մինչդեռ ամեն ինչ խորտակվել է, խորտակվում է ու կխորտակվի: Մեր գիրքը վիթխարի կլինի: Ծով տարածք կունենա տեղից տեղ շարժվելու, հետ ու առաջ անելու, երգելու, պարելու, մագլցելու, լողալու, գլուխկոնծի տալու, նվնվալու, լլկելու, սպանելու համար: Մայր տաճար կլինի, իսկական մայր տաճար, որի կառուցմանը կմասնակցեն բոլոր նրանք, ովքեր կորցրել են իրենց ինքնությունը: Այդ տաճարում հոգեհանգիստներ կլինեն, աղոթքներ, խոստովանություններ, օրհներգեր, տրտունջներ

[1] Վերջին հարված (ֆրանս.):

թվայնացրել է 1915.info կայքը

ու շաղակրատանք, մի տեսակ սպանիչ անհոգություն, վարդանախշ լուսամուտներ ու գարգույլներ կլինեն, մոնթեր ու դագաղակիրներ: Կարելի է ձիերով ճեմել անցուղիներում: Կարելի է գլխով խփել պատերին. չեն վնասվի: Կարելի է աղոթել ուզածդ լեզվով կամ կծկվել դրսում ու քուն մտնել: Մեր տաճարն առնվազն հազար տարի կանգուն կմնա, և նմանը չի լինի, որովհետև շինարարների մահվան հետ գծագրերն էլ ի չիք կդառնան: Մենք բացիկներ կտպենք և էքսկուրսիաներ կկազմակերպենք: Տաճարի շուրջը քաղաք կկառուցենք և ազատ համայնք կհիմնենք: Մեզ պետք չեն հանճարներ. հանճարը մեռած է: Մեզ պետք են հուժկու ձեռքեր. հոգեղեն ուրուները պատրաստ են մարմին առնել...

Օրն առույգ քայլքով առաջ է ընթանում: Ես Տանյայենց տան պատշգամբասրահում եմ: Ներքևը՝ հյուրասենյակում, դրամա է ծավալվել: Դրամատուրգը հիվանդ է, և վերևից նրա գանգն առաջվանից էլ անշնորհք է երևում: Մազերը ծղոտից են: Մտքերը ծղոտից են: Կինն էլ է ծղոտից, ուղղակի՝ դեռ մի քիչ խոնավ: Ամբողջ տունն է ծղոտից: Ես պատշգամբում Բորիսին եմ սպասում: Իմ վերջին խնդիրը՝ *նախաճաշի հարցը*, լուծված է: Ամեն ինչ պարզեցրել եմ: Եթե նոր խնդիրներ ծագեն, կեղտոտ սպիտակեղենիս հետ ման կտամ ուսապարկիս մեջ: Գրպաններիս ամբողջ մանրը դատարկում եմ: Փողն ինչի՞ս է: Ես գրամեքենա եմ: Վերջին պտուտակն անգամ տեղն է: Անխափան գործում է: Իմ ու մեքենայի միջև մի մազ էլ չկա: Մեքենան հենց ես եմ...

Ինձ դեռ չեն ասել, թե նոր դրաման ինչի շուրջն է, բայց ես զգում եմ: Փորձում են ազատվել ինձնից: Իսկ ես էստեղ եմ, ճաշին եմ սպասում, նույնիսկ ավելի վաղ, քան կնախատեսեին: Խորհուրդներ եմ տալիս նրանց՝ որտեղ նստեն, ինչ անեն: Քաղաքավարությամբ հարցնում եմ, թե չե՞մ խանգարի իրենց, բայց նկատի ունեմ, թե *իրենք չե՞ն խանգարի ինձ*, և նրանք դա հասկանում են: Ոչ, սիրասուն ուտիճներ, դուք ինձ չեք խանգարում: *Մնում եք:* Նայում եմ ձեզ, որ նստել եք կողքի կողքի, և գիտեմ՝ արանքում անդունդ կա:

թվայնացրել է 1915.info կայքը

Ձեր մերձությունը մոլորակների մերձությունն է: Իսկ ես ձեր միջի անօդ տարածությունն եմ: Եթե հեռանամ, էլ տարածություն չի լինի, որ լողաք:

Տանյան թշնամաբար է տրամադրված. զգում եմ: Նեղսրտում է, որ ամեն ինչով տարված եմ, բացի իրենից: Իմ ոգևորության չափից հասկանում է, որ իր արժեքը հանգել է զրոյի: Գիտի՝ էս երեկո չեմ եկել իրեն պարարտացնելու: Գիտի՝ ինչ-որ բան է հասունանում իմ մեջ, մի բան, որը կոչնչացնի իրեն: Դանդաղամիտ է, բայց սա գիտակցում է...

Սիլվեստրը ավելի գոհ տեսք ունի: Նա Տանյային կգրկի ճաշելիս: Նույնիսկ հիմա շարունակում է ձեռագիրս կարդալ՝ պատրաստվելով բոցավառել իմ «ես»-ն ու հանդիպադրել Տանյայի «ես»-ին:

Էս իրիկուն աննովոր հավաքույթ է լինելու: Բեմը համարյա պատրաստ է: Գավաթների զնգոցն եմ լսում: Գինին բերում են: Երբ բաժակները կդատարկվեն, Սիլվեստրը կթոթափի իր հիվանդությունը:

Անցած իրիկուն, Քրոնստադտների մո՛տ մշակեցինք էս ծրագիրը: Որոշվեց, որ կանայք պիտի տվայտեն, իսկ հետնաբեմում պիտի ավելի շատ սարսափներ ու բռնություն լինեն, ավելի շատ աղետներ, ավելի շատ տվայտանք, ավելի շատ վիշտ ու ցավ:

Պատահական չէ, որ մեզ նմանները Փարիզ են ձգտում: Փարիզը պարզապես էստրադա է, պտտվող բեմ, որը հանդիսատեսին հնարավորություն է տալիս ներկայացումը բոլոր կողմերից տեսնել: Փարիզն ինքնին դրամա չի ստեղծում: Դրանք ուրիշ տեղ են սկիզբ առնում: Փարիզն ընդամենը աքցան է, որով սաղմը դուրս են քաշում արգանդից և դնում ինկուբատորի մեջ: Փարիզը արհեստածինների օրրանն է: Փարիզյան օրորոցում տարուբերվելով՝ ամեն մեկը սեփական հողին է փարում, իր Բեռլինը, Նյու Յորքը, Չիկագոն, Վիեննան, Մինսկը երազում: Վիեննան ոչ մի տեղ էնքան Վիեննա չի, ինչքան Փարիզում: Ամեն ինչ հասնում է աստվածացման: Օրորոցի մանկանց նորերն են փոխարինում: Փարիզյան պատերին կկարդաք, թե էստեղ Զոլան է ապրել կամ Բալզակը, Դանտեն, Ստրինդբերգը, ով ասես, որ իրենից մի բան է ներկայացրել:

թվայնացրել է 1915.info կայքը

Բոլորն ապրել են էստեղ ինչ-որ ժամանակ: Ոչ ոք *մահկանացուն* Փարիզում չի կնքել...

Խոսում են ներքևում: Սիմվոլիկ լեզվով է: «Պայքար» բառն է մեջտեղ գալիս: Սիլվեստրը՝ հիվանդ դրամատուրգը, ասում է. «Մանիֆեստն եմ կարդում»: Իսկ Տանյան հարցնում է. *«Ո՞ւմ»*: Այո, Տանյա, լսեցի քեզ: Հիմա քո մասին եմ գրում, և դու դա գուշակում ես: *Էլի խռպիտ*, որ գրի առնեմ: Երբ սեղան նստենք, էլ չեմ կարենա գրառումներ անել... Հանկարծ Տանյան նկատում է. «Էստեղ կարգին սրահ չկա»: Տեսնես ի՞նչ է նշանակում, եթե ինչ-որ բան նշանակում է:

Նրանք նկարներ են կախում: Դա էլ է ինձ վրա տպավորություն գործելու համար: Ուզում են ասել՝ մենք տանն ենք, ապրում ենք մեր ընտանեկան կյանքով, տունն ենք զարդարում, նույնիսկ մի թեթև կվիճենք նկարների շուրջը՝ քեզ համար: Եվ Տանյան նորից է նկատում. «Ինչ խաբուսի՛կ է մարդու աչքը»: Ա՛հ, Տանյա, ինչե՛ր ես ասում... Ձեզ տեսնեմ, մի քիչ էլ շարունակեք էս ֆարսը: Ես էստեղ եմ՝ խոստացածդ ճաշաբաժինն ստանալու: Թատրոնդ ինձ անչափ դուր է գալիս: Հիմա էլ Սիլվեստրն է նախաձեռնությունն ստանձնում: Նա ջանում է բացատրել Բորովսկու գուաշանկարներից մեկը. «Մո՛տ արի: Այ, տես. մեկը կիթառ է նվագում, իսկ մյուսի գրկին աղջիկ է նստած»: Ճիշտ է, Սիլվեստր: Շատ ճիշտ է: Էդ Բորովսկին է՛լ. կիթառնե՛ր, գրկին նստած աղջիկնե՛ր... Միայն թե ոչ ոք հաստատ չգիտի՝ գրկին նստածն ինչ է, կամ իրո՞ք կիթառ նվագող կա...

Շուտով Մոլդորֆը ներս կընկնի չորեքթաթ և Բորիսը՝ իր անօգնական ծիծաղով: Ճաշին ոսկեփայլ փասիան է լինելու, Անժուի գինի ու կարճ, հաստ սիգարներ: Եվ Քրոնստադտը, վերջին լուրերը լսելով, մի հինգ րոպե ավելի կաշխուժանա, ավելի կոգևորվի, իսկ հետո նորից կթաղվի իր գաղափարախոսության գոմաղբի մեջ, և գուցե նոր պոեմ ծնվի, մի մեծ ոսկե զանգ՝ առանց լեզվակի:

Մի ժամ կամ դրա չափ ստիպված էի գործս ընդհատել: Մի այցելու ևս եկավ բնակարանը նայելու: Վերևի էդ անիծված անգլիացին անվերջ իր Բախն է նվագում: Հիմա, երբ բնակարանը նայող է

թվայնացրել է 1915.info կայքը

գալիս, հարկ է լինում վազել վերև ու խնդրել դաշնակահարին, որ միառժամանակ դադար տա:

Էլզան զանգում է կանաչավաճառին: Ջրմուղագործը զուգարանի նստոցն է փոխում: Դռան զանգի հնչելուն պես Բորիսն իրեն կորցնում է: Հուզմունքից ակնոցը ցած է գցում. հիմա չորեքթաթ է, սերթուկի փեշերով հատակն է մաքրում: Սա փոքր-ինչ հիշեցնում է «Գրան Գինյոլ» սարսափի թատրոնը. քաղցած պոետը գալիս է մսագործի դստերը դաս տալու: Ամեն անգամ, հենց որ խանութի զանգը ծնգա, պոետի բերնի ջուրը գնում է: Մալարմեն հնչում է սուկիի բիֆշտեքսի պես, Վիկտոր Հյուգոն՝ հորթի լյարդի: Էլզան թեթև նախաշաճ է պատվիրում Բորիսի համար. «Ծեծած խոզի մսի մի փոքրիկ, հյութալի կոտլետ»,– ասում է: Աչքիս մի ամբողջ կույտ վարդագույն ազդրեր են երևում՝ վաճառասեղանի սառը մարմարին դարսած, սպիտակ ճարպով ամոքված հրաշալի ազդրեր: Ահավոր սոված եմ, չնայած մի քանի րոպե առաջ ենք նախաճաշել. սա երկրորդ նախաճաշն է, որը ստիպված եմ բաց թողնել: Միայն չորեքշաբթի է ինձ երկրորդ նախաճաշ հասնում, ապրի Բորովսկին: Էլզան էլի զանգում է. մոռացել է մի կտոր էլ ապխտած կրծքամիս պատվիրել: «Այո, մի փոքրիկ կտոր, շատ ճարպոտ չլինի»,– ասում է... Zut alors[1]! «Քաղցր» մի՛ս դիզեք, ոստրեների ու կակղամորթների սարե՛ր: Լյարդութոքի տապակած երշիկ էլ ավելացրեք, քանի էդ գործին եք: Ես մի նստելով Լոպե դե Վեգայի հազար հինգ հարյուր պիես կխփշտեմ:

Մի գեղեցիկ կին է եկել բնակարանը նայելու: Ամերիկուհի, իհարկե: Ես, մեջքս նրան արած, կանգնել եմ պատուհանի մոտ, նայում եմ թարմ քաքը կտցող ճնճղուկին: Զարմանալի է, թե ճնճղուկն ինչ հեշտ է գլուխը պահում: Անձրև է գալիս շատ խոշոր կաթիլներով: Ես էլ կարծում էի՝ թռչունը թաց թևերով ի վիճակի չի թռչել: Զարմանալի է, թե էս հարուստ կանայք, Փարիզ գալով, ոնց են ամենալավ ատելյեները գտնում: Պատլիկ ձիրք և հաստլիկ դրամապանակ: Անձրևը նոփ-նոր անձրևանոցը ցուցադրելու առիթ է: Ուտելիքը՝ հեչ. երբեմն նրանք էնքան տարված են պարապ բաներով, որ նախաճաշելու

[1] Վայ, քո... (ֆրանս.):

թվայնացրել է 1915.info կայքը

ժամանակ էլ չունեն: Մի փոքրիկ բրդուճ, վաֆլի՝ «Պե» սրճարանում կամ «Ռից» բարում:

«Ազնիվ դասի աղջիկների համար». ահա թե ինչ ցուցանակ կա Պյուվի դը Շավանի հին արվեստանոցի վրա: Էս երկու օրը պատահմամբ անցնելիս աչքովս ընկավ: Հարուստ ամերիկացի պցեր՝ ներկատուփերն ուսները գցած: Պստլիկ ձիրք և չաղլիկ դրամապանակ:

Ճնճղուկը մոլեգնորեն մի սալաքարից մյուսն է ցատկռտում: Թե կուզեք իմանալ, իսկը հերկուլեսյան տքնանք է: Դե, չորս կողմն ուտելիք է թափած. ուզածդ առվում, նկատի ունեմ: Գեղեցիկ ամերիկուհին զուգարանի մասին է հարցնում: Զուգարա՞նը: Արի ցույց տամ, թավշամոութ գազել: Ասում ես՝ զուգարա՞նը: Par-là, Madame. N'oubliez pas que les places numérotées sont réservées aux mutilés de la guerre[1].

Բորիսը ձեռքերն է շփում. բանը հասել է գործարքի վերջին մանրամասներին: Շները հաչում են բակում. հաչելը ո՞րն է. ոռնում են գայլերի պես: Վերևում տիկին Մելվերնեսը կահ-կարասին է տեղաշարժում: Օրնիբուն ոչ մի անելիք չունի. ձանձրանում է: Վայն էն է՝ մի ծեղ գտնի ինչ-որ տեղ, ամբողջ տունը լվանում-մաքրում է: Սեղանին մի ողկույզ կանաչ խաղող է դրված և մի շիշ գինի՝ vin de choix[2], 10 աստիճան թնդության: «Այո,– ասում է Բորիսը,– կարող եմ և ձեզ համար լվացարան դնել: Եկեք, խնդրեմ: Սա է զուգարանը: Վերևում էլ կա իհարկե: Այո, ամսական հազար ֆրանկ: Ուտրիլոյին չե՞ք հավանում: Ոչ, սա է: Ուղղակի միջադիրը պիտի փոխվի...»:

Ամերիկուհին ուր որ է կգնա: Էս անգամ Բորիսն ինձ չներկայացրեց էլ: Շա՛ն որդի... Հարուստ պուց ընկավ ձեռը՝ ինձ ներկայացնելը մտքից ընկնում է: Մի քանի րոպեից կտեղավորվեմ արդեն ու մեքենագրելուն կանցնեմ: Բայց մի տեսակ է՛լ ցանկություն չկա: Փուքսս նստել է: Մեկ էլ տեսար՝ էս ամերիկուհին մի ժամից հետ եկավ ու աթոռը քաշեց քամակիս տակից: Մարդ ո՞նց գրի, եթե չգիտի, թե կես ժամ հետո որտեղ պիտի նստի: Եթե էդ ունևոր բոզը տունը վարձի,

[1] Համեցեք, տիկին: Բայց նկատի առեք, որ համարակալված տեղերը պատերազմի հաշմանդամների համար են (ֆրանս.):

[2] Ընտիր գինի (ֆրանս.):

թվայնացրել է 1915.info կայքը

քնելու տեղ էլ չեմ ունենա: Էս տեսակ նեղն ընկնելիս դժվար է ասել՝ որն է ավելի վատ. քնելու տեղ չունենա՛լը, թե՞ աշխատելու տեղ չունենալը: Դե, ուր էլ ասես, կարելի է քնել, բայց աշխատելու համար տեղ է պետք: Թեկուզ գրածդ գլուխգործոց չլինի: Վատ վեպի համար էլ են նստելու աթոռ և որոշ առանձնություն պահանջվում: Էս հարուստ պցերը երբեք չեն մտածում նման բաների մասին: Նրանց փափուկ հետևների համար միշտ պատրաստ աթոռ կա...

Անցած իրիկուն Սիլվեստրին ու իր Աստծուն թողեցինք օջախի առաջ նստած. Սիլվեստրին՝ պիժամայով, Մոլդորֆին՝ սիգարը շրթունքների արանքում: Սիլվեստրը նարինջ է կճպում: Կեղևը դնում է բազմոցին: Մոլդորֆն ավելի մոտ է նստում նրան: Իր «Դրախտի դարպասը» փայլուն պարոդիան վերընթերցելու թույլտվություն է խնդրում: Մենք պատրաստվում ենք գնալ, ես ու Բորիսը: Շատ ուրախ-զվարթ ենք էս հիվանդանոցային մթնոլորտի համար: Տանյան գալիս է մեզ հետ: Նա ուրախ է, որ գլուխը կազատի: Բորիսն ուրախ է, որովհետև Աստված մեռել է Մոլդորֆի մեջ: Ես էլ ուրախ եմ, որովհետև նոր արարված ենք խաղալու:

Մոլդորֆի ձայնը լի է ակնածանքով. «Սիլվեստր, կարելի՞ է մնալ ձեզ հետ, մինչև որ անկողին մտնեք»: Արդեն վեց օր է՝ չի հեռանում կողքից, դեղեր է առնում, Տանյայի հանձնարարություններով դեսուդեն վազվզում, ափոփում է, խորհուրդներ տալիս, դռները պահպանում Բորիսի ու նրա դատարկապորտ ընկերների պես չարքերի ներխուժումից: Վայրենու նման հանկարծ հայտնաբերել է, որ գիշերն իր կուռքը այլանդակել են: Հիմա նստել է կուռքի ոտքերի մոտ՝ հացածառի պտուղն ու յուղը ձեռքին և հմայախոսքեր է մրմնջում: Ձայնը մարում է մեղմանուշ: Վերջույթներն արդեն ընդարմացել են:

Տանյայի հետ Մոլդորֆը խոսում է, ինչպես ուխտադրուժ քրմուհու: «Դուք պետք է նրան արժանի լինեք: Սիլվեստրը ձեր Աստվածն է»: Ու քանի դեռ Սիլվեստր Բարձրյալը տառապում է (կրծքում մի թեթև խզզոց կա), քուրմն ու քրմուհին խժռում են: «Պղծում եք ձեզ»,– ասում է նա, մինչ շրթունքներից սուս է կաթկթում: Ուտելու և

թվայնացրել է 1915.info կայքը

միաժամանակ տառապելու շնորհք ունի: Չար ոգիներին հեռու քշելով՝ նա մեկնում է հաստ թաթիկն ու շոյում Տանյայի մազերը. «Սկսում եմ սիրահարվել ձեզ: Իսկը իմ Ֆանին եք»:

Բոլոր մյուս առումներով՝ հիանալի օր է Մոլդորֆի համար: Ամերիկայից նամակ է եկել: Մոն ամեն ինչից գերազանց է ստանում: Մըրին սովորում է հեծանիվ քշել: Պատեֆոնը սարքել են: Նրա դեմքի արտահայտությունից երևում է, որ նամակում ուրիշ բաներ էլ կան, բացի գնահատականներից ու հեծանիվներից: Դա ակնհայտ է, որովհետև այսօր նա 325 ֆրանկի զարդեղեն է առել իր Ֆանիի համար: Եվ ի լրումն՝ քսան էջանոց նամակ է գրել: Սրճարանի մատուցողը թերթ թերթի հետևից հասցնում էր, նրա ինքնահոս գրիչը թանաք լցնում, սուրճ ու սիգարներ հրամցնում, հովհարում փոքրինչ, երբ որ քրտնում էր, փշրանքները մաքրում սեղանից, կպցնում նրա հանգած սիգարը, նամականիշեր բերում, գլխով պտույտ գալիս, պարադարձեր անում, խոր գլուխ տալիս՝ ուր որ է մեջքը կոտրելու աստիճանի: Թեյափողը ճոխ էր: «Կոռոնա–Կոռոնա» սիգարից էլ՝ մեծ ու ճոխ: Երևի Մոլդորֆն իր օրագրում նշել է դա: Ֆանիի համար է ամեն ինչ: Ապարանջանն էլ, ականջօղերն էլ: Ամեն ծախս արժեր: Ավելի լավ է փողը Ֆանիի վրա ծախսել, քան թե Ժերմենի ու Օդետի պես պոռնիկների: Այո, նա Տանյային էդպես էլ ասել է: Ցույց է տվել իր անդուկը: Լեփլեցուն է նվերներով. Ֆանիի և Մոյի ու Մըրիի համար:

«Իմ Ֆանին աշխարհի ամենախելոք կինն է: Շատ եմ փորձել նրա մեջ գոնե մի թերություն գտնել, բայց բոլորովին չունի:

Ֆանին կատարելություն է: Ասեմ, թե ինչեր գիտի: Չտեսնված բրիջ է խաղում, հետաքրքրվում է սիոնիզմով, եթե ասենք, հին գլխարկ տաք, զարմացած կմնաք, թե դրանից ինչ դուրս կբերի. մի տեղ՝ ոլորաթել, մյուս տեղը՝ ժապավեն, և voilà, quelque chose de beau[1]! Գիտե՞ք որն է ամենամեծ երանությունը: Ֆանիի կողքին նստած՝ ռադիո լսելը, երբ Մոն ու Մըրին արդեն քուն են մտել: Ի՛նչ հանգիստ է Ֆանին նստում: Հենց միայն նրան նայելիս զգում եմ,

[1] Խնդրեմ, մի չքնաղ բան (ֆրանս.):

թվայնացրել է 1915.info կայքը

որ վարձատրված եմ իմ թափած բոլոր ջանքերի ու չարչարանքների համար: Խելացի է լսում: Երբ մտածում եմ ձեր հոտած Մոնպառնասի մասին ու հիշում Բեյ Ռիջում ճաշն անուշ անելուց հետո Ֆանիի հետ անցկացրած երեկոներս, տեսնում եմ, որ համեմատել չի կարելի: Պարզ բաներ կան. ուտելիքը, երեխաները, լամպերի մեղմ լույսը, և կողքիդ նստած Ֆանին՝ փոքր-ինչ հոգնած, բայց կենսուրախ, գոհ, կուշտ... Մենք ժամերով նստում էինք՝ առանց մի բառ ասելու: Ա՛յ թե որն է երանությունը:

Այսօր Ֆանիից նամակ եմ ստացել. տաղտկալի, անհամ նամակներից չի: Նա սրտանց է գրում, մի լեզվով, որը նույնիսկ փոքրիկ Մըրին կհասկանա: Շատ նրբանկատ է իմ Ֆանին: Ասում է՝ երեխաները պետք է շարունակեն ուսումը, այնինչ ծախսերն իրեն անհանգստացնում են: Փոքրիկ Մըրիի դպրոցը հազար դոլար կնստի: Մոն, իհարկե, թոշակ կստանա: Բայց փոքրիկ Մըրիի՝ էդ պստիկ հանճարի հարցը ի՞նչ պիտի լինի: Ես գրեցի Ֆանիին, որ չանհանգստանա: Մըրիին դպրոց ուղարկիր, հենց էդպես էլ ասացի: Հազար դոլարն ի՞նչ է: Էս տարի առաջվանից շատ փող կաշխատեմ: Փոքրիկ Մըրիի համար բան չեմ խնայի. էդ երեխան տեղով հանճար է»:

Երանի ներկա լինեի, երբ Ֆանին անդուկը բացեր: «Տես, Ֆանի,– կասի Մոլդորֆը,– սա Բուդապեշտում եմ առել մի ծեր հրեայից... Այ, սա Բուլղարիայում են հագնում. մաքուր բուրդ է... Սա էլ ինչ-որ դքսի է պատկանել. չէ, մի փաթաթիր, արևին կդնես: Իսկ սա, Ֆանի, կհագնես, երբ օպերա գնանք... ցույց տվածս սաանրն էլ՝ մազերիդ մեջ... Սա էլ, Ֆանի, Տանյան է ընտրել քեզ համար... Նա քո տիպի է մի քիչ...»:

Ֆանին բազմել է օթոցին, ճիշտ ինչպես օլեոգրաֆիայում. մի կողքին՝ Մոն, մյուս կողքին՝ փոքրիկ Մըրին, հանճարը: Ֆանիի հաստ ոտքերը կարճ են, հատակին չեն հասնում: Աչքերը մարգանաթվի աղի խամրած փայլ ունեն: Կուրծքը նման է մի գլուխ հասած կարմիր կաղամբի. երերում է, երբ նա առաջ է թեքվում: Բայց այ քեզ տխուր բան. Ֆանին ցամաքել, պրծել է: Նստած մարտկոցի է նման: Դեմքը դատարկ է. կենդանության կարիք ունի, պիտի կենսաբեր հեղուկ ցրցամել, որ տեղը գա: Մոլդորֆը չաղլիկ դոդոշի պես ոստոստում է

նրա առաջ: Մարմինը դողդոջում է: Սոթ է տալիս ու դժվարանում նորից փորի վրա շրջվել: Ֆանին իր հաստ ոտքով բշտում է նրան: Մոլդորֆի աչքերն ավելի են չռվում: «Էլի՛ խփիր, Ֆանի, ինչ լա՛վ էր»: Ֆանին էլ էս անգամ ուժեղ է բշտում. փոս ընկած տեղ է մնում Մոլդորֆի փորին: Նրա դեմքը ուղեգորգին է. կարպետի նախշերը փոթ-փոթ են գալիս: Մոլդորֆն աշխուժանում է, թռչկոտում, կահ-կարասու մեջ տեղից տեղ ցատկում: «Ֆանի, դու հրա՛շք ես»: Հիմա նա նստել է Ֆանիի ուսին: Կծում է, ականջից մի փոքրիկ կտոր պոկում, մի պստլիկ պատառ բլթակից, որը չի ցավում: Բայց Ֆանին դեռ անկենդան է, նույն նստած մարտկոցն է ու ցամաքած-պրծածը: Մոլդորֆն ընկնում է նրա գիրկը և թրթռում տրոփող ատամնացավի պես: Տաք-տաք է ու անճարակ: Փորը փայլփլում է լաքապատ կոշիկի նման: Ականախոռոչներում բաճկոնակի երկու պերճազարդ կոճակներ են: «Արձակի՛ր աչքերիս կոճակները, Ֆանի, ուզում եմ քեզ ավելի լա՛վ տեսնել»: Ֆանին նրան տանում է մահճակալի մոտ և տաք զմուռս լցնում աչքերին: Օղակներ է դնում նրա պորտի շուրջն ու հետևը ջերմաչափ մտցնում: Պառկեցնում է, իսկ նա թրթռում-խլվլում է էլի: Մեկ էլ հանկարծ փոքրանում է և ամբողջովին աչքից անհետանում: Ֆանին ամենուր նրան է փնտրում, անգամ իր աղիքներում, ամենուր: Ինչ-որ բան Ֆանիին խուտուտ է տալիս, բայց չի հասկանում, թե որտեղ: Մահճակալը լիքն է դոդոշներով ու բաճկոնակի պերճազարդ կոճակներով:

«Ֆանի, ո՞ւր ես»: Ինչ-որ բան էլի խուտուտ է տալիս. թե որտեղ՝ չգիտի: Կոճակները թափվում են մահճակալից: Դոդոշները պատերն են մագլցում: Խուտուտ, հա խուտուտ: «Ֆա՛նի, աչքերիցս զմուռսը պոկիր: Ուզում եմ տեսնե՛լ քեզ»: Բայց Ֆանին ծիծաղում է, կուչուձիգ գալիս ծիծաղից: Ինչ-որ բան կա նրա ներսում, հա խուտուտ է տալիս ու խուտուտ: Կմեռնի ծիծաղից, եթե չպարզի՝ ինչ է: «Ֆանի, անդուկը լեփլեցուն է ընտիր բաներով: Ֆանի, լսո՞ւմ ես ինձ»: Ֆանին ծիծաղում է, չաղ որդի պես ծիծաղում: Փորն ուռել է ծիծաղից: Ոտքերը կապտում են: «Տե՛ր Աստված, Մորիս, խուտո՛ւտ է գալիս... Չգիտեմ՝ ինչ անեմ»:

թվայնացրել է 1915.info կայքը

3

Կիրակի՛ է: Կեսօրից քիչ առաջ դուրս եկա Բորգեզե վիլլայից, երբ Բորիսն ուր որ է պիտի նախաճաշի նստեր: Նրբանկատությունից հեռացա, որովհետև Բորիսը, իրոք. ցավով է նայում ինձ, որ դատարկ ստամոքսով նստած եմ արվեստանոցում: Չգիտեմ՝ ինչու ինձ չի հրավիրում հետը նախաճաշել: Ասում է՝ գրպանը թույլ չի տալիս, բայց դա արդարացում չի: Ինչևէ, աշխատում եմ նրբանկատ լինել: Եթե նեղվում է իմ ներկայությամբ մենակ ուտելուց, երևի ավելի կնեղվի, եթե ինձ սեղանակից դարձնի: Չեմ ուզում քիթս խոթել նրա գաղտնիքների մեջ:

Քրոնստադտների մոտ մտա, նրանք էլ էին ուտում: Ճուտ էր ջրորիզով: Զևացրի, թե արդեն նախաճաշել եմ, բայց որ ինձ մնար, նրանց փոքրիկի ձեռքից պատառը կխլեի: Կեղծ համեստությունից չեմ էապես. իմ կարծիքով՝ ինչ-որ շեղում է: Երկու անգամ առաջարկեցին իրենց միանալ: Չէ, չէ: Նույնիսկ մի բաժակ սուրճից հրաժարվեցի: Շատ նրբանկատ եմ, շա՛տ: Դուրս գալիս մի երկար հայացք գցեցի փոքրիկի ափսեին. ոսկորների վրա դեռ միս կար:

Աննպատակ թրև եմ գալիս: Չքնաղ օր է. դեռևս: Բյուսի փողոցը աշխույժ է, խլրտուն: Բարերի դռները լայն բաց են, իսկ մայթեզրերին շարվեշար հեծանիվներ են կանգնած: Մսի և բանջարեղենի բոլոր շուկաներում եռուզեռ է: Թերթերի մեջ փաթաթված բանջարեղենով ծանրաբեռ ձեռքեր: Իսկ և իսկ կաթոլիկական կիրակի, համենայն դեպս՝ առավոտյան:

Կեսօր է, իսկ ես, փորս դատարկ, կանգնած եմ էս ծուռումուռ փողոցների խաչմերուկում, որոնցից ուտելիքի հոտ է տարածվում: Դիմացս «Լուիզիանա» հյուրանոցն է. մի մռայլ, հնամյա իջևանատեղ, որ Բյուսի փողոցի վատ տղերքին քաջ հայտնի էր հին, լավ ժամանակներում: Հյուրանոցներ և ուտելիք. թափառում եմ բորոտի պես, խեցգետինները ստամոքսս են ճանկոտում: Կիրակի առավոտյան փողոցները տենդով են բռնված: Ոչ մի տեղ նման բան չկա, բացի երևի նյույորքյան Իսթ Սայդից կամ Չաթեմ Սքուերից:

թվայնացրել է 1915.info կայքը

Լ'էշոդե փողոցը եռում է: Ոլոր-մոլոր ուղիների ամեն անկյունում մի նոր թոհուբոհ է: Դեսուդեն վխտացող շարան-շարան մարդիկ՝ բանջարեղենը թևատակերին և ղրճղրճան ախորժակի փայլը աչքերում: Միայն ուտելիք, ուտելիք, ուտելիք, ուրիշ ոչինչ: Ցնորվում ես:

Անցնում եմ Ֆյուրսթենգերգի հրապարակով: Հիմա՝ կեսօրին, այլ տեսք ունի: Վերջերս, երբ գիշերն անցա, ամայի էր, տրտում, տեսլային: Հրապարակի մեջտեղում չորս սև ծառ կան, որ դեռ չեն բողբոջել: Սալաքարերից աճած ինտելեկտուալ ծառեր են: Թ. Ս. Էլիոթի բանաստեղծությունների պես: Արևս վկա, եթե Մարի Լորանսենն իր լեսբուհիներին դուրս բերեր, սա իսկը նրանց շփվելու վայրը կլիներ: Très lesbienne ici[1]. Անպտուղ, անսեռ, Բորիսի արտի նման չորացած:

Սեն Ժերմեն եկեղեցուն կից փոքրիկ պարտեզում վերևից հանված մի քանի գարգոյլներ կան, հրեշներ, որ կարկառվել են ահազդու շեշտակիությամբ: Նստարաններին էլ ուրիշ հրեշներ են՝ ծերեր, թուլամիտներ, խեղանդամներ, ընկնավորներ: Խաղաղ նիրհում են՝ սպասելով ճաշի կոչնակին: Ջակ պատկերասրահի մոտ ինչ-որ ծալապատկաս տիեզերքն է նկարել *մայթին*: Նկարչի տիեզերք է՝ ավելորդություններով, անհարկի մանրուքներով լի: Բայց ներքևի ձախ անկյունում խարիսխ է նկարված ու ճաշի կոչնակ: Ողջո՛ւյն, ողջո՛ւյն, ո՛վ տիեզերք:

Դեռ թրև եմ գալիս: Հետկեսօրե է: Աղիքներս գոմռում են: Անձրև է բռնում: Աստվածամոր տաճարը դամբանի պես հառնում է ջրի միջից: Գարգոյլները ցցվել են ժանեկահյուս ճակատամասի վրա: Կախվել մնացել են, ինչպես սևեռուն միտքը՝ մոլագարի գլխում: Դեղնած այտամորուսով մի ծերուկ է մոտենում ինձ: Ձեռքին ինչ-որ Ցավորսկու ցնդաբանություն է: Գլուխը հետ է գցել, և անձրևը, չոռալով դեմքին, ոսկեդեղին ավազը ցեխի է վերածում: Գրախանութ, ցուցափեղկում՝ Ռաուլ Դյուֆիի գծանկարները. հավաքարարուհիներ՝ վարդի թփերը ոտքերի արանքում: Աշխատություն Խոան Միրոյի փիլիսոփայության մասին: *Փիլիսոփայության*, նկատի առեք:

[1] Շատ լեսբիական տեղ է (ֆրանս.):

թվայնացրել է 1915.info կայքը

Նույն ցուցափեղկում՝ «Մարդը՝ կտոր առ կտո՛ր»: Առաջին գլուխ. «Մարդը՝ ընտանիքի աչքերով»: Երկրորդ գլուխ. «Նա ինքը՝ սիրուհու աչքերով»: Երրորդ գլուխ. չի երևում: Պիտի վաղը գալ երրորդ ու չորրորդ գլուխների համար: Գրավաճառն ամեն օր էջը շրջում է: «Մարդը՝ կտոր առ կտոր»... Չեք պատկերացնի՝ ո՛նց եմ գազազում, որ նման վերնագիրը ե՛ս չեմ հորինել: Ո՞ւր է էս գլուխների հեղինակը. «Նա ինքը՝ սիրուհու աչքերով... Նա ինքը՝ էնինչի աչքերով... Նա ինքը...»: Ո՞ւր է էս տղեն: Ո՞վ է: Ուզում եմ գրկել: Տեր Աստված, երանի էնքան խելք ունենայի, որ նման վերնագիրը ի՛մ մտքով անցներ՝ փոխանակ «Գժված աքլորի» ու մոգոնածս մյուս ապուշությունների: Է՛հ, գլուխը քարը: Ինչ որ է, շնորհավորում եմ նրան:

Հաջողություն եմ մաղթում էդ տղին՝ իր հիանալի վերնագրով հանդերձ: Մի կտոր էլ իմ կողմից՝ հաջորդ գրքիդ համար: Ջանգիր ինձ օրերից մի օր: Ես Բորգեզե վիլլայում եմ ապրում: Բոլորս մեռած ենք էնտեղ, մեռնում ենք կամ մեռնելու վրա ենք: Մեզ լավ վերնագրեր են պետք: Միս է պետք՝ շատ ու շատ կտորներ, հյութալի սուկի, բիֆշտեքսներ, երիկամներ, ոստրեներ, փորոտիք: Մի օր, 42-րդ փողոցի և Բրոդվեյի անկյունում կանգնած, միտքս կբերեմ էդ վերնագիրն ու գրի կառնեմ՝ ինչ որ խելքիս փչի. խավիար, անձրևի կաթիլներ, քսայուղ, վերմիշել, լյարդութոքի երշիկ՝ շատ ու շատ կտորներ: Եվ ոչ ոքի չեմ ասի, թե ինչու, էդ ամենը գրելուց հետո, հանկարծ գնացի տուն ու մանկիկին կտոր-կտոր արի: Un acte gratuit pour vous, cher Monsieur si bien coupé en tranches[1]!

Ո՞նց կարող է մարդ ամբողջ օրը դատարկ փորով ու մեկ-մեկ էլ անգամ բանը կանգնած՝ շրջել փողոցներում. սա էն գաղտնիքներից է, որ «հոգու կազմախոսները» հեշտությամբ բացատրում են: Կիրակի օրվա հետևյալ օրերին, երբ շերտավարագույրներն իջեցված են, և պրոլետարիատը մի տեսակ բութ հուլությամբ գրավում է փողոցները, կան մայրուղիներ, որ պարզապես հիշեցնում են երկայնակի կիսված մի մեծ շանկրավոր անդամ: Ու հենց սրանք են, Սեն Դրնի փողոցը, օրինակ, կամ Ֆոբուր դյու Տամպլը, որ անդիմադրելիորեն

[1] Անաոիթ արարք հանուն ձեզ, այդքան լա՛վ կտրատված սիրելի պարոն (ֆրանս.):

թվայնացրել է 1915.info կայքը

ձգում են, ճիշտ ինչպես հին օրերին Յունիոն Սքուերի մոտակայքի կամ Բաուերիի ծայրամասի տասը սենթանոց թանգարաններն էին գրավում, որոնց ցուցափեղկերում ներկայացված էին սիֆիլիսի և այլ վեներական հիվանդությունների ճարակ դարձած տարբեր օրգանների մոմակերտ պատճեններ: Քաղաքը փռված է ոտքից գլուխ հիվանդ հսկայական օրգանիզմի պես, իսկ գեղեցիկ փողոցներն ուղղակի մի քիչ պակաս գարշելի են, քանի որ սրանց թարախը հանել են:

Սիտե Նորտյեում, Կոմբա հրապարակի մոտ, մի քանի րոպե դադար եմ տալիս՝ տեսարանի ամբողջ ողորմելիության մեջ խորամուխ լինելու: Ուղղանկյուն բակ է՝ շատ այլ բակերի նման, որ կարելի է տեսնել Փարիզի հին կառուղիները եզերող ցածր դարպասատակերի միջով: Բակի մեջտեղում խարխուլ շինությունների կիտուկ է. դրանք էնպես են փտել, որ փլվում են իրար գլխի՝ արգանդային գիրկընդխառնություն կազմելով:

Գետինն անհարթ է, թերթաքարե սալարկը՝ լորձնոտ, լպրծուն: Խարամից ու թափթփուկներից գոյացած մարդկային աղբակույտ: Արևը շտապում է մայր մտնել: Գույները խամրում են. բոսորը փոխվում է չորացած արյան, սադափը՝ մուգ դարչնի, սառը, անկենդան գորշ երանգները՝ աղավնու ծերտի գույնի: Էստեղ-էնտեղ, լուսամուտի մոտ ինչ-որ ծռմռված ցուցանք է կանգնած, որ բվի պես աչքերն է ճպճպացնում: Ականջդ ծակում է գունատ, վտիտ երեխաների ճղավոցը, փոքրիկ ռախիտավորներ՝ մանկաբարձական աքցանի հետքերով: Պատերից գարշահոտ է տարածվում, բորբոսնած ներքնակ Եվրոպայի հոտը, միջնադարյան, գրոտեսկային, այլակերպ Եվրոպայի՝ սի մինոր սիմֆոնիայի: Փողոցի ճիշտ հանդիպակաց մայթին, «Կոմբա» կինոթատրոնն իր նրբաճաշակ հանդիսատեսներին առաջարկում է «Մետրոպոլիսը»:

Հեռանալիս միտքս է գալիս մի գիրք, որը հենց օրերս եմ կարդացել. «Քաղաքը սպանդանոց էր դարձել. դիերը, որ մսագործներն անդամատել էին, իսկ կողոպտիչները՝ կապտել, ամենուր թափված էին փողոցներում: Շրջակայքից քաղաք թափանցած գայլերը

թվայնացրել է 1915.info կայքը

լափում էին դրանք: Սև մահն[1] ու մյուս պատուհասներն էին սողեսող ուղեկցում նրանց, անգլիացիներն էլ արդեն վրա էին հասնում, մինչ մահվան պարն էր պտույտ բռնել բոլոր գերեզմանատներում...»: Փարիզն է Կարլոս Խելագարի օրոք: Ա՛յ, սքանչելի գիրք: Թարմացնող, ախորժալի: Դեռ գերված եմ: Ես քիչ բան գիտեմ Վերածնության շրջանի հովանավորների, նիստուկացի մասին, բայց գեղանի հացավաճառուհի տիկին Պեմպեռնելը և ոսկեգործ վարպետ Հովհան Կրապոտը գրավում են պարապ միտքս: Չմոռանամ և Ռոդենին՝ «Թափառական հրեայի» չար ոգուն, որն զբաղված էր իր անարգ գործերով, «մինչև այն օրը, երբ կրքով բռնվեց և խաբվեց մուլատուհի Սեսիլիի կողմից»: Տամպլ հրապարակում նստած, Ժան Կաբոշի գլխավորությամբ գործող ձի քերթողների արարքները ծանրութեթև անելիս, ես երկար ու կարեկցագին մտորել եմ Կարլոս Խելագարի տխուր ճակատագրի մասին: Մի պակասամիտ, որ դեգերում էր իր Սեն Պոլ նստավայրի սրահներում՝ կեղտակուր քրջեր հագած, խոցոտ ու ոջլակեր, ոսկոր կրծելով, երբ նրան ոսկոր էին գցում, ինչպես քնձռոտ շանը: Լիոն փողոցում ես փնտրում էի հին գազանանոցի քարերը, որտեղ Կարլոսը ժամանակին կերակրել է իր սիրելի կենդանիներին: Խեղճ դմբլո. դա էր նրա միակ ժամանցը, մեկ էլ թղթախաղը «նսեմ ծագման տեր ընկերուհու»՝ Օդետ դը Շանդիվերի հետ:

Սրա պես կիրակի էր, որ հանդիպեցի Ժերմենին: Ման էի գալիս Բոմարշե բուլվարով, մի հարյուր ֆրանկի չափ հարստություն ունեի, որ կինս էր գժավարի Ամերիկայից ուղարկել: Օդում արդեն գարնան շունչը կար, թունավոր, ժանտահոտ գարնան, որն ասես կեղտահորերից էր խուժում: Ամեն գիշեր էս թաղամասն էի գալիս՝ ուրկոտ փողոցներով տարված, որոնց չարագուշակ փայլը երևան էր ելնում, երբ ցերեկվա լույսը քիչ-քիչ նվազում էր, և պոռնիկներն սկսում էին իրենց տեղերը գրավել: Միտքս է գալիս հատկապես Պաստյոր-Վագներ փողոցի և բուլվարի հետևում նիրհող մողեսի պես պահված Ամլո փողոցի անկյունը: Էնտեղ՝ էապես ասած, 22ի բերանում, միշտ գիշակերների երամ կար, որոնք կոնչում էին ու կեղտոտ թևերը

[1] Ժանտախտը 14-րդ դարի Եվրոպայում:

թվայնացրել է 1915.info կայքը

թափահարում. նրանք ճանկում էին քեզ սուր մագիլներով և քարշ տալիս դեպի դուռը: Ջվարթ, անհագուրդ քաջքեր, որ չէին թողնում նույնիսկ շալվարդ կոճկես գործդ պրծնելուց հետո: Հենց փողոցից քեզ մտցնում էին մի փոքրիկ սենյակ, որը, սովորաբար, լուսամուտ չուներ, փեշերը հավաքած՝ մահճակալի եզրին նստելով, հապճեպ ստուգման էին ենթարկում, հետո թքում տանձիդ ու քո տեղը մեջը դնում: Մինչև քեզ լվանայիր, արդեն մի ուրիշն էր սպասում դռան մոտ՝ զոհի ձեռքը բռնած, անտարբեր նայելով, թե ոնց ես քեզ կարգի բերում:

Ժերմենն էդպես չէր: Թեև տեսքից չէիր ասի: Ոչ մի բանով չէր տարբերվում մյուս պոռնիկներից, որ ամեն իրիկնամուտի հավաքվում էին «Լ'Էլեֆան» սրճարանում: Ինչպես նշեցի, գարնանային օր էր, և մի քանի ֆրանկը, որ կինս էր իրար արել՝ ինձ ուղարկելու համար, գրպանս ծակում էին: Աղոտ կանխազգացում ունեի, որ Բաստիլի հրապարակ չհասած՝ էս ուրուրներից մեկի ճանկն եմ ընկնելու: Բուլվարում ճեմելիս նկատեցի նրան. պոռնիկի աչք ծակող փութկոտ շարժուձևով իմ կողմն էր գալիս. մաշված կրունկներ, էժանագին զարդեղեն և յուրահատուկ գունատություն, որն այտերի կարմրաներկն ավելի է ընդգծում: Դժվար չէր նրա հետ լեզու գտնել: Նստեցինք «Լ'Էլեֆան» փոքրիկ սրճարանի խորքում և տեղնուտեղը պայմանավորվեցինք:

Մի քանի րոպեից արդեն Ամլո փողոցի հինգ ֆրանկանոց սենյակներից մեկում էինք, որի վարագույրն իջեցրած էր, իսկ մահճակալի ծածկոցը՝ հետ գցած: Նա չէր շտապում, էս Ժերմենը: Նստեց բիդեին՝ օճառելով իրեն, հաճելի խոսքուզրույց բացեց դեսից-դենից: Հագիս բրիջը նրան դուր էր եկել: Իր կարծիքով՝ trés chic[1] էր: Ժամանակին շքեղ շալվար էր իրոք, բայց նստատեղս ծղոտվել էր. էլի լավ էր, որ պիջակի փեշերը հետևս ծածկում էին: Երբ նա վեր կացավ սրբվելու, հաճելի զրույցը դեռ շարունակվում էր, բայց հանկարծ ցամքոցը գցեց մի կողմ և անշտապ մոտենալով ինձ՝ սկսեց քնքշագին իր փուփուշը շոյել, փաղաքշել երկու ձեռքով, փայփայել ու

[1] Շատ շքեղ էր (ֆրանս.):

թվայնացրել է 1915.info կայքը

գուրգուրել, գուրգուրել: Ինչ-որ անմոռանալի բան կար նրա պերճախոս պահվածքի մեջ, երբ իր վարդաթուփը քիթս խոթեց. էնպես էր խոսում դրա մասին, ասես իրենը չէր, օտար բան էր, որը թանկ գնով էր ձեռք բերել, մի բան, որի արժեքը ժամանակի ընթացքում աճել էր և հիմա աշխարհում ամեն ինչից վեր էր իր համար: Նրա խոսքերն առանձնակի բույր էին տալիս. դա արդեն կնոջ մարմնի մաս չէր պարզապես, այլ՝ գանձ, մոգական, զորավոր գանձ, Աստծու պարգև, թեկուզև տերն օրնիբուն ծախում էր ունեցածը մի քանի արծաթով: Հենց որ նա փռվեց մահճակալին՝ ոտքերը տարածած, ձեռքերի մեջ առավ իր հարստությունն ու էլի սկսեց շոյել՝ շարունակ մրմնջալով խոպաձայն ու դողահար, թե ինչ լավ, հրաշալի բան ունի, գանձ, փոքրիկ գանձ: Եվ նրա փուփուշը լա՛վն էր իսկապես: Կիրակնօրյա էդ հետկեսօրեին, երբ գարնան թունավոր շունչն էր օդում, ամեն ինչ նորից տեղն ընկավ: Հյուրանոցից դուրս գալիս, ցերեկվա կտրուկ լույսի տակ նայելով նրան, սովորական պոռնիկի տեսա. ոսկե ատամներ, խորդենի՝ գլխարկին, մաշված կրունկներ և այլն, և այլն: Բայց ինձ չմտահոգեց բնավ, որ նա ճաշ, սիգարետ և տաքսու փող կորզեց: Փաստորեն հենց ինքս խրախուսեցի: Էնքան էր դուր եկել, որ ճաշից հետո էլի գնացինք նույն հյուրանոցն ու մի հատ էլ փորձեցինք: Էս անգամ՝ «սիրո հողի վրա»: Եվ նորից էդ փարթամ, փամփլիկ թուփը իր դյութանքն ու մոգական գործը արեց: Ինձ համար էլ ինքնուրույն գոյություն ստացավ: Կար Ժերմենը, և կար նրա վարդաթուփը: Երկուսն էլ արտովս էին թե՛ առանձին-առանձին, թե՛ մեկտեղ:

Արդեն ասացի, որ Ժերմենը մյուսների նման չէր: Հետագայում, իմանալով իմ իրական պայմանների մասին, իրեն շատ ազնիվ պահեց. խմիչք էր առնում ինձ համար, ապառիկ էր դասավորել, իրերս էր գրավ դնում, ծանոթացնում ընկերուհիների հետ և այլն: Նույնիսկ ներողություն էր խնդրում, որ փող չէր կարող տալ, ու ես շատ լավ հասկացա, թե ինչու, երբ մատնացույց արեցին նրա maquereau-ին[1]: Ամեն իրիկուն գալիս էի Բոմարշե բուլվարի էդ փոքրիկ սրճարանը, որտեղ պոռնիկներն իրար գլխի էին հավաքվում, և սպասում էի

[1] Բոզարած, պոռնկապահ (ֆրանս.):

թվայնացրել է 1915.info կայքը

Ժերմենի երևալուն, որ իր թանկ ժամերից ինձ մի քանի րոպե տրամադրեր:

Երբ որոշ ժամանակ անց գրում էի Կլոդի մասին, մտքումս Կլոդը չէր, այլ Ժերմենը... «Բոլոր տղամարդիկ, որոնց հետ նա եղել էր, իսկ հիմա դու էիր, միայն դու, անցնող գետանավերը, դրանց կայմերն ու կմախքները, կյանքի ամբողջ ընթացքը, որ հոսում էր քո մեջ, նրա մեջ, քեզնից առաջ եղածների ու քեզնից հետո եկողների մեջ, ծաղիկները, թռչունները, շողացող արևն ու քեզ խեղդող, անշնչացնող բույրը...»: Սա Ժերմենի մասին է: Կլոդն ուրիշ էր, թեև ես շատ էի հմայված նրանով, ինչ-որ պահի նույնիսկ մտածում էի, թե սիրում եմ: Կլոդը հոգի ուներ և խիղճ, նա նրբագեղություն ուներ, որ պոռնիկի համար վատ է: Կլոդը միշտ տխրության զգացում էր բերում, էն տպավորությունն ստեղծում, իհարկե, ականա, որ դու մեկն ես նրանց շարքից, ովքեր, ճակատագրի կամքով, ուղարկված են իրեն կործանելու: Ասում եմ՝ *ականա*, որովհետև Կլոդը երբեք ու երբեք, գիտակցաբար, նման միտք չէր ներշնչի: Նա շատ նրբանկատ էր, շատ զգայուն դրա համար: Ըստ էության, միջակ խելքի տեր ֆրանսիացի սովորական բարեսիրտ աղջիկ էր, որին կյանքը դավել էր: Ներքուստ նա բավականաչափ պինդ չէր, որպեսզի դիմանար առօրյա կյանքի հարվածներին: Լուի Ֆիլիպի ահավոր խոսքերը նրան էին վերաբերում. «Եվ գալիս է մի գիշեր, երբ ամեն ինչ վերջացած է, երբ այնքան ծնոտներ են մեզ վրա բացուխուփ եղել, որ այլևս ի վիճակի չենք կանգնել, և մեր միսը կախ է ընկնում ոսկորներից, կարծես բոլոր բերանները ծամած լինեն»: Իսկ Ժերմենը, ընդհակառակը, պոռնիկ էր ծնվել: Իր դերը նրան բավարարում էր լիովին, փաստորեն հաճելի էր, չհաշված երբ ստամոքսը մզում էր քաղցից, կամ կոշիկներն էին շարքից դուրս գալիս, աննշան մանրուքներ, որ սրտին մոտ չէր ընդունում, ինչ մնաց, թե տանջվեր: Տաղտո՛ւկը. այ թե ինչն էր ամենավատը նրա համար: Կային օրեր, երբ ամեն ինչից կուշտ էր, ինչպես ասում ենք, բայց ուրիշ ոչինչ: Մնացած ժամանակ հաճույքով էր անում իր գործը կամ էլ նման պատրանք էր առաջացնում: Ինչ խոսք, նրա համար մեկ չէր, թե ում հետ է գնում: Բայց կարևորը, որ *դղամարդ* լիներ:

թվայնացրել է 1915.info կայքը

Տղամա՛րդ: Դա էր նրա մարմաջը: Տղամարդ, ոտքերի արանքում՝ մի բան, որն ի վիճակի էր նրան խտղտել, գալարվել տալ էքստազի մեջ, ստիպել, որ երկու ձեռքով բռնի իր փափկամազ ցայլքն ու հրճվանքով, պարծանքով, հպարտությամբ շոյի՝ զգալով իր կապը, պատկանելությունը կյանքին: Դա էր միակ տեղը, ուր նա կյանքի զգացողություն ուներ, երկու ձեռքով պահած էդ տեղը:

Ժերմենը պոռնիկ էր մինչև ուղնուծուծը, նույնիսկ նրա բարի սիրտը պոռնիկի էր, ասենք, իրականում դա ոչ էլ բարի, այլ ծույլ, անտարբեր, թառամած սիրտ էր, որը կարող էր միայն մի պահ թպրտալ, ոչ մի կապվածություն չուներ, պոռնիկի մեծ, թոշնած սիրտ էր, որը կարող էր միայն մի պահ վեր թռչել: Բայց ինչքան էլ զազրելի ու սահմանափակ լիներ Ժերմենի աշխարհը, նա իրեն հոյակապ էր զգում էնտեղ: Իսկ դա ինքնին քաջալերիչ բան է: Երբ մոտիկացանք, ընկերուհիները ձեռ էին առնում ինձ, թե սիրահարվել եմ Ժերմենին (անհավատալի բան նրանց համար): Ես էլ ասում էի. «Ո՛նց չէ, բա ի՞նչ եմ արել, որ չեմ սիրահարվել: Դեռ հավատարիմ էլ պիտի մնամ»: Սուտ էր իհարկե. Ժերմենին սիրելն ինձ համար նույնն էր, թե սարդի սիրեի: Ու եթե հավատարիմ էի, ոչ թե Ժերմենին, այլ նրա ոտքերի արանքի փափկամազ բանին: Ինչ կնոջ էլ նայեի, միանգամից Ժերմենն էր միտքս գալիս, նրա հրավառ թուփը, որն ասես անջնջելիորեն մեխվել էր հիշողությանս մեջ: Ինձ համար հաճելի էր նստել փոքրիկ արճարանի բացօթյա մասում և նայել նրան արհեստը բանեցնելիս, տեսնել, թե ոնց էր ուրիշներին էլ աչքով-ունքով անում, խաղեր տալիս, ինչպես ինձ: «Իր գործին է»,- մտածում էի ես՝ հավանությամբ հետևելով նրա արածին: Հետագայում, երբ կապվեցի Կլոդի հետ և ամեն իրիկուն նրան տեսնում էի սովորական տեղում, կլորիկ տուտուզը թավշե թիկնաթոռին հարմարավետ դրած, մի տեսակ անարտահայտելի ընդդիմությամբ էի համակվում. ինձ թվում էր՝ պոռնիկն իրավունք չունի, տիկնոջ պես նստած, ամոթխածորեն սպասել, թե իրեն կմոտենան, և շարունակ կում-կում շոկոլադ խմել զսպվածությամբ: Ժերմենը կրակի կտոր էր: Նա չէր սպասում, որ իրեն մոտենաս, վրա էր հասնում ու բռնում քեզ: Ես լավ եմ հիշում

թվայնացրել է 1915.info կայքը

նրա ծակ գուլպաները, հնամաշ կոշիկները, հիշում եմ՝ ոնց էր կանգնակի մոտ կույր, սրտապինդ անփութությամբ ինչ-որ թունդ բան քաշում գլխին ու նորից դուրս թռչում: Ի՛սկը կրակի կտոր: Գուցե դուրեկան չէր զգալ կոնծածի նրա շունչը, թույլ սուրճի, կոնյակի, ապերիտիվների, պեռնոյի ու մնացած բաների խառնուրդի հոտը, որոնցով կոկորդն էր թրջում գործի արանքում՝ տաքանալու և ուժ ու քաջություն առնելու համար, բայց խմածը նրան այրում, տոգորում էր և ներքևը՝ ոտքերի արանքում, կրակ էր վառվում, իսկ կնոջ կրակը հենց էդտեղ պիտի վառվի. էս շրջապտույտի շնորհիվ է, որ ոտքիդ տակ նորից հող ես զգում: Երբ Ժերմենը պառկում էր՝ ոտքերը տարածած, և տնքում, թեկուզ բոլորի հետ էլ նույն ձևով տնքար, վնաս չուներ, դա հրայրքի ցուցադրություն էր, ինչը և հարկավոր էր: Նա անհաղորդ հայացքը չէր հառում առաստաղին, ոչ էլ փայտոջիլները հաշվում պաստառին, ուշքն իր գործին էր, և ասածները հենց էն խոսքերն էին, որ տղամարդն ուզում է լսել կնոջ վրա ելնելիս: Մինչդեռ Կլոդը... Դե, Կլոդի դեպքում միշտ ինչ-որ նուրբ պահ կար, նույնիսկ երբ հետդ սավանի տակ էր մտնում: Նրա նրբազգացությունը վիրավորում էր ինձ: Նրբազգաց պոռնիկն ո՛ւմ է պետք: Կլոդն անգամ խնդրում էր երեսդ շրջել, երբ նստում էր բիդեին: Սխա՛լ է: Կրքից տոչորվող տղամարդն ուզում է տեսնել, *ամեն ինչ* տեսնել, նույնիսկ, թե կինը ոնց է ջուր թափում: Է՛, հա, թեպետ և հաճելի է իմանալ, որ կինը խելք ունի, պոռնիկի սառը մարմնից բխող գրականությունը անկողնում մատուցվելիք բանը չի: Ժերմենը ճիշտ պատկերացում ուներ. նա տգետ էր ու վավաշոտ և հոգին ու սիրտն էր դնում իր գործի մեջ: Ժերմենը պոռնիկ էր մինչև ուղնուծուծը, և նրա արժանիքը դա՛ էր:

4

Ջատիկը եկավ ցրտահարված նապաստակի պես, բայց անկողնում բավական տաք էր: Այսօր էլ լավ օր է, և Ելիսեյան դաշտերը իրիկնաշաղին նման են սևակն հուրիներով լի բացօթյա կանանոցի:

թվայնացրել է 1915.info կայքը

Ծառերն ամբողջովին սաղարթապատ են, իսկ դրանց կանաչն էնքան անաղարտ է ու գունեղ, որ թվում է՝ դեռ թաց են ու փայլփլում են ցողից: Լուվրի պալատից մինչև Էտուալ հրապարակը ասես դաշնամուրային պիես լինի: Հինգ օր է՝ գրամեքենային չեմ դիպել, ձեռքս գիրք չեմ վերցրել, ոչ էլ գլխումս է մտքի կտոր եղել, բացի «Ամերիքըն էքսպրես» գնալու մասին մտածելուց: Առավոտյան 9-ին էնտեղ էի, հենց որ դուռը բացեցին, մի անգամ էլ՝ ժամը 1-ին: Ոչ մի նորություն: 5-ն անց կեսին դուրս պրծա հյուրանոցից՝ որոշելով վերջին փորձն անել: Անկյունում թեքվեցի թե չէ՝ Ուոլթեր Փաչին տեսա: Քանի որ չճանաչեց ինձ, ես էլ ասելիք չունեի, կանգնեցնելն անիմաստ էր: Հետո, երբ Տյուիլրիում փոված էի նստարանին, նրա կերպարանքը միտքս ընկավ: Փոքր-ինչ կռացած էր, մտազբաղ, մի տեսակ խաղաղ, բայց ինքնամփոփ ժպիտը դեմքին: Նայելով երկնքի նուրբ էմալին, որ հազիվ էր գունավորված և ծանր, անձրևաբեր թուխպերով չէր բեռնվել, այլ ժպտում էր հին ճենապակու պես, մտմտում էի, թե ինչ է կատարվում «Արվեստի պատմության» չորս հաստափոր հատորները թարգմանած էդ մարդու գլխում, երբ իր կիսախուփ աչքերով նայում է էս երանելի աշխարհին:

Ելիսեյան դաշտերում մտքերը քրտինքի պես թափվում են իմ վրայից: Ես պիտի էնքան հարուստ լինեի, որ քարտուղարուհի ունենայի ու քայլելով նրան թելադրեի, որովհետև ամենալավ մտքերը միշտ գլուխս են գալիս, երբ գրամեքենայի մոտ չեմ:

Հիմա, Ելիսեյան դաշտերում զբոսնելիս, մտածում եմ իրոք հոյակապ իմ առողջության մասին: «Առողջություն» ասելով, ճիշտն ասած, նկատի ունեմ լավատեսությունը: Անբուժելիորե՛ն լավատես եմ: Մի ոտքով դեռ 19-րդ դարում եմ: Մի քիչ հետ եմ մնացել, ամերիկացիների մեծ մասի նման: Կարլն իմ լավատեսությունը զզվելի է համարում: «Հերիք է ուտելիքից խոսեմ,- ասում է,- արդեն փայլում ես»: Ճիշտ է: Ուտելու՝ *ուրից* ուտելու միտքն ինքնին, ինձ ջահելացնում է: Ուտելի՛ք... Դա նշանակում է լիցքավորում՝ մի քանի ժամ աշխատելու, գուցեև էրեկցիայի համար: Չեմ ժխտում: Լավ, պինդ առողջություն ունեմ, ցլի առողջություն: Միակ բանը, որ կանգնած է իմ ու ապագայի միջև, ուտելիքն է, *ուրից ու ուրից:*

թվայնացրել է 1915.info կայքը

Ինչ վերաբերում է Կարլին, վերջերս իրեն կորցրել է: Անտրամադիր է, ջղերը խախտվել են: Ասում է՝ հիվանդ է, հավատում եմ, բայց ցավ չեմ զգում:

Ի վիճակի չեմ: Ընդհակառակը, ծիծաղս է գալիս: Նա էլ նեղանում է իհարկե: Իմ ամեն ինչն էլ նրան վիրավորում է՝ ծիծաղս, քաղցս, համառությունս, անհոգությունս, *ամեն ինչ:* Մի օր ուզում է ուղեղը շաղ տալ, քանի որ էլ չի դիմանում Եվրոպա կոչված էս «գարշելի ծակին», իսկ մյուս օրը խոսում է Արիզոնա գնալու մասին, «որտեղ շիփ-շիտակ նայում են աչքերիդ»:

«Շատ լավ,- ասում եմ:- Ինչ ուզում ես՝ արա, շան որդի, բայց քո մելամաղձոտ շնչով իմ առողջ աչքերը մի մշուշոտի»:

Բանն էլ հենց դա է: Եվրոպայում անգործության ես վարժվում: Ամբողջ օրը վեր ընկած՝ նվում ես մի գլուխ: Քայքայվում ես, փտում:

Կարլն էությամբ սնոբ է, արիստոկրատ անտեր, որն ապրում է վաղահաս խելագարությամբ դրոշմված սեփական ոստանում: «Ատում եմ Փարիզը,- նվում է նա:- Էս ապուշի գլուխներն օրնիբուն թուղթ են խաղում... Մի սրա՛նց նայիր: Բա էս գրե՛լը: Ի՞նչ կարիք կա բառերն իրար կապել: Ես առանց գրելու էլ կարող եմ գրող լինել, չէ՞: Ի՞նչ պիտի ապացուցեմ, եթե գիրք գրեմ: Գրքերն ո՞ւմ են պետք: Արդեն խելքից մտքից դուրս գիրք կա...»:

Ազնիվ խոսք, էս ամենը վաղուց է գլխովս անցել-դարձել: Իմ մելամաղձոտ պատանեկությունից բան չի մնացել: Արդեն քունած ունեմ անցածն էլ, գալիքն էլ: Ես առողջ եմ: Անբուժելիորեն առողջ: Ոչ ցավ, ոչ ափսոսանք: Ոչ անցյալ, ոչ ապագա: Ներկան ինձ հերիք է: Օր օրի: Այսօ՛ր: Le bel aujourd'hui[1]!

Կարլի ազատ օրը շաբաթվա մեջ մեկն է, էդ օրն էլ, չեք պատկերացնի, նա ավելի դժբախտ է, քան մյուս օրերին: Չնայած հավատացնում է, թե ուտելիքն արհամարհած ունի, նրա միակ հաճույքն ազատ օրը ճոխ սեղան պատվիրելն է կարծես: Միգուցե ինձ համար է անում, չգիտեմ ու չեմ էլ հարցնում: Եթե իր թերությունների ցանկին ուզում է մարտիրոսությունն էլ ավելացնել, ի՞նձ ինչ: Մի խոսքով,

[1] Հրաշալի՛ այսօր (ֆրանս.):

թվայնացրել է 1915.info կայքը

անցած երեքշաբթի, ունեցած-չունեցածը հերթական ճոխ սեղանի վրա մսխելուց հետո, ինձ տարավ «Դոմ» սրճարան՝ վերջին տեղն աշխարհի երեսին, ուր կգնայի հանգստյանս օրը: Բայց էստեղ մարդ ոչ միայն անմռունչ է դառնում, այլև անզգա:

«Դոմ»-ում, բարի մոտ Մարլոուն է կանգնած, էշին քեռի է ասում: Հինգ օր է արդեն՝ լակելով է ընկած, ոնց որ ինքն է արտահայտվում: Իսկ նրա լակելը նշանակում է հա խմել ու խմել, մի բարից մյուսը թրև գալ, գիշեր-ցերեկ դադար չտալ, վերջում էլ Ամերիկյան հիվանդանոց ընկնել: Մարլոուի ոսկրոտ, հյուծված դեմքը տեղով գանգ է, ուրիշ ոչինչ, վրան՝ երկու խոր փոս, ամեն մեկի մեջ՝ մի-մի սատկած կակղամորթ: Մեջքը թեփոտ է. մի քիչ ննջել է զուգարանում: Պիջակի գրպանում իր ամսագրի վերջին համարի սրբագրությունն է, կա-չկա՝ տպարան տանելիս է եղել, երբ ինչ-որ մեկը գայթակղել է մի բաժակ բան խմելու առաջարկով: Նա էնպես է պատմում դրա մասին, կարծես մի քանի ամիս է անցել: Հանում է սրբագրությունն ու փռում բարի կանգնակին. էջերը թքոտված են ու սուրճի հետքերով լի: Փորձում է հունարեն գրած իր բանաստեղծությունը կարդալ, բայց սրբագրությունն անվերծանելի է: Նա էլ որոշում է ճառ ասել ֆրանսերեն, իսկ սեղանապետը վերջ է դնում դրան: Մարլոուն խոցված է. նրա միակ իղձը ֆրանսերեն էնպես խոսելն է, որ նույնիսկ մատուցողը հասկանա: Հին ֆրանսերենի մասնագետ է, հոյակապ թարգմանել է սյուրռեալիստներին, բայց ի վիճակի չի ամենապարզ բանն արտաբերել, ասենք, «ցանվի գլխիցս, այ քոփակ շուն»: Ոչ ոք չի հասկանում Մարլոուի ֆրանսերենը, անգամ՝ պոռնիկները: Ճիշտն ասած, երբ կատարը տաք է, նրա անգլերենն էլ կարգին չի հասկացվում: Մերթ բլբլում է, թուքը շաղ տալիս, մերթ կմկմում, բառերի մեջ կապ չկա: *«Դու ես վճարում»*. սա է միակ բանը, որ նրան հաջողվում է հստակ արտասանել:

Եթե նույնիսկ լուլ հարբած է, ինքնապահպանման բնազդը միշտ ժամանակին օգնության է հասնում Մարլոուին: Եթե նա փոքրիշատե կասկած ունի, թե խմիչքի համար ով պիտի վճարի, անպայման մի օյին է սարքում: Սովորաբար, իրեն ձև է տալիս, իբր կուրանում է:

թվայնացրել է 1915.info կայքը

Հիմա Կարլը նրա բոլոր խորամանկությունները գիտի, դրա համար էլ հենց որ Մարլոուն հանկարծ քունքերը սեղմում է ու դերասանությունը դնում, Կարլը քացով հասցնում է քամակին և վրա բերում. «Վերջացրու, ցանցառ: Ինձ չե՛ս ֆոռացնի»:

Նենգավոր վրեժ է, թե ինչ, չգիտեմ, բայց, ամեն դեպքում, Մարլոուն էլ տակը չի մնում: Թեքվելով մեր կողմը՝ խոպոտ, կոկոան ձայնով, որպես գաղտնիք, ինչ-որ ասեկոսե է հայտնում, որն ականջին է ընկել բարից բար թրևելիս: Կարլը, զարմացած, աչքերն է բարձրացնում: Գույն է տալիս, գույն առնում: Մարլոուն կրկնում է լսածը զանազան տարբերակներով: Ամեն անգամ Կարլն ավելի է թոռոմում: «Բայց անհնար է»,- ի վերջո, պոռթկում է նա: «Ոչ էլ անհնար է,- կոնչում է Մարլոուն:- Քեզ գործից հանելու են... Հաստատ իմացել եմ»: Կարլը հուսակտուր նայում է ինձ: «Էս շնից ծնվածը խա՞բս է տալիս»,- շշնջում է ականջիս, իսկ հետո ձայնը գցում. «Բա ի՞նչ եմ անելու: Էլ գործ չեմ գտնի: Մի տարի էր՝ ընկած էի Էս մեկի հետևից»:

Մարլոուն էլ, ըստերևույթին, հենց սա էր ուզում լսել: Վերջապես, գտել է մեկին, որն իրենից վատ վիճակում է: «Նեղ օրեր կգան»,- կոկռում է նա, և ոսկրոտ գանգը սկսում է էլեկտրական պաղ լույս արձակել:

«Դոմ»-ից հեռանալիս Մարլոուն, զկռտոցի արանքում, ճգնում է բացատրել, որ պիտի Սան Ֆրանցիսկո վերադառնա: Կարլի անզոր վիճակը կարծես անկեղծորեն գթաշարժել է նրան: Առաջարկում է, որ Կարլն ու ես տիրություն անենք ամսագրին իր բացակայության ժամանակ: «Ես կվստահեմ քեզ, Կարլ»,- ասում է նա: Մեկ էլ հանկարծ նոպան բռնում է, արդեն՝ իսկական: Քիչ է մնում առուն ընկնի: Քարշ ենք տալիս Էդգար Քինե բուլվարի բիստրոներից մեկն ու նստեցնում: Էս անգամ, իրոք, վատ է. կուրացնող գլխացավից մռնչում է, թառանչում և դեսուդեն ճոճվում անլեզու անասունի պես, որի պոզամիջում կռանով հասցրել են: Մի երկու բաժակ «Ֆեռնետ-Բրանկա» ենք լցնում բուկը, պառկեցնում նստարանին ու իր շարֆով դեմքը ծածկում: Պառկած՝ տնքում է: Քիչ անց խռմփոցն ենք լսում:

թվայնացրել է 1915.info կայքը

– Ի՞նչ կարծիքի ես առաջարկի մասին,– հարցնում է Կարլը:– Գործի չկպչե՞նք: Ասում է՝ վերադառնալուց հետո ինձ հազար ֆրանկ կտա: Գիտեմ՝ չի տա, բայց ի՞նչ կարծիքի ես:

Կարլը նայում է նստարանին մեկնված Մարլոուին, բարձրացնում շարֆը աչքերի վրայից ու նորից իջեցնում: Հանկարծ մի խորամանկ քմծիծաղ է լուսավորում դեմքը:

– Լսիր, Ջո,– ասում է նա՝ նշան անելով, որ մոտ գնամ,– արի գլուխներս տակը տանք, տիրություն անենք էդ քրջոտ ամսագրին ու իմացածիդ պես սրան կզացնենք:

– Էդ ո՞նց:

– Բոլոր մյուս աշխատողներին ռադ անենք ու սկզբից մինչև վերջ մեր զըրթուզիբիլով լցնենք, այ թե ոնց:

– Հա, բայց ի՞նչ զըրթուզիբիլ:

– Ինչ որ պատահի... Ոչ մի բան էլ չի անի: Հաստատ կկզացնենք իմացածիդ պես: Մի լավ համար կտպենք, ու թող ամսագիրը փակվի: Թխի գա՛, Ջո:

Խնդմնդալով՝ Մարլոուին ոտքի ենք կանգնեցնում ու քարշ տալիս Կարլի տուն: Լույսը վառելուն պես մի կին ենք տեսնում Կարլի անկողնում՝ նրան սպասելիս: «Լրիվ մոռացել էի սրան»,– ասում է Կարլը: Էդ պցին ցրում ենք ու Մարլոուին խոթում անկողին: Մի երկու րոպեից դուռը թակում են: Վան Նորդենն է: Մարմինը՝ դող բռնած: Դնովի ատամները կորցրել է, իր կարծիքով՝ «Բալ նեգր» պարասրահում: Վերջը չորս հոգով խցկվում ենք նույն մահճակալը: Մարլոուից ապխտած ձկան հոտ է փչում:

Առավոտյան Մարլոուն ու Վան Նորդենը ճամփա են ընկնում ատամները գտնելու: Մարլոուն զոռոցը դրել է: Կարծում է՝ իր ատամներն են:

5

Իմ վերջին ճաշն է դրամատուրգի տանը: Վարձով նոր դաշնամուր են վերցրել, համերգային: Սիլվեստրին հանդիպեցի ծաղկի

թվայնացրել է 1915.info կայքը

խանութից դուրս գալիս՝ ֆիկուսը ձեռքին: Ինձ խնդրեց բռնել, մինչև որ ինքը սիգարներ առնի: Մեկը մյուսի հետևից քաքմեջ արեցի ձրի ճաշելու բոլոր հնարավորությունները, որ էդքան հանգամանորեն նախատեսել էի: Մեկը մյուսի հետևից ամուսինները շրջվում են իմ դեմ, կամ էլ՝ հենց կանայք: Ֆիկուսը բռնած քայլելիս հիշում եմ, թե մի քանի ամիս առաջ, գիշերը, էդ միտքը ոնց մտավ գլուխս: «Կուպոլ» սրճարանի մոտ թառել էի նստարանին, ձեռքիս էլ ամուսնական մատանիս էի խաղացնում, որը փորձել էի «Դոմ»-ի մատուցողի վրա սաղացնել: Նա ընդամենը վեց ֆրանկ էր առաջարկում, ես էլ կատաղեցի: Բայց ստամոքսս իրենն էր պնդում: Մոնային թողնելհեռանալուց հետո մատանին ճկույթիս դրած էր: Արդեն էնքան էր դարձել իմ մասնիկը, որ մտքովս չէր էլ անցնում ծախել: Սպիտակ ոսկուց, ծաղկանախշ մատանի էր: Ժամանակին մեկուկես դոլար կամ երևի մի քիչ ավելին արժեր: Երեք տարի առանց ամուսնական մատանու էինք, իսկ հետո, մի օր, երբ գնում էի նավամատույց՝ Մոնային դիմավորելու, Մեյդեն Լեյնում պատահմամբ անցա ոսկու խանութի մոտով. ամբողջ ցուցափեղկը լիքն էր ամուսնական մատանիներով: Հասա նավամատույց, տեսնեմ՝ Մոնան չի երևում: Սպասեցի, մինչև վերջին ուղևորն իջնի կամրջակից, իսկ Մոնան չկար ու չկար: Ճարահատված խնդրեցի ցույց տալ ուղևորների ցանկը: Մոնայի անունը նշված չէր: Մատանին դրեցի ճկույթիս, ու էդպես էլ մնաց: Մի անգամ հասարակական բաղնիքում էի թողել, բայց վերադարձրին: Ծաղկանախշերից մեկը պոկվել էր: Մի խոսքով, գլուխս կախ թթվել էի նստարանին, մատանին էի խաղացնում, երբ հանկարծ ցնցվեցի, ասես հարվածից: Ուտելու հարցը լուծվեց միանգամից, մի քանի ֆրանկ գրպանի փողն էլ՝ վրադիր: Միտքս փայլատակեց, որ ոչ ոք չի մերժի մարդուն կերակրել, եթե միայն նա թախանձելու համարձակություն ունենա: Տեղնուտեղը գնացի սրճարան ու մի տասներկու նամակ գրեցի. «Թույլ կտա՞ք շաբաթը մեկ ճաշել ձեզ հետ: Հայտնեք, թե որ օրն է ամենից հարմար»: Հրաշք կատարվեց: Ինձ ոչ միայն կերակրում էին, այլև հատուկ պատիվ տալիս: Ամեն իրիկուն խմած էի տուն գնում: Կաշվից դուրս էին գալիս էս ամենշաբաթյա

ձեռնբաց հյուրասիրողներս: Իսկ թե շաբաթվա մյուս օրերին գլխիս ճարը ոնց էի տեսնում, նրանց գործը չէր: Մեկ-մեկ հոգատարները սիգարետ էին տալիս կամ մանր փող: Բոլորն էլ ակնհայտորեն իրենց թեթևացած էին զգում՝ հասկանալով, որ շաբաթական միայն մի անգամ են ինձ տեսնելու: Բայց նրանց սիրտն ավելի էր թեթևանում, երբ ասում էի. «Սրանից հետո էլ հարկ չկա»: Երբեք չէին հարցնում՝ ինչու: Շնորհավորում էին ու վերջ: Հաճախ հրաժարվում էի, որովհետև ավելի դուրեկան տանտերեր էի գտնում և կարող էի ցուցակից ջնջել աչքիս փուշը դարձածներին: Բայց նրանք մտքով չէին էլ անցկացնում: Վերջիվերջո, կայուն, հիմնավոր ծրագիր կազմեցի, սահմանված ցուցակ. գիտեի՝ երեքշաբթի սա եմ ուտելու, ուրբաթ էլ՝ սա: Քրոնստադտները, գիտեի, շամպայն են մատուցելու և խնձորի տանու կարկանդակ: Իսկ Կարլն ամեն անգամ ինձ տանելու էր մի նոր ռեստորան, հազվագյուտ գինիներ պատվիրեր, հետո էլ հրավիրեր թատրոն կամ «Մեդրանո» կրկես: Հյուրասիրողներս շատ էին հետաքրքրվում իրարով: Հարցուփորձում էին, թե ամենից շատ ում տունն է սրտովս, ում խոհանոցն է ամենաընտիրը և այլն: Իսկ ամենից շատ Քրոնստադտների տունն էր սրտովս, երևի որովհետև Քրոնստադտն ամեն անգամ պատին գրում էր ճաշի արժեքը: Չէի ասի, թե խիղճս էր թեթևանում պարտքիս չափն իմանալիս, քանի որ վճարելու մտադրություն չունեի, ոչ էլ նա էր հատուցման պատրանքներ փայփայում: Չէ, տարօրինակ թվերն էին շարժում հետաքրքրությունս: Նա հաշվում էր մինչև վերջին սանտիմը: Եթե լրիվ վճարելու լինեի, պիտի փողս մանրեի: Քրոնստադտի կինը հիանալի խոհարարուհի էր և թքած ուներ սրա կցմցած սանտիմների վրա: Նա տուրքն առնում էր պատճենաթղթով: Բան եմ ասում: Եթե հայտնվում էի առանց թարմ պատճենաթղթի, տրամադրությունն ընկնում էր: Դրա համար էլ մյուս օրը նրանց փոքրիկ աղջկան պիտի Լյուքսեմբուրգյան այգի տանեի ու մի երկու-երեք ժամ խաղայի հետը, մի պարտականություն, որն ինձ կատաղեցնում էր, որովհետև նա միայն հունգարերեն ու ֆրանսերեն գիտեր: Կերակրողներս, ընդհանրապես, տարօրինակ ժողովուրդ էին...

թվայնացրել է 1915.info կայքը

Տանյայենց տանը, պատշգամբասրահից, նայում եմ ցած՝ խնջույքի սեղանին: Մոլդորֆը նստած է իր կուռքի կողքին: Ոտքերն է տաքացնում օջախի մոտ՝ աննահման երախտիքի արտահայտությունը ջրակալած աչքերում: Տանյան էլի ադաջոն է նվագում: Ադաջոն պարզորոշ ասում է. սիրո էլ ո՛չ մի խոսք: Ես նորից շատրվանի մոտ եմ, նայում եմ կանաչ կաթ ցեթող կրիաներին: Սիլվեստրը նոր է եկել Բրոդվեյից՝ սիրտը սիրով լի: Ամբողջ գիշեր պառկած էի զբոսայգու նստարանին, մինչ կրիաներն իրենց գաղջ ցեթն էին շիթում աշխարհի վրա, իսկ պրիապոսյան մոլեգնությունից թափ առած խոլ ևժույգները՝ քառատրոփ սուրում, չհպվելով գետնին: Ամբողջ գիշեր յասամանի հոտն էի զգում փոքր, մութ սենյակից, որտեղ նա մազերն է արձակում, յասամանի, որը ես տարա նրա համար՝ նախքան կգնար Սիլվեստրին դիմավորելու: Սիլվեստրը, ասում է նա, վերադարձել է՝ սիրտը սիրով լի, իսկ իմ յասամանը դեռ իր մազերի մեջ է, բերանում, թևատակերին: Սերը, կրիայի ցեթն ու գաղջ յասամանը բռնել են սենյակը, և խոլ ևժույգներն են քառատրոփ սուրում: Իսկ առավոտյան՝ կեղտոտ ատամներ ու քսի՝ պատուհաններին: Զբոսայգի տանող փոքրիկ դարպասը փակ է: Մարդիկ աշխատանքի են գնում, և երկաթե խլափեղկերը ճռնչում են օղազրահի պես: Շատրվանի դիմացի գրախանութում Չադ Լճի պատմությունն է ներկայացված. լուռ մողեսներ, դեղնախեժի հոյակապ երանգներ: Բոլոր նամակներս նրան, հարբած նամակներս, որ գրել եմ մատիտի մնացուկներով, խենթ նամակներս, որ խզբզել եմ ածխի կտորտանքով, փոքրիկ գործեր՝ մի նստարանից մյուսը թրևելիս, հրավառելիքը, անձեռոցիկները, շաքարած մրգերը, ամեն ինչ երկուսինը կդառնան, և Սիլվեստրը մի օր ինձ հաճոյախոսություն կանի: Սիգարի մոխիրը թափ տալով՝ կասի. «Բայց դուք բավական լավ եք գրում, իրոք: Կարծեմ սյուրռեալիստ եք, չէ՞»: Չոր, բեկբեկուն ձայն, թեփակալած բերան, արևահյուսակը՝ որպես լուսապսակ, բարբաջանքը՝ որպես ջանք:

Ես վերևն եմ՝ պատշգամբասրահում, ֆիկուսի հետ, իսկ ներքևում ադաջոն է ընթանում: Սև ու սպիտակ ստեղներ, հետո՝ սև, սպիտակ, իսկ հետո՝ սպիտակ ու սև: Դու հարցնում ես, թե ինչ-որ բան նվագե՞ս

թվայնացրել է 1915.info կայքը

ինձ համար: Այո, մի բան նվագիր քո մեծ ցուցամատներով: Ադաջոն նվագիր, քանի որ էդ անտերն է միակ իմացածդ: Նվագիր, հետո կկտրես ցուցամատներդ:

Ադա՛ջոն: Չգիտեմ ինչու է, դրան կպած, անվերջ նվագում: Հին դաշնամուրը նրան չէր բավարարում. պիտի համերգայի՛ն վերցներ՝ ադաջոյի համա՛ր: Երբ տեսնում եմ ստեղները սեղմող նրա ցուցամատներն ու էս հիմար ֆիկուսը՝ կողքիս, ինձ զգում եմ էն հյուսիսցի գժի պես, որը հանել էր շորերը, սառած ճյուղին տիփ-տկլոր թառել ու կաղին էր գցում հարինգախառն սառցակալած ծովը: Մի հոգեմաշ բան կա էս երաժշտության մեջ, թախծալիորեն անպտուղ բան, ասես գրվել է լավայի վրա, կապարի ու կաթի խառնուրդի գույնով: Իսկ Սիլվեստրը, աճուրդավարի նման գլուխը թեքելով, ասում է. «Մյո՛ւսը նվագիր, որ այսօր սովորում էիր»: Ի՛նչ հաճելի է, երբ սմոքինգ ունես, լավ սիգար և դաշնամուր նվագող կին: Հանգստանում ես: Սիրտդ թեթևանում է: Ընդմիջմանը դուրս ես գալիս ծխելու և մաքուր օդ շնչելու: Այո, նրա մատները շատ ճկուն են, արտակարգ ճկուն: Բատիկով է նաև զբաղվում: Կուզե՞ք բուլղարական սիգարետ փորձել: Լսիր, հավի կուրծք, էն ի՞նչ էիր նվագում, որ ինձ շատ էր դուր գալիս: Սկե՛րցոն: Ախ, հա՛, սկերցոն: Հրաշալի՛ է, սկերցոն: Կոմս Վալդեմար ֆոն Շվիսենայնցուգն է ասում: Սառը, թեփոտած աչքեր: Վատ հոտ բերանից: Ճչացող գուլպաներ: Եվ իշակաթնուկով սիսեռապուր, համեցեք: «Մենք ուրբաթ երեկոյան միշտ սիսեռապուր ենք ուտում: Չե՞ք ուզի կարմիր գինի համտեսել: Գիտե՞ք, կարմիր գինին լավ է մսի հետ»: Չոր, ճռճռան ձայն. «Սիգար կուզե՞ք: Այո, ես սիրում եմ աշխատանքս, բայց առանձնակի նշանակություն չեմ տալիս: Հաջորդ պիեսիս մեջ կարտացոլվի տիեզերքի բազմակողմանի հայեցակարգը: Պտտվող թմբուկներ կրածնի լամպերի հետ: Վերջ Օ՛Նիլին: Իմ կարծիքով, սիրելիս, պետք է ավելի հաճախ ոտնակը բաց թողնես: Այո, էս մասը սքանչելի է... Իրոք սքանչելի է, չէ՞: Հա՛, գործող անձինք տաբատներին ամրացված միկրոֆոններով կլինեն: Գործողությունը կատարվում է Ասիայում, որովհետև մթնոլորտային պայմաններն ավելի նպաստավոր են

թվայնացրել է 1915.info կայքը

ակուստիկայի առումով: Անժուի գինի կհամտեսե՞ք: Հատուկ ձեզ համար ենք գնել...»:

Ամբողջ ճաշի ընթացքում էս շաղակրատանքը շարունակվում է: Կարծես իր թլպատված ճուճուլը հանել ու ջրում է մեզ: Տանյան հազիվ է զսպում իրեն: Ինչ ամուսինը վերադարձել է՝ սիրտը սիրով լի, նրա մենախոսությունը վերջ չունի: Տանյան պատմում է, որ հանվելիս էլ է խոսում. գաղջ ցեթի անդադար հոսք, ասես միզապարկը ծակել են: Հենց մտածում եմ, որ Տանյան սող է տալիս, անկողին մտնում էս ցեթոիկի հետ, կատաղությունս բռնում է: Պատկերացրու, է՛. մի խղճուկ, չորացած տանձի կոթ, որի ուշքն ու միտքը Բրոդվեյի էժանագին պիեսներն են, շոում է սիրածս կնոջ վրա: Կարմիր գինի՛ է պահանջում, պտտվող թմբուկնե՛ր ու իշակաթնո՛ւկ սիսեռապուրի մեջ: Սրա լկտիությո՛ւնը տես: Պատկերացրու, է՛. պառկում է իմ թեժացրած հնոցի կողքին ու արածը ջուր թափելն է, ուրիշ ոչինչ: Աստված վկա, այ մարդ, դու պիտի ծնկաչոք ինձ շնորհակալություն հայտնես: Չե՞ս տեսնում, որ հիմա տանդ կի՛ն կա: Չե՞ս տեսնում, որ ժայթքելու վրա է: Իսկ դու ճամարտակում ես քո ճմլված աղենոիդներով հանդերձ. «Դեհ... ահա թե ինչ կասեմ... երկու տեսակետ կա...»: Տո քունե՛մ երկու տեսակետդ: Բազմակողմանի տիեզերքդ էլ քունե՛մ, ասիական ակուստիկադ էլ: Ոչ կարմիր գինիդ, ոչ էլ Անժուինը աչքս մի կոխիր... նրա՛ն տուր ինձ... ի՛մն է: Լսի՛ր, գնա շատրվանի մոտ նստիր, թող յասամանի հոտը շնչե՛մ: Աչքերիդ թեփը թափ տուր... էդ անտեր աղաջոն վերցրո՛ւ, փաթաթիր քո ֆլանելե շալվարներից մեկով: Մյուս երաժշտական պիեսն էլ... բոլոր պիեսները, որոնց ընդունակ է քո ճլորած միզապարկը: Ժպտում ես ինձ ինքնագոհ, իր բանը լավ իմացողի պես: Քամակ եմ մտնում, գլխի չե՞ս: Մինչ ականջս ցնդաբանություններիդ եմ կախել, նրա ձեռքը ոտքիս է, բայց դու չես տեսնում: Կարծում ես՝ տառապելն ինձ դուր է գալիս. դա է իմ դերը՝ քո ասելով: Շատ լավ: Դե նրա՛ն հարցրու: Քեզ կասի՝ ոնց եմ տառապում: «Դու քաղցկեղ ես ու զառանցանք»,– էս երկու օրն ասաց հեռախոսով: Հիմա քաղցկեղ ունի՝ զառանցանքն էլ հետը, ու շուտով պիտի կեղանքը պոկես: Նրա երակներն ուռչում են, իսկ քո

թվայնացրել է 1915.info կայքը

ասածը միայն տաշեղներ են, աղոցուք: Ինչքան էլ շռես, ծակուտակը չես փակի: Ոնց էր ասում պարոն Ռե՞նը: *Խոսքերը մենություն են*: Երեկ իրիկուն մի երկու խոսք եմ սփոռցին թողել քեզ համար, բայց արմունկներով ծածկել ես:

Նրա շուրջը պատնեշ է կապել, կարծես ինչ-որ սրբի աղտեղի, գարշահոտ ոսկոր լինի: Եթե արիություն ունենար, ասեր՝ «Վերցրո՛ւ նրան», միգուցե և հրաշք կատարվեր: Հենց էդքանը. *«Վերցրո՛ւ նրան»:* Երդվում եմ, ամեն ինչ տեղը կընկներ: Բացի դրանից, մեկ էլ տեսար՝ ես չվերցրի. հետաքրքիր է, սա մտքով չի՞ անցնում: Կամ, ասենք, վերցրի որոշ ժամանակով ու հետ բերեցի՝ *բարվոքած*: Բայց նրան պատնեշելը ոչինչ էլ չի տա: Անհնար է մարդուն պատնեշել: Էլ էդպես չեն անում... Այ խղճուկ, չորացած տանձի կոթ, քո կարճ խելքով՝ ես լավը չեմ նրա համար, կարատավորեմ, կպղծեմ: Դու չգիտես, թե արատավորված կինն ինչ ախորժելի է, թե սերմի փոփոխությունից ո՛նց է ծաղկում: Կարծում ես՝ սիրով լի սիրտն է, որ կա. գուցե էդպես է համապատասխան կնոջ համար, բայց դու արդեն սիրտ չունես... մի մեծ, փուչ միզապարկ ես: Ատամներդ ես սրում ու գոմռալ սովորում: Պահապան շան պես վազում ես նրա պոչից ու ամեն տեղ գոզում: Նա քեզ չի վերցրել որպես պահապան շուն... որպես պոետի է վերցրել: Ասում է՝ ժամանակին պոետ ես եղել: Իսկ հիմա ի՞նչ ես: Սիրտ առ, Սիլվեստր, սի՛րտ առ: Միկրոֆոնը հանիր շալվարիդ միջից: Հետևի ոտքդ իջեցրու, հերիք է չորս կողմը ջուր անես: Ասում եմ՝ սիրտ առ, որովհետև նա արդեն թողել է քեզ: Ապականված է, լավ իմանաս. պատնեշդ կարող ես քանդել: Կարիք չկա ինձ քաղաքավարությամբ հարցնել, թե սուրճից կարբոլաթթվի հոտ չի՞ գալիս. դա ինձ չի վախեցնի: Թեկուզ մկնդեղ ավելացրու սուրճին, փշրած ապակի լցրու: Մեզ դիր՝ եռա, մեջն էլ մի քանի մշկընկույզ գցիր...

Վերջին երկու շաբաթը համայնական կյանք եմ վարում: Ստիպված եմ ինձ ուրիշներին էլ բաժին հանել, հիմնականում՝ որոշ խելառ ռուսների, մի հարբեցող հոլանդացու և Օլգա անունով մի հաստամարմին բուլղարուհու: Ռուսներից մեծ մասամբ Եվգենին ու Անատոլին են:

թվայնացրել է 1915.info կայքը

Օլգան ընդամենը մի քանի օր առաջ է դուրս գրվել հիվանդանոցից, որտեղ նրա փողերի ուռուցքն այրել են, և քաշի ավելցուկը մի քիչ պակասել է: Բայց տեսքից չի երևում, թե տանջվել-տառապել է: Քաշով համարյա մի կուզ շոգեքարշ է, քրտինքը ծլլում է, բերանից՝ հոտ գալիս և չերքեզական փափախի նմանվող իր կեղծամն է դնում էլի, որն ասես փաթեթավորման կամ խցկանքի տաշեղակույտ լինի: Բեղ էլ ունի:

Հիվանդանոցից դուրս գալու հաջորդ օրն իսկ Օլգան սկսեց նորից կոշիկ կարել: Առավոտյան 6-ին արդեն իր գործին է. օրական երկու զույգ կոշիկ է իրար անում: Եվգենին տրտնջում է, թե Օլգան բեռ է, բայց, ճիշտն ասած, հենց Օլգան է օրվա իր երկու զույգ կոշիկով Եվգենիին ու նրա կնոջը պահում: Եթե Օլգան չի աշխատում, տանն ուտելիք չկա: Դրա համար էլ բոլորը հոգ են տանում, որ Օլգան ժամանակին պառկի քնելու, լավ սնվի, որպեսզի դիմանա և այլն:

Հացկերույթը սկսվում է ապուրից: Ինչ էլ որ լինի՝ սոխի, լոլիկի, բանջարեղենի, թե չգիտեմ ինչի ապուր, միշտ նույն համն ունի: Կարծես ամանների սրբիչն են եփ տվել դրա մեջ. թթվաշ, չոռը խփած, փրփրոտ վոհիկ է: Ճաշից հետո տեսնում եմ. Եվգենին ապուրը պահում է կոմոդում: Մնում է էդտեղ, թթվում մինչև մյուս օրը: Կարագն էլ է պահվում էդ կոմոդում. մի երեք օրից համը հիշեցնում է մեռելի ոտքի բթամատը:

Կծված յուղի հոտը առանձնապես ախորժաբեր չի, մանավանդ երբ եփութափը կատարվում է մի սենյակում, որտեղ ոչ մի օդափոխության չկա: Ոտքս դռնից ներս դնեմ թե չէ՝ վատանում եմ: Բայց հենց որ Եվգենին ոտնաձայներս լսի, փեղկերն իսկույն բացում է և պատուհանին ձկան ցանցի պես կախ տված սավանը հետ քաշում, որն արևի լույսը ներս չթողնելու համար է: Խե՛ղճ Եվգենի: Նայում է սենյակի հատուկենտ կահ-կարասուն, կեղտոտ սավաններին, կեղտոտ ջրով լի լվացարանին ու ասում. «Ես ճո՛րտ եմ»: Օրնիբուն դա է ասում, էն էլ՝ ոչ թե մեկ, այլ տասը անգամ: Հետո կիթառն իջեցնում է պատից ու երգում:

Իմիջիայլոց, կծված յուղի վերաբերյալ... Ուրիշ զուգորդություններ էլ են առաջանում: Դրա մասին մտածելիս ինձ տեսնում եմ

թվայնացրել է 1915.info կայքը

մի փոքրիկ, հնամենի բակում կանգնած, ժանտահոտ, մռայլ բակում: Փեղկերի արանքներից տարօրինակ կերպարանքներ են ինձ զննում... շալերով պառավներ, գաճաճներ, առնետի մոութներով կավատներ, կոացած հրեաներ, ջահել գլխարկագործուհիներ, մորուքավոր ապուշներ: Ոտքերը քարշ տալով՝ սրանք դուրս են գալիս բակ՝ ջուր վերցնելու կամ կեղտաջրերը թափելու: Մի օր Եվգենին խնդրեց, որ դույլը դատարկեմ: Տարա բակի անկյունը, որտեղ աղբահոր կար, շուրջ բոլորն էլ կեղտոտ թղթեր էին շաղ տված: Լպրծուն փոսը պճպճում էր կղկղանքից կամ, մեր լեզվով ասած, քաքից: Դույլը շուռ տվեցի, զզվելի ճլխպոց լսվեց, հետո՝ ևս մեկը, արդեն անսպասելի: Երբ վերադարձա, ապուր էին լցնում: Ամբողջ ճաշի ընթացքում մտածում էի ատամի խոզանակիս մասին. արդեն հնացել է, մազերը մնում են ատամներիս արանքում:

Սեղան նստելիս միշտ տեղավորվում եմ պատուհանի կողքին: Վախենում եմ սեղանի մյուս կողմը նստել. մահճակալին մոտ է, իսկ մահճակալը զեռում է: Նայելիս արյան բծեր եմ տեսնում գորշ սավաններին, բայց աշխատում եմ չնայել: Աչքս գցում եմ բակ, որտեղ կեղտաջրի դույլերն են ողողում:

Ճաշը երբեք չի ավարտվում առանց երաժշտության: Հենց որ պանիրը մատուցեն, Եվգենին ոտքի է թռչում և ձեռքը գցում կիթառին, որը մահճակալի վերևն է կախված: Միշտ նույն երգն է երգում: Ասում է՝ տաննհինգ, թե տասնվեց բան ունի երգացանկում, բայց երեքից ավելին չեմ լսել: Նրա սիրած գործը «Charmant poème d'amour»[1]-ն է: Լի է «կարոտով» և «տրտմությամբ»:

Ճաշից հետո գնում ենք կինո, որտեղ զով է ու մութ: Նվագախմբի տեղում Եվգենին նստում է դաշնամուրի մոտ, իսկ ես՝ առաջին կարգում: Դահլիճը դատարկ է, բայց Եվգենին էնպես է երգում, ասես Եվրոպայի բոլոր թագակիր դեմքերը իր ունկնդիրներն են: Պարտեզի դուռը բաց է, թաց տերևների բույրը ներս է թափանցում, և անձրևը միախառնվում է Եվգենիի «կարոտին» ու «տրտմությանը»: Կեսգիշերին, երբ դահլիճը ներծծված է հանդիսատեսների

[1] Սիրո թովիչ պոեմ (ֆրանս.):

թվայնացրել է 1915.info կայքը

քրտնահոտով ու գարշ շնչով, ես վերադառնում եմ նստատեղերից մեկին քնելու: Ելքի լապտերը, որ պարուրված է ծխախոտի ծխով, թույլ լուսավորում է ասբեստե վարագույրի ստորին անկյունը: Ես ամեն գիշեր քուն եմ մտնում՝ էս արհեստական աչքին նայելով...

Բակում կանգնած եմ, մի աչքս ապակուց է. աշխարհի միայն կեսն է ընկալելի: Գլաքարերը թաց են ու մամոռոտ, իսկ դրանց արանքներում սև դոդոշներ կան: Ներքնատան մուտքին մի մեծ դուռ է դրված, աստիճանները կեղտոտ են ու սայթաքուն չղջիկների ծերտից: Դուռը տեղախախտվել է, ծռվել, ծխնիները պոկվելու վրա են, բայց նոփնոր էմալապատ ցուցանակն ասում է. «Դուռն անպայման փակեք»: Ինչի՞ համար: Գլուխ չեմ հանում: Նորից նայում եմ ցուցանակին, բայց արդեն չկա. դրա տեղը գունապակե դռնանցք է: Հանում եմ արհեստական աչքս, թքում վրան ու փայլեցնում թաշկինակով: Մի կին է բազմել բարձունքին, հսկայական, փորագրազարդ սեղանի մոտ, վզին օձ է փաթաթված: Ամբողջ սենյակում գրքեր են շարվեշարան և ապակե գույնզգույն գնդերի մեջ լող տվող տարօրինակ ձկներ: Պատերին քարտեզներ են ու ատլասներ, Փարիզի քարտեզը՝ ժանտախտի համաճարակից առաջ, հին աշխարհի, Կնոսոսի և Կարթագենի քարտեզները, Կարթագենինը՝ խորտակումից առաջ ու հետո: Սենյակի մի անկյունում երկաթե մահճակալ կա, դիակ է պառկած: Կինը վեր է կենում հոգնած, վերցնում դիակն ու մտացրիվ դուրս նետում լուսամուտից: Նա վերադառնում է փորագրազարդ մեծ սեղանի մոտ, մի ձուկ հանում ակվարիումից և կուլ տալիս: Սենյակը կամաց-կամաց սկսում է պտտվել, և մայրցամաքները մեկմեկու հետևից ընկնում են ծովը, միայն կինն է մնում, բայց նրա մարմինը աշխարհագրական զանգված է: Լուսամուտից կախվում եմ դուրս, տեսնեմ՝ Էյֆելյան աշտարակից շամպայն է պղպջում. աշտարակն ամբողջովին կառուցված է թվերից ու սև ժանյակով պատանված: Կոյախողովակները կատաղորեն ղլղլում են: Չորս կողմը ոչինչ չկա, բացի երկրաչափական վանող կանոնավորությամբ փռված տանիքներից:

Ես կրակած փամփուշտի պես դուրս եմ շպրտվել աշխարհից: Թանձր մուժ է իջել ձյութապատ սառած հողին: Զգում եմ քաղաքի

թվայնացրել է 1915.info կայքը

տրոփյունը, կարծես տաք մարմնից հենց նոր հանած սիրտ լինի: Իմ օթևանած հյուրանոցի լուսամուտները թարախակալել են, ծանր, սուր հոտ է ընկել, ասես քիմիական նյութերի այրումից: Սենին նայելիս տիղմ ու ավեր եմ տեսնում, խեղդվող փողոցային լապտերներ, հեղձամահ լինող տղամարդիկ ու կանայք, կամուրջներ, որոնց վրա տներ կան՝ սիրո սպանդանոցներ: Պատի տակ մի մարդ է կանգնել՝ ակորդեոնը փորին կապած. դաստակները կտրված են, բայց ակորդեոնը օձերով լի պարկի նման գալարվում է նրա ծայրատների միջև: Աշխարհը փոքրացել է, դարձել մի թաղի չափ, ոչ աստղեր են մնացել, ոչ ծառեր, ոչ գետեր: Էստեղ ապրողները մեռել են. աթոռներ են սարքում, որոնց վրա նստում են ուրիշները իրենց երազներում: Փողոցի կենտրոնում անիվ է, իսկ անվակնդին կախաղան է ագուցված: Մեռյալները խելահեղորեն ջանում են կախաղան բարձրանալ, բայց անիվը շատ արագ է պտտվում...

Մի բան է պետք ինքս ինձ աչքիս արդարացնելու համար: Երեկ իրիկուն հասկացա. Պապինին: Կարևոր չի՝ շովինիստ է, փոքրիկ Քրիստոս, թե կարճատես պեդանտ: Որպես ձախողակ՝ հիասքանչ է...

Տասնութ տարեկանում ինչ ասես, որ չի կարդացել. ոչ միայն Հոմերոս, Դանտե, Գյոթե, ոչ միայն Արիստոտել, Պլատոն, Էպիկտետոս, ոչ միայն Ռաբլե, Սերվանտես, Սվիֆթ, ոչ միայն Ուոլթ Ուիթմեն, Էդգար Ալան Պո, Բոդլեր, Վիյոն, Կարդուչչի, Մանձոնի, Լոպե դե Վեգա, ոչ միայն Նիցշե, Շոպենհաուեր, Կանտ, Հեգել, Դարվին, Սփենսեր, Հաքսլի, ոչ միայն էս բոլորը, այլև արանքներում ինչքան որ մանր-մունր բան կա: Սա 18-րդ էջում է: Իսկ 232-րդ էջում էլ չի դիմանում ու խոստովանում է. «Ես ոչինչ չգիտեմ»: Ընդունում է. «Միայն վերնագրերը գիտեմ, մատենաբանություններ եմ կազմել, քննադատական հոդվածներ գրել, չարախոսել ու անվանարկել... Կարող եմ հինգ րոպե խոսել կամ հինգ օր, մեկ է, ասելիք չունեմ, դատարկաբան եմ»:

Հետո գրում է. «Բոլորն ուզում են տեսնել ինձ: Բոլորը հարկ են համարում խոսել ինձ հետ: Մարդիկ ձանձրացնում են ինձ և ուրիշներին իրենց հարցուփորձով. ի՞նչ եմ անում: Ինչպե՞ս եմ: Արդեն

թվայնացրել է 1915.info կայքը

լավացե՞լ եմ: Էլի գնո՞ւմ եմ քաղաքից դուրս զբոսնելու: Աշխատո՞ւմ եմ: Գիրքս ավարտե՞լ եմ: Մեկ ուրիշը շո՞ւտ կձեռնարկեմ:

Մի նիհար գերմանացի կապիկ ուզում է, որ թարգմանեմ իր աշխատությունները: Մի հուզավառ ռուս աղջիկ խնդրում է, որ կենսագրություն գրի առնեմ: Մի ամերիկացի տիկին ծարավի է իմ մասին *վերջին* լուրերն իմանալու: Մի ամերիկացի պարոն էլ առաջարկում է իր կառքն ուղարկել՝ հրավիրելով ճաշի, պատկերացրեք՝ սրտամոտ, մտերմիկ զրույցի համար: Հին դպրոցական ընկերս ու սենյակակիցս, որին տասը տարի առաջ եմ տեսել, պահանջում է, որ գրածս ամեն ինչ, ավարտելուն պես, կարդամ իր համար: Մի նկարիչ բարեկամ ակնկալում է, թե կբնորդեմ իրեն: Մի լրագրող ներկա հասցես է փնտրում: Մի ծանոթ միստիկ հետաքրքրվում է իմ հոգեկան վիճակով, ավելի գործնական մի ուրիշը՝ դրամապանակիս վիճակով: Իմ ակումբի նախագահը հարցնում է, թե կհամաձայնե՞մ ելույթ ունենալ տղաների համար: Ոգեհարցությամբ տարված մի կին հույս ունի, որ հաճախակի կգնամ իր տուն՝ թեյի: Նա ցանկանում է իմ կարծիքն իմանալ Հիսուս Քրիստոսի և նոր ոգեմիջնորդի մասին...

Ամենազո՛ր Աստված, այս ի՞նչ օրն եմ ընկել: Մարդիկ, դուք ի՞նչ իրավունք ունեք իմ կյանքը տակնուվրա անել, գողանալ ժամանակս, փորփրել հոգիս, ծծել մտքերս, ինձ դարձնել ձեր ընկերակիցը, մտերիմն ու տեղեկատու բյուրոն: Ո՞ւմ տեղն եք դրել ինձ: Վարձու զվարճաբա՞ն եմ, որն ամեն երեկո պարտավոր է ինտելեկտուալ ֆարս խաղալ ձեր անմիտ քիթումոութների առաջ: Ստրո՞ւկ եմ, որին գնել ու պահում են ձեզ նման դատարկապորտների դիմաց սողալու և իր ամբողջ կարեցածն ու իմացածը ձեր ոտքերի տակ դնելու համար: Հասարակաց տան աղջի՞կ եմ, որը պետք է փեշը բարձրացնի կամ շապիկը հանի թանկ կոստյում հագած առաջին իսկ տղամարդու պահանջով:

Ես մի մարդ եմ, ով կուզենար հերոսական կյանքով ապրել և աշխարհը, իր տեսակետից, ավելի տանելի դարձնել: Եթե թուլության, թալկացման, նեղության պահին ազատություն եմ տվել զգացմունքներիս՝ բառերի մեջ սառած հրկեզ ցասմանը, պատկերներում

թվայնացրել է 1915.info կայքը

դրոշմված կրքոտ երազանքին, խնդրեմ, ընդունեք՝ ինչպես կուզեք... *բայց ինձ հանգիստ թողեք:*

Ես ազատ մարդ եմ և ազատության կարիքն ունեմ: Ես պետք է մենակ լինեմ: Պետք է առանձնության մեջ մտորեմ ամոթիս և հուսահատության մասին: Արևն ու փողոցների սալարկը ինձ հարկավոր են առանց ուղեկիցների, առանց խոսքուզրույցի, ես պետք է ինքս ինձ հետ առանձին մնամ, միայն սրտիս երաժշտության ուղեկցությամբ: Ի՞նչ եք ուզում ինձնից: Երբ ասելիք ունեմ, տպագրում եմ: Երբ տալիք ունեմ, տալիս եմ: Ձեր քննախույզ հետաքրքրասիրությունից սիրտս խառնո՛ւմ է: Ձեր գովաբանությունները նվաստացնո՛ւմ են ինձ: Ձեր թեյը թունավո՛ր է: Ես ոչ ոքի ոչինչ պարտք չեմ: Միայն Աստծու առաջ եմ պատասխանատու, եթե Նա գոյություն ունի՛»:

Ինձ թվում է՝ Պապինին մի թեթև վրիպում է՝ խոսելով մենակ լինելու իր պահանջի մասին: Դժվար չի մենակ լինել, եթե աղքատ ես ու ձախողակ: Արվեստագետը միշտ էլ մենակ է, եթե, իրոք, արվեստագետ է: Ոչ, միակ բանը, որ պետք է արվեստագետին, *մենությունն* է:

Ինձ արվեստագետ եմ կոչում: Ի՛նչ կա որ: Ցերեկը մի լավ ննջեցի, հիմա թավիշ է ողերիս միջև: Բավականին մտքեր ծնվեցին, մի երեք օր կհերիքեն: Լեփլեցուն եմ եռանդով, անելիք չկա: Որոշեցի ման գալու գնալ: Փողոցում մտափոխվեցի: Ավելի լավ է կինո գնամ: Չէ, կինո գնալս չհաջողվեց. մի քանի սու պակաս է: Ուրեմն ման գամ: Ամեն կինոթատրոնի առաջ կանգնում եմ, նայում ազդագրերին, հետո՝ գներին: Ահագին էժան են ափիոնի էս ծխարանները, բայց էլի մի քանի սու պակաս է: Եթե էսքան ուշ չլիներ, կվերադառնայի տուն ու մի դատարկ շիշ կհանձնեի:

Մինչև հասնում եմ Ամելի փողոց, կինոն մտքիցս լրիվ դուրս է գալիս: Ամելի փողոցն իմ սիրելիներից է, էն փողոցներից մեկը, որ, բախտի բերմամբ, քաղաքապետարանը մոռացել է ասֆալտել: Փողոցի մի կողմից մինչև մյուսը սալարկված է խոշոր, ուռուցիկ գետաքարերով: Նեղլիկ փողոց է՝ ընդամենը մի թաղամասով: «Պերտի» հյուրանոցն է էստեղ: Մի փոքրիկ մատուռ էլ կա Ամելի փողոցում:

թվայնացրել է 1915.info կայքը

Կարծես հատուկ հանրապետության նախագահի և նրա ընտանիքի համար է կառուցվել: Հաճելի է մեկ-մեկ էլ համեստ մատուռ տեսնել: Թե չէ Փարիզը լի է հոյաշուք տաճարներով:

Ալեքսանդր 3-րդի կամուրջը: Մոտակայքում ընդարձակ, քամուց անպաշտպան հրապարակ է: Վտիտ, մերկ ծառերը մաթեմատիկական ճշգրտությամբ տնկված են իրենց երկաթե վանդակներում: Ինվալիդների տաճարի մոայլությունը հորդում է գմբեթից և ողողում հրապարակին կից մութ փողոցները: Պոեզիայի մեռելատուն: Նա իրենց ուզած տեղում է հիմա, մեծ զորավարը, Եվրոպայի վերջին ականավոր մարդը: Խոր քուն է մտել իր գրանիտե մահճում: Էլ վախենալու հարկ չկա, թե շուռ կգա գերեզմանում: Դռներն ամուր փակված են, դագաղի խուփը՝ պինդ դրած: Քնի՛ր, Նապոլեոն: Քո գաղափարները պետք չէին, միայն՝ դիա՛կդ:

Գետը դեռ վարարած է, տղմոտ, լույսերից գոլավոր: Չգիտեմ ինչ է ինձ համակում էդ պղտոր, սրընթաց հորձանքին ի տես, բայց սիրտս լցվում է անասելի հրճվանքով, և էս երկրից երբեք չհեռանալու խորունկ ցանկությունս է՛լ ավելի է ամրապնդվում: Միտքս է, վերջերս մի առավոտ «Ամերիքըն էքսպրես» գնալուս ճանապարհին անցա էստեղով՝ նախապես տեղյակ, որ ինձ համար ոչ նամակ կա, ոչ դրամական փոխանցում, ոչ էլ հեռագիր. ոչինչ, ոչինչ: «Գալրի Լաֆայետ»-ի ֆուրգոնը դղրդաձայն անցում էր կամրջով: Անձրևը կտրվել էր, և փրփրադեզ ամպերի միջից թափանցող արևը սառնաշունչ կրակով լիզում էր տանիքների փայլող որմնաքարերը: Հիշում եմ, թե սայլապանն ինչպես թեքվեց նստած տեղից ու նայեց գետին Պասիի ուղղությամբ: Պարզ, առողջ, խրախուսական հայացք էր, որ կարծես թե ասում էր. «Ա՛հ, գարուն է գալիս»: Եվ Աստված վկա, երբ Փարիզում գարուն է գալիս, ամենաանշուք մահկանացուն անգամ պետք է զգա, որ դրախտում է ապրում: Բայց բանը միայն դա չէր. սայլապանի նետած հայացքի մեջ մտերմալից հարազատություն կար: Սա նրա՛ Փարիզն էր: Պարտադիր չի, որ մարդ հարուստ լինի կամ ֆրանսիացի, որպեսզի Փարիզի հանդեպ նման զգացում ունենա: Փարիզը լի է աղքատներով. որոնք, իմ կարծիքով, ամենահպարտ ու

թվայնացրել է 1915.info կայքը

ամենաակեղտոտ մուրացիկներն են աշխարհի երեսին: Բայց նրանց նայելիս էլ է թվում, որ իրենց տանն են զգում: Հենց սա է փարիզցուն տարբերում մյուս մեծ քաղաքների բնակիչներից:

Նյու Յորքի մասին խորհելիս ես բոլորովին ուրիշ զգացողություն ունեմ: Նյու Յորքը նույնիսկ հարուստ մարդուն իր անկարևորության միտքն է ներշնչում: Նյու Յորքը պաղշունչ է, փայլուն, չարաբաստիկ: Շենքերը իշխում են: Մի տեսակ ատոմային մոլեգնություն կա նրա եռուզեռի մեջ. ինչքան կատաղի է տեմպը, այնքան սակավ է հոգին: Մշտական խմորում, բայց նույն հաջողությամբ դա կարող էր կատարվել փորձանոթի մեջ: Ոչ ոք չգիտի, թե ինչն ինչից է: Ոչ ոք չի ղեկավարում էներգիան: Մի վիթխարի բան: Օտարոտի: Անըմբռնելի: Ահռելի ռեակտիվ մղանք, բայց բացարձակապես չհամաձայնեցված:

Երբ մտածում եմ մի քաղաքի մասին, որտեղ ծնվել եմ ու մեծացել, Ուիթմենի գովերգած Մանհեթենի մասին, կույր, մոլի կատաղությունը շամփրում է աղիքներս: Նյու Յո՛րք... Սպիտակ բանտեր, մայթերին վխտացող որդեր, հացի հերթեր, ափիոնամոլների որջեր, որ կառուցված են պալատների պես, ջհուդներ, բորոտներ, ավազակներ և ամենից առաջ՝ *գաղգուկ*, դեմքերի, փողոցների, ոտքերի, տների, երկնաքերների, ճաշերի, ազդագրերի, զբաղմունքների, հանցանքների, սիրո միապաղաղություն... Մի ամբողջ քաղաք, որ խոյանում է ունայնության վիհի վրա: Անիմաստության վիհի: Բացարձակ անիմաստության: Բա Քառասուներկուերորդ փողո՛ցը: Աշխարհի գագաթը՝ նյույորքցիների ասելով: Տեսնես հատա՞կը որն է: Կարող ես ձեռքդ մեկնած քայլել, մարմրող ածխակտորներ կգցեն գլխարկիդ մեջ: Հարուստ, թե աղքատ՝ բոլորը ման են գալիս գլուխը հետ գցած, քիչ է մնում վզները կոտրեն՝ իրենց հիասքանչ սպիտակ բանտերին նայելով: Կույր սագերի պես խարխափում են, և լուսարձակները նրանց դատարկ դեմքերն օծում են զմայլանքի փայլով:

թվայնացրել է 1915.info կայքը

6

«Կյանքը,– ասել է Էմերսոնը,– մարդու մտածածն է օրվա ընթացքում»: Եթե էդպես է, ուրեմն իմ կյանքը պարզապես մի մեծ աղիք է: Ոչ միայն ամբողջ ցերեկն եմ մտածում ուտելիքի մասին, այլև գիշերը տեսնում եմ երազում:

Բայց միտք չունեմ վերադառնալ Ամերիկա, որ ամուսնական լուծը նորից վիզս գցեն ու մի հոգեմաշ գործի դնեն: Չէ, ավելի լավ է աղքատ մարդ լինեմ Եվրոպայում: Աստված է վկա, թե ինչ աղքատ եմ, մնում է միայն մարդ լինել: Անցած շաբաթ կարծեցի՝ ապրուստիս հարցը լուծվելու վրա է, կարծեցի՝ ինձ ու ինձ կսկսեմ գլուխս պահել: Էնպես պատահեց, որ մի ուրիշ ռուսի հանդիպեցի, անունը՝ Սերժ: Սյուռենում է ապրում, որտեղ տարագիրների և աղքատացած արվեստագետների մի փոքրիկ համայնք կա: Հեղափոխությունից առաջ Սերժը կայսերական թիկնազորի կապիտան է եղել, առանց կոշիկի՝ վեց ու երեք ոտնաչափ բոյ-բուսաթ ունի և օղին ջրի պես գլխին է քաշում: Հայրը ծովակալ կամ նման մի բան է եղել «Պոտյոմկին» զրահանավի վրա:

Սերժի հետ ծանոթացա բավական յուրօրինակ հանգամանքներում: Հոտոտելով, թե որտեղ բերանս մի բան գցեմ, օրերից մի օր, կեսօրվա կողմը, հայտնվեցի «Ֆոլի Բերժեր»-ի մոտակայքում, այսինքն՝ հետնամուտքի մոտ, մի նեղ նրբանցքում, որի ծայրին երկաթե դարպաս կար: Ոտքս կախ էի արել արտիստական մուտքի մոտ՝ աղոտ հույս փայփայելով, թե մեկ էլ տեսար՝ էստեղի թիթեռնիկներից մեկը ձեռքս ընկավ, երբ բաց թափքով մի բեռնատար կանգնեց մայթի մոտ: Վարորդը, որ հենց Սերժն էր, տեսնելով ինձ՝ ձեռքերս գրպաններում կանգնած, հարցրեց՝ կօգնե՞մ երկաթե տակառները բեռնաթափել: Իսկ հենց գլխի ընկավ, որ ամերիկացի եմ, ինքն էլ՝ անփող, մազ էր մնում՝ ուրախությունից արտասվեր: Բանից դուրս եկավ՝ դեսուդեն ընկած, մարդ է փնտրում, որն իրեն անգլերեն կսովորեցնի: Օգնեցի, միջատասպան հեղուկով լի տակառները գլորեցինք, մի կուշտ էլ նայեցի կուլիսներում թռվռացող թիթեռներին:

թվայնացրել է 1915.info կայքը

Միջադեպը տարօրինակ ուրվագիծ առավ. դատարկ շենքը, կուլիսներում թռչկոտող տիկնիկանման աղջիկները, ախտահանիչ հեղուկի տակառները և մանավանդ «Պոտյոմկին» զրահանավը: Սերժի փափկությունն էլ չեմ ասում: Քնքուշ հսկա էր, ոտքից գլուխ տղամարդ, բայց կնոջ սրտով:

Մոտակա «Արտիստ» սրճարանում նա տեղնուտեղն ինձ առաջարկեց իր մոտ օթևանել. ասաց՝ ներքնակ կգցի միջանցքի հատակին: Անգլերենի դասերի դիմաց, ասաց, ամեն օր ինձ ճաշ կհասնի՝ ռուսական լիառատ հյուրասիրություն, իսկ եթե ինչ-որ պատճառով ճաշը չկայանա, ուրեմն՝ հինգ ֆրանկ: Դա *հոյակապ* էր ինձ համար, հոյակապ: Միակ խնդիրը սա էր. ո՞նց էի Սյուռեն արվարձանից ամեն օր հասնելու «Ամերիքըն էքսպրես»:

Սերժը պնդեց, որ միանգամից գործի անցնենք. փող տվեց առավոտյան Սյուռեն գնալու համար: Ես տեղ հասա ճաշից քիչ առաջ՝ ուսապարկով հանդերձ, պատրաստ առաջին դասը տալու Սերժին: Տանն արդեն հյուրեր կային. երևում էր՝ միշտ խմբովին են ճաշում, փսոնով:

Սեղանին ութ հոգի էինք, երեք հատ էլ շուն: Նախ՝ շներն են ուտում: Վարսակի շիլա են խփշտում: Հետո հերթը գալիս է մեզ: Մենք էլ ենք վարսակի շիլա ուտում, որպես նախուտեստ: «Chez nous,– ասում է Սերժն ու աչքով տալիս,– c'est pour les chiens, les Quaker Oats. Ici pour le gentleman. Ça va»[1]: Վարսակի շիլային հաջորդում է բանջարեղենով սնկապուր, իսկ դրան՝ խոզապուխտով ձվածեղ, միրգ, կարմիր գինի, օղի, սուրճ, սիգարետներ: Վատ չի ռուսական ճաշը: Բոլորը խոսում են լիքը բերանով: Ճաշի ավարտին Սերժի կինը՝ մի ալարկոտ, փնթի հայուհի, փլվում է բազմոցին ու սկսում կոնֆետներ համտեսել: Հաստ մատներով խառնշտում է տուփը, կոնֆետը կծում՝ լցոնն ստուգելով, իսկ հետո գցում շներին:

Ճաշն ավարտված է, հյուրերը ցրվում են: Էնքան հապշտապ են ցրվում, ասես ժանտախտից վախենալիս լինեն: Սերժն ու ես մնում ենք շների հետ, իսկ նրա կինը մրափում է բազմոցին: Սերժը անհոգ

---

[1] Մեզ մոտ վարսակի շիլան շների համար է, իսկ էստեղ՝ տերերի: Բա՛ (ֆրանս.):

թվայնացրել է 1915.info կայքը

պտտվում է՝ թերմացքը հավաքելով շների համար: «Շները շատ են սիրում,– ասում է:– Շատ օգուտ շներին: Փոքր շուն ճիճուներ ունի... դեռ շատ ջահել»: Նա կռանում է՝ շան թաթերի միջև, գորգին ընկած սպիտակ ճիճուները զննելու: Փորձում է ճիճուների մասին ինչ-որ բան բացատրել անգլերեն, բայց բառապաշարը չի հերիքում: Ի վերջո, դիմում է բառարանին:

«Հա՛,– ասում է նա՝ ցնծագին նայելով ինձ,– *երիզորդ*»: Իմ արձագանքը, ըստերևույթին, խելամտությամբ աչքի չի ընկնում: Սերժը շփոթված է: Ծնկի է գալիս՝ ճիճուներն ավելի լավ զննելու: Վերցնում է մեկն ու սեղանին դնում՝ մրգի կողքին: «Հըմ, շատ էլ մեծ չի,– քրթմնջում է նա:– Մյուս դասին ինձ ճիճուներ սովորեցնեք, հա՞: Դուք լավ ուսուցիչ: Ես առաջադիմեմ...»:

Միջանցքում, ներքնակին պառկած՝ խեղդվում եմ ախտահանիչ հեղուկի հոտից: Սուր, կծու հոտը ասես ներթափանցի մարմնիս բոլոր ծակոտիների միջով: Ինչ որ կերել եմ, քիչ է մնում քթիցս գա. վարսակի շիլան, սունկը, խոզապուխտը, եփած խնձորները: Աչքիս առաջ են գալիս մրգի կողքին դրված փոքրիկ երիզորդը և ճիճուների բոլոր տարատեսակները, որ Սերժը նկարում էր սփոռոցին՝ ջանալով բացատրել, թե ինչ է կատարվում շների հետ: Տեսնում եմ «Ֆոլի Բերժեր»-ի հանդիսասրահը. բոլոր ճեղքերում ուտիճներ են, ոջիլներ ու փայտոջիլներ: Տեսնում եմ մարդկանց, որ խելահեղորեն քորվում են, քորվում ու քորվում արյունոտվելու աստիճանի: Ճիճուներ եմ տեսնում, որ սողում են դեկորների վրայով, ինչպես կարմիր մրջյունների բանակ, եղած-չեղածը մաքրազարդելով: Տեսնում եմ պարախմբի աղջիկներին, որ դեն են նետում իրենց շղարշե տունիկաներն ու մերկանդամ փախչում անցատեղերով: Հանդիսատեսներին եմ տեսնում, որ նրանց նման մի կողմ են նետում հագուստկապուստն ու քորում մեկմեկու կապիկների պես:

Փորձում եմ հանգստանալ: Ի վերջո, տուն եմ ճարել, ամեն օր ճաշի սեղան կնստեմ: Սերժն էլ լավ տղա է, կասկած չկա: Բայց քունս չի տանում: Կարծես դիարանում քնես: Ներքնակը ներծծված է դիակ զմռսելու հեղուկով: Սա ոջիլների, փայտոջիլների, ուտիճների,

թվայնացրել է 1915.info կայքը

երիզորդների դիարանն է: Սիրտս չի դիմանում: Չի էլ դիմանա: Ախր, վերջիվերջո, մարդ եմ, ոչ թե ոջիլ:

Առավոտյան ապասում եմ, մինչև Սերժն իր բեռնատարը բարձի: Խնդրում եմ ինձ հասցնել Փարիզ: Սիրտ չեմ անում ասել, որ հեռանում եմ: Ուսապարկս էլ չեմ վերցնում, թեև ունեցած-չունեցածս մեջն է: Պեռեր հրապարակով անցնելիս ցատկում եմ մեքենայից: Էստեղ իջնելս հատուկ պատճառ չունի: Բայց իբր ի՛նչը հատուկ պատճառ ունի: *Ազատ եմ.* գլխավորը սա է...

Թռչունի պես թեթև՝ մի թաղամասից մյուսն եմ թևում: Ասես բանտից եմ ազատվել: Աշխարհը նորովի եմ տեսնում: Ամեն ինչ արտանց հետաքրքրում է ինձ: Նույնիսկ աննշան բաները: Ֆոբուր Պուասոնիեր փողոցում կանգ եմ առնում ֆիզիկական կուլտուրայի ինչ-որ հաստատության ցուցափեղկի առաջ: Լուսանկարներում պատկերված են արական սեռի ներկայացուցիչներ՝ «առաջ» և «հետո»: Բոլորը գորտակեր ֆրանսիացիք են: Ոմանք մերկ են, միայն քթակնոցով ու մորուքով: Ֆրանսիացին պետք է փոքրիկ փոր ունենա, բարոն դը Շառլյուսի պես: Պետք է մորուքով ու քթակնոցով լինի, բայց մերկ չնկարվի: Պետք է լաքապատ փայլփլուն կոշիկներ հագնի, իսկ վերնահագուստի կրծքագրպանից պետք է մոտ երեք քառորդ մատնաչափ ճերմակ թաշկինակ երևա: Ցանկալի է, որ նա դարձածալին շքանշանի կարմիր ժապավեն ունենա՝ մերակով անցկացրած: Իսկ անկողին մտնելիս պետք է պիժամայով լինի:

Իրիկնակողմ, մոտենալով Կլիշի հրապարակին, անցնում եմ փայտե ոտքով փոքրիկ պոռնիկի կողքից, որն ամեն օր կանգնած է «Գոմոն Պալաս»-ի դիմաց: Տասնութ տարեկանից ոչ մի օր ավել չի լինի: Երևի մշտական հաճախորդներ ունի: Կեսգիշերից հետո, իր սև շորը հագին, կանգնում է էստեղ գամվածի նման: Նրա հետևում մի նեղլիկ նրբանցք կա, որը բոցկլտում է դժոխքի պես: Ես անհոգ անցնում եմ, իսկ նա ինչ-որ բանով հիշեցնում է սագի, փքված լյարդով մի սագ, որին կապել են ցցից, որպեսզի աշխարհը լյարդի պաշտետ վայելի: Էդ փայտե ոտքն անկողնում պիտի որ տարօրինակ լինի:

թվայնացրել է 1915.info կայքը

Մտքովդ հազար բան է անցնում, ասենք, մի տեղդ ծլեպ մտավ և այլն: Բայց ճաշակին ընկեր չկա:

Դամ փողոցում դեմ եմ առնում Փեքովերին՝ ևս մի խեղճուկրակի, որ թերթի աշխատող է: Նա բողոքում է, թե ընդամենը երեք-չորս ժամ է քնում. առավոտյան 8-ին պիտի արթնանա՝ մի ատամնաբույժի մոտ աշխատանքի գնալու: Փողի համար չի, բացատրում է նա, այլ դնովի ատամների գինը վճարելու: «Աչքդ սրբագրե՞լ է գալիս, եթե ոտքի վրա հազիվ ես մնում, քնահարամ ես,- ասում է:- Իսկ կնկաս կարծիքով՝ ձևեր եմ թափում»: «Ի՞նչ կանենք, եթե զրկվես աշխատանքից»,- անընդհատ էդ է: Բայց Փեքովերը թքած ունի աշխատանքի վրա. մեկ է, մանր-մունր ծախսերն էլ չի հանում: Ճարահատված իր ծխուկները հավաքում է, որ դրանցով ծխամորճը լցնի: Պիջակը քորոցներով է կցմցած: Բերանից հոտ է գալիս, ձեռքերը քրտնում են: Դե, օրական էլ ընդամենը երեք ժամ է քնում: «Բա մարդուն էդպես կվերաբերվե՞ն,- ասում է:- Վայն էն է՝ մի միջակետ բաց թողնեմ, շեֆս ի՛նչ թուքումուր է անում. մուխս հանում է»: Իսկ կնոջը հիշելով՝ վրա է բերում. «Էդ տերաքունն էլ ուտող-ուրացող է, ասեմ՝ իմաննաս»:

Բաժանվելիս հաջողվում է մեկուկես ֆրանկ պոկել նրանից: Փորձում եմ մի հիսուն սանտիմ էլ քամել, բայց հնար չկա: Ամեն դեպքում, մի բաժակ սուրճի ու կրուասանների համար հերիք է: Սեն Լազար կայարանի մոտ մի էժան տեղ կա:

Բախտս բերում է. զուգարանում համերգի տոմս գտա: Փետուրի պես թեթևասահ ճամփա եմ ընկնում «Գավո» համերգասրահ: Հսկիչը թթված տեսք ունի. իր չնչին թեյադրամը զանց եմ արել: Ամեն անգամ, կողքովս անցնելիս, հարցական հայացքով նայում է, թե միգուցե հանկարծ մտաբերեմ:

Էնքան վաղուց չեմ եղել լավ հագնված մարդկանց շրջապատում, որ մի քիչ խուճապահար եմ: Ախտահանման հոտը քիթս է ընկնում էլի: Երևի Սերժը սրանց էլ է սպասարկում: Բայց ոչ ոք չի քորվում, փառք Աստծու: Օծանելիքի թույլ բուրմունք... շատ թույլ: Դեռ երաժշտությունը չսկսած՝ մարդկանց դեմքերին արդեն ձանձրույթի դրոշմ կա: Համերգը ինքնախոշտանգման նրբին ձև է: Երբ

թվայնացրել է 1915.info կայքը

դիրիժորը կտկտացնում է իր փայտիկով, լարված կենտրոնացման մի պահ է վրա հասնում, բայց դրան գրեթե իսկույն էլ հետևում է համընդհանուր անտարբերությունը, մի տեսակ անխռով, բուսական հանգիստ, որ ներշնչում է նվագախումբն իր միալար, անընդմեջ, մանրաշաղ անձրևով: Իսկ իմ միտքը զարմանալիորեն սթափ է. ասես գլխիս մեջ հազարավոր հայելիներ լինեն, որտեղ ամեն ինչ արտացոլվում է: Ջղերս պրկվել են, թրթռո՛ւմ են. ինչյունները կարծես ջրի միլիոնավոր շիթերի վրա պարող ապակե գնդիկներ լինեն: Էսպես դատարկ փորով դեռ համերգի չէի եղել: Ականջիցս ոչինչ չի վրիպում, նույնիսկ պստլիկ գնդասեղի ընկնելու ձայնը: Թվում է՝ մերկ եմ, և մարմնիս ամեն մի ծակոտին լուսամուտ է, և բոլոր լուսամուտները բաց են, և լույսը ողողել է փորուփսորս: Զգում եմ, լույսը շուլալվում է կողերիս կամարի տակ, իսկ կողերս կախված են ինչյունների անդրադարձից թրթռացող դատարկ տարածքի վրա: Թե ինչքան է սա շարունակվում, պատկերացում չունեմ. ժամանակի և տեղի զգացողությունը լիովին կորցրել եմ: Թվացյալ հավիտենությանը հաջորդում է մի կիսագիտակից վիճակ, որը հավասարակշռվում է անդորրի զգացումով: Ինձ թվում է՝ մի մեծ լիճ կա իմ մեջ, երփնափայլ, բայց դոնդողի պես պաղ լիճ: Իսկ լիճն ի վեր թռչունների հոծ երամներ են գալար-գալար ելնում, խոշորամարմին չվող թռչուններ՝ երկար, բարակ ոտքերով ու փայլփլուն փետուրներով: Երամ առ երամ բարձրանում են լճի պաղ ու հանդարտ մակերևույթից և, անցնելով իմ անրակների տակից, անհետանում են տարածության ճերմակ անհունում: Իսկ հետո դանդաղ, շատ դանդաղ, սպիտակ գլխարկով պառավի նման, ինչ-որ մեկը շրջում է իմ մարմնով, լուսամուտներն է դանդաղ փակոտում, և ամեն ինչ դառնում է ի շրջանս յուր: Հանկարծ լույսերը վառվում են, և սպիտակ օթյակի մարդը, որին թուրք սպայի տեղ էի դրել, դուրս է գալիս ծաղկի զամբյուղը գլխին դրած կին:

Բվվոց է ընկնում, և բոլոր նրանք, ում հազը գալիս էր, հիմա հազում են հանգիստ սրտով: Ոտքերի քաքստոց է լսվում, նստատեղերի շրխկթրխկոց, մարդիկ աննպատակ շարժվում են մի գլուխ,

թվայնացրել է 1915.info կայքը

ծրագրերն են ճոճոացնում՝ իբր թե կարդում են, հետո, իջեցնելով, նստատեղի տակ են խցկում՝ գոհ նույնիսկ ամենաչնչին պատահմունքից, որը խանգարում է հարցնել ինքն իրեն, թե մտածումներն ինչի մասին են եղել, որովհետև եթե նրանք հասկանան, որ ոչնչի մասին էլ չեն մտածել, կխելագարվեն: Վառ լույսի տակ անմիտ հայացքով նայում են իրար և զննում մեկմեկու անսովոր լարվածությամբ: Հենց որ դիրիժորը նորից է կտկտացնում փայտիկով, նրանք վերստին ընդարմացման գիրկն են ընկնում, հետո ակամայից քորում են մի տեղը կամ հանկարծ մտաբերում ինչ-որ ցուցափեղկ, որտեղ շարֆ կամ գլխարկ են տեսել: Զարմանալի հստակությամբ վերհիշում են բոլոր մանրամասները, բայց թե կոնկրետ որտեղ էր ցուցափեղկը, մտքները չի գալիս, և դա խռովում է նրանց. սթափվում են, հանգիստը կորցնում, սկսում են կրկնապատիկ ուշադրությամբ լսել, քանի որ շատ սթափ վիճակում են, և ինչքան էլ երաժշտությունը հրաշալի լինի, նրանց ուշքն ու միտքը ցուցափեղկն է և էնտեղ կախված շարֆը կամ գլխարկը:

Բուռն սևեռումը փոխանցվում է նույնիսկ նվագախմբին՝ դրդելով արտակարգ աշխուժանալ: Ծրագրի երկրորդ համարն անցնում է էնպիսի կայծակնային արագությամբ, որ երբ երաժշտությունն անսպասելիորեն դադարում է, և լույսերը վառվում են, ոմանք իրենց նստատեղերում գազարի պես ցցված են մնում, նրանց ծնոտները ջղաձգորեն կափկափում են, ու եթե ականջների տակ հանկարծ գոռաս՝ *Բրամս, Բեթհովեն, Մենդելեև, Հերցեգովինա*, առանց մտածելու կպատասխանեն՝ 4, 967, 289:

Երբ հերթը հասնում է Դեբյուսիին, մթնոլորտն ամբողջովին թունավորված է: Իմ մտքով էլ անցնում է, թե ինչ է զգում կինը սեռական հարաբերության ժամանակ. նրա ստացած հաճույքն ավելի սո՞ւր է և այլն: Փորձում եմ պատկերացնել, թե ինչ-որ բան է սողոսկում աճուկս, բայց ընդամենը ցավի բութ զգացում է առաջանում: Ջանում եմ կենտրոնանալ, իսկ երաժշտությունը սպրդում է, խույս տալիս: Գլխումս ոչինչ չկա, միայն դանդաղ պտտվող սկահակ է պատկերանում, որի վրայի ֆիգուրները, առանձնանալով,

թվայնացրել է 1915.info կայքը

անհետանում են տարածության մեջ: Ի վերջո, լոկ լույսն է պտտվում, բայց լույսն ինչպե՞ս պիտի պտտվի, հարցնում եմ ինձ: Կողքիս նստածը մուշ-մուշ քնել է: Չաղլիկ փորով է ու ներկած բեղով, միջնորդի է նման: Դրա համար էլ ինձ դուր է գալիս: Հատկապես չաղլիկ փորն ու դրա գոյացմանը նպաստած բաներն են սրտովս: Ինչո՞ւ պիտի մուշ-մուշ չքնի: Եթե մտքին դնի համերգ լսել, տոմսի փող միշտ էլ կճարվի: Ես նկատել եմ, որ մարդ, ինչքան լավ է հագնված, էնքան ավելի պինդ է քնում: Հարուստների խիղճը հանգիստ է: Աղքատը, թեկուզ մի պահ էլ աչքը կպչի, չորանում է տեղում. նրան թվում է՝ հանցանք է գործել կոմպոզիտորի դեմ:

Իսպանական մոտիվներն էլեկտրականացրել են հանդիսարահը: Բոլորն աթոռների ծայրին են նստած. թմբուկներն արթնացրել են նրանց: Երբ թմբուկները մեջ մտան, կարծեցի՝ էլ դադար չեն տա: Հույս ունեի, թե մարդիկ դուրս կթափվեն օթյակներից կամ գլխարկները վեր-վեր կթռցնեն: Ինչ-որ էպիկական բան կա էս երաժշտության մեջ, և նա կարող էր մեզ լիակատար խելահեղության հասցնել: Նա՝ Ռավելը, եթե ուզենար: Բայց Ռավելն ուրիշ է: Հանկարծ ամեն ինչ մարում է: Մոլեգին հտպտանքի կեսին նա կարծես թե միտքն է բերում, որ այցեզգեստով է: Եվ զսպում է իրեն: Մեծ սխալ է՝ իմ համեստ կարծիքով: Արվեստի էությունն էլ հենց մինչև վերջ գնալն է: Եթե սկսում ես թմբուկներից, պիտի ավարտես պայթուցիկով: Ռավելն ինչ-որ բան է զոհաբերել հանուն ձևի, հանուն բանջարեղենի, որը լավ է մարսվում քնելուց առաջ:

Մտքերս ցրվում են: Երաժշտությունը խույս է տալիս ինձնից, մանավանդ որ թմբուկները լռում են: Բոլորն անցնում են նախկին վիճակին: Ելքի կարմիր լույսի տակ մի Վերթեր է նստել՝ հուսահատության գիրկն ընկած. հենվել է արմունկներին, աչքերը սառել են: Դռան մոտ մի իսպանացի է կանգնած՝ երկար թիկնոցն ուսին, սոմբրերոն էլ ձեռքին: Ասես բնորդում է Ռոդենի «Բալզակի» համար: Պարանոցից վերև Բաֆալո Բիլին է հիշեցնում: Դիմացիս պատշգամբի առաջին շարքում մի կին է բազմել՝ ոտքերը լայն բացած. երևում է՝ ծնոտը բռնվել է, վիզը ծռել է, հետ գցել: Կարմիր գլխարկով

թվայնացրել է 1915.info կայքը

մի կին էլ նիրհում է՝ ճաղաշարին կոթնած. ա՛յ թե ընտիր բան կլիներ, եթե սրա արյունահոսությունը բռներ, մի դույլ արյուն թափվեր ներքևի թունդ օսլայած վերնաշապիկների վրա: Պատկերացրեք, արյունը ջուր դարձած էս ավարաները արյունլվա կրծքակալներով են համերգից տուն գնում:

Քունն է լեյտմոտիվը: Էլ ոչ ոք չի լսում: Անհնար է մտածել ու լսել: Անհնար է նույնիսկ անրջել, քանի որ երաժշտությունն ինքնին անրջանք է, որ կա: Սպիտակ ձեռնոցներով մի կնոջ գոգին կարապ է: Ըստ լեգենդի, երբ կարապը բեղմնավորեց Լեդային, նա աշխարհ բերեց երկվորյակների: Բոլորն էլ ինչ-որ բան աշխարհ են բերում, բոլորը, բացի վերին հարկաբաժնի լեսբուհուց: Գլուխը հետ ընկած է, վիզը՝ լայն բաց. նա, ոտքից գլուխ լարված, սարսռում է ճառագուն սիմֆոնիայից թռչող կայծերի տարափի տակ: Յուպիտերն է նրա ականջին: Կալիֆորնիական արտահայտություններ, մեծ լողակներով կետաձկներ, Զանզիբար, Ալկասար: «Երբ Գվադալկվիվիրի երկայնքով հազար մզկիթ էին շողում...»: Այսբերգների խորքում, համակ յասամանագույն օրերին: Փողի փողոցը՝ ձիակապի երկու սպիտակ սյունով... Գարգույլները... մարդը՝ Յավորսկու ցնդաբանությունը ձեռքին... գետի լույսերը... գետի...

7

Ամերիկայում մի քանի հնդիկ ծանոթ ունեի. ոմանք լավն էին, ոմանք՝ վատը, մյուսներն էլ՝ ոչ լավը, ոչ վատը: Բանն էնպես էր դասավորվել, որ ես, բախտի բերմամբ, կարող էի նրանց օգտակար լինել. աշխատանք էի ճարում, ապաստան տալիս, հարկ եղած դեպքում էլ կերակրում: Պիտի ասեմ՝ նրանք շատ շնորհակալ էին, էնքան շնորհակալ, որ փաստորեն կյանքս պղտորում էին իրենց ուշադրությամբ: Երկուսը սրանցից սրբակյաց էին,– եթե ճիշտ եմ հասկանում, թե սրբակյացը որն է,– մանավանդ Գուպտեն, որին մի առավոտ էլ գտան մինչև ականջատակերը կտրած կոկորդով:

թվայնացրել է 1915.info կայքը

Գրինիչ Վիլիջի վարձու սենյակներից մեկում էին գտել. մորեմերկ մահճակալին ընկած, իր ֆլեյտան՝ կողքին, իսկ կոկորդը, ինչպես ասացի, մինչև ականջատակերը կտրած: Էդպես էլ չպարզվեց՝ սպանե՞լ էին, թե՞ ինքնասպան էր եղել: Բայց խոսքս դրա մասին չի...

Մի շարք հանգամանքներ են միտքս գալիս, որոնք, ի վերջո, ինձ բերեցին Նանանտատիի տուն: Մտածում եմ՝ ինչ տարօրինակ է, որ լրիվ մոռացել էի Նանանտատիին ու միայն օրերս հիշեցի, Սել փողոցի հյուրանոցի քրջոտ սենյակում պառկած: Մեկնվել էի երկաթե մահճակալին ու միտք էի անում, թե ինչ ոչնչություն եմ դարձել, ինչ անկապ, զրո, մեկ էլ՝ հո՛պ, գլխիս մեջ թնդաց՝ ՆԱՆԻՐՏԱՏԻ՛: Նյու Յորքում անունն էդպես էինք կնքել. Նանիրտատի, այսինքն՝ Նանիր տատի, էլի:

Ես պառկած եմ հենց էն «փառահեղ» բնակարանի հատակին, որով նա պարծենում էր Նյու Յորք գալիս: Նանանտատին բարի սամարացի է խաղում. քոր բերող երկու ծածկոց է տվել, ձիու սթար, ի՞նչ ծածկոց, դրանցով կոլոլվում եմ փոշոտ հատակին: Օրվա մեջ պահ չկա, որ մանր-մունր անելիքներ չլինեն, եթե հիմարի պես տանը մնամ: Առավոտյան կոշտ ու կոպիտ արթնացնում է ինձ, որպեսզի իր համար բանջարեղենի նախաճաշ պատրաստեմ՝ սոխով, սխտորով, բակլայով և այլն: Նրա ընկերը՝ Քեպին, ինձ զգուշացրել է, որ դա հանկարծ չուտեմ. ասում է՝ բանի նման չի: Իսկ ի՞նչ տարբերություն՝ բանի նմա՞ն է, թե՞ չէ: *Ուրեմն է*: Կարևորն էլ դա է: Բերանս մի պատառ դնելու համար ես պատրաստ եմ նրա կոտրված ավելով գորգերը սրբել, շորերը լվանալ ու փշրանքները հատակից հավաքել, հենց որ ուտելը վերջացնի: Գալուս օրվանից չտեսնված մաքրասեր է դարձել. ամեն ինչի փոշին պիտի տալ, աթոռները պիտի իրենց տեղում լինեն, ժամացույցը խփի, զուգարանի ջուրը, ոնց որ պետք է, հոսի... Մի ցնորված հնդիկ, որի նմանը չե՛ս գտնի: Ինքն էլ՝ ժլատ, լվից ձեթ քամող: Մի օր, երբ սրա ճանկից ազատվեմ, փորս բռնած՝ կքրքջամ, բայց հիմա բանտարկյալ եմ, կաստա չունեցող մարդ, անձեռնմխելի...

Եթե գիշերը չեմ գալիս ու ձիու սթարներով փաթաթվում, երևամ թե չէ՝ ասում է. «Հա՛, ուրեմն շունչդ չե՞ս փչել: Ես էլ մտածում էի՝

թվայնացրել է 1915.info կայքը

փչած կլինես»: Ու չնայած գիտի, որ գրպանս դափ-դատարկ է, ամեն օր պատմում է, թե մոտակայքում էժան սենյակ է գտել: Ասում եմ. «Բայց դու լավ գիտես, որ հիմա ի վիճակի չեմ սենյակ վարձել»: Չինացու նման աչքերն է ճպճպացնում ու վրա բերում փաղաքուշ ձայնով. «Ախ, հա՛, մոռացել էի, որ փող չունես: Միշտ մտքիցս ընկնում է, Էնդրի... Բայց երբ փող գա, միսս Մոնան ուղարկի, իրար հետ կգնանք սենյակ նայելու, հը՞»: Ու հենց տեղնուտեղն էլ ավելացնում է, որ մնամ՝ ինչքան սիրտս ուզի. «Վեց ամիս... յոթ ամիս, Էնդրի... Ինձ համար շատ լավ է, որ դու էստեղ ես»:

Նանանտատին էն հնդիկներից է, որոնց համար Ամերիկայում ոչինչ չեմ արել: Ինձ ներկայացել է որպես հարուստ առևտրական, մարգարիտ վաճառող, որը Փարիզի Լաֆայետ փողոցում շքեղ բնակարան ունի, առանձնատուն՝ Բոմբեյում և ամառանոց՝ Դարջիլինգում: Հենց առաջին հայացքից էլ տեսա, որ ծալը պակաս է, բայց ծալապակասները երբեմն կարողություն դիզելու ձիրք են ունենում: Չգիտեի, որ Նյու Յորքում հյուրանոցի հաշիվը փակել է՝ տիրոջը երկու խոշոր մարգարիտ թողնելով: Հիմա զվարճալի է թվում, թե ոնց է էս բադիկը, եբենոսյա գավազանով, փքված ճեմել նյույորքյան հյուրանոցի նախասրահում, սպասավորներին կարգադրություններ արել, իր հյուրերի համար նախաճաշ պատվիրել, բարապանին թատրոնի տոմսեր, շուրջօրյա տաքսի ապսպրել ու նման բաներ, այնինչ գրպանում քամի է խաղացել: Միայն խոփ-խոշոր մարգարիտների շարան է եղել վզին, ժամանակ առ ժամանակ հանել է մեկ-մեկ: Բա ինչ հիմարավարի թփթփացնում էր ուսիս, շնորհակալություն հայտնում՝ հնդիկ տղերքին լավություն անելու համար. «Բոլորն էլ խելացի ջահելներ են, Էնդրի... շա՛տ խելացի»: Ասում էր՝ էսինչ գթառատ աստվածն ինձ կհատուցի բարության համար: Հիմա եմ հասկանում, թե էդ խելացի ջահելներն ինչու էին քմծիծաղում, երբ խորհուրդ էի տալիս Նանանտատիից մի հինգանոց պարտք անել:

Իսկ գթառատ աստված լավ էլ վարձահատույց եղավ բարեսրտության համար: Էս ցմփոր բադիկի ստրուկն եմ դարձել: Գիշեր-ցերեկ վազ եմ տալիս սրա առաջ: Հարկավոր եմ իրեն. էդպես

թվայնացրել է 1915.info կայքը

էլ ասում է երեսիս: Պետքաթոռին թառելուց առաջ բղավում է. «Էնդրի, մի աման ջուր բեր, խնդրում եմ: Պիտի սրբվեմ»: Նանանտատիի մտքով էլ չի անցնում զուգարանի թղթից օգտվել: Երևի կրոնական հավատամքին դեմ է: Չէ, մի աման ջուր ու լաթ է պահանջում: Շատ նրբակիրթ է էս ցմփոր բադիկը: Մեկ-մեկ, երբ մի բաժակ անգույն թեյ եմ խմում, որի մեջ մի հատիկ վարդաթերթ է գցել, մոտենում է ինձ ու բարձր գմփացնում, հենց քթիս տակ: Երբեք չե՛ս լսի, որ ներողություն խնդրի: Նման բառ չկա հուջարաթերենի նրա բառապաշարում:

Նանանտատիի տուն գալուս օրը նա ցողարկում էր իրեն, այսինքն՝ կանգնած էր կեղտոտ ջրով լի թասի մոտ ու ջանում էր խեղված ձեռքը հասցնել ծոծրակին: Թասի կողքին պղնձե սափոր կար՝ ջուրը փոխելու համար: Նա խնդրեց, որ լուռ մնամ արարողության ժամանակ: Սուսուփուս նստեցի, ինչպես պատվիրել էր. նրան էի նայում, քանի դեռ երգաձայն աղոթում էր ու մերթընդմերթ թքում լվացաթասի մեջ: Ուրեմն սա՛ է ճոխ բնակարանը, որի մասին ասում էր Նյու Յորքում: Լաֆայե՛տ փողոց. շատ տպավորիչ էր ականջիս հնչում: Ինձ թվում էր՝ նման փողոցում միայն միլիոնատերեր ու մարգարտի վաճառականներ կապրեն: «Լաֆայետ փողոցը» ճոխ է հնչում օվկիանոսի մյուս կողմում: Ինչպես Հինգերորդ պողոտան, երբ Եվրոպայում ես: Մտքովդ էլ չի անցնում, թե ինչ խոզաբներ կան էդ շքեղ փողոցներում: Ինչևէ, վերջապես տեղ եմ հասել, Լաֆայետ փողոցի փառահեղ բնակարանում նստած եմ: Իսկ էս ցնորված խեղանդամ բադը ցողարկման իր արարողությունն է անում: Աթոռս ջարդված է, մահճակալը փուլ է գալիս, պաստառը բզկտվել է, մահճակալի տակ էլ կեղտոտ լվացքով բերնեբերան լի բաց ճամպրուկ է: Նստածս տեղից ողորմելի բակն է երևում, ուր Լաֆայետ փողոցի արիստոկրատիան, թիկնած, իր կավե չիբուխներն է փստացնում: Բա Դարջիլինգի ամառանո՞ցը ինչ տեսք կունենա, մտածում եմ ես, մինչ Նանանտատին ներբողներ է երգում: Նրա օրհներգությունն անվերջանալի է:

Բացատրում է ինձ, որ պարտավոր է որոշակիորեն սահմանված կարգով ցողարկվել. հավատքն է պահանջում: Բայց կիրակի

թվայնացրել է 1915.info կայքը

լողանում է թիթեղյա լոգարանում. իր ասելով՝ Մեծն ԵՍ ԵՄ-ը մատների արանքո՛վ կնայի դրան: Հետո հագնվում է, մոտենում պահարանին, ծնկի գալիս երրորդ դարակում դրված կուռքի առաջ ու քթի տակ կրկնում իր բանդագուշանքը: Ասում է՝ եթե ամեն օր աղոթես էսպես, քեզ բան չի պատահի: Չգիտեմ ինչ անունով նրա գթառատ աստվածը երբեք չի մոռանում իր խոնարհ ծառային: Հետո Նանանտատին ցույց է տալիս ձեռքը, որ խեղվել է ավտովթարից, անկասկած, մի օր, երբ թերի է թողել երգ ու պարի իր լիակատար ծրագիրը: Ձեռքը կոտրված կողմնացույցի է նման. արդեն ձեռք էլ չի, այլ՝ կոճիկ, որին մնացորդ է կցած: Ձեռքի լավանալուց հետո թևատակի զույգ գեղձերն ուռել էին, փոքր, գնդլիկ գեղձեր՝ ճիշտ շան ամորձիների նման: Իր բախտը լացելիս նա հանկարծ միտքն է բերում, որ բժիշկը խորհուրդ է տվել լավ սնվել: Ինձ խնդրում է անմիջապես նստել ու ճաշացանկ կազմել, որտեղ ձուկն ու մսեղենը առատ լինեն: «Իսկ ի՛նչ կասես ոստրեների մասին, Էնդրի. ախպերիկի համար»: Բայց էս ամենն ուղղակի ինձ վրա տպավորություն գործելու նպատակով է: Նա ոչ ոստրեներ, ոչ ձուկ, ոչ էլ միս առնելու մազաչափ ցանկություն չունի: Համենայն դեպս, քանի էստեղ եմ: Ներկա դրությամբ մենք պիտի ոսպով սնվենք, բրնձով ու չոր-մոր բաներով, որ ձեղնահարկում է պահում: Անցած շաբաթ առած կարագն էլ չի կորչի: Երբ նա սկսում է կարագն աղ դնել, անտանելի հոտ է ընկնում: Ես տնից փախչում էի, հենց որ անցնում էր հալելուն, բայց հիմա դրան էլ եմ դիմանում: Նա միայն հրճվանքից կմեռներ, եթե կերածս հետ տայի. պահարանը դնելու էլի բան կունենար չորացած հացի, մզլած պանրի ու փոքրիկ, յուղալի բլիթների հետ, որ պատրաստում է թթված կաթով ու կծված կարագով:

Երևում է՝ վերջին հինգ տարում Նանանտատին ոչինչ չի արել ու ոչ մի ծակ փարա չի աշխատել: Գործը փլուզվել է: Ինձ պատմում է Հնդկական օվկիանոսի մարգարիտների, հսկայական մարգարտահատերի մասին, որոնց շնորհիվ կապրես ամբողջ կյանքում: Արաբներն են փչացրել գործը, ասում է: Բայց հիմա ամեն օր աղոթում է իր աստծուն, ու դա է զորավիգ իրեն: Նա հրաշալի հարաբերությունների

թվայնացրել է 1915.info կայքը

մեջ է աստվածության հետ. գիտի, թե ոնց պիտի գլուխը յուղի ու մի քանի սու շորթի: Ջուտ առևտրական հարաբերություններ են: Ամեն օր պահարանի առաջ հաճոյանալուն ի տրիտուր Նանանտատին ստանում է բակլայի ու սխտորի իր բաժինը, թևատակերի ուռած գեղձերի մասին էլ չեմ խոսում: Նա վստահ է, որ ամեն ինչ, ի վերջո, լավ կլինի: Մարգարիտը նորից կսկսի կարգին ծախվել, գուցե հինգ, գուցե և քսան տարի հետո. երբ Բումարում աստվածը կամենա: «Իսկ երբ գործն առաջ գնա, Էնդրի, տասը տոկոսը քոնը կլինի իմ նամակները գրելու համար: Բայց, նախ, Էնդրի, պետք է նամակ գրես, որպեսզի պարզենք, թե կարո՞ղ ենք Հնդկաստանից վարկ ստանալ: Պատասխանը կգա վեց ամսից, միգուցե և յոթ... Նավերը ուշ են հասնում Հնդկաստան»: Սա ժամանակի զգացողություն բոլորովին չունի, էս բադիկը: Երբ հարցնում եմ՝ լա՞վ է քնել. ասում է. «Հա, Էնդրի, քնելս շատ լավ է... Պատահում է՝ երեք օրում իննսուներկու ժամ քնում եմ»:

Առավոտյան նա անչափ թույլ է սովորաբար՝ ինչ-որ բան անելու համար: Ձե՛ռքը: Էդ խղճո՛ւկ, կա՛խ ընկած ձեռքի մնացուկը... Երբ տեսնում եմ՝ հետ է տարել, դրել ծոծրակին, մտածում եմ, թե ոնց պիտի նորից տեղը բերի: Եթե կլորիկ փորը չլիներ, «Մեդրանո» կրկեսի ակրոբատի՝ օձ-մարդու հետ կշփոթեի: Մնում է ոտքը կոտրի ու վերջ: Հենց որ գորգը մաքրելիս փոշի բարձրացնեմ, սկսում է աճուճ-մաճուճի պես կոթկոթալ. «Դե լա՛վ է: Լավ է, էլի, Էնդրի, ուրեմն ես էլ զիբիլը հավաքեմ»: Դա նշանակում է, որ մի քանի փոշեհատիկ եմ աչքաթող արել: Քաղաքավարի ձևով է ծաղրում:

Ցերեկը միշտ մտերիմ ընկերներ են նրա մոտ գալիս, էլի մարգարտի վաճառականներ: Բոլորն էլ շատ սիրալիր, քաղցրալեզու շան որդիք են՝ եղնիկի հեզ աչքերով: Սեղան նստած՝ բուրումնավետ թեյ են խմում բարձր ֆոթացնելով, իսկ Նանանտատին ոստոստում է խաղալիք արկղիկից դուրս պրծնող կերպարանքի պես կամ էլ ինձ մատնացույց անում հատակին ընկած փշրանքն ու ասում իր

թվայնացրել է 1915.info կայքը

կեղծանուշ ձայնով. «Սա կվերցնե՞ս, Էնդրի»: Հյուր ունենալիս նա շողոմաբար մոտենում է պահարանին ու հացի չորուկներ հանում, որոնք երևի մի շաբաթ առաջ է կարմրացրել, և պիտի որ արդեն բորբոսնած փայտի համ ունենան: Ոչ մի փշուր դեն չի նետվում: Եթե հացն արդեն լրիվ է հնացել, Նաննանտատին տանում է ցած՝ դռնապանուհուն տալիս, որը, նրա ասելով, շատ բարի է իր նկատմամբ: Ըստ Նաննանտատիի, դռնապանուհու խելքը գնում է քարթու հացի համար. դրանից պաքսիմատի պուդինգ է պատրաստում:

Մի օր իմ ընկեր Անատոլը եկավ ինձ տեսության: Նաննանտատին հիացած էր: Հորդորեց, որ Անատոլը մնա թեյ խմելու: Հորդորեց, որ իր յուղալի բլիթներն ու հացի չորուկները ճաշակի: «Դուք պետք է ամեն օր գաք ու ինձ ռուսերեն սովորեցնեք,– ասաց:– Ռուսերենը հիանալի լեզու է... Ուզում եմ իմանալ: Ինչպես եք ասո՞ւմ, Էնդրի. *բոհշկ*: Խնդրում եմ, գրեք ինձ համար, Էնդրի...»: Իսկ ես պետք է, ոչ ավել, ոչ պակաս, գրամեքենայով տպեմ, ինքն էլ նայի, թե դա ոնց եմ անում: Խեղված ձեռքի ապահովագրությունը ստանալուց հետո է գրամեքենան առել. բժիշկը խորհուրդ է տվել, որ մեքենագրելը լավ վարժանք է ձեռքի համար: Բայց, շատ չանցած, նա ձանձրացավ գրամեքենայից. *անգլերեն* էր:

Երբ Նաննանտատին իմացավ, որ Անատոլը մանդոլին է նվագում, թե բա. «Շա՜տ լավ: Դուք պետք է ամեն օր գաք ու ինձ երաժշտություն սովորեցնեք: Հենց որ գործերս լավանան, մանդոլին կառնեմ: Օգտակար է ձեռքիս համար»: Մյուս օրը նա դռնապանուհու պատեֆոնը փոխարինաբար վերցրեց: «Ինձ պարել կսովորեցնե՞ս, Էնդրի: Փորս շատ մեծ է»: Հույս ունեմ՝ մի օր բիֆշտեքս կառնի, ես էլ կասեմ. «Իմ տեղը կկծե՞ս, Նանիր տատի: Ես կարգին ատամ չունեմ»:

Ինչպես նշեցի արդեն, գալուս օրվանից նա արտակարգ բծախնդիր է դարձել: «Երեկ,– ասում է,– միանգամից երեք սխալ բան ես արել, Էնդրի: Առաջինը. մոռացել ես զուգարանի դուռը փակել, ու ամբողջ գիշեր ջրի չոչոցը լսվում էր: Երկրորդը. խոհանոցի պատուհանը բաց ես թողել, ու առավոտյան ապակին ճաքել է: Եվ վերջապես, մոռացել ես կաթի շիշը դուրսը դնել: Խնդրում եմ, քնելուց

թվայնացրել է 1915.info կայքը

առաջ կաթի շիշը միշտ դուրսը դիր, իսկ առավոտյան հաց բեր ինձ համար, հա՞»:

Ամեն օր նրա ընկերը՝ Քեպին, գալիս է իմանալու, թե Հնդկաստանից մարդ չի՞ եկել: Սպասում է՝ մինչև Նանանտատին դուրս գա տնից, իսկ հետո իրեն գցում է պահարանի մոտ ու խփշտում ապակե սափորի մեջ պահված հացի ձողիկները: Անպետք բան է, իր ասելով, բայց հուպ է տալիս, առնետի պես մաքրազարդում: Քեպին ձրիակեր է, մարդանման տիզ, որն իր ամենաչքավոր հայրենակցի հոգեպահուստին էլ վրա կտա: Քեպիի տեսակետից՝ դրանք բոլորը նաբոբներ են: Մանիլական սիգարի ու մի բաժակ խմիչքի համար նա ուզածդ հնդիկի քամակը կլպստի: Հնդիկի, նկատի առեք, բայց ոչ անգլիացու: Քեպին Փարիզի բոլոր պոռնկատների հասցեներն ունի, գներն էլ՝ հետը: Նույնիսկ տասը ֆրանկանոց հաստատություններից փոքրիկ միջնորդավարձ է ստանում: Նա ցանկացած տեղ գնալու ամենակարճ ճանապարհն էլ գիտի: Նախ՝ կհարցնի, թե տաքսիո՞վ ես ուզում գնալ: Եթե ասես՝ ոչ, ավտոբուս կառաջարկի, իսկ եթե դա էլ թանկ համարես, ուրեմն՝ տրամվայ կամ մետրո: Կամ էլ խորհուրդ կտա ոտքով գնալ մի երկու ֆրանկ խնայելու համար՝ շատ լավ իմանալով, որ ճանապարհին ծխախոտի կրպակի մոտով պիտի անցնեք, և դու էնքան բարի կլինես, որ իր համար մի փոքրիկ սիգար կառնես:

Քեպին յուրովի հետաքրքիր է, որովհետև բացարձակապես ոչ մի արտուզելիք չունի, բացի ամեն իրիկուն շինվրտվելուց: Աշխատած ամբողջ փողը, իսկ դա չնչին բան է, պարասրահներում է վատնում: Կին և ութ երեխա ունի Բոմբեյում, բայց դա չի խանգարում նրան ամուսնության առաջարկ անել ամեն մի սպասուհու, եթե սա էնքան անխելք է ու դյուրահավատ, որ նրա ծուղակն է ընկնում: Կոնդորսե փողոցում մի պստլիկ սենյակ է վարձել, որի համար ամսական վաթսուն ֆրանկ է վճարում: Պաստառն իր ձեռքով է կպցրել: Շատ է հպարտանում դրանով: Ինքնահոսը մանուշակագույն թանաք է լցնում, քանի որ դա ավելի երկար է մնում: Ինքն է փայլեցնում կոշիկները, հարթուկում շալվարը, իր լվացքն անում: Մի փոքրիկ սիգարի համար, արի ու տես, որ կուղեկցի քեզ Փարիզով մեկ: Եթե կանգ

թվայնացրել է 1915.info կայքը

առնես՝ վերնաշապիկ կամ օձիքի ճարմանդ նայելու, նրա աչքերը կփայլատակեն: «Էստեղից չառնեք,- կասի:- Շատ թանկ է: Ես էժան տեղ ցույց կտամ»: Ու աչքդ էլ չես հասցնի ճպել՝ քեզ թոցրած կբերի, կկանգնեցնի ուրիշ խանութի ցուցափեղկի առաջ, որտեղ նույն վերնաշապիկներն են ու օձիքի ճարմանդները. գուցե խանութն էլ է նույնը, բայց ի՞նչ իմաննաս: Երբ Քեպին լսում է, թե ինչ-որ բան ես ուզում առնել, հոգին փառավորվում է: Քեզ էնքան հարցակոխ կանի ու էնքան տեղեր քարշ կտա, որ անպայման կծարավես, սիրտդ կուզենա մի բան խմել, ու մեկ էլ, ի զարմանս քեզ, կհայտնաբերես, որ նորից կանգնած ես ծխախոտի կրպակի մոտ, երևի հենց նո՛ւյն կրպակի, և Քեպին մեղմանուշ ձայնով ասում է նորից. «Ինձ համար մի փոքրիկ սիգար չե՞ք առնի»: Ինչ էլ մտքիդ դնես, թեկուզ քայլել մինչև փողոցի անկյունը, Քեպին էնպես կանի, որ փողդ խնայես: Ցույց կտա ամենակարճ ճանապարհը, ամենաէժան տեղը, ամենակշտացնող խորտիկը, որովհետև ինչ ուզում ես՝ արա, ծխախոտի կրպակի մոտով պիտի անցնես, ու մի բան էլ. հեղափոխություն է, գործադուլ, թե համաճարակ, Քեպին պետք է «Մուլեն Ռուժ»-ում, «Օլիմպիա»-ում կամ «Անժ Ռուժ»-ում լինի, երբ երաժշտությունը սկսվի:

Անցած օրը գիրք բերեց, որ կարդամ: Մի ճգնավորի և հնդկական թերթի խմբագրի նշանավոր դատավարության մասին էր: Խմբագիրը բացեիբաց մեղադրել է ճգնավորին, թե սա ամոթալի կյանք է վարում, ավելին՝ ամբաստանել է նրան, որ վեներական հիվանդություն ունի: Քեպիի ասելով՝ դա մեծն ֆրանսիական սիֆիլիսը կլինի, բայց Նաննանտատին հավաստիացնում է, թե ճապոնական սուսանակն է: Նաննանտատին սիրում է ամեն ինչ մի քիչ չափազանցել: Համենայն դեպքս, աշխուժացած ասում է. «Ինչ որ գրված լինի, ինձ կպատմե՛ս, Էնդրի: Ես ի վիճակի չեմ կարդալ. ձեռքս ցավում է»: Հետո, ինձ ոգևորելու համար, վրա է բերում. «Շատ լավ գիրք է, լրիվ հուպտվոցի: Քեպին քեզ համար է բերել: Խելքը տվել է աղջիկներին: Քանի՛-քանի հոգու է տակը դրել... Կրիշնայի պես: Մարդու հավատը չի գալիս, Էնդրի...»:

թվայնացրել է 1915.info կայքը

Քիչ անց Նանանտատին ինձ տանում է վերև՝ ձեղնահարկ, որը լիքն է Հնդկաստանից բերված թիթեղյա պահածոներով և ջուտե պարկերի ու յուղաթղթե գունավոր փաթեթների մեջ պահվող հնդկացորենով: «Էստեղ եմ բերում աղջկերքին,– ասում է նա: Իսկ հետո ավելացնում է տխուր.– Ես մի իգիթ հուպ տվող չեմ, Էնդրի: Չեմ բզում արդեն: Ճիտ եմ անում, բան-ման ասում: Հիմա մենակ ասելն է դուր գալիս»: Էլ լսելու կարիք չկա. գիտեմ, որ ձեռքից է խոսք բացելու: Ամեն գիշեր տեսնում եմ պոկված ծխնու պես մահճակալից կախ ընկած: Բայց, ի զարմանս ինձ, նա ասածին հավելում է. «Հուպ տալն արդեն իմ բանը չի, Էնդրի: Երբեք էլ կարգին հուպ տվող չեմ եղել: Այ, եղբայրս՝ ուրիշ հաշիվ, լա՛վն է. ամեն օր, էն էլ՝ երե՛ք անգամ: Քեպին էլ է լավը. Կրիշնան՝ քեզ օրինակ»:

Հիմա նրա միտքը «հուպտվոցու գործով» է տարված: Ներքևի փոքրիկ սենյակում, որտեղ ծունր է դնում բաց պահարանի առաջ, նա ինձ պատմում է իր կյանքի մասին, երբ հարուստ է եղել, և կինն ու զավակներն էստեղ իր հետ են ապրել: Տոներին կնոջը տարել է «Բոլոր ազգերի տուն» ու մի գիշերով սենյակ վարձել: Ամեն համար էնտեղ մյուսներից տարբեր ոճ ունի: Կնոջ խելքը գնալիս է եղել: «Հուպտվոցու չնաշխարհիկ տեղ է, Էնդրի: Բոլոր համարներն ինձ ծանոթ են...»:

Մեր նստած սենյակի պատերը լի են լուսանկարներով: Գերդաստանի բոլոր ճյուղերը ներկայացված են, Հնդկական կայսրության հատույթն է կարծես: Դրա համար էլ էս ծննդաբանական ծառի սաղարթը մեծ մասամբ խունացած տերևներ են. կանայք փխրուն են և ապշահար, վախվորած աչքերով, տղամարդիկ վարժեցրած շիմպանզեների նման սուր, խելացի հայացք ունեն: Բոլորն էստեղ են՝ մոտ իննսուն հոգի, իրենց սպիտակ եզներով, աթարադեզերով, վտիտ ոտքերով, հնաոճ ակնոցներով. մեկ-մեկ հետին պլանում խանձված հողակտոր է երևում, շենքի կիսաքանդ վերնաճակատ, բազմաձեռ կուռք՝ մարդակերպ հազարոտնուկի պես: Էս պատկերասրահում էնքան անիրական, աննպատեհ մի բան կա, որ ակամայից մտաբերում ես Հիմալայներից մինչև Ցեյլոն սփռված ստվարաթիվ տաճարները, դրանց ճարտարապետության անհուն բազմազանությունը՝

շմեցուցիչ իր գեղեցկությամբ ու միաժամանակ հրեշավոր, սարսափելի հրեշավոր, որովհետև բյուրավոր զարդաքանդակներում մրրկվելով խմորվող պտղաբերությունը ասես ուժասպառ է արել Հնդկաստանի հողը: Տաճարների ճակատամասերում կուտակված կերպարանքների եռուն մեղվանոցին նայելիս ապշահար ես մնում էս թուխ, սիրունատես մարդկանց զորությունից, որոնց խորհրդավոր կենսահյութերը միաձուլվել են ավելի քան երեք հարյուր տարի ձգվող հեշտագին գրկախառնության մեջ: Թվում է՝ լուսանկարներից խորաթափանց աչքերը սևեռած թուլակազմ տղամարդիկ ու կանայք այն զորեղ, խոշոր կերպարանքների հյուծված ստվերներն են, որոնք մարմնավորվել են քանդակներում ու որմնանկարներում Հնդկաստանի մի ծայրից մինչև մյուսը, որպեսզի խառնված ռասաների հերոսական առասպելներն ընդմիշտ միահյուսված մնան հայրենակիցների սրտերում: Այս լայնածիր քարակոփ անուրջների, ակնեղենով պատված և մարդու սերմնահեղուկով շաղախված բարձիթողի, փլվող շինությունների թեկուզ մի մասնիկը տեսնելիս ես շանթահարվում եմ երևակայության թռիչքների շլացնող փայլից, որը տարբեր ծագման տեր կես միլիարդ մարդկանց հնարավորություն է տվել իրենց տենչերի ամենափութանցիկ դրսևորումներն արտացոլել:

Զգացմունքների մի տարօրինակ, անբացատրելի խառնուրդ է համակում ինձ, քանի դեռ Նանանտատին բլբլացնում է ծննդաբերելիս մեռած իր քրոջ մասին: Ահա նա պատին, տասներկու-տասներեք տարեկան վտիտ, երկչոտ էակ՝ մի ցնդած քոփակի ձեռքը բռնած: Տասը տարեկանում նրան ամուսնացրել են էս քավթառ անառակի հետ, որն արդեն հինգ կին էր թաղել: Յոթ երեխաներից միայն մեկն է մորից երկար ապրել: Նրան տվել են էս ալևոր գորիլային, որ մարգարիտն ընտանիքում մնա: Կյանքից հեռանալիս, Նանանտատիի խոսքերով, քույրը շշնջացել է բժշկին. «Բեզարել եմ. հա տո՛ւր, հա տո՛ւր... Էլ տալու սիրտ չունեմ, բժիշկ»: Սա պատմելիս Նանանտատին իր խեղված ձեռքով գլուխն է քորում մտախոհ: «Հուպտվոցու գործը լավ չի, Էնդրի,- վրա է բերում նա:- Բայց մի բառ ասեմ, որը քեզ բախտավոր կդարձնի: Ամեն օր պիտի կրկնես,

թվայնացրել է 1915.info կայքը

նորից ու նորից, միլիոն անգամ պիտի կրկնես: Աշխարհի ամենալավ բառն է, Էնդրի... Այ, ասա... ՈՒՄԱՀԱՐՈՒՄՈ՛ՒՄԱ»

– ՈՒՄԱՐԱԲՈՒ...

– Չէ, Էնդրի... էապես. ՈՒՄԱՀԱՐՈՒՄՈ՛ՒՄԱ:

– ՈՒՄԱՄԱԲՈՒՄԲԱ...

– Չէ, Էնդրի, էապես...

Դժգույն լույս, ապաշնորհ տպագրություն, քրքրված կազմ, ճմռթված էջեր, անճարակ մատներ, ֆոքստրոտ պարող լվեր, ծույլ ոջիլներ, բերանի փրփուր, աչքերի կաթոց, կոկորդի կարկամ, բաժակը լցրած ինչ-որ խմելիք, ափերի քոր, հեծեծուն հևք, տրտում շունչ, նյարդային հյուծման մուժ, խղճի ջղակծկումներ, ցասման բարձրակետ, քամակի զեղում, կոկորդի այրոց, պոչի խուտուտ, ձեղնահարկի առնետներ, ականջների շաչ ու շառաչ. այ թե ինչ գնով էր նա մի ամբողջ ամիս պեղումներ արել՝ նպատակին հասնելու համար, մինչդեռ շաբաթական մի բառից ավելին դժվար էր մտապահում:

Երևի ես երբեք էլ Նաննանտատիի ճանկերից չազատվեի, եթե ճակատագիրը չմիջամտեր: Մի երեկո բախտս բերեց: Քեպին ինձ խնդրեց, որ իր հաճախորդներից մեկին ուղեկցեմ մոտակա պոռնկատուն: Տղան նոր էր եկել Հնդկաստանից, կարգին փող չուներ: Գանդիի հետևորդներից էր, դեպի ծովն ուղղված պատմական «աղի արշավի» մասնակիցներից: Պիտի ասեմ, որ Գանդիի շատ զվարթ հետևորդ էր, չնայած իր ժուժկալության ուխտին: Երևում էր՝ վաղուց կնոջ երես չի տեսել: Հազիվ էի զսպում Լաֆըմեր փողոց հասնելու ճանապարհին. շան պես հոտվտում էր՝ լեզուն դուրս գցած: Ինքն էլ մի փքված, ինքնահավան սատանի ճուտ էր: Ջուգվել-զարդարվել էր. վելվետե կոստյումով էր, բերետով, գավազանով, «Վինձոր» փողկապով, երկու ինքնահոս էր վերցրել, «Կոդակ» և առանձնահատուկ ներքնաշոր հագել: Ծախսի փողը Բոմբեյի վաճառականներն էին տվել և նրան ուղարկել Անգլիա՝ Գանդիի ուսմունքը տարածելու:

Միսս Համիլթոնի հաստատություն մտնելուն պես նա սկսեց ինքնավստահությունը կորցնել: Երբ հայտնվեց մի խումբ մերկ

թվայնացրել է 1915.info կայքը

կանանցով շրջապատված, սարսափահար ինձ նայեց: «Մեկին ջոկիր,- ասացի:- Քո ընտրությամբ»: Բայց էնպես էր գլուխը կորցրել, որ ի վիճակի էլ չէր նրանց կողմը նայել: «Իմ տեղը դո՛ւք ջոկեք»,- մրմնջաց՝ կաս-կարմիր կտրած: Ես հանգիստ աչք ածեցի ու մի թմբլիկ, լիքը-լիքը աղջիկ ընտրեցի: Նստեցինք հյուրասրահում, խմիչքի էինք սպասում: Տիրուհին հետաքրքրվեց, թե ինչու ես էլ մեկնումեկին չընտրեցի: «Հա, դուք էլ վերցրեք,- ասաց երիտասարդ հնդիկը:- Ես չեմ ուզում մենակ մնալ»: Աղջիկները նորից հավաքվեցին, ինձ համար էլ ընտրեցի. բավական բարձրահասակ, նիհար, մելամաղձոտ աչքերով մեկին: Հյուրասրահում մնացինք չորսով: Քիչ անց էս ջահել Գանդին թեքվեց դեպի ինձ ու ականջիս բան շշնջաց: «Լավ, եթե ավելի շատ է դուր գալիս, քե՛զ լինի»,- ասացի և անհարմարության զգացումով ու նկատելիորեն շփոթված՝ աղջիկներին բացատրեցի, թե կուզեինք փոխանակում անել: Էն գլխից էլ պարզ էր, որ դա սիրուն բան չէր, բայց ջահել բարեկամս արդեն զվարթ շվայտանքի գիրկն էր ընկել, և մնում էր սանդուղքով շուտափույթ բարձրանալ ու գործն ավարտին հասցնել:

Մենք դռնով միացող կից սենյակներ վերցրինք: Իմ կարծիքով՝ ընկերակիցս մտքին դրել էր իր սուր, տանջալի քաղցը բավարարելուց հետո նորից փոխանակում անել: Ինչևէ, հենց որ աղջիկները գնացին նախապատրաստվելու, դռան թակոց լսեցի: «Ջուգարանը որտե՞ղ է, կասե՞ք»,- հարցրեց նա: Մտքովս չանցավ, թե ուզածն ուրիշ բան է, խորհուրդ տվեցի բիդեի մեջ անել: Աղջիկները վերադարձան՝ սրբիչները ձեռքներին: Դռան մյուս կողմից հնդիկի խնդմնդոցը ականջիս հասավ:

Արդեն շալվարս էի հագնում, մեկ էլ կողքի սենյակում հանկարծ իրարանցում ընկավ: Աղջիկը թուքումուր է տալիս հնդիկին, խոզ անվանում, կեղտոտ խոզ: Չեմ պատկերացնում, թե ինչ է արել, որ նման շշպռոցի տեղիք է տվել: Մի ոտքս շալվարի մեջ՝ կանգնել, լսում եմ ուշադիր: Հնդիկը փորձում է անգլերեն ինչ-որ բան բացատրել, ձայնն ավելի ու ավելի է բարձրացնում, մինչև որ սկսում է ճչալ:

թվայնացրել է 1915.info կայքը

Դուռը շրխկում է, ու մի րոպեից տիրուհին, բազուկի պես կարմրատակած, ձեռքերը թափահարելով, ներս է ընկնում իմ սենյակ:

– Բա ամոթ չե՞ք անում,– ծղրտում է նա,– էս ո՛ւմ եք բերել ինձ մոտ: Սա հո բարբարոս է... խո՛զ... սա...

Ընկերակիցս կանգնել է նրա թիկունքում, դռան տակ, ծայրահեղ շփոթմունքի արտահայտությունը դեմքին:

– Ի՞նչ ես արել,– հարցնում եմ:

– Ինչ է արե՞լ,– բղավում է տիրուհին:– Ես ձեզ ցույց կտամ... Եկե՛ք:– Եվ, ձեռքս ճանկելով, ինձ քարշ է տալիս կողքի սենյակը:– Խնդրե՛մ: Ա՛յ, խնդրեմ,– գոչում է նա՝ բիդեն մատնացույց անելով:

– Գնանք էստեղից,– ասում է հնդիկը:

– Մի րոպե, էդպես էժան չեք պրծնի:

Տիրուհին, բիդեի մոտ կանգնած, փրփրել, եռ է գալիս: Աղջիկներն էլ են կանգնել՝ սրբիչները ձեռքներին: Հինգս էլ, կանգնած, բիդեին ենք նայում: Իսկ էնտեղ երկու մեծ կլունձ են լողում: Տիրուհին կռանում է և բիդեն սրբիչով ծածկում:

– Զարհուրելի է, զարհուրելի՛,– աղաղակում է նա:– Ո՞վ է տեսել: Խո՛զ է: Կեղտոտ խո՛զ:

Հնդիկը կշտամբանքով նայում է ինձ:

– Պիտի ասեի՛ք ինձ,– վրա է բերում:– Չգիտեի, որ ջուրը չի տանի: Ախր հարցրի ձեզ, ասեցիք՝ սրանից օգտվեմ:– Նա համարյա արտասվում է:

Վերջապես, տիրուհին ինձ մի կողմ է տանում: Փոքր-ինչ հանգստացել է արդեն: Ի վերջո, սխալմունք է: Գուցե պարոնայք իջևեն և աղջիկների համար էլի՞ խմիչք պատվիրեն: Խեղճերը ցնցված են: Սովոր չեն նման բաների: Եվ ինչ լավ կլիներ, եթե պարոնայք սիրալիր լինեին, սպասուհուն էլ չմոռանային... Դե, էսպիսի անախորժությունը, տգեղ անախորժությունը բավական տհաճ կլինի սպասուհու համար: Նա ուսերն է թոթվում և աչքով անում: Ցավալի միջադեպ է: Բայց՝ պատահմունք: Եթե պարոնայք մի քանի րոպե համբերեն, սպասուհին խմիչք կբերի: Գուցե շամպա՞յն ցանկանան պարոնայք: Այո՞:

– Ես կուզենայի գնալ,– ասում է հնդիկը թույլ ձայնով:

– Էդպես մի նեղվեք,– ափոփում է տիրուհին:– Բան էր՝ պատահեց: Սխալմունք էլ է երբեմն լինում: Մյուս անգամ զուգարանի տեղը կհարցնեք:

Նա տարածվում է զուգարանի թեմայով. ամեն հարկում, պարզվում է, զուգարան կա: Լողասենյակ էլ:

– Ես շատ անգլիացի հաճախորդ ունեմ,– վրա է տալիս նա:– Բոլորն էլ ջենթլմեններ են: Պարոնը հնդի՞կ է: Համայիչ մարդիկ են հնդիկները: Շատ խելացի: Բարետես:

Երբ դուրս ենք գալիս փողոց, համայիչ երիտասարդ ջենթլմենը համարյա լալիս է: Արդեն ափսոսում է, որ վեղվետե կոստյում է առել, գավազան և երկու ինքնահոս գրիչ: Խոսում է իր արած ութ ուխտի, պասի և այլնի մասին: Դանդի ընթացող երթի ժամանակ նույնիսկ պաղպաղակ ուտելն էր արգելված: Նա պատմում է ճախարակի մասին. թե ինչպես է Գանդիի հետևորդների խումբն ընդօրինակել մանող ուսուցչի ջերմեռանդությունը: Հպարտորեն պատմում է, թե ինչպես է քայլել ուսուցչի կողքից և զրուցել նրա հետ: Ինձ թվում է՝ տասներկու առաքյալներից մեկին եմ հանդիպել:

Հետագա մի քանի օրերին շուտ-շուտ ենք տեսնվում. հարցազրույցների համար պետք է պայմանավորվել լրագրողների հետ և դասախոսություններ կարդալ Փարիզի հնդիկներին: Զարմանում ես, թե էս անողնաշար շները ոնց են հրամաններ տալիս մեկմեկու, զարմանում ես նաև, թե ինչ անօգնական են, երբ բանը վերաբերում է գործնական հաշիվներին: Բա նախանձը, խարդավանքները, գծուծ, ստոր մրցակցությունը... Որտեղ տասը հնդիկ հավաքվեն, էնտեղ ամբողջ Հնդկաստանն է՝ իր աղանդներով ու պառակտվածությամբ, իր ցեղային, լեզվական, կրոնական, քաղաքական հակամարտություններով: Գանդիի շնորհիվ նրանց բաժին է ընկել միաբանության կարճատև հրաշք, բայց երբ նա չլինի, ամեն ինչ հիմնահատակ կխորտակվի, նորից երկպառակություններն ու քաոսը կիշխեն, որ շատ բնորոշ են հնդիկներին:

Ջահել հնդիկը, իհարկե, լավատես է: Եղել է Ամերիկայում ու վարակվել ամերիկացիների էժանագին իդեալիզմով, վարակվել

թվայնացրել է 1915.info կայքը

համատարած լոգարաններով, հինգ և տասը սենթանոց խանութների հնոտիքով, վազվզուքով, արտադրողականությամբ, սարքավորումներով, բարձր աշխատավարձերով, անվճար գրադարաններով և այլն, և այլն: Նրա իդեալը Հնդկաստանի ամերիկանացումն է: Գանդիի նահապետական բաղձանքը բնավ չի գոհացնում նրան: «Առա՛ջ»,– ասում է նա Երիտասարդների քրիստոնեական միության անդամի նման: Ամերիկայի մասին նրա պատմածները լսելիս տեսնում եմ, թե ինչ անհեթեթ է Գանդիից հրաշք սպասելը, որը լիովին կշրջի պատմության անիվը: Հնդկաստանի թշնամին ոչ թե Անգլիան է, այլ Ամերիկան: Հնդկաստանի թշնամին ժամանակի ոգին է, էն ձեռքը, որն անհնար է հետ քաշել: Ոչինչ էլ չի փրկի արար աշխարհը թունավորող էս վիրուսից: Ամերիկան կործանման մարմնացումն է, որ կա: Նա ամբողջ աշխարհն անհատակ խորխորատը կտանի:

Հնդիկի կարծիքով՝ ամերիկացիները շատ դյուրահավատ ժողովուրդ են: Նա ինձ պատմում է իրեն օգնած միամիտ հոգիների՝ քվակերների, ունիտարյանների, թեոսոֆների, «Նոր մտքի» կողմնակիցների, Յոթերորդ օրվա ադվենտիստների և այլոց մասին: Էս աչքաբաց տղան գիտեր, թե իր նավն ուր ուղղեր: Գիտեր, թե ճիշտ պահին ոնց աչքերը թրջեր, ոնց հանգանակություն աներ, քահանայի կնոջը հմայեր, միաժամանակ մոր ու դստեր հետ կենակցեր: Նրան նայելիս մտածում էիր՝ սուրբ է: Հենց սուրբ էլ կար՝ ժամանակակից իմաստով. եղծված սուրբ, որ մի շնչով խոսում է սիրո, եղբայրության, լոգարանների, ջրմուղ-կոյուղու, արդյունավետության և այլնի մասին:

Նրա վերջին փարիզյան երեկոն հատկացված է «հուպտվոցու գործին»: Օրվա լիակատար ծրագիր ուներ. համաժողովներ, հեռագրեր, հարցազրույցներ, լուսանկարներ թերթերի համար, խանդաղատալի հրաժեշտներ, խորհուրդներ ուղղադավաններին և այլն, և այլն: Ճաշի ժամանակ որոշում է հոգսերը մի կողմ թողնել: Շամպայն է պատվիրում, մատները ճտտացնելով՝ կանչում մատուցողին ու, առհասարակ, իրեն պահում բոի գյուղացու նման, ինչպես և կա: Քանի որ արդեն կշտացել է կարգին տեղերից, ինձ առաջարկում է իրեն ավելի պարզունակ բան ցույց տալ: Ուզում է մի էժան տեղ

գնալ ու միանգամից երկու-երեք աղջիկ վերցնել: Տանում եմ Շապել բուլվար՝ զգուշացնելով շարունակ, որ դրամապանակը պինդ պահի: Օբերվիլյեի մոտերքում սկում ենք մի էժանանոց որջ ու տեղնուտեղը հայտնվում կանանց երամի մեջ: Մի քանի րոպե անց ուղեկիցս արդեն պար է գալիս տկլոր աղջկա՝ դնչատակին ծալքեր ունեցող մի հաստամարմին շիկահերի հետ: Սրահի տասնյակ հայելիներում սրա քամակի արտացոլքն եմ տեսնում ու հնդիկի պինդ կառչած թուխ, ոսկրոտ մատները: Սեղանը լիքն է գարեջրի բաժակներով, մեխանիկական դաշնամուրը խզզում է ու հևում: Չզբաղված աղջիկները, կաշվե նստատեղերին անխռով շարված, շիմպանզեների ընտանիքի պես հանգիստ քորվում են: Օդում մի տեսակ սանձահար խռովք կա, զսպված մոլեգնության նշան, ասես սպասվող պոռթկմանը վերջին պահին ինչ-որ մանրուք է հարկավոր, մի չնչին, բայց բնավ չնախատեսված, միանգամայն անակնկալ բան: Նման կիսացնորական վիճակում, երբ և՛ ներկա ես, անցուդարձին մասնակից, և՛ լիովին հեռու-հեռվում, պակասող մանրուքն սկսում է աղոտ, բայց համառորեն ուրվագծվել՝ զարմանահնար, բյուրեղակերպ ձև առնելով, ինչպես սառցե նախշերն են գոյանում պատուհանին: Եվ այդ սառցազարդերի նման, որ թվում են արտասովոր, միանգամայն կամայական ու ֆանտաստիկ իրենց գծագրությամբ, միևդեռ պատճառաբանված են հաստատուն օրենքներով, իմ ներսում առաջացող զգացումները ևս կարծես ենթակա էին անխափան օրենքների: Ամբողջ էությունս արձագանքում էր շրջապատի թելադրանքին՝ տրվելով նախկինում չճաշակած զգացողությանը: Այն, ինչ կարող եմ իմ «ես»-ը կոչել, ասես սեղմվեր, խտանար, կծկվելով քաշվեր մարմնի հին, սովորական սահմաններից, որի շրջագիծը որոշվում է միայն նյարդային վերջույթների թրթիռներով:

Եվ ինչքան թանձրանում, կարծրանում էր իմ ուղնուծուծը, նույնքան էլ փխրուն ու արտառոց էր թվում մոտ, շոշափելի իրականությունը, որից ինձ դուրս էին մղում: Որչափ ես ավելի ու ավելի էի պնդվում-փոքրանում, այնչափ շրջակա աշխարհն ավելի էր ուռչում: Լարվածությունն արդեն էնքան մեծ էր, որ մեն մի կողմնակի

թվայնացրել է 1915.info կայքը

մաննիկ, թեկուզ մի չնչին հյուլե, ինչպես նշեցի, ամեն բան փշուր-փշուր կաներ: Մի պահ ես թերևս բացարձակ հստակության զգացում ունեցա, ինչպես, ասում են, ընկնավորն է ունենում: Այդ պահին ամբողջովին կորցրի ժամանակի և տեղի պատկերացումը. աշխարհն իր դրաման ծավալել էր մի միջօրեականի վրա, որն առանցքից զուրկ էր: Այս անհավասարակշիռ հավիտենության մեջ ես զգացի, որ ամեն ինչ արդարացված է, գլխովին արդարացված: Զգացի ներսիս ոգորումները, որ շփոթ ու ավեր էին թողել, զգացի էստեղ եռացող ոճիրները, որ վաղը հրապարակվելու էին ճչացող վերնագրերով, զգացի սանդի մեջ թակիչով ծեծվող տառապանքը, երկար, բութ տառապանքը, որ ծորում է, կաթում կեղտոտ թաշկինակների մեջ: Ժամանակի միջօրեականի վրա անարդարություն չկա. շարժման պոեզիան է միայն, որը ճշմարտության և դրամայի պատրանք է ստեղծում: Եթե որևէ տեղ մի պահ հանդիպում ես բացարձակին, մեծ կարեկցանքը, որ մարդկանց դարձնում է ասես Գաուտամայի կամ Հիսուսի նման աստվածային, պաղում է, մարում: Զարմանալի չէ, որ մարդիկ վարդեր են աճեցրել էս գոմաղբից, զարմանալին այն է, որ նրանք, ինչ-որ պատճառով, վարդերի կարիք են ունեցել: Ինչ-որ պատճառով էլ մարդ հրաշք է փնտրում և դրան հասնելու համար ընդունակ է արյան մեջ մխրճվել: Նա անձնատուր է լինում գաղափարներին, պատրաստ է հալվել, ստվեր դառնալ, միայն թե իրականության նողկանքը գեթ մի ակնթարթ աչքից հեռանա: Ամեն ինչին դիմանում է՝ անարգանքին, ստորացմանը, աղքատությանը, պատերազմին, ոճրագործությանը, տաղտուկին, հույս ունենալով, թե հանկարծ ինչ-որ բան կկատարվի, հրաշք, որը կյանքը տանելի կդարձնի: Եվ մարդու ներսում շարունակ հաշվիչ է աշխատում, ու ոչ մի ձեռք չի կարող, ներթափանցելով, հաշվիչն անջատել: Մեկը շարունակ կյանքի հացն է ուտում և գինին խմում, մի մնջոտ, տոզած խավարասերի պես տերտեր, որ լափլփում է՝ նկուղում պահ մտած, մինչ վերևում՝ ցերեկվա լույսի տակ, խաբուսիկ աշխարն է հպվում շուրթերին, և արյունը տմույն է ջրի պես: Անապի տանջանքից ու տառապանքից հրաշք չի ծնվում, ոչ էլ նույնիսկ՝ սփոփանքի թեթևակի նշույլ:

Միայն գաղափարներ՝ դալուկ, հյուծված գաղափարներ. որ պետք է բտվեն մորթից առաջ, մաղձի նման երևան եկող գաղափարներ, որոնք դուրս են թափվում, ինչպես փորը պատռած խոզի աղիքները:

Եվ ես մտածում եմ, թե ինչ հրաշք կլիներ, եթե պարզվեր, որ հավիտենորեն մարդու հետամտած հրաշքը այլ բան չէ, քան բիդեում հավատարիմ աշակերտի ցկնած երկու մեծ կլունձը: Իսկ ի՞նչ, եթե վերջին պահին, երբ խնջույքի սեղանը գցած է, և ծնծղաներն են թնդում, հանկարծ հայտնվեր, առանց որևէ նախազգուշացման, մի արծաթե ափսե, և կույրն էլ զգար, որ դրա վրա, ոչ ավել, ոչ պակաս, քաքի երկու մեծ կլունձ է: Իմ կարծիքով՝ սա ավելի հրաշալի կլիներ, քան մարդու ակնկալած ամեն բան, հրաշալի, քանի որ ոչ ոք երազած չէր լինի: Ամենախելահեղ երազանքից էլ հրաշալի կլիներ, որովհետև թեկուզև մեկնումեկը դա պատկերացներ, ոչ ոքի երբեք վիճակված չէր լինի և հազիվ թե երբևէ վիճակվեր:

Ինչևէ, էն միտքը, որ ապավինելու ոչինչ չկա, բարերար ազդեցություն գործեց ինձ վրա: Շաբաթներ ու ամիսներ շարունակ, տարիներով, փաստորեն ամբողջ կյանքում ես սպասել եմ, թե ինչ-որ բան կկատարվի, մի արտաքին իրադարձություն, որը կվերափոխի կյանքս, և հիմա, հանկարծ, ամեն ինչի կատարյալ անհուսալիության մտքից ներշնչված, թեթևացում զգացի, կարծես ուսերիցս մի ծանր բեռ ընկներ: Լուսաբացին հրաժեշտ տվեցի երիտասարդ հնդիկին՝ նախօրոք մի քանի ֆրանկ պոկելով, որ հերիք կաներ սենյակի համար վճարելուն: Մոնպառնասի կողմը քայլելով՝ որոշեցի հանձնվել կյանքի ընթացքին՝ առանց ճակատագրին դիմադրելու նվազագույն փորձի, ինչ կերպարանքով էլ որ նա ներկայանար: Անցած-դարձածը մինչև օրս բավական չէր եղել ինձ խորտակելու համար, միայն պատրանքներս էին խորտակվել: Իսկ ես անվնաս էի: Աշխարհն էլ էր անվնաս: Վաղը կարող է հեղափոխություն լինել, ժանտախտ, երկրաշարժ, վաղը գուցեև ոչ մի շունչ չմնա, որից կարեկցանք, օգնություն, հավատ աղերսես: Ինձ թվում է, թե մեծ արհավիրքն արդեն կատարվել է, թե, իրոք, սրանից մենակ չէի էլ կարող լինել: Մտքիս դնում եմ ոչնչի հետ հույս չկապել,

թվայնացրել է 1915.info կայքը

ոչինչ չակնկալել, այսուհետ ապրել կենդանու, գիշատիչ գազանի, շրջմոլիկի, ավարառուի պես:

Եթե նույնիսկ վաղը պատերազմ հայտարարվի, և ինձ զորակոչեն, կճանկեմ սվինն ու կխրեմ մեկի փորը, մինչև վերջ կխրեմ: Եթե հարկ լինի բռնաբարել, կբռնաբարեմ, ու ոնց որ պետքն է: Թեկուզ հենց հիմա՝ նոր օրվա խաղաղ արշալույսին, երկիրը համակված չէ՞ ոճիրներով ու դառնությամբ: Մարդու բնույթի գոնե մի մասնիկ փոխվե՞լ է, էապես, հիմնովին փոխվել պատմության անընդմեջ հոլովույթում: Ինչ որ նրա բնույթի լավագույն մասն է կոչվում, դավել է մարդուն. եղած-չեղածը դա է: Հոգևոր էության ծայրամասերում մարդն էլի մերկ է վայրենու նման: Անգամ, այսպես կոչված, Աստծուն էլ գտնի, նա մնում է մերկ. կմախք է: Պետք է նորից կյանք մտնել մարմին առնելու համար: Բանը պետք է մարմին դառնա, անձը ծարավ է՝: Ինչ փշրանք էլ աչքս տեսնի, վրա կտամ, կուտեմ: Եթե ամենակարևորը ապրելն է, ուրեմն կապրեմ, թող որ ստիպված մարդակեր դառնամ: Մինչև հիմա փորձել եմ թանկագին կաշիս փրկել, ոսկորներիս վրա մնացած մսի կտորները պահպանել: Սրանից հետո՝ վերջ: Համբերությանս բաժակը լցվել է: Մեջքս սեղմված է պատին, էլ նահանջելու տեղ չունեմ: Պատմականորեն մեռած եմ: Եթե ինչ-որ բան կա հանդերձյալ կյանքում, ես հետ կոստնեմ: Գտել եմ Աստծուն, բայց նա անզոր է: Ես միայն հոգեպես եմ մեռած: Ֆիզիկապես ողջ եմ: Բարոյապես էլ՝ ազատ: Աշխարհը, որից հեռանում եմ, գազանանոց է: Լույսը բացվում է նոր աշխարհի՝ ջունգլիի վրա, որտեղ սրամագիլ լղար ուրուներն են շրջում: Եթե ես բորենի եմ, ուրեմն լղար եմ ու սովահար. ճամփա եմ ընկնում փորս կշտացնելու:

8

Մեկն անց կեսին անցնում եմ Վան Նորդենի մոտ, մեր պայմանավորվածի պես: Նա զգուշացրել է ինձ, որ եթե պատասխան չտա, կնշանակի քնած է մեկնումեկի՝ երևի թե իր «ջորջիացի բոզի» հետ:

[1] Սաղմոս 42:2

Ինչ որ է, ծածկոցով մի լավ փաթաթված՝ պառկել է, բայց, սովորականի նման, հոգնածության արտահայտությունը դեմքին: Նա հայհոյանքով է արթնանում. իրեն է հայհոյում, աշխատանքը, կյանքը: Զանձրացած ու անտրամադիր է աչքերը բացում, տխուր, որ շունչը չի փչել գիշերը:

Նստում եմ լուսամուտի մոտ ու կարեցածիս չափ նրան սիրտ տալիս: Հոգեմաշ գործ է: Պիտի հորդորելով՝ նրան հանես անկողնուց: Առավոտյան,– իսկ նրա համար մեկից մինչև իրիկվա հինգը առավոտ է,– հա, ուրեմն, առավոտյան անրջանքի գիրկն է ընկնում: Մեծ մասամբ անցյալն է մտաբերում: Իր «բոզերին»: Աշխատում է հիշել, թե ինչ էին զգում, ինչ էին ասում որոշ կարևոր պահերի, որտեղ էր նրանց տակը դնում և այլն: Էդպես պառկած, քմծիծաղ տալով ու հայհոյելով, մատներն է շարժում մի տեսակ, իրեն հատուկ արտնեղած ձևով, կարծես ցույց տա, թե իր զզվանքը շատ մեծ է, որպեսզի բառերով արտահայտի: Մահճակալի վերևը սրսկիչով պայուսակ է կախած՝ ի պետս արտակարգ դեպքերի, այսինքն՝ կույսերի համար, որոնց հետևում, գտնում է խուզարկու շան պես: Էս դիցական էակների հետ քնելուց հետո անգամ նրանց էլի կույս է կոչում ու համարյա երբեք անունները չի տալիս: «Կույսս»,– կասի, ճիշտ ոնց որ ասում է՝ «ջորջիացի բոզս»: Ջուգարան գնալիս վրա է բերում. «Եթե ջորջիացի բոզս հանկարծ զանգի, ասա՝ թող սպասի: Ասա՝ ես եմ էդպես ասել: Լսիր, եթե ուզում ես, դրան քե՛զ վերցրու, էլի: Արդեն կշտացել եմ»:

Խեթ հայացք է գցում լուսամուտից դուրս ու խոր հոգոց հանում: Եթե անձրև է գալիս, ասում է. «Քունած եղանակ է, սրա հերն անիծեմ. մարդ հիվանդանում է»: Եթե արևն է վառ շողում, ասում է. «Քունած արև է, սրա հերն անիծեմ, մարդ կուրանում է»: Սափրվելիս հանկարծ միտքն է գալիս, որ մաքուր սրբիչ չկա. «Քունած հյուրանոց է, սրա հերն անիծեմ. ժլատ սատկում են, ամեն օր սրբի՞չ կփոխեն»: Ինչ էլ որ անի, ուր էլ որ գնա, ոչ մի բան տեղը չի: Էս «քունած երկիրը» լինի, «քունած աշխատանքը», թե ինչ-որ «քունած բոզ», քայքայել են կյանքը:

թվայնացրել է 1915.info կայքը

«Ատամներս լրիվ փտել են,– ասում է նա՝ կոկորդն ողողելով:– Սրանց քունած հացից է»: Բերանը լայն բացում է ու ներքևի շրթունքը ցած քաշում. «Տես, երեկ վեց ատամ են հանել: Մնում է ներքևն էլ պրոթեզ դնեմ: Այ թե ինչ օրն ես ընկնում հացդ վաստակելիս: Էն որ քամակս բաց ման էի գալիս, բոլոր ատամներս կային, աչքերս էլ պարզ ու հստակ տեսնում էին: Իսկ հիմա՞: Մի ի՛նձ նայիր: Էս հո հրաշք է, որ շինելու գործով դեռ կամ: Է՛հ, ուր էր, թե մի հարուստ պուց ճարեի, էն տափուկ շան՝ Կարլի պես: Քեզ ցո՞ւյց է տվել էդ կնկա նամակները: Չգիտե՞ս՝ ով է, ինչացու է: Ինձ անունը չի ասում բիճը... Վախենում է սիրածին չանթեմ»: Վան Նորդենը նորից է կոկորդն ողողում, իսկ հետո երկար զննում բացված խոռոչները: «Դու բախտավոր ես,– ավելացնում է տխուր-տրտում:– Գոնե ընկերներ ունես: Իսկ ես ոչ ոք չունեմ. էն տափուկ շունն է, նա էլ գժվեցրել է արդեն՝ էդ հարուստ լրբի մասին պատմելով:

Լսիր,– ասում է,– Նորմա անունով մի բոզը կա, գիտե՞ս: Ամբողջ օրը պտտվում է «Դոմ» սրճարանի շուրջը: Աչքիս՝ անկապի մեկն է: Երեկ բերեցի մոտս, քամակը մաժմժեցի: Չթողեց բան անեմ: Գցեցի անկողնու վրա... վարտիքն էլ հանեցի... բայց հետո զզվանքս եկավ: Տեր Աստված, հերիք է՝ ինչքան ջանք թափեցի, էլ ի վիճակի չեմ: Չարչարանքը չարժի: Մտքներին կա, թե չկա՝ հիմարություն է դրանց չեմուչումը կոտրելու վրա ժամանակ վատնել: Դու էդ քաճի նազն ես քաշում, այնինչ մի տասը էգ, բացօթյա սրճարանում թառած, հոգի են տալիս, որ մեկի տակը մտնեն: Ճիշտ եմ ասում: Հենց տակդ մտնելու համար էլ գալիս են մոտդ: Մտածում են՝ լրբանոց է էստեղ... *Խղճո՛ւկ անուղեղներ...* Մեր Արևմուտքից եկած ուսուցչուհիներ կան, իրոք օրիորդ են... Բան եմ ասում: Էդ կույսերի ուշքն ու միտքը գիշեր-ցերեկ դա է: Շատ չարչարվելու կարիք չկա: Սատկում են դրա համար: Էս քանի օրը մի մարդատեր էի բերել, ասում էր՝ կես տարի հագցնող չի եղել: Պատկերացրու, է՛: Տերը մեռածը կրա՞կ էր կտրել: Ես ասի՝ կլիրս տեղից կպոկի: Անընդհատ էլ թառանչում էր. *«Իսկ դո՛ւ: Իսկ դո՛ւ»:* Ցնորվածի պես հա նույնն էր կրկնում: Ու գիտե՞ս շան կնկա ուզածն ինչ էր: Որ տեղափոխվի ինձ մոտ: Դե պատկերաց-

րու: Հարցնում էր՝ սիրո՞ւմ եմ իրեն: Իսկ ես անունն էլ չգիտեի: Դե, անունները երբեք չեմ հարցնում... ինչի՞ս է: Մարդատերե՛րը... Տեր Աստված, եթե տեսնեիր էդ մարդատեր լրբերին, որ բերում եմ էստեղ, էլ ոչ մի պատրանք չէիր ունենա: Դրանք կույսերից վերան են, էդ մարդատերերը: Էլ չեն սպասում, որ գործի անցնես, է՛, քո տեղն իրենք են հանում անտերդ: Հետո էլ սիրուց են խոսում: Զզվելի է: Ասեմ քեզ, սկսել եմ պցերին ատե՛լ»:

Նա նորից է նայում լուսամուտից դուրս: Անձրև է մաղում: Վեց օր է՝ մաղում է:

– Գնա՞նք «Դոմ», Ջո,– ես նրան Ջո եմ ասում, որովհետև ինքն էլ ինձ է ասում: Եթե Կարլը մեզ հետ է, նա էլ է Ջո: Բոլորս Ջո ենք. էդպես ավելի հեշտ է: Բացի դրանից, հաճելի հիշեցում է, որ ինքդ քեզ շատ լուրջ չընդունես: Ինչևէ, Ջոն չի ուզում «Դոմ» գալ. էնտեղ շատ փող է պարտք: Ուզում է «Կուպոլ» գնանք: Իսկ դրանից առաջ միտք ունի մի քիչ քայլել:

– Ախր անձրև է, Ջո:

– Գիտեմ, բայց թքած: Ես պիտի ման գամ: Որ ներսիս կեղտը մաքրվի, գնա:

Էս խոսքերի վրա ինձ թվում է, թե ամբողջ աշխարհը շուլալվել է նրա աղիքներում ու նեխում է:

Հագնվելիս Վան Նորդենն էլի կիսաթմբիրի գիրկն է ընկնում: Մի ձեռքը վերարկուի թևքի մեջ, գլխարկը թեք դրած՝ սկսում է բարձրաձայն երազել Ռիվիերայի, արևի, պարապ-սարապ կյանք անելու մասին: «Իմ ուզածը կյանքից,– ասում է նա,– ընդամենը սա է. մի կապոց գիրք, մի կապոց երազանք, մի կապոց էլ պուց:– Մտախոհ մրմնջալով՝ նա ինձ է նայում ամենամեղմ, ամենադավադիր ժպիտով:– Հավանո՞ւմ ես ժպիտս,– հարցնում է, իսկ հետո նողկանքով վրա բերում.– Է՛հ, ուր էր, թե մի հարուստ պուց ճարեի, էապես ժպտայի:

Հիմա մենակ հարուստ պուցը ինձ կփրկի,– ավելացնում է նա ծայրահեղորեն հոգնած տեսքով:– Բեզարում ես՝ անընդհատ նոր պցի հետևից ընկած: Մեքենայական բան է դառնում: Ախր ցավն էն է, որ ես ընդունակ չեմ սիրահարվել: Շատ եսասեր եմ: Կնանիք ինձ

թվայնացրել է 1915.info կայքը

օգնում են միայն երազել, ուրիշ ոչինչ: Սա արատ է՝ հարբեցողության կամ ափիոնի պես: Ամեն օր նոր կնիկ է պետք, թե չէ ընկճվում եմ: Մտքերի գիրկն եմ ընկնում: Մեկ-մեկ ինքս ինձ վրա զարմանում եմ, թե ինչ շուտ եմ բանը գլուխ բերում, ու դա ինչքան քիչ նշանակություն ունի: Մեքենայաբար եմ անում: Ժամանակ կա՝ չեմ էլ մտածում կնոջ մասին, բայց վայն էն է՝ նկատեցի, որ մեկը նայում է ինձ, պրծավ, ամեն ինչ սկսվում է նորից: Մինչև գլխի կընկնեմ, թե ինչ եմ անում, նրան արդեն բերած եմ լինում տուն: Չեմ հիշում անգամ, թե ինչ եմ ասում: Վերև եմ բերում՝ մոտս, քամակին թփթփացնում ու, դեռ գլուխ չհանած, թե ինչն ինչից է, ամեն բան վերջանում է, գնում: Ոնց որ երազում... Հասկանո՞ւմ ես ինձ»:

Նա ֆրանսուհիների հետ աչքով աչք չունի: Չի հանդուրժում: «Կամ փող են ուզում, կամ՝ ամուսնանալ: Էությամբ բոլորն էլ պոռնիկ են: Ավելի լավ է կույսի հետ կռիվ տամ,– ասում է:– Նրանք գոնե մի փոքր պատրանք են ներշնչում: Ինչքան չլինի, դիմադրում են»: Բայց մեկ է, բացօթյա սրճարանին հայացք գցելիս ոչ մի պոռնիկ աչքներիս չի ընկնում, որի հետ նա գործ չի տեսել ժամանակին: Բարի մոտ կանգնած՝ դրանց, մեկ առ մեկ, մատնացույց է անում ինձ, անատոմիան նկարագրում, լավ ու վատ կողմերը բնութագրում: «Բոլորն էլ սառած բաներ են»,– ասում է: Ու մեկ էլ սկսում է ձեռքերով ինչ-ինչ բարեմասնություններ գծել՝ ուշքը տված սիրուն, հյութալի կույսերին, որ «սատկում են դրա համար»:

Անրջանքի թունդ պահին նա հանկարծ քարանում է և ձեռքս հուզված բռնելով՝ կետանման մի հսկա կնոջ ցույց տալիս, որը տեղավորվում է աթոռին: «Դանիացի բոզս,– քրթմնջում է նա:– Ոռը տեսա՞ր: *Դանիական* եմ ասում, է՛: Էդ գործի համար ո՛նց է խելքը գնում... Ուղղակի աղաչանք-պաղատանք է անում: Արի... էս կողմի՛ց տես: Ոռին նայի, ոռի՛ն: Ջմփո բան է: Ասեմ քեզ. որ տակը ես եմ մնում, ձեռքերս հազիվ են հասնում, թե գրկեմ: Ամբողջ աշխարհը փակում է: Կարծես նրա ներսում սող տվող մի պստլիկ ճիճու լինեմ: Չգիտեմ՝ ինչի է սիրտս սրան կպել. երևի ոռի պատճառով: Անկապություն, էլի: Բա ծալքերը, ծալքե՛րը... Սրա պես ոռը մոռանալու

բան չի: Ճիշտ եմ ասում... Լուրջ: Մյուսները համը տանում են կամ շատ-շատ մի պահ պատրանքի գիրկը գցում, իսկ սա՝ իր քամակով, չէ՛. այ, էս մեկը որ հա, մտքիցդ դուրս չի գալիս... Ոնց որ հուշարձանի հետ տեղաշոր մտնես»:

«Դանիացի բոզն» ասես շանթահարել է նրան: Ալարկոտության հետքն էլ չի մնացել: Աչքերը ճակատն են թռել: Եվ իհարկե, խոսքը խոսք է բերում: Նա ուզում է հեռանալ էդ «քունած» հյուրանոցից. աղմուկ է, գլուխը գնացել է: Ուզում է գիրք գրել, որ միտքը մի բանով զբաղվի: Բայց անիծված աշխատանքը խանգարում է: «Հալումաշ է անում էդ քունա՛ծ աշխատանքը: Ես չեմ ուզում Մոնպառնասի մասին գրել... Ուզում եմ իմ կյանքը, մտքերը գրի առնել: Ուզում եմ ներսիս կեղտը դուրս գա... Լսիր, այ, էն մեկին տար: Հետն եղել եմ մի ժամանակ: Կենտրոնական շուկայի մոտերքում էր միշտ: Մազալու քած է: Պառկեց մահճակալի եզրին ու փեշը վեր քաշեց: Փորձած կա՛ս էդպես: Վատ չի, հա: Չէր էլ վռազեցնում: Փովել իր համար, գլխարկի հետ էր խաղում, քանի ես գործի վրա էի դինջ-դինջ: Հենց որ պրծա, ձանձրացածի պես ասեց. «Վե՛րջ»: Կարծես իր համար լրիվ մեկ էր: Դե իհարկե մեկ էր, անտերը, ես էլ լավ գիտեի... բայց էդ անտարբերությունը... մի տեսակ սիրտս մտավ... Գրավիչ էր, գիտե՞ս: Սրբվելիս սկսեց երգել: Հյուրանոցից գնալիս էլ էր երգում: Նույնիսկ չասեց. «Au revoir!»[1]: Դուրս եկավ՝ գլխարկը պտտեցնելով ու քթի տակ մռմռալով: Այ թե պոռնիկը որն է: Լավ էլ տվեց: Ինձ համար ավելի դուրեկան էր, քան թե կույս լիներ: Այլասերված բան է, որ կնկան խրում ես, իսկ նրա փչակին էլ չի: Արյունդ տեղն է գալիս:- Իսկ մի պահ մտածելուց հետո.- Պատկերացրու՝ ինչի նման կլիներ, եթե նա զգացմունքներ ունենար»:

- Լսիր,- ասում է,- վաղը, ճաշից հետո, արի ակումբ գնանք... Պարեր կան:

- Վաղը չեմ կարող, Ջո: Խոստացել եմ Կարլին օգնել...

- Դե՛ նը տար էդ շանը: Մի լավություն արա, էլի: Տես՝ ինչ հաշիվ է:- Նա նորից սկսում է ձեռքերով ինչ-որ բան գծել:- Մի պուց կա հերթի դրած... Խոսք է տվել, որ հանգստյանս օրվա գիշերը մոտս կմնա:

[1] Ցտեսություն (ֆրանս.):

թվայնացրել է 1915.info կայքը

Բայց դեռ վստահ չեմ: Դե, մի մեր ունի... ինչ-որ քաքոտ նկարչուհի. ամեն անգամ, տեսնի թե չէ՝ ականջս կտանի: Ճիշտը որ ասեմ, վայ թե խանդում է: Իմ կարծիքով՝ էլ չի հակառակվի, եթե սկզբից ի՛նքը շինվի: Դե գիտես, էլի... Մի խոսքով, մտածեցի, թե չե՞ս ուզենա մորով էլ դու զբաղվել... Վատը չի... Եթե աղջկան տեսած չլինեի, մորն էլ հաշվի կառնեի: Բայց աղջիկը լավն է ու ջահել, թարմ կոկոն է, դե, հասկանում ես: Մաքրության հոտ է բուրում վրայից:

– Չէ, Ջո, ճիշտ կանես՝ ուրիշին գտնես...

– Է՛, դե լավ, էլի: Քեզնից բան չի գնա: Փոքրիկ լավություն է. արա, ի՞նչ կլինի: Ես չգիտեմ՝ ոնց ազատվեմ էդ պառավ հավից: Մտածեցի՝ խմեցնեմ ու գլխիցս ցանեմ, էն էլ աղջկան հաստատ դուր չի գա: Դե, շատ զգայուն են: Մինեսոտայից են, թե ինչ: Ամեն դեպքում, վաղն արի, գոնե ինձ արթնացրու, հա՞: Թե չէ քնով կընկնեմ: Բացի դրանից, ուզում եմ, որ օգնես սենյակ գտնեմ: Գիտես՝ իմ ձեռքից չի գալիս: Մի սենյակ գտիր հանգիստ փողոցում. մոտերքը լինի: Պիտի էս կողմերում մնամ... Ապառիկ բան-ման եմ վերցնում էստեղ: Դե՞, խոսք տուր ինձ: Ես էլ քեզ ժամանակ առ ժամանակ կկերակրեմ: Ընդհանրապես, արի-գնա, էլի, թե չէ գժվում եմ էս անխելք պցերի հետ լեզու թրջելով: Կուզեի Հալոք Էլիսի մասին խոսեինք: Տեր Աստված, երեք շաբաթ է՝ գիրքը դրած, չեմ էլ բացել: Մարդ փտում է էստեղ: Կհավատա՞ս, ոչ մի անգամ չեմ գնացել Լուվր, ոչ էլ «Կոմեդի Ֆրանսեզ»: Իսկ արժի՞ գնալ: Ի՛նչ կա որ, միգուցե ցրվեմ: Դու ամբողջ օրն ի՞նչ բանի ես: Չե՞ս ձանձրանում: Էգեղենի հարցով գլխիդ ճարը ո՞նց ես տեսնում: Արի, արի... Ո՞ւր ես փախչում: Ես մենակ եմ: Գիտե՞ս, մի տարի էլ էսպես շարունակվի, խելքս հետ կտամ: Ես պիտի դուրս պրծնեմ էս քունած երկրից: Անելիք չունեմ էստեղ: Գիտեմ, հիմա Ամերիկայում էլ է համը դուրս եկել, բայց մեկ է... Էստեղ ձեռից գնում ես: Էն բոլոր քոսոտ քաքլանները, որ օրնիբուն նստած՝ քամակ են մաշում ու պարծենում իրենց աշխատանքով, մի սոխի գլուխ էլ չարժեն: Բոլորը ձախողակ են, դրա համար էլ գալիս են էստեղ: Լսիր, Ջո, բա տան կարոտը չե՞ս քաշում: Մազալու տղա ես... Աչքիս՝ սրտովդ է էստեղ: Ախր ի՞նչ ես գտել: Ասա՝ իմանամ, էլի:

Երանի էլ չմտածեի իմ մասին: Ներսումս ամեն ինչ կապ է ընկել... ոնց որ քարկապ լինի... Լսիր, ես հասկանում եմ, գլուխդ տարա, բայց մեկնումեկի հետ պիտի խոսե՞մ, թե՞ չէ: Էն վերևինների հետ չեմ կարող... դե, գիտես՝ ինչ բոզի տղերք են... բոլորի նյութերը ստորագրովի են: Կարլն էլ եսամոլ շուն է: Մի ինքնասերն էլ ես եմ, բայց եսամոլ չեմ: Տարբերություն կա: Երևի ջղագար եմ: Անընդհատ իմ մասին եմ մտածում: Ինքս ինձ շատ կարևոր համարելուց չի... Ուղղակի ուրիշ բանի մասին ի վիճակի չեմ մտածել, պրծավ-գնաց: Եթե ինչ-որ կնոջ սիրահարվեի, դա որոշ չափով կօգներ: Բայց չեմ կարենում ինձ հետաքրքրող կին գտնել: Կրակն եմ ընկել, տեսնում ես, չէ՞: Ի՞նչ խորհուրդ կտաս: Իմ տեղն ի՞նչ կանեիր: Լավ, էլ չպահեմ քեզ, բայց վաղն արի, ինձ արթնացրու մեկն անց կեսին, հա՞: Եթե կոշիկներս փայլեցնես, պարտքի տակ չեմ մնա: Հա՛, լսիր, եթե մաքուր վերնաշապիկ ունես, բեր, էլի: Անտեր մնա, շան քթից ջուր եմ խմում՝ ոռահան եղած, բայց մաքուր վերնաշապիկն ինչ է՝ դա էլ է գլխից կտրված: Սևամորթների պես չլում են մեզ: Ա՛հ, սրա հերն անիծեմ: Լավ, մի քիչ ման գամ... ներսիս կեղտը մաքրվի գնա: Չմոռանա՛ս *վաղը*:

Մի կես տարի է կամ էլ ավելին, որ էս նամակագրությունը ձգվում է Իրենի՝ հարուստ պցի հետ: Որոշ ժամանակ է արդեն՝ ամեն օր հանդիպում եմ Կարլին սիրավեպն իր նպատակակետին հասցնելու համար, որովհետև եթե Իրենին մնա, անվերջ կշարունակվի: Էս քանի օրը երկկողմ նամակների իսկական հեղեղ սկսվեց: Մեր ուղարկած վերջին նամակը համարյա քառասուն էջ էր, երեք լեզվով գրված: Իսկը պոպուրի, ի՞նչ նամակ. էլ հին վեպերի վերջաբաններ, էլ կիրակնօրյա թերթերից քաղած մեջբերումներ, էլ Իլոնային ու Տանյային ուղղված երբեմնի նամակների վերաշարադրանք, էլ կամայական փոխադրություններ Ռաբլեից ու Պետրոնիուսից, մի խոսքով, հոգի-հոգեվարք էինք քաշել: Հազիվհազ Իրենը որոշեց դուրս գալ իր խեցուց: Վերջապես, մի նամակ եկավ, որտեղ նա ժամադրություն էր նշանակել իր օթևանած հյուրանոցում: Կարլը տակը թրջեց: Անծանոթուհուն նամակներ գրելը մի բան է, նրա մոտ սիրային հանդիպման գնալը՝ բոլորովին այլ բան: Վերջին պահին հո

թվայնացրել է 1915.info կայքը

մի դո՛ղ չբռնեց, արդեն վախենում էի, թե նրա տեղը ե՛ս պիտի գնամ: Երբ տաքսիից իջանք հյուրանոցի առաջ, էնպես էր սարսռում, որ ճարահատված՝ նախ ման տվեցի շրջակայքում: Արդեն երկու պետնո էր խմել, բայց ոչ մի ազդեցություն: Հյուրանոցի տեսքն ինքնին բավական եղավ նրան տապալելու համար. հավակնոտ տեղ էր, էն որ հսկայական, ամայի նախասրահ է ունենում, որտեղ անգլուհիները ժամեժամ նստում են դատարկ հայացքով: Վստահ լինելու համար, որ Կարլը չի փախչի, կանգնել էի կողքին, մինչ ծառայողը զանգում էր՝ նրա մասին տեղյակ պահելու: Իրենը համարում էր, նրան էր սպասում: Վերելակ մտնելու ժամանակ Կարլը մի վերջին հուսակտուր հայացք գցեց ինձ վրա. համր աղերս էր, որով շունն է նայում, երբ պարանը գցում են վիզը: Պոտադոնով անցնելիս Վան Նորդենն էր մտքիս...

Վերադարձա հյուրանոց, հեռախոսազանգի եմ սպասում: Կարլին մի ժամ է մնացել, խոստացել է աշխատանքի գնալուց առաջ իմաց տալ արդյունքների մասին: Մեր ուղարկած նամակների պատճեններն եմ նայում: Ջոռ եմ տալիս երևակայությանս, որ պատկերացնեմ՝ ինչ վիճակ է, բայց գլուխ չի գալիս: Իրենի նամակները մեր գրածներից լավն են. պարզ երևում է, անկեղծ են: Կա-չկա՝ նրանք արդեն տնտղել են իրար: Թե՞ Կարլը էլի տակը թրջել է:

Հեռախոսը զանգում է: Կարլի ձայնը տարօրինակ է, ծվծվան, կարծես վախեցած ու ցնծագին միաժամանակ: Նա խնդրում է, որ խմբագրատանն իրեն փոխարինեմ: «Մի բան ասա էդ շան որդուն: Ասա, որ մեռնում եմ...»:

– Լսիր, Կարլ... ինձ կասե՞ս...

– Ալո՞: Հենրի Մի՞լերն է:

Կնոջ ձայն է: Իրենն է: Բարևում է ինձ: Հեռախոսով հմայիչ ձայն ունի... հմայիչ: Մի պահ խուճապի եմ մատնվում: Ասելիքս չգիտեմ: Կուզենայի ասել. «Լսեք, Իրեն, ինչ հմայիչ եք... Իմ կարծիքով՝ *հոյակապ եք*»: Կուզենայի մի ճիշտ բան ասել նրան, ինչքան էլ դա անմիտ ինչեր, որովհետև հիմա, երբ լսում եմ նրա ձայնը, ամեն ինչ փոխվել է: Բայց մինչև մտքերս ի մի կբերեմ, նորից Կարլն է լսափողը վերցնում

ու տարօրինակ, ծվծվան ձայնով ասում. «Նա քեզ հավանում է, Ջո: Ամեն ինչ պատմել եմ քո մասին...»:

Խմբագրատանը սրբագրություն եմ անում Վան Նորդենի հետ: Ընդմիջմանը ինձ մի կողմ է տանում: Խոժոռ է ու թթված:

– Ուրեմն հոգին տալի՞ս է էդ շունը: Լսիր, էս ի՞նչ ծածկադմփոց է:

– Իմ կարծիքով՝ էն հարուստ պցի մոտ է գնացել,– ասում եմ հանգիստ:

– *Ինչ*: Այսինքն՝ հանդիպման է, հա՞:– Վան Նորդենը կորցնում է իրեն:– Լսիր, էդ հոգավորը որտե՞ղ է ապրում: Անունն ի՞նչ է:

Ես ձևացնում եմ, թե չգիտեմ:

– Լսիր,– ասում է,– կարգին տղա ես: Ինչի՞ չես թողնում, որ իմ աչքն էլ բան տեսնի:

Նրան հանգստացնելու համար, ի վերջո, խոսք եմ տալիս, թե ամեն ինչ իրեն կպատմեմ, հենց որ մանրամասները Կարլից իմանամ: Ինքս էլ չեմ համբերում, թե երբ եմ Կարլի հետ տեսնվելու:

Մյուս օրը, կեսօրին մոտ, թակում եմ նրա դուռը: Արդեն վեր է կացել, կզակն է օճառում: Դեմքի արտահայտությունից ոչինչ չես գուշակի: Նույնիսկ չի երևում, թե մտադի՞ր է ճիշտն ասել: Արևը ներս է ընկել բաց լուսամուտից, թռչունները ճռվողում են, բայց, չգիտես ինչու, սենյական առաջվանից էլ դատարկ ու աղքատիկ է թվում: Փրփուրը շաղ է անցել հատակով մեկ, իսկ կախիչին երկու կեղտոտ սրբիչ են, որոնք փոխող չկա: Կարլը ինքն էլ չի փոխվել, և ամենից շատ դա է զարմացնում ինձ: Էս առավոտ աշխարհը պիտի փոխվեր, դեպի վատը կամ լավը, բայց անպայման հիմնովին փոխվեր: Այնինչ Կարլը, կանգնած, երեսն է օճառում, ու ոչ մի բան մազաչափ չի տարբերվում նախկինից:

– Նստիր... նստիր մահճակալին,– ասում է նա:– Ամեն ինչ կպատմեմ... բայց համբերիր... մի քիչ համբերիր:

Նորից երեսն է օճառում, հետո ածելին սրում: Մինչև իսկ ջրի մասին է խոսում. էլի տաք ջուր չկա:

– Լսիր, Կարլ, ասեղների վրա եմ: Հետո՛ կտանջես ինձ, եթե ուզում ես, բայց հիմա մի բան ասա. լա՞վ էր, թե՞ վատ:

թվայնացրել է 1915.info կայքը

Նա, օճառելու փնջիկը ձեռքին, շուռ է գալիս հայելուց ու տարօրինակ ժպտում:

– Համբերի՛ր: Ամեն ինչ կպատմեմ...

– Ուրեմն ձախողվել է:

– Չէ,– ասում է՝ ծոր տալով:– Չի ձախողվել, բայց գլուխ էլ չի եկել... Իմիջիայլոց, գործս դասավորեցի՞ր խմբագրատանը: Ի՞նչ պատճառ բռնեցիր:

Տեսնում եմ՝ անհնար է բերանից խոսք քաշել: Ուրեմն երբ որ կամքը տա, ու պատրաստ լինի, նոր կպատմի: Դրանից շուտ՝ չէ: Հետ եմ ընկնում մահճակալին ու բերանս ջուր առնում: Նա սափրվում է:

Մեկ էլ, ոչ դես, ոչ դեն, սկսում է խոսել. սկզբում՝ կցկտուր, իսկ հետո՝ ավելի ու ավելի պարզ, հստակ, կտրուկ: Դժվարությամբ է լեզուն պտտվում, բայց կարծես որոշել է ամեն ինչ պատմել. թվում է՝ սիրտը դատարկելու կարիք ունի: Նույնիսկ էն հայացքն է մտաբերում, որով ինձ նայեց վերելակ նստելիս: Երկար կանգ է առնում դրա վրա՝ հասկացնելով, որ բազմիմաստ պահ էր, և եթե ինքն ամեն ինչ փոխելու կարողություն ունենար, վերելակից ոտքը դուրս չէր դնի:

Իրենը խալաթով է եղել նրա մտնելու պահին: Պահարանի վրա շամպայն է աչքով ընկել: Սենյակը կիսամութ է եղել, իսկ Իրենի ձայնը՝ հաճելի: Կարլը հանգամանորեն պատմում է սենյակի, շամպայնի մասին, թե սպասավորը ոնց բացեց, ինչ բլթոց լսվեց, Իրենի խալաթը ինչպես խշխշաց, երբ նա ընդառաջ եկավ բարևելու. ամեն ինչ պատմում է, բացի իմ ուզածից:

Ութի կողմն էր, երբ նա գնաց հանդիպման: Ութն անց կեսին սկսել է նեղվել, թե կուշանա աշխատանքից:

– Իննի մոտերքն էր, որ զանգեցի քեզ, չէ՞,– հարցնում է:

– Հա, մոտավորապես:

– Արդեն նեղվում էի, հա...

– Հասկանում եմ: Հետո՞:

Չգիտեմ՝ հավատա՞մ նրան, թե չէ, մանավանդ մեր բստրած նամակներից հետո: Նույնիսկ չգիտեմ՝ հավատա՞մ ականջներիս, որովհետև միանգամայն անհավանական բաներ է պատմում: Բայց,

ճանաչելով նրան, զգում եմ, որ ճիշտն է ասում: Հետո էլ՝ հիշում եմ նրա ձայնը հեռախոսով, վախի ու ցնծության էդ տարօրինակ խառնուրդը: Բա հիմա ինչո՞ւ չի ցնծում: Անընդհատ ժպտում է վարդագույն փայտոջիլի պես, որը մի կուշտ արյուն է տկել:

– Ժամը ինն էր, որ զանգեցի քեզ, չէ՞.– էլի է հարցնում նա:

Ես, հոգնած, գլխով եմ անում: Այո, ժամը ինն էր: Այժմ նա վստահ է, որ ինն էր, որովհետև միտքն է բերում. ժամացույցը հանել է: Ինչևէ, երբ նորից է նայել ժամացույցին, տեսել է՝ տասն է: Տասին Իրենը պառկած է եղել բազմոցին՝ ծիծիկները բռնած: Էսպես է պատմում. կաթիլ-կաթիլ: Ժամը տասնմեկին ամեն ինչ որոշվել է. փախչում են Բոռնեո: Գլուխը քարը, մեկ է, ամուսնուն կյանքում չի սիրել: Ինքը երբեք չէր գրի առաջին նամակը, եթե ամուսինը սառն ու անկիրք ծերուկ չլիներ:

– Մեկ էլ հարցնում է ինձ,– իր պատմությունն է անում Կարլը,– «Բայց, լսիր, սիրելիս, ի՞նչ գիտես, թե չե՞ս ձանձրանա ինձնից»:

Էստեղ ծիծաղս բռնում է: Շատ անհեթեթ է հնչում. չեմ կարող ինձ զսպել:

– Բա ի՞նչ ասեցիր:

– Քո կարծիքով ի՞նչ պիտի ասեի: Տարա-բերի, թե՝ ո՞վ կձանձրանա *քեզնից*:

Եվ Կարլը սկսում է նկարագրել, թե ինչ է եղել դրանից հետո. ոնց է կոացել ու նրա կուրծքը պաչպչել, ոնց է թեժ համբույրներով ծիծիկներն էլի տեղը՝ իրանակալի, թե ինչի մեջ խոթել: Էս բոլորից հետո մի բաժակ շամպայն էլ է խմել:

Կեսգիշերին մոտ սպասավորը գարեջուր և բրդուճներ է բերել, խավիարով բրդուճներ: Էս ամբողջ ընթացքում, Կարլի խոսքերով, ուշքը գնալիս է եղել ջուր թափելու համար: Մի անգամ է բանը կանգնել, էն էլ իջել է: Փուչիկն արդեն պայթելիս է եղել, բայց էս «տափուկ շունը» համարել է, թե նուրբ իրավիճակ է:

Գիշերվա մեկն անց կեսին Իրենը որոշել է մեքենա պատվիրել ու զբոսանքի գնալ Բուլոնյան անտառ: Իսկ Կարլի գլխում մեն մի միտք է պտտվել. ոնց անի, որ փուչիկը դատարկի: «Ես քեզ սիրում եմ...

թվայնացրել է 1915.info կայքը

Պաշտում եմ,– ասել է նա:– Ուր ուզես՝ կգամ. Ստամբուլ, Սինգապուր, Հոնոլուլու: Բայց հիմա պիտի գնամ... Ուշ է արդեն»:

Կարլը պատմում է էս ամենն իր կեղտոտ, փոքրիկ սենյակում, որն արևն է ողողել, իսկ դրսում թռչուններն են ճռվողում ցնորվածի պես: Ես չգիտեմ էլ՝ Իրենը սիրուն է, թե՝ չէ: Էս դմբոն ինքն էլ չգիտի: Ավելի շուտ, կարծում է, որ չէ: Սենյակում մութ է եղել, շամպայնը գլխին է խփել, սիրտն էլ՝ նեղվել:

– Բայց գոնե մի բա՛ն ասա նրա մասին, եթե էս պատմածներդ պոչավոր ստեր չեն:

– Սպասիր,– ասում է:– Սպասիր... թող մտածե՛մ: Չէ, նա սիրուն չի: Այ, հիմա վստահ եմ: Ճակատին սպիտակած մազափունջ կա... հիշեցի: Բայց ոչինչ, ցավը դա չի. տես՝ համարյա մոռացել էի: Չէ, ձեռքերն էին նիհար... նիհար ու բարալիկ:– Նա սկսում է հետ ու առաջ անել: Հանկարծ կանգ է առնում մեխվածի նման:– Այ, եթե մի տասը տարով ջահե՛լ լիներ...– բացականչում է նա:– Եթե մի տասը տարով ջահել լիներ, բանի տեղ չէի դնի ոչ սպիտակած մազափունջը... ոչ էլ նույնիսկ բարալիկ ձեռքերը: Բայց շատ մեծ է: Հասկացիր, ամեն տարին հաշիվ է նրա պես կնկա համար: Մյուս տարի ոչ թե մի տարով մեծ կլինի, այլ տասը տարով: Եվս մի տարի անց արդեն քսան տարով կմեծանա: Իսկ ես դեռ ջահել կմնամ, առնվազն մի հինգ տարի...

– Վերջն ինչո՞վ պրծավ,– ընդհատում եմ ես:

– Բանն էլ դա է... չպրծավ: Խոսք տվեցի, որ երեքշաբթի, հինգի կողմը կանցնեմ: Այ, արդեն վատ կլինի, գիտե՞ս: Դեմքին կնճիռներ ունի, ցերեկվա լույսի տակ ավելի շատ կերևան: Երևի մտքին կա, որ երեքշաբթի բրթեմ: Բայց օրը ցերեկով դրա պես կնկան ո՞նց բրթես: Էն էլ էդ տեսակ հյուրանոցում: Գոնե հանգստյանս օրվա իրիկունը լիներ... ախր երեքշաբթի աշխատում եմ: Սա՝ դեռ մի կողմ: Խոստացել եմ, որ նամակ կգրեմ: Բայց էլ ո՞նց գրեմ: Ասելիք չունեմ... Թո՛ւհ... Գոնե մի տասը տարով ջահել լիներ: Ի՞նչ կարծիքի ես, հետը գնա՞մ... Բոռնեո, թե ուր որ տանում է ինձ: Ախր օրս ի՞նչ է լինելու էդ հարուստ կնկա ձեռքին: Կրակել չգիտեմ: Վախենում եմ

զենքից ու նման բաներից: Թեկուզ դա էլ չէ, կուզի, որ գիշեր-ցերեկ կոխեմ... ուրեմն պըրծ, էլի. անընդհատ՝ կամ որս, կամ կոխոցի... Չէ, իմ բանը չի:

– Միգուցե էդքան էլ վատ չլինի: Քեզ համար փողկապներ, ինչ ասես կառնի...

– Իսկ եթե դու էլ գաս մեզ հե՞տ, հը՞: Քո մասին ամեն ինչ պատմել եմ...

– Ասել ես՝ աղքատ եմ, ոչ մի բան չունե՞մ:

– Ինչ կա-չկա՝ ասել եմ: Թո՛ւի, ինչքա՜ն լավ կլիներ, եթե մի տասը տարով ջահել լիներ: Ասում էր՝ քառասունին մոտ է: Ուրեմն հիսուն է կամ վաթսուն: Ոնց որ մորդ ծոցը մտնես... Չէ, լինելու բան չի... անհնար է:

– Բայց գրավչություն էլ կունենա... Ասեցիր՝ ծծերը պաչպչել ես:

– Հա, որ պաչպչել եմ, ի՞նչ: Համ էլ քեզ ասում եմ՝ մութ էր:

Շալվարը հագնելիս կոճակը պոկվում է, ընկնում:

– Տեսնում ես, չէ՞: Էս անտեր կոստս քայքայվում է: Յոթերորդ տարին է՝ հագնում եմ... Մինչև հիմա փողը չեմ էլ տվել: Կարգին կոստ էր ժամանակին, բայց արդեն փալաս է: Հա, էդ կնիկը կոստեր էլ կառնի, ինչ էլ որ սիրտս տա: Բայց ես ատելով ատում եմ, որ իմ տեղը կինն է ծախս անում: Կյանքումս էդ աստիճանի չեմ իջել: Դու էիր, էլի: Ավելի ճիշտ է ես մենա՛կ ապրեմ: Էս անտերը լավ էլ սենյակ է, հը՞: Ի՞նչ է եղել որ: Նրա համարից էլ հազար տակ լավն է: Ինձ պետք չի էդ ճոխ հյուրանոցը: Ջզվում եմ էդ կարգի հյուրանոցներից: Իրեն էլ ասեցի: Թե բա. «Ինձ համար մեկ է՝ որտեղ ապրեմ... Եթե ուզենաս, կգամ, մոտդ կմնամ»: Պատկերացնո՞ւմ ես՝ ոնց կխցկվի էստեղ իր մեծ անդուկներով, գլխարկի տուփերով ու մնացած զըրթուզիբիլով, որ քարշ է տալիս հետը: Հազար ու մի բան ունի. ինչքան ասես շորեր, արվակներ, էլ չգիտես ինչ: Համարը հիվանդանոցի էր նման: Մատը մի թեթև քերծվի, վիճակը լուրջ է: Հետո էլ՝ նրան մերսում է հարկավոր, մազերը գանգրացնել, էս չի կարելի ուտել, էն չի կարելի ուտել: Լսիր, Ջո, ամեն ինչ կարգին կլիներ, եթե մի քիչ ջահել լիներ: Ջահել էգին ամեն ինչ ներում ես: Թեկուզ ուղեղ էլ չունենա: Առանց

թվայնացրել է 1915.info կայքը

ուղեղի՝ ավելի լավ է: Իսկ պառավը, ինչքան էլ խելքով փայլի, աշխարհի ամենահրապուրիչ կինն էլ լինի, տարբերություն չկա: Մատղաշ ծակը գանձ է, պառավը՝ մաքուր տնաքանդություն: Շատ-շատ՝ բանման առնի քեզ համար: Բայց դրանից ոչ ոսկորները միս կկապեն, ոչ էլ ոտքերի արանքը կթեժանա: Չէ, վատը չի Իրենը: Իմ կարծիքով՝ կհավանես: Դե, քոնն ուրիշ է: Դու շինելու պարտավորություն չունես: Սիրալիր կլինես ու վերջ: Երևի քեզ էլ դուր չգան էդ շոր-շիրթը, արվակներն ու մնացածը, բայց մի կերպ կդիմանաս: Նա քեզ չի ձանձրացնի, ասեմ՝ իմանաս: Թե կուզես, նույնիսկ հետաքրքիր է: Ուղղակի սմքել է: Կուրծքը՝ դեռ ոչինչ, բայց ձեռքե՞րը... Խոստացել եմ, որ մի օր քեզ կտանեմ: Շատ եմ պատմել քեզնից... Չգիտեի՝ հետն ինչից խոսեի: Միգուցե սրտովդ լինի, մանավանդ՝ հագնված: Շա՜տ իմանամ...

– Լսիր, ասում ես՝ հարո՞ւստ է: Ուրեմն սրտո՛վս է: Թքած՝ քանի տարեկան է, մենակ թե ջադու չլինի...

– Չէ՛, ջադու չի: Ի՞նչ ես խոսում: Գրավիչ է՝ ասում եմ: Լավ է խոսում: Տեսքն էլ է լավ... ուղղակի ձեռքերն են...

– Ոչինչ, ի՞նչ անենք, ե՛ս կբանեցնեմ, եթե դու չես ուզում: Ասա իրեն: Բայց նրբորեն: Էդ կարգի կնոջ հետ պիտի զգույշ վարվես: Ինձ կտանես մոտը, ինչ լինում է՝ լինի: Գովքս մի լավ կտաս: Կձևացնես, թե խանդում ես... Վայ քո, ի՞նչ կա որ, երկուսս էլ կշինենք... տեղ-մեղ կգնանք, կուտենք-կխմենք... մեքենայով ման կգանք, որս կանենք ու սիրուն-սիրուն կհագնվենք: Եթե միտք ունի Բոռնեո գնալ, թող երկուսիս էլ տանի: Ես էլ կրակել չգիտեմ, բայց դա նշանակություն չունի: Նրա պետքն էլ չի: Էդ կնկա ուզածը մի բան է. որ շինվի, պրծավ-գնաց: Մի գլուխ ձեռքերից ես խոսում: Ի՞նչ պարտադիր է, որ հա ձեռքերին նայես: Մի անկողնուդ ծածկո՛ցը տես: Հայելի՛ն տես: Սա կյա՞նք է: Ուզում ես էդպես բծախնդիր մնալ ու ամբողջ կյանքդ ոջլոտի պես ապրե՞լ: Ախր հյուրանոցի վարձն էլ ի վիճակի չես տալ... այնինչ աշխատում ես: Սա ապրել չի: Տանձիս, թեկուզ յոթանասուն տարեկան լինի. սրանից հո լավ է...

– Լսիր, Ջո, իմ տեղը դու՛ կբրթես... ամեն ինչ կարգի կընկնի: Միգուցե ես էլ մեկ-մեկ օգտագործեմ... հանգստյանս օրերին: Չորրորդ

օրն է արդեն՝ կարգին դուրս չեմ գնում: Խաղողի հատերի պես խլեր են քամակիս...

– Թութք է, էլի:

– Մազերս թափվում են... ատամնաբույժի մոտ էլ պիտի գնամ: Քայքայվում եմ: Նրան ասել եմ, որ լավ տղա ես... Մի բան արա, հա՛: Դու բծախնդիր չես, հը՞: Կգնանք Բոռնեո, քամակիս ցավից էլ կպրծնեմ: Մեկ էլ տեսար՝ մի ուրիշ բան ընկա... ավելի վատ բան... ասենք, տենդ... կամ խոլերա: Իմ արև, ավելի լավ է մարդ մի կարգին հիվանդությունից մեռնի, քան թե թերթում կյանքը մաշի՝ խաղողի հատերը քամակին, շալվարի կոճակներն էլ պոկված: Երանի հարուստ լինեի, գոնե մի շաբաթ, հետո թող մի կարգին, մահացու բան ընկած՝ պառկեի հիվանդանոցում, չորս կողմս՝ ծաղիկներ, քույրերը գլխովս պտտվեին, ու հեռագրեր գային: Եթե հարուստ ես, լավ են խնամում: Լվանում են, սրբում փափուկ շորով, մազերդ սանրում: Իմ արև, էդ բոլորը գիտեմ: Միգուցե բախտս բերեր՝ ոչ էլ մեռնեի: Միգուցե ամբողջ կյանքում հաշմանդամ մնայի... կաթված խփեր, գամվեի անվասայլակին: Մեկ է, էլի կխնամեին... թեկուզ էլ փող չունենայի: Եթե հաշմանդամ ես, իրոք հաշմանդամ, հո չեն թողնի, որ սովամահ լինես: Մաքուր անկողին են տալիս... սրբիչներդ փոխում են ամեն օր: Իսկ էսպես՝ ոչ մեկի փայտիկին էլ չես, մանավանդ եթե աշխատանք ունես: Կարծում են՝ եթե մարդ աշխատանք ունի, ուրեմն պիտի երջանիկ լինի: Դու ո՞րը կնախընտրեիր՝ ամբողջ կյանքում հաշմանդա՛մ մնա՛լ, թե՞ աշխատել... կամ ամուսնանալ մի հարուստ կնկա հետ: Հաստատ հարուստ կնկան կընտրեիր, աչքերիցդ երևում է: Ուշքդ մենակ ուտելիքն է: Բայց, ասենք, ամուսնանայիր, ու էլ չկանգներ,– դե, պատահում է, չէ՞,– ի՞նչ կանեիր: Է՛, նրա կամքից կախված կմնայիր: Պուդելի պես ձեռքից կուտեիր: Դուրդ կգա՞ր, հա՞: Թե՞ նման բաների մասին դու չես մտածում: *Իսկ ես ամեն ինչի մասին էլ մտածում եմ:* Հա, մտածում եմ՝ ինչ կոստեր կընտրեի, ուր կգնայի, բայց մի բանի մասին էլ եմ մտածում: Ամենակարևոր բանի: Ի՞նչ օգուտ ճոխ փողկապներից ու շքեղ կոստերից, եթե բանդ չի կանգնում արդեն: Չես էլ կարող նրան խաբել, որովհետև

թվայնացրել է 1915.info կայքը

անընդհատ կրնկակոխ կհետևի քեզ: Չէ, հազար անգամ լավ է, որ ամուսնանաս հետն ու միանգամից ինչ-որ հիվանդություն ընկնես: Մենակ թե սիֆիլիս չլինի: Խոլերա, ասենք, կամ դեղնատենդ: Բայց որ հրաշքով փրկվես ու ամբողջ կյանքում հաշմանդամ մնաս: Էլ հոգս չես անի, թե ոնց պիտի նրան շինես կամ տան վարձը տաս: Երևի քեզ համար մի ընտիր անվասայլակ կառնի՝ ռետինե դողերով ու տեսակ-տեսակ լծակ-մծակներով: Միգուցե նույնիսկ ձեռքերդ աշխատեն, այսինքն՝ էնքան, որ գրել կարենաս: Կամ էլ քարտուղարուհի կպահես: Հա, գրողի համար դա է հարցի ամենալավ լուծումը: Ձեռք ու ոտքը մեր ինչի՞ն են: Գրելու համար դրանց կարիքը չկա: Մարդուն ապահովություն է պետք... հանգիստ... պաշտպանվածություն: Շատ վատ է, որ անվասայլակներով շքերթի դուրս եկող բոլոր էդ հերոսները գրող չեն դարձել: Եթե ես վստահ լինեի, թե պատերազմ գնալու դեպքում միայն ոտքերս կկորցնեմ... եթե վստահ լինեի, կասեի՝ թող հենց վաղն էլ կռիվը սկսվի: Խնչած ունեմ շքանշանների վրա. իրե՛նց մնան: Իմ ուզածը մեկն է. մի լավ անվասայլակ ու օրական երեք անգամ սնունդ: Այ, էդ ժամանակ կարդալու բան կտամ էս էշի գլուխներին:

Մյուս օրը, մեկն անց կեսին, գնում եմ Վան Նորդենի մոտ: Նրա հանգստյան օրն է, ավելի ճիշտ, երեկոն: Կարլի միջոցով լուր է ուղարկել, որ օգնեմ, տեղափոխվի:

Նրան արտակարգ ընկճված եմ տեսնում: Իր ասելով՝ ամբողջ գիշեր աչք չի կպցրել: Ինչ-որ մտատանջություն ունի, մի բան, որ կրծում է նրան: Քիչ անց պարզվում է, թե ինչ. անհամբերությամբ ինձ է սպասել, որ սիրտը դատարկի:

– Էդ հոգավորը,– սկսում է նա՝ նկատի ունենալով Կարլին,– էդ հոգավորը տեղով արվեստագետ է: Էնքան մանրակրկիտ պատմեց, որ գլխի եմ՝ սկզբից մինչև վերջ ստերի շարան է... բայց մտքիցս դուրս չի գալիս: Դե գիտես՝ գլուխս ոնց է աշխատում:

Նա ընդհատում է ինքն իրեն ու հարցնում, թե Կարլն ինձ արե՞լ է ամբողջ պատմությունը: Մազաչափ կասկած չունի, որ Կարլը կարող էր

ինձ մի բան պատմել, իսկ իրեն՝ ուրիշ: Ըստերևույթին, նա կարծում է, թե էդ պատմությունը հորինվել է դիտմամբ իրեն տանջելու նպատակով: Երևում է՝ նրան առանձնապես չի էլ մտահոգում, թե դա հորինվածք է: Կարլի պատմածից հետո նրա մտքում դրոշմված «պատկերները», ինչպես ինքն է ասում, հանգիստ չեն տալիս: Իրական պատկերներ են, թեկուզև ամբողջ պատմությունը փչոց է: Բացի դրանից, անհերքելի փաստ է, որ էդ հարուստ պուցը, իրոք, գոյություն ունի, և Կարլը, իրոք, տեսակցել է նրա հետ: Թե ինչ է կատարվել իրականում, երկրորդական բան է. Վան Նորդենն ինքնին հասկանալի է համարում, որ Կարլն էդ կնկա հետ իր գործը տեսել է: Նրան հուսահատության է մատնում էն միտքը, որ Կարլի պատմածը կարող է *հավանական* լինել:

– Շատ բնորոշ է իրեն,– ասում է,– որ գլուխ է գովում, թե վեց-յոթ փոր խրել է: Գիտեմ, քամակից բաներ է հանում, դե, ոչինչ, բայց երբ պատմում է, թե էդ կնիկը մեքենա է վարձել ու իրեն տարել Բուլոնյան անտառ, և ծածկոցի տեղ նրա ամուսնու մորթե վերարկուն են օգտագործել, դա արդեն չափից դուրս է: Երևի քեզ պատմած կլինի, որ վարորդը հարգալից սպասել է... Լսիր, իսկ պատմե՞լ է, թե ոնց է շարժիչն ականջների տակ կամացուկ դոդոացել: Հա՛, իր գործը փայլուն գիտի: Այ, դրա պես մի մանրամասն կմոգոնի... հենց էդ մանրուքն էլ ամեն ինչ դարձնում է հոգեբանորեն հավաստի... ու նրա պատմածն արդեն մտքիցդ դուրս չի գալիս: Էնքան էլ սահուն, բնական կպատմի... Տեսնես նախօրո՞ք է հնարում, թե՞ հենց պատմելու ընթացքում է բստրում ձեռի հետ: Շատ տափուկն է, հա, ստերի տոպրակ. ականջդ կախում ես... Կարծես նամակ գրի, ծաղկաթաղարներ հիշեցնող էն նամակներից, որ մի գիշերվա մեջ դզում-փչում է: Գլուխս չի մտնում՝ մարդ ո՞նց նման նամակներ կգրի... չեմ հասկանում՝ ինչ ուղեղ է պետք... Ժաժ տալու պես բան է... Ի՞նչ կարծիքի ես:

Բայց մինչ ես կհամարձակվեմ կարծիք հայտնել կամ նույնիսկ կքրքրջամ նրա երեսին, Վան Նորդենը շարունակում է իր մենախոսությունը.

թվայնացրել է 1915.info կայքը

– Լսիր, կա-չկա՝ քեզ էլ է ամեն ինչ պատմել... Իսկ ասե՞լ է, որ պատշգամբում, լուսնի լույսի տակ կանգնած, համբուրել է նրան: Կրկնելիս տափակ է հնչում, բայց ինքը ո՛նց նկարագրեց... Աչքիս առաջ է. էդ շունը, կնոջը գրկած, տնկվել է ու մտովի արդեն մի ուրիշ նամակ է նրան գրում, ևս մի ծաղկազարդ նամակ բարձր տանիքների ու մնացած էշությունների մասին, որ ֆրանսիացի գրողներից է թռցնում: Ես հայտնաբերել եմ. էդ հոգավորը ոչ մի ինքնուրույն բան չի ասում: Գիտե՞ս՝ ոնց պիտի բռնացնես... Պարզելով, թե էդ պահին ինչ է կարդում... Բայց դժվար գործ է, որովհետև շատ բերանփակ է, դարմանի տակի ջուր: Լսիր, եթե չիմանայի, որ հետը գնացել ես, չէի հավատա, թե էդ կինը գոյություն ունի: Դրա նմանը ինքն իրեն էլ նամակներ կգրի: Բայց, մեկ է, բախտավոր է... էնքան մանրապճեղ է անտեր շունը, բարակ-մարակ, ռոմանտիկ տեսքով, որ մերթընդմերթ կանանց սիրտն է մտնում... ասես որդեգրեն, էլի... խղճում են երևի: Դե, որոշ պցեր սիրում են ծաղկաթաղարներ ստանալ... իրենց աչքին ավելի կարևոր են դառնում... Բայց էս մեկը, նրա ասելով, անխելք կնիկ չի: Դու պիտի որ իմանաս. նամակները նայել ես: Քո կարծիքով՝ էդ տեսակ կինը ի՞նչ է գտել նրա մեջ: Հասկանում եմ, նամակներով է տարվել... բայց քո կարծիքով՝ ի՞նչ է զգացել, երբ տեսել է նրան:

Ասենք, էս բոլորը՝ հեչ: Կարևորը նրա պատմելու ձևն է: Դե գիտես՝ ոնց որ ասեղնագործի... Մի խոսքով, պատշգամբի էդ տեսարանը նախուտեստի պես մատուցելուց հետո ասում է՝ ներս են գնացել, ու ինքն արձակել է նրա պիժամայի կոճակները: Ի՞նչ ես ժպտում: Ինձ ապուշի տե՞ղ է դրել:

– Չէ՛, չէ՛: Ճիշտ նույնն էլ ինձ է պատմել: Շարունակիր:

– Իսկ դրանից հետո,– էստեղ Վան Նորդենը ինքն էլ է ժպտում,– դրանից հետո, նրա պատմելով, էդ կինը նստել է բազկաթոռին, ոտքերը վեր հանել... տիպ-տկլոր... Ինքն էլ, հատակին նստած, նայել է նրան, ասել, որ չքնաղ է... Քեզ պատմելիս Մատիսի նկարի հետ համեմատություն արե՞ց... Մի րոպե... հենց իր խոսքերը հիշեմ: Ինչ-որ սրամիտ բան սազացրեց հարճի մասին... Իմիջիայլոց, հա՞րճն

ինչ ցավս է... Ախր ֆրանսերեն ասեց, դրա համար էլ մտքիցս թռել է քունածը... բայց լավ հնչեց: Հենց իր ոճով էր, էլի: Երևի էդ կինը կարծել է, թե նրա մտածածն է... Կարծել է՝ պոետ է, թե ինչ: Բայց էս բոլորը դատարկ բաներ են... Տուրքս եմ տալիս նրա երևակայությանը: Դրանից հետո կատարվածն է ինձ հունից հանում: Ամբողջ գիշեր շուռումուռ եմ եկել, գլխումս մեխված էդ պատկերները դրել-վերցրել: Մտքիցս դուրս չեն գալիս: Նրա պատմածներն էնքան իրական են հնչում, որ եթե սուտ դուրս գան, կխեղդեմ էդ շան վաստակին: Ոչ ոք իրավունք չունի նման բաներ հորինել: Կամ էլ թե չէ՝ հիվանդի մեկն է...

Հա, ուրեմն հասել եմ էնտեղ, որ նա, իր ասելով, ծնկի է եկել ու երկու բարալիկ մատով էդ կնկա ծակը բաց արել: Հիշո՞ւմ ես: Ասում է՝ նա նստած է եղել՝ ոտքերը բազկաթոռի արմնկակալներին գցած, ու հանկարծ ինքը ոգեշնչվել է: Սա արդեն մի երկու անգամ հագցնելուց հետո է եղել... Մատիսին մտաբերելուց հետո: Ծնկի է եկել,– *դու կրես, է՛*,– ու երկու մատով... ավելի շուտ՝ մատների ծայրով, նկատի առ... պսակաթերթիկները բացել... *ծլրնկի-ծլրնկի...* բա: Թացուկ, մեղմիկ ձայն... համարյա անլսելի. *ծլրնկի-ծլրնկի:* Տե՛ր Աստված մինչև լույս ականջիս է եղել: Հետո էլ,– կարծես եղածը հերիք չի ինձ,– պատմում է, որ գլուխը թաղել է նրա ցայլքի մեջ: Ու հենց որ էդպես է արել, գետինը մտնեմ, թե էդ կինարմատը ոտքերը սրա վզով չի գցել ու փաթաթվել: *Սա ինձ ապանեց:* Պատկերացրու, է՛. պերճաշուք, նրբազգաց կինը ոտքերը *նրա վզով* է գցում: Դրա մեջ թունավոր բան կա: Էնքան արտասովոր է, որ համոզիչ է հնչում: Եթե միայն շամպայնի ու Բուլոնյան անտառ գնալու մասին պատմեր, թեկուզ մինչև անգամ՝ պատշգամբի տեսարանի, մտքիցս կհանեի: Բայց սա էնքան աներևակայելի է, որ արդեն ստի նման չի: Հավատս չի գալիս, թե ինչ-որ տեղ կարդացած լինի, ու չեմ պատկերացնում՝ դա ոնց է խելքին փչել, եթե, իրոք, փչել է: Նրա պես շանը, դե գիտես, ինչ ասես, որ չի պատահի: Գուցե էս կինը չի էլ տվել ընդհանրապես, բայց թողել է, որ գզի իրեն... Չես իմանա, թե էդ հարուստ պցերի կամքը ինչ կտա...

թվայնացրել է 1915.info կայքը

Երբ Վան Նորդենը, վերջապես, ելնում է անկողնուց ու սկսում սափրվել, արդեն իրիկնադեմ է: Ինձ հազիվհազ հաջողվում է նրա միտքը շեղել այլ բաների, գլխավորապես տեղափոխվելու կողմը: Սպասուհին գալիս է տեսնելու, թե պատրա՞ստ է նա. պիտի կեսօրին սենյական ազատեր: Իսկ Վան Նորդենը դեռ շալվարն է հագնում: Մի քիչ շշկլվում եմ. ոչ ներողություն է խնդրում, ոչ էլ շուռ գալիս: Տեսնելով, թե ոնց է անփութորեն առաջը կոճկում ու հետն էլ սպասուհուն կարգադրություններ անում, քթիս տակ ծիծաղում եմ: «Բանի տեղ մի դիր,– ասում է ինձ՝ ծայրահեղ արհամարհանքով լի հայացք նետելով սպասուհու վրա:– Խոզի մերուն է: Կուզես՝ քամակը կմշտի: Ձեն չի հանի:– Եվ, անգլերեն դիմելով նրան, ավելացնում է.– Արի, ա՛յ շան կնիկ, արի՝ ձեռդ դիր ծայրիս»: Էս խոսքերի վրա էլ չեմ դիմանում: Ծիծաղս բռնում է, մի հիստերիկ ծիծաղ, որը սպասուհուն էլ է վարակում, թեպետ սա պատկերացում չունի, թե խոսքն ինչի մասին է:

Սկսում է նկարներն ու լուսանկարները հանել պատերից. դրանց մեծ մասը հենց Վան Նորդենին են պատկերում: «Է՛յ,– ասում է նա՝ մատը տնկելով,– մի էստե՛ղ արի: Սա՝ քեզ հիշատակ ինձնից,– ու մի լուսանկար է պոկում պատից:– Իմ գնալուց հետո ոռդ կսրբես: Այ, տես,– վրա է բերում՝ շրջվելով իմ կողմը,– էս շան կնիկն անուղեղ է: Ֆրանսերեն էլ ասեմ, նույն բութ հայացքով կնայի»: Սպասուհին բերանը բաց կանգնել է. ակնհայտորեն համոզված է, որ Վան Նորդենը խելքից պակաս է: «Է՛յ,– բղավում է նա՝ կարծես սպասուհու ականջը ծանր է,– *քեզ հեյր* եմ: *Դո՛, դո՛:* Ա՛յ, էսպես...– և լուսանկարը վերցնելով, սեփական լուսանկարը, քամակին է քսում:– Comme ça[1]. Տեղ հասա՞վ: Պիտի նկարես, որ գլուխը մտնի»,– ավելացնում է՝ խորին զզվանքից ներքևի շրթունքն ուռցրած:

Նա անճարակ տեսքով սպասուհուն է հետևում, որն իրերը լցնում է մեծ ճամպրուկների մեջ: «Առ, սրանք էլ դիր»,– ասում է՝ ատամի խոզանակն ու սրսկիչը նրա ձեռքը տալով: Վան Նորդենի ունեցած-չունեցածի կեսը լցրած է հատակին: Ճամպրուկները լեփ-լեցուն են, նկարները, գրքերը, կիսադատարկ շշերը դնելու տեղ չկա: «Նստիր

[1] Էսպես (ֆրանս.):

մի րոպե,- ասում է նա:- Դեռ շատ ժամանակ կա: Այ, ծուռ նստենք՝ շիտակ խոսենք: Եթե դու չգայիր, ես էստեղից գնացողը չէի: Տես, որ ձեռքիցս բան չի գալիս: Կհիշեցնես՝ լամպերը վերցնեմ, իմն են: Էդ աղբամանն էլ է իմը: Էս շան ծնունդներն ուզում են, որ խոզի պես ապրենք:- Սպասուհին իջել է պարան բերելու:- Այ, կտեսնես, պարանի արժեքն էլ կմտցնեն հաշվի մեջ, թեկուզ ջրի գին ունենա: Շալվարիդ կոճակն ինչ է՝ ձրի չեն կարի: Էս գարշելի, կեղտոտ գջլողները...- Նա մի շիշ կալվադոս է վերցնում բուխարու վրայից և գլխով նշան անում, որ մյուսն էլ ե՛ս վերցնեմ:- Իմաստ չունի սրանք տանել: Արի վերջը տանք: Բայց *նրան* չառաջարկե՛ս: Շան վաստակ. մի կտոր զուգարանի թուղթ անգամ չեմ թողնի դրան: Էս ծակուռն էլ կայլանդակեմ գնալուց առաջ: Լսիր... կշռե՞ս հատակին: Թե հնար լիներ, մի կլունձ կդնեի պահարանի դարակում»: Վան Նորդենի գարշանքն ինքն իրենից ու մնացած ամեն ինչից էնքան անսահման է, որ նա չգիտի, թե իր զգացումն ինչ կերպ արտահայտի: Շիշը ձեռքին մոտենում է անկողնուն և ծածկոցն ու սավանը հետ քաշելով՝ կալվադոսը ցինում ներքնակին: Դեռ սիրտը չհովացրած՝ կոխկրտում է ներքնակը: Ցավոք, կրունկները ցեխոտ չեն: Ի վերջո, նա ճանկում է սավանն ու կոշիկները մաքրում դրանով: «Ջբաղմունք կունենան»,- փնթփնթում է քինոտ: Հետո, մի մեծ կում անելով, գլուխը հետ է գցում ու կոկորդն ողողում և մի լավ ղլղլացնելուն պես՝ թքում է հայելու վրա: «Դե գնացե՛ք, լրբի ծնունդներ: Ինձնից հետո կպրտե՛ք»: Նա հետ ու առաջ է անում՝ ինքն իրեն մոթմոթալով: Աչքն ընկնում է իր ծակ գուլպաներին, բարձրացնում է հատակից ու բզկտում: Նկարներն էլ են կատաղեցնում նրան: Վերցնում է մեկը՝ ծանոթ լեսբուհու արած դիմանկարը, և ոտքով պատռում: «Շա՛ն քած... Գիտե՞ս՝ էդ լկտին ինչ առաջարկեց ինձ: Ուզում էր, որ բոզերիս, ճխտելուց հետո, մեկ էլ իրեն տամ: Մի սու էլ չցնծաց թերթում գրածիս համար: Կարծեց՝ սրտանց հիացած եմ իր ստեղծագործությամբ: Էս նկարն էլ չէի ստանա, եթե խոսք չտայի, որ Մինեսոտայից եկած էն պցին կդզեմ հետը: Գժվում էր նրա համար... Կտղած շան պես ընկել էր մեր հետևից... Ազատվելու ճա՛ր չկար էդ քածից: Կյանքս կերավ: Արդեն վախենում էի,

թվայնացրել է 1915.info կայքը

թե պուց բերեի էստեղ, մեկ էլ տեսար՝ ներս ընկավ: Գողեգող էի տուն գալիս ու սենյակ մտնեի թե չէ՝ դուռն էի վռազ կողպում... Նա ու էդ ջորջիացի բոզը հոգիս հանում են: Մեկն անընդհատ կտղած է, մյուսն էլ՝ սոված: Չեմ սիրում սոված կնկա հունցել: Ոնց որ ուտելիքը մի կողմից խցկես, մի կողմից էլ՝ հանես... Վայ, բան հիշեցի... Էն կապույտ քսուքն ո՞ւր եմ դրել: Կարևոր է: Դու չե՞ս ընկել: Սուսանակից վերան բան է: Չգիտեմ էլ՝ ոնց կպա: Անցած շաբաթ էնքան կնիկ եմ բերել, որ հաշիվը կորցրել եմ: Անհասկանալի է. ախր բոլորն էլ մաքուր էին երևում: Բայց դե գիտես, էլի...»:

Սպասուհին նրա բոլոր իրերը կիտել է մայթին: Հյուրանոցի տերը ժանգոտ դեմքով հետևում է: Երբ ամեն ինչ բեռնում ենք տաքսին, հազիվ է տեղ մնում երկուսիս համար: Ճամփա ընկնելուն պես Վան Նորդենը մի թերթ է հանում և սկսում իր կաթսաներն ու թավաները փաթաթել. նոր հյուրանոցում եփութափը խստիվ արգելված է: Մինչև տեղ կհասնենք՝ նրա բեռների կապերը լրիվ քանդվում են: Դա էլ ոչինչ, եթե հյուրանոցի տիրուհին գլուխը չհաներ դռնից մեր մոտենալու վրա: «Աստվա՛ծ իմ,– բացականչում է նա,– ա՛յ քեզ կրակ: Սա ի՞նչ է նշանակում»: Ահաբեկված Վան Նորդենին մնում է միայն կմկմալ. «C'est moi... c'est moi, Madame[1]!»: Եվ դառնալով դեպի ինձ՝ փրփրած ֆշշացնում է. «Էս կչկչան հավի՛ն նայիր: Դեմքը տեսա՞ր: Սրա ձեռին ես կտանջվեմ»:

Հյուրանոցը տեղավորված է մի անշուք վաճառավայրի խորքում և իր ուղղանկյուն հատակագծով ավելի շատ նման է ժամանակակից բանտի: Նախասրահն ընդարձակ է ու մթին, չնայած հախճասալե պատերից անդրադարձող վառ լույսին: Պատուհաններից թռչնավանդակներ են կախված, և ամենուրեք արծնապատ ցուցանակներ կան, որոնք հնաոճ լեզվով խնդրում են հյուրերին չանել այսինչ բանն ու չմոռանալ այնինչ բանը: Համարյա անբասիր մաքրություն է, բայց և բացարձակ աղքատություն, խեղճություն ու ողբալիություն: Երեսապատ աթոռները մետաղալարով ամրացված են, մի բան, որ դրանց էլեկտրական աթոռի անսախորժ նմանություն է տալիս: Վան

[1] Ես եմ... ես եմ, տիկին (ֆրանս.):

Նորդենի զբաղեցնելիք սենյակը հինգերորդ հարկում է: Սանդուղքով բարձրանալիս նա ինձ տեղյակ է պահում, որ ժամանակին Մոպասանն է ապրել էստեղ: Եվ տեղնուտեղն էլ նկատում է, որ միջանցքներից տարօրինակ հոտ է գալիս: Հինգերորդ հարկում մի քանի պատուհաններ ապակի չունեն: Մի պահ կանգ ենք առնում՝ բակի կենվորներին նայելու: Ճաշի ժամն է մոտեցել, և մարդիկ խառնիխուռն վերադառնում են իրենց սենյակները հոգնահար ու վհատ տեսքով, որ հատուկ է ապրուստն ազնվորեն վաստակողներին: Լուսամուտների մեծ մասը լայն բաց են. անշուք սենյակները հար և նման են հորանջող բերանների: Սենյակների բնակիչները ևս հորանջում են կամ էլ քորվում: Նրանք շարժվում են հույլ անտարբերությամբ և, ըստերևույթին, աննպատակ. հոգեկան հիվանդների են հիշեցնում:

Հենց որ թեքվում ենք դեպի 57 համարը, հենց աչքներիս առաջ մի դուռ է հանկարծ բացվում, և հայտնվում է խճճված մազերով ու մոլագարի աչքերով ինչ-որ ջադու: Ապշանքից քարանում ենք: Մի պահ երեքս էլ ցցված ենք մնում՝ անզոր շարժվելու կամ կամ ինչ-որ խելամիտ քայլ անելու: Ջադուի թիկունքում աչքս ընկնում է խոհանոցի սեղանին, որի վրա մորեմերկ երեխա է պառկած, մի նվազ, պստլիկ լակոտ՝ փետրահան ճտի պես: Վերջապես, պառավը վերցնում է իր կողքի կեղտաջրի դույլն ու շարժվում առաջ: Մենք, մի կողմ կանգնած, թողնում ենք, որ անցնի, և նրա հետևում դուռը փակվելու ժամանակ փոքրիկը սուր ճչում է: Սա 56 համարն է, 57-ի ու դրա միջև զուգարանն է, որտեղ էլ պառավ ջադուն կեղտաջուրը թափում է:

Աստիճանները բարձրանալուց հետո Վան Նորդենը սուսուփուս է: Բայց նրա հայացքները պերճախոս են: Երբ բացում ենք 57 համարի դուռը, պահի տակ ինձ թվում է՝ խելքս թռցնում եմ: Հենց մուտքի դիմաց, կանաչ մարմաշով ծածկված և քառասունհինգ աստիճանի անկյան տակ թեքված, մի հսկայական հայելի է կախած գրքերով լի մանկասայլակի վերևում: Վան Նորդենը նույնիսկ չի ժպտում. փոխարենն անփութորեն մոտենում է մանկասայլակին և, մի գիրք վերցնելով, սկսում է հպանցիկ թերթել՝ հանրային գրադարան մտած մարդու պես, որը, առանց մտածելու, առաջանում է դեպի

թվայնացրել է 1915.info կայքը

մոտակա գրադարակը: Երևի սա ինձ վրա պակաս արտառոց տպավորություն թողներ, եթե, միաժամանակ, անկյունում հեծանվի մի զույգ ղեկ չնկատեի: Դրանք էնքան հանգիստ ու խաղաղ ընկած են, ասես տարիներով նիրհել են էստեղ, և հանկարծ ինձ սկսում է թվալ, թե մենք էլ ենք արդեն աննահման երկար կանգնած էս սենյակում, հենց էս դիրքով, թե քարացել ենք մի անթոթափելի երազի գրկում, այնինչ երազը կարող է ընդհատվել նվազագույն շարժումից, մինչև անգամ աչքը թարթելուց: Բայց առավել զարմանալին ուրիշ բան է. որտեղից-որտեղ միտքս է գալիս մի իսկական երազ, որն օրերս եմ տեսել, երազ, որտեղ Վան Նորդենը ճիշտ սրա պես անկյունում էր, միայն թե հեծանվի ղեկերի փոխարեն ծնկները գրկած կին կար: Նա կանգնել էր կնոջ գլխավերևում՝ դեմքի լարված, անհամբեր արտահայտությամբ, որը հայտնվում է, երբ սիրտն ինչ-որ բան է շատ ուզում: Փողոցը՝ դեպքի վայրը, աղոտ է տպավորվել, միայն երկու պատերի անկյունն եմ պարզ հիշում և կնոջ կծկված կերպարանքը: Վան Նորդենը շեշտակի, գազանի պես վրա պրծավ՝ հաշիվ չտալով իրեն հետևանքների մասին, և միայն նպատակին հասնելու վճռականությամբ լի: Նրա աչքերը կարծես ասեին. «Թեկուզ ինձ սպանես էլ հետո, թող մտցնեմ... Պիտի մտցնե՛մ»: Նա կռացավ կնոջ վրա, երկուսի գլուխներն էլ դիպան պատին, բայց նրա ահռելի էրեկցիայով պարզապես անհնար էր ներս թափանցել: Ու մեկ էլ Վան Նորդենը նողկանքի արտահայտությամբ, որ նրա դեմքից անպակաս է, վեր կացավ և սկսեց շորերը կարգի բերել: Նա հեռանալու վրա էր, երբ աննպաստելիորեն տեսավ, որ իր առնանդամն ընկած է մայթին: Ցախավելի կոթի չափ կլիներ: Անհոգ վերցրեց ու թևատակին դրեց: Նրա գնալու ժամանակ նկատեցի, որ էդ մահակի ծայրից երկու մեծ գնդեր են կախ ընկած, լալայի սոխուկների նման, և լսեցի նրա մրմնջոցը քթի տակ. «Ծաղկաթաղարներ... ծաղկաթաղարներ»:

Գալիս է սպասավորը՝ հևիհև ու քրտնած: Վան Նորդենն անհաղորդ հայացքով նայում է նրան: Հիմա էլ տիրուհին է լույս ընկնում և մոտենալով ուղիղ Վան Նորդենին՝ վերցնում է գիրքը նրա ձեռքից,

գցում մանկասայլակի մեջ ու առանց մի խոսք ասելու՝ սայլակը քշում միջանցք:

«Գժանոց է»,– ասում է Վան Նորդենը տառապյալի ժպիտով: Էնքան անորոշ, աննկարագրելի ժպիտ է, որ մի պահ երազը ասես վերադառնա, և ինձ թվում է՝ մենք կանգնած ենք մի երկար միջանցքի ծայրին, որտեղ ալեձև հայելի կա: Եվ էս միջանցքն ի վար, աղոտ լապտերի պես իր տառապանքը տարուբերելով, Վան Նորդենն է օրորաքայլ գնում, ներսուդուրս անում օրորաքայլ, որովհետև մերթ էստեղ, մերթ էնտեղ ինչ-որ դուռ է բացվում, և մի ձեռք ներս է քաշում նրան, իսկ հետո աքացին դուրս է շպրտում: Ինչքան շատ է գնում, էնքան նրա տառապանքն ավելի է մեծանում՝ հիշեցնելով հեծանվորդների լապտերները, որ նրանք պահում են ատամների արանքում թաց ու սայթաքուն սալահատակով անցնելիս: Անշուք սենյակները ելումուտ անելուց հետո, երբ նա նստում է վերջապես, աթոռը փուլ է գալիս: Իսկ երբ ճամպրուկն է բացում, միայն ատամի խոզանակն է, ուրիշ ոչինչ: Ամեն սենյակում հայելի կա, որի առաջ նա կագնում է ուշի-ուշով ու կատաղությունից ատամները կրճտացնում, և անընդմեջ կրճտոցից, քրթմնջյունից ու փնթփնթոցից, հայհոյանքից ու մոթմոթոցից նրա ծնոտը դուրս է ընկնում, մի կերպ կախված է, և երբ նա ձեռքը տանում է կզակին, ծնոտը պոկ է գալիս, իսկ նա, իր հանդեպ ունեցած նողկանքից, կոխկրտում է սեփական ծնոտը, ջարդուփշուր անում հաստ ներբանների տակ:

Դեռ իրերն են բերում: Ամեն ինչ սկսում է առաջվանից էլ ցնորական տեսք ստանալ. մանավանդ երբ նա իր մարզազսպանակը կցան է տալիս մահճակալի սնարին և անցնում Ջանդովի վարժություններին: «Սրտովս է էստեղ»,– ասում է՝ ժպտալով սպասավորին: Հանում է պիջակն ու ժիլետը: Սպասավորը, ապշած, նայում է նրան. մի ձեռքին ճամպրուկ է, մյուս ձեռքին՝ սրսկիչը: Ես, նախասենյակ քաշված, կանաչ մարմաշով հայելին եմ բռնել: Ոչ մի բան չկա, որ գործնական նշանակություն ունենա: Նախասենյակն ինքնին աննպատակ է թվում. հաշտն ախորի ինչի՞ն է: Ճիշտ նույն զգացումն ունեմ «Կոմեդի Ֆրանսեզ» կամ «Պալե Ռուայալ» թատրոն մտնելիս. հնոտիքի,

թվայնացրել է 1915.info կայքը

իջեցնովի դռների, զենքերի, կիսանդրիների ու մոմած հատակների, լուսակալների ու զրահապատ ասպետների, անաչք արձանների ու ապակե արկղերում պահվող սիրային նամակների աշխարհ է: Ինչ-որ բանի նման է, բայց ոչ մի իմաստ չունի, ոնց որ կալվադոսի կիսատ շիշը դատարկելը, քանի որ ճամպրուկում դնելու տեղ չկա:

Սանդուղքով բարձրանալիս, ինչպես արդեն նշեցի, Վան Նորդենը հիշատակեց, որ Մոպասանն է էստեղ ապրել: Ջուգադիպությունը կարծես տպավորություն է գործել նրա վրա: Կուզենար հավատալ, թե հենց իր սենյակում են ծնունդ առել Մոպասանի սարսռազդու պատմությունները, որոնց վրա էլ հենված է նրա հեղինակությունը: «Խոզի պես են ապրել թշվառ շան որդիք»,- ասում է նա: Մենք նստած ենք կլոր սեղանի մոտ դրված հարմարավետ հին բազկաթոռներին, որոնք կապկպված են պարանով ու լարերով: Մահճակալը կողքներիս է, էնքան մոտ, որ կարելի է ոտքերը վրան դնել: Պահարանն անկյունում է, մեր թիկունքում. սա էլ է մոտ, ձեռքդ կիասնի: Վան Նորդենը լվանալու ենթակա իր շոր-մորը դատարկել է սեղանին, նստել ենք՝ ոտքներս թաղած նրա կեղտոտ գուլպաների ու վերնաշապիկների մեջ, մեզնից գոհ՝ ծխում ենք: Տիրող խեղճությունը կարծես շահել է նրա սիրտը. գոհ է երևում: Երբ վեր եմ կենում, որ լույսը վառեմ, նա առաջարկում է թուղթ խաղալ, իսկ հետո՝ գնալ ուտելու: Կեղտոտ շորերը շաղ տված, կիրակնօրյա մարզազգեստը՝ ջահակալից կախ՝ նստում ենք լուսամուտի մոտ ու մի քանի ձեռք երկհոգանոց բեզիք խաղում: Վան Նորդենն իր ծխամորճը պահել է և բերանը ծամելու ծխախոտ լցրել: Մերթընդմերթ լուսամուտից մեծ-մեծ կտորներով դարչնագույն խյուս է դուրս թքում, որը ճլթոցով շրմփում է մայթին: Շատ գոհ է աչքիս:

– Ամերիկայում,- ասում է,- երազ էլ չի գա, թե սրա պես գոմում ես ապրում: Նույնիսկ որ թափառական էի, ավելի լավ տեղեր էի գիշերում: Բայց սրանց մոտ կարծես սովորական բան է, ոնց որ, ասենք, գիրք կարդաս: Եթե մի օր տուն վերադառնամ, էս կյանքը, վատ երազի նման, մտքիցս կգնա: Երևի հին կյանքս նորից կսկսեմ, հենց էն պահից, երբ մեկնեցի... դե, եթե վերադառնամ, էլի: Մեկ-մեկ,

անկողնում պառկած, մտովի անցյալիս եմ դառնում. էնքան վատ ու կենդանի է աչքիս, որ պիտի ինձ թափ տամ, հասկանամ՝ որտեղ եմ, ինչ եմ: Մանավանդ եթե կողքիս կին կա: Ամենից լավ կինն է օգնում, որ անջատվեմ: Իմ ուզած-չուզածը նրանցից դա է՝ ինքնամոռացում: Երբեմն էնքան եմ տարվում ցնորքներով, որ չեմ էլ հիշում, թե էդ պցի անունն ինչ էր, կամ որտեղ եմ դրան կպցրել: Խնդալու է, չէ՞: Առավոտյան արթնանալիս լավ է, որ կողքիդ թարմ, տաքուկ մարմին կա: Մաքրության զգացում է բերում: Ոգի ես առնում մի տեսակ... մինչև որ սկսվում է նույն լացուկոծը սիրո ու մնացածի մասին: Ինձ կասե՞ս, թե պցերն ինչի են էդքան սիրուց խոսում: Լավ որձը, արի ու տես, հերիք չի դրանց, հոգիդ էլ են ուզում...

«Հոգի» բառը, որ հաճախ է երևան գալիս Վան Նորդենի ինքնախոսությունների մեջ, սկզբում զվարճալի տպավորություն էր թողնում ինձ վրա: Երբ էլ որ էդ բառը լսեի նրա շուրթերից, հիստերիկ ծիծաղ կբռներ. մի տեսակ կեղծ էր հնչում, մանավանդ դարչնագույն խյուսը թքելու հետ մեկտեղ, որը հետք էր թողնում բերանի անկյունում: Եվ քանի որ ես չէի քաշվում նրա երեսին ծիծաղելուց, էս փոքրիկ բառը լեզվից թոցնելուն պես Վան Նորդենը, սովորաբար, դադար էր տալիս, որ մի լավ հոհոամ, իսկ հետո, ասես ոչինչ էլ չէր պատահել, շարունակում էր իր մենախոսությունը՝ ավելի ու ավելի հաճախ կրկնելով բառը և ամեն անգամ՝ ավելի փաղաքուշ շեշտով: Կանայք ուզում են տիրանալ իր հոգուն. սա էր նա պարզաբանում ինձ: Բացատրում էր նորից ու նորից՝ շարունակ անդրադառնալով նույն բանին, ինչպես մտագարը՝ իր սևեռուն մտքին: Ինչ-որ իմաստով՝ Վան Նորդենը խախտված է, համոզված եմ: Նրա ամենամեծ մտավախությունը մենակ մնալն է, և էս վախն էնքան խորն ու մշտական է նրա մեջ, որ անգամ կնոջ վրա պառկած, անգամ մերձեցման պահին անկարող է ազատվել իր համար սարքած բանտից:

– Ինչ ասես, որ չեմ փորձում,– բացատրում է նա ինձ:– Մեկ-մեկ նույնիսկ հաշվում եմ կամ ինչ-որ փիլիսոփայական խնդրի շուրջը մտմտում, բայց ոչինչ չի օգնում: Կարծես երկու մարդ լինեմ, ու

թվայնացրել է 1915.info կայքը

նրանցից մեկը անընդհատ հետևում է մյուսին: Վայ, հո չե՞մ գազազում, պատրաստ եմ ինձ սպանել... մի իմաստով՝ հենց դա էլ կատարվում է ամեն անգամ օրգազմի հասնելիս: Ասես վերանամ մի պահ: Էդ երկու հոգուց ոչ մեկը չի մնում... Ամեն ինչ չքանում է... մինչև անգամ՝ պուցը: Հաղորդություն ստանալու պես բան է: Ազնիվ խոսք եմ ասում: Դրանից հետո մի քանի վայրկյան հոգևոր պայծառացման մեջ եմ... ու միգուցե դա ընդմիշտ շարունակվեր,– ո՛վ գիտի,– եթե չլինեին կողքիդ պառկած կինը, հետո՝ սրսկիչն ու հոսող ջուրը... բոլոր էդ մանրամասները, որ քեզ դարձնում են անհուսալիորեն ինքնամփոփ ու անհուսալիորեն մենակ: Եվ հենց ազատության մեն մի ակնթարթի համար էլ ստիպված ես լսել էդ ամբողջ բարբաջանքը սիրո մասին... Մեկ-մեկ ցնդելս գալիս է... ուզում եմ միանգամից դուրս շպրտել դրանց... Պատահում է՝ էդպես էլ անում եմ: Բայց չեն խրատվում: Ընդհակառակը, դա նրանց դուր է գալիս: Ինչքան անտեսում ես, էնքան ավելի են հետևիցդ ընկնում: Կանանց մեջ ինչ-որ այլասերված բան կա... հոգով բոլորը մազոխիստ են:

– Է՛հ, ուրեմն քո ուզածն ի՞նչ է կնոջից,– հարցնում եմ:

Նա էլի ձեռքերն է շարժում, ներքևի շրթունքը կախ գցում: Լիովին հուսաբեկ տեսք ունի: Երբ, վերջիվերջո, նրան հաջողվում է մի քանի կցկտուր նախադասություն կմկմալ, դրանք արտաբերում է իր խոսքերի լիակատար ապարդյունության համոզմունքով:

– Ես ուզում եմ անձնատուր լինել կնոջը,– վրա է բերում նա:– Ուզում եմ, որ կինն ինձ պոկի տանի ինքս ինձնից: Բայց դրա համար նա պետք է ավելի լավը լինի, քան ես, պետք է խելք էլ ունենա, ոչ թե միայն ծակ: Նա պետք է հավատացնի ինձ, որ իր կարիքն ունեմ, որ չեմ կարող առանց իրեն ապրել: Այ, էդ տեսակ պուց կճարե՞ս ինձ համար, հա՞: Թե ճարեցիր, գործս կտամ քեզ: Էդ դեպքում մեկ է՝ ինչ կկատարվի ինձ հետ. ոչ աշխատանքի հարկ կունենամ, ոչ ընկերների, ոչ գրքերի, ոչ էլ ուրիշ բանի: Ո՛ւր էր, թե կարենար համոզել, որ աշխարհում ինձնից կարևոր բան կա: Տեր Աստված, ատո՛ւմ եմ ինձ: Բայց էդ շան ծիծ կերածներին ավելի շատ եմ ատում, որովհետև ոչ մեկը մի կծած կորեկ չարժի:

Դու կարծում ես, թե ինձ սիրում եմ,– շարունակում է նա:– Հենց դրանից է երևում, որ լավ չես ճանաչում: Գիտեմ, ես առանձնահատուկ տղա եմ: Եթե իմ մեջ ինչ-որ բան չլիներ, էս խնդիրները չէի էլ ունենա: Բայց չեմ կարողանում ինքնարտահայտվել. դա է մաշում ինձ: Մարդիկ մտածում են՝ պցի մեռած եմ: Այ թե ինչ մակերեսային են էդ խելոք գլուխները, որ ամբողջ օրը, սրճարաններում բազմած, հոգեբանության որոճն են անում... Վատ չի հնչում, չէ՞. հոգեբանության որոճ: Գրի առ ինձ համար: Կօգտագործեմ մյուս շաբաթվա նյութիս մեջ... Իմիջիայլոց, Շտեկել կարդացե՞լ ես: Քո կարծիքով՝ բանի նմա՞ն է: Ինձ թվում է՝ իր հիվանդների դեպքերն է պատմում, ուրիշ ոչինչ: Երանի սիրտ անեի, հոգեվերլուծողի մոտ գնայի... իհարկե՝ լավ մասնագետի: Քո ընկեր Բորիսի նման այծամորուք ու սերթուկավոր փինաչիների հետ չեմ ուզում գործ բռնել: Ո՛նց ես դիմանում դրանց: Գլուխդ չի՞ գնում: Ում հետ պատահի՝ խոսում ես, նկատել եմ: Թքած ունես: Միգուցեև ճիշտը դու ես: Երանի ես էսքան քթի մազ չլինեի: Բայց, տեր Աստված, դողս բռնում է էդ մուտտաո ջհուդիկներին տեսնելիս, որ թրև են գալիս «Դոմ» սրճարանի շուրջը: Ծեծված ճշմարտություններ են դուրս տալիս: Եթե ես ամեն օր խոսեի քեզ հետ, երևի սիրտս կարգին թեթևանար: Դու լսելու ընդունակ ես: Գիտեմ, ես տանձիդ էլ չեմ, բայց համբերատար ես: Ու ինչ-որ տեսություններ էլ չունես, որ վզիս փաթաթես: Կաչկա՝ հետո ամեն ինչ գրի ես առնում նոթատետրիդ մեջ: Լսիր, ինձ համար մեկ է, թե ինչ կգրես իմ մասին, բայց որպես պցի մեռած մի ներկայացրու, էլի. դա շատ պարզունակ է: Մի օր իմ մասին ես գիրք կգրեմ, մտքերս կշարադրեմ: Չէ, խոսքը պարզապես ինքնավերլուծության մասին չի... Ինձ կդնեմ վիրահատական սեղանին ու ամբողջ փորոտիքս դուրս կթափեմ... մինչև վերջին աղիքը: Երբևէ մեկնումեկը նման բան արե՞լ է: Ի՞նչ ես ժպտում որ: Միամի՞տ է հնչում:

Ժպտում եմ, որովհետև հենց որ շոշափում ենք նրա ապագա գրքի թեման, ամեն ինչ անհեթեթ բնույթ է ստանում: Հերիք է՝ նա ասի՝ «իմ գիրքը», որ աշխարհն անմիջապես նեղանա, փոքրանա՝ դառնալով մասնավոր Վան Նորդեն և ընկ.: Գիրքը պետք է միանգամայն

թվայնացրել է 1915.info կայքը

յուրօրինակ լինի, միանգամայն կատարյալ: Ահա թե ինչու, ի թիվս այլ բաների, անկարելի է, որ նա նույնիսկ ձեռնամուխ լինի դրան: Գլխում միտք ծնվի թե չէ՝ կասկածի տակ է առնում: Մտաբերում է, որ Դոստոևսկին, Համսունը կամ մի ուրիշը օգտագործել են: «Ես չեմ ասում, թե ուզում եմ նրանցից լավը լինել, բայց կուզենայի տարբերվել»,– բացատրում է Վան Նորդենը: Ուստի իր գիրքը ձեռնարկելու փոխարեն նա կարդում է մի գրողին մյուսի հետևից, որպեսզի լիովին վստահ լինի, թե ուրիշի բոստանը քար չի գցի: Եվ ինչքան շատ է կարդում, էնքան ավելի արհամարհկոտ է դառնում: Ոչ մեկը նրան չի գոհացնում, ոչ մեկը չի հասել կատարելության այն աստիճանին, որը ինքն է սահմանել իր համար: Եվ, իսպառ մոռանալով, որ մի գլուխ անգամ չի գրել, Վան Նորդենը ներողամիտ մեծահոգությամբ է խոսում նրանց մասին, կարծես իր հեղինակած գրքերը մի ամբողջ գրադարակ են կազմում, գրքեր, որ քաջածանոթ են բոլորին, հետևաբար դրանց վերնագրերը ավելորդ է հիշատակել: Ինչևէ, թեև Վան Նորդենը երբեք գիտակցաբար չի խաբում, պարզ է՝ մարդիկ, ում գլուխը նա տանում է իր փիլիսոփայական, քննադատական զեղումներով ու տրտունջներով, ինքնին հասկանալի են համարում, որ էս անփույթ դիտողությունների հետևում ծանրակշիռ վաստակ կա: Խոսքը վերաբերում է հատկապես ջահել ու անխելք կույսերին, որոնց նա, հրապուրելով, տուն է բերում՝ իբր իր բանաստեղծությունները կարդալու և խորհուրդ հարցնելու համար: Առանց խղճի խայթի կամ ամոթի փոքրիշատե զգացման՝ սրանց թղթի մի կեղտոտ կտոր է տալիս, որի վրա մի քանի տող է խզբզած՝ նոր բանաստեղծության «ատաղձը», ինչպես ինքն է կոչում, և ամենայն լրջությամբ պահանջում է անկեղծորեն կարծիք հայտնել: Քանի որ, սովորաբար, ասելիք չի լինում, այլ՝ լիակատար տարակուսանք ծայրահեղորեն անիմաստ տողերից, Վան Նորդենն օգտվում է առիթից՝ արվեստի իր տեսությունը ներկայացնելու, մի տեսություն, որը հանպատրաստից հորինվում է՝ հանգամանքներին համապատասխան: Սույն ասպարեզում նա էնպիսի վարպետության է հասել, որ անցումն Էզրա Փաունդի «Երգերից» անկողին նույնքան պարզ է ու

բնական, որքան ելևէջումը մի տոնայնությունից մյուսը: Այլապես, փաստորեն, աններդաշնակություն է առաջանում, ինչը և պատահում է ժամանակ առ ժամանակ, երբ նա սխալվում է էն դատարկագլուխների առումով, որոնց «ապիկար» է անվանում: Նման խառնվածքի տերը, բնականաբար, դժկամությամբ է անդրադառնում իր ճակատագրական սխալներին: Բայց երբ խոստովանության ծայրը բացում է, չափից դուրս անկեղծ է, ասես իր ապաշնորհության պատմությունն այլասերված հաճույք պատճառի նրան: Օրինակ, մի կին կա, որին տասը տարի կլինի՝ փորձում է ձեռքը գցել, նախ՝ Ամերիկայում, իսկ հետո՝ էստեղ՝ Փարիզում: Սա հակառակ սեռի միակ անձն է, որի հետ սրտակից, բարեկամական հարաբերություններ ունի: Կարծես թե ոչ միայն հավանում, այլև հասկանում են իրար: Սկզբում ինձ թվում էր, որ եթե իրոք կարենար իրենով անել էս արարածին, հարցը կլուծվեր: Բարեհաջող միության բոլոր նախադրյալները կային, բացի հիմնականից: Բեսին յուրովի էնքան անսովոր մարդ է համարյա, ինչքան՝ Վան Նորդենը: Տղամարդուն տրվելը նրա համար նույն չնչին նշանակությունն ունի, ինչ ճաշից հետո մատուցվող անուշեղենը: Սովորաբար, ինքն է ջոկում սրտի ուզածին և ինքն էլ առաջարկ անում: Տեսքից վատը չի, բայց չես էլ ասի, թե լավն է: Ընտիր մարմին ունի, որ կարևորն է, և սիրում է իր մարմինը, ինչպես ասում են:

Էս երկուսն էնքան մտերիմ էին, որ երբեմն, նրա հետաքրքրասիրությունը բավարարելու համար (ու նաև իր կտրիճությամբ գրգռելու սին հույսով) Վան Նորդենը սեփական սիրային սեանսների ժամանակ նրան թաքցնում էր պահարանում: Երբ ամեն ինչ ավարտվում էր, Բեսին դուրս էր գալիս թաքստոցից, և նրանք հանգամանորեն քննարկում էին եղած-չեղածը՝ բացի «տեխնիկայից», համարյա ուրիշ ոչինչ ուշադրության չարժանացնելով: «Տեխնիկան» Բեսիի սիրած բառերից մեկն էր, համենայն դեպս՝ էս քննարկումներում, որոնք պատիվ ունեի վայելելու: «Իմ տեխնիկայի ի՞նչն է սխալ»,– կհարցներ Վան Նորդենը: Իսկ Բեսին կպատասխաներ. «Շատ կոպիտ ես: Եթե միտք ունես ինձ ծոցդ դնել, պիտի ավելի նուրբ դառնաս»:

թվայնացրել է 1915.info կայքը

Նրանց միջև, ինչպես նշեցի, էնքան կատարյալ փոխըմբռնում կար, որ հաճախ, երբ մեկն անց կեսին գալիս էի Վան Նորդենի մոտ, Բեսիին տեսնում էի մահճակալին նստած, ծածկոցը հետ գցած էր լինում, իսկ Վան Նորդենը նրան համոզում էր իր անդամը շոյել... «Մի քանի անգամ, գուրգուրանքով, ձեռքդ տար ու բեր,– ասում էր նա,– որ վեր կենալու քաջություն ունենամ»: Կամ էլ հորդորում էր փչել իր փայտիկին, իսկ երբ Բեսին չէր համաձայնում, ընդոստ շարժումով հենց ինքն էր ճանկում իր ունեցվածքն ու ճաշի զանգի պես թափահարում, և երկուսով կոտորվում էին ծիծաղից: «Էս շան աղջկա հախից ես եկողը չեմ,– ասում էր նա:– Չի հարգում ինձ: Որովհետև սիրտս բաց եմ արել»: Իսկ հետո կտրուկ ավելացնում էր. «Ի՞նչ կարծիքի ես էն շիկահերի մասին, որ երեկ ցույց տվի»: Բեսիին էր դիմում իհարկե: Իսկ Բեսին ձեռ էր առնում նրան, թե ճաշակ չունի: «Դե լավ, էլ չսկսես»,– ասում էր Վան Նորդենը: Հետո, աշխուժորեն, երևի հազարերորդ անգամ, որովհետև սա արդեն վաղուցվա կատակ էր դարձել, վրա էր բերում. «Լսիր, Բեսի, մի բան չանե՞նք ոտի վրա: Դե, մի թեթև, էլի... Հը՞»: Եվ երբ արժանանում էր սովորական պատասխանին, ավելացնում էր նույն եղանակով. «Իսկ էս մարդու մասի՞ն ինչ կասես: Գոնե նրա՛ն տուր»:

Բեսիի խնդիրը սա էր. նա չէր ուզում կամ չէր հանդուրժում, որ իրեն պարզապես էգի տեղ դնեին: Կրքի մասին էր խոսում, կարծես դա նոր հորինված բառ էր: Նա ամեն ինչին էլ կրքոտ էր վերաբերվում, նույնիսկ մենումեկի հետ պառկելու պես անկարևոր բանին: Պետք է իր հոգին դներ դրա մեջ:

– Ես էլ եմ մեկ-մեկ կրքոտ դառնում,– ասում էր Վան Նորդենը:

– *Դու*, հա՛,– ասում էր Բեսին:– Դու հալից ընկած սատիր ես: Կրքի մասին գաղափար էլ չունես: Էրեկցիան կրքի հետ ես շփոթում:

– Լավ, ենթադրենք՝ կիրքը դա չի... բայց առանց էրեկցիայի՝ կրքոտ չես լինի, ճիշտ է, չէ՞:

Ռեստորան գնալու ճանապարհին ես միտք եմ անում Բեսիի հետ կապված էս ամեն ինչի և մյուս կանանց մասին, որոնց Վան Նորդենն օրնիբուն քարշ է տալիս իր մոտ: Էնքան եմ վարժվել նրա

մենախոսություններին, որ առանց մտորումներս ընդհատելու՝ մեքենայաբար պատասխան եմ տալիս, երբ նրա ձայնը ականջիս մարում է: Սա զուգերգ է, և առավել ևս, ինչպես շատ զուգերգերում, մեկը պարզապես ուշի-ուշով ականջը պահում է իր մուտքի ազդանշանին: Վան Նորդենի ազատ երեկոն է, և ես խոստացել եմ ընկերակցել, արդեն ինձ նախապատրաստել եմ նրա զեղումներին: Գիտեմ, իրիկվա վերջում շունչս բերանս կհասնի, ուղղակի եթե բախտս բերի, այսինքն՝ եթե ինչ-որ պատրվակով նրանից մի քանի ֆրանկ պոկեմ, զուգարան գնա թե չէ՝ կսկեմ սուս-փուս: Բայց արանքը ճղելու իմ տրամադրվածությունը նրան քաջ հայտնի է, և վիրավորվելու փոխարեն նա դրա դեմն առնում է ընդամենն իր փողը պինդ պահելով: Թե սիգարետի փող խնդրեմ, համառում է, որ ինքն էլ գա հետս առնելու: Ոչ մի րոպե պիտի մենակ չմնա: Նույնիսկ եթե նրան հաջողվի կին կպցնել, սարսափում է սրա հետ առանձին մնալու մտքից: Հնար լիներ՝ ինձ կստիպեր նստել սենյակում, քանի դեռ ինքը գործի վրա է: Ոնց որ սափրվելիս է խնդրում, թե՝ սպասիր:

Ազատ երեկոյան Վան Նորդենի գրպանում, ընդհանրապես, ամենաքիչը մի հիսուն ֆրանկ լինում է, բայց սա չի նշանակում, թե նա պարտք չի անի, եթե հարմար թեկնածու պատահի: «Ողջույն,- ասում է,- մի քսան ֆրանկ տուր, էլի... պետք է»: Դեմքին էլ հուսահատ արտահայտություն է: Եթե մերժման հանդիպի, լկտիանում է: «Դե լավ, մի բաժակ բան առ թեկուզ»: Հենց որ խմիչքն ստանա, փափկում է. «Լսիր, գոնե հինգ ֆրանկ տուր... լավ, երկու...»: Մենք բարից բար ենք գնում՝ մի քիչ զվարճանալու հույսով ու դեսից-դենից մի քանի ֆրանկ հավաքելով:

«Կուպոլ»-ում դեմ ենք առնում թերթում աշխատող մի հարբեցողի՝ վերնահարկի տղերքից մեկին: Մեզ հայտնում է, որ խմբագրատանը դեպք է պատահել: Սրբագրիչն ընկել է վերելակի հորը: Հույս չկա, թե կապրի:

Վան Նորդենը ցնցված է սկզբում, խորապես ցնցված: Բայց երբ իմանում է, որ խոսքն անգլիացի Փեքովերի մասին է, թեթևացած

թվայնացրել է 1915.info կայքը

շունչ է քաշում: «Թշվառ շան որդի,– ասում է,– ավելի լավ է մեռնի, քան ապրի: Էս երկու օրն էլ նոր ատամներ էր դրել...»:

Նոր ատամների հիշատակումը վերնահարկցու աչքերից արտասուք է բերում: Լացակումած պատմում է պատահարի հետ կապված միջադեպի մասին: Սրտին ծանրացել է, էս միջադեպն ավելի շատ է սրտին ծանրացել, քան դժբախտությունն ինքը: Ասում են՝ երբ Փեքովերը գլորվել է, դիպել հորի հատակին, մինչև օգնության կհասնեին՝ ուշքի է եկել: Չնայած ոտքերը կոտրվել են, կողոսկրերը՝ ջարդվել, մի կերպ չորեքթաթ է տվել ու խարխափելով՝ դնովի ատամները փնտրել: Շտապօգնության մեքենայում էլ կորցրած ատամների ողբն է արել զառանցանքի մեջ: Պատահածը թե՛ սրտաճմլիկ էր, թե՛ ծիծաղաշարժ: Վերնահարկի աշխատողը պատմելիս չգիտեր՝ խնդալ, թե լալ: Շատ փափուկ պահ էր. մի չնչին սխալի համար դրա պես հարբեցողը շիշը գլխիդ փշուր-փշուր կաներ: Նա Փեքովերի հետ առանձնապես մոտ չէր, ճիշտն ասած՝ դժվար էլ թե ոտք դրած լիներ սրբագրատուն. վերնահարկի և ներքնահարկի աշխատողների միջև անտեսանելի պատ կար: Բայց հիմա, մոտալուտ մահվան շունչն զգալով, նա ուզում էր իր ընկերական վերաբերմունքը ցուցադրել: Ուզում էր արցունք թափել՝ հնարավորին չափ ցույց տալ, թե ինչ կարգին տղա է ինքը: Իսկ ես ու Ջոն, Փեքովերին լավ ճանաչելով, գիտեինք, որ նա ոչ մի բանի էլ արժանի չէր, նույնիսկ՝ մի քանի կաթիլ արցունքի, ու նեղվում էինք հարբածի էս գորովանքից: Կուզեինք դա իրեն ասել, բայց սրա նմանի հետ չարժեր անկեղծանալ: Ստիպված պիտի ծաղկեպսակ առնեինք, թաղման գնայինք ու սգվոր ձևանայինք: Սրան էլ պիտի շնորհավորեինք իր գրած սրտառուչ մահախոսականի համար: Մի քանի ամիս էդ սրտառուչ մահախոսականն ամեն տեղ հետը քարշ կտար՝ պարծենալով, թե ինչ լավ է գործից գլուխ հանել: Ես ու Ջոն անխոս հասկանում էինք դա: Ուղղակի կանգնել, լսում էինք սպանիչ, լուռ արհամարհանքով: Ու հենց որ առիթն եկավ, գլուխներս ազատեցինք՝ նրան թողնելով բարի կանգնակի մոտ, պեռնոյի բաժակի վրա հեկեկալիս:

Աչքից հեռացանք թե չէ՝ հիստերիկ ծիծաղ բռնեց: Դնովի ատամնե՛րը... Ինչ էլ որ ասեինք էդ խեղճի մասին, իսկ մենք որոշ լավ բաներ

էլ ունեինք ասելու, անընդհատ վերադառնում էինք էլի ատամներին: Աշխարհում մարդիկ կան՝ էնքան անհեթեթ կերպարանք ունեն, որ նույնիսկ մահն է նրանց ծիծաղելի դարձնում: Եվ ինչքան ահավոր է էդ մահը, էնքան նրանք ավելի ծիծաղելի են թվում: Ջուր են էս մարդկանց վախճանին փոքր-ինչ արժանապատվություն վերագրելու ջանքերը. պիտի ստախոս կամ կեղծավոր լինես նրանց մահվան մեջ ողբերգական բան գտնելու համար: Ու քանի որ մենք ձևանալու կարիք չունեինք, սրտներիս ուզածի չափ կարող էինք քրքջալ պատահածի վրա: Ամբողջ գիշեր ծիծաղում էինք, էդ հոհոոցի արանքներում էլ՝ թուքումուր անում վերնահարկի հաստագլուխներին, որոնք, անկասկած, փորձում էին համոզել իրենց, թե Փեքովերը շատ լավ մարդ էր, իսկ նրա մահը՝ դժբախտություն: Հազար ու մի ծիծաղելի պատմություն հիշեցինք, թե ոնց էր միջակետերը բաց թողնում, ու դրա համար ինչ շան օրն էին գցում: Էդ քոստ միջակետերի ու կոտորակների պատճառով, որ միշտ խառնում էր, կյանքը դժոխք էին դարձրել: Մի անգամ էլ քիչ մնաց, որ գործից ազատեին՝ ինչ է թե խմիչքի հոտ էր փչում բերանից: Արհամարհում էին խղճուկ տեսքի, թրմաքոսի ու մազերի թեփի համար: Նրան ոչնչություն էին համարում, բայց հիմա, որ հոգին ավանդել է, բոլորն էլ փող կդնեն տենչագին ու մի հսկա պսակ կառնեն, իսկ անունը խոշոր տառերով կտպեն մահախոսականների սյունակում: Ամեն ինչ կանեն իրենց լավ լույսի տակ ներկայացնելու համար, Փեքովերին էլ, կարեցածի չափ, մեծ քաք կսարքեն: Բայց, ցավոք սրտի, Փեքովերի դեպքում շատ բան չես բստրի: Նա զրո էր իրոք, ու նույնիսկ մեռնելու հանգամանքը մեկ չի դարձնի:

«Սրա մեջ մենակ մի լավ կողմ կա,– ասում է Ջոն:– Նրա գործը միգուցե քեզ տան: Թե բախտդ բերի, դու էլ կընկնես վերելակի հորն ու վիզդ կկոտրես: Խոսք եմ տալիս, ընտիր պսակ կառնենք»:

Լուսադեմին նստած էինք «Դոմ» սրճարանի բացօթյա մասում: Փեքովերին արդեն վաղուց էինք մոռացել: «Բալ նեգր»-ում մի քիչ ժամանակ անցկացնելուց հետո Ջոն միտքն էր բերել իր մշտական հոգսը՝ պուց: Հենց էս ժամին էլ՝ գիշերվա վերջանալու վրա, նրա

թվայնացրել է 1915.info կայքը

անհանգստությունը վերաճում է մարմաջի: Երեկոյի ընթացքում բաց թողած կանանց մասին է մտածում, մեկ էլ՝ մշտականների, որոնք վազելվազ կգան, թե կանչես, բայց կուշտ է նրանցից: Էլի իր «ջորջիացի բոզին» է հիշում. էս վերջերս օր ու արև չի տալիս, հա խնդրում է, որ մոտը մնա՝ գոնե մինչև աշխատանք ճարելը: «Դեմ չեմ, մեկ-մեկ կկերակրեմ,– ասում է Վան Նորդենը,– բայց մշտական բեռ վերցնեմ, որ ի՞նչ... Բա մյո՞ւս պցերը. էդ հո գործս կփչացնի»: Իսկ ամենից շատ սիրտը նեղվում է, որ նա լղար չոփ է: «Ոնց որ կմախքի հետ տեղաշոր մտնես,– ասում է:– Էն օրը բերեցի ինձ մոտ. խղճահարությունից, էլի, ու էդ խելառ անտերը ի՞նչ արած լինի. մաքուր թրաշել էր բանը... մի՛ հատիկ մազ էլ չէր թողել: Քեզ ծակը թրաշած կնիկ հանդիպե՞լ է: Ախր շնո՞րհքն ինչ, հը՞: Ծիծաղդ էլ է գալիս: Մաքուր խելագարություն: Արդեն ծակի տեսք էլ չուներ, սատկած կակղամորթի պես բան էր»: Նա պատմում է, թե ոնց է հետաքրքրասիրությունը բռնել. վեր է կացել անկողնուց ու էլեկտրական լապտերը գտել: «Բաց արած պահել տվի ու լապտերի լույսը ներս գցեցի: Մի տեսնեի՛ր ինձ... Ջավեշտ էր, էլի: Էնքան էի տարվել, որ ինքը լրիվ մտքիցս թռել էր: Կյանքում ոչ մի անգամ էդքան մանրակրկիտ պուցը չէի նայել: Կարելի էր կարծել, թե նախկինում չեմ տեսել: Ու ինչքան շատ էի նայում, էնքան անհետաքրքիր էր դառնում: Դուրս է գալիս, որ, վերջիվերջո, ոչ մի առանձին բան էլ չկա, մանավանդ եթե թրաշած է: Մազն է դարձնում խորհրդավոր: Դրա համար էլ արձանները անտարբեր են թողնում: Մի անգամ եմ տեսել, որ արձանն իսկական պուց ունենա. Ռոդենի գործն էր: Պիտի տեսնես դա... ոտքերը չռած կին է... Չեմ էլ հիշում՝ գլուխ ուներ, թե չէ: Մենակ պուցն է աչքիդ առաջ: Ահավոր էր, տեր Աստված: Հարցը գիտե՞ս որն է. բոլորը միանման են: Հագուստով ծածկված տեսնելիս մտքովդ տեսակ-տեսակ բաներ են անցնում, ինչ-որ անհատականությամբ ես օժտում, որը, իհարկե, գոյություն չունի: Եղած-չեղածը ճեղք է ոտքերի արանքում, ու դու գրգռվում ես դրանից, ժամանակ կա՝ չես էլ նայում էդ կողմը: Էնտեղ է, գիտես, ու միակ մտածմունքդ մեջը դնելն է, ավելի շուտ՝ ոնց որ քո փոխարեն անդամդ մտածի: Բայց պատրա՛նք է: Չեղած տեղը կրակ ես

թվայնացրել է 1915.info կայքը

կտրում... ինչ-որ ճեղքից՝ մազոտ, թե անմազ: Էնքան անիմաստ է, որ կախարդված նայում էի: Մի տասը րոպե կամ էլ ավելի շատ աչք չէի կտրում: Էդպես վերացած նայելիս զվարճալի բաներ են մտքովդ անցնում: Սեռի գաղտնիք, չգիտես ինչ, իսկ դու ոչինչ էլ չես հայտնաբերում, դատարկություն է: Բա զվարճալի չէ՞ր լինի, եթե էնտեղ շրթհարմոն կամ, ասենք... օրացույց գտնեիր: Բայց ոչինչ էլ չկա... ոչ մի բան: Այ, դա է զզվելի: Քիչ էր մնում ցնդեի... Լսիր, ասե՛մ՝ ինչ արեցի: Վռազ-վռազ մի հատ սեպեցի ու շուռ եկա: Հա, գիրք վերցրի ու սկսեցի կարդալ: Գրքից, թեկուզ ամենավատ գրքից, մի բան կքաղես էլի... իսկ պուցը ժամանակի բացարձակ կորուստ է...»:

Ոնց պատահեց՝ Վան Նորդենի եզրափակիչ խոսքերի վրա մի պոռնիկ մեզ աչքով արեց: Հենց տեղնուտեղն էլ նա դարձավ ինձ. «Կուզե՞ս սրան, ո՞նց է աչքիդ: Թանկ չի նստի... երկուսիս էլ նույն գնով կտա»: Եվ առանց պատասխանի սպասելու՝ երերալով ոտքի կանգնեց ու մոտեցավ նրան: Մի քանի րոպեից տեսնեմ՝ հետ է գալիս: «Ամեն ինչ կարգին է,– ասում է:– Գարեջուրդ վերջացրու: Սոված է: Մեկ է, էս ժամին էլ բան չենք ճարի... տասնհինգ ֆրանկով երկուսիս էլ կտա: Գնում ենք ինձ մոտ... էդպես ավելի էժան կնստի»:

Հյուրանոցի ճանապարհին աղջիկը հո չի՛ սրթսրթում ցրտից. ստիպված կանգ ենք առնում ու սուրճ առնում նրա համար: Բավական հեզ արարած է, տեսքից էլ բնավ վատը չի: Ըստերևույթին, ճանաչում է Վան Նորդենին, գիտի, որ չարժի նրանից ակնկալիք ունենալ, բացի խոստացված տասնհինգ ֆրանկից: «Դու փող չունես, հա»,– փսփսում է Վան Նորդենն ինձ: Քանի որ գրպանս դափ-դատարկ է, նրա ասածի միտքը լավ չեմ հասկանում, մինչև որ վրա է տալիս անգլերեն. «Ախպոր պես, հիշիր, որ մենք անփող ենք: Տես՝ չփափկես, հենց որ հասնենք ինձ մոտ: Սա կփորձի քեզնից մի քիչ էլ փող պոկել. գիտեմ էս բոզին: Մտքիս դնեի՝ տասը ֆրանկով էլ կհամոզեի: Իզուր փող չմսխենք...»:

– Il est méchant, celui-là[1],– ասում է աղջիկն ինձ տրտմությամբ՝ Վան Նորդենի խոսքերի իմաստը կռահելով:

[1] Անպետքի մեկն է (ֆրանս.):

թվայնացրել է 1915.info կայքը

– Non, il n'est pas méchant, il est très gentil[1].

Նա, ծիծաղելով, գլուխն է օրորում.

– Je le connais bien, ce type[2].

Իսկ հետո մի դառնաղետ պատմություն է սկսում հիվանդանոցի, չվճարած բնակվարձի և գյուղում գտնվող երեխայի մասին: Բայց չափը չի անցնում. գիտի, որ մեր ականջները փակ են: Ուղղակի ցավը հոգում է, քարի պես, և տեղ չկա մնացածի համար: Նա չի փորձում մեր գութը շարժել, իր ներսի ծանր բեռն է քարշ տալիս դեսուդեն: Ինձ դուր է գալիս: Հույս ունեմ՝ հիվանդ չի լինի...

Սենյակում նա մեքենայաբար անցնում է նախապատրաստության:

– Գոնե մի կտոր ցամաք հաց չի՛ ճարվի,– հարցնում է՝ բիդեի վրա նստած:

Վան Նորդենը փոթկում է:

– Առ, մի կում արա,– ասում է՝ շիշը մեկնելով:

Իսկ նա չի ուզում խմել. գանգատվում է, որ ստամոքսը տեղից էլ մի բան չի:

– Խաղեր է տալիս,– ասում է Վան Նորդենն անգլերեն:– Չթողնես, որ խղճիդ վրա ազդի: Ամեն դեպքում, ավելի լավ է ուրիշ բանից խոսի: Անտեր մնացածը՝ սոված պցի հետ մարդ ո՞նց գրգռվի:

Ճիշտ որ: Ոչ մեկս, ոչ էլ մյուսս բնավ գրգռված չենք: Ինչ վերաբերում է էս արարածին, թեկուզ կրքի մի կայծ սպասելը նրանից նույնն է, թե գոհարակուռ մանյակ լիներ վզին: Բայց մեջտեղում տասնհինգ ֆրանկի հաշիվ կա, ու մի բան պիտի արվի: Պատերազմական վիճակի նման է. եթե տեղը գա, բոլորը մտածում են միայն խաղաղության, պատերազմին վերջ տալու մասին: Բայց ոչ ոք չի համարձակվում զենքը ցած դնել ու ասել. «Դե հերիք եղավ... Վերջ»: Չէ, տասնհինգ ֆրանկի հաշիվ կա. արդեն ամենքն էլ թքած ունեն դրա վրա, ու ոչ մեկը, ի վերջո, դա չի ստանալու, բայց տասնհինգ ֆրանկը նախապատճառի պես բան է, ու փոխանակ ներքին ձայնին լսելու, փոխանակ նախապատճառից վերանալու, մարդիկ ենթարկվում են

[1] Չէ, անպետք չի, շատ լավն է (ֆրանս.):

[2] Հինգ մատիս պես գիտեմ սրան (ֆրանս.):

իրավիճակին, սպանում, կոտորում և ինչքան շատ վախենաս, էնքան հերոսաբար են իրենց պահում, մինչև որ ամեն ինչ քարուքանդ է լինում, թնդանոթները հանկարծ լռում են, պատգարակավոր սանիտարներն էլ սկսում են հավաքել խեղված ու արյունլվիկ հերոսներին և շքանշաններ կախել սրանց կրծքներին: Մնում է, որ մինչև կյանքիդ վերջը տասնհինգ ֆրանկի շուրջը մտորես: Աչքերդ չկան կամ ձեռքուոտք չունես, բայց կյանքիդ մնացած մասը մխիթարվում ես տասնհինգ ֆրանկի մասին երազելով, որը բոլորն էլ իսպառ մոռացել են:

Իրոք որ պատերազմական վիճակի պես բան է. սա մտքիցս դուրս չի գալիս: Էս աղջիկն ինձնից կրքի գոնե մի նշույլ քամելու ջանքեր է թափում՝ ստիպելով մտածել, թե ինչ ողորմելի զինվոր կլինեի ես, եթե իմ հիմար խելքից էապես ծուղակն ընկնեի ու ճակատում հայտնվեի: Գիտեմ, որ ամեն ինչ կտայի, պատիվս էլ՝ հետը, միայն թե էդ փորձանքից գլուխս ազատեի: Դա իմ բանը չի, ու պրծավ գնաց: Այնինչ պոռնիկի մտքում տասնհինգ ֆրանկն է, և նա ինձ ստիպում է պայքարել դրա համար, ինչքան էլ որ չուզենամ: Բայց եթե մարդու մեջ կռիվ չկա, նրան չես ստիպի, թե՝ կռիվ տուր: Մեզնից ոմանք էնքան վախկոտ են, որ հերոս չես դարձնի՝ նույնիսկ մահու չափ վախեցնելով: Երևի շատ բան գիտենք: Մենք ոչ թե պահով ենք ապրում, այլ փոքր-ինչ առաջ ենք ընկած կամ հետ: Իմ ուշքը խաղաղության պայմանագիրն է միայն: Մտքիցս չի հեռանում, որ ամբողջ թոհուբոհն սկսվել է տասնհինգ ֆրանկից: Տասնհի՛նգ ֆրանկից: Իսկ ես ի՛նչ ունեմ էդ տասնհինգ ֆրանկի հետ, մանավանդ որ իմն էլ չի:

Վան Նորդենն էս ամենին ավելի ողջամտորեն է մոտենում: Նա էլ արդեն թքած ունի տասնհինգ ֆրանկի վրա. իրադրությունն է գրավում նրան: Ինքն իրեն ցույց տալու խնդիր կա. բանը առնականության է վերաբերում: Տասնհինգ ֆրանկը կորած է՝ գործներս գլուխ գա, թե չէ: Հարցը երևի միայն առնականությունը չի, այլև կամքի ուժը: Էլի խրամատում նստած զինվորն է միտքս գալիս: Նա չգիտի, թե ինչու պիտի ողջ մնա. թեկուզ հիմա փրկվի էլ, վաղը զոհ կդառնա,

թվայնացրել է 1915.info կայքը

բայց, մեկ է, շարունակում է նույն ոգով, ու եթե նույնիսկ վախկոտ շուն է, և ինքն էլ է դա ընդունում, մի հրացան տվեք, դանակ, կամ էլ մերկ ձեռքերով անգամ, նա կսպանի, արյուն կթափի, միլիոնավոր մարդկանց կբնաջնջի, քան թե կանգ կառնի ու հարց կտա իրեն, թե ինչի համար:

Գործի անցած Վան Նորդենին նայելիս ինձ թվում է՝ տեղապտույտ տվող մեքենա է աչքիս առաջ: Անիվներն ապարդյուն տքնում-պտտվում են շարունակ, քանի դեռ մի ձեռք շարժիչը չի անջատել: Առանց կրքի նվազագույն նշույլի, այծերի պես զուգավորվող էս երկուսի պատկերը, որ տքնում ու տքնում են աննպատակ, միայն տաննիինգ ֆրանկի համար, բոլոր զգացումներս սրբում տանում է, բացի մեկից՝ հետաքրքրասիրությունս բավարարելու անմարդկային զգացումից: Աղջիկը պառկել է մահճակալի եզրին, իսկ Վան Նորդենը, որ կռացել է նրա վրա, զույգ ոտքերը հատակին գամած այծամարդու է հիշեցնում: Ես, Վան Նորդենի հետևը, աթոռին նստած, սառը, գիտական օտարվածությամբ եմ հետևում նրանց շարժումներին. ինձ համար նշանակություն չունի, եթե նույնիսկ սա ընդմիշտ շարունակվի: Ասես էն խելահեղ մեքենաներից մեկին նայեմ, որ անիմաստ վերնագրերով միլիոնավոր, բիլիոնավոր, տրիլիոնավոր թերթեր են դուրս նետում: Բայց խելահեղ մեքենան ավելի բանական, ավելի դիտարժան է թվում, քան մարդ արարածներն ու նրանց աշխարհ բերող գործողությունները: Իմ հետաքրքրությունը Վան Նորդենի և աղջկա հանդեպ զրոյական է. թեկուզ էապես նստեի ու աշխարհով մեկ հետևեի նույն գործով զբաղված բոլոր զույգերին, հետաքրքրությունս հազիվ թե աճեր, եթե էլ ավելի չնվազեր: Ես տարբերություն չէի դնի էս երևույթի, անձրևի և հրաբխի ժայթքման միջև: Քանի որ կրքի նշույլն անգամ բացակայում է, ուրեմն մարդկային իմաստավորում չկա: Դուրս է գալիս, որ մեքենային նայելն ավելի հետաքրքիր է: Էս երկուսն էլ են մեքենայի նման, բայց՝ տեղապտույտ տվող մեքենայի: Մարդու ձեռք է պետք մեքենան կարգի գցելու համար: Մեխանիկ է պետք:

Ծնկի եմ գալիս Վան Նորդենի թիկունքում և ավելի ուշադիր զննում մեքենան: Աղջիկը թեքում է գլուխն ու հուսահատ հայացք գցում ինձ վրա: «Իմաստ չունի,– ասում է նա:– Անտանելի է»: Էս խոսքերի վրա Վան Նորդենը նոր թափով է գործի կպչում, իսկը պառավ նոխազի պես: Էնքան հաստակողն է, որ ավելի շուտ պոզերը կկոտրի, քան թե տեղի կտա: Հետն էլ գազազում է, որովհետև պոչուկը խուտուտ եմ տալիս:

– Ախպոր պես, Ջո, վերջացրու: Կսպանես խեղճ աղջկան:

– Հանգիստ թող ինձ,– փնչացնում է նա:– Արդեն պրծել էի, հա:

Նրա կեցվածքն ու վճռական տոնը հանկարծ վերստին, արդեն երկրորդ անգամ, հիշեցնում են երազս: Բայց հիմա ինձ թվում է, թե ցախավելի կոթը, որ նա, անփութորեն թևի տակ դնելով, գնաց, ընդմիշտ կորել է: Աչքիս առաջ կատարվողն ասես երազի շարունակությունը լինի. նույն Վան Նորդենն է, միայն նախապատճառը չկա: Նա նման է պատերազմից տուն դարձած հերոսի՝ մի խղճալի, խեղանդամ թշվառականի, որն իր երազանքների իրականության մեջ է ապրում: Ուր էլ նստի՝ աթոռը կոտրվում է, որ դուռն էլ բացի՝ սենյակը դատարկ է, ինչ էլ բերանը դնի՝ դառը համ է մնում: Ամեն ինչ առաջվա պես է, բան չի փոխվել, երազանքը չի տարբերվում իրականությունից: Պարզապես, մինչև քնել է ու արթնացել, մարմինը գողացել են: Նա ամեն օր միլիոնավոր ու միլիարդավոր թերթեր դուրս նետող մեքենայի նման է, թերթեր, որոնց առաջին էջերը լի են աղետների, ընդվզումների, սպանությունների, պայթյունների, ընդհարումների մասին հայտնող լուրերով, բայց ինքն արդեն ոչինչ չի զգում: Թե մեկնումեկը չանջատի շարժիչը, նա երբեք էլ չի իմանա՝ ինչ է մահը. անհնար է մեռնել, եթե մարմինդ գողացել են: Կարող ես մի պոռնիկի տակդ դնել ու համառ այծի պես անվերջ ճիգ թափել, կարող ես խրամատ մտնել ու պայթյունից կտոր-կտոր լինել, մեկ է, կրքի նշույլը չի հայտնվի, եթե մարդու ձեռք չմիջամտի: Ինչ-որ մեկը պիտի ձեռքը մտցնի մեքենայի մեջ ու կարգի գցի, եթե ատամնանիվներն էլի իրար են հագնում: Ինչ-որ մեկը պիտի դա անի՝ առանց պարգևի ակնկալության, տասնհինգ ֆրանկի համար

թվայնացրել է 1915.info կայքը

չմտահոգվելով, ինչ-որ մեկը, ում կուրծքն էնքան թույլ է, որ եթե շքանշան կախեն, սապատավորի նման կկռանա: Եվ ինչ-որ մեկն էլ պիտի ուտելու բան տա սոված պոռնիկին՝ չվախենալով, որ նա կերածը կմարսի ու նորից կսովածանա: Թե չէ էս տեսարանն ընդմիշտ կշարունակվի: Փորձանքից պրծում չկա...

Մի ամբողջ շաբաթ շեֆի քամակը լիզելուց հետո,– էստեղ կարգն էդպես է,– Փեքովերի գործը հաջողվեց ձեռք գցել: Վերջն էդ խեղճը մեռավ վերելակի հորն ընկնելուց մի քանի ժամ անց: Իմ կանխագուշակության պես, ճոխ թաղում արեցին՝ փառավոր հոգեհանգստով, հսկա ծաղկեպսակներով ու մնացած բաներով հանդերձ: Tout compris[1]: Հուղարկավորությունից հետո վերնահարկի ժողովուրդն իր համար ճաշկերույթ սարքեց բիստրոյում: Շատ ափսոս, որ Փեքովերը չէր կարող բերանը մի նշխար դնել իր հոգեհացին. նա անչափ զգացված կլիներ, վերնահարկի աշխատողների հետ նստած, սեփական անունն էդքան հաճախակի լսելով:

Նախօրոք ասեմ, որ ոչ մի բանից էլ ես չեմ բողոքում: Բայց մարդ ոնց որ հոգեբուժարանում լինի, որտեղ թույլ են տվել մինչև կյանքի վերջը ձեռնաշարժությամբ զբաղվել: Աշխարհը գալիս, քթիս տակով անցնում է, իսկ ինձնից միայն պահանջվում է դժբախտությունները կետադրել: Չկա մի բան, որ վերնահարկի էս աչքաբացների ձեռքի տակով չանցնի. ոչ ուրախությունը, ոչ էլ վիշտը աննկատ չեն մնում: Նրանք գործ ունեն կյանքի չոր փաստերի, իրենց ասած՝ իրականության հետ: Բայց էդ իրականությունը ճահիճ է, իսկ նրանք՝ գորտեր, որ կոկռալուց բացի, ոչինչ չգիտեն: Ինչքան շատ կոկռան, էնքան կյանքն իրական է դառնում: Փաստաբանը, քահանան, բժիշկը, քաղաքական գործիչը, լրագրողը շառլատաններ են, որոնք ձեռքը պահում են կյանքի զարկերակին: Դժբախտության մթնոլորտն է մշտապես իշխում: Հրաշալի է: Կարծես խոսքը երբեք փոփոխություն չգրանցող ծանրաչափի մասին լինի կամ միշտ փոքր-ինչ իջեցրած դրոշի: Արդեն պարզ է, թե երկնքի արքայության գաղափարն ինչպես է մտնում մարդու գիտակցության

[1] Ներառյալ ամեն ինչ (ֆրանս.):

մեջ, արմատավորվում, եթե նույնիսկ ոչ մի հենարան չի մնացել: Պիտի որ մի ուրիշ աշխարհ լինի, բացի էս ճահճից, որտեղ ամեն ինչ խառնիխուռն լցրած է: Դժվար է երևակայել, թե ինչի նման է երկնքի արքայությունը, որի մասին մարդիկ երազում են: Հաստատ գորտերի արքայություն կլինի: Ժանտահոտ գոլորշի, տիղմ, արուսիկներ, կանգնած ջուր: Քեզ համար թառիր արուսիկի տերևներին ու կոկոռա ամբողջ օրը: Սրա պես մի բան է իմ մտապատկերներում:

Բոլոր աղետները, որ սրբագրում եմ, արտակարգ բարերար ներգործություն են թողնում ինձ վրա: Պատկերացրեք լիակատար իմունիտետ, հոյակապ վիճակ, բացարձակապես անվտանգ գոյություն վնասակար մանրէներով լի միջավայրում: Ոչինչ չի ազդում ինձ վրա՝ ոչ երկրաշարժերը, ոչ պայթյունները, ոչ խռովությունները, ոչ սովը, ոչ բախումները, ոչ պատերազմները, ոչ էլ հեղափոխությունները: Պատվաստված եմ բոլոր ախտերի, դժբախտությունների, ցավերի, դառնությունների դեմ: Սա աննկուն կյանքի գագաթնակետն է: Նստում եմ իմ ապաստանում և ամբողջ թույնն ու թարախը, որ աշխարհն է թափում ամեն օր, անցնում է ձեռքիս տակով: Բայց մի եղունգս անգամ չի վնասվում: Հարյուրտոկոսանոց իմունիտետ ունեմ: Նույնիսկ ավելի լավ եմ, քան լաբորանտը, որովհետև ինձ մոտ գարշահոտ չկա, միայն հալած արճճի հոտն է: Աշխարհը պայթի էլ՝ ես նույն ձևով, էստեղ նստած, կետ կամ միջակետ կդնեմ:

Մինչև անգամ մի քիչ հավելավճար կստանամ արտաժամյա աշխատանքի համար, եթե ինչ-որ բացառիկ իրադարձության պատճառով հարկ լինի արտահերթ համար թողարկել: Երբ աշխարհը պայթի, ու վերջին թողարկումը տպագրության գնա, սրբագրիչները հանգիստ կհավաքեն բոլոր ստորակետերը, միջակետերը, գծիկները, աստղանիշերը, փակագծերը, վերջակետերը, բացականչական նշանները, հարցականները և այլն ու կդնեն խմբագրի աթոռի վերևը, տուփի մեջ: Comme ça, tout est réglé[1]...

Իմ գործընկերներից ոչ ոք չի հասկանում, թե ինչից եմ էդքան գոհ: Նրանք փնթփնթում են անընդհատ, պահանջներ ունեն, իրենց

[1] Այսպիսով, ամեն ինչ կարգին կլինի (ֆրանս.):

թվայնացրել է 1915.info կայքը

հպարտությունն ու մաղձն են ուզում ի ցույց դնել: Լավ սրբագրիչը ոչ պահանջներ ունի, ոչ հպարտություն, ոչ էլ մաղձ: Լավ սրբագրիչը փոքր-ինչ նման է ամենազոր Աստծուն, աշխարհում է, բայց աշխարհինը չի: Միայն կիրակիների համար է: Կիրակին է նրա ազատ երեկոն: Կիրակի իջնում է իր պատվանդանից ու նստատեղը ցույց տալիս հավատացյալներին: Շաբաթը մեկ ականջ է դնում աշխարհի ցավ ու տրտունջին. սա հերիք է նրան մինչև շաբաթվա վերջը: Մյուս օրերին մնում է ցրտաշունչ ճահճուտում, բացարձակն է, անբասիր բացարձակը, և միայն պատվաստման հետքն է նրան առանձնացնում անհուն դատարկության մեջ:

Ամենամեծ պատուհասը սրբագրիչի համար գործից զրկվելու սպառնալիքն է: Ընդմիջմանը, իրար գլխի հավաքվելիս, «Ի՞նչ կանես, եթե գործդ կորցնես» հարցից մարմիններս դող է բռնում: Թրիք մաքրող ախոռապանի համար ամենասարսափելի բանը ձիազուրկ աշխարհն է: Ապուշություն է նրան ասելը, թե ինչ գարշելի է, երբ կյանքն անցնում է՝ տաք կու հավաքելով: Մարդն ի վիճակի է քաքն էլ սիրել, եթե իր ապրուստը կախված է դրանից, եթե խոսքը վերաբերում է իր բարօրությանը:

Էս կյանքը, որն ինձ համար անկման ստորին աստիճանը կլիներ, բան է, թե հպարտ, պատվախնդիր, պահանջկոտ ու նման կարգի մեկը լինեի, ես ողջունում եմ, ինչպես հաշմանդամն է ողջունում մահը: Սա ժխտողական իրականություն է՝ մահվան պես, յուրատեսակ երկնքի արքայություն՝ առանց տանջանքի ու մեռնելու սարսափի: Էս անդրշիրիմյան աշխարհում միակ կարևոր բանը ուղղագրությունն ու կետադրությունն են: Փույթ չէ՝ ինչ բնույթի դժբախտություն է պատահել, միայն թե անսխալ ներկայացվի: Ամեն ինչ մեկ է՝ նորաձև գիշերանոց լինի, նոր գծանավ, ժանտախտ, հզոր պայթուցիկ, աստղագիտական հայտնագործություն, բանկի սնանկացում, երկաթուղային աղետ, բորսայական գնաճ, ձիարշավ, մահապատիժ, կողոպուտ, քաղաքական սպանություն, թե ինչ: Ոչինչ չի վրիպում սրբագրիչի աչքից, բայց և ոչինչ չի թափանցում նրա զրահաշապիկից ներս: Տիկին Շեերը (նախկին օրիորդ Էստևը) շնորհակալական

նամակ է գրում հնդիկ Աղամիրին. «Հունիսի 6-ին, ձեր շնորհիվ, ես ամուսնացա: Մենք շատ երջանիկ ենք, և ես հուսով եմ, որ ձեր զորությամբ միշտ այդպես կլինի: Ի նշան երախտագիտության՝ հեռագրով ... գումար եմ ուղարկում ձեզ»: Հնդիկ Աղամիրը գուշակում է ապագան և պարզորոշ կարդում ձեր մտքերը անբացատրելի եղանակով: Նա խորհուրդներ կտա, կօգնի ձերբազատվել բոլոր հոգսերից ու ամեն կարգի տագնապներից և այլն: *Այցելեք կամ գրեք Փրիզ, Մակ-Մահոն պողոտա, 20 հասցեով:*

Հրաշք ձևով կարդո՞ւմ է մտքերդ: Ինչքան հասկանում եմ, սա նշանակում է բոլոր մտքերը՝ առանց բացառության, ամենասովորականներից մինչև ամենաանպատկառները: Էս Աղամիրը պիտի որ շատ ժամանակ ունենա տրամադրության տակ: Թե՛ կենտրոնանում է միայն նրանց մտքերի վրա, ովքեր հեռագրով փող են ուղարկում: Նույն համարում մի վերնագիր եմ տեսնում, որտեղ ասվում է, թե «տիեզերքն այնքան արագ է ընդարձակվում, որ դա պայթյունավտանգ է», իսկ սրա տակ ուժեղ գլխացավից տառապող մարդու լուսանկար է: Հետո մի դատարկաբանություն է մարգարտի մասին, Թեկլա ստորագրությամբ: Սա տեղեկացնում է բոլորին ու յուրաքանչյուրին, որ կակղամորթն է մարգարտին ծնունդ տալիս, լինի դա «վայրի» մարգարիտ, «արևելյան», թե «բուծած»: Միևնույն ժամանակ Թրիրի մայր տաճարում գերմանացիները ցուցադրում են Քրիստոսի շապիկը. քառասուներկու տարվա մեջ առաջին անգամ է հանվել նավթալինից: Շալվարի ու բաճկոնակի մասին ոչինչ չի ասվում: Սրա հետ մեկտեղ, Ջալգբուրգում մի կին երկու մուկ է ծնել, կուզեք՝ հավատացեք, կուզեք՝ չէ: Հռչակավոր կինոդերասանուհին պատկերված է ոտքը ոտքին գցած, Հայդ պարկում հանգստանալիս, իսկ ներքևում մի հանրածանոթ նկարչի դիտարկումն է. «Ըստ իս, տիկին Քուլիջը այնքան մեծ հմայք և անհատականություն ունի, որ կարող էր 12 ամենահայտնի ամերիկուհիներից մեկը լինել, թեկուզև նրա ամուսինը նախագահ չլիներ»: Վիեննացի պարոն Հումհալի հարցազրույցից պարզեցի հետևյալը. «Ավարտելուց առաջ,– նշել է պարոն Հումհալը,– կուզենայի ասել, որ անթերի ձևվածքն ու լավ աստեցնելը դեռ բավարար չեն. կարվածքի

թվայնացրել է 1915.info կայքը

բարձր որակը երևում է հագուստը կրելիս: Կոստյումը պետք է գրկի մարմինը, բայց և պահպանի իր ձևը, երբ հագնողը քայլում է կամ նստում»: Ահա, երբ էլ որ քարածխահանքում պայթյուն է տեղի ունենում,– *անգլիական քարածխահանքում,*– ուշադրություն դարձրեք, խնդրեմ, թագավորն ու թագուհին իսկույն ևեթ իրենց ցավակցությունն են հայտնում *հեռագրով:* Եվ նրանք միշտ ներկա են ձիարշավի գլխավոր մրցումներին, թեև օրերս, ըստ տպվող նյութի, վայ թե Դերբիում, «ի մեծ զարմանս թագավորի և թագուհու՝ տեղատարափ անձրև սկսվեց»: Ինչևէ, էս կարգի հաղորդագրությունն ավելի սրտակեղեք է. «Իտալիայում պնդում են, թե հալածանքն ուղղված չէ եկեղեցու դեմ, բայց, այդուհանդերձ, դիպչում է եկեղեցու ամենազգայուն թելերին: Պնդում են, թե հալածանքն ուղղված չէ պապի դեմ, բայց հենց պապի սիրտն է խոցում»:

Ամբողջ աշխարհն էլ ոտքի տակ տայի, սրա պես հարմար ու հաճելի ապաստան չէի գտնի: Համարյա աներևակայելի բան է թվում աչքիս: Ամերիկայում, որտեղ հրթիռներ են քամակդ խոթում՝ քեզ ուժ ու արիություն ներշնչելու նպատակով, ես ի՞նչ իմանայի, որ իմ խառնվածքի տեր մարդու համար ամենաերանելի զբաղմունքը ուղղագրական սխալներ փնտրելը կլինի: Էնտեղ միայն մտածում ես, թե օրերից մի օր Միացյալ Նահանգների նախագահը կդառնաս: Ամեն մարդ տեղով նախագահացու է: Իսկ էստեղ ուրիշ է: Էստեղ ամեն մարդ տեղով զրո է: Եթե ինչ-որ բան ես դառնում կամ ինչ-որ մեկը, պատահմունք է, հրաշք: Հազարից մեկ է հաջողվում հեռանալ հայրենի գյուղից: Հազարից մեկ է պատահում, որ ոտքերդ չթոցնեն կամ աչքերդ չթափեն: Եթե միայն հրաշքով գեներալ կամ փոխծովակալ չդառնաս:

Բայց հենց «հազարից մեկ»-ի, շատ քիչ հույս լինելու պատճառով էլ կյանքը քաղցր է էստեղ: Օր օրի վրա: Ոչ երեկ կա, ոչ վաղը: Ծանրաչափը երբեք փոփոխություն չի գրանցում, դրոշն էլ միշտ փոքր-ինչ իջեցրած է: Թևիդ մի կտոր սև կրեպ է կապած, մերակիդ փոքրիկ ժապավեն կա, ու եթե էնքան բախտավոր ես, որ միջոցներ ունես, քեզ համար թեթև պրոթեզներ կառնես, ցանկալի է՝ ալյումինից:

Բայց դա չի խանգարի ապերիտիվ վայելել, գազանանոցի կենդանիներին նայել կամ սիլի-բիլի անել բուլվարներում վերուվարող գիշակերների հետ, որ միշտ թարմ լեշի են հետամուտ: Ժամանակն անցնում է: Եթե եկվոր ես, ու թղթերդ կարգին են, ամեն ախտի հետ էլ կարող ես գործ ունենալ՝ առանց վարակվելու վախի: Ամենալավը, հնարավորության դեպքում, սրբագրիչ աշխատելն է: Comme ça, tout s'arrange[1]. Սա նշանակում է, որ եթե գիշերվա երեքին տուն ես վերադառնում, և հեծանվավոր ոստիկանները կանգնեցնում են քեզ, կարող ես մատներդ ճտտացնել դրանց քթի տակ: Առավոտյան, երբ առևտուրը թափ է առնում, կարող ես բելգիական ձվեր առնել, հատը՝ հիսուն սանտիմ: Սրբագրիչը, սովորաբար, կեսօրից շուտ վեր չի կենում կամ էլ մի քիչ ուշ: Լավ է կինոյի մո՛տ հյուրանոց գտնել, որովհետև եթե քնով ընկնելու հակում ունես, առավոտյան սեանսի զանգը քեզ կարթնացնի: Իսկ եթե կինոյի մոտ հյուրանոց չգտնես, գերեզմանատան մոտ ընտրիր. նույն բանն է: Ամենակարևորը՝ երբեք չհուսահատվես: Il ne faut jamais désespérer.

Ամեն գիշեր հենց սա եմ փորձում Կարլի ու Վան Նորդենի գլուխը մտցնել: Անհույս աշխարհ, բայց՝ առանց հուսահատության: Ասես նոր կրոնի դավանորդ եմ դարձել, ամեն երեկո պաս եմ պահում Ամենագութ տիրամոր պատվին: Չեմ պատկերացնում՝ ինչ պիտի շահեի, եթե թերթի խմբագիրը դառնայի կամ թեկուզ Միացյալ Նահանգների նախագահը: Ես փակուղու մեջ եմ, շատ հարմարավետ տեղ է: Շարվածքը ձեռքիս՝ շրջակա երաժշտությունն եմ լսում. ձայների գվվոցն ու բվվոցը, տողատիպերի զրնգոցը, կարծես հազարավոր արծաթե ապարանջաններ թափվեն: Մերթընդմերթ մեր ոտքերի մոտով առնետ է սլկվում, կամ աչքներիս առաջ ուտիճ է պատից իջնում՝ արագ-արագ ու զգուշորեն իր բարալիկ ոտքերը շարժելով: Օրվա իրադարձությունները հուշիկ ու անաղմուկ սահում են քթիդ տակով, տեղ-տեղ՝ հեղինակի ստորագրությամբ՝ ի նշան մարդու ձեռագրի, «ես»-ի ներկայության, ի հավաստումն անսփառության: Թափորն անցնում է հանդարտիկ, գերեզմանատան դարպասից

[1] Եվ այսպես, ամեն ինչ կարգավորվում է (ֆրանս.):

թվայնացրել է 1915.info կայքը

մտնող սգերթի պես: Հատակին թղթի հաստաբեստ շերտ է, կարծես փափկախավ գորգ լինի: Վան Նորդենի սեղանի տակ թուղթը բծոտվել է շագանակագույն խյուսից: Ժամը տասնմեկին մոտ գալիս է գետնանուշ ծախողը՝ մի խելապակաս հայ, որ նույնպես գոհ է կյանքում իրեն բաժին ընկած ճակատագրից:

Ժամանակ առ ժամանակ ես Մոնայից հեռագիր եմ ստանում, որը հայտնում է առաջիկա նավով նրա գալու մասին: «Մնացածը՝ նամակով»,– նշվում է միշտ: Ինն ամիս է արդեն, ինչ շարունակվում է սա, բայց նրա անունը երբեք չեմ գտնում ուղևորների ցուցակում, ոչ էլ ապասավորն է արծաթե մատուցարանով նամակ բերում: Էլ ոչ մի սպասելիք չունեմ էդ առումով: Եթե նա երբևէ գա, թող ինձ ներքևում փնտրի, զուգարանի հետևը: Երևի տեղնուտեղը կասի, թե դա հիգիենիկ չի: Առաջին բանը, որ ամերիկուհուն զարմացնում է Եվրոպայում, հիգիենայի բացակայությունն է: Դրախտն էլ՝ առանց ժամանակակից ջրմուղի, նրանք ի վիճակի չեն պատկերացնել: Հենց որ մի փայտոջիլ գտնեն, մտադրվում են անմիջապես բողոք գրել Առևտրի պալատ: Ո՞նց բացատրեմ նրան, որ ես գոհ եմ էստեղ: Կասի՝ ձեռքից գնացել եմ: Ոտքից գլուխ ճանաչում եմ նրան: Պարտեզով արվեստանոց կփնտրի, իհարկե՝ լոգարանն էլ հետը: Ուզում է ռոմանտիկորեն աղքատ լինել: Ես նրան գիտեմ: Բայց էս անգամ պատրաստ եմ ամեն ինչին:

Սրանով հանդերձ, կան օրեր, երբ արևն է փայլում, և ես, շեղվելով տրորված արահետից, անկշտորեն նրա մասին եմ մտածում: Երբեմն առ երբեմն, չնայած իմ աներեր գոհունակությանը, սկսում եմ ուրիշ կյանքի շուրջը մտորել, պատկերացնում եմ, թե ինչ կփոխվեր, եթե կողքիս մի երիտասարդ, անհանգիստ արարած լիներ: Ցավոք, համարյա չեմ հիշում նրա տեսքը, ոչ էլ իմ զգացածը, երբ գիրկս էի առնում նրան: Անցյալին վերաբերող ամեն ինչ կարծես ծովի հատակն է իջել. ես հուշեր ունեմ, բայց պատկերները կորցրել են իրենց կենդանությունը, մեռած ու անկապ են թվում, ինչպես ժամանակին կեր դարձած մումիաներ, որ լռվել են մորուտում: Նյու Յորքի իմ կյանքը մտաբերելիս մանր-մունր մղձավանջային պատառիկներ եմ

թվայնացրել է 1915.info կայքը

հիշում՝ ժանգ ու բորբոսով պատված: Իմ գոյությունն ասես ավարտվել է, իսկ թե որտեղ՝ գլուխ չեմ հանում: Ես այլևս ամերիկացի չեմ, ոչ էլ նյույորքցի, առավել ևս եվրոպացի կամ փարիզցի: Ոչ նվիրվածություն ունեմ, ոչ պարտավորություններ, ոչ ատելություն, ոչ հոգսեր, ոչ նախապաշարմունքներ, ոչ էլ կիրք: Ոչ կողմ եմ, ոչ դեմ: Չեզոք եմ:

Գիշերը, երեքով տուն վերադառնալիս, պատահում է, որ նողկանքի առաջին պոռթկումներից հետո խանդավառությամբ ենք խոսում ինչ-ինչ բաների մասին, խանդավառություն, որը հատուկ է միայն նրանց, ովքեր գործուն մասնակցություն չունեն կյանքին: Երբ անկողին եմ սողոսկում, մեկ-մեկ տարօրինակ է թվում աչքիս, որ մեր ամբողջ խանդավառությունն առաջ է գալիս ուղղակի ժամանակ սպանելու, էն տասնհինգ րոպեն վատնելու համար, որի ընթացքում խմբագրությունից հասնում ենք Մոնպառնաս: Մենք ամենափայլուն, ամենաիրագործելի մտահղացումներն ունենք այսինչ կամ այնինչ բանը բարելավելու վերաբերյալ, բայց շարժանիվ չունենք, որպեսզի մեր մտածածը գործի դնենք: Իսկ որ ամենից արտառոցն է, գաղափարների և բուն կյանքի անհարիրությունը ոչ տանջում է մեզ, ոչ էլ նույնիսկ անհանգստություն պատճառում: Մենք էն աստիճանի ենք հարմարվել, որ եթե վաղը պատվիրեն ձեռքերի վրա քայլել, առանց մազաչափ դիմադրության՝ էդպես էլ կանենք: Իհարկե, մի պայմանով, որ թերթը, սովորականի նման, տպվի: Մենք էլ կանոնավորապես աշխատավարձ ստանանք: Թե չէ ուրիշ ոչինչ կարևոր չի: Ոչ մի բան: Մենք արևելցու նման ենք դարձել: Կուլիների ենք վերածվել, «մաքուր» կուլիների, որոնց բերանն ամեն օր փակում են մի բուռ բրնձով: Վերջերս կարդացի, որ ամերիկյան հնդկացու բնորոշ առանձնահատկությունը ծոծրակի վորմյան ոսկորն է կամ os Incae-ն: Այս ոսկորի առկայությունը, ըստ գիտնականի, պայմանավորված է ծոծրակի մնայուն լայնակի կարով, որը, սովորաբար, սպիանում է սաղմնային կյանքում: Ուստի սա ընդհատված զարգացման նշան է, ստորին ռասայի հատկանիշ: «Հնդկացու գանգի միջին ծավալը,– գիտնականի խոսքերով,– ավելի փոքր է, քան սպիտակամորթներինը, բայց ավելի

թվայնացրել է 1915.info կայքը

մեծ, քան սևամորթներինը: Այսօրվա փարիզցու գանգատուփի ծավալը, անկախ սեռից, 1.448 խորանարդ սանտիմետր է, սևամորթինը՝ 1.344 սանտիմետր, իսկ հնդկացունը՝ 1.376»: Սրանից ես ոչ մի հետևություն էլ չեմ անում ինձ համար, քանի որ ամերիկացի եմ, ոչ թե հնդկացի: Բայց զվարճալի է ամեն ինչ էդպես բացատրելը, ասենք, ինչ-որ os Incae-ով: Էս տեսության ջատագովին բնավ չի մտահոգում, թե առանձին դեպքերում հնդկացիների գանգը արտասովոր ցուցանիշ է տվել՝ 1.920 խորանարդ սանտիմետր, մի ծավալ, որը ոչ մի այլ ռասա չի գերազանցել: Իսկ ինձ գոհունակություն պատճառողը սա է. փարիզցիները, անկախ սեռից, օժտված են նորմալ ծավալի գանգով: Նրանց ծոծրակի լայնակի կարը ակնհայտորեն էնքան էլ մնայուն չի: Էս մարդիկ գիտեն հաճույք ստանալ ապերիտիվից և չեն արտնեղում, եթե իրենց տունը ներկած չի: Ծավալային ցուցանիշների համաձայն՝ նրանց գանգի մեջ ոչ մի արտասովոր բան չկա: Ուրեմն ապրելու արվեստը հաստատ ուրիշ բացատրություն ունի, մի արվեստ, որ նրանք հասցրել են կատարելության աստիճանի:

Փողոցի մյուս կողմի «Պարոն Պոլի մոտ» բիստրոյում մի հետևասենյակ է հատկացված լրագրողներին, որտեղ կարող ենք ապահիկով ուտել-խմել: Դուրեկան սենյակ է, հատակին՝ թեփ, կլոր տարին էլ ճանճեր կան: Ասելով՝ լրագրողներին է հատկացված, նկատի չունեմ, թե առանձին ենք ուտում. ընդհակառակը, մեզ բախտ է վիճակված շփվելու պոռնիկների ու բոզարածների հետ, որոնք էլ կազմում են «Պարոն Պոլ»-ի հաճախորդների հիմնական մասը: Էս հանգամանքը լիովին ձեռք է տալիս վերնահարկի տղերքին, քանի որ անընդհատ նոր փեշի հետևից են ընկած, և նույնիսկ նրանք, ովքեր մշտական ֆրանսիացի ընկերուհիներ ունեն, դեմ չեն մերթ-մերթ ուրիշի հետ էլ գործ տեսնել: Կարևորը վեներական հիվանդություն չընկնելն է: Մեկ-մեկ համաճարակի պես բան է բռնկվում խմբագրատանը, որովհետև բոլորն էլ, ըստերևույթին, քնում են նույն կնոջ հետ: Ինչևէ, հաճելի է տեսնել, թե նրանք ինչ թշվառ տեսք ունեն պոռնկապահի կողքին նստած, որը, հակառակ իր արհեստի փորձություններին, համեմատաբար ճոխ կյանք է վարում:

Միտքս դառնում է մի բարձրահասակ շիկահերի վրա, որն «Ավա» գործակալության հաղորդագրություններն է հեծանվով տեղ հասցնում: Նա միշտ մի քիչ ուշացած է գալիս անվելու, միշտ քրտինքի մեջ կորած է, դեմքն էլ՝ կեղտոտ: Մտնում է նրբաշուք անփութությամբ, երկու մատով ողջունում բոլորին և շարժվում ուղիղ դեպի լվացարան, որը խոհանոցի և զուգարանի միջև է: Երեսը սրբելիս՝ հայացքը սահեցնում է ուտելեղենի վրայով. աչքն ախորժալի բիֆշտեքս տեսնի թե չէ՝ վերցնում, հոտ է քաշում կամ էլ շերեփին է մտցնում կաթսայի մեջ ու մի բերան ապուր համտեսում: Կարծես ընտիր խուզարկու շուն լինի, որը շարունակ գետինն է հոտվտում: Նախապատրաստությունները վերջացնելուն պես, փուչիկը դատարկելուց ու բարձրաձայն խնչելուց հետո, նա անհոգ քայլերով մոտենում է իր կենակցուհուն և չպպացնելով համբուրում նրան, հետն էլ փաղաքշորեն թփթփացնում հետույքին: Իսկ կենակցուհին միշտ մասմաքուր է, տեսքը՝ տեղը, նույնիսկ գիշերվա երեքին, իրիկվա հաճախորդներից հետո: Ասես հենց նոր է դուրս եկել թուրքական բաղնիքից: Հաճելի է նայել նման առողջ կենդանիների, տեսնել նրանց հանգիստը, մտերմությունը, ախորժակը: Խոսքն ընթրիքի՝ մի կտոր բան ուտելու մասին է, նախքան աղջիկը կանցնի իր արհեստին: Քիչ հետո նա ստիպված կլինի լքել սրտին սիրելի շիկահեր լողլողին, դուրս գալ բուլվար ու նստել մի տեղ՝ կում-կում լիկյոր խմելով: Եթե իր գործը տաղտուկ էլ է, հոգնատանջ ու մաշող, նա, իհարկե, ցույց չի տալիս: Հենց որ գայլի պես սոված լողլողը երևա, փաթաթվում է նրան ու անհագորեն համբույրներ տեղում աչքերին, քթին, այտերին, մազերին, ծոծրակին... Հետևն էլ կհամբուրեր, եթե հրապարակավ դա հնարավոր լիներ անել: Ակներև է, որ շնորհակալ է նրան: Ախր նյութական կախում էլ չունի: Ամբողջ ընթրիքի ընթացքում ծիծաղում է քահ-քահ: Քեզ կթվա՝ հոգսը կտրվել է գլխից: Երբեմն-երբեմն էլ, գորովանքով, շառաչուն ապտակ է հասցնում կենակցին, մի հինգեղբայր, որից ուզածդ սրբագրիչը հոլի պես կպտտվեր:

Նրանք չորս կողմը ոչինչ չեն նկատում, կարծես իրենք են միայն, մեկ էլ՝ ուտելիքը, որ խփշտում են բոլ-բոլ: Նման լիակատար

թվայնացրել է 1915.info կայքը

գոհունակությունը, նման հարմոնիան, նման փոխըմբռնումը խելքահան են անում նրանց նայող Վան Նորդենին, մանավանդ երբ աղջիկը ձեռքն իջեցնում է լողլողի խանութն ու շոյում բան-մանը, որին ի պատասխան՝ սա էլ բռնում է նրա պտուկն ու չարաճճիորեն մաժմժում:

Սովորաբար, նույն ժամին գալիս է և մի ուրիշ զույգ, որն իրեն ամուսինների նման է պահում: Էս երկուսն էլ հա կռվշտում են, իրենց լվացքը դրսում են անում և տհաճություն պատճառելով թե իրենց, թե մյուսներին՝ սպառնալիքներից, լուտանքներից, նախատինքից ու փոխադարձ մեղադրանքներից հետո, ի վերջո, հաշտվում են, գգվանուշ ղունղունում սիրահար աղունակների պես: Լյուսիենը, ինչպես տղամարդն է կոչում կնոջը, ծանրամարմին պլատինե շիկահեր է՝ դաժան, թթու դեմքով: Ներքևի շրթունքը հաստ է, որն իրեն կորցնելիս սկսում է կծոտել չարությունից: Պաղ, ուլունքանման, բաց երկնագույն աչքերը քրտնեցնում են կենակցին, երբ հայացքը սրա դեմքին է գամում: Բայց վատը չի էս Լյուսիենը, չնայած անգղի նկարագրին, որն ի հայտ է բերում, հենց որ խոսքակռիվը բռնկվում է: Նրա դրամապանակը միշտ լիքն է, ու եթե դժկամորեն է փողից բաժանվում, պարզապես կենակցի վատ սովորույթները չխրախուսելու պատճառով: Սա թույլ բնավորություն ունի, եթե հավատալու լինենք Լյուսիենի ելույթներին: Մի իրիկվա մեջ հիսուն ֆրանկ կծախսի իր գալուն սպասելիս: Երբ մատուցողուհին մոտենում է պատվերն ընդունելու, կենակցի ախորժակը փակված է լինում:

– Հա՛, էլի սոված չե՞ս,– մռնչում է Լյուսիենը:– Հըմ, ուրեմն կաչկա՝ Ֆոբուր-Մոնմարտրում ես ինձ սպասել: Աչքիս քեզ մի լավ տեսել ես, քանի դեռ ես էշություն էի անում քեզ նմանի համար: *Բերանդ բաց, ապուշի գլուխ, որտե՞ղ ես եղել:*

Երբ նա տաքանում է էսպես, գազազում, կենակիցը վախվորած նայում է նրան, ապա, կարծես որոշելով, թե լռելն է ամենաճիշտ պահվածքը, կախում է գլուխն ու իր անձեռոցիկը մատներով տրորում: Բայց էս խղճուկ ժեստը, որը Լյուսիենին քաջածանոթ է և, ինչ խոսք, ծածուկ բավարարություն է պատճառում՝ որպես մեղքի հավաստիք, միայն ավելի է կատաղեցնում նրան:

– *Մի բան աաա, ապուշ,*– ծղրտում է Լյուսիենը:

Եվ կենակիցը սվսվան, երկչոտ ձայնով բացատրում է վշտագին, թե նրան սպասելիս էնքան է սովածացել, որ ստիպված ճանապարհին մի բրդուճ բան է կերել ու գարեջուր խմել: Դա հերիք է եղել ախորժակը փակվելու համար, ասում է տխուր-տրտում, թեև ակնհայտորեն ուտելիքը հիմա ամենից քիչ է մտահոգում նրան:

– Բայց ես,– վրա է բերում նա՝ ջանալով, որ ձայնն ավելի համոզիչ հնչի,– անընդհատ քեզ էի սպասում:

– Սուտասա՛ն,– ճչում է Լյուսիենը:– Քամո՛ւ տոպրակ: Բախտի բերմամբ, ես էլ եմ սուտասան... բայց՝ *շնորհքով սուրսասան:* Սիրտս խառնում է քո ողորմելի փչոցներից: Գոնե մի կարգի՛ն սուտ ասա:

Կենակիցը նորից է կախում գլուխն ու մտամոլոր, մի քանի փշուր հավաքելով, դնում բերանը: Լյուսիենը շրմփացնում է նրա ձեռքին:

– Մի՛ արա: Հոգիս կերել ես արդեն: Այ քեզ ապուշ: Սուտասա՛ն: Դու դեռ սպասի՛ր: Տես՝ ինչ կասեմ քեզ: Ես էլ եմ սուտասան, բայց հո ապուշ չեմ:

Ինչևիցե, քիչ անց նրանք արդեն նստած են մեկմեկու փարված, ձեռք ձեռքի, և Լյուսիենը շշնջում է մեղմիկ.

– Ախ, իմ պստլիկ նապաստակ, սիրտս մղկտում է, որ քեզ պիտի թողնեմ, գնամ: Դե, պահիկ արա ինձ: Բա իրիկունն ինչո՞վ ես զբաղվելու: Ճիշտն ասա, պստլո... Կներես, էլի. այլանդակ բնավորություն ունեմ:

Կենակիցն անհամարձակորեն համբուրում է Լյուսիենին՝ հենց երկար, վարդագույն ականջներով նապաստակիկի պես. մի թեթև չպպացնում է շուրթերին, ինչպես կաղամբի տերևը կկծեր: Բայց, միևնույն ժամանակ, նրա կլոր, փայլփլուն աչքերը գորովանքով դառնում են դեպի Լյուսիենի դրամապանակը, որը դրված է սրա կողքին, նստատեղի վրա: Նա սպասում է միայն, թե երբ սիրալիորեն գլուխը կազատի Լյուսիենից. սիրտը շատ է ուզում փախչել ու իր համար նստել Ֆոբուր-Մոնմարտր փողոցի մի խաղաղ սրճարանում:

Ես գիտեմ սրան՝ նապաստակի կլոր, վախեցած աչքերով էս անմեղ սատանայակին: Ու գիտեմ, թե ինչ սատանի փողոց է Ֆոբուր

թվայնացրել է 1915.info կայքը

Մոնմարտրը՝ իր պղնձե ցուցանակներով ու ոետինե ապրանքներով, ամբողջ գիշեր կայծկլտացող լույսերով ու փողոցի միջով, ասես կոյախողովակն ի վար հոսող տոփանքով: Լաֆայետ փողոցից Ֆոբուր-Մոնմարտրով մինչև բուլվար հասնելը նման է զորաշարքի գանահարման տակ վազելուն. տզի նման կպչում են քեզ, մրջյունների պես վրա տալիս, սիրաշահում, քծնում, աչքերդ կապում, աղաչում-պաղատում, փորձում գերմաներեն, անգլերեն, իսպաներեն խոսել, բզկտված սիրտն ու պատառոտված կոշիկներն են մատնացույց անում, և էդ շոշափուկներից դուրս պրծնելուց շատ անց, ղժվժոցի մարելուց հետո էլ լվացարանի հոտը մնում է քթիդ մեջ. «Դանս» օծանելիքի շունչն է, որը պիտի զգացվի միայն քսան սանտիմետր տարածության վրա: Մարդ կարող է ամբողջ կյանքը լովել բուլվարից մինչև Լաֆայետ փողոցն ընկած էդ փոքրիկ հատվածում: Էստեղ ամեն բարում աշխուժություն է, բորբոք, զառերը կապարով են լցված, գանձապահներն ուրուրների տեսքով թառել են իրենց բարձր աթոռներին, իսկ նրանց ձեռքն անցնող փողից ծանր մարդահոտ է գալիս: Ֆրանսիական բանկում էստեղ շրջանառող փողի նման անիծված փող չկա. սա պլպլում է մարդու քրտինքից և անտառային հրդեհի պես է անցնում ձեռքից ձեռք՝ իր հետևից լոկ ծուխ ու խանձահոտ թողնելով: Ով որ կարենա Ֆոբուր-Մոնմարտր փողոցով գիշերն անցնել՝ առանց շնչասպառ լինելու և քրտինքը մտնելու, առանց աղոթքը կամ հայհոյանքը շուրթերին, ուրեմն պլոր-շլոր չունի, իսկ եթե ունի, պիտի կրտվի:

Ենթադրենք՝ էդ վախկոտ նապաստակը մի իրիկվա մեջ, իրոք, հիսուն ֆրանկ է ծախսում Լյուսիենին սպասելիս: Ենթադրենք՝ իրոք, սովածացել է և մի բրդուճ բան ու մի բաժակ գարեջուր առել կամ էլ թեկուզ կապնել է, ուրիշի պոռնիկի հետ խոսքով ընկել: Ուրեմն դրա համար ամեն իրիկուն պիտի հոգին հանե՞ն: Ուրեմն պիտի նեղը գցեն, խեղճացնեն, կյանքն ուտե՞ն: Չլինի՞ կարծում եք, թե բոզարածը մարդ չի, հը՞: Մի մոռացեք, որ բոզարածն էլ իր դարդ ու ցավն ունի: Գուցե ավելի շատ կուզեր ամեն իրիկուն անկյունում կանգնել մի զույգ սպիտակ շան հետ ու հետևել, որ սրանք չիշիկ անեն: Գուցե

կուզեր, տան դուռը բացելով, Լյուսիենին տեսնել «Պարի-Սուար» կարդալիս, քունն էլ՝ արդեն ծանրացած աչքերին: Գուցե նրա համար էնքան էլ հաճելի չի իր Լյուսիենի վրա խոնարհվելիս ուրիշ տղամարդու շունչն զգալ: Գուցե ավելի լավ է գրպանում ընդամենը երեք ֆրանկ ունենալ և աննկյունում չհշիկ անող մի զույգ սպիտակ շուն, քան էդ մաշված շուրթերը համբուրել: Գրազ կգամ, երբ Լյուսիենը պինդ փաթաթվում է նրան, երբ մի քիչ սեր է աղերսում, որը միայն նա կարող է տալ, գրազ կգամ, էս մարդը, գազան կտրած, կռիվ է մղում Լյուսիենի ոտքերի արանքով անցած զորագունդը ջարդելու, ջախջախելու համար: Գուցե նրա մարմինը գրկելիս, երբ փորձում է մի նոր մեղեդի նվագել, միայն կիրքն ու հետաքրքրասիրությունը չի բավարարում, այլ մարտնչում է խավարում, մեն-մենակ մարտնչում մի բանակի դեմ, որը գրոհել է դարպասը, ոտնատակ տվել Լյուսիենին, կոխկրտել ու սովահար թողել, էնքան սովահար, որ նույնիսկ Ռուդոլֆ Վալենտինոն չէր հագեցնի նրան: Երբ մեղադրանքներ եմ լսում Լյուսիենի նման կանանց հասցեին, երբ նրանց սևացնում են ու մարդատեղ չեն դնում, որովհետև սառն են ու շահամոլ, մեքենայի պես անզգա, հապշտապ են բանն անում կամ էլ չգիտես ինչ, ինձ ու ինձ ասում եմ. սպասիր, այ դդում. շատ ես վռազում: Հիշիր, որ դու հերթի պոչում ես, հիշիր, որ մի ամբողջ զորամաս է պաշարել նրան, կողոպտել, ավարի մատնել ու ամայացրել: Ինձ ու ինձ ասում եմ՝ լսիր, այ դդում, մի ափսոսա նրան տալիք հիսուն ֆրանկդ, ինչ է թե՝ գիտես, որ կենակիցը մսխելու է Ֆոբուր-Մոնմարտրում: Դա նրա՛ փողն է ու նրա՛ կենակիցը: Արյուն-քրտինքով ձեռք բերված փող է: Ու երբեք դուրս չի գա շրջանառությունից, որովհետև Ֆրանսիական բանկում ոչինչ չկա, որ հետը փոխանակվի:

Ահա թե ինչեր են հաճախ մտքովս անցնում՝ իմ փոքրիկ ապաստանում նստած, «Ավա» գործակալության հաղորդագրությունները քրքրելիս և Չիկագոյից, Լոնդոնից կամ Մոնրեալից եկած հեռագրաժապավենների խճճվածքը քանդելիս: Ռետինի ու մետաքսի գների և վինիպեգյան հացահատիկի շուկայի հետ մեջընդմեջ Ֆոբուր-Մոնմարտրի ղժվժոցն է ապրդում ներս: Երբ պարտատոմսերի արժեքը նվազում է,

թվայնացրել է 1915.info կայքը

ընկնում, հիմնական կորագծերը մեխվում են տեղում, իսկ քիմիկատների գները՝ վեր թռչում, երբ հացահատիկի շուկան գնում է ձեռքից, և բորսային գայլերը սկսում են ոռնալ, երբ ամեն մի քունած կրակ ու ցավ, ամեն մի գովազդ, ամեն մի մարզական լուր ու նորաձևությանը նվիրված հոդված, շոգենավի գալուստը հայտնող ամեն մի ծանուցում, ամեն մի ճամփորդական նոթ, ամեն մի բամբասանք կետադրված են, ստուգված, շտկված, զտված ու տողատիպի արծաթե ապարանջանների միջով անցած, երբ ականջիս է հասնում առաջին էջի շարվածքը շրջանակի մեջ դնող էջկապի մուրճի թխթխկոցը, իսկ աչքիս առաջ տեղի գորտերը շուրջպար են բռնում հարբած ծռտի-պռտիների պես, ես մտածում եմ թևերը տարածած, բուլվարի վրայով ճախրող Լյուսիենի մասին, որը խոշորամարմին, արծաթափետուր անգղարծվի նման քարացել է օդում՝ երթևեկության դանդաղկոտ հոսքի վերևը, Անդերի գագաթներից եկած, սպիտակավարդագույն փորով ու տոկուն գլխիկով մի արտասովոր թռչուն: Երբեմն, մենակ տուն գնալիս, հետևում եմ նրան մութ փողոցներով, հետևում Լուվրի բակով, Արվեստների կամրջով, կամարաշարով, ծակուծուկերով, նիրհի, արբեցնող ճերմակի միջով, Լյուքսեմբուրգյան այգու ճաղերի, խառնակ ոստերի արանքով, խոմփոցի ու հառաչների, կանաչ շերտաձողերի, ծնգծնգոցի ու զնգոցի, աստղացոլքի, փայլկտուքի, ցայտքունի, ծածկերի կապույտ ու սպիտակ զոլերի միջով, որոնք նա սրբում է թևերի ծայրով:

Էլեկտրական այգալույսի լաջվարդի տակ գետնանուշի կճեպները դալուկ ու ճխլտված են երևում, Մոնպառնասի ափն ի վար ջրաշուշանները կորանում են, կոտրվում: Երբ տեղատվությունը տանում է ամեն ինչ, բացի մի քանի սիֆիլիսոտ ջրահարսից, որ մնում են տիղմի մեջ խրված, «Դոմ» սրճարանը նման է փոթորկի բերանն ընկած հրաձգարանի: Ինչ որ կա-չկա՝ կոյուղու բաժին է դառնում: Մոտ մի ժամ մեռյալ լռություն է, որի ընթացքում փսխուքն են մաքրում: Եվ հանկարծ ծառերն սկսում են ճվճվալ: Բուլվարի մի ծայրից մյուսը խելագար երգ է բարձրանում: Դա բորսայի փակումն ազդարարող զանգի նման է: Ինչ հույսեր որ կային՝ հավաքում են, թափում: Վրա է հասնում միզափամփուշտը վերջին անգամ դատարկելու պահը: Օրը, բորոտի պես, սողոսկում է քաղաք...

Գիշերն աշխատելու դեպքում պիտի զգուշանաս նիստուկացդ խախտելուց: Եթե մինչև թռչունների ճվճվոցը անկողին չես մտել, ուրեմն արդեն անօգուտ է պառկել: Էս առավոտ, ուրիշ անելիք չունենալով, գնացի Բուսաբանական այգի: Չապուլտեպեկից բերված աքանչելի հավալուսներն ու հովհարաձև նախշազարդ պոչերով սիրամարգները քեզ են նայում իրենց տխմար աչքերով: Հանկարծ անձրև բռնեց:

Ավտոբուսով Մոնպառնաս վերադառնալիս մի փոքրամարմին ֆրանսուհու նկատեցի, որը լարված ու ձիգ նստել էր դիմացս՝ ասես փետուրները կտուցով մաքրելու պատրաստ: Նստարանի եզրին էր տեղավորվել՝ կարծես վախենալով, թե իր շքեղ պոչը կճմռթվի: Ինչ արտակարգ բան կլիներ, մտածեցի ես, եթե մեկեն թափ տար իրեն, ու հետևից մի հսկայական, նախշազարդ հովհար բացվեր՝ երկար, մետաքսե փետուրներով:

«Ավընյու» սրճարանում, ուր մտա բերանս բան դնելու, փորը լիքը մի կին ջանում է ինձ հետաքրքրել իր վիճակով: Առաջարկում է գնալ հյուրանոց ու մի երկու ժամ անցկացնել: Առաջին անգամ է, որ պատճառավոր կին է ինձ կապում. գայթակղությունից քիչ է մնում փորձեմ: Ասում է՝ հենց որ երեխան ծնվի, պիտի տանի հանձնի ու վերադառնա իր արհեստին: Տեսնելով, որ հետաքրքրություն մարելու վրա է, նա վերցնում է ձեռքս ու դնում որովայնին. զգում եմ, որ ներսում ինչ-որ բան է շարժվում: Ցանկությունս կորչում է լրիվ:

Բացի Փարիզից, էլ ոչ մի տեղ չեմ տեսել, որ ինչ ասես վավաշանքի խայծ դառնա: Ծախու կինը, թեկուզ առջևի ատամը կորցնի, աչքը կամ ոտքը, էլի իր շվայտ կյանքին է մնում: Իսկ Ամերիկայում սովամահ կլիներ, եթե հույսը դներ խեղվածքի վրա: Էստեղ էլ հակառակն է: Հանած ատամը, քայքայվող քիթը կամ կախ ընկած արգանդը՝ կնոջ բնածին անբարետեսությունն ընդգծող ամեն մի արատ, կարծես հավելյալ համեմունք համարվի, տղամարդու բթացած ցանկասիրության խթանիչ:

Ինչ ասել կուզի, ես խոսում եմ մեծ քաղաքներին հատուկ աշխարհի մասին, տղամարդկանց ու կանանց աշխարհի, որոնց կենսավիշը,

թվայնացրել է 1915.info կայքը

մինչև վերջին կաթիլը, քամվել է մսաղացում. արդի առաջընթացի նահատակներն են նրանք: Ոսկորների ու ճարմանդների հենց էս կույտին էլ նկարիչը դժվարանում է մարմին տալ:

Միայն հետո՝ ցերեկը, երբ հայտնվեցի Սեզ փողոցի պատկերասրահում, Մատիսի տղամարդկանցով ու կանանցով շրջապատված, վերադարձա մարդկային աշխարհի բուն տիրույթները: Հրաշող պատերով մեծ սրահի շեմին քարանում եմ մի պահ, որպեսզի սթափվեմ ցնցումից, մի ցնցում, որն ապրում ես, երբ աշխարհի սովորական գորշությունը հօդս է ցնդում, և կյանքի իսկական գույնը, պոռթկալով, վերածվում է երգի ու պոեմի: Ես ուշքի եմ գալիս էնքան բնական, էնքան լիարժեք մի աշխարհում, որ մոլորվում եմ: Ասես մխրճվել եմ հենց կյանքի միջուկը, կիզակետը՝ որ տեսանկյունով, դիրքով կամ կեցվածքով էլ նայելու լինեմ: Ինձ մոլորված եմ զգում, ինչպես ժամանակին, երբ ծաղկուն աղջիկների հովանու տակ, առաջին անգամ ճաշի սեղան նստելով Բալբեկի վիթխարի աշխարհում, հասկացա հոգետան այդ նատյուրմորտների խորունկ իմաստը, որոնք ոգեկոչվում են տեսողության և շոշափելիքի համայնքով: Ոտքս Մատիսի արարած աշխարհի շեմին՝ ես վերապրում եմ հայտնության ուժը, որը թույլ է տվել Պրուստին այնպես այլաձևել կյանքի պատկերը, որ միայն նրանք են ի զորու կյանքի ժխտանկարը փոխակերպել արվեստի իրական ու բովանդակալից ուրվանկարի, ովքեր, իր նման, ընկալունակ են հնչյունի և զգայության ալքիմիայի հանդեպ: Միայն նրանք են ի զորու մեկնել, թե ինչ կա սրտում, ովքեր ընդունակ են լույսը իրենց ներսն ուղղել: Ես հստակ հիշում եմ, թե զանգվածեղ ջահերից անդրադարձող լույսի փայլն ու ճաճանչները ինչպես էին փշրտվում ու արնացող ցայտուքի վերածվում՝ զօծելով ալիքների կատարները, որ միալար ծփում էին գունատ ոսկեգույնի մեջ, լուսամուտից դուրս: Առափին, որտեղ կայմերն ու ծխնելույզները խառնահյուսվում էին, Ալբերտինի կերպարանքի մրոտ շվաքն էր սահում կոհակների վրայով՝ իբրև աննյութ աշխարհի խորհրդավոր էություն և արտացոլք, անրջանքի ու մահվան կանխազգացման հետ միատեղված: Վերջալույսին ցավը մեզի պես բարձրանում էր հողից,

թախիծն էր պարուրում՝ գոցելով փեղկերը ծովի ու երկնքի անեզր հեռաստանների վրա: Երկու մոմե ձեռք էին անկենդան ընկած վերմակին, և դրանց դժգույն երակներով խեցու սրնգանուշ մրմունջն էր ծորում՝ նրա ծննդյան լեգենդը կրկնելով:

Մատիսի ամեն մի պոեմ մարդու մարմնի պատմությունն է, մարմին, որ մերժել է վերահաս մահը: Այդ մարմի ամբողջ ծիրը՝ մազերից մինչև եղունգները, արտահայտում է ապրել-շնչելու հրաշքը, կարծես ավելի վերին իրականության կարոտ ներքին աչքը մարմնի բոլոր ծակոտիները փոխարինել է տեսողությամբ օժտված սովալլուկ բերաններով: Ինչ դիտակետից էլ որ նայես, ամենուր ճամփորդության բույրն ու հնչյուններն են: Անհնար է մատիսյան երազանքի մի պատառիկն անգամ նշմարել՝ առանց ալեկոծանքն ու ջրի ցայտուկների զովությունն զգալու: Նա, ղեկի մոտ կանգնած, իր անխոով կապույտ աչքերը սևեռել է ժամանակի համապատկերին: Ի՛նչ հեռավոր աննկյուն ասես, որ նրա սրատես, խորամուխ հայացքը չի թափանցել: Քթի երկար ելուստն ի վար նայելով՝ նա տեսնում է ամեն ինչ՝ Խաղաղ օվկիանոսը գահավիժող Կորդելիերները, սփյուռքի մագաղաթագիր պատմությունը, ծովեզրի շնկշնկոցը սրնգերգող շերտափեղկերը, խեցու պես ճկված դաշնամուրը, լուսե դաշներգեր ճառագող ծաղկապսակները, պրես-պապյեների տակ գալարվող քամելեոնները, փոշու օվկիանոսներում շնչահեղձ հարեմները, ցավի ծածուկ գունոլորտից հրի նման ելնող երաժշտությունը, հողը պտղավորող բեղմնիկներն ու բուստերը, տանջանքի վառ արգասիքը փսխող պորտերը... Մատիսը պայծառ իմաստուն է, պարող մարգարե, նա մի վրձնազարկով տապալում է աննարգանքի սյունը, որին գամված է մարդու մարմինը կյանքի անհերքելի հանգամանքների բերումով: Նա վերահասու է,– եթե ինչ-որ մեկն այսօր օժտված է այդ ձիրքով,– մարդու կերպարանքը կազմալուծելու հմտությանը, սիրտ է արել գծի ներդաշնակությունը զոհաբերել՝ արյան տրոփին ու խշյունը երևան բերելու համար, իր հոգու լույսն է հեղել գույների ստեղնաշարին: Կյանքի մանրուքների, քաոսի, ունայնության տակ նա աննտեսանելի կառույց է հայտնաբերում և իր գյուտերի մասին ավետում տարածության մետաֆիզիկական

թվայնացրել է 1915.info կայքը

գույնով: Ոչ բանաձևերի պրպտուք, ոչ գաղափարների չարչրկում, ոչ էլ այլ հրամայական, արարելուց բացի: Թեկուզև աշխարհը փուլ գա, կա մի մարդ, որը միջամուխ է դրա ուղնուծուծը, և ինչքան արագանում է խարխլման ընթացքը, այնքան ամուր է նա խարիսխ ու արմատ գցում, այնքան կենտրոնամետ դառնում:

Աշխարհն ավելի ու ավելի է նմանվում միջատաբանի երազի: Երկիրը դուրս է ընկնում ուղեծրից, առանցքը փոփոխվում է. հյուսիս ձյունը վրա է տալիս ահագնամեծ, պողպատափայլ կապտավուն կույտերով: Նոր սառցադաշտային շրջան է սկսվում, գանգի լայնակի կարերն սպիանում են, և ամբողջ արգավանդ գոտում կենարար սաղմը չորանում է՝ վերածվելով մեռած ելունդի: Գետաբերանները թիզ առ թիզ ցամաքում են, և ջրուղիները ապակու պես ողորկ են: Նոր դարագլուխ է բացվում, մետալուրգիական դարագլուխ, երբ հողը կզնգա վառ դեղին հանքանյութի հորդառատ անձրևների տակ: Ջերմաստիճանի նվազելու հետ ճապաղում է աշխարհի ուրվապատկերը. օսմոսը դեռ կատարվում է, տեղ-տեղ կապակցվածություն կա, բայց եզրագծում բոլոր երակներն արդեն լայնացել են, եզրագծում լույսի ճառագայթները բեկվում են, և արևն արյունահոսում է ճոռթած հետանցքի պես:

Փլվող անվի հենց կենտրոնում Մատիսն է: Նա կշարունակի պտտվել, քանի դեռ անվի բոլոր մասերը ցաքուցրիվ չեն եղել: Արդեն շրջել է երկրագնդի նշանակալի մասը՝ թե՛ Պարսկաստանը, թե՛ Հնդկաստանը, թե՛ Չինաստանը, և մագնիսի պես իր կողմը ձգել Քրդստանի, Բելուջստանի, Տիմբուկտուի, Սոմալիի, Անգկորի, Հրո երկրի մանրագույն մասնիկները: Նա հարճերին ողողել է դահանակով ու հասպիսով, մարմինները շղարշել կետաձկան սերմնահեղուկի մեջ ընկղմած հազարավոր բուրավետ աչքերով: Ուր էլ որ զեփյուռը փչի, դոնդողի պես սառը ստինքներ կան, և ճերմակ աղավնիները թևաբախ գալիս են զուգավորվելու Հիմալայների սառցակապույտ երակներում:

Պաստառները, որոնցով գիտնականները պատել են իրական աշխարհը, ծվեն-ծվեն են եղել: Էն հսկայածավալ պոռնկատունը, որ

կյանքն է դարձել նրանց ձեռքով, հարդարանքի կարիք չունի. միայն թե ջրմուղը, ինչպես հարկն է, գործի. դա է կարևորը: Գեղեցկությունը, կատվային գեղեցկությունը, որ Ամերիկայում մեզ շնչահեղձ էր անում՝ ձվերից բռնած, վերացել-պրծել է: Նոր իրականությանը հասու լինելու համար պետք է նախ քանդել կոյախողովակները, բացել միզասեռական համակարգի փտախտավոր ուղիները, որով անցնում է արվեստի արտաթորանքը: Պերմանգանատն ու ֆորմալդեհիդն են այսօրվա բուրմունքները: Խողովակները խցանված են խեղդամահ վիժուկներով:

Մատիսի աշխարհը հնաոճ ննջարանի պես դեռ գեղեցիկ է: Ոչ առանցքակալ է երևում, ոչ կաթսայարանի թիթեղ, ոչ մխոց, ոչ էլ մանեկաբանալի: Սա գինու և զեխության հովվերգական օրերին Բուլոնյան անտառում ուրախանալու հին աշխարհն է դեռ: Կենդանի, շնչող ծակոտիներ ունեցող էս արարածների մեջ շրջելիս, որոնց նկարագիրը կայուն է ու հաստատուն, ինչպես լույսն ինքը, ես թեթևանում եմ և թարմանում: Դա ամբողջ սրությամբ զգում եմ Մադլեն բուլվարով քայլելիս, երբ պոռնիկները խշխշան փեշերով անցնում են կողքիցս, և նրանց վրա մի հայացք գցելիս անգամ թրթռում եմ ոտքից գլուխ: Պատճառը տարաշխարհիկ կամ գիրգ տեսքը չի: Ոչ, դժվար է գեղեցիկ կին գտնել Մադլեն բուլվարում: Բայց Մատիսի գործերում նրա վրձինը կյանքի է կոչում թրթռուն փայլով օժտված մի աշխարհ, որտեղ միայն կնոջ ներկայության կարիքն է զգացվում ամենափութանցիկ իղձերն իսկ բյուրեղացնելու համար: Ծխաթղթի, ռոմի, ակրոբատների ելույթի, ձիարշավի գովազդներով պատված փողոցային միզարանի մոտ, այնտեղ, ուր ծառերի ծանրանիստ սաղարթը կոտրում է պատերի ու տանիքների ծանրանիստ զանգվածը, ինքն իրեն առաջարկող կնոջ պատահելը դառնում է արկած, որը սկիզբ է առնում ծանոթ աշխարհի ավարտված սահմաններից անդին: Երեկոյան երբեմն, գերեզմանատան մոտով անցնելիս, ես դեմ եմ առնում ծառերից կապված մատիսյան ցնորուն հարճերին՝ բուսահյութից թաց գիսախոիվ բաշերով: Մի քանի քայլ հեռու, անհաշվելի հավիտենությամբ առանձնացած,

թվայնացրել է 1915.info կայքը

Բոդլերի ուրվականն է դիտապաստ փովել, պատանավոր մումիայի նման, մի ամբողջ աշխարհ, որն այլևս չի ործկա: Սրճարանների մութ անկյուններում ձեռքները խաչած տղամարդիկ ու կանայք են, գոգամեջը՝ տոչոր, մոտերքում մատուցողն է կանգնած՝ գոգնոցի գրպանները մանրադրամով լի. համբերությամբ սպասում է ընդմիջմանը, որ վրա հասնի կնոջն ու մխի: Ինչքան էլ աշխարհը փուլ գա, Մատիսի Փարիզը ցնցվում է՝ շենշող, ջղաձիգ օրգազմներին անձնատուր, օդը կանգնած է անշարժ սերմնահեղուկից, ծառերը մազերի նման խոնվել են: Խախուտ սոնիով անիվն անընդհատ ցած է գլորվում. ոչ արգելակներ կան, ոչ առանցքակալներ, ոչ էլ կարգին դողեր: Փլվում է անիվը, բայց պտույտն անխափան է...

9

Մի օր էլ, որտեղից որտեղ, նամակ եկավ Բորիսից, որին չէի տեսել արդեն երկար ամիսներ: Տարօրինակ թուղթ է, ու ես չեմ պնդի, թե պարզ հասկանում եմ: «Ահա թե ինչ է կատարվել մեր միջև, համենայն դեպս՝ ինչքանով որ ինձ է վերաբերում. դու դիպել ես ինձ, կյանքիս, այսինքն՝ մի կետի, որտեղ դեռ ողջ եմ՝ մահվանս: Հուզական առումով ես ավելի եմ խորացել: Նորից սկսել եմ ապրել, ողջ ապրել: Արդեն ոչ թե հուշերում, ինչպես մյուսների հետ, այլ իսկապես ողջ»:

Էապես էր սկսվում: Ոչ բարև-բան, ոչ ամսաթիվ, ոչ հասցե: Գրված էր մանր, մարգարտաշար ձեռագրով, ծոցատետրից պոկած տողանի թղթի վրա: «Դրա համար էլ, սրտովդ եմ, թե չէ,- իսկ իմ կարծիքով՝ հոգուդ խորքում ավելի շուտ ատելի եմ քեզ,- դու շատ մոտ ես ինձ: Քո շնորհիվ գիտեմ, թե ինչպես մեռա: Նորից մահս եմ տեսնում. *իրոք* մեռնում եմ: Սա ավելին է, քան պարզապես մեռած լինելը: Երևի դա է պատճառը, որ վախենում եմ քեզ հետ տեսնվելուց. գուցե խաղ ես սարքել գլխիս. դու էլ ես մեռել: Հիմա ամեն ինչ շատ արագ է կատարվում»:

Տող առ տող կարդում եմ քար սրտով: Էս ամբողջ շաղակրատանքը կյանքի ու մահվան և ամեն ինչի արագ կատարվելու մասին ինձ ցնդաբանություն է թվում: Ինչքան տեսնում եմ, ոչինչ էլ չի կատարվում, բացի թերթերի առաջին էջի սովորական աղետներից: Վերջին կես տարին Բորիսը, մի էժանագին փոքրիկ սենյակ քաշված, մենակ է ապրում՝ հավանաբար հեռազգացական կապ պահպանելով Քրոնստադտի հետ: Խոսում է նահանջի, մասնակի տարհանման ու նման բաների մասին, կարծես, խրամատում նստած, զեկուցագիր գրի շտաբին: Կա-չկա՝ սերթուկով է եղել իր ուղերձը թղթին հանձնելիս, մի քանի անգամ էլ ձեռքերը շփած կլինի, ինչպես անում էր սովորաբար, երբ մարդ էր գալիս բնակարանը վարձելու:

«Թե ինչի համար էի ուզում, որ ինքնասպան լինես...»,– վերսկսում է նա, ու ես արդեն քահ-քահ ծիծաղում եմ: Սովորույթի համաձայն, նա հետ ու առաջ էր անում՝ ձեռքերը սերթուկի պոչամասի տակ դրած, Բորգեզե վիլլայում լիներ, թե Քրոնստադտի մոտ՝ ցանկացած տեղ, ուր որ բավականաչափ տարածություն կար, և սրտի ուզածին չափ իր բարբաջանքն էր դուրս տալիս կյանքի ու մահվան վերաբերյալ: Խոստովանանք լինի, նրա ասածից ոչ մի բառ երբեք չեմ հասկացել, բայց գրավիչ տեսարան էր, և ինձ՝ որպես այլահավատի, բնականաբար, հետաքրքրում էր, թե ինչ է կատարվում նրա գանգատուփի գազանանոցում: Երբեմն առ երբեմն էլ, գլխում հորձանքվող ծով մտքերից ուժաքամ, նա մեկնվում էր բազմոցին: Ոտքերը համարյա թե կպչում էին գրադարակին, որտեղ նրա Պլատոնն ու Սպինոզան էին դրված. չէր հասկանում իմ անտարբերությունը սրանց նկատմամբ: Պիտի ասեմ, որ երկուսն էլ հետաքրքիր էին հնչում նրա շարադրմամբ, թեև մազաչափ պատկերացում էլ չէի կազմում, թե խոսքն ինչի մասին էր: Մեկ-մեկ գաղտագողի ինչ-որ հատոր էի աչքի անցկացնում, որից իբր թե քաղել էր իր զառանցական մտքերը, բայց նրա ասածների ու գրքում գրվածի կապը հեռավոր էր ու աննշան: Նա՝ Բորիսը, սեփական լեզվով էր արտահայտվում, մանավանդ երբ առանձին էինք, բայց Քրոնստադտին լսելիս ինձ թվում էր, թե Բորիսը գողանում է նրա ընտիր մտքերը: Էս երկուսն

ասես խոսեին բարձրագույն մաթեմատիկայի լեզվով: Ինչ որ միս ու արյուն ուներ՝ երբեք մուտք չէր գործում նրանց խոսակցություն. միայն մտահնար, աննյութական, զգվելիության չափ վերացիկ բաներ: Երբ խոսքը մեռնելուն էր հասնում, մի քիչ որոշակիանում էր. ի վերջո, սակրը կամ կացինը պիտի կոթ ունենան: Ես անսահման հաճույք էի ստանում էս զրուցաբանությունից: Կյանքումս առաջին անգամ մահը թովիչ էր պատկերանում ինձ՝ բոլոր էդ վերացական վախճանները, որ անարյուն հոգեվարք էին ենթադրում: Ժամանակ առ ժամանակ Բորիսն ու Քրոնստադտը ինձ շնորհավորում էին ողջ լինելու համար, բայց էնպես, որ շփոթմունքի էի մատնվում: Նրանք զգալ էին տալիս, որ ծնվել եմ 19-րդ դարում, անցյալի մնացուկի պես մի բան եմ, ռոմանտիկ մասունք, հոգավոր pithecantropus erectus[1]: Բորիսի ուշքը գնում էր ինձ դիպչելու համար. նա ցանկանում էր, որ ես ողջ լինեմ, որպեսզի ինքը կարենա մեռնել սրտի ուզածին չափ: Երբ նայում էր ինձ ու դիպչում, կարելի էր կարծել, թե փողոցների միլիոնավոր մարդիկ սատկած կովեր էին, ուրիշ ոչինչ: Բայց նամակը... նամակը մոռացա...

«Թե ինչի համար էի ուզում, որ ինքնասպան լինես Քրոնստադտների մոտ, էն երեկոյան, երբ Մոլդորֆն աստված կարգվեց, պատճառը սա է. ես շատ մոտ էի քեզ: Թերևս ավելի մոտ, քան երբևէ կլինեմ: Եվ ես վախեցա, սարսափելի վախեցա, թե մի օր խաբս կտաս ինձ ու կմեռնես ձեռքերիս վրա: Այ թե ներողը կընկնեմ, կմնա լոկ իմ պատկերացումը քո մասին՝ առանց որևէ հաստատման: Դա քեզ երբեք չեմ ների»:

Կարո՞ղ եք երևակայել նման խոսքեր ասող մարդու: Ինձ համար անորոշ է, թե նա ինչ պատկերացում ուներ իմ մասին, բայց, ամեն դեպքում, պարզորոշ է. բանը վերաբերում է հենց միայն պատկերացման, զուտ գաղափարի, որն առանց սնվելու էլ՝ իր գոյությունը պահպանում է: Բորիսը երբեք մեծ նշանակություն չի տվել սննդի հարցին: Նա ջանում էր ինձ գաղափարներով կերակրել: Ամեն ինչ գաղափար էր: Ինչևէ, երբ մտքին դրեց բնակարանը վարձով տալ,

[1] Ուղիղ քայլող պիթեկանտրոպ (լատ.):

թվայնացրել է 1915.info կայքը

չմոռացավ միջադիրը փոխել զուգարանում: Էապես, թե էնպես, նա չէր ուզում, որ իր ձեռքերի վրա մեռնեի: «Դու պետք է մինչև վերջ կյանք լինես ինձ համար,- գրում է նա:- Սա է քո մասին ունեցած իմ պատկերացումը հաստատելու միակ ուղին: Որովհետև, ինչպես ինքդ ես տեսնում, դու առնչվում ես ինձ համար էնքան կենսական մի բանի, որ չեմ կարծում, թե երբևէ ձերբազատվեմ քեզնից: Ցանկություն էլ չունեմ: Ես ուզում եմ, որ մինչ մեռած եմ, քո կյանքն օրեցօր ավելի ու ավելի կենսահաստատ լինի: Ահա թե ինչու, ուրիշների հետ քեզնից խոսելիս, մի տեսակ ամաչում եմ: Մարդ դժվարանում է իր մասին բացեիբաց խոսել»:

Երևի ենթադրեցիք, թե նա ինձ տեսնելու մեծ ցանկություն ունի կամ կուզեր իմանալ, թե ինչ եմ անում. ամենևին, մի տող անգամ չկա որևէ որոշակի, անձնական բանի մասին, ապրել-մեռնելու էս լեզվանիկությունն է բացառապես, ընդամենը՝ խրամատից գրված նամակ, թունավոր գազի քուլա՝ ի լուր ամենեցուն, որ պատերազմը դեռ շարունակվում է: Մեկ-մեկ ինքս ինձ հարցնում եմ, թե ինչից է, որ ես գրավում եմ միայն խելապակասներին, ջղախտավորներին, նյարդագարներին, հոգեհիվանդներին ու հատկապես հրեաներին: Ըստերևույթին, առողջ այլահավատի մեջ մի բան կա, որ բորբոքում է հրեայի միտքը, ինչպես թթվաշ սև հացի տեսքը: Այ, Մոլդորֆը, օրինակ, որը, Բորիսի և Քրոնստադտի խոսքերով, իրեն Աստված է կարգել: Էդ օձի ծնունդն ատելով ատում էր ինձ, բայց էլի հեռու չէր մնում: Պարբերաբար հայտնվում էր վիրավորանքների իր բաժինն ստանալու. դա կազդուրիչ ներգործություն ուներ նրա վրա: Սկզբում, ճիշտ է, փափուկ էի հետը. դե, ինչքան չլիներ, ինձ վճարում էր իրեն լսելու համար: Ու թեպետ երբեք առանձնակի համակրանք չեմ ցուցաբերել, գոնե լռել գիտեի, եթե մեջտեղը ճաշի կամ գրպանի մանր փողի հարց կար: Բայց որոշ ժամանակ անց, տեսնելով, որ մազոխիստի մեկն է, սկսեցի մերթ-մերթ խնդալ երեսին. սա մտրակի հարված էր նրա համար, ստիպում էր, որ վիշտն ու տառապանքը նոր թափով հորդեին: Եվ գուցե ամեն ինչ մեր միջև հարթ դասավորվեր, եթե նա իր պարտքը չհամարեր Տանյային պաշտպան կանգնել: Ախր Տանյան հրեուհի էր,

թվայնացրել է 1915.info կայքը

և դա բարոյական խնդիր էր հարուցում: Մոլդորֆն ուզում էր, որ ես օրիորդ Կլոդի հետ մնամ, որին, անկեղծ ասած, կապվել էի իսկապես: Պատահում էր՝ նա ինձ նույնիսկ փող էր տալիս Կլոդի հետ քնելու համար: Իսկ հետո հասկացավ, որ անհուսալի անառակ եմ:

Տանյայի անունը տվեցի, որովհետև նա արդեն վերադարձել է Ռուսաստանից, մի քանի օր առաջ: Սիլվեստրը մնացել էր էնտեղ, որպեսզի խորամուտ լիներ գործի մեջ: Նա ամբողջովին հրաժարվել էր գրականությունից: Նոր Ուտոպիային էր նվիրվել: Տանյան ուզում էր, որ իր հետ գնայի, ցանկալի էր՝ Ղրիմ, և նոր կյանք սկսեի: Կարլի տանը մի լավ գինարբուք սարքեցինք, ձեռքի հետ էլ հեռանկարները քննարկեցինք: Ինձ հետաքրքրում էր, թե ապրուստս ինչով կվաստակեի էնտեղ. կարո՞ղ էի, ասենք, սրբագրիչ աշխատել: Տանյայի խոսքերով՝ անհանգստանալու կարիք չունեի. ինձ համար աշխատանք կճարվեր, եթե լուրջ ու անկեղծ լինեի: Փորձեցի լուրջ տեսք ընդունել, բայց սրտաճմլիկ բան ստացվեց: Ռուսաստանում տխուր դեմքեր չեն ուզում, պետք է կենսուրախ, խանդավառ, անհոգ, լավատես լինես: Ինձ համար խոսքն ասես Ամերիկային վերաբերեր: Ես ի ծնե զուրկ եմ նման խանդավառությունից: Իհարկե, Տանյային ոչ մի բառ չասացի, բայց թաքուն Աստված էի կանչում, որ ինձ հանգիստ թողնեին, գնայի իմ փոքրիկ ապաստանն ու մնայի էնտեղ, մինչև պատերազմն սկսվեր: Ռուսաստանի հետ կապված էդ ամբողջ գլխացավանքն ինձ մի թեթև տակնուվրա արեց: Իսկ Տանյան էնպես էր ոգևորվել, որ մի վեց շիշ սովորական գինի դատարկեցինք: Կարլը թռվռում էր լվի պես: Նա բավականաչափ հրեա է, որպեսզի գլուխը կորցնի Ռուսաստանի համար: Կարլի ուզածը մեզ ամուսնացնելն էր՝ անմիջապես: «Պսակվեք,– ասում էր,– կորցնելու բան չունեք»: Իսկ հետո պատճառ բռնեց, թե տեղ ունի գնալու, ինչ է՝ գլխներիս ճարը տեսնեինք արագ-արագ: Ու թեև Տանյան էլ էր ուզում, Ռուսաստանի հաշիվն էնպես էր խելքը-միտքը տարել, որ նա ժամանակը վատնեց ականջս խարտոցելով, ես էլ ջղային ու չարացած դարձա: Ինչ որ էր, արդեն պետք էր ուտելու և աշխատանքի գնալու մասին մտածել, և մենք, Էդգար Քինե բուլվարում, գերեզմանատնից երկու քայլի վրա,

լցվեցինք մի տաքսի ու սլացանք: Լավ ժամ էր բաց մեքենայով Փարիզում պտույտ տալու համար, և մեր ստամոքսներում ղղղլացող գինին պտույտն ավելի հաճելի էր դարձնում: Կարլը նստել էր մեր դիմաց, ծալովի աթոռակին, դեմքը՝ բազուկի պես կարմիր: Խեղճ թշվառական. նա երջանիկ էր՝ պատկերացնելով, թե ինչ փառավոր նոր կյանք կվարեր Եվրոպայի մյուս ծայրում: Բայց, միևնույն ժամանակ, փոքր-ինչ մտախոհ էր. դա էլ նկատեցի: Նա չէր ուզում հեռանալ Փարիզից, ճիշտ ինձ նման: Փարիզը նրա հանդեպ բարի չէր եղել, ոչ էլ՝ իմ հանդեպ կամ մեկ ուրիշի, ըստ էության, բայց երբ տանջվում, ամեն ինչի դիմանում ես էստեղ, Փարիզի ձեռքն ես ընկնում, կարելի է ասել՝ բռնում է ձվերդ ու բաց չի թողնում սիրածարավ էգի պես, որն ավելի շուտ կմեռնի, քան քեզ ձեռքից բաց կթողնի: Ես հասկանում էի Կարլի զգացածը: Սենն անցնելիս էլ դեմքին հիմար ժպիտ հայտնվեց, և նա էնպես էր նայում շենքերին ու արձաններին, ասես երազում տեսներ: Ինձ համար էլ էր երազի նման. ձեռքս տարել էի Տանյայի ծոցը, ծծերն էի ճմլում: Աչքս ընկավ կամրջի տակի ջրին ու բեռնանավերին, քիչ հեռվում՝ Աստվածամոր տաճարին, ոնց որ բացիկներում է լինում, և ես՝ խմած-խմած, մտածում էի ինձ ու ինձ, թե մարդ հենց էս ձևով է քաշվում, էլի, բայց ես էլ թաց տեղ պառկող չէի ու գիտեի, որ չորս կողմիս անցուդարձը երբեք չէի փոխի ոչ Ռուսաստանի, ոչ էլ երկնային կամ երկրային դրախտի հետ: Հիանալի օր էր, մտքերով էի ընկել, քիչ հետո փորներս մի լավ կկշտացնեինք ու մի հատուկ բան կպատվիրեինք՝ ինչ-որ ընտիր, թունդ գինի, որը կքշեր-կտաներ Ռուսաստանի էդ հաշիվները: Տանյայի պես ծաղկուն, տեղը տեղին կինը, եթե միտքը ծուռ է, թքած ունի, էլ քո հարմարությանը չի նայի: Թողնես՝ հենց տաքսիում շալվարը հագիցդ կհանի: Ինչևէ, մեծ բավականություն էր երթևեկի մեջ էդպես պտույտներ տալը՝ շրթներկից լողզված դեմքերով, ղղղլոցը՝ կոյուղու պես ներսներս ընկած, մանավանդ երբ թեքվեցինք Լաֆիտ փողոց, որը բավական լայն է փողոցի վերջում գտնվող փոքրիկ մատուռը շրջանակելու համար, իսկ վերևում Սակրե Կյորն է՝ ճարտարապետության մի արտառոց խառնուրդ, լուսավոր ֆրանսիական գաղափար, որ թափանցում-անցնում է

թվայնացրել է 1915.info կայքը

հարբած գիտակցությանդ միջով ու քեզ թողնում անցյալի ծովում անզոր ճողփելիս, աչքդ բաց պահող, թեև ջղերիդ չազդող հպանցիկ նիրհի մեջ:

Տանյան նորից մեջտեղ է եկել, կայուն աշխատանք կա, հարբած դուրս ենք տալիս Ռուսաստանի մասին, գիշերները ման գալով հասնում տուն, թեժ ամառ է Փարիզում. կյանքը մի քիչ դեպի լավն է փոխվել աչքիս: Դրա համար էլ երևի Բորիսի նամակն ինձ բացարձակ անհեթեթություն թվաց; Համարյա ամեն օր, հինգին մոտ, հանդիպում եմ Տանյայի հետ՝ պորտո խմելու, ինչպես ինքն է կոչում պորտվեյնը: Թողնում եմ, որ ինձ անծանոթ տեղեր տանի՝ շքեղ բարեր Ելիսեյան դաշտերի շրջակայքում, որտեղ ջազի հնչյունները և երգիչների մեղմ ու հոգեթով մանկական ձայները ասես կարմրափայտե երեսապատերի միջով գան: Նույնիսկ զուգարան գնալուդ ժամանակ էս հյութեղ, կենսալի մեղեդիները հետապնդում են քեզ, ներս խուժում օդանցքերից՝ կյանքը դարձնելով համակ օճառի բազմագույն պղպջակներով լեցուն փափկանուշ հեքիաթ: Թե Սիլվեստրի բացակայությունն է պատճառը, և Տանյան իրեն ազատ է զգում, թե մի ուրիշ պատճառ կա, բայց նա ուղղակի հրեշտակի վարք ու բարք ունի: «Մեկնելուցս առաջ քեզ զզվելի էիր պահում ինձ հետ,- ասաց մի օր:- Ի՞նչ էիր իմացել: Ես քեզ երբեք չեմ նեղացրել, չէ՞»: Մենք դյուրազգաց էինք դառնում աղոտ լույսերի և պատերից ծորող էդ մեղմաթով, փայտեղեն երաժշտության տակ: Գործի գնալու ժամանակն էր մոտենում, իսկ մենք դեռ բան չէինք կերել: Սեղանին, մեր առջև, բարի կտրոններն էին՝ վեց ֆրանկի, չորս ու հիսունի, յոթ ֆրանկի, երկուս ու հիսունի. ես մեքենայաբար դասավորում էի դրանք ու մտածում, թե ավելի լավ չէ՞ր բարմեն լինեի: Հաճախ, հենց էդպես, մինչ Տանյան կորկոտ էր անում ինձ հետ, լեզվին տալիս՝ Ռուսաստանի, ապագայի, սիրո ու չգիտես էլ ինչի մասին, մտքովս բոլորովին ուրիշ բաներ էին անցնում, ասենք, կոշիկ փայլեցնելու կամ զուգարանում աշխատելու վերաբերյալ, երևի որովհետև ամեն տեղ էլ, ուր նա տանում էր ինձ, շատ հարմարավետ էր, ու գլուխս չէր մտնում, որ ես երբևէ խմիչքից հեռու սթափ մարդ կդառնամ,

էն էլ՝ ծեր ու կորաքամակ... Չէ, միշտ պատկերացնում էի, թե ապագայում, ինչքան էլ որ համեստ լինի դա, նույն ոգին կիշխի, ինչ հիմա, նույն երաժշտությունը կհնչի ականջիս, էլի բաժակները կզնգան, ու ամեն մի բարեձև տուտուզի հետևից, երկար քղանցքի պես, օծանելիքի անուշ բույրը կձգվի՝ խեղդելով կյանքի զազրահոտը նույնիսկ ներքևը՝ զուգարանում:

Տարօրինակ է, որ Տանյայի հետ ճոխ բարերով թրև տալը բնավ չփչացրեց ինձ: Ինչ խոսք, դժվար էր նրանից բաժանվել: Տանում էի խմբագրատան մոտի եկեղեցու գավիթը, և էնտեղ, խավարում կանգնած, փաթաթվում էինք վերջին անգամ: Նա շշնջում էր. «Աստված իմ, հիմա ի՞նչ եմ անելու»: Ուզում էր, որ թողնեմ աշխատանքն ու գիշեր-ցերեկ հետը սեր անեմ. արդեն Ռուսաստանն էլ էր մտքից հանել, քանի որ միասին էինք: Բայց բաժանվեինք թե չէ՝ խելքը գլուխս էր գալիս: Մի ուրիշ երաժշտություն՝ ոչ նույնքան հոգեթով, բայց ախորժալուր, շոյում էր ականջս, հենց որ հրում էի պտտադուռը: Եվ մի ուրիշ հոտավետություն՝ երկար քղանցքի պես չձգվող, բայց ամենաթափանց, քրտինքի ու պաչուլիի յուրատեսակ խառնուրդ, կարծես թե տպարանից, քթիս էր հասնում: Սովորաբար գլուխս տաք գալով՝ ասես միանգամից հողին իջնեի: Որպես կանոն, տեղնուտեղը զուգարան էի գնում. դա ինձ ահագին ուշքի էր բերում: Էնտեղ զով էր, կամ հոսող ջրի քչքչոցն էր նման պատրանք առաջացնում: Զուգարանն իմ սառը ցնցուղն էր միշտ: Իրականության զգացում էր բերում: Մտնելիս անցնում էիր շորերը փոխող մի շարան ֆրանսիացի բանվորների կողքով: Փո՛ւh, ա՛յ թե շան հոտ էր փչում սրանցից: Ախր լավ էլ վարձատրում էին, է՛: Մի խոսքով, հանվում էին էդտեղ, ոմանք երկար ոտաշորով էին, մյուսները՝ մորուքավոր, մեծ մասը՝ սփրթնած, իսկը ցամաք ձորի աղվեսներ, երակների մեջ՝ արճիճ: Զուգարանի ներսում կարելի էր սրանց պարապ մտավարժանքների գույքագրում անել: Պատերը լեփլեցուն էին նկարներով ու ասույթներով, բոլորն էլ՝ կատակախառն լկտի, դյուրընկալ և ընդհանուր առմամբ, զվարթ ու դուրալի: Սանդուղք էր պետք որոշ տեղեր հասնելու համար, բայց երևի արժեր բերել՝ թեկուզ հոգեբանական տեսակետից: Մեկ-մեկ,

թվայնացրել է 1915.am-ը կայքը

ջուր թափելիս, մտածում էի, թե էս խզբզանքներն ինչ տպավորություն կթողնեին պճնագեղ կանանց վրա, որոնք ներսուդուրս էին անում Ելիսեյան դաշտերի հոյաշեն պետքարանները: Հետաքրքիր է՝ պոչներն էլի էդպես կցցեի՞ն, եթե տեսնեին, թե մի էշի գլուխ իրենց մասին ինչ է մտքով անցկացրել էստեղ: Նրանց աշխարհը, անկասկած, շղարշ ու թավիշ էր ամբողջովին, կամ էլ իրենք էին էդ տպավորությունն ստեղծում խշխշան զգեստները հագին կողքովդ անցնելիս, անուշահոտություն արձակելով: Նրանցից ոմանք միշտ չէ, որ նման նրբաշուք տիկնայք էին եղել, մյուսներն էլ էդպես խշխշալեն անցնում-դառնում էին՝ իրենց ապրանքը գովազդելով: Եվ միգուցե, երբ մենակ էին մնում, երբ իրենց զարդասենյակներում բարձրաձայն խոսում էին մեկուսի, տարօրինակ խոսքեր էին պոկվում շուրթերից, որովհետև նրանց աշխարհը, ինչպես և ամեն մի աշխարհ, մեծ մասամբ կազմված է աղբամանի պես ժանտահոտ կեղտից ու ապականությունից, ուղղակի բախտները բերել է, որ աղբամանի բերանը փակելու կափարիչ ունեն:

Ինչպես նշեցի արդեն, ցերեկային կյանքս Տանյայի հետ վատ ներգործություն չուներ ինձ վրա: Թե պատահում էր, որ շատ էի կոնծում, մատներս խոթում էի կոկորդս. դժվար է սրբագրել, եթե խելքդ տեղը չի: Բաց թողած ստորակետը հայտնաբերելն ավելի մեծ կենտրոնացում է պահանջում, քան Նիցշեի փիլիսոփայության համառոտ շարադրանքը: Խմած ժամանակ երբեմն կարող ես փայլել, բայց փայլը տեղին չի սրբագրատանը: Ամսաթվերը, կոտորակները, միջակետերը. սրանք են հաշիվ: Ու հենց սրանք էլ պլստում են աչքից, երբ կատարդ տաք է: Մերթընդմերթ կոպիտ սխալներ էի անում, ու եթե սովորած չլինեի գլխավոր սրբագրիչի քամակը պաչել, ինձ գործից կհանեին, էդ մեկը՝ հաստատ: Մի անգամ նույնիսկ նամակ ստացա վերնահարկի ինչ-որ ջոջից՝ էնքան երևելի մեկից, որ տեսությանը չէի էլ արժանացել, և իմ ավելի քան միջակ մտավոր կարողություններին վերաբերող մի քանի սպանիչ արտահայտությունների արանքում նա ակնարկել էր բավական պարզ ու շիտակ, որ տեղս լավ իմանամ և կարգուկանոնին հետևեմ, այլապես կաշվիս վրա կզգամ, թե ինչն

ինչոց է: Ճիշտն ասած, ես վախից տակս լցրի: Դրանից հետո գործի ժամին խոսելիս միավանկ բառեր էի միայն օգտագործում, փաստորեն բերանս համարյա չէի բացում ամբողջ երեկո: Ինձ առաջնակարգ ապուշի տեղ էի դնում, նրանց ուզածն էլ դա էր: Երբեմն ատ երբեմն, գլխավոր սրբագրիչի սիրտը շահելու համար, մոտենում էի նրան ու քաղաքավարությամբ հարցնում, թե էս կամ էն բառը ինչ կնշանակի: Սա նրան դուր էր գալիս: Էս մարդը տեղով քայլող բառարան էր և աշխատանքի ժամանակացույց: Ինչքան էլ ընդմիջմանը գարեջուր քաշեր գլխին,– իսկ նա, օգտվելով իր ղեկավար դիրքից, անձնական ընդմիջումներ էլ էր անում,– երբեք չէիր բռնացնի, թե ինչ-որ տարեթիվ կամ բնորոշում չգիտի: Նա ծնված էր իր գործի համար: Իմ միակ ափսոսանքն էլ էն էր, որ շատ բան գիտեի: Մերթ-մերթ դա ի հայտ էր գալիս, հակառակ ձեռնարկածս բոլոր նախազգուշական միջոցներին: Եթե պատահեր՝ աշխատանքի գայի՝ ինչ-որ գիրք թևատակիս, էս մեր շեֆի աչքը նկատում էր դա, ու եթե գիրքը լավն էր, նա օձանում էր: Բայց ես երբեք դիտավորյալ բան չէի անում նրան բարկացնելու համար, աշխատանքիս վրա շատ էի դողում, որ իմ ձեռքով թոկը վիզս գցեի: Թեև, մեկ է, եթե մի մարդու հետ ընդհանուր ոչինչ չունես, դժվար է շփվել. մատնում ես քեզ, թեկուզև բացառապես միավանկ բառերով խոսես: Անտեր մնա, նա՝ էս շեֆը, շատ լավ էլ գիտեր, որ ես ամենաչնչին հետաքրքրությունն էլ չունեմ իր ասած-խոսածի հանդեպ, բայց, ինչով կուզեք՝ բացատրեք, նրան բավականություն էր պատճառում ինձ երազներից կտրելը և գլուխս տարեթվերով ու պատմական դեպքերով լցնելը: Երևի վրեժ լուծելու նրա ձևն էլ սա էր:

Դրա հետևանքով մի փոքր ևսրոզ ստացա: Օդի դուրս գայի թե չէ՝ ոնց որ մի ճանճ ինձ կծեր: Խոսակցության թեման կարևոր էլ չէր, հենց որ լուսադեմին ճամփա էինք ընկնում Մոնպառնաս, իմ հրշեջ խողովակով վրա էի տալիս, խոսքը բերաններին թողնում՝ այլասերված երազներս ի ցույց դնելով: Ամենից շատ սիրում էի էն բաներից խոսել, որոնց մասին մեզնից ոչ մեկը գաղափար չուներ: Հոգեկան խանգարման թեթևակի տեսակ էի ձեռք բերել. կարծեմ էխոլալիա է կոչվում: Ինչ կար-չկար երեկվա սրբագրության մեջ՝ լեզվիս վրա

պտտվում էր: Ասենք, *Դալմաթիան*. մի գովազդային հայտարարություն էի նայել, թե ինչ գեղատեսիլ առողջարանային վայր է: Հա, ուրեմն *Դալմաթիա*: Գնացք ես նստում, իսկ առավոտյան արդեն քրտինքի մեջ լողում ես, ու հասած խաղողի հատիկներն են ճաքում: Ես կարող էի լեզու թափել Դալմաթիայի մասին մեծ բուլվարից մինչև կարդինալ Մազարինիի պալատ հասնելը, դեռ մի բան էլ դենը, եթե մտքիս դնեի: Քարտեզի վրա նույնիսկ Դալմաթիայի տեղը չգիտեի, ոչ էլ ուզում էի իմանալ, բայց գիշերվա երեքին, երբ երակներդ լիքն են արճճով, շորերդ՝ քրտինքից ու պաչուլիից թաց, ականջիդ մամլիչով անցնող արծաթե ապարանջանների զնգոցն է և գարեջրախառն խոսքուզրույցը, աշխարհագրության, հագուստ-կապուստի, լեզվի, ճարտարապետության նման աննշան բաները ոչ մի գրող ու ցավ էլ չեն նշանակում: Դալմաթիան վերաբերում է որոշակի գիշերային ժամի, երբ բարձրալուր կոչնակները մարում են, և Լուվրի բակը թե՛ հրաշալի, թե՛ զվարճալի է թվում, ասես առանց պատճառի արտասվելիս լինես, որովհետև թե՛ չքնաղ է, թե՛ լուռ ու դատարկ և ոչ մի կապ չունի թերթի առաջին էջի ու վերնահարկի զառ խաղացողների հետ: Մի պատառիկ Դալմաթիայով, որ դանակի սառը շեղբի պես հանգչում էր իմ բորբոքված նյարդերին, ես ճաշակում էի ճամփորդության ամենահրաշք զգացողությունները: Եվ ծիծաղելին ահա թե որն է. ամբողջ աշխարհն էլ մտովի պտտեի, Ամերիկան երբեք միտքս չէր գալիս. ավելի հեռու էր, քան նույնիսկ կորած մայրցամաքները, որովհետև կորած մայրցամաքների հետ ինչ-որ խորհրդավոր առնչություն ունեի, մինչդեռ Ամերիկայի հանդեպ ոչինչ էլ չէի զգում, բացարձակապես ոչինչ: Ճիշտ է, մերթընդմերթ հիշում էի Մոնային, բայց ոչ թե որոշ ժամանակի և տարածության միջավայրում, այլ՝ առանձին, կտրված, կարծես նա վերածվել էր անցյալն իրենով ծածկած մի մեծ ամպանման գոյացության: Ես ի վիճակի չէի երկար մտածել նրա մասին, թե չէ կամրջից ինձ ցած կգցեի: Տարօրինակ է: Արդեն համակերպվել էի, որ կյանքս պիտի առանց Մոնայի անցներ, բայց վայրկենական խոհն անգամ նրա մասին շամփրում էր ինձ մինչև ուղնուծուծս, խոցում գոհունակությունս և հետ շպրտում իմ թշվառ անցյալի տանջալից կեղտահորը:

Ցոթ տարի էր, գիշեր թե ցերեկ, միայն *նա* էր մտքումս: Եթե քրիստոնյան էնքան հավատարիմ լիներ իր Աստծուն, ինչքան ես՝ նրան, բոլորս այսօր Հիսուս Քրիստոս կլինեինք: Գիշեր թե ցերեկ նրա մասին էի մտածում, նույնիսկ դավաճանելիս: Եվ հիմա, երբ մեկ-մեկ թվում է, թե լիովին ազատվել եմ էդ ամենից, հանկարծ, անկյունն անցնելուն պես փոքրիկ պուրակ է հայտնվում աչքիս՝ մի քանի ծառ ու նստարան, ամայի տեղ, ուր կանգնել ենք, շրջել, ուր մեկմեկու խելագարության դուռն ենք հասցրել դառը, խանդաբորբ տեսարաններով: Ու միշտ ինչ-որ ամայի տեղ է դա եղել, ասենք, Էստրապադ հրապարակը կամ մզկիթի մոտի անշուք ու տրտում փողոցները, կամ էլ բաց շիրմի նմանվող Բրետոյոյ պողոտան, որն իրիկվա տասին արդեն էնքան լռին է ու անկենդան, որ մտածում ես սպանության կամ ինքնասպանության մասին, գոնե մի բանի, ինչը մարդկային դրամայի նշույլ կբերի: Երբ մտածում եմ, որ նա գնացել է, երևի ընդմիշտ գնացել, մի մեծ անդունդ է բացվում իմ առաջ, և ես զգում եմ, որ ընկնում եմ, ընկնում, շարունակ ընկնում անհատակ ևև վիհը: Սա արցունքներից վատ է, զղջումից, ցավից կամ մրմուռից խոր: Սա այն խորխորատն է, ուր գահավիժեց սատանան: Ոչ դուրս գալու ճար կա, ոչ լույսի շող, ոչ մարդու ձայն, ոչ ձեռքի հպում:

Քանի-քանի հազար անգամ, գիշերային փողոցներով շրջելիս, հարց եմ տվել ինձ, թե կգա՞ նորից մի օր, երբ նա կողքիս կլինի: Ի՛նչ կարոտալի հայացքներ եմ պարգևել շենքերին ու արձաններին. էնքան անկշտում, հուսակտուր եմ նայել, որ մտքերս դարձել են նույն շենքերի ու արձանների մի մասը, սրանք ներծծված են իմ տառապանքով: Չեմ կարող չվերհիշել նաև, որ էս տրտում, անշուք փողոցներով կողք կողքի քայլելիս, որ հիմա էսպես ներծծված են իմ երազանքով ու անձկությամբ, նա ոչինչ չէր նկատում, ոչինչ չէր զգում. նրա աչքին սրանք նման էին մյուս փողոցներին, գուցե փոքր-ինչ ավելի խղճուկ էին, ոչ ավելին: Նա չէր մտապահում, որ հենց էս անկյունում էի կանգնել՝ իր հերակալը գետնից վերցնելու կամ էլ կոացել՝ կոշիկների քուղերը կապելու, իսկ ես հիշում էի, թե ոտքը որտեղ է դրել, և նրա ոտնահետքն ընդմիշտ կմնար էդտեղ, եթե նույնիսկ

թվայնացրել է 1915.info կայքը

բոլոր տաճարներն ավերվեին, և ամբողջ եվրոպական քաղաքակրթությունը բնաջնջվեր աշխարհի երեսից:

Մի գիշեր, երբ, անսովոր կսկիծի ու վհատության գիրկն ընկած, քայլում էի Լոմոն փողոցով, որոշ բաներ բացահայտվեցին առանձնակի հստակությամբ: Պատճառը, դառնացած սրտով ու հուսալքված, հաճախակի շրջելն էր էս փողոցով, թե մի երեկո, երբ կանգնած էինք Լյուսիեն Էո հրապարակում, Մոնայի նետած արտահայտության հուշը, չգիտեմ: «Ինչո՞ւ էն Փարիզը ցույց չես տալիս,– ասաց նա,– որի մասին գրում ես»: Մի բան գիտեմ միայն. էս խոսքերը մտաբերելով՝ հանկարծ հասկացա, որ անհնար է նրա առաջ բացել ինձ քաջածանոթ Փարիզը, շրջանների չբաժանված Փարիզը, մի Փարիզ, որը երբեք գոյություն չի ունեցել իմ մենությունից, Մոնայի հանդեպ ունեցած տենչանքից դուրս: Ի՛նչ Փարիզ է. հսկայական: Մի ամբողջ կյանք է պետք դա նորից աչք ածելու համար: Էս Փարիզը, որի բանալին միայն ես ունեմ, հազիվ թե պիտանի է զբոսապտույտի համար՝ թեկուզ լավագույն մտադրություններով. սա մի Փարիզ է, որը պիտի ապրել, զգալ ամեն օր կտտանքի հազարավոր տարբեր ձևերով, մի Փարիզ, որ քաղցկեղի պես աճում է քո մեջ, աճում է ու աճում, մինչև լիովին կխժռի քեզ:

Գլխումս խռնվող էս մտորումների մեջ ոտքերս էի քարշ տալիս Մուֆտար փողոցով, երբ մի ուրիշ տարօրինակ դրվագ հիշեցի անցյալից՝ էն ուղեցույցից, որի էջերը Մոնան խնդրում էր թերթել, բայց կազմի հաստության պատճառով ուժս չէր պատում բացել: Չգիտես ինչու, որովհետև միտքս էդ ժամանակ տարված էր Սալավենով, ու նրա արբազան տիրույթներում էի դեգերում, մի խոսքով, չգիտես ինչու, մտաբերեցի, որ մի անգամ, օրնիբուն աչքովս ընկնող հուշատախտակից ոգեշնչված, հանկարծական մղումով մտա «Օրֆիլա» պանսիոնն ու խնդրեցի ցույց տալ Ստրինդբերգի զբաղեցրած սենյակը: Դեռ ոչ մի ահավոր բան չէր եկել գլխիս, թեև արդեն կորցրել էի ամբողջ երկրային ունեցվածքս և գիտեի, թե ինչ է նշանակում սոված թրևել ու վախենալ ոստիկանությունից: Ոչ մի հատիկ ընկեր չունեի Փարիզում, մի հանգամանք, որ թե՛ ընկճում, թե՛ շվարեցնում էր

թվայնացրել է 1915.info կայքը

ինձ, որովհետև ուր էլ որ թափառել էի էս աշխարհում, ամենահեշտն ինձ համար ընկեր ճարելն էր եղել: Բայց իրականում ոչ մի սարսափելի բան դեռ չէր կատարվել ինձ հետ: Կարելի է ապրել և առանց ընկերների, ինչպես ապրում են առանց սիրո, անգամ առանց փողի՝ էդ կարծեցյալ sine qua non-ի[1]: Իսկ Փարիզում կարելի է ապրել,– ես հայտնաբերե՛լ եմ դա,– պարզապես տրտմությամբ ու տառապանքով: Դառնահամ սնունդ է, բայց ոմանց համար երևի ավելի լավը չկա: Ամեն դեպքում, մինչև վարդապետի խազը դեռ չէի հասել: Փորձանքի հետ սիլի-բիլի էի անում: Ահագին ժամանակ ու տրամադրություն ունեի ուրիշների կյանքը խցկվելու, ռոմանտիկայի անհամ ջրերը մտած՝ ժամավաճառ լինելու համար, ռոմանտիկա, որն ինչքան էլ զզվելի լինի, եթե ամփոփված է գրքի կազմի տակ, հեռահմա ու աննաձնական է թվում: Տնից դուրս գալիս գիտակցում էի, որ շուրթերիս հեգնական ժպիտ է խաղում, կարծես ինքս ինձ ասեի. «Չէ՛, դեռ «Օրֆիլա» պանսիոնի ժամանակը չի»:

Հետո, իհարկե, հասկացա մի բան, որն ամեն խելագար վաղ թե ուշ հայտնագործում է Փարիզում. դժոխքը տառապյալի պատկերացրածը չի:

Վայ թե ավելի լավ եմ հասկանում հիմա՝ ինչու էր Մոնան Ստրինդբերգ կարդալիս նման գերագույն հաճույք ստանում: Աչքիս առաջ է. ինչ-որ *հրաշալի* հատված էր կարդում թե չէ՝ գլուխը բարձրացնում էր գրքից և ծիծաղից արցունքոտված՝ ասում. «Դու էլ ես սրա նման գիժ... ուզում ես, որ պատժե՛ն քեզ»: Ի՛նչ հաճույք պիտի լինի սադիստի համար իր մազոխիստին գտնելը: Նա կծում էր իրեն՝ ասես սեփական ատամների սրությունը ստուգելու համար: Մեր ծանոթության սկզբի օրերին Մոնան համակված էր Ստրինդբերգով: Խենթերի այդ հախուռն կառնավալը, որով նա արբեցած է, սեռերի հավիտենական մենամարտը, սարդի անողոքությունը, որը նրան սիրելի է դարձրել խմելուց շլմորած հյուսիսցի ավարառների սրտին. ահա թե ինչը միավորեց ինձ ու Մոնային: Մենք մահվան պար բռնեցինք, ու հորձանուտն ինձ էնքան արագ կուլ տվեց, որ հենց հաջողվեց ջրի երես ելնել, աշխարհին անծանոթ թվաց: Երբ ազատվեցի,

[1] Պարտադիր պայման (լատ.):

թվայնացրել է 1915.info կայքը

երաժշտությունը դադարել էր, կառնավալը՝ ավարտվել, իսկ ես մաշկված էի մինչև ոսկորներիս ծուծը...

«Օրֆիլա» պանսիոն մտնելուս օրը, դուրս գալով էնտեղից, գնացի գրադարան և Գանգեսի ջրերում ցայվելուց ու կենդանակերպի նշանների շուրջը խորհրդածելուց հետո սկսեցի մտորել այն դժոխքի նշանակության մասին, որը Ստրինդբերգն է պատկերել ամենայն անգթությամբ: Եվ մինչ մտմտում էի, ինձ համար հետզհետե պարզվեց նրա ուխտագնացության գաղտնիքը. պոետը թևածում է երկրի երեսին, իսկ հետո ասես սահմանված է, որ, վերախաղարկելով վաղեմի դրաման, հերոսականորեն իջնի հողի ամենախոր ընդերքը, մթին ու ահազդու օթևան գտնի կետաձկան որովայնում, արյունահեղ կռիվ տա ազատվելու, անցյալից մաքրագործված դուրս լողալու համար՝ որպես օտար ափին հանգրվանած լուսապայծառ, արնացող արև-աստված: Այլևս գաղտնիք չէր, թե պատճառն ինչ է, որ Ստրինդբերգը կամ մյուսները (Դանտեն, Ռաբլեն, Վան Գոգը և շատ ուրիշներ) ուխտագնացություն են ձեռնարկել Փարիզ: Ես հասկացա, թե ինչու է Փարիզը ձգում տանջահարներին, ցնորատեսներին, մեծ սիրամոլներին: Հասկացա, թե ինչու էստեղ՝ պտտվող անվի կենտրոնակետում, մարդ ընդունակ է ամենաֆանտաստիկ, անհավանական տեսություններինն հարել՝ դրանք մազաչափ անգամ տարօրինակ չհամարելով, և հենց էստեղ է, որ պատանեկությանդ գրքերը վերընթերցելիս հանելուկները նորանոր իմաստներ են ստանում, ամեն սպիտակ մազիդ հետ՝ ևս մեկը: Քայլում ես փողոցում ու գիտես, որ խենթ ես, մտագար, որովհետև պարզից էլ պարզ է. քեզ շրջապատող սառն, անզգա դեմքերը միայն գժանոցի հիվանդապահներինը կլինեն: Բոլոր անջրպետներն էստեղ վերանում են, և աշխարհն ի հայտ է գալիս որպես խելահեղ սպանդարան: Հարահոսը ձգվում է մինչև աննահմանություն, բոլոր ծակումուտքերը պինդ փակ են, տրամաբանությունն է մոլեգնում արյունոտ կացնի փայլատակման հետ: Օդը պաղ է ու հեղձուկ, լեզուն՝ աշխարհակործան: Ոչ մի ելք չկա, ոչ մի փրկություն, բացի մահից: Փակուղի, որի ծայրին կառափնարան է:

Փարիզ, հավերժակա՞ն քաղաք: Հռոմից էլ հավերժական, Նինվեից էլ հոյակերտ: Աշխարհի կենտրոն, որին ձգտում ես՝ կույր ու երերուն տկարամիտի պես չորեքթաթ սողալով: Եվ օվկիանոսի մեջտեղը քշված խցանի նման տարուբերվում ես ջրի երեսին՝ աղբի ու թափոնքի մեջ, անհաղորդ, անհույս, անտարբեր, նույնիսկ՝ անցնող Կոլումբոսի հանդեպ: Քաղաքակրթության օրրանները աշխարհի ժահաբույր աղբանոցներն են, դամբարան, որին ծանրահոտ արգանդները պահ են տալիս մսի ու ոսկորների իրենց արյունաշաղախ կապոցները:

Իմ պատսպարանը փողոցներն էին: Ոչ ոք չի հասկանա փողոցների հմայքը, մինչև ստիպված չլինի պատսպարան գտնել փողոցում, մինչև տաշեղ չդառնա, որն ամեն հովիկ դեսուդեն է քշում: Ձմռան մի օր, փողոցով անցնելիս, ծախու շուն ես տեսնում, արտասվելու չափ գթաշարժվում: Փողոցի մյուս կողմում, ուրախ գերեզմանոցի պես, մի խեղճուկրակ հյուղակ է կանգնած, որը կոչվում է «Ճագարների դամբան» հյուրանոց: Սա ծիծաղդ է բերում, մեռնում ես ծիծաղից: Հետո աչքիդ է դիպչում, որ ամենուրեք հյուրանոցներ են՝ ճագարների, շների, ոջիլների, կայսրերի, նախարարների, վաշխառուների, ճիապահների և այլոց համար: Ու համարյա ամեն երկրորդի անունը «Ապագա» հյուրանոց է: Նորից ես քահ-քահ ծիծաղում: Ինչքա՜ն ապագա հյուրանոցներ: Ոչ մեկն անցյալ չի, վաղակատար կամ հարակատար: Ամեն ինչ Նոյի տարվա է, դարն ապրած, բայց ցցված է ուրախ-զվարթ, ապագայից ուռած-փքված, ինչպես թարախապալար: Ապագայի էս վավաշոտ թրմաքոսից հարբած՝ Վիոլե հրապարակն եմ օրորաքայլ անցնում. չորս կողմն ամեն բան վարդերանգ մանուշակագույն է ու կապտագորշ, շքամուտքերն էնքան ցածր են, որ միայն թզուկներն ու տնապայները կմտնեն, Ջոլայի մռայլ գանգի վերևում ծխնելույզները մաքուր քարածխի քուլաներ են արձակում, մինչ Բրդուճների տիրամայրը կաղամբե ականջներով լուր է դնում գազի բաքերի խլթլթոցին ճամփեզրին պպզած փքուն, գողտրիկ դոդոշների մեջ:

Ինչո՞ւ հանկարծ Թերմոպիլե լեռնանցքը հիշեցի: Որովհետև նույն օրը մի կին սպանդարանի աշխարհակործան լեզվով դիմեց իր

թվայնացրել է 1915.info կայքը

շնիկին, և քոթոթը հասկացավ, թե տատմերություն անող էդ ճենճոտ խոզը ինչ էր ասում: Սիրտս ինչքա՛ն նեղվեց: Նույնիսկ ավելի շատ, քան Բրաննիոն փողոցում վաճառքի հանվող վնգվնգան շներին տեսնելիս, որովհետև էնտեղ շները չեն ինձ խղճահարությամբ լցնում, այլ ժանգոտած ճանկերով հսկայական երկաթե ճաղաշարը, որ կարծես դրված լինի իմ և իրավամբ ինձ հասանելիք կյանքի միջև: Վոժիռար սպանդանոցին (ձիու միս մատակարարող սպանդանոց) մերձակա Պերիշո կոչվող փոքրիկ, հաճելի փողոցում տեղ-տեղ արյան հետքեր նկատեցի: Ճիշտ ինչպես խելահեղությամբ բռնված Ստրինդբերգի աչքին էին խորհրդանիշեր ու կանխանշաններ երևում «Օրֆիլա» պանսիոնի հատակի ամեն մի սալի մեջ, էս ցեխոտ, արյունաշաղ փողոցում աննպատակ դնդնալիս անցյալը, ծվեն-ծվեն, անկյանք ու անհոգի, աչքերիս առաջ եկավ՝ վերահաս սահմոկելի աղետների բոթը գուժելով: Ես հասկացա, որ իմ արյունն է հեղվել, ճանապարհի ցեխի հետ խառնվել, և կասկած չկա՝ հենց սկզբից, ինչքան որ հիշում եմ ինձ: Մարդ փոքրիկ, աղտեղի մումիայի նման նետվում է աշխարհ, բոլոր ճանապարհները լպրծուն են արյունից, և ոչ ոք չգիտի՝ ինչու է էդպես: Ամեն ոք իր ուղին է անցնում, ու թեպետ հողը պայթում է բարիքներից, բերքահավաքի ժամանակ չկա, թափորն շտապում է դեպի «Ելք» ցուցանակը, և էնպիսի խուճապ է, փախչել-գնալու աճապարանք, որ թույլերն ու անօգնականները ոտնատակ են ընկնում, տրորվում ցեխի մեջ, և նրանց ճիչերը ոչ ոք չի լսում:

Մարդկանց իմ աշխարհը չքացել էր անհետ: Ես մնացել էի մենամենակ, և ընկերներս փողոցներն էին դարձել, իսկ փողոցները խոսում էին ինձ հետ մարդկային տառապանքից, կարոտից, ափսոսանքից, ձախողումից, անպտուղ ճիգերից կազմված դառնատրտում լեզվով: Մի գիշեր, երբ արդեն ինձ լուր էր հասել, որ Մոնան հիվանդ է ու քաղցում է, Բրոկա փողոցի ուղեկամրջի տակով անցնելիս հանկարծ միտքս եկավ. հենց էստեղ էր՝ էս փոս ընկած փողոցի կեղտի ու մթան մեջ, որ երևի վատ կանխազգացումից սարսափահար Մոնան փարվեց ինձ և դողդոջուն ձայնով աղաչում էր երդվել, թե երբեք իրեն չեմ լքի, երբեք, ինչ էլ որ պատահի: Իսկ դրանից ընդամենը

մի քանի օր անց ես կանգնած էի Սեն Լազար կայարանի կառամատույցին ու նայում էի մեկնող գնացքին, որը տանում էր նրան: Մոնան պատուհանից դուրս էր կախվել, ճիշտ ինչպես Նյու Յորքում, երբ հեռանում էի իրենից, և նույն տխուր, անթափանց ժպիտն էր դեմքին, վերջին հայացքն էլ, որ պիտի շատ բան ասեր, մտացրիվ ժպիտից աղավաղված դիմակ էր պարզապես: Ընդամենը մի քանի օր առաջ նա հուսահատորեն ինձ էր փարվել, իսկ հետո ինչ-որ բան պատահեց, մի բան, որ հիմա էլ պարզ չի ինձ համար, և նա իր հոժար կամքով գնացք նստեց ու դարձյալ նայում էր էդ տխուր, խորհրդավոր ժպիտով, որը տարակուսանքի է մատնում ինձ, անարդար է, անբնական և ամենևին վստահություն չի ներշնչում: Եվ ահա, ուղեկամրջի ստվերում կանգնած, ես ամբողջ հոգով ձգտում եմ դեպի նա, փարվում հուսահատորեն, և նույն անբացատրելի ժպիտն է իմ շուրթերին, դիմակ, որ քաշել եմ մորմոքիս վրա: Ես կարող եմ կանգնել էստեղ ու մտացրիվ ժպտալ, և ինչքան էլ ջերմեռանդ լինեն աղոթքներս, ինչքան էլ մոլեգին լինի տենչանքս, մեր միջև մի ամբողջ օվկիանոս կա. նա կմնա էնտեղ ու կքաղցի, իսկ ես էստեղ մի փողոցից մյուսը կգնամ, և տաք արցունքները կայրեն երեսս:

Այ թե ինչ դաժանություն է ամբարված փողոցներում. հենց դա է ակնդետ նայում պատերից և մեզ ահ ու սարսափի մատնում, երբ հանկարծ տրվում ենք ինչ-որ անիմանալի վախի, երբ մեր հոգիներին հանկարծ գարշ խուճապ է տիրում: Դա է լապտերասյուներին քստմնելի գալարներ տալիս, որ կանչեն, հրապուրեն մեզ՝ հարմար ոլորքից կախված խեղդամահ լինելու: Դա է որոշ տներ դարձնում թաքուն ոճիրների պահապաններ, իսկ սրանց կույր պատուհանները՝ դատարկ ականախոռոչներ, որոնք չափից ավելին են տեսել: Դա է դրոշմված փողոցների մարդկային կերպարանքներին, որ ինձ դրդում են փախուստի դիմել, երբ գլխավերևում աչքս անսպասելիորեն ընկնում է «Սատանայի փակուղի» ցուցանակին: Դա է ինձ ստիպում փշաքաղվել՝ տեսնելով մզկիթի հենց մուտքի մոտ գրվածը. «Երկուշաբթի և հինգշաբթի՝ *պալարախտի* համար, չորեքշաբթի և ուրբաթ՝ *սիֆիլիսի*»: Մետրոյի ամեն մի կայարանում քեզ դիմավորում

թվայնացրել է 1915.info կայքը

են սեպերը ցույց տվող գանգեր՝ նախազգուշացնելով. «Défendez-vous contre la syphilis!»[1]: Բոլոր պատերին վառ, թունավոր ծովախեցգետինների պլակատներ են, որոնք ազդարարում են վերահաս քաղցկեղի մասին: Ուր էլ որ գնաս, ինչի էլ ձեռք տաս, ամենուրեք քաղցկեղ է և սիֆիլիս: Դա գրված է երկնքին, դա է հուրհրատում ու պար գալիս որպես չարյաց նախանշան: Դա լափել է մեր հոգիները, և մենք պարզապես արդեն մեռած ենք լուսնի պես:

10

Կարծեմ հուլիսի 4-ին էր, որ աթոռն էլի տակիցս քաշեցին: Առանց մի հատիկ զգուշացման: Օվկիանոսի մյուս կողմում մեծավորներից մեկը որոշել էր փող տնտեսել. կրճատված սրբագրիչների և խեղճուկրակ մեքենագրուհիների հաշվին կարող էր Եվրոպա գալ-գնալու ծախսը հանել ու ճոխ համար զավթել «Ռից» հյուրանոցում: Կուտակված մանր-մունր պարտքերս գրաշարներին և փողոցի մյուս կողմի բիստրոյին, իմ բարի կամքով՝ անունս չկոտրելու համար, վճարելուց հետո վերջին աշխատավարձից համարյա բան չմնաց: Ստիպված հյուրանոցի տիրոջը տեղյակ պահեցի, թե տեղափոխվելու եմ: Պատճառը չնշեցի, որ չանհանգստանա իր քոսոտ երկու հարյուր ֆրանկի համար: «Ի՞նչ կանես, եթե գործդ կորցնես». էս նախադասությունն էր շարունակ հնչել ականջիս: Ça y est maintenant[2]! Ausgespielt[3]! Մնում էր նորից փողոցներն ընկնել, ոտքը կախ գցել, թրև գալ, թառել նստարաններին, ժամանակ սպանել: Ինչ խոսք, իմ դեմքն արդեն քաջածանոթ էր Մոնպառնասում: Որոշ ժամանակ ձև էի տալիս՝ իբր դեռ աշխատում եմ թերթում: Դա մի քիչ հեշտացնում էր նախաճաշ կամ ճաշ պոկելը: Ամառ էր, լիքը զբոսաշրջիկներ կային: Դրանց պլոկելու ծրագիր էի մշակել: «Ի՞նչ կանես...»: Դե, սոված չեմ մնա,

---

[1] Պաշտպանվեք սիֆիլիսից (ֆրանս.):
[2] Հիմա էդպես էլ կա (ֆրանս.):
[3] Ահա և վերջ (գերմ.):

էդ մեկը, որ հաստատ: Թեկուզ շան օրը չընկնելու համար ստիպված լինեմ, ուտելիքից բացի, ուրիշ ոչ մի բանի մասին չմտածել: Մի երկու շաբաթ դեռ կարող էի պարոն Պոլի մոտ գնալ ու ամեն երեկո կուշտուկուռ ճաշել. ի՞նչ պիտի իմանար՝ աշխատում էի, թե չէ: Կարևորը ուտելն է: Մնացածը թող մնա Նախախնամության հույսին:

Իհարկե, ականջս սրած էի պահում, որ փող աշխատելու ամենաչնչին առիթն էլ բաց չթողնեի: Մի խուրձ նոր ծանոթներ էի ձեռք բերել՝ գլուխ հարթուկողներ, որոնցից մինչև օրս ջանասիրաբար խույս էի տվել, կոնծաբաններ, որոնց երեսը չէի ուզում տեսնել, նկարիչներ, որոնք քիչումիչ փող ունեին, Գուգենհայմի թոշակառուներ և այլն: Դժվար չի ընկերանալ, եթե օրական տասներկու ժամ լռվում ես սրճարանում: Մոնպառնասի բոլոր գինու տոպրակներին ճանաչում ես: Ոջիլների պես կպչում մնում են, եթե նույնիսկ, զույգ ականջներից բացի, առաջարկելու ուրիշ բան չունես:

Հիմա, երբ աշխատանքից զրկվել էի, Կարլն ու Վան Նորդենը նոր հարց էին բստրել. «Ի՞նչ կանես, եթե կինդ գա»: Դե, ի՞նչ պիտի անեի, մեկի տեղը երկու ուտող բերան կլիներ: Թշվառության բախտակից կունենայի: Ու եթե նա չի կորցրել իր գրավիչ տեսքը, երկուսով գուցեև ավելի հեշտ լիներ, քան մենակ. աշխարհը երբեք թույլ չի տալիս, որ բարետես կինը սոված մնա: Տանյայի վրա առանձնապես հույս դնելու չէր. փող էր ուղարկում Սիլվեստրին: Կարծում էի՝ կթողներ իր մոտ տեղափոխվել, բայց վախենում էր վարկաբեկվելուց, բացի դրանից էլ՝ իր շեֆի հետ պիտի լավ լիներ:

Եթե նեղն ես ընկել, առաջին հերթին պիտի հրեաներին դիմես: Համարյա միանգամից ձեռքիս տակ երեք հոգի հայտնվեցին: Անդուր մարդիկ չէին: Մեկը մորթեղենի նախկին առևտրական էր, որն իր անունը թերթում տեսնելու մարմաջ ուներ. առաջարկեց Նյու Յորքի հրեական օրաթերթերից մեկի համար իր փոխարեն հոդվածաշար գրել: Աչքի ընկնող հրեաներ փնտրելով՝ ճարահատյալ չափչփում էի «Դոմ» և «Կուպոլ» սրճարանների շրջակայքը: Առաջինը մի նշանավոր մաթեմատիկոսի բռնեցի. անգլերեն ոչ մի բառ չգիտեր: Ստիպված էի ինչ-որ բան գրել հարվածի տեսության մասին՝ ըստ թղթե

թվայնացրել է 1915.info կայքը

անձեռոցիկների վրա նրա գծած դիագրամների, հարկ եղավ նաև նկարագրել երկնային մարմինների շարժումն ու դրա հետ մեկտեղ ջախջախել Էյնշտեյնի տեսությունը: Եվ էս բոլորը՝ հանուն քաանհինգ ֆրանկի: Երբ հոդվածներս թերթում տեսա, արդեն ի վիճակի չէի կարդալ, բայց պատկառազդու տեսք ունեին, մանավանդ մորթեղենի առևտրականի կեղծանունով:

Էս շրջանում շատ բան եմ գրել կեղծանուններով: Երբ էդգար Քինե բուլվարում նոր մեծ պոռնկատուն բացվեց, մի թեթև աչքալուսանք էլ ինձ հասավ դրան նվիրված բրոշյուրներ գրելու համար: Այսինքն՝ մի շիշ շամպայն ու ձրի քունոցի եգիպտական սենյակներից մեկում: Եթե հաջողվեր՝ հաճախորդ բերեի, միջնորդավարձ կստանայի, ոնց որ Քեպին էր ստանում ժամանակին: Մի իրիկուն Վան Նորդենին տարա. ուզում էր իր հաճույք ստանալու հաշվին ես էլ մի քիչ փող աշխատեի, բայց երբ տիրուհին իմացավ, որ լրագրող է, փողի մասին լսել չէր ուզում. ինձ հասանելիքը էլի մնաց մի շիշ շամպայնն ու ձրի քունոցին: Մի խոսքով, ձեռքս բան չընկավ, փաստորեն դեռ Վան Նորդենի տեղն էլ պիտի հոդված գրեի, ինչ է՝ ինքը գլուխ չէր հանում, թե նյութը ոնց մատուցեր՝ առանց հաստատության բնույթը նշելու: Դե, կարկուտը ծեծած տեղն է ծեծում: Վերջը տերս քունվեց, էլի, էն էլ՝ տեղը տեղին:

Վզիս կապած ամենածանր գործը մի ատենախոսություն էր, որ հանձն էի առել ոմն խուլուհամր հոգեբանի համար գրել: Աշխատությունը հաշմանդամ երեխաների խնամքին էր վերաբերում: Գլուխս լիքն էր էլ հիվանդություններով, էլ պրոթեզներով, էլ բուժիչ աշխատանքի դազգահներով, էլ մաքուր օդի առողջարարության տեսություններով: Չարչարանքս ընդմիջումներով մոտ ամիս ու կես քաշեց, հետո էլ, դրան վրադիր, սրբագրեցի անտեր մնացածը: Ֆրանսերեն էր. էդ տեսակ ֆրանսերեն ոչ տեսել էի, ոչ լսել: Բայց դե ամեն օր ինձ ընտիր նախաճաշ էր ապահովում, իսկական ամերիկյան նախաճաշ. նարնջի հյութ, վարսակի շիլա, սերուցքով սուրճ, մեկ-մեկ էլ խոզապուխտով ձվածեղ՝ փոփոխության համար: Սա փարիզյան կյանքիս միակ շրջանն էր, երբ ինձ երես էի տալիս մարդավայել նախաճաշով Ռոքըուեյ Բիչի, Իսթ Սայդի և էս վշտալի

թվայնացրել է 1915.am-ն կայքը

վայրերին մերձակից բոլոր ծովախորշերի հաշմանդամ երեխաների շնորհիվ:

Հետո, մի օր էլ, լուսանկարչի պատահեցի. Փարիզի անառակատոցները պատկերող նկարների հավաքածու էր կազմում ինչ-որ այլասերված մյունխենցու համար: Հարցրեց, թե կբնորդե՞մ իրեն՝ շալվարս իջեցրած և ուրիշ ձևերով: Հիշեցի հյուրանոցի սպասավորների ու հանձնակատարների նմանվող էն թուլումուլ թզուկներին, որոնց մերթ-մերթ կարելի է տեսնել փոքրիկ գրախանութների ցուցափեղկերում դրված պոռնոգրաֆիկ բացիկներում. խորհրդավոր ուրուներ, որ բնակվում են Լյուն փողոցում և քաղաքի մյուս ժանտահոտ թաղամասերում: Էս ընտրանու կազմում ունեցած-չունեցածս ի ցույց դնելու միտքն առանձնապես սրտովս չէր: Բայց երբ համոզվեցի, որ լուսանկարները հույժ մասնավոր հավաքածուի համար էին, մի բան էլ ավելին, պիտի Մյունխեն ուղարկվեին, համաձայնություն տվի: Դրսում՝ հայրենիքից հեռու, կարող ես քեզ մանր-մունր անամոթություններ թույլ տալ, մանավանդ եթե հանապազօրյա հացդ վաստակելու նման պատկառելի դրդապատճառ ունես: Վերջիվերջո, թե բանը հասել է դրան, ես Նյու Յորքում էլ քթի մազ չէի մեռնում: Իրիկուններ կային, որ, ճարս կտրված, հենց մեր թաղում, ձեռքս էի դեմ անում ուզվորի պես:

Մենք զբոսաշրջիկներին հայտնի տեսարժան վայրերը չէինք գնում, այլ՝ փոքրիկ ժամանցարաններ, որտեղ ավելի հարմար մթնոլորտ էր, և ցերեկը, գործի անցնելուց առաջ, կարելի էր թուղթ խաղալ: Էս լուսանկարիչը լավ ուղեկից էր: Քաղաքի տակուգլուխը գիտեր, հատկապես կենտրոնական մասը, հաճախ էր հետս խոսում Գյոթեի, Հոհենշտաուֆենների տիրապետության, Սև մահվան օրոք հրեաների կոտորածի մասին: Հետաքրքիր թեմաներ էին, որոնք միշտ էլ ինչ-որ կերպ առնչվում էին իր արածին: Նա կինոսցենարների մտահղացումներ էլ ուներ, ցնցող գաղափարներ, բայց ոչ ոք սիրտ չէր անում դրանք իրագործել: Պանդոկի դռան պես փորը բաց ձիու պատկերը նրան ներշնչում էր Դանտեի, Լեոնարդո դա Վինչիի կամ Ռեմբրանդտի մասին խոսելու, իսկ Վիլետի սպանդանոցից դուրս

գալով՝ նա անմիջապես տաքսի բռնեց ու ինձ թոցրած տարավ Տրոկադերո թանգարան, որպեսզի իրեն հմայած գանգը կամ մումիան ցույց տար: Մենք պրպտում էինք Փարիզի 5-րդ, 13-րդ, 19-րդ, 20-րդ շրջանները: Ոտքներս սիրում էինք կախել Նասիոնալ, Պյոպլիեր, Կոնտրըսկարպ, Պոլ Վեռլեն հրապարակների պես տխրամած տեղերում: Սրանցից շատերն արդեն ծանոթ էին ինձ, բայց նրա պատմածների արտակարգ համ ու հոտի շնորհիվ բոլորն էլ աչքիս նոր լույսով էին ներկայանում: Եթե այսօր, օրինակ, պատահմամբ հայտնվեմ Շատո-դե-Ռանտյե փողոցում, հիվանդանոցային մահճակալների ժահրաբույրը շնչելիս, որով բռնված է ամբողջ 13-րդ շրջանը, ռունգերս, անկասկած, կուռչեն հաճույքից, որովհետև հին գոզի ու ֆորմալդեհիդի հետ խառնված էդ հոտը մեր երևակայական ուղևորությունների բուրմունքն է Սև մահվան պատճառով դամբանատեղի դարձած Եվրոպայով մեկ:

Լուսանկարչի միջոցով ծանոթացա սպիրիտուալիստական կերտվածքի տեր մի անհատականության՝ Քրյուգերի հետ, որը քանդակագործ էր և նկարիչ: Թե պատճառն ինչ էր, ինչ չէր, Քրյուգերի աչքը մտա, իսկ երբ պարզեց, որ պատրաստ եմ լսել իր «գաղտնախորհուրդ» գաղափարները, էլ պրծում չեղավ նրանից: Էս աշխարհում կան մարդիկ, որոնց համար «գաղտնախորհուրդ» բառը աստվածային նեկտարի պես բան է: Ինչպես «վերջացավ գնաց»-ն է «Կախարդական լեռան» պարոն Փեփերքորնի համար: Քրյուգելը մոլորված արբերից էր, մազոխիստ, անալ տիպ, որի ուղեցույցը փափկանկատությունն էր, շիտակությունն ու խղճմտանքը, բայց հանգստյան օրը նա, առանց աչք թարթելու, մարդու ատամները փորը կթափեր: Ըստերևույթին, Քրյուգերի կարծիքով՝ ես հաստատ էի կեցության մեկ այլ, իր ասած՝ *«ավելի բարձր* մակարդակ» անցնելու համար: Իսկ ես պատրաստ էի նրա ցուցումով ուզածդ մակարդակն անցնել, պայմանով, որ դա ի վնաս ուտելու-խմելու չլիներ: Ու նա լցնում էր գլուխս. էլ «աստրալ մարմին», էլ «հոգեմարմին», էլ «հոգու վերաբնակեցում», էլ ուպանիշադներ, էլ Պլոտինոս, էլ Կրիշնամուրտի, էլ «հոգու կարմայական հանդերձ», էլ «նիրվանայի

գիտակցություն», մի խոսքով, ժանտախտի շնչի պես Արևելքից մեզ վրա փչող էդ ամբողջ ունայնաբանությունը: Երբեմն նա ընկնում էր տրանսի մեջ և խոսում իր նախկին մարմնավորումների մասին, համեմային դեպս, ըստ իր պատկերացման: Կամ էլ երազներն էր պատմում, որոնք, ինչքան հասկանում էի, անհամ էին, առօրեական, նույնիսկ ֆրոյդիստի ուշադրությանը հազիվ թե արժանի, բայց նրա աչքին դրանց խորքերում մեծամեծ գաղտնախորհուրդ հրաշքներ էին պահված, որոնք ես պետք է օգնեի վերծանել: Նա իր շրջոնքն էր ցույց տալիս, մաշված, խավը նստած պիջակի աստառը:

Կամաց-կամաց, Քրյուգերի վստահությունը շահելով, նրա սիրտը մտա: Բանն էնտեղ էր հասել, որ հետևից վազեվազ դուրս էր գալիս՝ հարցնելու, թե մի քանի ֆրանկ պարտք չտա՞: Ուզում էր, որ հոգիս ու մարմինս անբաժան մնային ավելի բարձր մակարդակ անցնելիս դիմանալու համար: Ես ծառի վրա հասունացող տանձի նման էի: Մեկմեկ հինը նորից գլուխ էր բարձրացնում, ու խոստովանում էի, որ ավելի հողեղեն պահանջներ ունեմ, ասենք, «Սֆինքս» գնալ կամ Սենտ Ապոլին փողոց, որտեղ, գիտեի, ինքն էլ էր այցելում թուլության պահերին, երբ մարմնական կարիքները հոգին բերանն էին հասցնում:

Որպես նկարիչ՝ նա զրո էր, որպես քանդակագործ՝ զրո էլ չկար: Տունուտեղից էր լավ գլուխ հանում, այ, դա չեմ ժխտի: Հետն էլ տնտես էր: Ոչինչ դեն չէր գցում, մինչև անգամ էն թուղթը, որով միսն է փաթաթված եղել: Ուրբաթ իրիկունն իր ընկեր նկարիչներին կանչում էր արվեստանոց, խմիչքը գետի պես գնում էր, համով բրդուճներ էին լինում, ու եթե ինչ-որ բան պատահմամբ մնում էր, հաջորդ օրը մտնում էի, մաքրազարդում:

«Բալ Բյուլյե»-ի հետևում մի ուրիշ արվեստանոց էլ կար, որտեղ գնալ-գալ ունեի. Մարկ Սվիֆթի արվեստանոցը: Թե հանճար էլ չէր էս կծու իռլանդացին, անվերապահորեն տարօրինակ մարդ էր: Մի հրեա բնորդուհի ուներ, որի հետ ապրել էր երկար տարիներ. արդեն հոգնել էր էս կնոջից ու ազատվելու պատրվակ էր փնտրում: Բայց քանի որ բնորդուհու բերած օժիտը մսխել էր, գլուխ էր կոտրում, թե ոնց պրծներ նրանից՝ առանց ծախսածը հատուցելու: Ամենապարզ

ձևը կյանքը թունավորելն էր, որպեսզի նա գերադասեր քաղցած մնալ, քան սիրեկանի դաժանությունները հանդուրժել:

Որպես մարդ՝ սիրուհին էլ էր լավը. ամենավատ բանը, որ կարելի էր ասել նրա մասին, նախկին տեսքի և սիրեկանին թիկունք լինելու կարողության կորուստն էր: Ինքն էլ էր նկարիչ, և գիտակների շրջանում նրան շատ ավելի տաղանդավոր էին համարում, քան սիրեկանին: Բայց ինչքան էլ Սվիֆթը կողակցի կյանքը պղտորեր, նա մնում էր առաքինի, ոչ ոքի թույլ չէր տալիս ասել, թե Սվիֆթը մեծ նկարիչ չի: Հանճարեղությամբ էր բացատրում սրա այլանդակ բնավորությունը: Ոչ ոք նրա նկարներն արվեստանոցի պատերին չէր տեսել, միայն Սվիֆթինն էին: Իսկ նրանը լցրած էին խոհանոցում: Մի անգամ, իմ ներկայութամբ, ինչ-որ մեկը պնդեց, որ իր աշխատանքները ցույց տա: Արդյունքը ողբալի էր: «Տեսնո՞ւմ եք էս կերպարանքը,– վրա բերեց Սվիֆթը՝ իր մեծ ոտքը ցցելով նրա նկարներից մեկի վրա:– Դռան մեջ կանգնած մարդը դուրս է գալիս, որ գնա ջուր թափի: Բայց հետդարձի ճամփան է՛լ գտնողը չի, որովհետև գլուխը սխալ է դրած... Մի էդ տկլորը բեր... Ամեն ինչ լավ էր, քանի դեռ բանը ծակին չէր հասել: Չգիտեմ՝ ինչ փչեց խելքին, բայց էդ անտերն էնքան լենուբոլ նկարեց, որ վրձինն ընկավ մեջը, էլ չկարեցավ, թե հաներ»:

Մեզ ցույց տալու համար, թե մերկ մարմինն ինչպես են նկարում, Սվիֆթը մի հսկայական, նորավարտ կտավ հանեց: *Սիրուհու* նկարն էր, խղճի խայթից ներշնչված վրեժի հոյակապ նմուշ: Խելագարի գործ՝ անվայել, մանրախնդիր, մաղձոտ, փայլուն: Քեզ թվում էր՝ նրան լրտեսել է բանալու անցքից, բռնել անպատեհ պահի, երբ, ցրված, քիթն է փորելիս եղել կամ հետևը քորելիս: Նկարում նա նստած էր մազեղեն բազմոցին օդանցքից զուրկ ու անպատուհան լայնարձակ սենյակում. սա կարող էր նաև կոնաձև գեղձի առաջնամասը լինել: Նրա թիկունքում պատշգամբ տանող զիգզագ սանդուղք էր՝ ծածկված թունավոր կանաչ ուղեգորգով. նման կանաչը կհառներ միայն շունչը փչած աշխարհից: Ամենից շատ աչքի էր զարնում կնոջ հետույքը՝ մի կողմ ծռված ու կեղապատ: Նա թեթևակի ելել էր բազմոցից՝ ասես ուր որ է բարձրաձայն բաց թողնելու:

թվայնացրել է 1915.info կայքը

Սվիֆթն իդեալականացրել էր դեմքը՝ դարձնելով շարմաղ ու անապակ, դեղահաբի պես կոկլիկ: Բայց կուրծքն ուռել էր, փքվել կոյանոցի միազմներից, նա կարծես լող տար դաշտանի ծովում. մի ահռելի սաղմ՝ հրեշտակի բութ, քաղցրանուշ հայացքով:

Այսուահանդերձ, անհնար էր չսիրել Սվիֆթին: Նա անխոնջ աշխատող էր, մի մարդ, որի մտքում միայն նկարելն էր: Սրա հետ մեկտեղ՝ խորամանկ էր լուսանի պես: Հենց ինքը գլխի գցեց, որ մոտ անեմ Ֆիլմորին՝ դիվանագիտական ծառայության մեջ գտնվող մի երիտասարդի, որը հայտնվել էր Քրյուգերի և Սվիֆթի փոքր շրջապատում: «Թող օգնի քեզ,– խրատեց նա:– Չգիտի, թե իր փողն ինչ անի»:

Երբ մարդ ունեցածը ծախսում է իր վրա, ուզածի պես կյանք քաշում սեփական փողով, սովորաբար ասում են. «Չգիտի, թե իր փողն ինչ անի»: Իսկ ինձ համար փողը դրանից լավ ծախսելու ձև չկա: Նման մարդկանց մասին չես ասի, թե շռայլ են կամ ժլատ: Փողը շրջանառության մեջ են դնում. կարևորը դա է: Ֆիլմորը գիտեր, որ իր օրերը Ֆրանսիայում հաշված են, և որոշել էր դրանք վայելել: Իսկ քանի որ ընկերովի միշտ էլ ավելի հաճելի է, բնականաբար ձգվեց ինձ նմանի կողմը, որն իր տրամադրության տակ ինչքան ասես ժամանակ ուներ ընկերակցելու համար: Ասում էին՝ ձանձրալի տիպ է, ու էդպես էլ կար երևի, բայց երբ հացի կարոտ ես, ձանձրույթից վատ բաների հետ էլ կհաշտվես: Ի վերջո, չնայած անընդհատ չաչանակություն էր անում՝ կամ իր, կամ էլ Անատոլ Ֆրանսի ու Ջոզեֆ Կոնրադի պես գրողների մասին, որոնցով ստրկորեն հիանում էր, իմ երեկոները Ֆիլմորի հետ հետաքրքիր էին ուրիշ առումներով: Նա սիրում էր պարել, սիրում էր լավ գինիներ խմել և կանանց սիրահար էր: Իսկ որ Բայրոն ու Վիկտոր Հյուգո էլ էր սիրում, դա ներելի էր. ընդամենը մի քանի տարի առաջ էր համալսարանն ավարտել ու դեռ շատ ժամանակ ուներ ճաշակը շտկելու: Նրա մեջ արկածասիրությունն էր իմ սրտով:

Մենք ավելի մոտիկացանք, կարելի է ասել, մի յուրահատուկ դեպքի բերումով, որը տեղի ունեցավ, երբ կարճատև օթևան էի

գտել Քրյուգերի մոտ: Քոլինզի հայտնվելուց հետո էր. էս նավաստու հետ Ֆիլմորն Ամերիկայից գալիս էր ծանոթացել: Երեքով ամեն օր, ճաշից առաջ, հանդիպում էինք «Ռոտոնդ» սրճարանի բացօթյա մասում: Ամեն ինչ սկսվում էր պեռնոյից՝ մի խմիչքից, որը Քոլինզի տրամադրությունը միշտ բարձրացնում էր ու հող նախապատրաստում հաջորդող գինու, գարեջրի և նրբահամ կոնյակների համար: Քանի դեռ Քոլինզը Փարիզում էր, ես դքսի պես էի ապրում. թռչնամիս, ընտիր գինիներ և անուշեղեն, որի մասին նախկինում լսած էլ չկայի: Մի ամիս նստեի ու կանգնեի էս աննդակարգով՝ ստիպված պիտի բուժվելու գնայի Բադեն-Բադեն, Վիշի կամ Էքս-լե-Բեն: Այնինչ հանգրվանել էի Քրյուգերի արվեստանոցում: Գլխացավանք էի դարձել նրա համար. գիշերվա երեքից շուտ չէի գալիս, կեսօրից շուտ էլ դժվար էր ինձ դուրս քաշել անկողնուց: Բացեիբաց Քրյուգերը ոչ մի թթու խոսք չէր ասում, բայց վերաբերմունքից պարզ երևում էր, որ համը հանել եմ:

Մի օր էլ հիվանդացա: Համադամ խորտիկները ծանր նստեցին ինձ վրա: Չգիտեմ՝ ինչ չոռ էր կպել, բայց ի վիճակի չէի անկողնուց վեր կենալ: Լրիվ ընկել էի հալից, հետն էլ կուչ եկել, խեղճացել: Քրյուգերը, ճարահատյալ, խնամում էր ինձ, արգանակներ սարքում ու նման բաներ: Ծանր շրջան էր նրա կյանքում, մանավանդ որ պիտի կարևոր ցուցահանդես բացեր իր արվեստանոցում՝ փակ ցուցադրություն որոշ մեծահարուստ մեկենասների համար, որոնցից օգնություն էր ակնկալում: Մահճակալս էլ արվեստանոցում էր. ուրիշ տեղ չկար դնելու:

Ցուցահանդեսի բացման առավոտյան Քրյուգերը փրփրած արթնացավ: Եթե ոտքիս վրա մնալու հնար ունենայի, հաստատ մի հատ կհասցներ դնչատակիս ու դուրս կշպրտեր: Բայց ես փռված էի փալասի պես: Փորձեց ինձ մի կերպ հանել անկողնուց՝ հույս ունենալով, թե այցելուների երևալուն պես կփակի խոհանոցում: Ես գիտակցում էի, որ նրա գործը փչացնում եմ: Մարդիկ ի՛նչ արտով պիտի նկարներ ու քանդակներ նայեին, եթե աչքների առաջ մեկը մեռնում էր: Իսկ Քրյուգերն անկեղծորեն հավատացած էր,

որ մեռնում եմ: Ես էլ՝ նույնը: Դրա համար էլ, չնայած մեղքի զգացում ունեի, առանց ոգևորության վերաբերվեցի շտապօգնություն կանչելու և ինձ Ամերիկյան հիվանդանոց տանելու նրա առաջարկին: Մեռնում էի, թող էդտեղ մեռնեի՝ հարմարավետ արվեստանոցում: Ի՞նչ կարիք կար վեր կենալ, մեռնելու համար ավելի լավ տեղ գնալ: Իսկն ասած, մեկ էր՝ որտեղ կմեռնեի, մենակ թե վեր կենալու անհրաժեշտություն չլիներ:

Էս խոսքերս լսելով՝ Քրյուգերը խառնվեց: Արվեստանոցում եկվորների քթի տակ հիվանդ ունենալն արդեն բանի նման չէր, ուր մնաց, թե մեռելը: Դա նրա սպասումները լրիվ հողին հավասար կաներ, տեղից էլ աննշան էին: Իհարկե, ինքն էդպես չարտահայտվեց, բայց հուզմունքից հասկացա, որ դա է նրան մտատանջում: Եվ հենց դրանից էլ հաստակողությունս բռնեց: Հրաժարվեցի հիվանդանոց գնալ: Հրաժարվեցի բժշկից: Ամեն ինչից հրաժարվեցի:

Վերջը նա էնքան կատաղեց, որ, չնայած բողոքներիս, սկսեց հագցնել ինձ: Շատ թույլ էի դիմադրելու համար: Միայն կամացուկ քրթմնջում էի. «Բայց ինչ տականքն ես, հա՛»: Թեև եղանակը տաք էր, շան պես սրթսրթում էի: Քրյուգերն ինձ ոտքից գլուխ հագցնելուց հետո վերարկու գցեց ուսերիս ու դուրս թռավ զանգելու: «Չե՛մ գնա, չե՛մ գնա»,– կրկնում էի ես, բայց նա դուռը շրխկացրեց երեսիս: Մի քանի րոպեից վերադարձավ և առանց ինձ մի բառ ասելու՝ սկսեց արվեստանոցը կարգի բերել: Վերջին նախապատրաստությունները: Քիչ անց դուռը թակեցին: Ֆիլմորն էր: Տեղեկացրեց, որ Քոլինզը սպասում է ներքևում:

Ֆիլմորն ու Քրյուգերը երկուսով բռնեցին իմ թևատակերից ու ոտքի կանգնեցրին: Երբ դեպի վերելակն էին քարշ տալիս, Քրյուգերը կակղեց: «Քո օգտի համար է,– սկսեց նա:– Բացի դրանից, ես էլ եմ մեղք, էլի: Դու գիտես՝ ինչքան եմ չարչարվել էս բոլոր տարիներին: Մի քիչ էլ իմ մասի՛ն մտածիր»:

Արտասվելու վրա էր արդեն:

Ինչքան էլ որ վատ էի, խղճուկ վիճակում, էս խոսքերի վրա համարյա ժպտացի: Տարիքով նա ահագին մեծ էր ինձնից ու թեև

քնձռոտ նկարիչ էր, ամեն ինչով՝ քնձռոտ արվեստագետ, արժանի էր, որ բախտը բերեր, կյանքում գոնե մի անգամ:

– Ես բան չունեմ քո դեմ,– մոթմոթացի:– Հասկանում եմ՝ ինչն ինչոց է:

– Գիտես՝ միշտ էլ դուր ես եկել ինձ,– արձագանքեց նա:– Հենց որ լավանաս, էլի արի... Ինչքան կուզես՝ մնա:

– Գիտեմ, հա... Դեռ հոգիս տալու միտք չունեմ,– մի կերպ արտաբերեցի ես:

Ինչ որ էր, երբ ներքևում Քոլինզին տեսա, սիրտս տեղն ընկավ: Թե ողջ-առողջ, գոհ ու խնդուն, մեծահոգի մեկը կար՝ նա էր: Ինձ վերցրեց, ոնց որ տիկնիկի, ու պառկեցրեց տաքսու հետևի նստատեղին՝ շատ զգույշ, մի բան, որ Քրյուգերի քաշքշոցից հետո սիրտս շոյեց:

Երբ հասանք հյուրանոց, Քոլինզի իջևանած հյուրանոցը նկատի ունեմ, տիրոջ հետ մի փոքր վիճաբանություն բացվեց, որի ընթացքում ես մեկնվել էի նախասրահի բազմոցին: Ականջիս էր հասնում. Քոլինզը հավաստիացնում էր նրան, թե ոչ մի բան չկա... թեթևակի թուլություն է... մի քանի օրից կանցնի: Տեսա՝ ճոճռան թղթադրամ խոթեց էդ մարդու բուռը և շեշտակի ու սահուն շուռ գալով՝ մոտեցավ ինձ, ասում է. «Լսիր, քեզ թա՛փ տուր: Ծող չիմանա, թե հոգիդ տալիս ես»: Էս խոսքերով ինձ տեղից պոկեց, ոտքի հանեց ու մի ձեռքը գոտկատեղիս գցած՝ տարավ վերելակի կողմը:

«Ծող չիմանա՛, թե հոգիդ կտալիս ես»: Դե, պարզ է, սրա-նրա ձեռքերին մեռնելն ինչի՞ նման է: Մարդ պիտի ընտանիքի գրկում մեռնի, իր հարկի տակ, ինչպես ասում են: Քոլինզի խոսքերը քաջալերիչ էին: Ես սկսեցի ամեն ինչ որպես հիմար կատակ ընկալել: Վերևում, դուռը ծածկելով, նրանք ինձ հանվեցրին ու անկողին դրին: «Էդ անտեր մեռնելն արդեն մտքիցդ հանիր,– վրա բերեց Քոլինզը ջերմորեն:– Թե չէ ինձ նեղը կգցես... Համ էլ ի՞նչ գրող է կպել քեզ: Լավ կյանքին չե՞ս դիմանում: Քիթդ չկախե՛ս: Մի երկու օրից ընտիր բիֆշտեքս ես խփշտելու: Քեզ հիվանդի տե՞ղ ես դրել: Ա՛յ, սպասիր, Աստված տա՝ սիֆիլիս ընկնես, նո՛ր կիմանաս՝ ինչը

ինչից է...»: Եվ նա սկսեց հումորով պատմել, թե ոնց է Ցանցգի գետով ճամփորդել, ոնց են մազերը թափվելիս եղել, ատամներն էլ՝ փտելիս: Իմ թույլ ու ուժասպառ վիճակում նրա հյուսած պատմությունն արտակարգ ամոքիչ ազդեցություն թողեց ինձ վրա: Ամբողջովին մոռացա ինձ: Այ, դիմացկուն տղա եմ ասել: Միգուցե իմ պատվին գույները մի քիչ թանձրացնում էր, բայց էդ պահին ես քննադատաբար տրամադրված չէի լսում: Աչքերս ու ականջներս չորս էի արել: Տեսնում էի կեղտոտ, դեղին գետաբերանը, Հանկոուի շատացող լույսերը, դեղնամորթ դեմքերի ծովը, կիրճերի միջով նետի պես սլացող սամպաններն ու վիշապի ծծմբական շնչից հրավառվող սահանքները: Ա՛յ քեզ պատմություն: Ամեն օր շոգենավի շուրջը պրպտացող կուլիները ջրից հանում են դեն նետված թափոնները, Թոմ Սլաթըրին ելնում է մահվան մահճից՝ մի վերջին հայացք գցելու Հանկոուի լույսերին, գեղազուն եվրասիացին, մութ սենյակում ընկողմանած, թույն է ներարկում երակները, կապույտ հագուստի և դեղնամորթ դեմքերի միապաղաղություն, միլիոնավոր դեմքեր, որ ներս են ընկել քաղցից ու խաթարվել հիվանդություններից, մարդիկ, որ կերակրվել են առնետներով, շներով ու արմտիքով, ծամել գետնին աճող խոտը, լափել սեփական երեխաներին: Դժվար էր պատկերացնել, թե Քոլինզի մարմինը մի ժամանակ պատված է եղել վերքերով, թե նրանից խույս են տվել, ինչպես բորոտից: Նրա ձայնն էնքան հանդարտ էր ու մեղմ, ասես հոգին մաքրագործված լիներ իրեն բաժին ընկած տանջանքներից: Երբ ձեռքը մեկնեց իր խմիչքին, դեմքն ավելի փափկեց, իսկ խոսքերն արդեն կարծես ինձ փաղաքշեին: Եվ Չինաստանը շարունակ ճակատագրի պես կախված էր մեր գլխին: Քայքայվող Չինաստան, որ հող ու փոշի է դառնում վիթխարի դինոզավրի նման, բայց մինչև վերջ պահպանում իր հինավուրց լեգենդների հմայքը, կախարդանքը, գաղտնիքն ու դաժանությունը:

Էլ չէի հետևում Քոլինզի պատմությանը. մտովի գնացել էի, հասել Հուլիսի 4-ը, երբ ճայթակների իմ առաջին տուփն առա, հետն էլ՝ աբեթի երկար, դյուրաբեկ կտորներ, որոնք, եթե փչես, վառվում են

թվայնացրել է 1915.info կայքը

կարմրացոլքով, իսկ հոտը կպչում, օրերով մնում է մատներիդ և ստիպում արտասվոր բաներ երազել: Հուլիսի 4-ին փողոցներում սև ու ոսկեգույն պատկերներով վառ կարմիր թղթեր են թափթփված, և ամենուրեք փոքրիկ ճայթակներ են՝ զարմանազան պարունակությամբ, ճայթակների կուտակ-կուտակ շեղջեր, բոլորը՝ հանգուցված մարդու ուղեղի գույնի իրենց բարալիկ, տափակ, կարճուկ աղելաներով: Ամբողջ օրը վառոդի ու աբեթի հոտն է զգացվում, և ամեն տեղ վառ կարմիր փաթթոցների ոսկեփոշին է: Չինաստանը մտքովդ չի էլ անցնում, բայց մատներիդ ծայրին է անընդհատ ու քիթդ է խտղտացնում, և երկար ժամանակ անց, երբ արդեն մոռացել ես ճայթակի հոտը, մի օր արթնանում ես փայլաթղթի ոսկեփոշու խեղդոցից, աբեթի վառվող կտորների սուր հոտն է նորից փչում, և վառ կարմիր փաթթոցները կարոտ են բերում մի ժողովրդի ու եզերքի հանդեպ, որ երբեք չես ճանաչել, բայց արյանդ մեջ են, ինչ-որ խորհրդավոր ձևով՝ արյանդ մեջ, ինչպես ժամանակի և տարածության զգացումը, մի անորսալի, թեև մշտակա արժեք, որին տարիքդ առնելու հետ ավելի ու ավելի ես ապավինում, փորձում մտովի ընդգրկել, բայց ապարդյուն, որովհետև չինական ամեն ինչի մեջ իմաստություն կա ու գաղտնիք, և չես կարող դրանք ձեռքերով կամ մտովի վերցնել ու դնել, պետք է փակչեն քեզ, մնան մատներիդ ծայրերին, դանդաղ ներծծվեն երակներիդ մեջ:

Մի քանի շաբաթ անց, Հավր վերադարձած Քոլինզից համառ հրավեր ստանալով, Ֆիլմորն ու ես առավոտյան գնացք նստեցինք՝ հանգստյան օրերը նրա հետ անցկացնելու համար: Փարիզում հաստատվելուց ի վեր առաջին անգամ էի դուրս գալիս քաղաքից: Շատ լավ տրամադրություն ունեինք, ամբողջ ճանապարհին Անժուի գինի էինք խմում: Քոլինզը մի բարի հասցե էր տվել, որտեղ պիտի հանդիպեինք. Ջիմիի բար էր կոչվում, որը, նրա ասելով, Հավրում բոլորը գիտեին:

Կայարանում բաց կառք նստեցինք և կայտառ վարգով ճանապարհ ընկանք հանդիպավայր. դեռ կես շիշ Անժուի գինի ունեինք,

որի հաշիվը մաքրեցինք, մինչև տեղ կհասնեինք: Հավրը ուրախ էր, արևոտ, օդը՝ առույգացնող, թունդ աղաբույրով համեմված, մի բան, որն ինձ ստիպեց համարյա կարոտով հիշել Նյու Յորքը: Ամենուրեք նավիրաններ էին երևում ու կայմեր, վառ դրոշներ, մեծատարած բաց հրապարակներ և բարձրահաստաղ սրճարաններ, որոնք կարելի է միայն գավառում տեսնել: Տպավորությունը միանգամից դրական էր. քաղաքը գրկաբաց էր ընդունում մեզ:

Բար չհասած՝ տեսանք Քոլինզին, որը կայտառ քայլքով, անկասկած, կայարան էր ճանապարհ ընկել, սովորականի պես՝ մի փոքր ուշացումով: Ֆիլմորը տեղնուտեղն առաջարկեց պեռնո խմել: Մենք թփթփացնում էինք մեկմեկու ուսին, ծիծաղում էինք, թքում՝ արդեն իսկ հարբած արևից և աղալի ծովային օդից: Սկզբում Քոլինզը կարծես տատանվեց պեռնոյի հաշվով: Մեզ տեղյակ պահեց, որ թեթևակի սուսանակ ունի: Լուրջ բան չի, ավելի շուտ՝ «ժառանգական է»: Շշով դեղ ցույց տվեց գրպանում. վենետիկյան դարման էր անունը, եթե չեմ սխալվում: Նավաստիների բալասանն է սուսանակի դեմ:

Ջիմիի մոտ գնալուց առաջ մտանք ռեստորան՝ մի բան ուտելու: Ընդարձակ խորտկարան էր՝ ծխահար ծպեղներով և ուտելիքից ճոռացող սեղաններով: Բոլ-բոլ կոնծեցինք Քոլինզի խորհուրդ տված գինիներից: Հետո տեղափոխվեցինք դուրսը նստելու, սուրճ ու լիկյորներ համտեսեցինք: Քոլինզը բարոն դը Շառլյուսից էր խոսում՝ մի մարդուց, որը, նրա ասելով, հենց իր սրտից էր ջուր խմում: Արդեն մոտ մի տարի Քոլինզը Հավրում էր հանգրվանել՝ մսխելով մաքսանենգությամբ ձեռք բերած փողը: Նրա սրտի ուզածը պարզ բաներ էին՝ ուտելիք, խմիչք, կանայք ու գրքեր: Եվ սեփական լոգարան: Դա պարտադիր էր:

Մենք դեռ բարոն դը Շառլյուսից էինք խոսում, երբ հասանք Ջիմիի բար: Իրիկնամուտ էր, և հաստատությունն սկսել էր լցվել մարդկանցով: Ջիմին էլ էր էնտեղ՝ բազուկի պես կարմիր դեմքով, իսկ կողքին կինն էր՝ վառվռուն աչքերով մի փարթամագեղ, վարդերես ֆրանսուհի: Մեզ շատ լավ ընդունեցին: Էլի սեղանին պեռնոյի շշեր հայտնվեցին, պատեֆոնն էր ոռնում, չորս կողմը շաղակրատում էին

թվայնացրել է 1915.info կայքը

անգլերեն, ֆրաններեն, հոլանդերեն, նորվեգերեն ու իսպաներեն, իսկ Ջիմին ու կինը՝ երկուսն էլ կայտառ ու կենսախինդ, չպպացնելով պաչպչվում էին սրտանց և բաժակ բաժակի տալիս. շուրջ բոլորը ցնծագին աղմուկ-աղաղակ էր, ուզում էիր շոր-շիրթդ մի կողմ նետել ու ռազմի պար մտնել: Կանգնակի մոտի կանայք ճանճերի պես հավաքվել էին գլխներիս: Եթե Քոլինզի ընկերներն էինք, ուրեմն հարուստ էինք: Կարևոր չէր, որ հնամաշ շորերով էինք. «անգլիացիների» հագուկապն էդպես է: Գրպանումս քամի էր խաղում, բայց դա, իհարկե, նշանակություն չուներ, քանի որ պատվավոր հյուր էի: Ինչևէ, ինձ մի քիչ անհարմար էի զգում. երկու ցնցող տեսքով պոռնիկ, թևերիցս կախված, սպասում էին, որ մի բան պատվիրեի իրենց համար: Որոշեցի գործի անցնել: Արդեն անհնար էր հասկանալ, թե ինչն էր հաստատության կողմից, իսկ ինչը՝ վճարովի: Ես պիտի *ջենթլմեն* լինեի, թեկուզ ծակ գրպանով:

Իվետը՝ Ջիմիի կինը, արտակարգ բարեհամբույր ու սրտաբաց էր մեզ հետ: Մի թեթև հյուրասիրություն էր պատրաստում մեր պատվին: Դա որոշ ժամանակ էր պահանջում: Պիտի զոռ չտայինք խմելուն. նա ուզում էր, որ իր խորտիկների վայելքը զգայինք: Պատեֆոնը կատաղի թնդում էր, և Ֆիլմորը պարի բռնվեց մի չքնաղ մուլատուհու հետ, որի կիպ թավշե զգեստը երևան էր բերում նրա բոլոր հմայքները: Քոլինզը թեքվեց դեպի ինձ ու մի քանի բառ փսփսաց կողքիս աղջկա մասին: «Եթե սիրտդ տա,– ասաց,– տիրուհին սրան էլ կհրավիրի ընթրիքի»: Աղջիկը նախկին պոռնիկ էր, որը հոյակապ տան էր տիրացել քաղաքի արվարձանում: Նավապետի սիրուհի էր դարձել: Կողակիցը մեկնել էր նավարկության, վախենալու ոչինչ չկար: «Եթե հավանի քեզ, կհրավիրի, որ իր մոտ մնաս»,– ավելացրեց Քոլինզը:

Էսքանն ինձ հերիք էր: Շրջվեցի Մարսելի կողմն ու սկսեցի հետև մտնել: Քաշվեցինք բարի անկյունը՝ իբր թե պարում էինք, բայց գժի նման իրար էինք ափլփում: Ջիմին աչքով տվեց ինձ ու գլխով հավանության նշան արեց: Ինչ պագշոտ քած էր էս Մարսելը, հետն էլ՝ ցանկալի: Քիչ անց, նկատեցի, ազատվեց մյուս աղջկանից, և մենք

տեղավորվեցինք՝ երկար ու մտերմիկ զրույցի համար, որը, ցավոք, ընդհատվեց արդեն պատրաստ ընթրիքի հրավերով:

Սեղանին մոտ քսան հոգով էինք, ինձ ու Մարսելին նստեցրին սեղանի մի ծայրին՝ Ջիմիի և նրա կնոջ դիմաց: Ամեն ինչ սկսվեց շամպայնի խցանների գմփգմփոցով, իսկ դրան շատ արագ հետևեցին հարբած կենացները, որոնց ընթացքում ես ու Մարսելը սեղանի տակ խաղեր էինք տալիս իրար հետ: Երբ վրա հասավ կանգնելու և կենաց ասելու իմ հերթը, ստիպված էի անձեռոցիկը առջևս պահել: Տանջալի էր ու արբեցնող միաժամանակ: Ես շատ կարճ կապեցի, որովհետև Մարսելն անընդհատ շեքս էր խուտուտ տալիս:

Ընթրիքը ձգվեց մինչև համարյա կեսգիշեր: Ես կանխավայելում էի Մարսելի հետ անցկացնելիք գիշերս քարափի գլխի նրա հոյակապ տանը: Բայց բանը գլուխ չեկավ: Քոլինզը նախատեսել էր քաղաքը ցույց տալ մեզ, և ես չէի կարող նրան, առանց նեղացնելու, մերժել: «Անհոգ մնա,- հորդորեց Քոլինզը:- Մինչև գնալդ կկշտանաս սրանից: Ասա՝ թող սպասի մեր վերադառնալուն»:

Սկզբում Մարսելի սիրտը նեղվեց, բայց երբ իմացավ, որ մի քանի օր դեռ մնալու ենք, դեմքը լուսավորվեց: Դուրս եկանք թե չէ՝ Ֆիլմորը շատ լուրջ թևներս մտավ, ասում է՝ խոստովանելու բան ունի: Գունատ էր ու խառնված:

- Ի՞նչ կա,- հարցրեց Քոլինզը զվարթ:- Ասա մի տեսնե՛նք:

Իսկ Ֆիլմորի լեզուն չէր բռնում, որ ասեր: Նա կմկմում էր, բառերը ծամծմում, և, վերջապես, բերանից դուրս եկավ.

- Դե, քիչ առաջ, երբ զուգարան մտա, մի բան նկատեցի...

- Ուրեմն ընկել ես,- վրա տվեց Քոլինզը հաղթականորեն ու վենետիկյան դարմանի շիշը դեմ արեց:- Բժշկի չգնաս,- շարունակեց նա թունոտ:- Էդ անկուշտ շան որդիք կաշիդ կմաշկեն: Խմելն էլ չթողնես: Հեչ տանձիդ մի դիր: Սա օրը երկու անգամ կխմես... օգտագործելուց առաջ լավ թափ կտաս: Իսկ խառնվելուց վատ բան չկա, հասկացա՞ր: Դե, գնացինք: Հենց որ հետ գանք, քեզ սրսկիչ ու պերմանգանատ կտամ:

Եվ մենք, գիշերվա գրկում, ճանապարհ ընկանք դեպի նավահանգիստ, որտեղից երաժշտություն, գոռում-գոչյուն և հարբած հիշոցներ

էին հասնում: Քոլինզն անխռով խոսում էր դեսից-դենից, պատմում մի տղայի մասին, որին սիրահարվել էր, շան չարչարանքով գլուխը պրծացրել ցավից, երբ տղայի ծնողներն իմացել էին դրա մասին: Հետո նա նորից անցավ բարոն դը Շառլյուսին, ապա՝ Քուրցին, որը գնացել էր գետն ի վեր ու անհետացել: Քոլինզի սիրած թեման էր: Ինձ դուր էր գալիս, թե ինչպես էր նա շարունակ հածում գրականության աշխարհում. ասես իր «ոոլս ոոյսից» ոտքը դուրս չդնող միլիոնատեր լիներ: Նրա համար իրականության և ցնորքների միջև անջրպետ չկար: Երբ մտանք Վոլտեր առափնյակի պոռնկատունը, և նա, փլվելով բազմոցին, աղջիկներ ու խմիչք պատվիրեց, դեռ Քուրցի հետ նավարկում էր գետն ի վեր և իր դեգերումներն ընդհատեց միայն աղջիկների հայտնվելուց հետո, որոնք, շարվելով նրա կողքերին, բերանը ծածկեցին համբույրներով: Կարծես նա հանկարծ հասկացավ՝ որտեղ է, դարձավ հաստատությունը տնօրինող մեծ մորն ու մի պերճալեզու ճառ արտասանեց իր երկու ընկերների մասին, որոնք Փարիզից հատուկ եկել էին նրա ժամանցարանը տեսնելու: Սենյակում մի վեց աղջիկ կային, բոլորն էլ՝ մերկ ու գեղեցկատես, պիտի ասեմ: Թռչնակների պես թռվռում էին չորս կողմը, մինչ մենք ջանում էինք զրույցը շարունակել մամիկի հետ: Վերջապես, նա ներողություն խնդրեց ու հեռացավ՝ պատվիրելով, որ մեզ տանն զգանք: Ես ամբողջովին հափշտակվել էի նրանով. ինչ անուշիկ էր ու բարյացակամ, ինչ հեզահամբույր ու մայրական: Եվ ի՛նչ շարժուձև ուներ: Եթե մի քիչ ջահել լիներ, հաստատ հետը ճիկ-վիկ կանեի: Մտքովդ երբեք չէր անցնի, թե անառականոցում ես, ինչպես ընդունված է ասել:

Ինչ որ էր, մի ժամի չափ հյուրընկալվեցինք էնտեղ, և երեքիցս միայն ես էի ի վիճակի օգտվել սիրատան ծառայություններից, Քոլինզն ու Ֆիլմորը մնացին ներքևում՝ աղջիկների հետ զրուցելիս: Երբ վերադարձա, տեսնեմ՝ երկուսն էլ փովել են մահճակալին, իսկ աղջիկները, կիսաշրջան կազմած, ամենահրեշտակային ձայներով «Պիկարդիայի վարդեր»-ն են խմբովին երգում: Նրանցից հեռացանք սրտներս լցված, հատկապես՝ Ֆիլմորը: Քոլինզն էլ մեզ միանգամից տարավ իսկը նավահանգստային որջ, որը լիքն էր ափ իջնելու

թույլտվություն ստացած կատարը տաք նավաստիներով. որոշ ժամանակ նստել, արվամոլների թեժ խնջույքին էինք նայում, ուրախանում: Դուրս գալով էստեղից՝ անցանք կարմիր լապտերների թաղամասով, որտեղ ավելի շատ մամիկներ կային. շալերը վզներին, առմուտքում նստած, հովհարում էին իրենց և քաղցրաբար գլխով անում անցորդներին: Բոլորն էլ էնքան բարեդեմ էին, բարեհոգի, ասես մանկանոցի պահապաններ լինեին: Խումբ-խումբ նավաստիներ էին օրորալեն գալիս և ճչան հանրատները խուժում աղմուկով: Սեքսը հորդում էր ամենուր, իջնող մակընթացության պես քշում-տանում քաղաքի հիմքերը: Փուչիկներս դատարկեցինք՝ ծովախորշի պռնկին կանգնած, որտեղ իսկական շիլաշփոթ էր. կարծես բոլոր ջրային փոխադրամիջոցները՝ ձկնորսանավերն ու զբոսանավերը, երկկայմ առագաստանավերն ու բեռնանավերը, կատաղի փոթորիկն էր բերել, ափի մոտ կիտել:

Երկու օրվա մեջ էնքան բան կատարվեց, որ թվում էր՝ մի ամիս է կամ ավելին, ինչ Հավրում ենք: Մենք մտադիր էինք մեկնել երկուշաբթի երեկոյան, քանի որ Ֆիլմորն աշխատանքի էր: Կիրակին անցկացրինք կերուխումի և ցոփության մեջ՝ առանց սուսանակը բանի տեղ դնելու: Քոլինզը խոստովանեց, որ միտք ունի վերադառնալ Այդահոյի իր ագարակը. ութ տարի տանը չէր եղել և ուզում էր մի անգամ ևս Արևելք ճանապարհվելուց առաջ վերստին հայացք գցել լեռներին: Մենք նստած էինք պոռնկատանը՝ սպասելով մի աղջկա, որին Քոլինզը կոկաին էր խոստացել: Նա, իր խոսքերով, կշտացել էր Հավրից: Շատ գիշատիչներ կային, որ նստել էին վզին: Բացի դրանից, Ջիմիի կինը սիրահարված էր նրան և հոգին հանում էր խանդի նոպաներով: Համարյա ամեն գիշեր տեսարան էր սարքում: Մեր գալուց ի վեր իրեն հավաքել էր, բայց, ըստ Քոլինզի, դա երկար չէր տևի: Իվետը հատկապես մի ռուս աղջկա էր խանդում, որը մեկ-մեկ, կատիկը թրջած, գալիս էր բար: Կրակ ու պատիժ էր, ի՛նչ Իվետ: Էս ամենի հետ մեկտեղ՝ Քոլինզը գժի պես սիրահարված էր էն տղային, որի մասին մեզ պատմել էր դեռ առաջին օրը: «Տղան սիրտդ փշրել գիտի,- ասում էր նա:- Էնքան էլ սիրո՛ւն է անաստվածը:

Ու դաժա՛ն»: Իսկ մենք ծիծաղում էինք: Անհեթեթ էր հնչում: Բայց Քոլինզը լուրջ էր:

Կիրակի, կեսգիշերին մոտ, ես ու Ֆիլմորը գնացինք քնելու. մեզ սենյակ էին հատկացրել Ջիմիի բարի վերնահարկում: Ահավոր տոթ էր. քամու ոչ մի շունչ չկար: Բաց պատուհաններից լսվում էին ներքևի ժխորն ու պատեֆոնի անդադար ոռնոցը: Մեկ էլ, որտեղից որտեղ, ամպրոպ պայթեց, տեղատարափ անձրև սկիզբ առավ: Որոտի ճայթյունների և պատուհանները ճաղկող քամու պոռթկումների արանքում ականջներիս հասավ բարում մոլեգնած մի ուրիշ ամպրոպի ձայն: Սա սարսափելի մոտիկից էր գալիս և լավ բան չէր գուշակում. կանայք կոկորդով մեկ ծղրտում էին, շշեր էին ջարդուխուրդ լինում, սեղաններ՝ շուռ գալիս, և հատակին փռվող մարդկային մարմինների ծանոթ, անախորժ թրմփոցն էր լսվում:

Ժամը վեցի կողմն էր, որ Քոլինզը դռնից գլուխը ներս մտցրեց: Դեմքին սպեղանի էր դրած, մի ձեռքն էլ վիրակապով էր: Ատամներն էր բաց արել:

– Բա ես ի՞նչ էի ասում,– հայտնեց նա:– Էս գիշեր շներին կապել, դրան բաց էին թողել: Տուրուտրաքոցը երևի լսել եք:

Մենք արագ հագնվեցինք ու իջանք Ջիմիին հրաժեշտ տալու: Բարը հիմնահատակ ավերված էր. ոչ մի շիշ չէր մնացել, ոչ մի աթոռ չկար, որ ջարդված չլիներ: Հայելին և ցուցափեղկը փշուր-փշուր էին եղել: Ջիմին հարած ձվերից ու գինուց իր համար էգնոգ էր սարքում:

Կայարանի ճանապարհին բոլոր մանրամասներն ի մի եկան: Ոտքներս քաշելուց հետո ռուս աղջիկն էր եկել, Իվետն էլ, ոչ տարել, ոչ բերել, միանգամից կոպտել էր նրան: Սկսել էին իրար մազ փետտել, մեկ էլ մի աժդահա շվեդ ընկել էր մեջտեղ ու ռուս աղջկան՝ ուշքի բերելու համար, շառաչուն ապտակ ծեփել: Կռիվն ընկել էր: Քոլինզն էդ կտրիճի վրա էր պրծել, թե՝ ինչ իրավունք ունի, որ խառնվում է իրեն չվերաբերող վեճին: Սա էլ, ի պատասխան, էնպես էր բռնցքել նրան, որ թռել ընկել էր բարի մյուս ծայրը: «Տե՛ղն է քեզ»,– ճչացել էր Իվետը և առիթից օգտվելով՝ շիշն իջեցրել ռուս աղջկա գլխին: Հենց էդ պահին էլ ամպրոպը ճայթել էր:

Որոշ ժամանակ շունը տիրոջը չի ճանաչել, կանայք, հին հաշիվները մաքրելու հնարավորություն ստանալով, թունդ բորբոքվել են: Բարում սկսված տուրուդմփոցից հարմարը չկա... Շատ հեշտ է դանակը մարդու մեկի թիկունքը խրել կամ շշով գլխին թրխկացնել, քանի դեռ փռված է սեղանի տակ: Խեղճ շվեդն էլ շնաճանճի բույնն է ընկել ոտով գլխով. բոլորի աչքի գրողն է դարձել, մանավանդ իր նավաստի ընկերների: Սրանք որոշել են, որ նրա քիթը պիտի տրորվի: Դուռը կողպել են և սեղանները դեսուդեն տալով՝ կանգնակի առաջ տեղ բացել, որ էս երկուսը՝ Քոլինզն ու նա, հաշիվները փակեն: Է՛, փակել են: Վերջն էդ հարիֆին պատգարակով են հիվանդանոց տարել: Քոլինզը լավ էր պրծել. ընդամենը դաստակի ջլերն էին ձգվել, մատներից երկուսը՝ հոդախախտվել, քիթն էր վնասվել, աչքի տակ՝ սևացել: Մի քանի ճանկռվածք էր, իր խոսքերով: Բայց վայն էն է, թե օրերից մի օր էդ շվեդի հետ նույն նավի վրա հայտնվի, մահը բերանն է տալու: Սա դեռ վերջը չէր: Խոսք տվեց մեզ:

Բանն էլ սրանով չէր վերջացել: Դնքստոցից հետո Իվետը դուրս էր պրծել ու գնացել, մի ուրիշ բարում գլուխը լավ տաքացրել: Անպատվել էին իրեն, նա էլ որոշել էր վերջ տալ ամեն ինչին: Տաքսի էր վարձել ու վարորդին պատվիրել, որ տանի հենց ջրի գլխին կախված քարափի բերանը: Մտքին դրել էր ինքնասպան լինել, այ թե ինչ: Բայց էնքան հարբած էր եղել, որ, տաքսուց թավալգլոր դուրս ընկնելով, սկսել էր լացուկոծ անել, ու մինչև մեկնումեկը վրա կհասներ, շորերը հանել էր հագից: Վարորդը հենց էդպես՝ կիսատկլոր, նրան տուն էր հասցրել, ու երբ Ջիմին տեսել էր վիճակը, էնքան էր գազազել, որ աճելու սրոցափոկը բերել էր ու՝ տուր, թե կտաս, իսկ Իվետին դա դուր էր եկել, շան քաճին տես, է՛: «Էլի՛, էլի՛»,– աղաչել էր՝ ծնկի իջած, ու երկու ձեռքով փաթաթվել Ջիմիի ոտքերին: Բայց Ջիմին արդեն կուշտ էր եղել: «Վա՛յ, կեղտոտ մերոն»,– ասել էր նա ու էն տեսակ աքացի հասցրել կողատակին, որ Իվետն իրեն կորցրել էր՝ խոլ ցանկասիրության մի մասն էլ հետը:

Էստեղից հեռանալու ճիշտ ժամանակն էր: Վաղ առավոտվա լույսով քաղաքը ուրիշ տեսք ուներ: Վերջին բանը, որի մասին խոսք

թվայնացրել է 1915.info կայքը

բացվեց գնացքին սպասելիս, Այդահոն էր: Երեքս էլ ամերիկացի էինք: Ճիշտ է, տարբեր տեղերից էինք, բայց ընդհանուր բան ունեինք, ես կասեի՝ նույնիսկ շատ: Սրտներս բարակել էր, ինչպես բաժանվելիս է լինում ամերիկացիների հետ: Դե, խելքներս մերը չի կովերի, ոչխարների, լայնարձակ անդաստանների համար, որտեղ տղամարդիկ, իրոք, տղամարդիկ են ու նման էշություններ: Եթե գնացքի փոխարեն նավ գար, մենք կցատկեինք տախտակամածին, ու մնաս բարով, Ֆրանսիա՝ քո ամեն ինչով հանդերձ: Բայց Քոլինզին վիճակված չէր նորից տեսնել Ամերիկան, ինչպես հետո իմացա, իսկ Ֆիլմորը... դե, Ֆիլմորին էլ իր հասանելիքը պիտի բաժին ընկներ. էն ժամանակ ոչ մեկիս մտքով էլ չէր անցնում, թե ինչ: Ավելի լավ է Ամերիկան միշտ էդպես մնա՝ հեռվում, բացիկի նկարի նման, որին նայում ես թուլության պահին: Էդպես մտածում ես, թե նա սպասում է քեզ՝ անփոփոխ, անարատ, ազատ ու արձակ հայրենի եզերք, որտեղ կովերն ու ոչխարներն են արածում, և գորովասիրտ տղամարդիկ, ինչ աչքները տեսնի, պատրաստ են միջում դնել՝ տղամարդ կլինի, կին, թե կենդանի: Ամերիկան գոյություն չունի: Մի անուն է, որ տալիս են վերացական գաղափարին...

11

Փարիզը պոռնիկի պես է: Հեռվից զմայլելի է թվում, չես համբերում, թե երբ պիտի գիրկդ առնես: Բայց հինգ րոպե անց դատարկություն ես զգում, ինքդ քեզնից զզվում: Գիտես, որ խաբվել ես:

Փարիզ վերադարձա փողով. մի քանի հարյուր ֆրանկ ունեի, որ Քոլինզն էր գրպանս խոթել գնացք նստելիս: Դա բավական էր սենյակ վարձելու և մի շաբաթ մարդավարի սնվելու համար: Արդեն քանի տարի էդքան փող միանգամից ձեռքս չէր ընկել: Ես թև էի առել. միգուցե նոր կյանք էր բացվում իմ առաջ: Ուզում էի փողը խնայել, դրա համար էլ գնացի Շատո փողոցի փոան վերևի էժան հյուրանոցը տեսնելու՝ Վանվ փողոցին մերձակա մի տեղ, որը Եվգենին էր

ժամանակին ցույց տվել: Քիչ հեռու Մոնպառնասի երկաթգծի վրայով անցնող կամուրջն էր: Ծանոթ թաղամաս էր:

Էստեղ կարող էի ամիսը հարյուր ֆրանկով սենյակ վարձել, իհարկե՝ առանց հարմարությունների, նույնիսկ անպատուհան, ու երևի թե վերցնեի՝ գոնե միառժամանակ գլուխս դնելու տեղ ունենալու համար, եթե ստիպված չլինեի մի կույրի սենյակով անցնել, ինչ է՝ մուտք գործեի իմ սենյակ: Ամեն գիշեր նրա մահճակալի մոտով անցնելու միտքը շատ էր ճնշում ինձ: Որոշեցի ուրիշ բան գտնել: Գնացի Սել փողոց, ու հենց գերեզմանատան հետևը մի հավաբուն գտա, որը բակի կողմից պատշգամբներ ուներ: Ներքևի պատշգամբներից էլ թռչնավանդակներ էին կախված: Գուցեև ուրախ տեսարան էր, բայց իմ աչքին հիվանդանոցի հոգեբուժական բաժանմունք էր թվում: Տերն էլ էր կարծես խելքից թեթև: Գցեցի-բռնեցի, որ ավելի լավ է սպասեմ մինչև իրիկուն, կարգին պրպտեմ ու քիչ թե շատ վայելուչ տեղ ընտրեմ որևէ խաղաղ փողոցում:

Ճաշին տաննհինգ ֆրանկ ծախսեցի՝ մոտ երկու անգամ ավել, քան նախատեսել էի: Սիրտս էնպես նեղվեց, որ սուրճից ձեռք քաշեցի, թեև սկսել էր անձրև մաղել: Չէ, մի քիչ ման կգամ, իսկ հետո սուսուփուս կգնամ քնելու, սովորականից շուտ: Խնայողությունն արդեն դառնացնում էր կյանքս: Առաջ երբեք դրանով չէի զբաղվել. իմ բնույթին անհարիր էր:

Ի վերջո, մանրամաղ անձրևը տեղատարափ դարձավ: Ուրախ էի: Պատրվակ էր, որ ինձ գցեի մի տեղ ու ոտքերս հանգիստ մեկնեի: Դեռ շատ վաղ էր անկողին մտնելու համար: Քայլերս արագացնելով՝ հետ դարձա դեպի Ռասպայ բուլվար: Հանկարծ մի կին մոտեցավ ու կանգնեցրեց ինձ թափվող անձրևի տակ: Ժամն էր ուզում իմանալ: Ասում եմ՝ ժամացույց չունեմ: Իսկ նա բացականչում է էս ոգով.

– Ախ, իմ լավ պարոն, պատահմամբ անգլերեն չգիտե՞ք:

Գլխով եմ անում: Արդեն հեղեղ է թափվում երկնքից:

– Գուցե բարի լինեք ինձ սրճարա՞ն տանել, իմ սիրելի լավ մարդ: Անձրև է գալիս, իսկ ես փող չունեմ ինչ-որ տեղ նստելու համար:

թվայնացրել է 1915.info կայքը

Ներող կլինեք, իմ սիրելի պարոն, բայց դուք արտակարգ բարի դեմք ունեք... Ես անմիջապես հասկացա, որ անգլիացի եք:– Եվ նա ժպտում է ինձ տարօրինակ, կիսախելագար ժպիտով:– Գուցե մի խորհուրդ տաք ինձ, բարեսիրտ պարոն: Ես մեն-մենակ եմ աշխարհում... Աստված իմ, ինչ ահավոր է փող չունենալը...

Էս «սիրելի պարոն»-ը, «բարեսիրտ պարոն»-ն ու «իմ լավ մարդը»-ը ծիծաղս բերելու վրա էին: Մեղքս գալիս էր, բայց ծիծաղս էլ՝ հետը: Վերջը ծիծաղեցի: Հենց նրա երեսին: Ինքն էլ ծիծաղեց, արտառոց, զիլ, անկապ ծիծաղով, որ միանգամայն անսպասելի հիստերիկ քրքիջ էր: Ես բռնեցի նրա ձեռքը, և մենք վազեցինք մոտակա սրճարանը: Նա դեռ խնդմնդում էր, երբ մտանք բիստրո:

– Իմ սիրելի բարեսիրտ պարոն,– սկսեց նորից,– գուցե կարծում եք, թե ձեզ ճիշտը չեմ ասում: Ես օրինավոր աղջիկ եմ... լավ ընտանիքից: Միայն թե...– և նա վերստին ժպտաց իր դժգույն, ծուռ ժպիտով,– միայն թե բախտ չունեմ, որ գոնե մի տեղ նստեմ:

Ծիծաղս նորից բռնեց: Դիմանալու բան չէր. սրա արտահայտությունն՝ե՛րը, օտարոտի առոգանությո՛ւնը, գժի գլխա՛րկը, խելառ ժպի՛տը...

– Լսեք,– ընդհատեցի,– ազգությամբ ո՞վ եք:

– Անգլուհի,– պատասխանեց նա:– Այսինքն՝ Լեհաստանում եմ ծնվել, բայց իռլանդացի հորից:

– Եվ դա ձեզ անգլուհի՞ է դարձնում:

– Այո,– ասաց նա և նորից սկսեց խնդմնդալ ծալապակասի նման ու ամոթխածության հավակնությամբ:

– Երևի մի հարմար հյուրանոց կիմանաք, ուր կարելի է ինձ տանել,– ես սա ասացի ոչ թե նրա հետ գնալու մտադրությամբ, այլ ուղղակի նախնական բանակցությունների հոգսից նրան ազատելու համար:

– Ախ, իմ սիրելի պարոն,– վրա բերեց նա, կարծես ցավալի սխալ էի գործել:– Վստահ եմ, որ դա՛ չէիք ուզում ասել: Ես նման աղջիկ չեմ: Տեսնում եմ, որ կատակ եք անում: Դուք շատ լավն եք... Ինչ բարի դեմք ունեք: Ես սիրտ չէի անի խոսել ֆրանսիացու հետ, ինչպես ձեզ հետ խոսեցի: Նրանք անմիջապես վիրավորում են...

Որոշ ժամանակ նա շարունակեց նույն եղանակով: Արդեն մտածում էի գլուխս առնել փախչել: Բայց նա չէր ուզում մենակ մնալ: Վախենում էր. թղթերը կարգին չէին: Բարի չե՞մ լինի իրեն տանել, հյուրանոց հասցնել: Գուցե մի տասնհինգ-քսան ֆրա՞նկ տամ «պարտքով»՝ հյուրանոցատիրոջը հանգստացնելու համար: Ես ուղեկցեցի նրան մինչև հյուրանոց, որտեղ, իր ասելով, իջևանել էր, և հիսուն ֆրանկանոց դրեցի ձեռքը: Կամ շատ խորամանկ էր, կամ միամիտ. երբեմն դժվար է գլխի ընկնել, բայց, ամեն դեպքում, խնդրեց, որ սպասեմ, մինչև վազի բիստրո՝ փողը մանրելու: Ասացի՝ թող նեղություն չքաշի: Իսկ նա հանկարծակի խլեց ձեռքս ու մոտեցրեց շուրթերին: Ես շանթահար եղա: Արդեն պատրաստ էի ունեցած-չունեցածս տալ: Նրա խենթ արարքից սիրտս ճմլվեց: Մտածեցի՝ ինչ լավ է երբեմն հարուստ լինել. նոր ապրումներ ես ունենում: Բայց գլուխս չկորցրի: Հիսո՛ւն ֆրանկ... Լիուլի հերիք էր անձրևոտ երեկոյան շռայլելու համար: Երբ հեռանում էի, նա իր գժի գլխարկն էր թափահարում, որը դնել էլ չգիտեր: Կարելի էր կարծել՝ հին ընկերներ էինք: Ինձ հիմար վիճակում էի զգում, գլուխս պտտվում էր: «Իմ սիրելի բարեսիրտ պարոն... Ինչ բարի դեմք ունեք... Շատ լավն եք...»: Ինձ թվում էր՝ սուրբ եմ:

Երբ ուռում-փքվում ես քո մեջ, հեշտ չի միանգամից քնելու գնալ: Զգում ես, որ բարության անակնկալ պոռթկման տեղը պիտի ինչ-որ ձևով հանես: «Ջունգլիի» կողքով անցնելիս աչքս պարասրահին ընկավ. կանայք՝ մեջքները բաց և իրենց խեղդող,– կամ կարծես թե խեղդող,– մարգարտի շարաններով, գեղանի հետույքներն էին տարուբերում: Ուղղվելով պարասրահ՝ մոտեցա հենց բարին և մի բաժակ շամպայն պատվիրեցի: Երբ երաժշտությունը դադարեց, մի արմատան շիկահեր նստեց կողքիս. նորվեգուհու նման էր: Սրահն էնքան էլ մարդաշատ կամ ուրախ չէր, ինչքան երևում էր դրսից: Եղած-չեղածը մի վեց զույգ էին. երևի ուղղակի բոլորը միաժամանակ պարելիս էին եղել: Եվս մի բաժակ շամպայն պատվիրեցի՝ սիրտս պինդ պահելու համար:

Երբ վեր կացա շիկահերի հետ պարելու, մեզնից բացի, ոչ ոք մեջտեղ չեկավ: Ուրիշ անգամ կշփոթվեի, բայց շամպայնն ու նրա

փարվելու ձևը, թույլ լույսերն ու ապահովության կայուն զգացումը, որ մի քանի հարյուր ֆրանկն էին ինձ ներշնչում, մի խոսքով, իրենցն արեցին... Էլի պարեցինք, կարծես ցույց տայինք մեզ, իսկ հետո զրույցով ընկանք: Տեսնեմ՝ արցունք է թափում. էդպես էլ սկսվեց: Մտածեցի՝ երևի շատ է խմել, ուշադրություն չդարձրի: Աչքի պոչով չորս կողմս էի նայում մի ուրիշ ապրանք գտնելու հույսով: Բայց սրահն արդեն լրիվ դատարկվել էր:

Կրակն ընկնելիս պիտի կծիկդ դնես. հենց նույն պահին: Թե չէ կորած ես: Ինձ հետ պահողը, ինչքան էլ որ տարօրինակ է, մի ուրիշ տեղ հանդերձապահին նորից թեյափող տալու միտքն էր: Մարդ միշտ էլ դատարկ բանի համար է տուժում:

Նրա արտասվելու պատճառը բավական շուտ պարզվեց. նոր էր թաղել երեխային: Ինքն էլ նորվեգուհի չէր, այլ ֆրանսուհի, ընդ որում՝ տատմեր: Շքեղ տատմեր՝ ես կասեի, նույնիսկ արցունքներն աչքերից հոսելիս: Հարցրի, թե մի բաժակ խմիչքը իրեն չի՞ մխիթարի, իսկ նա իսկույն ևեթ վիսկի պատվիրեց ու առանց աչքը թարթելու՝ գլխին քաշեց: «Մի բաժակ էլ կուզե՞ս»,– առաջարկեցի բարեկրթորեն: Դու մի ասա, նրա ուզածն էլ դա էր. ախր անտանելի վատ էր զգում իրեն, սոսկալի ընկճված: Դու մի ասա, մի տուփ էլ «Քեմել» էր ուզում: «Չէ, մի րոպե,– ուղղեց նա,– ավելի լավ է «Փել Մել»: «Ինչ որ սիրտդ ուզի,– մտածեցի,– բայց Աստված կսիրես, հերիք է արտասուք թափես, թե չէ արդեն դողս բռնում է»: Քաշեցի, վեր կացրի նրան՝ նորից պարելու: Ոտքի վրա կարծես ուրիշ մարդ լիներ: Միգուցե վիշտը հեշտասեր է դարձնում, չգիտեմ: Ես ինչ-որ բան շշնջացի էստեղից հեռանալու մասին: «Ո՞ւր»,– հարցրեց նա պատրաստակամորեն: «Էհ, ուր պատահի: Մի հանգիստ տեղ, ուր խոսել կլինի»:

Գնացի զուգարան ու մի անգամ էլ փողս հաշվեցի: Հարյուր ֆրանկանոցները մտցրի ժամացույցի գրպանիկը, հիսուն ֆրանկանոցն ու մանրը թողեցի շալվարիս գրպանում: Շիփ-շիտակ խոսելու վճռականությամբ վերադարձա բար:

Նա գործը հեշտացրեց՝ հենց ինքը խոսքն առաջ տանելով: Աչք չէր բացում դժբախտություններից: Միայն երեխային չէր կորցրել,

տանն էլ հիվանդ մայր ուներ, շատ հիվանդ. հարկավոր էր բժշկին վճարել, դեղորայք գնել և այլն, և այլն: Իհարկե, նրա ոչ մի բառին չէի հավատում: Եվ քանի որ դեռ հյուրանոց չէի գտել ինձ համար, առաջարկեցի հետս գալ, մի տեղ գիշերել: Մտածեցի՝ մի քիչ փող կխնայեմ: Բայց նա չհամաձայնեց: Պնդում էր, որ տուն գնայինք. բնակարան ուներ, բացի դրանից՝ պիտի աչքը մոր վրա պահեր: Գցեցի-բռնեցի, հասկացա, որ նրա մոտ քնելն ավելի էժան կնստի, ասացի՝ լավ, հենց հիմա էլ գնանք: Իսկ գնալուց առաջ որոշեցի, ամեն դեպքում, խաղաթղթերս բացել, որ վերջին պահին ճիչ ու վայնասուն չլինի: Ինձ թվաց՝ նա ուր որ է կուշաթափվի, երբ իմացավ, թե գրպանումս ինչքան փող կա: «Ա՛յ քեզ բան»,– բացականչեց: Վիրավորված էր մինչև հոգու խորքը: Կարծեցի՝ տեսարան կսարքի... Ինչևէ, մնացի անհողդողդ ու անզիջում:

– Շատ լավ, դե ուրեմն գնամ,– ասացի հանգիստ:– Վայ թե սխալվել եմ:

– Սխալվելն էլ խո՞սք է,– գոչեց նա, բայց և բռնեց թևքս միևնույն ժամանակ:– Écoute, chéri... sois raisonnable[1]!

Էս խոսքերից վստահություն տեղն եկավ: Հասկացա, որ ամբողջ հարցը փողն ավելացնելն է մի քիչ, ու ամեն ինչ կարգի կընկնի:

– Լավ,– հոգնած վրա բերեցի,– ինձնից դժգոհ չես մնա, այ, կտեսնես:

– Խաբո՞ւմ էիր ինձ,– հարցրեց նա:

– Հա,– ժպտացի ես:– Բան էր՝ մոգոնեցի...

Մինչև գլխարկս կդնեի՝ նա արդեն տաքսի էր բռնել: Լսեցի, որ Կլիշի բուլվարի անունը տվեց: Էնտեղ հասնելը ավելի թանկ կնստեր, քան մի գիշերով սենյակ վարձելը, անցավ մտքովս: Դե լավ, դեռ ժամանակ կա... Կերևա: Գլխի չընկա, թե ինչն առիթ եղավ, մեկ էլ տեսա՝ Անրի Բորդոյի մասին է պտպտում: Դեռ ո՛չ մի պոռնիկ ինձ չի հանդիպել, որ Անրի Բորդոյին չճանաչի: Բայց էս մեկը, իրոք, բլբուլ էր կտրել, ի՛նչ լեզու առել. պերճ, անուշ-մեղուշ, նրբամիտ. սկսեցի վերցնել-դնել, թե ինչքան պիտի փողն ավելացնեմ: Կարծես ականջովս

[1] Լսիր, սիրելիս... խելքի արի (ֆրանս.):

ընկավ, որ ասում է. «... quand il n'y aura plus de temps[1]»: Համենայն դեպս, նման մի բան: Իմ ներկա վիճակում դրա պես արտահայտությունը հարյուր ֆրանկ արժեր: Հարցրի՝ հենց իրե՞նն է, թե՞ Անրի Բորդոյից է թոցրել: Ասենք, էական չի: Հենց սա էր Մոնմարտր լեռան ստորոտին մոտենալու ճիշտ արտահայտությունը: «Բարի երեկո, մայր իմ,- ասում էի ինձ ու ինձ,- ես ու ձեր աղջիկը հոգ կտանենք ձեզ, quand il n'y aura plus de temps!»: Նա խոստացել էր նաև ցույց տալ իր մանկաբարձական դիպլոմը, ես լավ էի հիշում:

Դուռը մեր հետևում փակվեց թե չէ՝ ծանոթուհիս ձեռուոտ ընկավ: Խելակորույս: Ձեռքերն էր գալարում և Սառա Բեռնարի կեցվածքներն ընդունում, հետն էլ մերթ հանվում էր, մերթ դադար տալիս՝ շտապեցնելով ինձ, որ ես էլ հանվեի, էապես ու էնպես անեի: Վերջապես, հենց որ մերկացավ և, շապիկը ձեռքին դեսուդեն գնալով, կիմոնոն էր փնտրում, բռնեցի նրան ու մի լավ սեղմրտեցի: Տվայտանքի դրոշմ կար դեմքին, երբ բաց թողեցի: «Աստվա՛ծ իմ, Աստված, ես վազեմ ներքև, մորս վրա մի հայացք գցեմ,- բացականչեց նա:- Եթե կուզես, լոգանք ընդունիր, chéri[2]: Ա՛յ, էնտեղ: Մի քանի րոպեից կգամ»: Դռան մոտ նորից գիրկս առա նրան: Ներքնաշորով էի, արդեն կանգնել էր սարի պես: Չգիտես ինչու, էդ ամբողջ տվայտանքն ու խռովքը, վիշտն ու դերասանությունը ավելի էին գրգռում ցանկությունս: Երևի վազեց ներքև՝ իր բոզարածին հանգստացնելու: Սիրտս վկայում էր՝ ինչ-որ արտասովոր բան է կատարվում, մի դրամա, որի մասին կկարդամ առավոտյան թերթում: Հապճեպ զննեցի բնակարանը: Երկու սենյակ էր ու մի լոգարան: Կահավորանքը վատ չէր: Սեթևեթ էր մի քիչ: Պատին նրա դիպլոմն էր. «առաջին կարգի», ինչպես միշտ: Ջարդասեղանին երեխայի լուսանկար կար. սիրուն խոպոպներով աղջնակ էր: Բաց արեցի ջուրը՝ լոգանքի համար, բայց միտքս փոխեցի: Բա որ բան պատահի, ես էլ լոգարանում լինե՞մ... Էս միտքն ինձ դուր չեկավ: Սկսեցի հետ ու առաջ անել՝ հետզհետե ավելի ու ավելի սրտնեղելով:

[1] ... երբ ժամանակն ի չիք դառնա (ֆրանս.):

[2] Սիրելիս (ֆրանս.):

Երբ ծանոթուհիս վերադարձավ, առաջվանից էլ անտրամադիր էր: «Կմեռնի... կմեռնի»,- հեծեծում էր նա: Մի պահ արդեն գնալու վրա էի: Այ մարդ, դե ո՞նց կնոջը դնես մշակես, եթե մայրը ներքևում մեռնում է, միգուցե հենց ձեր ոտքերի տակ: Գրկեցի նրան՝ մասամբ կարեկցանքից, մասամբ էլ՝ հասաննելիքս ստանալու հաստատակամությամբ: Էապես կանգնած՝ նա կարծես, իրոք, կսկիծով լի, սկսեց մրմնջալ, թե խոստացածս փողի կարիքն ինչքան ունի: Ի սեր «մաման»-ի: Գլուխը քարը, էդ պահին արդեն սիրտ չկար մի քանի ֆրանկի համար առևտուր անել: Մոտեցա աթոռին, որտեղ շորերս դրված էին, ժամացույցի գրպանիկից մի հարյուր ֆրանկանոց հանեցի՝ ամեն դեպքում, զգուշության համար մեջքս նրան դարձրած: Որպես լրացուցիչ նախազգուշական միջոց էլ՝ շալվարս աթոռին գցեցի մահճակալի էն կողմից, որտեղ պիտի պառկեի: Հարյուր ֆրանկը նրան ամբողջովին չբավարարեց, բայց առարկելու տարտամ եղանակից հասկացա, որ դա էլ էր լրիվ հերիք: Իսկ հետո զարմանքի մատնող աշխուժությամբ նա դեն նետեց կիմոնոն ու ցատկեց անկողին: Հենց որ փաթաթվեցի նրան ու սեղմեցի ինձ, ձեռքը տարավ անջատիչին և լույսը մարեց: Կրքաբորբոք գրկեց ինձ ու սկսեց տնքալ հետդ անկողին մտնող ֆրանսիացի բոլոր պցերի նման: Նրա անսպասելի արարքից ես ահավոր գրգռվեցի. հանգցրած լույսը նոր զգացում էր բերում... Ասես ամեն ինչ իսկական լիներ: Բայց կասկածը սրտումս էր, և հարմար պահ որսալով՝ ձեռքս մեկնեցի՝ տեսնեմ շալվարս դեռ աթոռի՞ն է:

Ես մտածում էի, որ արդեն տեղավորվել ենք գիշերելու: Մահճակալը հարմարավետ էր, ավելի փափուկ, քան հյուրանոցինն է սովորաբար լինում, սավաններն էլ մաքուր էին: Բայց ո՛ւր էր, թե էդպես կուչուձիգ չգար: Կարելի էր կարծել՝ մի ամիս տղամարդու երես չի տեսել: Ես ուզում էի հաճույքը երկարաձգել: Ուզում էի հարյուր ֆրանկի դիմաց առավելագույնը քամել: Իսկ նա ինչ-որ բաներ էր շշնջում խենթ անկողնային լեզվով, որն ավելի է բորբոքում արյունդ, մանավանդ խավարում: Ես դիմադրում էի, կաշվից դուրս գալիս ինձ զսպելու համար, այնինչ դա ապարդյուն էր նրա հետ. անվերջ

տնքում էր, հևում ու մռլտում. «Vite chéri! Vite chéri! Oh, c'est bon! Oh, oh! Vite, vite, chéri[1]!»: Փորձեցի մտքումս հաշվել, բայց նա միացել էր հրդեհի ահազանգի պես: «Vite chéri!», և էս անգամ էնպես դողաց՝ ջղաձգվելով, որ բանը բանից անցավ, վե՛րջ: Աստղերի ղողանջը հասավ ականջիս, և իմ հարյուր ֆրանկը կորավ գնաց, չհաշված հիսունը, որն արդեն մտքիցս թռել էր, իսկ լույսը նորից վառվեց, և ծանոթուհիս, նույն աշխուժությամբ, որով ոստնել էր անկողին, դուրս թռավ էնտեղից՝ խռնչալով ու ճղճղալով խոզի մերունի պես: Ես հետ ընկա ու սիգարետ կպցրի, աչքս տխուր-տրտում՝ շալվարիս. սարսափելի ճմռթվել էր: Մի րոպեից նա վերադարձավ, փաթաթվեց կիմոնոյով և նույն հուզումնալից եղանակով, որն արդեն ազդում էր ջղերիս վրա, պատվիրեց, որ ինձ ազատ զգամ: «Ես վազեմ ներքև՝ մորս տեսնելու,– ասաց:– Mais faites comme chez vous, chéri. Je reviends tout de suite»[2]:

Քառորդ ժամ անցավ, անհանգստությունն սկսեց սիրտս կրծել: Մտա հյուրասենյակ, կարդացի սեղանին ընկած նամակը: Ոչ մի առանձնակի բան. սիրային նամակ էր: Լողասենյակում աչքի անցկացրի դարակին շարված բոլոր սրվակները. ամեն ինչ կար, որ անհրաժեշտ է կնոջը բուրալու համար: Դեռ հույս ունեի, թե նա կվերադառնա, և հիսուն ֆրանկիս հասանելիքն էլ կստանամ: Բայց ժամանակն անցնում էր, իսկ նա չկար ու չկար: Արդեն տագնապեցի: Միգուցե ինչ-որ մեկը, իրոք, մեռնում էր ներքևում: Մտամոլոր, երևի ինքնապահպանման բնազդից մղված, սկսեցի հագնվել: Գոտիս ձգելիս հանկարծ միտքս պայծառացավ, հիշեցի, որ նա իմ հարյուր ֆրանկանոցը խցկեց իր դրամապանակը: Պահի տակ հուզված՝ դրամապանակն էլ դրեց հանդերձապահարանի վերին դարակը: Մտաբերեցի նրա շարժումը. բարձացավ ոտնաթաթերի վրա՝ դարակին հասնելու համար: Մի րոպե չանցած՝ արդեն բացել էի հանդերձապահարանն ու շոշափելով դրամապանակն էի փնտրում: Դեռ էնտեղ

---

[1] Շո՛ւտ արա, սիրելիս, շո՛ւտ: Ա՛խ, ինչ լավ է: Ա՛խ... Շո՛ւտ, շո՛ւտ, սիրելիս (ֆրանս.):

[2] Բայց դու քեզ ազատ զգա, սիրելիս: Հիմա կգամ (ֆրանս.):

էր: Հապճեպ բաց արեցի, տեսնեմ՝ հարյուր ֆրանկանոցս մետաքսի մեջ հարմար տեղավորված: Դրամապանակը տեղը դրեցի, պիջակս ու կոշիկներս հագա, իսկ հետո դուրս եկա սանդղահարթակ և ականջներս լարեցի: Ձեն-ծպտուն չկար: Աստված գիտի, թե սա ուր էր կորել: Մի ակնթարթում վերադարձա հանդերձապահարանի մոտ ու ձեռքս էլի գցեցի դրամապանակին: Հաներեցի հարյուր ֆրանկանոցս, մանրն էլ՝ հետը, ինչ որ կար: Հետո, դուռը կամացուկ ծածկելով, ոտնաթաթերիս վրա իջա սանդուղքից ու հասա փողոց թե չէ՝ ինքան ուժ ունեի՝ ոտքերիս զոռ տվեցի: «Բուդոն» սրճարանի մոտ կանգ առա՝ ատամիս տակ մի բան դնելու: Պոռնիկները զվարճանում էին՝ մի հաստլիկի ծիծաղատեղ դարձրած. սա դանթում էր սեղանի վրա: Կարծես մրափով էր ընկել, նույնիսկ խռմփում էր, բայց ծնոտներն ինքնաբերաբար շարժվում էին: Չորս կողմը քրքիջ էր: Մեկը գոռում էր. «Տեղերո՜ւմ», և բոլորը, խոսքերը մի աման դրած, թմբկահարում էին դանակներով ու պատառաքաղներով: Հաստլիկը մի պահ աչքերը բացում էր, բութ-բութ ճպճպացնում, հետո գլուխը նորից կախվում էր կրծքին: Ես հարյուր ֆրանկանոցը զգուշորեն ժամացույցի գրպանիկը դրի ու հաշվեցի մանրը: Չորս կողմիս խժվժոցն ավելի էր ուժեղանում, և արդեն դժվարանում էի հիշել, թե ծանոթուհուս դիպլոմի վրա իսկապե՞ս նշված էր «առաջին կարգի»: Դա էր ինձ անհանգստացնում: Իսկ մայրը հեչ պետքս էլ չէր: Հույս ունեի՝ արդեն հոգին փչել էր: Այ թե տարօրինակ կլիներ, եթե ծանոթուհուս ասածները ճիշտ դուրս գային: Չէ, հավատալու բան չէր: «Vite chéri... vite, vite!»[1]: Բա մյո՞ւս ցնդածը՝ իր «իմ լավ պարոն»-ով ու «բարի դեմք»-ով... Մարդ իմանար՝ իրո՞ք էն հյուրանոցում էր մնում, որի առաջ ցցվել էինք:

Հարգելի ընթերցող, այս գրքի էլեկտրոնային տարբերակը ստեղծել է 1915.info կայքը: Եթե ցանկանում եք որևէ գրքի էլեկտրոնային տարբերակ և չեք կարողանում գտնել այն, կարող եք դիմել մեզ:

---

[1] Շուտ արա, սիրելիս... Շո՛ւտ, շո՛ւտ (ֆրանս.):

12

Ամռան վերջն էր գալիս, երբ Ֆիլմորն ինձ առաջարկեց տեղափոխվել, իր մոտ ապրել: Նրա բնակարանը նախկին արվեստանոց էր, որի լուսամուտները նայում էին Դյուպլե հրապարակին մերձակա հեծելագնդի զորանոցին: Հավրի փոքրիկ ուղևորությունից հետո ես ու Ֆիլմորը հաճախ էինք տեսնվում: Եթե նա չլիներ, ով իմանա, թե ինչ գար գլխիս. երևի արդեն գետնի տակն էի անցել:

«Վաղուց կկանչեի քեզ,– բացատրեց Ֆիլմորը,– եթե էն լրբի ճուտ Ջեքին մեջտեղ չընկներ: Չգիտեի՝ ոնց գլուխս պրծացնեի»:

Ես ժպտացի: Ֆիլմորի բանը միշտ էդպես էր: Անտուն լրբերին իր կողմը ձգելու առանձնահատուկ ձիրք ուներ: Ինչևէ, Ջեքին վերջապես մաքրվել-գնացել էր, ինքն էլ՝ հոժար կամքով:

Անձրևների շրջանն էր գալիս՝ տիղ ու լպրծի, շամանդաղի, թոնի մի երկարուձիգ, մթնած ժամանակահատված, որ մարդու սիրտ էր մաշում, վհատություն բերում: Փարիզը նողկալի տեղ է ձմռանը: Եղանակն ուտում է հոգիդ, քեզ մորեմերկ թողնում Լաբրադորի ափի պես: Ես անհանգստացած նկատեցի, որ Ֆիլմորի տանը տաքանալու միակ միջոցը մի փոքրիկ վառարան էր հյուրասենյակում: Բայց էլի լավ էր, հարմարավետ: Իսկ լուսամուտից բացվող տեսարանն ընտիր էր:

Առավոտյան Ֆիլմորը թափ էր տալիս, արթնացնում ինձ ու տասը ֆրանկ թողնում բարձիս: Նրա գնալուն պես նորից քուն էի մտնում: Երբեմն մինչև կեսօր մնում էի պառկած: Շտապելու բան չունեի, միայն գիրքս էր, որ պիտի ավարտեի. դա էլ չէր մտահոգում, որովհետև արդեն գիտեի՝ ոչ ոք էլ չէր համաձայնի տպել: Մինչդեռ Ֆիլմորը խիստ տպավորված էր: Իրիկունը, շիշը թևատակին տուն գար թե չէ՝ նախ սեղանի մոտ էր շտապում, որ տեսներ՝ քանի էջ եմ թխել: Սկզբում խանդավառության էս դրսևորումը հաճելի էր ինձ, բայց հետո, հենց որ ցամաքեցի, անհարմարության զգացումից գետինն էի մտնում, երբ աչքիս առաջ քրքրում էր ձեռագիրս՝ նոր էջեր փնտրելով, որոնք կարծես թե առատության եղջյուրից պիտի թափվեին:

Ցույց տալու բան չունենալիս ինձ զգում էի էն լրբերից մեկի պես, որոնց նա պատսպարել էր նախկինում: Ջեքիի մասին ասում էր. «Էլի ոչինչ, եթե գոնե մեկ-մեկ հետևը դեմ տար»: Է՛, ես կին լինեի՝ մեծ ուրախությամբ էլ հետևս դեմ կտայի. շատ ավելի հեշտ կպրծնեի, քան նրան իր ակնկալած էջերով կերակրելն էր:

Էսպես, թե էնպես, Ֆիլմորը ջանք չէր խնայում, որ ինձ ազատ ու անկաշկանդ զգայի: Տանը միշտ լիքն ուտելիք կար, գինի, ժամանակ առ ժամանակ էլ նա, ինձ խեղդելով, տանում էր պարելու: Ուշքը գնում էր Օդեսա փողոցի նեգրական զվարճարանի համար. էնտեղ մի վայելչատես մուլատուհի կար, որը մերթ-մերթ մեզ հետ տուն էր գալիս: Ֆիլմորին արտնեղություն պատճառողը լոկ մի բան էր. ձեռքը խմել սիրող ֆրանսուհի չէր ընկնում: Սրանք ամենքն էլ շատ սթափ էին նրան գոհացնելու համար, իսկ նա սիրում էր կնոջը բերել ու հետը կոնծել՝ գործի անցնելուց առաջ: Մեկ էլ սիրում էր, որ կարծեն, թե ինքն արվեստագետ է: Քանի որ տանտերը, ումից վարձել էր բնակարանը, նկարիչ էր, նման պատրանք դժվար չէր ստեղծել. պատի պահարանում մեր գտած կտավները շուտով հայտնվեցին տան պատերին, իսկ անավարտներից մեկը ցուցադրաբար դրեցինք նկարակալին: Ցավոք, բոլորն էլ սյուրռեալիստական շնչով էին, և, սովորաբար, բարենպաստ տպավորություն չէին գործում: Եթե բանը վերաբերում է նկարչությանը, առանձնակի տարբերություն չկա պոռնիկի, դռնապանուհու և նախարարի ճաշակների միջև: Ֆիլմորը թեթևացած շունչ քաշեց, երբ Մարկ Սվիֆթը, իմ դիմանկարն անելու մտադրությամբ, սկսեց հաճախակի այցելել մեզ: Ֆիլմորը մեծ ակնածանք էր տածում Սվիֆթի նկատմամբ: Ասում էր՝ հանճար է: Ու թեև Սվիֆթի ձեռքի տակ ամեն ինչ մի տեսակ դժնի տեսք էր ստանում, դրանով հանդերձ՝ մարդ նկարեր, թե առարկա, գոնե տարբերում էիր, թե ինչ է:

Սվիֆթի պատվերով սկսեցի մորուք պահել: Գանգիս ձևը, նրա ասելով, մորուք էր պահանջում: Ես պետք է նստած լինեի լուսամուտի մոտ, Էյֆելյան աշտարակի ֆոնին, որովհետև նա ուզում էր Էյֆելյան աշտարակն էլ պատկերել նկարում: Ուզում էր նաև, որ գրամեքենան

թվայնացրել է 1915.info կայքը

երևար: Էս շրջանում Քրյուգերի գալ-գնալն էլ բռնեց: Նա պնդում էր, որ Սվիֆթը նկարչությունից ոչինչ չի հասկանում: Համամասնության ամեն մի խախտում նրան հանում էր հունից: Քրյուգերն անվերապահորեն վստահում էր Բնության օրենքներին: Իսկ բնությունը Սվիֆթի տանձին էլ չէր. նա ուզում էր իր գլխում եղածը նկարել: Ինչևէ, արդեն իմ անավարտ դիմանկարն էր տնկած նկարակալին, ու թեև բոլոր համամասնությունները խախտված էին, նույնիսկ նախարարը կտեսներ, որ մարդու գլուխ է պատկերված, էն էլ՝ մորուքավոր մարդու: Դռնապանուհին, իրոք որ, սկսեց մեծ հետաքրքրություն ցուցաբերել նկարի հանդեպ. նրա կարծիքով՝ զարմանալի նմանություն կար: Էյֆելյան աշտարակը ֆոնին պատկերելու մտահղացումն էլ էր հավանում:

Մոտ մի ամիս կամ ավելին ամեն ինչ հաշտ ու խաղաղ էր ընթանում: Շրջակայքը գրավում էր ինձ, մանավանդ գիշերը, երբ ամբողջ խեղճությունն ու թախիծը երևան էին գալիս: Փոքրիկ հրապարակը, որ անխռով ու հմայիչ էր իրիկնաշաղին, մութն իջնելուն պես անխինդ, չարագուշակ կերպարանք էր առնում: Ջորանոցը մի կողմից եզերված էր երկար, բարձր պատնեշով, որի տակ միշտ թաքուն համբուրվող զույգ կար, հաճախ՝ նույնիսկ անձրևին: Տրտմալի տեսարան էր. սիրահարները գրկախառնվում էին բանտի պատի տակ, փողոցի աղոտ լույսի ցոլքերում, կարծես դա նրանց վերջին ապաստանն էր: Տրտմալի էր և պատնեշի ներսում կատարվողը: Անձրևոտ օրերին կանգնում էի լուսամուտի մոտ ու նայում ներքևի անցուդարձին, ասես դա ուրիշ մոլորակում տեղի ունենար, խելքից մտքից վեր էր թվում: Ամեն ինչ ըստ կարգացուցակի էր արվում, բայց կարգացուցակը հաստատ խելագար էր կազմել: Ցեխը ճմռելով՝ դեսուդեն էին ընկնում, շեփորահարում, ձիերով գրոհում, և էս բոլորը՝ չորս պատի ներսում: Իբր թե կռիվ էր: Լիքը անագե զինվորիկներ, որոնք սպանել, ճտքակոշիկները փայլեցնել կամ ձիերին թիմարել սովորելու մազաչափ ցանկություն էլ չունեին: Մաքուր ծիծաղատեղ էր, բայց մտնում էր իրերի կարգի մեջ: Երբ զորականները պարապ էին մնում, ավելի ծիծաղելի տեսք ունեին. քորվում էին, ձեռքերը գրպանները դրած՝

ման գալիս, երկինք նայում: Իսկ երբ սպա անցներ, կրունկները շխկացնում էին ու պատիվ տալիս: Աչքիս իսկական գժանոց էր: Նույնիսկ ձիերն էին տխմար երևում: Երբեմն էլ հրանոթները դուրս էին բերում փողոց, զինվորները քայլում էին՝ զորահանդեսի ելած, և մարդիկ կանգնում էին, բերանբաց նայում ու հիանում սիրուն համազգեստներով: Իսկ ինձ նրանք միշտ նահանջող զորաբանակ էին թվում. ինչ-որ քրջոտ, թափթփված, նկուն բան կար նրանց մեջ, համազգեստները շատ մեծ էին հագներին, և ամբողջ կենսուրախությունը, որ աչքի զարնելու չափ հատուկ էր նրանց՝ որպես անհատների, հօդս էր ցնդում:

Բայց արևոտ օրերին ամեն ինչ ուրիշ էր: Զինվորների աչքերում հույսի շող էր հայտնվում, քայլվածքը՝ ավելի ճկուն դառնում, փոքրինչ ոգևորություն էր ի հայտ գալիս: Գույները փոխվում էին հաճելիորեն, և ֆրանսիացիներին բնորոշ ապշոպն ու եռուզեռն էին տիրում: Զինվորներն ուրախ-զվարթ շատախոսում էին՝ անկյունի բիստրոյում խմելով, և անգամ սպաներն էին ավելի մարդկային երևում, ես կասեի՝ ավելի ֆրանսիացի: Երբ արևը դուրս է գալիս, Փարիզի ամեն մի անկյուն շողում է գեղեցկությունից, իսկ եթե խոսքը ծածկը գլխին քաշած բիստրոյի մասին է՝ մայթին շարած մի քանի սեղանների, ուրեմն գունավոր ըմպելիքների բաժակներով մարդիկ միանգամայն մարդկային տեսք ունեն: Եվ իրոք մարդկային են, աշխարհի ամենաքաղաքակիրթ մարդիկ, երբ արևը շողո՛ւմ է: Ինչ խելացի՛ են, ինչ անփո՛ւյթ, ինչ անհո՛գ... Հանցագործություն է նման մարդկանց զորանոց քշելը, վզներին զինավարժություններ փաթաթելը, շարքայինների, սերժանտների, գնդապետների ու չգիտես էլ ինչի բաժանելը:

Ինչպես նշեցի արդեն, ամեն ինչ հարթ էր ընթանում: Երբեմն Կարլն էր գալիս, ինձ գործի դնում. ճամփորդական ակնարկներ էի գրում, ինչ որ ինքը չէր սիրում անել: Ճիշտ է, ընդամենը հիսուն ֆրանկ էին տալիս հատին, բայց հեշտ էր տակից դուրս գալ. պիտի ուղղակի հին թերթերը պեղեի ու նախկին հոդվածները վերաձևեի: Նման բաները մարդիկ կարդում են միայն զուգարանում նստած կամ սպասասրահում ժամանակ սպանելիս: Գլխավոր խնդիրը

թվայնացրել է 1915.info կայքը

մակդիրները մի լավ թարմացնելն է, իսկ մնացածը տարեթվեր են ու վիճակագրություն: Եթե կարևոր նյութ էր, բաժնի վարիչը ինքն էր ստորագրում: Սա բթամիտի մեկն էր, ոչ մի լեզու կարգին չգիտեր, բայց սխալ բռնելու մոմ էր: Եթե լավ գրված պարբերության հանդիպեր, ասում էր. «Այ, էապես եմ ուզում, որ գրես: Հրաշալի է: Թույլ եմ տալիս, որ գրքիդ մեջ օգտագործես»: Էդ «հրաշալի» պարբերություններն էլ հաճախ հանրագիտարանից էին թխած կամ հին ուղեցույցից: Դրանց մի մասը Կարլն ընդգրկել էր իր գրքում. այուրռեալիստական բնույթ էին ստացել:

Մի իրիկուն էլ, զբոսանքից տուն գալով, դուռը բացելուն պես դեմ առա ննջարանից դուրս թռած կնոջ: «Ուրեմն դո՛ւք եք գրողը»,– գոչեց նա իսկույն և աչքերը հառեց մորուքիս՝ ասես իր տպավորությունը հիմնավորելու համար: «Ինչ սոսկալի մորո՛ւք է,– ավելացրեց:– Երևում է՝ բոլորդ ցնդած եք էստեղ»: Նրա հետևից, ծածկոցը ձեռքին, դուրս եկավ Ֆիլմորը: «Իշխանուհի է»,– ասաց՝ շրթունքները ծպպացնելով, կարծես հենց նոր ընտիր խավիար էր համտեսել: Երկուսն էլ դրսի շորերով էին. չհասկացա, թե անկողնու ծածկոցն ինչ կապ ուներ: Հետո միանգամից տեղը բերեցի, որ կա-չկա Ֆիլմորն է նրան քարշ տվել ննջարան՝ լվացքի տոպրակը ցույց տալու: Միշտ էդպես էր անում նոր կին բերելիս, մանավանդ ֆրանսուհի: «Կտրոն ցկա՝ շապիկ ցկա». ահա թե ինչ էր ասեղնագործված լվացքի տոպրակին: Ֆիլմորի խելքը գնում էր նյույորքյան լվացքատների չին տերերի էս նշանաբանը եկած կանանց բացատրելու համար. տուր՝ կտանաս: Բայց էս տիկինը ֆրանսուհի չէր. Ֆիլմորն անմիջապես հայտնեց: Նա ռուս էր և իշխանուհի, ոչ ավել, ոչ պակաս:

Ֆիլմորը ոգևորված բլբլում էր՝ նոր խաղալիք գտած երեխայի նման:

– Հինգ լեզու գիտի,– նշեց նա՝ նման կրթվածությունից բացահայտորեն շանթահար:

– *Ոչ, չորս,*– տեղնուտեղն ուղղեց իշխանուհին:

– Դե լավ, չորս... Ամեն դեպքում, խելքի ծով է: Մի լսես՝ ո՛նց է խոսում:

Իշխանուհին նյարդայնանում էր. շարունակ ազդրն էր քորում ու քիթը տրորում:

– Ախր անկողինը բացում է, որ ի՞նչ,– հարցրեց ինձ հանկարծ:– Կարծում է՝ պիտի տիրանա՞ ինձ: Մեծ երեխա է: Խայտառակ պահվածք ունի: Տարա ռուսական ռեստորան, սևամորթի պես էր պարում:– Նա կոնքերը տարուբերեց՝ ասածը պատկերելով:– Եվ անդադար խոսում է: Ու շատ բարձր: Անհեթեթություններ է դուրս տալիս:

Նա իր խշխշան զգեստով շրջում էր սենյակում, նկարներն ու գրքերը զննում՝ գլուխը բարձր պահած, բայց անընդհատ քորվելով: Մերթընդմերթ էլ շուռ էր գալիս գծանավի պես ու համազարկ տալիս: Ֆիլմորը կրնկակոխ հետևում էր նրան, մի ձեռքին՝ շիշ, մյուսին՝ բաժակ:

– Հերիք է հետապնդեք ինձ,– բացականչեց իշխանուհին:– Եվ հետո՝ ուրիշ խմիչք չունե՞ք, ինչ է: Չե՞ք կարող մի շիշ շամպայն ճարել: Ես պետք է շամպայն խմեմ: Նյարդե՛րս... նյարդե՛րս...

Ֆիլմորը փորձեց մի քանի բառ շշնջալ ականջիս.

– Դերասանուհի է... կինոաստղ... Ինչ-որ մեկը խաբել է, մտքից դուրս չի գալիս... Պիտի հարբեցնեմ...

– Ուրեմն ես ցանվեմ,– վրա բերեցի, մեկ էլ իշխանուհին ընդհատեց մեզ որոտագին.

– Ի՞նչ եք քչփչում,– ճչաց նա՝ ոտքը գետնին տալով:– Չգիտե՞ք, որ անքաղաքավարություն է: Իսկ դուք կարծեմ մտադիր էիք ինձ տեղ տանել: Ես պետք է խմեմ այսօր, արդեն ասել եմ ձեզ:

– Այո, այո,– խառնվեց Ֆիլմորը,– գնում ենք: Մի բաժակ էլ խմեմ ու վերջ:

– Դուք խոզի մեկն եք,– գոռաց իշխանուհին:– Բայց և վատ տղա չեք: Ողղակի բարձր եք խոսում: Ձեզ պահել չգիտեք:– Նա դարձավ ինձ:– Վստահ լինե՞մ, որ իրեն լավ կպահի: Ես պետք է այսօր խմեմ, բայց չեմ ուզում, որ ինձ խայտառակ անի: Գուցե առաջիկայում նորից գամ էստեղ: Կուզենայի զրուցել ձեզ հետ: Դուք ավելի խելոք եք երևում:

Հեռանալիս իշխանուհին արտանց սեղմեց ձեռքս և խոստացավ մի օր ճաշի գալ:

– Երբ սթափ կլինեմ,– ավելացրեց նա:

– Շատ բարի,– ասացի:– Մի իշխանուհու էլ բերեք կամ թեկուզ կոմսուհու: Մենք ամեն շաբաթ սավանները փոխում ենք:

Գիշերվա երեքին Ֆիլմորը, ճոճվելով, ներս է ընկնում... մենակ... օվկիանոսային շոգենավի պես շողարձակ և ճաքած ձեռնափայտով կույրի պես աղմկուն: Թըխկ, թրըխկ, թրըխկ՝ հոգնեցրած արահետով... «Ուղիղ անկողին,– ասում է նա կողքովս անցնելիս:– Վաղն ամեն ինչ կպատմեմ:– Մտնում է ննջարան, սավանը գցում մի կողմ: Հառաչանքն է ականջիս հասնում.– Ի՛նչ կին է... ի՛նչ կին:– Մի վայրկյանից դուրս է գալիս՝ դեռ գլխարկով ու ճաքած ձեռնափայտը ձեռքին:– Ես գիտեի, որ դրա նման մի բան կկատարվի: Գիժ է»:

Ֆիլմորը տակնուվրա է անում խոհանոցը և վերադառնում Անժուի գինու շշով: Պիտի նստեմ, հետը մի բաժակ գցեմ:

Նրա ցաքուցրիվ պատմությունն ի մի բերելով՝ կարելի է ասել, որ ամեն ինչ սկսվել է Ելիսեյան դաշտերի «Ռոն Պուեն»-ից, ուր Ֆիլմորը, տուն գալիս, մտել է մի բան խմելու: Բացօթյա սրճարանն էդ ժամին, սովորականի պես, լիքն է եղել ուրուրներով: Էս մեկին Ֆիլմորը տեսել է հենց անցատեղի մոտ բազմած, բաժակակալների դեզի դեմ-դիմաց: Սուսուփուս խմելիս է եղել իր համար, երբ Ֆիլմորը, մոտով անցնելիս, բռնել է հայացքը: «Խմած եմ,– քթի տակ ծիծաղել է նա:– Չե՞ք ուզում նստել»: Իսկ հետո, ոչ տարել, ոչ բերել, կարծես հենց էդպես էլ պիտի լիներ, իր կինոռեժիսորի պատմության կծիկն է բացել, թե ոնց է սա իրեն աչքից գցել, ինքն էլ Սենն է նետվել և այլն, և այլն: Մտքում չի պահել, թե որ կամրջից է ցատկել, հիշողության մեջ մնացել է միայն, որ երբ հանել են ջրից, շուրջն ահագին ամբոխ է հավաքվել: Իսկ ի՞նչ տարբերություն, թե որ կամրջից. նման հարցերի անհրաժեշտությունը ո՞րն է: Նա քահ-քահ ծիծաղելիս է եղել, իսկ հետո հանկարծ վեր կենալու ցանկություն հայտնել. պարելը բռնել է: Տեսնելով, որ Ֆիլմորը տատանվում է, միանգամից բացել է պայուսակն ու մի հարյուր ֆրանկանոց հանել: Մինչդեռ հաջորդ պահին էլ գլխի է ընկել, որ հարյուր ֆրանկով հեռու չես գնա: «Փող չունե՞ք, ինչ է»,– հարցրել է նա: Ֆիլմորի գրպանում շատ փող չի եղել, բայց հո տանը չեկագրքույկ ուներ:

Եվ նրանք սլացել են տուն՝ գրքույկի հետևից. իսկ հետո, իհարկե, ես եմ հայտնվել ու ճիշտ էն պահին, երբ Ֆիլմորը բացատրելիս է եղել «Կտրոն ցկա՝ շապիկ ցկա» գործարքի էությունը:

Տան ճանապարհին կանգ են առել «Պուասոն դ'Օո»-ում՝ մի բան ուտելու, որը Ֆիլմորի ուղեկցուհին թրջել է մի քանի բաժակ օղիով: Էնտեղ իր տարերքի մեջ է եղել. բոլորը համբուրել են ձեռքն ու մրմնջացել. «Իշխանուհի... իշխանուհի...»: Ինչքան էլ հարբած՝ իշխանուհին ճգնել է պատիվը բարձր պահել: «Հետույքն էդպես մի՛ տարուբերեք»,– Ֆիլմորին մի գլուխ զգուշացրել է պարելիս:

Ֆիլմորը մտքին դրել է նրան բերել տուն ու մնալ: Բայց քանի որ իշխանուհու խելքն ու հախուռն խառնվածքը մեծ տպավորություն են գործել, որոշել է տեղի տալ նրա քմահաճույքներին և ամենակարևոր պահը հետաձգել: Մտապատկերներում ծագել է նույնիսկ մի ուրիշ իշխանուհու գտնելու և երկուսին մեկտեղ տուն բերելու հեռանկարը: Ուստի տնից դուրս գալիս նա լավ տրամադրություն է ունեցել և պատրաստ եղել մի քանի հարյուր ֆրանկ ծախսել իշխանուհու վրա, եթե հարկ լիներ: Ի վերջո, հո ամեն օր իշխանուհու չես պատահում:

Էս անգամ նա Ֆիլմորին քարշ է տվել ուրիշ զվարճավայր, մի տեղ, ուր ավելի մեծ ճանաչում է ունեցել, և չեկը կանխիկի վերածելն էլ, իր խոսքերով, գլխացավանք չէր: Բոլորն իրիկնային զգեստներով են եղել, և էլի սկսել են հիմար-հիմար գլուխ տալ, ձեռքը համբուրել, մինչև որ մատուցողը նրանց ուղեկցել է սեղանի մոտ:

Պարի կեսին հանկարծ իշխանուհին թողել հեռացել է՝ արցունքն աչքերին:

– Ի՞նչ պատահեց,– հարցրել է Ֆիլմորը,– հիմա՞ ինչ արեցի:– Եվ բնազդաբար ձեռքը տարել է հետևին, թե չլինի՞ էլի տարուբերում է:

– Բան չկա,– ասել է իշխանուհին:– Դուք մեղք չունեք: Իրոք, լավ տղա եք, գնանք,– և նորից նրան քաշել-տարել է պարելու, ինքնամոռաց պարի բռնվել:

– Բայց ի՞նչ եղավ ձեզ,– շշնջացել է Ֆիլմորը:

– Բան չկա,– կրկնել է իշխանուհին:– Ուղղակի մեկին տեսա:– Եվ ապա զայրույթի հանկարծական պոռթկումով վրա է պրծել.– Ինչո՞ւ

եք հարբեցնում ինձ: Չգիտե՞ք, որ գլուխս կորցնում եմ:- Իսկ հետո ասել է.- Ի՞նչ եղավ չեկը: Մենք պետք է գնանք էստեղից:- Կանչել է մատուցողին և ռուսերեն ինչ-որ բան փսփսացել:- Կարգին չե՞կ է,- հարցրել է նա մատուցողի հեռանալուն պես: Հետո էլ վրա է բերել.- Սպասեք ինձ հանդերձարանում: Պիտի զանգ տամ մեկին:

Մատուցողը բերել է փողի մնացորդը, և Ֆիլմորը, անշտապ, հանգիստ ճեմելով, իջել է հանդերձարան՝ նրան սպասելու: Հետո ու առաջ է արել, դունդունացել, մեղմաձայն սուլել և շրթունքները ծպպացրել՝ նախավայելելով ընտիր խավիարի մոտալուտ համտեսը: Հինգ րոպե է անցել: Տասը: Դեռ մեղմաձայն սուլելիս է եղել: Երբ քսան րոպեն լրացել է, և ոչ մի իշխանուհի էլ չի երևացել, Ֆիլմորի սիրտը, վերջապես, կասկած է ընկել: Հանդերձապահը հայտնել է, որ իշխանուհին վաղուց է գնացել: Ֆիլմորը դուրս է նետվել: Դռան մոտ սպասազգեստով սևամորթ է եղել՝ լայն ժպիտը դեմքին: Ֆիլմորը հարցրել է սևամորթին, թե չգիտի՞՝ ուր է սուրացել իշխանուհին: Սևամորթը քմծիծաղ է տվել: Սևամորթն ասել է. «Կուպոլն» ականջովս ընկավ, տեր իմ»:

Ֆիլմորը նրան գտել է «Կուպոլ» սրճարանի ներքևի հարկում՝ դեմքի երազկոտ, զմայլուն արտահայտությամբ կոկթեյլի բաժակի առաջ նստած: Տեսնելով Ֆիլմորին՝ ժպտացել է:

– Ձեր արածը վայելուչ բա՞ն եք համարում,- հարցրել է Ֆիլմորը:- Թողել փախել եք: Եթե ես ձեր սրտով չէի, կարող էիք ասել:

Էս խոսքերից իշխանուհին բռնկվել է, թատերական պաթոսի գիրկն ընկել: Իսկ երկար զեղումներից հետո սկսել է նվնվալ ու հեծկլտալ:

– Խելքս կորցրել եմ,- հեկեկացել է նա:- Բայց դուք էլ եք կորցրել: Ուզում եք քնել ինձ հետ, իսկ ես չեմ ուզում:

Եվ նորից միտքն է բերել իր կինոռեժիսոր սիրեկանին, որին տեսել է պարելիս: Դրա համար էլ գլուխն առել է, փախել: Դրա համար էլ թմրադեղեր է օգտագործում և ամեն երեկո խմում: Դրա համար էլ նետվել է Սենը: Մի խոսքով, լեզվին է տվել էապես, թե խելքը ոնց է կորցրել, ու մեկ էլ հանկարծ գլխում միտք է ծագել.

– Եկեք «Բրիքթոփի մոտ» գնանք:– Նրա խոսքերով, էնտեղ ծանոթ մարդ կար... ժամանակին աշխատանք է խոստացել: Վստահ է, որ կօգնի իրեն:

– Դա ինչքա՞ն կնստի,– հարցրել է Ֆիլմորը շրջահայացորեն:

Թանկ կնստի, հայտնել է նա՝ առանց այլևայլի:

– Բայց լսեք, եթե ինձ տանեք «Բրիքթոփի մոտ», խոստանում եմ, կգամ ձեր տուն:– Նա ազնվորեն նախազգուշացրել է, որ Ֆիլմորի վրա դա հինգ-վեց հարյուր ֆրանկ կնստի:– Բայց ես արժե՛մ: Դուք չգիտեք, թե ինչ կին եմ: Ամբողջ Փարիզում ինձ նմանը չկա...

– Դա ձե՛ր կարծիքն է,– արդեն յանկիի արյունն է խոսել:– Իսկ ես ձեր կարծիքին չեմ: Իմ կարծիքով՝ մի սոխի գլուխ էլ չարժեք: Ձեր եղածն ի՛նչ է. խելքից ծարավ քոսոտ շուն: Անկեղծ ասած, ավելի լավ է հիսուն ֆրանկ տամ մի խեղճ ֆրանսուհու. գոնե դրա դիմաց մի բան էլ ի՛նքը կտա:

Տաք ջուրն իշխանուհու բերանն է եկել, իրեն կերել է, հենց որ ֆրանսուհու անուն է լսել.

– Չխոսե՛ք դրանց մասին: Ատո՛ւմ եմ բոլորին: Բութ են... անճոռնի... շահամոլ... Վե՛րջ տվեք, ասում եմ:– Մի պահ նա խաղաղվել է: Հիմա էլ նոր ձև է տվել իրեն:– Սիրելիս,– շշնջացել է,– ախր դուք չգիտեք, թե ինչ տեսք ունեմ հոլանի: Ես հրաշագե՛ղ եմ:– Եվ նա երկու ձեռքով բարձրացրել է ստինքները:

Բայց Ֆիլմորն անդրդվելի է մնացել:

– Շան կնկա՛ն տես,– ասել է սառնությամբ:– Թքած ունեմ, որ մի քանի հարյուր դոլար եմ ծախսել, բայց հաստատ խելքից ծարավ եք: Նույնիսկ լվացված չեք: Հոտածբերան էլ եք: Ինձ համար մեկ է՝ իշխանուհի եք, թե ինչ գրող ու ցավ... Ձեր վսեմ ռուսական քամակն իր այլազանությամբ ինձ հարյուր տարի պետք չի: Տարեք փողոց, տրորվեք, որ ծախեք: Դուք սովորական ֆրանսուհուց ոչնչով առավել չեք: Դեռ մի բան էլ վատն եք: Էլ ոչ մի սու չեմ ծախսի ձեզ վրա: Ավելի լավ է գնաք Ամերիկա. իսկը ձեզ նման արնաճուճ տզրուկի տեղն է:

Էս ելույթն իշխանուհուն բնավ էլ հավասարակշռությունից չի հանել:

– Ինձ թվում է՝ ուղղակի մի քիչ վախենում եք ինձնից,– եզրակացրել է նա:

– Ձեզնի՞ց եմ վախենում: *Ձեզնի՞ց:*

– Դուք դեռ երեխա եք,– ասել է իշխանուհին:– Ձեզ պահել չգիտեք: Երբ ինձ ավելի լավ ճանաչեք, ուրիշ կերպ կխոսեք... Գուցե փորձեք ավելի բարեհամբո՞ւյր լինել: Եթե չեք ուզում ինձ հետ գալ, շատ բարի: Վաղը, ժամը հինգից յոթը կլինեմ «Ռոն-Պուեն»-ում: Դուք ինձ դուր եք գալիս:

– Ես մտադիր չեմ ոչ վաղը, ոչ էլ մի ուրիշ օր «Ռոն-Պուեն» գալ: Էլ չեմ ուզում ձեր երեսը տեսնել... երբեք: Ամեն ինչ վերջացած է: Գնամ, մի սիրունիկ ֆրանսուհի գտնեմ: Իսկ դուք գրողի ծոցը կորեք:

Իշխանուհին նայել է նրան ու հոգնած՝ ժպտացել:

– Հիմա եք էդպես ասում: Ա՛յ, սպասեք, կքնեք հետս, նոր կտեսնեք: Դեռ չգիտեք, թե ինչ հրաշագեղ մարմին ունեմ: Կարծում եք՝ ֆրանսուհիները սիրուց բա՞ն են հասկանում... Սպասե՛ք: Դեռ խելքահա՛ն կլինեք ինձ համար: Դուք ինձ դուր եք գալիս: Ուղղակի բոի եք: Մանչուկ: Շատ եք լեզվին անում...

– Որ ասում եմ՝ խելքից ծարավ եք,– վրա է բերել Ֆիլմորը:– Եթե նույնիսկ միակ կինը լինեք աշխարհում, էլի ձեզ վրա չեմ նայի: Գնացեք տուն, լվացվեք:– Եվ նա դուրս է եկել՝ առանց խմիչքի համար վճարելու:

Մինչդեռ մի քանի օրից իշխանուհին հաստատվեց մեզ մոտ: Իսկական իշխանուհի էր, հաստատ համոզվեցինք: Բայց պարզվեց՝ սուսանակ է ընկել: Ինչևէ, ձանձրալի կյանք չէր: Ֆիլմորը բրոնխիտ ուներ, իշխանուհին՝ ինչպես նշեցի, սուսանակ, իսկ ես՝ թութք: Հենց նոր վեց դատարկ շիշ հանձնեցի փողոցի մյուս կողմում գտնվող նպարեղենի ռուսական խանութին: Մի կաթիլն ինչ է՝ բերանս չեմ առել: Ոչ միս, ոչ գինի, ոչ յուղոտ թռչնամիս, ոչ կին. ինձ ոչինչ չի կարելի: Միայն մրգեր ու պարաֆինի յուղ, եզան աչքի կաթիլներ ու ադրենալինի քսուք: Եվ ամբողջ տանն ինձ համար ոչ մի հարմար աթոռ չկա: Հիմա, իշխանուհուն նայելով, փաշայի նման բազմել եմ բարձերին: Փաշայի՛: Սա ինձ հիշեցնում է իշխանուհու անունը՝ Մաշա:

Էնքան էլ արիստոկրատական չի հնչում ականջիս: «Կենդանի դիակն» է միտքս բերում:

Նախապես կարծում էի, թե երեքով ապրելը դժվար կլինի, բայց դուրս եկավ, որ բոլորովին էլ չէ: Երբ տեսա՝ Մաշան տեղափոխվում է, ինձ առա, մտածեցի՝ էլի օրս կտրվեց, պիտի ուրիշ տեղ գտնեմ, բայց, շատ չանցած, Ֆիլմորն ինձ հասկացրեց, որ նրան ապաստան է տալիս՝ մինչև ոտքի կանգնի: Չգիտեմ՝ նրա պես կնոջ պարագայում էդ արտահայտությունն ինչ կնշանակի. աչքովս եմ տեսնում, որ նա ամբողջ կյանքում գլխի վրա է կանգնել: Ասում է՝ հեղափոխությունն է իրեն արտաքսել Ռուսաստանից, բայց վստահ եմ, որ եթե հեղափոխությունը չլիներ, մի ուրիշ բան կլիներ: Նա հավատացած է, որ ինքը մեծ դերասանուհի է, մենք էլ երբեք չենք հակաճառում ասածներին, որովհետև դա ժամանակի կորուստ է: Ֆիլմորը նրան զվարճալի է համարում: Առավոտյան աշխատանքի գնալիս տասը ֆրանկ իմ բարձին է դնում, տասը ֆրանկ էլ՝ նրա, իսկ իրիկունը երեքով գնում ենք ներքևի ռուսական ռեստորանը: Շրջակայքում լիքը ռուսներ կան, և Մաշան արդեն մի տեղ է գտել, ուր իրեն ապառիկով բան են տալիս: Ինչ խոսք, օրական տասը ֆրանկը ոչինչ չարժի իշխանուհու համար. նրա սիրտը մերթընդմերթ խավիար է ուզում, շամպայն, ինքն էլ նոփ-նոր զգեստների կարիք ունի նորից կինոյում գործի անցնելու համար: Իսկ առայժմ միայն ժամանակ է սպանում: Ու վրա է գալիս:

Էս առավոտ սիրտս ահ ընկավ: Լվացվելուց հետո սխալմամբ նրա երեսսրբիչը վերցրի: Ինչ անում ենք՝ չի հաջողվում սովորեցնել, որ իր սրբիչը ճիշտ կեռից կախի: Եվ երբ դրա համար շշպռեցի նրան, անվրդով պատասխանեց. «Սիրելիս, եթե դրանից կուրանային, ուրեմն ես արդեն վաղուց կուրացած կլինեի»:

Մեկ էլ զուգարանի հարցն է, որից բոլորս օգտվում ենք: Փորձում եմ նստոցի վերաբերյալ հայրական տոնով խոսել նրա հետ: «Տեսա՞ր դու,– ասում է:– Դե, եթե էդքան վախենում եք վարակվելուց, սրճարանի արտաքնոցը կգնամ»: Բայց դրա կարիքը չկա, բացատրում եմ: Ուղղակի պետք է հասարակ կանոնների հետևել: «Փա՜հ,– ասում է,– դե ուրեմն չեմ նստի... կանգնած կանեմ»:

թվայնացրել է 1915.info կայքը

Ամեն ինչ տակնուվրա է եղել Մաշայի գալուց հետո: Նախ՝ նա չէր ուզում լավության տակից դուրս գալ՝ դաշտանը պատճառ բռնելով: Դա տևեց ութ օր: Արդեն մտածում էինք, թե փչում է: Բայց չէ, պարզվեց՝ չէր փչում: Մի օր, երբ փորձում էի տունը հավաքել, նրա մահճակալի տակ բամբակե արնակոլոլ խծուծներ գտա: Նա ամեն ինչ մահճակալի տակ է գցում. նարնջի կեղև, բամբակի կտորտանք, խցաններ, դատարկ շշեր, մկրատ, օգտագործված պահպանակներ, գրքեր, բարձեր... Անկողինը կարգի է բերում միայն գիշերը քնելիս: Ժամանակի մեծ մասը, տեղաշորում փռված, ռուսական թերթեր է կարդում: «Սիրելիս,– ասում է ինձ,– եթե թերթերի համար չլիներ, ես ընդհանրապես վեր չէի կենա անկողնուց»: Ճիշտ որ: Չորս կողմը ռուսական թերթեր են, ուրիշ ոչինչ: Մի ծվեն զուգարանի թուղթ չկա. ռուսական թերթերից բացի, էլ ոչ մի բանով քամակդ չես սրբի:

Ինչ որ է, դառնալով նրա յուրօրինակություններին՝ ասեմ, որ դաշտանից հետո, երբ մի կուշտ հանգստացել էր, իսկ գոտկատեղին լավ ճարպաշերտ էր գոյացել, լավության տակից դուրս գալու մասին էլի խոսք չկար: Ձև էր տալիս իրեն, թե միայն կանանց է սիրում: Տղամարդու հետ գործ ունենալու համար, նախ և առաջ, առանձնահատուկ խթան էր պետք: Ուզում էր, որ իրեն տաներինք անառականոց, որտեղ կինը շան հետ է խառնակվում: Կամ, ասում էր, ավելի լավ է Լեդան ու կարապը լինեն. թևահարությունից ահավոր վավաշոտում է:

Մի իրիկուն էլ, նրան փորձելու համար, տարանք իր առաջարկած տեղերից մեկը: Բայց մինչ կհասցնեինք տիրուհու հետ բանը քննարկել, մոտակա սեղանին նստած մի լուլ անգլիացի խոսքի բռնվեց մեզ հետ: Արդեն երկու անգամ գնացել էր վերև, բայց մի անգամ էլ էր ուզում փորձել: Գրպանում ընդամենը քսան ֆրանկ էր մնացել, ինքն էլ ֆրանսերեն չգիտեր, մեզ խնդրեց, որ օգնենք լեզու գտնել իր աչքադրած աղջկա հետ: Պարզվեց՝ սևամորթ է, մարտինիկացի մի փարթամ աղջիկ՝ հովազի պես վայելչագեղ: Լավ էլ բնավորություն ուներ: Համոզելու համար, որ մարտինիկուհին վերցնի անգլիացու վերջին փողը, Ֆիլմորը խոստացավ, թե ինքն էլ մոտը կգնա, հենց

որ նա անգլիացու հարցը փակի: Իշխանուհին, հետևելով էս ամենին ու բառ առ բառ լսելով, քիթն ունքերից բարձրացրեց: Վիրավորվել էր: «Շատ լավ,– ասաց Ֆիլմորը,– գրգռվե՛լ ես ուզում. ուրեմն ի՛նձ կնայես»: Բայց նա չէր ուզում Ֆիլմորին նայել, ուզում էր բադաքլորի նայել: «Է՛հ, արևս վկա,– հարեց Ֆիլմորը,– ես բադաքլորից բնավ վատը չեմ... եթե ոչ ավելի լավը»: Էսպես խոսք խոսքի հասավ, վերջը Մաշային հանգստացնելու համար ստիպված էինք աղջիկներից մեկին կանչել ու նրանց իրար հետ թողնել, որ մեկմեկու խոտուտ տային... Երբ Ֆիլմորը վերադարձավ սևամորթ պոռնիկի հետ, սրա աչքերը մարմրում էին: Ֆիլմորն էնպիսի հայացքներ էր գցում նրա վրա, որ պարզ էր, թե աղջիկն ինչ արտակարգ էր դրսևորել իրեն, ու կրակը իմ մարմինն էլ ընկավ: Ֆիլմորը հաստատ զգաց վիճակս, հասկացավ, թե ինչ Աստծու պատիժ էր ամբողջ գիշեր էստեղ նստած՝ նայելը, որովհետև հանկարծ մի հարյուր ֆրանկանոց հանեց գրպանից ու քթիս տակ շպպացրեց՝ թե. «Լսիր, էդ անտերը երևի քեզ ավելի շատ է պետք, քան մեզ: Սա վերցրու, մեկին ընտրիր»: Չգիտես ինչու, էս արարքը նրան ավելի բարձրացրեց իմ աչքում, քան երբևէ արած ամեն ինչ, իսկ նա շատ բան էր արել: Ես ընդունեցի փողը, ինչ արտով որ ընծայվել էր, և իսկույն ևեթ նշան արեցի մարտինիկուհուն. թող պատրաստվի մի անգամ էլ տալու: Սա կարծես թե իշխանուհուն ամենից շատ կատաղեցրեց: Վրա տվեց, թե՝ ի՞նչ է, էդ սևամորթից բացի, էլ մարդ չկա՞, որ մեզ դուր գա: Կտրուկ պատասխանեցի՝ ՈՉ: Եվ էդպես էլ կար. մարտինիկուհին հարեմի թագուհին էր: Հերիք էր հայացքդ վրան ընկներ, հո՛պ, կանգնում էր: Աչքերն ասես լող տային սերմնահեղուկի մեջ: Նա արդեն հարբել էր վրա-վրա պատվերներից: Էլ ի վիճակի չէր ուղիղ քայլել, համենայն դեպս, ինձ էդպես էր թվում: Նեղ պտուտասանդուղքով մարտինիկուհու հետևից բարձրանալիս չդիմացա ձեռքս նրա շեքը մտցնելու գայթակղությանը. էդ ձևով էլ գնում էինք, նա ուրախ ժպիտով շրջվում, ինձ էր նայում ու հետևը իրար տալիս, եթե շատ էի խուտուտ ածում:

Լավ ժամանակ անցկացրինք: Բոլորս երջանիկ էինք: Մաշայի տրամադրությունն էլ էր կարծես տեղն եկել: Մյուս իրիկուն, երբ

թվայնացրել է 1915.info կայքը

շամպայնի ու խավիարի սովորական բաժինն ստացավ և իր կյանքի պատմության ևս մի գլուխ ներկայացրեց, Ֆիլմորը գործի կպավ: Երևում էր՝ մտքին դրել է վերջապես իր պարգևն ստանալ: Մաշան վերջ տվեց դիմադրելուն: Պառկեց՝ ոտքերը տարածած, թույլ տվեց, որ Ֆիլմորը մի գլուխ բզբզա, բզբզա, իսկ հետո, երբ արդեն իրեն տակն էր առել և ուր որ է՝ պիտի մտցներ, անխռով հայտարարեց, թե սուսանակ ունի: Ֆիլմորը կայծակնահար գլորվեց ցած: Լսեցի՝ խոհանոցն է քրքրում՝ իր սև սապոնը ման գալով, որ առանձնահատուկ դեպքերում էր օգտագործում, իսկ մի քանի րոպեից կանգնած էր մահճակալիս մոտ՝ արբիչը ձեռքին, ասում է. «Մտքովդ հեչ կանցնե՞ր. էդ շնից ծնվածը՝ իշխանուհի է, ինչ է, սուսանա՛կ ունի»: Կարգին վախեցած էր երևում: Մինչդեռ իշխանուհին, խնձոր կրծելով, պատվիրում էր, որ իր ռուսական թերթերը բերեին: Դա հանաք բան էր նրա համար: «Ավելի վատն էլ է պատահում»,– հայտնեց մեզ դռան միջով՝ անկողնում փռված: Ի վերջո, Ֆիլմորն էլ սկսեց եղած-չեղածը հանաք բան համարել և Անժուի գինու նոր շիշ բացելով՝ մի բաժակ լցրեց ու գլխին քաշեց: Գիշերվա մեկի կողմն էր ընդամենը, դեռ որոշ ժամանակ կարող էր հետս նստել, լեզուն քորել: Նա միտք չուներ սրա համար հետ կանգնել ու հույսը կտրել, իր բերանով ասաց: Իհարկե, պիտի զգույշ մնար... Հավրում հին սուսանակը նորից գլուխ էր բարձրացրել: Էլ չէր հիշում, թե ոնց է փորձանքի եկել: Մեկ-մեկ, հարբած ժամանակ, մոռանում է լվացում անել: Սարսափելի բան չկա, բայց չես իմանաս, թե ինչից ինչ դուրս կգա: Չէր ուզում, որ շագանակագեղձը մերսեին: Չէ, դա սրտով չէր: Առաջին անգամ դեռ համալսարանում է հիվանդացել: Ի՞նչ իմանար՝ ընկերուհուց է վարակվել, թե ինքն է նրան վարակել: Ուսանողական միջավայրում ինչ ասես, որ չի կատարվում, գլուխ չես հանի: Համարյա բոլոր ուսանողուհիները վաղ թե ուշ երեխով էին մնում: Անտերը՝ շատ անփորձ էին, էլի... Նույնիսկ դասախոսներն էին անփորձ: Լուրեր էին պտտվում, թե դասախոսներից մեկը կրտել էր իրեն...

Ինչևիցե, մյուս օրը Ֆիլմորը որոշել էր խիզախել. հույսը պահպանակն էր: Մեծ վտանգ չկար, եթե, իհարկե, պահպանակը չպատռվեր:

Երկարոտ տեսակից էր առել, ձկան կաշվից. դրանք էին ամենաիուսալին, վստահեցնում էր նա: Բայց սրանից էլ բան դուրս չեկավ: Մաշայի ծակուկը շատ նեղ էր ու պինդ: «Տեր Աստված, իմ ամեն ինչը տեղն է,– զարմանում էր Ֆիլմորը:– Խելքդ ի՞նչ է կտրում, հը՞: Ախր ինչ-որ մեկը դրել է մեջը, որ սուսանակով վարակել է, չէ՞: Անտերը հո մատնոց չի եղել»:

Էդպես էլ ոչ մի բան գլուխ չեկավ, և նա ձեռ քաշեց էդ մտքից: Հիմա եղբոր ու քրոջ պես պառկում են կողք կողքի և արյունապիղծ երազներ տեսնում: Մաշան իր ոգով փիլիսոփայում է. «Ռուսաստանում շատ է պատահում, որ տղամարդը քնի կնոջ հետ՝ առանց նրան մատով դիպչելու: Էդպես շաբաթներով կարող է շարունակվել. ոչ մի ծուռ միտք: Մինչև որ՝ հո՛պ, մի անգամ տղամարդը դիպչում է կնոջը... և հո՛պպա: Դրանից հետո արդեն սկսվում է՝ հո՛պպա, հո՛պպա, հո՛պպալա...»:

Հիմա մենք ջանք չենք խնայում, որ Մաշային կարգի գցենք: Ֆիլմորի կարծիքով՝ եթե նա բուժվի սուսանակից, ծակուկը կլայնանա: Արտասովոր միտք: Ֆիլմորը նրա համար սրսկիչ էր առել, պերմանգանատի պաշար, ցանիչ և էլի ինչ-որ բաներ, որոնք Ալիգր հրապարակի հունգարացի բժիշկն էր խորհուրդ տվել, աբորտի գործով շնացած մի մանր շառլատան: Ֆիլմորի շեֆը, նրա խոսքերով, տասնվեցամյա աղջկա էր ծոցվորել, սա էլ հունգարացու հետ էր դրան ծանոթացրել: Հետո, երբ շեֆը ճոխ շանկր էր վաստակել, էլի հունգարացին էր բուժել: Այ թե ոնց են Փարիզում ծանոթություններ հաստատվում. միզասեռական բարեկամություն է: Մի խոսքով, հիմա Մաշան բուժվում է մեր աչալուրջ հսկողության տակ: Բայց անցած իրիկուն մի պահ խառնվեցինք: Նա մոմ էր դրել իր ներսն ու սրա պոչից կախված թելը չէր գտնում:

– Աստվա՛ծ իմ,– ձայնը գլուխն էր գցել,– թելն ո՛ւր կորավ: Մեղա՛ քեզ, Աստված, չկա ու չկա՛:

– Մահճակալի տակ նայե՛լ ես,– վրա բերեց Ֆիլմորը:

Վերջապես, Մաշան հանդարտվեց: Բայց միայն մի քանի րոպե: Հաջորդ պահին՝ նորից.

թվայնացրել է 1915.info կայքը

– Աստվա՛ծ իմ, էլի արյունահոսում եմ: Ամսականս վերջացել է, հիմա դարձյալ արյան հետքեր են: Գլուխս կտամ, եթե ձեր էժանագին շամպայնից չի: Տեր Աստված, ուզում եք, որ արյունաքա՛մ լինեմ:– Նա հայտնվում է կիմոնոյով և սրբիչը ոտքերի արանքը խոթած, սովորականի պես՝ ջանալով արժանավայել երևալ:– Ամբողջ կյանքս սա է,– տրտնջում է:– Նևրասթենիա: Օրնիբուն վազում եմ, երեկոյան էլ խմում: Երբ Փարիզ եկա, անմեղ աղջիկ էի: Միայն Վիյոն ու Բոդլեր էի կարդացել: Բայց 300 հազար շվեյցարական ֆրանկ ունեի բանկում և խելքս իմը չէր հաճույքների համար, որովհետև Ռուսաստանում շատ խիստ էին ինձ պահել: Ավելի հրաշագեղ էի, քան հիմա, տղամարդիկ ոտքերս էին ընկնում:– Էս խոսքերի վրա նա սկսում է շփել գոտկատեղին առաջացած ճարպաշերտը:– Չկարծեք, թե էստեղ գալիս սրա պես փոր ունեի... Էս ամբողջն իմ խմած թույնից է... սոսկալի ապերիտիվներից, որոնց համար ֆրանսիացիք խելքահան են լինում... Հենց էդ ժամանակ էլ հանդիպեցի իմ կինոռեժիսորին, և նա ուզում էր, որ խաղայի իր ֆիլմում: Ասում էր՝ աշխարհի ամենաթովիչ արարածն եմ, աղաչում էր, որ ամեն գիշեր հետը քնեմ: Իսկ ես դեռատի, անխելք կույս էի և թույլ տվեցի, որ մի գիշեր ինձ բռնաբարեր: Երազում էի մեծ դերասանուհի դառնալ, ի՞նչ իմանայի, որ նրա մեջ թույն ու թարախ է: Հենց նրանից էլ սուսանակ ընկա... և հիմա շատ կուզեի ստացածս հետ տալ: Նրա մեղքով էր, որ քիչ մնաց՝ ինքնասպան լինեի Սենում... Ինչո՞ւ եք ծիծաղում: Չե՞ք հավատում, որ ինքնասպանության փորձ եմ արել: Կարող եմ թերթերը ցույց տալ... Ամեն տեղ նկարս կա: Մի օր ցույց կտամ ռուսական թերթերը... Ուղղակի հրաշալի են գրել իմ մասին... Բայց հիմա, սիրելիս, ինձ, նախ և առաջ, նոր զգեստ է պետք: Էս քրջերով անհնար է հմայել տղամարդուն: Դերձակուհուս էլ դեռ 12 հազար ֆրանկ եմ պարտք...

Էստեղից մի երկար պատմություն է սկիզբ առնում ժառանգության մասին, որը նա ջանում է պոկել: Ֆրանսիացի փաստաբան ունի, իբր թե բավական երկչոտ մի երիտասարդ. հենց նա է տքնել կարողությունը հետ բերել: Ժամանակ առ ժամանակ էլ մի հարյուր ֆրանկ է տվել:

– Բոլոր ֆրանսիացիների պես կծծի էր,– ասում է Մաշան:– Իսկ ես հրաշագեղ էի, ոչ մի պահ աչքը չէր կտրում ինձնից: Անընդհատ աղաչանք-պաղատանք էր անում, որ հետը պառկեի: Ականջներս տարավ, հոգնեցի, մի երեկո էլ համաձայնեցի՝ ուղղակի դրան հանգստացնելու և հարյուր ֆրանկանոցներից չզրկվելու համար:– Նա մի պահ դադար է տալիս, քահ-քահ ծիծաղում:– Սիրելիս,– շարունակում է,– կատարվածը իսկական զավեշտ էր, բառերով չես նկարագրի: Մի օր զանգում է ինձ, ասում. «Մենք պետք է անհապաղ տեսնվենք... Շատ կարևոր է»: Գնում եմ, բժշկի թուղթ է ցույց տալիս. սուսանա՛կ է: Սիրելիիս ասեմ, ծիծաղեցի երեսին: Ի՞նչ իմանայի, որ իմ սուսանակը դեռ չի անցել: «Դե, դուք էիք ուզում ինձ կզացնել, ե՛ս ձեզ կզացրի»: Սա լսելով՝ սկվեց: Այ, էդպես է կյանքում. ոչինչ չես կասկածում, մեկ էլ հանկարծ՝ հո՛պ, հո՛պ, հո՛պպալա: Գլխին կուտ չկար, նորից-նոր սիրահարվեց: Ուղղակի աղաչում էր, որ ինձ լավ պահեի, Մոնպառնասը ոտքի տակ չտայի՝ խմելով ու բոզություն անելով: Ասում էր՝ խելագարվում է ինձ համար: Ուզում էր ամուսնանալ, բայց հարազատների ականջին հասավ, խելքը մտան, Հնդկաչին ուղարկեցին...

Սրանից Մաշան հեշտ ու հանգիստ անցնում է լեսբուհու հետ ունեցած իր սիրային արկածին.

– Իսկական զավեշտ էր, սիրելիս, թե ինչպես մի երեկո ինձ վերցրեց տարավ: «Ֆետիշ» արճարանում էի, սովորականի պես կոնծած: Տեղից տեղ էր քարշ տալիս, ամբողջ գիշեր ձեռք գցում սեղանի տակ, մինչև որ արդեն չէի մնում ոտքի վրա: Տարավ իր տուն, երկու հարյուր ֆրանկի դիմաց համաձայնեցի, որ ինչ անում էր՝ աներ: Ուզում էր՝ հետն ապրեի, բայց ես չէի ուզում, որ ամեն գիշեր ինձ լիզեր-լպստեր... Դրանից թուլանում ես: Հետո էլ՝ ասեմ. հիմա լեսբուհիներին առաջվա պես չեմ սիրում: Ավելի լավ է տղամարդու հետ պառկեմ, չնայած մղկտոցին: Թունդ գրգռվելիս ինձ լրիվ կորցնում եմ... երեք, չորս, հինգ անգամ կտրվեմ... այ, էդպես: Հո՛պ, հո՛պ, հո՛պպալա... Իսկ հետո սկսում եմ արյունահոսել, դա էլ շատ վնաս է ինձ, որովհետև սակավարյունության եմ հակված: Հիմա կհասկանաք, թե ինչու եմ մերթ առ մերթ թողնում, որ լեսբուհիները լիզեն-լպստեն...

թվայնացրել է 1915.info կայքը

13

Ցուրտն ընկնելուն պես իշխանուհին անհետացավ: Հյուրասենյակում դրված մի փոքրիկ վառարանով բան դուրս չէր գա. ննջարանում սառնամանիք էր, խոհանոցում էլ՝ համարյա նույնը: Միայն վառարանի կողքին էր իրոք տաք: Մաշան էլ մի քանդակագործ գտավ, որն ամորձատված էր: Գնալուց առաջ պատմեց մեզ: Ճիշտ է, մի քանի օր անց նա փորձեց վերադառնալ, բայց Ֆիլմորը լսել անգամ չուզեց: Մաշան բողոքում էր, որ քանդակագործն ամբողջ գիշեր համբուրում է իրեն, չի թողնում քնել: Բացի դրանից, տաք ջուր չկար իր լվացումների համար: Բայց, ի վերջո, նա որոշեց, որ ավելի լավ է չվերադառնալ: «Գոնե էդ մոմակալը քթիս տակ չի լինի,– ասաց Ֆիլմորի հասցեին:– Միշտ՝ նույն մոմակալը... Նյարդերիս ազդում էր: Այ, եթե դու արվամոլ լինեիր, քեզ մոտ կմնայի...»:

Մաշայի գնալուց հետո մեր երեկոներն ուրիշ դարձան: Հաճախ նստում էինք կրակի մոտ, տաք փունջ խմում ու Ամերիկայի մասին տալիս-առնում: Էնպես էինք խոսում, ասես էլ երբեք չէինք վերադառնալու էնտեղ: Ֆիլմորը Նյու Յորքի քարտեզ ուներ, որը փակցրել էր պատին. ամբողջ իրիկուն քննարկում, համեմատում էինք Փարիզի ու Նյու Յորքի արժանիքները: Եվ մեր քննարկումներում, անխուսափելիորեն, միշտ Ուիթմենի կերպարն էր հառնում՝ մի մեծ նավոր հսկա, որին ստեղծել է Ամերիկան իր կարճ պատմության ընթացքում: Ուիթմենի գործերում ողջ ամերիկյան միջավայրն է կենդանություն առնում, նրա անցյալն ու ապագան, ծնունդն ու մահը: Ինչ որ արժեքավոր բան կա Ամերիկայում, Ուիթմենն արտահայտել է, և ավելացնելու ոչինչ չի մնում: Ապագան պատկանում է մեքենաներին ու ռոբոտներին: Նա՝ Ուիթմենը, Մարմնի և Հոգու պոետն էր: Առաջին և վերջին պոետը: Այսօր նա գրեթե անվերծանելի է, հիերոգլիֆներով պատված հուշարձան, հիերոգլիֆներ, որոնց բանալին կորել է: Նրա անունն էստեղ հիշատակելը մի տեսակ տարօրինակ է թվում: Եվրոպական լեզուներում չկա այն ոգու համարժեքը, որն անմահացրել է Ուիթմենը: Եվրոպան

ներծծված է արվեստով, նրա հողը լիքն է մեծերի ոսկորներով, իսկ թանգարանները պայթում են թալանված գանձերից, բայց կա մի բան, որը Եվրոպան երբեք չի ունեցել. ազատ, առողջ ոգի, ինչը և կարելի է կոչել ՄԱՐԴ: Գյոթեն է ամենամոտ զուգահեռը, այնինչ Գյոթեն անապարճ ոչնչություն էր Ուիթմենի համեմատ: Գյոթեն հարգարժան քաղաքացի էր, տառակեր, տաղտկալի տիպար, համաշխարհային ոգի, բայց գերմանական մակնիշի՝ երկգլխանի արծվի դրոշմով: Գյոթեի հանդարտությունը, անդորրը, օլիմպիական կեցվածքը այլ բան չեն, քան գերմանական բուրժուա աստվածության քնաթաթախ ընդարմացում: Գյոթեն վերջն է: Ուիթմենը սկիզբն է:

Նման քննարկումներից հետո երբեմն հագնվում էի ու գնում զբոսնելու՝ վրաս քաշելով սվիտերը, Ֆիլմորի գարնանային վերարկուն, թիկնոցն էլ՝ հետևից: Եղկելի, խոնավ ցուրտ, որից պաշտպանվելու հնար չկա, բացի ոգու ամրությունից: Ասում են՝ Ամերիկան ծայրահեղությունների երկիր է. ճիշտ որ, ջերմաստիճանի անկումներ են գրանցվում, որ լսած բան չեն էստեղ, բայց Փարիզի ձմեռային ցուրտն անհայտ է Ամերիկայում. սա հոգեբանական ցուրտ է՝ որքան արտաքին, նույնքան էլ ներքին: Եթե էստեղ բան չի սառչում, չի էլ հալչում: Ինչպես որ մարդիկ իրենց անձնական կյանքն են պաշտպանում օտարներից՝ ապավինելով բարձր պատերին, փականքներին ու փակոցափեղկերին, գոմռան, չարալեզու, թափթփված դռնապանուհիներին, նույնպես էլ սովորել են դիմագրավել դաժան, անհամբույր կլիմայի ցրտին ու շոգին: Նրանք կոփվել են. ինքնապահպանումն է դարձել նշանաբանը: Ինքնապահպանումն ու ապահովությունը: Բոլոր հարմարություններով փտելու համար: Ձմռան խնամ գիշերը քարտեզ նայելու կարիք չկա, որպեսզի պարզես, թե որ լայնության վրա է Փարիզը: Սա հյուսիսային քաղաք է, գանգերով ու ոսկորներով լի ճահճուտի վրա խոյացած առաջակետ: Բուլվարներում ջերմության պաղշունչ էլեկտրական նմանակումն է սոսկ: Ուլտրամանուշակագույն ճառագայթներով շողարձակող Tout Va Bien[1]-ը

[1] Ամեն ինչ լավ է (ֆրանս.):

«Դյուպոն» ցանցի սրճարանների հաճախորդներին նմանեցնում է փտախտավոր դիակների: Tout Va Bien!. սա է դժբախտ մուրացիկներին կերակրող կարգախոսը, որոնք գիշերն ի բուն վերուվար են անում մանուշակագույն ճառագայթների թոնի տակ: Եթե լույս է վառվում, ուրեմն քիչ թե շատ տաքություն կլինի: Մարդ կա՝ տաքանում է աչքը գցած չաղ ու ապահով շանորդիներին, որ իրենց գրոգն են կուլ տալիս և գոլորշարձակ սև սուրճը:

Եթե լույս է վառվում, ուրեմն ամբոխ կլինի մայթերին, հրմշտոց, կեղտոտ ներքնաշորերից ու գարշ, պիղծ շնչից ելնող քիչ թե շատ կենդանական տաքություն: Գուցեև մի տասը թաղամաս արտաքուստ ուրախ երևան, բայց հետո ամեն ինչ էլի թաղված է գիշերվա մեջ՝ մռայլ, եղկելի, խավար գիշերվա, որը նման է ապուրամանի շուրթերին սառած յուղի: Թաղամաս առ թաղամաս շարվեշար շենքեր են, բոլոր պատուհանները՝ պինդ գոց, բոլորի խանութները՝ կողպված ու ճաղապատ: Մղոններով ձգվող քարակոփ բանտեր՝ առանց ջերմության նվազագույն նշույլի. շները, կատուները, բոլորը ներսն են՝ դեղձանիկների հետ մեկտեղ: Խավարասերներն ու փայտոջիլները ևս ապահով բանտված են: Tout Va Bien. Եթե գրպանդ ծակ է, ի՞նչ կա որ, մի քանի հին թերթ վերցրու ու քեզ համար անկողին սարքիր տաճարի սանդուղքին: Դռներն ամուր փակ են, միջանցիկ քամին չի խանգարի քեզ: Էլ ավելի լավ է քնել մետրոյի մուտքի մոտ. էստեղ ընկերովի կլինեք: Նայիր անձրևոտ գիշերը ներքնակների պես փռված տղամարդկանց, կանանց, որ ոջիլներով հանդերձ՝ կիտվել են իրար գլխի և թերթերով են պաշտպանվում թքից ու անոտ մակաբույծներից: Նայիր նրանց կամուրջների ու շուկաների ծածկերի տակ: Ինչ զազրելի են երևում թանկագին քարերի պես դարսված մաքուր, փայլփլուն բանջարեղենի համեմատ: Ճենճոտ կեռերից կախ մորթված ձիերի, կովերի և ոչխարների մսեղիքն անգամ ավելի գրավիչ տեսք ունի: Ծայրահեղ դեպքում՝ վաղը կխժռենք, և նույնիսկ փորոտիքը պետք կգա: Բայց ո՞մ են պետք անձրևի տակ պառկած էս կեղտակոլոլ մուրացիկները: Ի՞նչ օգուտ նրանցից: Մի հինգ րոպե արտիցդ արյուն է կաթում ու վերջ:

Ա՛հ, գիշերային մտքեր են, որ գլուխդ են գալիս անձրևի տակ քայլելիս, քրիստոնեության երկու հազարամյակից հետո: Գոնե թռչուններն ապահովված են, շներն ու կատուներն էլ: Երբ դռնապանուհու պատուհանի մոտով անցնելիս, սովորականի պես բռնում եմ նրա սառցային խեթ հայացքը, աշխարհի բոլոր թռչուններին խեղդելու խելահեղ ցանկություն է առաջանում: Դե, ամեն մի սառցե սրտի հատակին մեկ-երկու կաթիլ սեր է, որը հերիք է միայն թռչունների համար:

Բայց մտքիցս դուրս չի գալիս, թե ինչ մեծ հակասություն կա գաղափարների և իրական կյանքի միջև, մշտական խզում, թեև մենք ջանում ենք երկուսը միատեղել մի հովանու տակ: Իսկ դա չի հաջողվում: Գաղափարները պետք է զուգակցվեն գործողությամբ. եթե դրանց մեջ սեքսուալ լիցք, կենսական ուժ չկան, գործողություն էլ չի լինի: Գաղափարները չեն կարող մեկուսի գոյություն ունենալ մտքի անօդ տարածության մեջ: Գաղափարներն առնչվում են կենսագործունեությանը՝ լյարդին, երիկամներին, աղիքներին և այլն: Միայն հանուն գաղափարի Կոպեռնիկոսը չէր ավերի գոյություն ունեցող տիեզերքը, և Կոլումբոսն էլ չէր հայտնաբերի Սարգասյան ծովը: Գաղափարի գեղագիտությունը տնային ծաղիկներ է աճեցնում, իսկ ծաղիկներն իրենց թաղարներով դրվում են լուսամուտի գոգին: Բայց եթե անձրև կամ արև չլինի, ի՞նչ իմաստ ունի ծաղիկները դնել լուսամուտին:

Ֆիլմորը տարվել է ոսկու գաղափարով, ինչպես ինքն է կոչում՝ ոսկու «միթոսով»: Ինձ դուր են գալիս «միթոսն» ու ոսկու գաղափարը, բայց ես համակված չեմ դրանով և չեմ հասկանում՝ ինչու պիտի ծաղիկներ տնկենք թաղարներում, թեկուզև ոսկե: Նա պատմում է, թե ֆրանսիացիներն իրենց ոսկին պահում են գետնի ընդերքում տեղավորված անջրաթափանց մեկուսախցերի մեջ. նրա ասելով՝ փոքրիկ շոգեքարշ է շրջում ստորգետնյա անձավներում ու միջանցքներում: Գաղափարը անչափ սրտովս է: Խորին, անընդմեջ լռություն, որի գրկում ոսկին ննջում է խաղաղ Ցելսիուսի տասնյոթ աստիճանի պայմաններում: Ֆիլմորն ասում է՝ մի ամբողջ բանակ, 46 օր ու 37

թվայնացրել է 1915.info կայքը

ժամ տքնելով անգամ, չի կարող հաշվել Ֆրանսիայի բանկի տակ թաղված ամբողջ ոսկին, այնինչ գոյություն ունի նաև հավելյալ պաշար, որը կազմված է ատամի ոսկե շապիկներից, ապարանջաններից, ամուսնական մատանիներից և այլն: Բավականաչափ պարեն էլ կա՝ ութսուն օրվա համար նախատեսված, իսկ ոսկեգանձի վերևում լիճ է՝ հզոր պայթյունների ցնցումներին դիմակայելու համար: Ոսկին, Ֆիլմորի խոսքերով, ավելի ու ավելի անտեսանելի է դառնում, իսկական առասպել, և ոչ մի վատնում: Հոյակա՛պ է: Տեսնես ի՞նչ կկատարվի աշխարհի հետ, եթե հեռանանք ոսկե չափորոշիչից մտայնությունների, հագուստ-կապուստի, բարոյականության և այլնի մեջ: *Միրո՛ ոսկե չափորոշիչից:*

Մինչև օրս ինքս ինձ հետ գործակցելու միտքը հանգել է գրականության ոսկե չափորոշիչից ձերբազատվելուն: Կարճ ասած, միտք եմ ունեցել ցույց տալ հույզերի վերածնունդը, նկարագրել մարդ արարածի պահվածքը գաղափարների վերնոլորտում, այսինքն՝ ցնորամտության ճիրաններում: Պատկերել նախասոկրատյան էակի՝ կեսայծի, կեստիտանի: Մի խոսքով, աշխարհը հիմնել «օմֆալոսի» պորտի, ոչ թե խաչ հանված վերացական գաղափարի վրա: Տեղ-տեղ դեռ կարելի է պատահել անուշադրության մատնված արձանների, անխաթար օազիսների, Սերվանտեսի աչքից վրիպած ջրաղացների, սարը ելնող գետերի, իրանի երկայնքով մեկ հինգ-վեց ստինք ունեցող կանանց: (Գոգենին ուղղված նամակում Ստրինդբերգը գրել է. «Ես ծառեր եմ տեսել, որոնք ոչ մի բուսաբան չի հայտնաբերել, կենդանիներ, որոնց գոյության մասին Կյուվյեն չի էլ կասկածել, և մարդիկ, որոնց կարողացել եք արարել միայն դուք»):

Վերջին վրձնահարվածը հասցնելիս Ռեմբրանդտի համար այլևս տարբերություն չկար ոսկու ձուլակտորի, մսի խտաձոյի և ծալովի մահճակալի միջև: Ոսկին ցայգային բառ է, անդենական մտքի ծնունդ, երազ ու միթոս ունի իր մեջ: Մենք վերադառնում ենք ալքիմիային՝ ալեքսանդրիական կեղծ գիտությանը, որն ստեղծել է մեր ճոռոմ խորհրդանիշերը: Իսկական գիտելիքը ծածուկ պահոցներում ամբարում են ժլատ գիտունները: Կգա օրը, երբ նրանք,

մագնիսներով զինված, պտույտներ կտան մթնոլորտի միջին շերտերում. մի կտոր հանքաքար գտնելու համար հարկ կլինի, հատուկ սարքերով հանդերձ, տասը հազար ոտնաչափ բարձրանալ,– ցանկալի է հյուսիսային լայնություններում,– և հեռազգացական կապ հաստատել հողի ընդերքի ու մեռյալների ստվերների հետ: Էլ ոչ մի Քլոնդայք: Ոչ մի ոսկեբեր երակ: Մարդ պիտի երգել սովորի, մի քիչ էլ միմոսություն անել, կենդանակերպի նշաններից գլուխ հանել և իր աղիքներն ուսումնասիրել: Հողի գրպաններում պահված ամբողջ ոսկին պետք է նորից արդյունահանվի. ամբողջ էս սիմվոլիզմը պետք է նորից դուրս քաշվի մարդկանց ընդերքից: Բայց նախ՝ գործիքները պիտի կատարելագործվեն: Նախ՝ անհրաժեշտ կլինի ավելի լավ օդանավեր կառուցել, տարբերել, թե *որտեղից* է գալիս ձայնը և խելքը չթոցնել քամակի տակ պայթյուն լսելիս: Իսկ հետո անհրաժեշտ կլինի նաև ընտելանալ վերնոլորտային շերտերի սառնությանը՝ դառնալով օդի սառնարյուն ձուկ: Ոչ մի ակնածանք: Ոչ մի աստվածավախություն: Ոչ մի կարոտ: Ոչ մի զղջում: Ոչ մի հիստերիկություն: Ամենից առաջ, ինչպես Ֆիլիպն Դացն է ասում, ՈՉ ՄԻ ՀՈՒՍԱԼՔՈՒՄ:

Էս բոլոր արևկող մտքերը ներշնչված են վերմուտից, որը խմում եմ Տրինիտե հրապարակում: Շաբաթվա հետմիջօրեն է, ձեռքիս՝ «չստացված» գիրք: Ամեն ինչ լողում է աստվածաթոր լորձաթարախի մեջ: Խմիչքը խոտի տտիպ համ է թողնում քիմքիս, սրբի ոտնամատների եղունգների պես քայքայվող Արևմտյան մեր մեծ քաղաքակրթության մրուրը: Կանայք են անցուդարձ անում, ամբողջ զորագնդեր, ու բոլորն էլ հետևներն են քթիս առաջ տանում-բերում օրոր-շորոր: Կոչնակներն են զարկում, և ավտոբուսները, բարձրանալով մայթ, համբույրներ են տալիս իրար: Մատուցողը կեղտոտ լաթով սրբում է սեղանը, մինչ սրճարանի տիրուհին դրամարկղն է խտղտացնում դիվային հրճվանքով: Դատարկություն է դեմքիս, լուլուկուլ եմ, հայացքս՝ սրված անբովանդակությունից, կողքովս սահող գավակներն եմ կծում մտովի: Հանդիպակաց զանգակատանը մի սապատավոր ոսկեզօծ թակով կոչնահարում է, և աղավնիներն են

թվայնացրել է 1915.info կայքը

գվգվում տագնապած: Ես բացում եմ գիրքը, որը Նիցշեն «լավագույն գերմաներեն գիրքն» է անվանել, իսկ էնտեղ ասվում է.

«ՄԱՐԴԸ ԿԴԱՌՆԱ ԱՎԵԼԻ ԽԵԼԱՑԻ ՈՒ ԽՈՐԱԹԱՓԱՆՑ, ԲԱՑՑ ՈՉ ԵՐԲԵՔ ԱՎԵԼԻ ԼԱՎԸ, ԵՐՋԱՆԻԿ ՈՒ ԳՈՐԾՈՒՆՑԱ. ԿԱՄ, ԳՈՒՑԵ, ՄԻԱՑՆ ԵՐԲԵՄՆ: ԵՍ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ ԵՄ ԱՑՆ ԺԱՄԱՆԱԿԸ, ԵՐԲ ՄԱՐԴԿՈՒԹՅՈՒՆԸ ԿԴԱԴԱՐԻ ԱՍՏԾՈՒՆ ԲԱՎԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՊԱՏՃԱՌԵԼՈՒՑ, ԵՎ ՆԱ ՆՈՐԻՑ ԱՄԵՆ ԻՆՉ ԿՈՉՆՉԱՑՆԻ՝ ՀԱՆՈՒՆ ՄԻ ՆՈՐ ԱՐԱՐՄԱՆ: ԵՍ ՀԱՎԱՏԱՑԱԾ ԵՄ, ՈՐ ԱՄԵՆ ԻՆՉ ՀԱՇՎԵԲԱՇԽՎԱԾ Է ՀԵՆՑ ԴՐԱ ՀԱՄԱՐ, ԵՎ ՀԵՌԱՎՈՐ ԳԱԼԻՔՈՒՄ ԱՐԴԵՆ ՆՇՎԱԾ Է ՆԱԵՎ ԱՑԴ ԺԱՄԱՆԱԿԸ ԵՎ ԺԱՄԸ, ԵՐԲ ՎՐԱ ԿՀԱՍՆԻ ՆՈՐ ԱՐԱՐՄԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ: ԻՍԿ ՄԻՆՉ ԱՑԴ ԴԵՌ ՇԱՏ ԺԱՄԱՆԱԿ ԿԱ, ԵՎ ՄԵՆՔ ԴԵՌ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՀԱՋԱՐԱՄՑԱԿՆԵՐ ՈՒ ՀԱՋԱՐԱՄՑԱԿՆԵՐ ԱՑՍ ՍԻՐԵԼԻ ՀԻՆ ՀԱՐԹՈՒԹՑԱՆ ՎՐԱ ՋՎԱՐՃԱՆԱԼ, ԻՆՉՊԵՍ ՈՐ ՑԱՆԿԱՆԱՆՔ»:

Հիանալի՛ է: Հարյուր տարի առաջ գոյություն է ունեցել գոնե մի մարդ, որը բավականաչափ դիտողունակ է եղել՝ տեսնելու համար, որ աշխարհը հևում է ուժասպառությունից: *Մեր Արևմտյան աշխարհը*... Երբ տեսնում եմ տղամարդկանց ու կանանց կերպարանքներ, որ հեղգորեն դեսուդեն են գնում բանտանման տներում՝ մի քանի կարճառոտ ժամ ապաստանելով, առանձնանալով իրենց պատերի ներսում, հոգիս տակնուվրա է լինում սրանց տկար մարմիններում դեռևս պահված սրտառուչ հնարավորություններից: Գորշ պատերի հետևում մարդկային կայծեր են ցոլցլում, բայց դրանցից երբեք հրդեհ չի բորբոքվում: Տղամարդիկ ու կանա՛յք են սրանք, հարց եմ տալիս ինձ, թե՞ ստվերներ, անտեսանելի թելերից կախված խամաճիկներ: Ակներև է, որ շարժվում են ազատորեն, մինչդեռ գնալու տեղ չունեն: Սոսկ մի տիրույթում են նրանք անկաշկանդ և կարող են շրջել ուզածին չափ, բայց թև առնել չեն սովորել դեռ: Առայժմ թևավոր երազանքեր չկան: Ոչ մի մարդ չի ծնվել, որ բավական թեթև լինի, թեթևաշո՛ւնչ՝ հողից կտրվելու համար: Հզոր թևերը մի պահ թափահարած արծիվները դաժանորեն շրմփացել

են գետնին: Գլուխներս պտտվել է նրանց ճախրանքի թևաշառաչից: Մնացեք գետնի՛ն, գալիքի արծիվներ: Երկինքը հետազոտվել է արդեն. դատարկ է: Եվ գետնի տակ էլ դատարկություն է, ոսկորներ ու ստվերներ են միայն: Մնացեք գետնի՛ն և մի քանի հազար տարի էլ թևալող տվեք:

Գիշերվա ժամը երեքն է, երկու բոզի հետ ենք, որոնք թավալգլոր են տալիս հատակին: Ֆիլմորը՝ տկլորված, բաժակը ձեռքին, պտտվում է նրանց շուրջը: Փորը թմբուկի պես ձիգ է ու խուղակի պես՝ պինդ: Ամբողջ պեռնոն ու շամպայնը, կոնյակն ու Անժուի գինին, որ ցերեկվա երեքից բուկն է լցրել, կոյաջրի պես ղլղլում են տնաշենի որկորում: Աղջկերքն էլ ականջները դնում են նրա փորին, կարծես թե երաժշտական արկղիկ է: Բերանը բաց արա կեռով ու ճեղքը ժետոն գցիր: Երբ կոյաջրի ղլղլոցն սկսվում է, լսում եմ, թե չղջիկներն ինչպես են դուրս նետվում զանգակատնից, և երազանքն ընկնում է խորամանկության գիրկը:

Աղջիկները հանվել են, իսկ մենք հատակն ենք ուսումնասիրում, որ, արի տես, չլինի թե ոռները փուշ մտնի: Դեռ բարձրակրունկ կոշիկներով են: Բայց ո՛ռ եմ ասել... Բազմաչարչար, քերված, հղկաթղթով հարթած, սոթլիկ, կոշտ, բիլիարդի գնդակի կամ բորոտի գանգի պես պլպլան: Պատին Մոնայի նկարն է. նա հյուսիս-արևելք է նայում, որտեղ կանաչ թանաքով գրված է «Կրակով»: Մոնայի ձախ կողմում կարմիր մատիտով շրջանակված Դորդոնն է: Հանկարծ սևին տվող, մազոտ խորշ եմ տեսնում պլպլան, ողորկ բիլիարդի գնդակին. ոտքերը, մարտական մկրատ կազմած, ինձ առել են իրենց մեջ: Մի հայացք սևոտ, չփակվող վերքին, և գլուխս սկսում է կտոր-կտոր լինել. բոլոր պատկերներն ու հուշերը, որ ջանասիրաբար կամ մտացրիվ դասդասվել են, գրանցվել, հաստատվել, կցվել իրար, կնքվել ու վավերացվել, խուռնընթաց դուրս են թափվում մայթի խորշից վրա տվող մրջյունների պես: Աշխարհը դադարում է պտտվելուց, ժամանակը կանգ է առնում, երազներիս կապակցվածությունը քակվում է, փլուզվում, և աղիքներս դուրս են պրծնում անասելի խելացնոր թափով, մի պարպում, որ ինձ դեմ առ դեմ է թողնում Բացարձակի հետ:

Նորից տեսնում եմ Պիկասոյի հսկայամարմին, ճապաղ մայրերին՝ սարդերով պատված նրանց ստինքներն ու լաբիրինթոսի խորքում թաքնված նրանց լեգենդը: Եվ հավիտյանս հավիտենից կեղտոտ ներքնակին պառկած Մոլի Բլումին: Կարմիր կավճով նկարած կլիրները զուգարանի դռանը և լալահառաչ ողբացող Տիրամորը: Մի վայրի, հիստերիկ ծիծաղ է հասնում ականջիս, ատամների կրճտոցով լի սենյակ եմ տեսնում, և մարմինը, որ սև էր, սկսում է ֆոսֆորի պես լույս տալ: Վայրի, վայրի, միանգամայն անզուսպ ծիծաղ, և էս խորշն էլ է ահա ծիծաղում երեսիս, ծիծաղում փափկամազ այտամորուսի միջից, մի ծիծաղ, որ կնճռոտում է բիլիարդի գնդակի ողորկ մակերևույթը: Մեծ պոռնիկ և մարդ արարածի մայր՝ երակների մեջ ջին: Բոլոր անառակների մայր, սարդ, որ օրորում ես մեզ քո լոգարիթմական տապանում, անհագուրդ էակ, դև, որի ծիծաղն ինձ խողխողո՞ւմ է: Նայում եմ էս փոս ընկած խառնարանին, անհետ կորած աշխարհին և կոչնահարություն եմ լսում... Երկու միանձնուհի Ստանիսլասի պալատի մոտ և նրանց փեշատակից փչող կծված կարագի հոտը, անձրևի պատճառով չհրապարակված մանիֆեստ, պլաստիկ վիրաբուժության զարգացմանը նպաստած պատերազմ, Ուելսի իշխանը, որ թռչում է աշխարհով մեկ՝ անհայտ հերոսների շիրիմները զարդարելու: Ջանգակատնից դուրս նետված ամեն չղջիկ մի խափանված ձեռնարկ է, ամեն ցնծագին ճիչ՝ դատապարտվածների խրամատներից հասնող հառաչանք ռադիոյով: Սևոտ, չփակվող վերքից, զազիր կեղտահորից, սևամբոխ քաղաքների օրրանից,– քաղաքներ, որտեղ մտքի երաժշտությունը հեղձամահ է լինում սառչող ճարպի մեջ,– խեղդված ուտոպիաներից ծնվում է մի հտպիտ՝ գեղեցիկի և այլանդակի, լույսի և քաոսի միջև երկատված մի էակ. ցած և կողքի նայելիս հտպիտը Սատանան ինքն է, իսկ հայացքը վեր հառելիս նա յուղազօծ հրեշտակ է նկատում՝ թևավոր խխունջ:

Խորշն աչք ածելիս ես հավասարության նշան եմ տեսնում, աշխարհը՝ հավասարակշռության վիճակում, աշխարհ, որ անմնացորդ հանգեցվել է զրոյի: Սա Վան Նորդենի զրոն չէ, որին նա ուղղել էր իր լապտերի լույսը, ոչ էլ վաղաժամ հիասթափված տղամարդուն

բաժին ընկած դատարկությունը, այլ, ավելի շուտ, արաբական զրո, մի նշան, որից ծագում են անվերջանալի մաթեմատիկական աշխարհներ, հենակետ, որը հավասարակշռում է աստղերն ու թեթևաթև երազները, օդից էլ թեթև սարքերը, թեթևակշիռ պրոթեզներն ու պայթուցիկը, որն էլ պրոթեզների տեղիք է տալիս: Ես կուզեի մինչև աչքերս մխրճվել էդ խորշը, իմ սիրունիկ, խենթ ու խելառ, մետալուրգիական աչուկները մոլեգնորեն թարթել էնտեղ: Եվ երբ աչքերս թարթելիս լինեմ, վերստին կլսեմ Դոստոևսկու խոսքերը, կլսեմ՝ ինչպես են էջից էջ ընթանում՝ ամենամանրակրկիտ դիտարկումներով, ամենախելահեղ ինքնավերլուծությամբ և տառապանքի բոլոր նրբերանգներով, որոնք մերթ թեթևությամբ, հումորով են շաղախված, մերթ էլ վեհաշուք են երգեհոնի նվագի պես, մինչև որ սիրտդ բերանից դուրս է գալիս, և ոչինչ չի մնում, բացի կուրացնող, կիզիչ լույսից, մի ճառագուն լույս, որն աստղերի բեղմնափոշին է տանում: Արվեստի պատմությունն է սա, որի արմատները սպանդի մեջ են:

Բոզի կոխված-կոխկխված ծակն աչք ածելիս ամբողջ աշխարհն եմ զգում իմ տակ, քանդվող, ավերվող մի աշխարհ՝ ծյուրված ու բորոտի գանգի պես ողորկ: Եթե ինչ-որ մեկը համարձակություն ունենար իր ամբողջ մտածածն ասելու էս աշխարհի մասին, մի ոտատեղ էլ չէր մնա նրա համար: Մարդու ծնվելուն պես՝ աշխարհը վրա է պրծնում ու նրա մեջքը կոտրում: Միշտ էլ չափից շատ փտած այուներ կան, որ դեռ կանգուն են, չափից շատ՝ թարախի կույտեր, որպեսզի մարդ ծաղկունք ապրի: Վերնաշենքը կեղծիքն է, իսկ հիմքը՝ ահռելի, դողդոջուն վախը: Թե հարյուրամյակը մեկ լույս է ընկնում մի մարդ՝ հանդուգն, անհագուրդ հայացքով մեկը, մարդ, որ աշխարհը շուռ կտա՝ նոր ցեղ ստեղծելու համար, նրա բերած սերը վերածվում է մաղձի, իսկ ինքը դառնում է պատուհաս: Եթե երբեմն առ երբեմն մեզ հանդիպում են էջեր, որոնք պայթունակ են, այրում են ու խոցում, հոգոցներ, արտասուք ու լուտանքներ կորզում, իմացեք՝ դրանք գրվել են մի մարդու ձեռքով, ում մեջքը դեռ չի կոտրվել, ում միակ զենքը մնացել է խոսքը, իսկ նրա խոսքը միշտ ավելի զորեղ է, քան կեղծիքը, աշխարհի կործանիչ հարվածը, ավելի զորեղ, քան կտտանքի

բոլոր գործիքները, որ վախկոտներն են հորինել անհատականության հրաշքը ճզմելու համար: Եթե մեկնումեկը համարձակվեր իր սիրտը լիովին դատարկել, գլխին եկածը իրոք ներկայացնել, իսկական ճշմարտությունը ջրի երես հանել, իմ կարծիքով՝ աշխարհը քարուքանդ կլիներ, հողմացրիվ, և ոչ Աստված, ոչ դիպվածը, ոչ էլ կամքը չէին կարող երբեք կրկին ի մի բերել փշուրները, ատոմները, անբաժանելի մասնիկները, որոնցից կազմված է աշխարհը:

Չորս հարյուրամյակ է անցել վերջին տառապյալ հոգու՝ էքստազի էությանը հասու մարդ արարածի երևան գալուց ի վեր, և չորս հարյուրամյակ էլ շարունակվում է մարդու անկանգ ու անշեղ վայրէջքը արվեստում, մտածողության, արարքների մեջ: Աշխարհը հալից ընկել է. մի դատարկ տոելն ինչ է՝ ուժը չի պատում: Նա, ով հանդուգն, անհագուրդ հայացք ունի, կարո՞ղ է փոքրիշատե հարգանք ունենալ ներկայիս կառավարությունների, օրենքների, վարքականոնների, սկզբունքների, իդեալների, գաղափարների, տոտեմների ու տաբուների հանդեպ: Եթե մեկնումեկը կարենար լույս սփռել, լուծել մեր օրերում «խորշ» կամ «ծակ» կոչվածի հանելուկը, եթե մեկնումեկը գեթ ինչ-որ չափով ընկալեր «անվայել» պիտակված երևույթը պարուրող առեղծվածը, աշխարհը հիմնահատակ կլիներ: Անվայել սոսկանքը, իրերի դատարկ, կոխված-կոխկխված կողմն էլ մեր խելահեղ քաղաքակրթությանը խառնարանի տեսք է տալիս: Անէության հենց էս մեծ, բացերախ անդունդն է, որ արարչագործներն ու մարդկային ցեղի մայրերը կրում են ոտքերի արանքում: Երբ անհագուրդ, հանդուգն հոգին հայտնվում է ու փորձակենդանիների ճղավոցը հանում, նա գիտի, թե որտեղ տանի սեքսուալ լարման հաղորդալարը, գիտի, որ անտարբերության կարծր պատյանի տակ խոր ու անճոռնի պատռվածք է քողարկված, երբեք չլավացող վերք: Եվ նա լարման հաղորդալարը տանում է, դնում ճիշտ ոտքերի արանքը, շամփրում՝ իր ընտրած միջոցներից բնավ չքաշվելով, մրկում մինչև խորքը: Ռետինե ձեռնոցների կարիք չկա. սառնասրտաբար ու բանականորեն մեկնաբանվող ամեն ինչ վերաբերում է պատյանին, իսկ արարչագործման հետամուտ մարդը միշտ ձգտում է ցած՝ դեպի բաց վերքը.

թվայնացրել է 1915.ամ կայքը

հոտած, անվայել սոսկանքը: Նա իր դինամոն միացնում է ամենազգայուն մասերին. թեկուզ միայն արյունախառն թարախ գա լույս աշխարհ, էլի պտուղ է: Հա, դատարկ, կոխված-կոխկխված խառնարանն անվայել բան է: Բայց անգործությունը հազար անգամ ավելի անվայել է: Կաթվածն ավելի մեծ անարգանք է Աստծուն, քան ամենապիղծ հիշոցը: Եթե նույնիսկ մի խառնարան՝ մի բաց վերք մնա ընդամենը, պիտի պոռթկա, պտղաբերի, թեպետև դոդոշներից, չղջիկներից ու մարդուկներից բացի, ոչինչ չի ծնում:

Ամեն ինչ ամփոփված է մի պահի մեջ, որին հասնում են կամ չեն հասնում: Երկիրն առողջության ու հարմարակեցության չորային սարահարթ չէ, այլ թավշափափուկ իրանով վիթխարամարմին էգ, որն ուռչում է հևիհև, ահագնանում ու հանդարտվում օվկիանոսի կոհակների հետ. նա գալարվում է քրտինքի ու տառապանքի ապարոշի տակ: Մերկ ու տարփալի՝ պտույտ է գալիս ամպերի մեջ, աստղերի մանուշակագույն ցոլքերում: Նա ամբողջովին՝ ատոք ստինքներից մինչև փայլփլող զիստերը, այրվում է մոլեխանձ հրով: Անց է կենում տարիների, ժամանակների միջով ցնծագին խնդությամբ, որ ջղաձիգ մոլեգնությամբ է համակում նրա մարմինը, թափ է տալիս, պոկում երկինքը կապած սարդոստայնները. նա հրաբխավեժ սասանումներով է դառնում իր հիմնական ուղեծիրը: Երբեմն էլ նման է եղջերվի, որը թակարդն է ընկել և արտատրոփ սպասում է՝ ականջը որսափողի ձայնին ու շների հաչոցին: Սերը, ատելությունը, հուսալքությունը, գութը, վրդովմունքը, նողկանքը. սրանք ի՞նչ են մոլորակների զուգավորման կողքին: Ի՞նչ պատերազմ, ախտեր, դաժանություն, սարսափ, երբ գիշերը բյուր հրավառ արևների էքստազն է ընծայում: Եվ ի՞նչ ենք մենք անվերջ որոճում մեր երազներում, եթե ոչ միգամածության կամ աստղաբույլի վերհուշը:

Նա՝ Մոնան, հուզավառության գիրկն ընկնելիս, ասում էր. «Դու մեծ մարդ ես», ու թեև հեռացավ՝ ինձ կործանման մատնելով էստեղ, թեև թողեց ինձ դատարկության ոռնացող խորխորատի եզրին, հոգիս մտած նրա խոսքերը խայտում են և լուսավորում ոտքերիս տակ խտացող ստվերները: Ես մոլորվել եմ ամբոխի մեջ, թշշացող լույսերը

շշմեցրել են ինձ, ես զրո եմ, որի աչքի առաջ ամեն ինչ վերածվել է ծաղրուծանակի: Կողքովս անցնող տղամարդիկ և կանայք ծծմբից կիզված են, կալցիումի սպասազգեստով բարապանները բացում են դժոխքի ծնոտները, երկնաքերների տակ ճզմված, մեքենաների մեծ-ատամ բերաններում ծամծմված փառքը քարշ է գալիս հենակներով: Բարձր շենքերի միջով ես գնում էի դեպի գետի զովությունը և տեսա կրակներ, որ հրթիռների պես դուրս էին պրծնում կմախքների կողա-տակերից: Եթե, իրոք, մեծ մարդ լինեի, ինչպես Մոնան էր ասում, էլ ինչո՞ւ պիտի շուրջս էսքան ստրկամիտ ապուշություն լիներ: Ես հոգու և մարմնի տեր մարդ էի, սիրտ ունեի, որ պողպատե զրահով պաշտ-պանված չէր: Էքստազի պահերին երգում էի, և իմ երգից կայծեր էին բռնկվում: Հասարակածն էի երգում, նրա կարմրափետուր ոտքերը և տեսադաշտից անհետացող կղզիները: Բայց ոչ ոք չէր լսում: Թնդա-նոթազարկը Խաղաղ օվկիանոսի վրայով կորած բան է, որովհետև երկիրը կլոր է, և աղավնիները գլխիվայր են թռչում: Մոնան սեղանի մյուս կողմից նայում էր ինձ, աչքերին թախիծ էր իջել. ներսում թանձ-րացող տխրությունը քիթը սեղմել էր նրա թիկունքին, խղճահարությու-նից ջրակալած ոսկրածուծը հեղուկ էր դարձել: Նա թեթև էր Մեռյալ ծովում լողացող դիակի նման: Մատները տառապանք էին արյունում, և արյունը փոխվում էր թքի: Թաց լուսաբացի հետ զանգերի ղողանջը եկավ, և զանգերն անդադար նվագում էին ջղերիս թելերին, և դրանց լեզվակները զարկվում էին սրտիս և երկաթե չարությամբ շաչում: Զանգերի ղողանջը տարօրինակ էր, բայց էլ ավելի տարօրինակ էին պոռթկացող մարմինը, գիշերվա վերածված էս կինը և նրա որդնոտ բառերը, որ ուտում էին ներքնակը: Ես առաջ էի շարժվում հասարա-կածով, լսում կանաչերակ բորենու ժանտ հրհիռը, տեսնում մետաք-սապոչ շնագայլին, հովազին և բծավոր ընձառյուծին, որոնք բոլորն էլ մոռացվել են եղեմական այգում: Իսկ հետո Մոնայի տխրությունը ճապաղվեց մոտեցող զրահանավի քթի պես, և սրա սուզվելու հետ ջուրն ականջներս լցվեց: Տիղմը թափվեց, և շափյուղաներ սահեցին, անցան ծիծղուն նեյրոնների միջով, և լուսակ ի մի եկավ, և նավա-շուրթերն ընկղմվեցին: Առյուծի ոտնաձայնի պես փափուկ՝ ականջիս

հասավ, թե ինչպես հրետասայլերը պտտվեցին, տեսա դրանց փախոնքն ու թուքը. երկնակամարը նստեց, և աստղերը խամրեցին: Սև օվկիանոսը արյունաթոր էր, և խոկուն աստղերի վրա մսի կտորներ էին ուռչում-գոյանում, մինչ թռչունները պտույտներ կտային գլխավերևում, իսկ տեսլային երկնքից կշեռք կկախվեր՝ սանդով ու թակիչով, արդարադատության կապված աչքերի հետ: Ամբողջ նկարագրվածը երևակայական ոտքերով է շարժվում մեռյալ ոլորտների զուգահեռականներում. դատարկ ակնախոռոչներով տեսած ամեն բան պոռթկում է փթթուն կանաչի պես: Անէությունից հավիտենության նշանն է ելնում. վերընթաց պարույրների տակ բացված վիհը խորասուզվում է դանդաղ: Ցամաքն ու ջուրը թվերը միակցում, պոեմ են դարձնում, որը մարմնով է գրված և ավելի կուռ է, քան պողպատն ու գրանիտը: Անվերջ գիշերվա մեջ երկիրը սուրում է դեպի անհայտ աշխարհներ...

Այսօր խոր քնից արթնացա հրճվալի հայհոյանքը շուրթերիս, անկապ խոսքերը՝ բերանիս, ինձ ու ինձ կրկնելով աղոթքի պես. «Fay ce que vouldras!... Fay ce que vouldras!»[1]: Ինչ ուզում ես՝ արա, բայց թող արածդ հրճվանք բերի: Ինչ ուզում ես՝ արա, բայց թող արածդ էքստազ արթնացնի: Հազար ու մի բան է խռնվում գլխիս մեջ էս խոսքերը կրկնելիս. պատկերներ, պատկերներ՝ ուրախ, ահավոր, խենթացնող, գայլն ու այծը, սարդը, ծովախեցգետինը, սիֆիլիսն իր տարածած թևերով և արգանդը՝ իր ծխնևոր դռնով, որը միշտ բաց է և գերեզմանի պես կուլ տալու պատրաստ: Հեշտանք, ոճիր, սրբություն. սիրելիներիս կյանքը, սիրելիներիս սխալները, նրանց ասած խոսքերը, կիսատ մնացած խոսքերը, բարին, որ բերել են և չարը, վիշտը, անհամաձայնությունը, քենը, վեճը, որոնց պատճառ են դարձել: Բայց ամենակարևորը էքստա՛զն է:

Կան բաներ, ինչ-ինչ բաներ իմ հին կուռքերի առնչությամբ, որ աչքերս արցունքով են լցնում. ընդմիջումները, շիլաշփոթը, մոլեգնումը, ամենից առաջ՝ ատելությունը, որ արթնացրել են: Երբ մտածում եմ նրանց թերի կողմերի, նախընտրած հրեշավոր ոճի, գործերի հավակնոտության և տաղտուկի, ամբողջ քաոսի և խառնիճաղանճության

[1] Ինչ ուզում ես՝ արա (հին ֆրանս.):

մասին, որոնց մեջ լողում են, խոչընդոտների մասին, որոնցով շրջապատել են իրենց, զմայլանքի գիրկն եմ ընկնում: Բոլորը խրվել են, մնացել սեփական քաքի մեջ. բոլորը, ովքեր ջանք չեն խնայել կատարելության հասնելու համար: Սա էնքան ճիշտ բան է, որ ինձ դրդում է ասել. «Ցույց տվեք մի մարդու, ով ջանք չի խնայում կատարելության հասնելու համար, և ես մատնացույց կանեմ մե՛ծ մարդուն»: Իմ սիրած զբաղմունքը հենց «կատարելության հասնելու ձգտում» կոչվածն է. դա մաքառման նշան է, ինքնին մաքառում՝ իր ամեն ինչով, ըմբոստ ոգուն հարիր մթնոլորտն ու միջավայրը: Իսկ եթե ցույց տաք կատարելապես արտահայտվելու ընդունակ մարդու, խոսք չունեմ, նա էլ է մեծ, բայց չի գրավում ինձ... Լիարժեքությունը ես զանց եմ առնում: Երբ մտածում եմ, որ արվեստագետի անվերապահ խնդիրը գոյություն ունեցող արժեքային համակարգը տապալելն է, շրջակա քաոսը յուրովի կարգավորելը, երկպառակություն ու խմորում սերմանելը՝ հուզական լիցքաթափման միջոցով մեռածներին հարություն տալու համար, հրճվագին վազում եմ դեպի անկատար մեծերը. նրանց խառնակությունը անուցում է ինձ, կմկմկոցը աստվածային երաժշտության պես է հնչում ականջիս: Ընդմիջումներին հաջորդած հաճելիորեն հաստափոր գրքերի էջերում ես տեսնում եմ, որ մանր-մունր ոտնձգությունները ոչ մի դրոշմ չեն թողել, վախկոտների, ստախոսների, գողերի, վանդալների, զրպարտիչների կեղտոտ ոտնահետքերը ջնջվել են, անհետացել: Լիրիկական կոկորդների փքված մկաններում օրհասական ճիգ եմ տեսնում, որն անհրաժեշտ է անիվը շրջելու, երբեմնի արագությամբ գործի դնելու համար: Տեսնում եմ, որ առօրյա հոգսերի ու նեղությունների, թույլերի ու ապաշնորհների հոգում ծաղկող նվաստ չարության տակ կյանքի ջլատված ուժի խորհրդանիշն է հառնում, և նրան, ով պիտի իր կարգն ստեղծի, նրան, ով պիտի անհամաձայնություն և երկպառակություն սերմանի, քանի որ կամք ու կորով է համակ, վիճակված է նորից ու նորից անցնել խարույկով և կախաղանով: Տեսնում եմ, որ նրա արարքների ազնվության տակ ծիծաղաշարժության ստվերն է թաքնված, որ նա ոչ միայն վեհ է, այլև անհեթեթ:

թվայնացրել է 1915.info կայքը

Մի ժամանակ կարծում էի, թե մարդկայնությունն է ամենավերին նպատակը, որ մարդ կարող է ունենալ, բայց հիմա հասկանում եմ՝ դա կնշանակեր ինքն իրեն կործանել: Այսօր հպարտությամբ պիտի ասեմ, որ ես *ապամարդկային եմ*, մարդկանց ու կառավարությունների հետ առնչություն չունեմ, համոզմունքներից ու սկզբունքներից իսպառ զերծ եմ: Ինձ ոչինչ չի կապում մարդկության փնչացող գնացքին. ես հողի՛ մի մասն եմ: Սա ասում եմ՝ բարձիս պառկած, և զգում եմ, որ քունքերիցս եղջյուրներ են աճում: Աչքիս առաջ հայտնվում են իմ բոլոր խախտված նախնիները, պար բռնում մահճակալի շուրջը, մխիթարում ինձ, թև տալիս, խարազանում իրենց օձի լեզուներով, բերանները բաց խնդում ու ծուռ նայում մեկմեկու թիկունքից ծիկրակող իրենց գանգերով: *Ես ապամարդկայի՛ն եմ:* Սա ասում եմ խև, ցնորամիտ ժպիտով և կշարունակեմ ասել, թեկուզ կոկորդիլոսների անձրև տեղա: Խոսքերիս տակ խնդացող, ծուռ նայող, ծիկրակող էս բոլոր գանգերն են. ոմանք մեռնելուց ի վեր խնդում են արդեն երկար ժամանակ, մյուսների խնդուքը սառել-մնացել է ասես ծնոտի բռնվելուց, ոմանք էլ խնդալու ծամածռություն են անում՝ կանխաճաշակելով շարունակ տեղի ունեցողի հետևանքները: Իսկ ամենից պարզ տեսնում եմ սեփական խնդացող գանգս, քամու բերանում պարող կմախքս, նեխած լեզվիս փոխարեն դուրս սողացող օձերը և էքստազի մեջ գրված հաստափոր գրքերի էջերը, որ աղոտոտվել են արտաթորանքով: Եվ ես լորձունքս, արտաթորանքս, խելահեղությունս, էքստազս միացնում եմ մարմնի ստորգետնյա այրերով անցնող մեծ շրջանառությանը: Էս ամբողջ անտեղի, անհարկի, հարբած փսխանքը շարունակ կհոսի նրանց ուղեղներով, ովքեր կհայտնվեն մարդկային ցեղի պատմությունը բովանդակող անհատակ անոթում: Բայց մարդկային ցեղի հետ կողք կողքի գոյատևում է մարդ արարածների և մի ուրիշ ցեղ, որն ապամարդկային է, ասել է թե՝ արվեստագետների ցեղը. անհայտ մղումների թելադրանքով նրանք վերցնում են մարդկության հույլ զանգվածը և իրենց ոգեշնչող ավյունն ու խռովքը տալով դրան՝ հում խմորը վերածում հացի և գինու, իսկ գինին՝ երգի: Անկյանք պարարտանյութից ու անկրակ խարամից

թվայնացրել է 1915.info կայքը

նրանք վարակիչ երգ են հյուսում: Ես տեսնում եմ, թե անհատների էս յուրահատուկ ցեղը ինչպես է տակնուվրա անում ամբողջ աշխարհը, եղած-չեղածը գլխիվայր շուռ տալիս, միշտ արյան ու արցունքների միջով անցնում և միշտ դատարկ ձեռքերը պարզում վեր, դեպի անհունը, անհասանալի Աստված, միևնույն ժամանակ խեղդելով ամեն հասանելի բան՝ ներսից իրեն կրծող հրեշին հանգստացնելու համար: Եվ երբ նրանք մազերն են փետում անմատչելին ըմբռնելու, ընկալելու ճիգով, դիվագնած գազանի պես գետնով դիպչում, պատռոտում ու բզկտում՝ ինչ կա-չկա, ես տեսնում եմ, որ ճիշտը դա է, գոյություն չունի ուրիշ ճանապարհ: Էս ցեղին պատկանող մարդը պետք է կանգնի բարձունքում՝ անկապ խոսքերը բերանին և իր աղիքները դուրս թափի: Դա է ճիշտն ու անհրաժե՛շտը նրա համար: Իսկ ինչ որ զիջում է էս ահազդու տեսարանին, պակաս զգայացունց է, պակաս սահմռկելի, պակաս խելահեղ, պակաս արբուն, պակաս վարակիչ, ուրեմն արվեստ չէ: Կեղծիք է միայն: Մարդկային է միայն: Կյանքին ու անկենդանությանն է վերաբերում միայն:

Օրինակ, Ստավրոգինի մասին մտածելիս ես ինչ-որ աստվածային հրեշ եմ պատկերացնում, որը, բարձունքում կանգնած, իր արմատախիլ ընդերքն է մեզ շպրտում: «Դևեր»-ում հողը երերում է. սա հարուստ երևակայության տեր անհատին բաժին ընկած փորձանք չէ, այլ համաղետ, որը ոչնչացնում է մարդկության նշանակալից մասին, մեկընդմիշտ ջնջում երկրի երեսից: Ստավրոգինը հենց Դոստոևսկին է, իսկ Դոստոևսկին կամ մարդուն կաթվածահար անող, կամ էլ բարձունքները տանող բոլոր հակասությունների հանրագումարն է: Նրա պարագայում ոչ մտնելու համար անկարելի ստորին աշխարհ կար, ոչ էլ՝ ելնելու համար երկյուղալի բարձունք: Դոստոևսկին անցել է ամբողջ ուղին՝ անդունդից մինչև աստղերը: Ափսոս, որ էլ երբեք չենք տեսնի մի մարդու, ով հասել է մինչև գաղտնիքի ուղնուծուծը և իր տաղանդի բնկումներով լուսավորել խավարի խորքն ու աննահմանությունը:

Այսօր ես գիտակցում եմ իմ ծագումը: Ոչ բախտացույցի կարիք ունեմ, ոչ տոհմածառի: Թե աստղերը կամ արյունս ինչ են ասում,

թվայնացրել է 1915.info կայքը

ոչինչ չգիտեմ: Միայն գիտեմ, որ ցեղի առասպելական հիմնադիրներից եմ սերում: Սուրբ ջրի շիշը շուրթերին մոտեցրած մարդը, շուկայի հրապարակում ծնկած հանցագործը, *բոլոր* դիակների ծանր հոտը հայտնաբերած պարզամիտը, կայծակը ձեռքին պարող խենթը, աշխարհի վրա շռելու համար փեշերը քշտած վանականը, Բառը գտնելու նպատակով գրադարանները փորփրող մոլեռանդը՝ սրանք բոլորը միաձուլվել են իմ մեջ, բոլորն էլ իմ խճճվածության ու էքստազի պատճառն են: Ես ապամարդկային եմ, որովհետև իմ աշխարհը դուրս է հորդել մարդկայնության իր սահմաններից, որովհետև մարդկային լինելը թվում է խղճուկ, թշվառ, ողորմելի բան, որ սահմանափակված է հինգ զգայարաններով, չափավորված բարոյականությամբ ու օրենքներով, բնորոշված տափակություններով ու «իզմ»-երով: Ես խաղողի հյութը լցնում եմ կոկորդս և դրա մեջ իմաստնություն գտնում, բայց իմ իմաստնությունը չի ծնվել խաղողից, արբունքս ոչ մի կապ չունի գինու հետ...

Ուզում եմ պտույտ տալ բարձրաբերձ, անջուր լեռնաշարով, որտեղ մեռնում ես ծարավից ու ցրտից, «արտաժամանակային» պատմությամբ, ժամանակի և տարածության վերջնասահմանով, որտեղ ոչ մարդ կա, ոչ կենդանի, ոչ բուսականություն, որտեղ խելագարվում ես մենությունից, իսկ լեզուն պարզապես բառակույտ է, որտեղ ամեն ինչ առանձին է, անջատ, կտրված ժամանակից: Ես ուզում եմ տղամարդկանց ու կանանց, ծառերի աշխարհ, որը լուռ է (մեր աշխարհում անչա՛փ շատ են խոսում), ուրիշ եզերքներ տանող գետերի աշխարհ, բայց ոչ թե լեգենդի վերածված, այլ էնպիսի գետերի, որոնք քեզ կապում են այլ տղամարդկանց ու կանանց, ճարտարապետության, կրոնի, բույսերի, կենդանիների հետ, գետերի, որտեղ նավարկում են և խեղդվում, ոչ թե առասպելներում ու լեգենդներում, գրքերում ու անցյալի փոշում են խեղդվում, այլ՝ ժամանակի, տարածության և պատմության մեջ: Ես Շեքսպիրի ու Դանտեի նման օվկիանոսներ դարձող գետեր եմ ուզում, գետեր, որ չեն ցամաքում անցյալի դատարկության գրկում: Օվկիանոսներ, այո՛: Թող ավելի շատ օվկիանոսներ լինեն, նոր օվկիանոսներ, որոնք արբում տանում են

թվայնացրել է 1915.info կայքը

անցյալը, օվկիանոսներ, որոնք երկրաբանական նոր գոյացումներ են առաջացնում, նոր տեղագրական հեռապատկերներ և արտասովոր, ահասարսուռ մայրցամաքներ, օվկիանոսներ, որոնք ավերում ու պահպանում են միաժամանակ, օվկիանոսներ, որոնցով կարելի է նավել դեպի նոր հայտնագործություններ և նոր հորիզոններ: Թող ավելի շատ օվկիանոսներ լինեն, ավելի շատ հեղաշրջումներ, պատերազմներ, կոտորածներ: Թող նոր աշխարհի տղամարդկանց ու կանանց ոտքերի արանքում դինամոներ բանեն, թող իսկական մոլուցքի, կրքի, մեծագործության, դրամայի, երազանքների, խենթության աշխարհ լինի, մի աշխարհ, որն էքստազ է առաջ բերում, ոչ թե դատարկ տոտոռոց: Ես հավատացած եմ, որ այսօր ավելի շատ, քան երբևէ, հարկ է որոնել միակ գիրքը, թեկուզ *մեն-մի* մեծահզոր էջ ունենա. մենք պետք է գտնենք բեկորները, պատառիկները, փշուրները՝ ամեն-ամեն բան, ինչի մեջ թանկարժեք մետաղ կա, ամեն բան, ինչն ի զորու է հարություն տալ հոգուն և մարմնին:

Միգուցե մենք դատապարտված ենք, էլ հույս չկա մեզ համար, *ոչ մեկիս* համար, բայց եթե նույնիսկ էդպես է, ի վերջո մեր զարհուրելի մահաճի՛չն արձակենք, մարտահրավերի աղաղա՛կը, ռազմագո՛չը: Կորչե՛ն տրտունջները: Կորչե՛ն եղերերգություններն ու սգերգերը: Կորչե՛ն կենսագրականներն ու պատմությունը, գրադարաններն ու թանգարանները: Թող մեռյալները խժռեն մեռյալներին: Եվ թող ողջերը պար բռնեն խառնարանի փեշին, վերջին, նախամահու պար: Բայց պա՛ր:

«Ես սիրում եմ հոսող ամեն ինչ»,- ասել է մեր ժամանակների մեծ կույր Միլթոնը: Էս առավոտ նրա մասին էի մտածում, երբ արթնացա բարձր, հրճվալի ճիչով. մտածում էի նրա գետերի ու ծառերի և ուսումնասիրած գիշերային աշխարհի մասին: Այո, ասացի ինքս ինձ, ես էլ եմ սիրում հոսող ամեն ինչ՝ գետերը, կեղտաջրի առուները, լավան, սերմնահեղուկը, արյունը, մաղձը, բառերը, նախադասությունները: Սիրում եմ պտղապարկից թափվող ջրերը: Երիկամներն եմ սիրում՝ իրենց ցավոտ քարերով, ավազով ու մնացած բաներով,

թվայնացրել է 1915.info կայքը

սիրում եմ մեզի այրող շիթն ու անվերջ ծլծլացող սուսանակը, հիստերիկայի մեջ ասված բառերն եմ սիրում և նախադասությունները, որ ընթանում են թանչի պես ու արտացոլում հոգու բոլոր հիվանդ պատկերները, Ամազոնի և Օրինոկոյի նման մեծ գետերն եմ սիրում, որտեղ Մորավաժինի պես խելացնոր մարդիկ, բաց նավակ նստած, լողում են երազանքի ու լեգենդի միջով և խեղդվում կույր գետաբերանում: Սիրում եմ հոսող ամեն ինչ, անգամ դաշտանի արյունը, որ տանում է անպտուղ սերմը: Հոսուն ձեռագրերն եմ սիրում՝ սրբազան լինեն, գաղտնախորհուրդ, արատավոր, բազմակերպ, թե միակողմանի: Սիրում եմ հոսող ամեն-ամեն ինչ, որ ժամանակ ու լինելիություն է պարունակում, որ մեզ տանում է հետ՝ դեպի սկիզբը, որտեղ երբեք վախճան չկա. մարգարեների ցասումը, անպատշաճությունը, որ էքստազն է, մոլեռանդի, իր ոետինե աղոթքը մրմնջացող քահանայի իմաստնությունը, պոռնիկի գոեհիկ խոսքերը, թուքը, որ քշում է առվի ջուրը, կրծքի կաթը և արգանդից եկնող դառը մեղրը, ամենաամեն ինչ, որ հոսում է, հալվում, տարրալուծվում կամ տարրալուծում, ամբողջ ժահրն ու կեղտը, որ, հոսելով, մաքրվում են, կորցնում նախնական իմաստը դեպի մահ և քայքայում տանող վիթխարի շրջապտույտի ճանապարհին: Ամենամեծ արյունապիղծ տենչանքս հոսել-գնալն է, մեն-մենակ՝ ժամանակի հետ, անդրաշխարհի վեհ պատկերը այսօրվան ձուլելը. անմիտ, ինքնասպան ցանկություն, որ լռվել-մնացել է խոսքերի փորկապից և մտքերի կաթվածից:

Սուրբ ծննդյան օրվա լուսադեմին էր, որ Օդեսայի փողոցից վերադարձանք տուն, հետներս՝ հեռախոսային ընկերությունում աշխատող երկու սևամորթ աղջիկ: Կրակը մարել էր, և բոլորս էլ էնքան հոգնած էինք, որ հենց շորերով մեզ գցեցինք անկողին: Ընկերուհիս, որն ամբողջ իրիկուն ցատկելու պատրաստ ընձառյուծի պես էր իրեն պահել, խոր քուն մտավ՝ մինչև կհասցնեի հեծնել: Որոշ չարչարանք

թվայնացրել է 1915.info կայքը

թափեցի, ոնց որ ջրահեղձին կամ խեղդվածին են փորձում հետ բերել: Հետո հույսս կտրեցի ու ես էլ խոր քնով ընկա:

Ամբողջ արձակուրդին՝ առավոտ լիներ, ցերեկ, թե իրիկուն, շամպայն էինք խմում. ամենաէժան ու ամենալավ շամպայնը: Նոր տարուց հետո պիտի մեկնեի Դիժոն, որտեղ անգլերենի ուսուցչի աննշան պաշտոն էին առաջարկել ֆրանս-ամերիկյան բարեկամական փոխանակումների շրջանակում, որոնք նպատակ ունեին ամրապնդել բարի կամքն ու փոխըմբռնումը երկու քույր հանրապետությունների միջև: Ֆիլմորն ավելի գոհ էր էս հեռանկարից, քան ես. դե, լուրջ պատճառ ուներ: Իսկ ինձ համար դա տեղափոխություն էր մի քավարանից մյուսը: Ոչ մի ապագա չկար. աշխատանքը նույնիսկ վճարովի չէր: Ենթադրվում էր, որ մարդ պիտի իրեն բախտավոր համարի ֆրանս-ամերիկյան բարեկամության սուրբ գործին ծառայելու հաճոյալի արտոնության համար: Մի խոսքով, հարուստի որդու գործ էր:

Մեկնելուս նախորդ գիշերը մեզ մի լավ տեսանք: Լուսաբացին սկսեց ձյուն գալ. տեղից տեղ էինք թրևում՝ մի վերջին հայացք գցելով Փարիզին: Սեն Դոմինիկ փողոցով անցնելիս հանկարծ հայտնվեցինք մի փոքրիկ հրապարակում, որտեղ Սենտ Կլոտիլդ եկեղեցին էր: Մարդիկ պատարագի էին գնում: Ֆիլմորը, որի խելքը դեռ մի քիչ շաղված էր, որոշեց, թե ինքն էլ պիտի մասնակցի պատարագին: «Հավեսի համար, էլի՛»,– ոնց որ ինքը ձևակերպեց: Ես մի քիչ սրտնեղեցի. նախ՝ երբեք պատարագի չէի եղել, հետո էլ՝ ոչ տեսքս էր մի բան, ոչ ինքնազգացողությունս: Ֆիլմորի տեսքն էլ էր բավական ճմռթված, նույնիսկ ավելի անփառունակ, քան իմը. ֆետրե լայնեզր գլխարկն ասես շան բերան էր ընկել, իսկ վերարկուն մեր եղած վերջին տեղից թեփակոլոլ էր մնացել: Ինչ որ էր, մտանք ներս: Դե, ծայրահեղ դեպքում դուրս էին շպրտելու:

Մի ապշել ապշեցի աչքիս առաջ բացված տեսարանից, որ ամբողջ սրտնեղությունս անցավ: Փոքր-ինչ ժամանակ պահանջվեց կիսախավարին ընտելանալու համար: Ֆիլմորի թևքին կառչած՝ խարխափելով գնում էի նրա հետևից: Խորհրդավոր, գերերկրային ձայն էր հասնում ականջիս՝ պաղ սալարկից ելնող խուլ թնդյուն:

թվայնացրել է 1915.info կայքը

Մի հսկայական, չարագույժ դամբան էր՝ ներսուդուրս անող սգակիր-ներով, հանդերձյալ աշխարհի նախասրահի պես մի բան: Ջերմաստիճանը տասներկուսից տասնհինգ կլիներ: Ոչ մի երաժշտություն, եթե չհաշվենք ներքնահարկից հնչող տարտամ սգերգը. կարծես ծաղկակաղամբի միլիոնավոր գլուխներ ողբահառաչ բվվային խավարում: Պատանված մարդիկ քրթմնջում էին հուսակտուր, սրտաբեկ մուրացիկների նման, որոնք ինքնամոռացության մեջ ձեռքերն են երկարում՝ անլսելի աղերսներ դնդնալով:

Ես գիտեի, որ էս կարգի բաներ կան, ինչպես մարդ գիտի սպանդանոցների, դիապահների և հերձարանների մասին: Բայց նման տեղերից բնազդաբար խուսափում ես: Դրսում հաճախ եմ պատահել փոքրիկ աղոթարանը ձեռքին քահանայի՝ քարոզի իր տողերը ջանասիրաբար սերտելիս: *Ապուշի գլուխ,* ասել եմ ինձ ու ինձ և դրանով սահմանափակվել: Փողոցում ամեն տեսակ խելապակասի էլ կհանդիպես, քահանան ի՞նչ է որ, ավելի վատն էլ կա: Երկու հազար տարին բթացրել է մեր արձագանքն էս ապուշության ի տես: Մինչդեռ երբ անսպասելիորեն հայտնվում ես քահանայի տիրույթներում, երբ տեսնում ես նրա փոքրիկ աշխարհը, որտեղ զարթուցիչի դեր է կատարում, քեզ կարող են միանգամայն ուրիշ զգացումներ համակել:

Մի պահ էս ամբողջ լացութացն ու շրթունքների դողդողոցը համարյա իմաստ ստացան: Ինչ-որ բան էր տեղի ունենում, յուրատեսակ մնջախաղ, որն ամբողջովին չէր շշմեցրել ինձ, բայց արդեն կախարդել էր: Ամբողջ աշխարհում էլ, ուր նման կիսախավար դամբաններ կան, էս անհավատալի ներկայացումն է ընթանում. նույն միջին ջերմաստիճանն է, նույն մթնաշաղախ լույսը, նույն խուլ թնդյունն ու գվվոցը: Ամբողջ քրիստոնեական աշխարհում, որոշակիորեն սահմանված ժամերին, անազգեստ մարդիկ բերանքսիվայր փռվում են խորանի առաջ, որտեղ ծառացել է քահանան, մի ձեռքին՝ փոքրիկ գիրք, մյուսին՝ ճաշի զանգ կամ փոշեցիր, և ինչ-որ խոսքեր է ծամծմում, որոնք, եթե անգամ հասկանալի են, արդեն ոչ մի իմաստ չեն պարունակում: Օրհնում է ամենայն հավանականությամբ: Օրհնում է երկիրը, օրհնում կառավարությանը, օրհնում հրազենն ու

թվայնացրել է 1915.info կայքը

մարտանավերը, ռազմամթերքն ու ձեռքի նռնակները: Նրան շրջապատում են Տիրոջ հրեշտակների պես հագնված տղեկները, որոնք երգում են ալտերով ու սոպրանոներով: Անմեղ գառնուկներ... Բոլորը փեշավոր են, անսեռ, ինչպես քահանան ինքը, որ, սովորաբար, հարթաթաթ է ու կարճատես: Չեզոք սեռի քաղցրահնչյուն կատվահամերգ... Պլորները՝ կախակապի մեջ, մինորային տոնայնությամբ...

Ես ջանում էի թույլ լույսի տակ հնարավորին չափ ամեն ինչ տեսնել: Գրավիչ էր ու ապշեցնող միաժամանակ: Քաղաքակիրթ աշխարհով մեկ, մտածում էի ինձ ու ինձ: Աշխարհով մեկ: Ա՛յ քեզ բան: Անձրև լինի, թե արև, կարկուտ, ջրցեխ, թե ձյուն, որոտ, թե կայծակ, պատերազմ, սով, թե համաճարակ. ոչ մի տարբերություն: Միշտ նույն միջին ջերմաստիճանն է, նույն աղոթկերությունը, քուղերը մինչև վերջ կապած նույն կոշիկները և Տիրոջ նույն հրեշտակիկները, որ երգում են սոպրանոներով ու ալտերով: Դրան մոտ նվիրատվությունների արկղիկն է՝ ի պետս երկնահաճո գործի շարունակման, որպեսզի Աստծու օրհնությունը թափվի թագավորի և երկրի, մարտանավերի և պայթուցիկի, տանկերի և ինքնաթիռների վրա, որպեսզի աշխատավոր ձեռքերում ավելի շատ ուժ լինի ձիեր, կովեր ու ոչխարներ մորթելու, ուժ՝ երկաթե հեծանների մեջ անցքեր շաղափելու, ուժ՝ սրա-նրա շալվարի կոճակները կարելու, ուժ՝ գազար, կարի մեքենաներ և ավտոմոբիլներ ծախելու, ուժ՝ միջատներին ոչնչացնելու, ախոռները մաքրելու, աղբարկղները դատարկելու և զուգարանները սրբելու, ուժ՝ լրագրային վերնագրեր հորինելու և մետրոյի տոմսերը դակելու համար: Ուժ, ուժ... Էս ամբողջ քրթմնջանքն ու աչքակապությունը մի քիչ ուժ տալու նպատակին են ծառայում:

Մենք մի տեղից մյուսն էինք գնում՝ ամեն ինչ զննելով գիշերային կոնծաբանությունից հետո վրա հասնող սառնախոհությամբ: Երևի թե աչքի էինք ընկել, վերարկուների օձիքները բարձրացրած, էդպես դեսուդեն քարշ գալիս՝ ոչ մի անգամ չխաչակնքելով և բերաններս միայն կծու դիտողությունների համար բացելով: Գուցեև էժան պրծնեինք, եթե Ֆիլմորը մտքին չդներ ժամերգության կեսին անցնել խորանի մոտով: Նա արդեն ելքն էր փնտրում, բայց ինձ

թվայնացրել է 1915.info կայքը

թվում է՝ մտածեց ձեռի հետ սրբության սրբոցն էլ տնտղել, էսպես ասած, ավելի մանրակրկիտ: Բարեհաջող անցանք գնացինք և արդեն ուղղվել էինք դեպի լույսի շերտը, որ, ըստերևույթին, դռնից էր ներս ընկնում, երբ հանկարծ մի քահանա ծլեց մեր դիմաց ու առաջներս կտրեց: Ուզում էր իմանալ, թե ինչ բանի էինք և ուր էինք ճամփա ընկել: Քաղաքավարությամբ պատասխանեցինք, որ ելքն ենք փնտրում: «Ելքն» անգլերեն ասացինք, որովհետև շշկլվելուց, պահի տակ, ֆրանսերեն «ելքը» մտքներիցս թռավ: Առանց մի ծպտուն հանելու՝ նա պինդ բռնեց մեր թևերից և դուռը բացելով, որը, պարզվեց, կողամուտք էր, մեզ դուրս շպրտեց, ու մենք, թավալգլոր, հայտնվեցինք կուրացնող ցերեկային լույսի տակ: Սա էնքան անակնկալ ու աննպաստելի կատարվեց, որ շվարած էինք, երբ սանդուղքից գլորվեցինք մայթին: Աչքներս ճպճպացնելով՝ մի քանի քայլ արեցինք, իսկ հետո բնազդաբար շուռ եկանք. քահանան դեռ ցցված էր սանդուղքի գլխին՝ երեսը պատի ծեփ դարձած ու սադայելի պես խոժոռ: Ահավոր փրփրած էր երևում: Հետո, կատարվածը վերհիշելիս, ես չէի մեղադրում նրան: Բայց էդ պահին, նրա երկար փեշերն ու գանգին դրած պստլիկ գդակը տեսնելով, փոթկացրի. ախր շատ անհեթեթ տեսք ուներ: Նայեցի Ֆիլմորին, նրա ծիծաղն էլ բռնեց: Մի րոպե կլիներ, որ կանգնած՝ հոհոում էինք խեղճ երկոտանու երեսին: Նա էլ, ի՛նչ ասեմ, գլուխը կորցրեց. սկզբում չիմացավ անելիքը, բայց մեկ էլ տեղից պոկվեց ու աստիճաններից վազեվազ իջավ՝ կարծես լուրջ դիտավորությամբ բռունցքը թափահարելով մեզ վրա: Եկեղեցու ցանկապատից դուրս պրծնելուն պես՝ քառատրոփ վազքի անցավ: Ինքնապահպանման բնազդն ինձ հուշեց, որ պիտի գլխի ճարը տեսնել: Քաշեցի Ֆիլմորի թևքից, թե՝ արի, փախանք: Իսկ էս դդումը հա կրկնում է. «Չէ, ես չեմ ուզում, չէ՛»: «Գնա՛նք,– բղավում եմ,– կաշիներս փրկե՛նք: Արյունը սրա աչքերն է կոխել»: Ու գլխապատառ փախանք՝ ինչքան ոտքներումս ուժ կար:

Դիժոնի ճանապարհին, անցած-դարձածի վրա դեռ ինձ ու ինձ ծիծաղելիս, միտքս եկավ մի ուրիշ անհեթեթ միջադեպ՝ համանման մի բան, որ կատարվել էր, երբ կարճ ժամանակով հայտնվեցի

թվայնացրել է 1915.info կայքը

Ֆլորիդայում: Նշանավոր հողային բումի շրջանում էր. հազարավոր ուրիշների պես ես էլ երկու ոտքով ցեխն ընկա: Ճգնելով նեղ վիճակից դուրս գալ՝ ընկերոջս հետ լռվել էի հենց շշի բերանում: Ջեքսոնվիլը, որտեղ մոտ ամիս ու կես թրև էինք գալիս, պաշարված քաղաքի էր նմանվել: Ինչքան թափառական կար աշխարհի երեսին, սրանց հետ էլ՝ շատերը, որ երբեք թափառական չէին եղել նախկինում, լցվել էին Ջեքսոնվիլ: Երիտասարդների քրիստոնեական միության, Փրկության բանակի, հրշեջ ծառայության հանրակացարաններն ու ոստիկանական տեղամասերը, հյուրանոցները, վարձու սենյակները, ամեն ինչ լեփլեցուն էր: *Բացարձակապես* տեղ չկար, և ցուցանակներն ամենուր դա էին վկայում: Ջեքսոնվիլցիներն էնքան քարսիրտ էին դարձել, որ թվում էր՝ զրահով էին շրջում: Փորը կշտացնելու խնդիրն էլի մեջտեղ էր եկել: Փորը կշտացնելու և գլուխը մի տեղ դնելու: Ուտելիքը հարավից գնացքներով էր գալիս՝ նարինջ, գրեյպֆրուտ ու տեսակ-տեսակ հյութալի բաներ: Մենք պտտվում էինք ապրանքատար վագոնների մոտակայքում՝ թեկուզ փչացած միրգ փնտրելու հույսով, բայց նույնիսկ դա՛ հազարից մեկ էր պատահում:

Մի իրիկուն էլ, հուսահատության գիրկն ընկած, ընկերոջս՝ Ջոյին, քարշ տվեցի սինագոգ, հենց ժամասացության պահին: Ռեֆորմիստական համայնքի սինագոգ էր, և ռաբբին բարենպաստ տպավորություն թողեց ինձ վրա: Երաժշտությունն էլ գրավեց՝ հրեաների արտամորմոք հեծեծանքը: Ժամասացությունն ավարտվեց թե չէ՝ գնացի ռաբբիի առանձնասենյակն ու խնդրեցի, որ ինձ մի փոքր ժամանակ հատկացնի: Բավական քաղաքավարությամբ ընդունեց, քանի դեռ նպատակս չէր պարզվել: Հենց որ իմացավ, թուքը ցամաքեց: Իսկ ես ուղղակի ողորմություն էի մուրում ընկերոջս՝ Ջոյի և ինձ համար: Տեսքին նայելիս կասեիր, թե առաջարկել եմ սինագոգի տեղը կեգլարան բացել: Բանը բանից անցավ, երբ առանց այլևայլի, հանկարծ հարցրեց՝ հրեա՞ եմ, թե՞ չէ: Ժխտական պատասխանս նրան մինչև հոգու խորքը վիրավորեց: Մեղա քեզ, Աստված, էլ ինչո՞ւ եմ օգնության համար հրեա քահանային դիմում: Ես միամտորեն պատասխանեցի, թե հրեաների հանդեպ միշտ ավելի մեծ հավատ

թվայնացրել է 1915.info կայքը

եմ ունեցել, քան այլադավանների: Ամոթխածությամբ ասացի, կարծես թե դա իմ թերություններից մեկն էր: Ամեն դեպքում, ճիշտ էր: Բայց նա բոլորովին էլ չշոյվեց: Չէ մի, հա: Սարսափած էր: Գլուխն ինձնից ազատելու համար մի երկտող գրեց Փրկության բանակին: «Ահա թե որտեղ պիտի դիմեք»,- ասաց և կտրուկ շրջվելով՝ գնաց իր հոտին հովվություն անելու:

Փրկության բանակը, իհարկե, մեզ տրամադրելու բան չուներ: Եթե գրպաններումս գոնե քսանհինգական սենթ լիներ, հատակին գցած ներքնակի տեր կդառնայինք: Բայց հինգ սենթն էլ էր մեր գլխից կտրված: Գնացինք զբոսայգի ու մեկնվեցինք մի նստարանի: Անձրև էր գալիս, ստիպված հին-մին թերթերով ծածկվեցինք: Երևի կես ժամ էլ չէր անցել՝ որտեղից որտեղ ոստիկան հայտնվեց և առանց մի նախազգուշական բառի՝ տուր, թե կտաս, հո չդնքսե՛ց մեզ. մի աչք ճպելում վեր թռանք ու պուկ փախանք՝ պարպար անելով, չնայած ո՞վ պարի սիրտ ուներ որ: Ծալը պակաս էդ անասունի քոթակն ուտելուց հետո ինձ էնքան ոտնահարված, թշվառ, ընկճված ու չնչին էի զգում, որ հնար լիներ՝ քաղաքապետարանը կպայթեցնեի:

Մյուս առավոտ, էս աստիճանի հյուրընկալ շանորդիների հախից գալու համար, ծեգը ծեգին գնացինք կաթոլիկ քահանայի դուռը: Էս անգամ թողեցի, որ Ջոն ասի-խոսի: Իռլանդացի էր, խոսվածքից մի թեթև զգացվում էր: Աչքերն էլ կապույտ էին ու փաղաքշալի, ուզած պահին գիտեր մի քանի կաթիլ արտասուք թափել: Դուռը սևազգեստ միանձնուհի բացեց, բայց ներս չհրավիրեց: Պետք է սպասեինք նախասրահում, մինչև որ գնար, սուրբ հորը կանչեր: Մի քանի րոպեից եկավ սուրբ հայրը՝ շոգեքարշի պես փնչացնելով: Ի՞նչ կար, որ իր նման մարդկանց հանգիստը խանգարում էինք առավոտ կանուխ: Անմեղ-անմեղ պատասխանեցինք, որ ուտելու բան ենք ուզում և գլուխը դնելու տեղ: Սուրբ հայրը հետաքրքրվեց, թե որտեղացի էինք: Նյու Յորքից: Ախ, Նյու Յորքից, հա՞: Դե, ուրեմն ավելի լավ է, որ առանց մի վայրկյան հապաղելու, զավակներս, հենց Նյու Յորք էլ վերադառնաք, և այլևս ոչինչ չասելով՝ էս պարարտ, տոզած, շաղգամանման աֆաթով խոզի գլուխը դուռը շրխկացրեց երեսներիս:

թվայնացրել է 1915.info կայքը

Մոտ մի ժամ անց, երկու հարբած առագաստանավի պես անտեր-անտիրական թափառելիս, պատահմամբ հայտնվեցինք էլի քահանայի տան մոտ: Գետինը մտնեմ, թե էդ թանձրամարմին, ցոփասեր շաղգամը, լիմուզինը հետ տալով, դուրս չէր գալիս տան առջևի ծառուղուց: Մեր կողքով անցնելիս էլ ծխի քուլա փչեց աչքներիս: Կարծես ասեր. «Այ, *սա* է հասնում ձեզ»: Շքեղ լիմուզին էր, հետնամասում՝ մի զույգ լրացուցիչ դող, իսկ սուրբ հայրը բազմել էր ղեկին՝ մի մեծ սիգար էլ բերանին: Պիտի որ «Կոռոնա-Կոռոնա» լիներ՝ հաստությունից ու բուրմունքից դատելով: Աչքովս չընկավ՝ նա փարաջայով էր, թե չէ: Միայն շրթունքներից սուսի ծորը տեսա, մեկ էլ մեծ սիգարը՝ հիսուն սենթանոց բույրով:

Դիժոնի ամբողջ ճանապարհին մտովի անցյալի հետ էի: Ինչքա՛ն բան կար, որ կարող էի ասել կամ անել, բայց ոչ ասել էի, ոչ արել դառը, նվաստաբեր պահերին, երբ, մի կտոր հաց աղերսելով, ոտքի տակ ընկած ճիճու էի դարձել: Խելքը գլխիս՝ սթափ վիճակում էլ, սիրտս մրմռում էր հին վերքերից ու վիրավորանքներից; Դեռ հիշում էի զբոսայգում ոստիկանի տված քոթակը, թեպետ դատարկ բան էր, պարի թեթևակի դաս, կարելի էր ասել:

Ես Ամերիկան ծայրեծայր ոտնատակ եմ տվել, Կանադան ու Մեքսիկան էլ՝ հետը: Ամեն տեղ նույն հաշիվն էր: Հաց ես ուզում՝ գործի լծվիր ու բոլորին համաքայլ գնա: Ամբողջ աշխարհը գորշ անապատ է, պողպատից ու ցեմենտից սարքած գորգ: Արտադրությո՛ւն է: Ավելի շատ մանեկներ ու գնդերիթներ, ավելի շատ փշալար, ավելի շատ թխվածք շների համար, ավելի շատ խոտհնձիչներ, ավելի շատ առանցքակալներ, ավելի շատ պայթուցիկ, ավելի շատ տանկեր, ավելի շատ թունավոր գազ, ավելի շատ օճառ, ավելի շատ ատամի մածուկ, ավելի շատ թերթեր, ավելի շատ կրթություն, ավելի շատ եկեղեցիներ, ավելի շատ գրադարաններ, ավելի շատ թանգարաններ... *Առաջ:* Ժամանակը չի ներում: Պտուղն եկել է, հասել արգանդի վզիկին, մի կում թուք էլ չկա նրա ելքը հեշտացնելու համար: Չոր, հեղձուկ ծնունդ... Ոչ ճիչ, ոչ ճվոց: Salut au monde[1]!

[1] «Ողջո՛ւյն աշխարհին» (ֆրանս.). ամերիկացի մեծ բանաստեղծ Ուոլթ Ուիթմենի պոեմի վերնագիրն է:

թվայնացրել է 1915.info կայքը

Հետանցքային քսանմեկ հրանոթից որոտացող ողջույն: «Ես գլխարկ եմ դնում սրտիս ուզածի պես, տանը թե դրսում»,– ասում է Ուոլթը: Սա ասվել է մի ժամանակ, երբ դեռ կարելի էր գլխիդ հարմար գլխարկ ճարել: Բայց ժամանակն անցնում է: Հիմա հարմար գլխարկ ես ուզում՝ պիտի էլեկտրական աթոռին նստես: Երկաթե թասակ կդնեն գլխիդ: Հուպ է տալիս, հա՞: Ոչի՛նչ: Լավ էլ բռնում է:

Պետք է Ֆրանսիայի նման օտար երկրում լինես, կյանքի ու մահվան կիսագնդերը բաժանող միջօրեականով քայլես, որպեսզի հասկանաս, թե ինչ անծայրածիր հեռաստաններ են փռված առջևում: *Էլեկտրական մարմին: Դեմոկրատ հոգի: Հեղեղ:* Սուրբ Աստվածածին, էս ցնդաբանությունն ի՛նչ է նշանակում: Երկիրը չորացել է ու ճաքճքել: Տղամարդիկ ու կանայք իրար են գալիս, ինչպես գիշանգղների երամները գարշաբույր լեշի վրա, զուգավորվում են ու նորից թռչում հեռանում, գիշանգղներ, որ ծանր քարի պես ընկնում են ամպերից: Մագիլներ ու կտուց. ահա՛ թե ինչ ենք մենք: Մի մեծ աղեստամոքսային գործարան՝ լեշահոտի հանդեպ զգայուն քթով: *Առաջ:* Առա՛ջ՝ առանց խղճահարության, կարեկցանքի, առանց սիրո, ներման: Ոչ գո՛ւթ աղերսիր, ոչ էլ դո՛ւ գթա: Ավելի շա՛տ մարտանավեր, ավելի շա՛տ թունավոր գազ, ավելի շա՛տ պայթուցիկ: Ավելի շա՛տ գոնոկոկներ: Ավելի շա՛տ ստրեպտոկոկներ: Ավելի շա՛տ ռմբարկուներ: Ավելի շա՛տ, ավելի շա՛տ՝ մինչև էս քունած քար ու քացախը հօդս կցնդի, երկիրն էլ՝ հետը:

Գնացքից իջնելուն պես տեղնուտեղը հասկացա, որ ճակատագրական սխալ եմ գործել: Ուսումնարանը հեռու չէր կայարանից. ձմռան վաղորդյան աղամալույսին քայլեցի գլխավոր փողոցով՝ առ խարխափ ընդառաջ իմ նպատակակետին: Թեթև ձյուն էր մաղում, ծառերը պսպղում էին եղյամից: Անցա մի երկու արձակ ու թափուր սրճարանների մոտով, որոնք տխրալի սպասասրահներ էին հիշեցնում: Լռություն, վիատ ամայություն. ահա թե ինչը տպավորվեց: Անհույս, գավառական քաղաք, որտեղից մանանեխ են ուղարկում վագոններով, ցիստեռններով, տակառներով ու տակառիկներով, կճուճներով ու փոքր, սիրունիկ բանկաներով:

թվայնացրել է 1915.info կայքը

Ուսումնարանը տեսած-չտեսած՝ սարսուռ անցավ մարմնովս: Անվստահությունից ոտքս կախ գցեցի դարպասի մոտ, դնում-վերցնում էի՝ մտնե՞մ, թե՞ չէ: Բայց քանի որ հետդարձի տոմսի փող չունեի, երկար ու բարակ դնել-վերցնելուց օգուտ չկար: Մի պահ մտքովս անցավ, թե չբռնե՞մ Ֆիլմորին հեռագիր ուղարկեմ, էն էլ դեմ ընկա. չգիտեի՝ ինչ պատրվակով չմնալս արդարացնեի: Միակ ելքը աչքերս փակ ներս գնալն էր:

Բանից դուրս եկավ, որ պարոն Տնօրենը տեղում չէր. նրա հանգստյան օրն էր, էդպես բացատրեցին: Մի մանրակազմ սպասուհի, ընդառաջ գալով, հանձն առավ ինձ ուղեկցել պարոն Վերակացուի մոտ, որը փոխարինում էր տնօրենին: Սպասուհու երերուն քայլվածքի գրոտեսկով տարված՝ գնում էի նրա հետևից: Եվրոպայի ամեն մի հետ ընկած տաճարի գավթում կարելի է տեսնել նման ցուցանքի:

Պարոն Վերակացուի առանձնասենյակն ընդարձակ էր ու դատարկ: Նստեցի կոշտ աթոռին, իսկ սպասուհին սուրաց դուրս՝ նրան գտնելու: Ինձ համարյա տանն զգացի: Սենյակի մթնոլորտը շատ էր հիշեցնում ամերիկյան որոշ բարեգործական հիմնարկներ, որտեղ ժամով նստում էի, սպասում, ինչ է թե՝ խոսքը սար ու ձոր գցող ոմն շան վաստակ գար, ինձ հարցաքններ:

Հանկարծ դուռը բացվեց, և պարոն Վերակացուն, սիգապանծ կեցվածքով, մանրաքայլ ներս եկավ: Փոթկոցս հազիվ զսպեցի: Ճիշտ Բորիսի սերթուկից էր հագել, իսկ ճակատին մազափունջ էր թողել, թրջած-սղալած գանգուրի պես մի բան, որ երևի Սմերդյակովի ճակատին էլ կար: Ծանրաբարո և թուլակազմ, լուսանի աչքերով պարոն Վերակացուն ժամանակ չվատնեց ինձ բարևելու վրա: Միանգամից հանեց սաների ցանկը, դասացուցակները և մյուս թղթերը՝ բոլորն էլ ջանասեր ձեռագրով լրացված: Հայտնեց, թե ինչքան քարածուխ և փայտ են հասնում ինձ, իսկ հետո հապճեպ տեղյակ պահեց, որ ազատ ժամանակս կարող եմ տնօրինել կամեցածիս պես: Սա միակ լավ բանն էր, որ լսեցի նրա բերանից: Էնքան հուսադրող ինչեց, որ վռազ-վռազ աղոթեցի Ֆրանսիայի, նրա բանակի ու նավատորմի,

թվայնացրել է 1915.info կայքը

կրթական համակարգի, բիստրոների, *անպետ մնացածի* ամեն ինչի համար:

Էս հանգերգն ավարտելով՝ պարոն Տեսուչը զանգակ հնչեցրեց և կայծակի արագությամբ հայտնված սպաստավորին հանձնարարեց ինձ ուղեկցել պարոն Տնտեսվարի աշխատասենյակ: Էստեղ ուրիշ մթնոլորտ էր: Սա ավելի շատ ապրանքակայարանի էր նման. աջ ու ձախ բեռնագրեր էին ու ռետինե դրոշմակնիքներ, սփրթնած դեմքերով գրագիրներն էլ, կոտրված գրիչները խզխզացնելով, ծանրումեծ մատյաններն էին մրոտում: Իմ բաժին քարածուխն ու փայտը տվեցին, դուրս եկանք ես ու սպաստավորը, հետներս՝ մի ձեռնասայլակ, հանրակացարանի կողմն ուղղվեցինք: Ինձ վերին հարկում էին սենյակ տրամադրել, դաստիարակների թևում: Իրադրությունը զավեշտական բնույթ էր ստանում: Մի իմաստի, թե էլ ինչ չոռս էին տալու: Չլինի՞ թքման, հը՞: Արշավանքի նախապատրաստության էր նման, միայն ուսապարկն ու հրացանն էին պակասում, մեկ էլ՝ անձնական նշանը:

Ինձ հատկացված սենյակը բավական ընդարձակ էր, փոքրիկ վառարանով, որի ծռած խողովակն արմունկ էր տալիս հենց երկաթե մահճակալի վերևում: Դռան մոտ մի մեծ արկղ էր դրված քարածխի և փայտի համար: Լուսամուտները բացվում էին մի շարք խղճուկ քարե տնակների վրա, որտեղ ապրում էին նպարավաճառը, հացթուխը, կոշկակարը, մսագործը և ուրիշներ՝ բոլորն էլ տկարամիտի տեսքով անտաշներ: Տանիքների վրայով հայացք գցեցի լերկ բլուրներին, որոնց մոտով գնացք էր անցնում: Շոգեքարշի սուլոցը վշտալի ու հիստերիկ հնչեց:

Երբ սպաստավորը կրակ արեց վառարանում, հետաքրքրվեցի ուտելու հաշվով: Դեռ ճաշի ժամը չէր: Վերարկուն հագիս թրմփացի մահճակալին, ծածկոցն էլ վրաս քաշեցի: Կողքիս մշտական խախուտ սեղանիկն էր, որտեղ գիշերային միզամանն էր պահված: Ջարթուցիչը դրեցի սեղանիկին ու սկսեցի հետևել ալաքների ընթացքին: Փողոցից ինչ-որ կապտավուն լույս էր թափանցում ջրհորանման սենյակ: Ականջս՝ անցնող բեռնատարների դղրդյունին, մտացրիվ

նայում էի վառարանի խողովակի արմունկին, որը կապկպված էր մետաղալարի կտորներով: Քարածխի արկղը հետաքրքրասիրությունս շարժեց: Կյանքում երբեք չէի ապրել քարածխի արկղ ունեցող սենյակում: Ասենք, կյանքում երբեք կրակ էլ չէի արել, ոչ էլ՝ ուսուցչություն: Ու եթե բանը հասել է դրան, կյանքում երբեք առանց ոռճիկի չէի էլ աշխատել: Ինձ և՛ ազատ էի զգում, և՛ կաշկանդված, ինչպես ընտրություններից առաջ է լինում, երբ բոլոր խարդախներն արդեն դրել են իրենց թեկնածությունը, քեզ էլ չորս կողմից համոզում-թախանձում են ճիշտ մարդու օգտին քվեարկել: Ինձ մշակ էի զգում, ձեռքն ամեն տեղ գցող գիտուն, որսորդ, շրջմոլիկ, թիապարտ, վարժապետ, որդ ու ոջիլ: Ազատ էի, բայց՝ շղթայակապ: Դեմոկրատ հոգի՝ ճաշի ձրի կտրոնով, բայց առանց տեղաշարժի հնարավորության, առանց ձայնի իրավունքի: Ինձ տախտակին գամված մեդուզա էի զգում: Իսկ ամենից առաջ քաղցած էի: Սլաքները դանդաղ էին շարժվում: Դեռ տասը րոպե կար սպասելու, մինչև հրշեջ ահազանգը կհնչեր: Մթնշաղը թանձրանում էր սենյակում: Անտանելի լռություն էր, պրկված անդորր, որից ջղերս լարվում էին: Ձյան փաթիլները փակչում էին լուսամուտների ապակիներին: Հեռվում շոգեքարշը գիլ սուլեց: Հետո նորից մեռյալ լռություն տիրեց: Վառարանն աստիճանաբար շիկանում էր, բայց տաքություն չէր գալիս: Սկսեցի վախենալ, թե քունս կտանի, ճաշը բաց կթողնեմ: Դա կնշանակեր ամբողջ գիշեր դատարկ փորով շուռումուռ գալ:

Կոչնազանգից մի րոպե առաջ վեր թռա մահճակալից, կողպեցի դուռն ու աստիճաններով սլացա բակ: Էնտեղ միանգամից մոլորվեցի: Մի քառանկյուն շինությանը մյուսն էր հետևում, մի սանդուղքին՝ մյուսը: Դեսուդեն ընկած՝ գժի պես ճաշարանն էի փնտրում: Անցա շարվեշար պատանիների կողքով, որ տողան կազմած՝ չգիտես ուր էին գնում. ասես նույն շղթայով կապանքված տաժանակիրների շարասյուն լիներ՝ վերահսկիչի գլխավորությամբ: Վերջապես նկատեցի գլանագլխարկ դրած, եռանդուն տեսքով մի մարդու, որն ինձ ընդառաջ էր գալիս: Կանգնեցնելով նրան՝ ճաշարանի տեղը հարցրի: Բանից պարզվեց՝ հենց նրան եմ պատահել, ով պետք էր:

թվայնացրել է 1915.info կայքը

Պարոն Տնօրենն էր անձամբ, և կարծես շատ ուրախ էր, որ դեմ է առել ինձ: Անմիջապես սկսեց հարցուփորձ անել, թե հարմա՞ր եմ տեղափոխվել, է՞լ ինչի կարիք ունեմ: Պատասխանեցի, որ խնդիր չկա: Ուղղակի մի քիչ ցուրտ է սենյակում, սիրտ արեցի ավելացնել: Նա հավաստիացրեց, թե նման եղանակը բավական անսովոր է Դիժոնի համար: Ճիշտ է, երբեմն մառախուղ է նստում, կամ փոքրինչ ձյուն է գալիս, ու որոշ ժամանակ, իրոք, մարդու սիրտ է նեղվում և այլն, և այլն: Պարոն Տնօրենը, ինձ ճաշարանի կողմը տանելով, թևս բաց չէր թողնում: Շատ մարդավարի տղա էր երևում: «Այ, հացակեր եմ ասել»,- անցավ մտքովս: Էնքան հեռուն գնացի, որ նույնիսկ պատկերացրի, թե հետը կընկերանամ հետագայում, ձմռան ցուրտ ու սրթսրթան իրիկուններն ինձ կկանչի իր սենյակն ու տաք-տաք գրոգ կտա խմելու: Հազար ու մի ընկերական բան պատկերացրի մի քանի րոպեում, մինչ կհասնեինք ճաշարանի դռանը: Իսկ էնտեղ հանկարծ ապուշ կտրեցի. պարոն Տնօրենը, գլխարկը բարձրացնելով, սեղմեց ձեռքս ու բարի գիշեր մաղթեց: Շփոթմունքից ես էլ ձեռքս գլխարկիս տարա: Շուտով պարզեցի, որ շատ ճիշտ եմ արել: Ուսուցչի կամ նույնիսկ պարոն Տնտեսվարին հանդիպելիս գլխարկդ բարձրացնում էիր: Թեկուզ նույն մարդուն օրական տասն անգամ պատահեիր, նշանակություն չուներ: Պիտի ողջունեիր, եթե նույնիսկ գլխարկդ քրքրված էր: Քաղաքավարությունն էր պահանջում:

Ինչ որ էր, ճաշարանը գտա: Իսթսայդյան հիվանդանոցի էր նման. հախճասալե պատեր, անկուսամփոփ լամպեր և մարմարապատ սեղաններ: Իհարկե, մի մեծ վառարան էլ կար՝ արմունկ տված խողովակով: Ճաշը դեռ չէր մատուցվել: Մի հաշմանդամ հետ ու առաջ էր վազվզում՝ ափսեները, դանակ-պատառաքաղները և գինու շշերը շարելով: Անկյունում մի խումբ երիտասարդներ աշխուժորեն զրուցում էին: Մոտեցա նրանց ու ներկայացա: Շատ արտաբաց ընդունեցին: Ըստ էության, նույնիսկ չափից դուրս: Գլուխ չհանեցի: Ճաշարանը կայծակի արագությամբ լցվեց. ինձ արագ-արագ, մեկմեկու հետևից, ներկայացնում էին նորեկներին:

Իսկ հետո շրջան կազմեցին, ես էլ՝ մեջտեղում, լցրին բաժակներն ու սկսեցին երգել.

Հորս արև, մի իրիկուն միտքս ծուռ էր, որ մեկ էլ
Խելքիս փչեց մի կախվածի փափուկ տեղից լավ սեպել,
Գիժ քամին էր պտտվում կախաղանի վերևում
Ու կախվածիս շարունակ դեսուդեն տանում-բերում:
Դե, ճարս ի՞նչ, սեպեցի օրոր-շորորի հանգով,
Հորս արև, կա՞ մի բան, որ լինի մարդու սրտով:

Նեղլիկ ծակուկ թե ճխտես,
Նիզակդ կքերծոտես,
Լենուբոլ ծակ էլ մտար,
Ուրեմն ասա՝ չպրծար:
Ախր հոգիդ դուրս կգա. էլ ինչքա՞ն բանես ձեռքով,
Հորս արև, կա՞ մի բան, որ լինի մարդու սրտով:

Վերջացրին թե չէ՝ Կվազիմոդոն հայտարարեց, որ ճաշը մատուցված է:

Հակիչները ուրախ տղերք էին: Կրոա անունով մեկը կար՝ խոզի պես բղկում էր ու սեղան նստելիս միշտ բարձր գմփացնում: Ընկերների ասելով՝ ի վիճակի էր տասներեք անգամ իրար հետևից բաց թողնել: Ռեկորդ էր սահմանել: Մեկն էլ կար՝ պարոն Իշխան մականունով մի ատլետ, ուշքը գնում էր իրիկունները քաղաք գնալիս ամոքինգ հագնելու համար: Դեմքի ընտիր գույն ուներ՝ աղջկա նման, ոչ մի կաթիլ գինի չէր խմում, ոչ էլ ուղեղն էր ծանրաբեռնում՝ ինչ-որ բան կարդալով: Նրա կողքին հարավցի Պստիկ Պոլն էր նստում, որի ուշքն ու միտքը պուցն էր անընդհատ. ամեն օր ասում էր. «À partir de jeudi je ne parlerai plus de femmes»[1]: Պարոն Իշխանն ու սա անբաժան էին: Կար նաև Պասլոն՝ մի իսկական ջահել անզգամ, որը բժշկություն էր ուսանում և աջ ու ձախ պարտք անում: Նա անվերջ խոսում էր Ռոնսարի, Վիյոնի և Ռաբլեի մասին: Իմ դիմաց էլ Մոլեան էր նստում՝ դաստիարակների քարոզիչն ու կազմակերպիչը, որը միշտ

[1] Հինգշաբթի օրվանից՝ էլ բերանս չեմ բացելու կնանիքի հաշվով (ֆրանս.):

թվայնացրել է 1915.info կայքը

կշռել էր տալիս միսը, որպեսզի տեսներ՝ հո քաշը մի քանի գրամ պակաս չի՞: Նա մի փոքրիկ սենյակ էր զբաղեցրել բուժարանում: Մոլեսի ոխերիմ թշնամին պարոն Տևտեսվարն էր, իսկ դա առանձնահատուկ բան չէր վերջինիս համբավի առումով. էս մարդուն բոլորն էին ատում: Մոլեսի ընկերը Հոտած մականունով մեկն էր, մի դժնեռես տղա՝ արծվային կիսադեմով. ձեռքից շատ պինդ էր ու տոկոսով փող էր տալիս: Ալբրեխտ Դյուրերի փորագրանկարն էր հիշեցնում. բոլոր դժնի, թթված, խոլոր, դառնահոգի, անբախտ, ձախորդ և ինքնասույզ սատանաների խառնուրդն էր, որ Գերմանիայի միջնադարյան ասպետների պանթեոնն են կազմում: Հրեա էր անկասկած: Ինչևէ, ավտովթարից զոհվեց իմ հայտնվելուց քիչ անց, մի հանգամանք, որից քաներեք ֆրանկ օգուտ մնաց ինձ: Բացառությամբ կողքիս նստող Ռընոյի, մյուսները հետք չեն թողել հիշողության մեջ. սրանք պատկանում էին անգույն մարդկանց դասին, որոնցից էլ կազմված է ինժեներների, ճարտարապետների, ատամնաբույժների, դեղագործների, ուսուցիչների և այլոց աշխարհը: Նրանք ոչնչով չէին առանձնանում մյուս դանդալոշներից, որոնց հետագայում պիտի ոտնատակ տային: Ջրո էին՝ բառիս բոլոր իմաստներով, ոչնչություններ, որ կազմավորում են օրինավոր և ողբալի հանրության միջուկը: Միշտ ուտում էին գլուխը կախ և միշտ առաջինն էին մի բաժին էլ պահանջում: Քնում էին մեռելի պես ու երբեք չէին գանգատվում. ոչ ուրախ էին, ոչ էլ տխուր: Անտարբերներ, որոնց Դանտեն Դժոխքի նախադռանն է զետեղել: Վերնախավն էին:

Ճաշից հետո, սովորաբար, տեղնուտեղը գնում էին քաղաք, միայն ննջարանների հերթապահներն էին մնում: Քաղաքի կենտրոնում սրճարաններ կային՝ լայնարձակ, տաղտկալի սրահներ, որտեղ Դիժոնի քնկոտ առևտրականները հավաքվում էին թուղթ խաղալու և երաժշտություն լսելու: Սրճարաններում տաք էր. ահա ամենալավ բանը, որ կարելի է դրանց մասին ասել: Աթոռներն էլ քիչ թե շատ հարմար էին: Եվ միշտ մի քանի պոռնիկներ կային մոտերքում, որոնք մի բաժակ գարեջրի կամ սուրճի համար պատրաստ էին հետդ նստել ու չաչանակություն անել: Բայց, մյուս կողմից էլ,

գարշելի երաժշտություն էր: Երաժշտությունն էլ ո՛րն է: Ձմռան իրիկունը, Դիժոնի պես քրջոտ ծակուռում ֆրանսիական նվագախմբի հնչյուններից սրտամաշ, նյարդայնացնող բան չկա: Մանավանդ երբ խոսքը կանանց տխրալուր նվագախմբերից մեկի մասին է, որտեղ ամեն ինչ կամ ծվծվոցի, կամ տոտոոցի նման է ստացվում, չոր ու ցամաք երկրաչափական ռիթմով, ասես ատամները մաքրելու համար, պարկուճը ճզմելով, մածուկ հանեն: Խզխզալ ու ճռնչալ՝ ժամում էսքան ֆրանկի դիմաց, իսկ մնացածը թող գրողի ծո՛ցը կոր-
չի: Ի՛նչ մելամաղձ: Կարծես ծերուկ Եվկլիդեսը կանգնել է հետևի թաթերին ու կապտաթթու կուլ տվել: Գաղափարի աշխարհին էնքան է շահարկվել գիտակցության կողմից, որ երաժշտություն ծնող ոչինչ չի մնացել, ակորդեոնի դատարկ փուքսը չհաշված, որից սուլոցով դուրս եկող քամին եթերն է ծվատում: Մի խոսքով, երաժշտությունից խոսելը՝ էս խուլ աննկյունի առնչությամբ, նույնն է, թե շամպայն երազես մահապարտի խցում: Երաժշտությունն ամենից քիչ էր ինձ մտահոգում: Արդեն չէի մտածում նույնիսկ պցերի մասին, էնքան որ ճնշող, ցրտաշունչ, սին, գորշ էր ամեն ինչ: Տան ճանապարհին, առաջին գիշերը, մի սրճարանի դռան վրա «Գարգանտյուա»-ից մեջբերում նկատեցի: Իսկ սրճարանի ներսը դիարանի էր նման: Բայց *առա՛ջ*:

Ինչքան ասես ժամանակ կար իմ տրամադրության տակ, իսկ գրպանումս՝ ոչ մի քոռ սու: Օրական երկու-երեք ժամ խոսակցական անգլերեն էի դասավանդում, ուրիշ ոչինչ: Թե անգլերենն էս խեղճ ու կրակ շան լակոտների ինչի՞ն էր: Շատ էին մեղքս գալիս: Ամբողջ առավոտ Ջոն Գիլփինի ձիավարման վրա էին ճոռում, ցերեկն էլ էդ մեռած լեզվի գործնական պարապմունքներ էինք անում: Մտածում էի, թե ինչքան ժամանակ վատնեցի Վերգիլիուս կարդալու կամ «Հերման և Դորոթեա»-ի նման անմարսելի ունայնաբանությունը հաղթահարելու վրա: Ա՛յ քեզ խելագարություն: Վեց-վեց անող փորով՝ ուսո՛ւմ: Կարլին էի հիշում, որը «Ֆաուստ»-ն արտասանում է բերանացի, գիրք չի գրում՝ առանց, իր անմահ, հավիտենական Գյոթեի հետևը մտած, նրա գովքը թնդացնելու: Այնինչ խելքը չի հասնում,

թվայնացրել է 1915.info կայքը

որ մի հարուստ պուց ճարի կամ էլ փոխնորդ առնի: Ինչ-որ անվայել բան կա անցյալի էս պաշտամունքի մեջ, որի վերջաբանը անվճար հացի հերթերն են կամ խրամատները: Ինչ-որ անվայել բան կա հոգևոր խաբեության մեջ, որն ապուշին թույլ է տալիս սուրբ ջրով ցողել «Մեծ Բերթա» հրանոթները, զրահանավերն ու պայթուցիկը: Դասականներով լցված ամեն ոք մարդկային ցեղի թշնամին է:

Եվ ահա, ես իբր թե պետք է ծառայեի ֆրանս-ամերիկյան բռնակալության սուրբ գործին, ես՝ դիակի բանբերս, դիակ, որ աջ ու ձախ կողոպտելուց, անասելի ցավ ու տառապանք բերելուց հետո երազում էր համընդհանուր խաղաղություն հաստատել: Թո՛ւի: Տեսնես ի՞նչ է ակնկալվում, որ խոսեմ: «Խոտի տերևների», հարկային արգելքների, Անկախության հռչակագրի, գանգստերների վերջին պատերազմի մասի՞ն: Ի՞նչ: Այ, սա կուզեի իմանալ: Ասեմ, որ էս ամենն ընդհանրապես չեմ էլ հիշատակել: Ես միանգամից սկսեցի սիրո ֆիզիոլոգիային նվիրված դասից: Թե ինչպես են փղերը կենակցում, ահա՛ թե ինչ: Շանթահար եղան: Հաջորդ օրվանից էլ ոչ մի ազատ նստարան չկար: Անգլերենի առաջին դասից հետո սաները դռան մոտ խմբված էին սպասում ինձ: Շատ լավ լեզու գտանք: Ամեն տեսակ հարցեր էին տալիս, ասես ոչ մի բան երբեք չէին սովորել: Ազատություն էի պարգևել նրանց: Սովորեցրել էի նույնիսկ փափուկ հարցեր տալ: *Ինչ կուզես՝ հարցրու.* սա էր իմ նշանաբանը: Ես ազատ ոգու թագավորության լիազոր ներկայացուցիչն եմ էստեղ: Եռք ու խմորում առաջացնելու համար եմ եկել: «Որոշ իմաստով,– ասում է մի նշանավոր աստղագետ,– նյութական տիեզերքը կարծես չքաւնա արդեն արված պատմության պես, տեսիլքի նման հալվի անէության մեջ»: Թվում է՝ հենց էս ընդհանուր տեսակետն է վեց-վեց անող փորով ուսման հենքը: Իսկ ես չեմ հավատում: Չեմ հավատում ոչ մի գրողի տարած բանի, որ էս շան որդիք փորձում են մեր վզին փաթաթել:

Դասերի արանքում, եթե կարդալու գիրք չէի ունենում, բարձրանում էի վերև՝ հանրակացարան, դաստիարակների հետ լեզվին տալու: Սրանք ամեն ինչից կատարելապես անտեղյակ էին,

մանավանդ արվեստի աշխարհից: Համարյա նույնքան անգետ էին, ինչքան իրենց սաները: Ասես մասնավոր գժանոց ընկած լինեի, որտեղից ելք չկար: Երբեմն թափառում էի կամարների տակ, նայում աշակերտներին, որոնք քայլում էին՝ հացի մեծ կտորները խոթելով կեղտոտած բերանները: Ես էլ էի անընդհատ սոված, որովհետև նախաճաշը մատուցվում էր անաստվածորեն շուտ՝ ծեգը ծեգին, երբ տաքուկ անկողնուց վեր կենալու ուժ չկար: Մի մեծ բաժակ կապտագույն սուրճ էր սպիտակ հացի պատառներով՝ առանց կարագի: Ցերեկն էլ բակլա կամ ոսպ էին տալիս, որոնց մեջ մսի կտորտանք էին գցում՝ տեսքն ախորժալի դարձնելու համար: Տաժանապարտների, քարտաշների ուտելիք էր: Նույնիսկ գինին էր անպետք: Ինչ տային-չտային՝ կամ ջուր էր խառնած, կամ եփն անցած: Կալորիաներ էին, ոչ թե խորտիկներ: Էս ամենը պարոն Տնտեսվարի մեղքով էր: Էդպես էին ասում: Սրան էլ չեմ հավատում: Ուղղակի նրան վճարում էին մեր գլուխը ողջ պահելու համար: Ինչի՞ն էր պետք, թե տառապում էինք թութքից կամ թարախապալարներից, ի՞նչ կարևոր էր՝ նուրբ քիմք ունեինք, թե քար էլ լիներ՝ կմարսեինք: Ցավը կտրվե՞լ էր, որ հետաքրքրվեր: Նրան վարձել էին, որպեսզի ափսեների էքքան գրամը էքքան կիլովատ էներգիա դառնար: Ամեն ինչ ձիաուժի էր վերածվում: Ամեն ինչ ճշգրտորեն հաշվարկվում էր ծանրումեծ մատյաններում, որ սփրթնած դեմքերով գրագիրները մրոտում էին առավոտյան, ցերեկն ու երեկոյան: Մուտք ու ելք, էջի մեջտեղում էլ՝ կարմիր գիծ:

Քառանկյուն բակում ամենից հաճախ դատարկ փորով պտտվելիս զգում էի, որ գժվում եմ քիչ-քիչ: Խեղճ Կարլոս Խելագարի նման, միայն թե ես Օդետ Շանդիվեր չունեի, որ հետը մատմտցնոցի խաղայի: Համարյա միշտ ստիպված էի սաներից սիգարետ թոցնել, դասերի ժամանակ էլ մեկ-մեկ նրանց հետ չոր հացի կտոր էի կրծում: Քանի որ վառարանս անընդհատ հանգչում էր, շատ չանցած՝ վառելափայտիս պաշարն սպառվեց: Շան չարչարանք քաշեցի, մինչև գրասենյակի աշխատողներից մի քիչ վառելիք պոկեցի: Վերջն էնքան ջղայնացա, որ արդեն որոշեցի, փողոցներն ընկած, փայտ հավաքել

թվայնացրել է 1915.info կայքը

արաբի պես: Բայց, ինչքան էլ զարմանալի է, Դիժոնի փողոցներում շատ քիչ վառելիք կգտնեիր: Ինչևէ, պրպտումներս ինձ անծանոթ վայրեր տարան: Մի փոքրիկ փողոց ճանաչեցի, Ֆիլիբեր Պապիյոնի՝ ըստերևույթին, ոմն մեռած երաժշտի անվամբ կոչված փողոց, որտեղ մի կույտ պոռնկատներ կային: Էս կողմերում ավելի ուրախ էր, եփութափի և չորացող լվացքի հոտ էր գալիս: Ժամանակ առ ժամանակ անցողակի տեսնում էի պոռնկատանն ապաստանած խղճալի ծալապակասներին: Բայց սրանք ավելի բարվոք վիճակում էին, քան քաղաքի կենտրոնում պատահող հեգ թշվառները, որոնց միշտ դեմ էի առնում հանրախանութ մտնելիս: Տաքանալու համար մտնում էի շուտ-շուտ: Էս կանայք էլ էին մտնում նույն նպատակով: Մարդ էին փնտրում, որ մի բաժակ սուրճ հյուրասիրեր: Ցրտից ու մենությունից մի քիչ ցնորված էին երևում: Իրիկնաշաղն իջնելիս ամբողջ քաղաքն էլ փոքր-ինչ ցնորական էր թվում: Գլխավոր փողոցով ինչքան էլ գնայիր ու գայիր, թեկուզ մինչև Ահեղ դատաստանի օրը, ոչ մի կենդանի շունչ չէիր տեսնի: Վաթսուն, թե յոթանասուն հազար, գուցեև ավելի մարդ, բրդե ներքնաշորերով կոլոլված, ոչ գնալու տեղ ունեին, ոչ անելու բան: Վագոններով ուղարկվող մանաանեխ: «Կենսուրախ այրին» ճզվզացնող կանանց նվագախմբեր: Արծաթե սպասքներ մեծ հյուրանոցներում: Դքսի պալատը, որ փլվում էր քար առ քար, հատված առ հատված: Սառնամանիքից ճռնչացող ծառեր: Փայտե ոտնամանների անվերջ թխկթխկոց: Համալսարան, որ նշում էր Գյոթեի մահվան, թե ծննդյան տարելիցը, արդեն թռել է մտքիցս: (Դե, սովորաբար, մահվան տարելիցն են նշում): Ամեն դեպքում՝ ապուշ գործ: Բոլորը հորանջում էին ու ճմլկոտում:

Ուսումնարանի շենքին մոտենալիս անհուն ունայնության զգացում էր համակում ինձ: Դրսից տրտում էր ու բարձիթողի, ներսից տրտում էր ու բարձիթողի: Անարգ ամլություն էր կախված քաղաքի գլխին, գրքային իմացության մշուշ: Անցյալի խարամն ու մոխիրը: Ներքնաբակերի չորս բոլորը հյուսիսային անտառներում հանդիպող հյուղակները հիշեցնող դասասենյակներն էին, որտեղ մանկավարժները ազատություն էին տալիս իրենց արատներին:

թվայնացրել է 1915.info կայքը

Գրատախտակին փուչ անհեթեթություն էր, որը հանրապետության ապագա քաղաքացիները պիտի մոռանային հետագա կյանքի ընթացքում: Մերթընդմերթ զավակներին տեսության եկած ծնողներին ընդունում էին գլխավոր մուտքին հարող մեծ սրահում, որտեղ շարված էին հինավուրց հերոսների՝ Մոլիերի, Ռասինի, Կոռնեյլի, Վոլտերի և այլոց՝ բոլոր էն խրտվիլակների կիսանդրիները, որոնց անունները վկայակոչում են նախարարները՝ փրփուրը բերաննե-
րին, երբ ևս մի «անմահ» է համալրում մոմե արձանների թանգարանը: (Ոչ Վիյոնի կիսանդրին կար, ոչ Ռաբլեինը, ոչ էլ Ռեմբոյինը): Ինչևիցե, հենց էստեղ էին հանդիպում, վեմ հանդիսավորությամբ խորհուրդի նստում ծնողներն ու անապարծ ոչնչությունները, որոնց վարձում է պետությունը՝ երիտասարդ սերնդի ուղեղը հարթելու: Միշտ հարթման էս գործն է ընթացքի մեջ, այգու հարդարումը՝ ուղեղի բնապատկերն ավելի ակնահաճո դարձնելու համար: Երբեմն պատանիներն իրենք էլ էին գալիս հանդիպմանը, փոքրիկ արևածաղիկներ, որոնց շուտով տնկարանից կտեղափոխեին քաղաքային սիզամարգերը զարդարելու: Սրանցից ոմանք ուղղակի ֆիկուսներ էին, որոնց փոշին հեշտությամբ կարելի էր տալ լաթ դարձրած հին վերնաշապիկի կտորով: Իսկ գիշերվա գալուն պես նրանք բոլորը ննջարաններում, կրակ կտրած, կպչում էին ձեռնաշարժության գործին: Ննջարաննրը. էնտեղ կարմիր լույսերն էին փայլում, զանգակը հնչում էր հրդեհի ազդանշանի պես, ոտնաձայները խուլ թնդում էին ուսման բանտախցերի ճանապարհին:

Բա ուսուցիչնե՛րը: Դեռ առաջին օրերին ես էնքան հեռուն գնացի, որ մի քանիսին ձեռքով էի բարևում, և, իհարկե, կամարների տակ հանդիպելիս միշտ գլխարկներն էինք բարձրացնում: Բայց որ ասեմ՝ զրուցեինք սրտաբաց, անկյունում առանձնանայինք, մի բաժակ խմեինք միասին, ոչ մի նման բան: Դա խելքից մտքից դուրս էր: Նրանց մեծ մասը լեղաճաք տեսք ուներին, կարծես տակը լցրած լինեին: Համենայն դեպս, ես ուրիշ դասից էի: Ինձ նմաններին իրենց ոջիլն էլ բաժին չէին հանի: Սրանց տեսքից անգամ էնքան էի նեղվում, որ աչքովս ընկնեին թե չէ՝ քթիս տակ հայհոյում էի: Սիգարետը

բերանիս անկյունում ու գլխարկը աչքերիս քաշած՝ կանգնում էի՝ հենվելով սյունին, և հենց որ մեկնումեկը բավականաչափ մոտենում էր, մի լավ թքում էի ու գլխարկս բարձրացնում. նեղություն էլ չէի քաշում, թե բերանս բացեի բարևելու համար: Ինձ ու ինձ մոթմոթում էի. «Էս քունածին տես», ու պրծավ գնաց:

Մի շաբաթ հետո ինձ արդեն թվում էր, թե ամբողջ կյանքս էստեղ եմ եղել: Անտեր մնացածը՝ ասես գարշելի մղձավանջ լիներ, որից ազատվելու ճար չկար: Դրա մասին մտածելիս ընկնում էի թմբիրի մեջ: Ընդամենը մի քանի օր առաջ էի եկել:

Իրիկնամուտ է: Մարդիկ առնետների պես տուն են շտապում մշուշամած լապտերների տակ: Ծառերը պեծկլտում են փշավոր չարությամբ: Ես շատ եմ քննել անցած-դարձածը, հազար անգամ, եթե ոչ ավելի: Կայարանից մինչև ուսումնարան ձգվող ուղին կարծես Դանցիգի միջանցքը լիներ՝ ամբողջովին ծուռումուռ եզրերով, դարուփոս, նյարդայնացնող: Մեռած ոսկորների, կորացած, կուչ եկած պատանապատ կերպարանքների շավիղ, կոնակների տեղ՝ սարդինաձկան ողնաշար: Ուսումնարանն ինքը բարակ ձյունածածկոցի տակից հառնում էր շուռ եկած լեռան պես, կատարը՝ դեպի երկրի կենտրոնը, որտեղ զսպաշապիկ հագած Աստված, թե Սատանան բանում էին շարունակ՝ աղուն աղալով դրախտի համար, որը միշտ էլ երազախաբություն է պարզապես: Եթե նույնիսկ մի օր արև է արել, չեմ հիշում: Ոչինչ չեմ հիշում, բացի ցրտաշունչ, յուղոտ մշուշից, որ գալիս էր հեռվի սառցակալած ճահճուտներից, ուր երկաթուղագիծը կտրում անցնում էր դժգույն բլուրները: Կայարանի մոտ ջրանցք կար, կամ գուցե դեղին երկնքի տակ ծվարած գետ էր՝ զառիվայր ափերին կպած հյուղակներով: Ինչ-որ տեղ նաև զորանոց կար, ինչքան հասկացա, որովհետև մի գլուխ վիետնամցի դեղնամորթների էի հանդիպում՝ ափիոնամոլի մռութներով մանրապճեղ գաճաճների, որոնք իրենց պարկանման համազգեստների տակից ծիկրակին էին տալիս թեփով խծուծված ներկածեփ կմախքների պես: Չորս կողմը տիրող անիծյալ միջնադարի շունչը գրգռում է ջղերդ ու վրդովում սարսափելի, դեսուդեն թևում խլաձայն տնքոցներով, քիվերից վրա պրծնում

քեզ, կախվում գարգույլներից՝ վիզը կոտրված մահապարտի նման: Ես անընդհատ գնում էի ու հետ նայում, ինչպես խեցգետինը, որին ծակում են կեղտոտ պատառաքաղով: Սեն Միշել եկեղեցու ճակատի բոլոր բարձրաքանդակ պատկերները՝ հաստլիկ ճիվաղները, հետապնդում էին ինձ ծուռ ու նեղ փողոցներում, դուրս թռչում անկյուններից: Գիշերը Սեն Միշելի ամբողջ ճակատը ալբոմի պես բացված էր թվում՝ քեզ դեմ առ դեմ թողնելով տպագիր էջի սարսափների հետ: Բայց լույսերը մարեին թե չէ՝ կերպարանքները խամրում, հարթվում էին, անէանում բառերի նման, և եկեղեցու ճակատը հոյակերտ տեսք էր ստանում. հին, խորդուբորդ երեսապատի ամեն մի ճեղքում գիշերային քամու խուլ սաղմոսաերգն էր արձագանքում, և վիմատաշ պաղ հանդերձանքի քարե ժանյակները պարուրում էին պղտոր, աբսենթանման, թքածոր մուժն ու սառնամանիքը:

Էստեղ՝ եկեղեցու կանգնած տեղում, ամեն ինչ ասես թարսուշիտակ էր: Առաջադիմության հարյուրամյակների ընթացքում, անձրևի և ձյան տակ, եկեղեցին ինքը տեղաշարժվել էր հիմքից: Նա փռված էր Էդգար Քինե հրապարակում, սատկած ջորու պես՝ քամու դեմհանդիման: Մոնե փողոցում հողմը, սուրալով, կատաղորեն ձյունն էր խռիվ տալիս ճերմակ մազերի նման, պտույտներ գործում ձիակապի սպիտակ այուների շուրջը, որոնք փակում էին ավտոբուսների ու ջորիներ լծած սայլերի ուղին: Վաղորդյան ժամերին էս անցատեղով ինձ համար քայլելիս երբեմն առ երբեմն հանդիպում էի պարոն Ռընոյին, որը, որկրամոլ վանականի պես իր կնգուղավոր թիկնոցի մեջ փաթաթված, ինձ մոտ-մոտ էր անում 16-րդ դարի լեզվով: Յուղափայլ երկնքում ծակված օդապարիկի նման երևացող լուսնի ներքո Ռընոյի հետ համաքայլ ընթանալիս ես միանգամից հայտնվում էի վերիմացական աշխարհում: Պարոն Ռընոյի խոսքը սմքած ծիրանի պես չոր ու ցամաք էր, ձայնը՝ բրանդենբուրգյան թանձրահունչ բաս: Նա վրա էր տալիս՝ անդադար մեջբերումներ անելով Գյոթեից ու Ֆիխտեից, և նրա բասի թավ հնչյունները, ինչպես անցյալ տարվա որոտի արձագանք, թնդում էին հրապարակի հողմածեծ անկյուններում: Յուկատանի բնակիչներ, Զանզիբարի բնակիչներ, Հրո Երկրի

թվայնացրել է 1915.info կայքը

բնակիչներ, փրկե՛ք ինձ էս փառակալած խոզակաշուց: Հյուսիսն է խոյանում իմ շուրջը. սառցե խութախորշեր, կապույտ լեռնակատարներ, խենթ կրակներ, քրիստոնեական անվայել երգասացություն, որ լավայի նման սփռվում է Էտնայից մինչև էգեյան ծով: Ամեն ինչ սառել է քարացած փրփուրի պես, միտքը՝ կարկամել ու եղյամապատվել, իսկ պաղ առած մտքի տրտմագին չարչրկումների մեջ ոջլակեր սրբերի խեղդուկ հեծեծանքն է լսվում: Ես սպիտակել եմ, բրդով փաթթվել, բարուրվել եմ, կապանքվել, թևատվել, բայց անմասն եմ սրանից: Մինչև ուղնուծուծս սպիտակ եմ, բայց սառն ալկալիական հիմքով, մատներիս ծայրերին՝ քրքում: Սպիտակ ու անողորմ, ինչպես ինձնից առաջ Էլբայով նավարկության ելած մարդիկ: Նայում եմ ծովին, երկնքին, ամեն ինչին, որ անըմբռնելի է, և՛ հեռու, և՛ մոտ:

Ոտնատակի ձյունը սուրում է՝ քամու բերանն ընկած, վրա պրծնում, խտղտացնում, դաղում, ֆշշոցով թևում, պտույտներ տալիս, թափվում հորդառատ, շաղ անցնում, ցայտում: Ոչ արև, ոչ ափակոծության շառաչ, ոչ կոհակների ծփանք: Ծակծկուն ասեղներով փշակալած հյուսիսային ցուրտ քամի՝ սառցաշունչ, չարակամ, անկշտում, վհատիչ, ընդարմացնող: Փողոցները կեռումեռ են անում, բեկվում փութկոտ հայացքից, սևեռուն ակնարկից: Դրանք կաղեկաղ անցնում են ձյունաածածկ ճաղաշարով, շուռ տալիս, թարսում եկեղեցին, արձանները վար բերում, կոթողները հողին հավասարեցնում, ծառերը արմատախիլ անում, խոտը տոփանում, հողի բույրը ծծում: Տերևները ցեմենտի պես խամրած են, տերևներ, որոնց ոչ մի ցող էլ փայլ չի բերի: Էլ ոչ մի լուսին իր արծաթ շողերով կենդանություն չի տա սրանց: Տարվա եղանակները քարացել մնացել են, ծառերը դալկանում են ու չորանում, սայլերը գլոր-գլոր սողում են փայլարե անվահետքերով, ասես տավղի հնչյուններ հանեն: Սպիտակագլուխ բլուրների գոգին դժգույն ու անոսկոր Դիժոնն է քուն մտել: Խավարում հաճող ոչ մի շունչ չկա, բացի անդադրում ոգիներից, որ շարժվում են հարավ, դեպի շափյուղյա ճաղերը: Մինչդեռ ես ոտքի վրա եմ, էստեղ, քայլող ուրվական, սպիտակ մարդ՝ էս երկրաչափական սպանդանոցի պաղ ողջամտությունից ահաբեկված: Ո՞վ եմ ես: Ի՞նչ գործ ունեմ էստեղ:

Շրջում եմ մարդկային չարակամության պաղ պատերի ներսում, սպիտակ, դողդոջուն կերպարանք, որ ընկղմվում է պաղ լճի հատակը, իսկ վերևում գանգերի սար է: Ես սուզվում եմ պաղ խորքերը, իջնում լեղակով ողողվող կավճե աստիճաններին: Հողի մթին միջանցքները ճանաչում են իմ ոտնաձայները, հեռվից են զգում քայլվածքը, օդի թրթիռները, հևքը, սարսուռը: Լսում եմ՝ ուսումը խաղք ու առակ է դարձել, լլկվել, կերպարանքներ են համբառնում, չղջիկների լորձն է կաթկթում վերևից, և ճնգճնգում են նրանց ստվարաթղթե ոսկեզօծ թևերը: Լսում եմ՝ գնացքներն են բախվում, շղթաները՝ ճռնչում, շոգեքարշը փնչացնում է, փռնչում, ֆսֆսում, շոգի է արձակում ու միզում: Ամեն ինչ պատկերանում է ինձ ջինջ մշուշի միջից՝ կրկնության հոտով և դեղին խումարներով ու աստծուսիրուններով... Մեռյալ կենտրոնում, Դիժոնից շատ ցած, արկտիկական շրջաններից էլ ցած, Այաքս աստվածն է կանգնել՝ ուսերով գամված ջրաղացի անվին, որի տակ ձիթապտուղներն են ճթճթում, իսկ կանաչ ճահճաջրին գորտերի կոկոցն է կենդանություն տալիս:

Մշուշից ու ձյունից, ցուրտ լայնությունից, տքնաջան պարապմունքներից, կապտագույն սուրճից, անկարագ հացից, ոսպի ապուրից, խոզի ճարպով պատրաստված ծանրամարս բակլայից, չորացած պանրից, կիսահում վոդկից, զզվելի գինուց էս տաժանավայրի բոլոր բնակիչները փորկապություն ունեն: Ու երբ ամենքս էլ արդեն տրաքվում ենք քաքից, զուգարանի խողովակները սառչում են, մնում: Քաքի կույտերը դիզվում են մրջնանոցների նման. տղա ես՝ էդ պատվանդաններից պիտի մի հնարով իջնես՝ գետնին անելու համար: Կուցումած, սառցակալած քաքը հալվելուն է սպասում: Հինգշաբթի օրերը սապատավորը գալիս է իր ձեռնասայլակով, ցրտից քարացած կեղտակույտերը թիակով ու ցախավելով հավաքում-մաքրում և չոր ոտքը քարշ տալով՝ ձեռնասայլակը լցրած, տանում: Զուգարանի թուղթ է թափթփած միջանցքներում. ճանճասատակի պես կպչում է ոտքերիդ: Եղանակի տաքանալու հետ շան հոտը սրվում է, քառասուն մղոնի վրա էլ քիթդ կմտնի: Առավոտյան, ատամի խոզանակը

թվայնացրել է 1915.info կայքը

ձեռքիդ, էդ թարմ կղանքի վերևում կագնած, թունդ գարշահոտությունից գլուխդ պտտվում է: Կանգնում ենք շուրջանակի՝ կարմիր ֆլաններե վերնաշապիկներ հագած, սպասում ծակի մեջ թքելու մեր հերթին. կարծես Վերդիի օպերայից լինի, զնդանով խմբերգի տեսարանը, միայն թե մենք տաբատակալներով ենք ու սրսկիչներով: Գիշերը, փորացավս բռնում է թե չէ՝ ինձ գցում եմ պարոն Վերակացուի զուգարանը՝ դարպասի մոտակայքում: Իմի նստոցը միշտ արյան մեջ կորած է: Նրա զուգարանն էլ չի գործում, բայց գոնե կարելի է նստել: Մի փոքրիկ նվեր եմ թողնում նրան՝ որպես հարգանքի հավաստիք:

Ամեն իրիկուն, ընթրիքի ավարտին, ճաշարան է մտնում գիշերային պահակը՝ իր բաժինն ստանալու: Սա ամբողջ հաստատության մեջ միակ մարդ արարածն է, որի հետ ես ընդհանրություն ունեմ: Ոչ ոք էլ չի: Լապտեր է կրում ու բանալիների խուրձ: Գիշերը մինչև լույս պտույտներ է տալիս փայտ կուլ տվածի պես: Հենց որ վրա է հասնում չորացած պանիրը մատուցելու պահը, նա գալիս է իր մի բաժակ գինու հետևից: Կանգնում է՝ թաթը մեկնած. մազերը կոշտ են ու ցից-ցից, ինչպես գամփռի բուրդը, թշերը՝ կարմիր, բեղը՝ եղյամակալած: Նա մի երկու բառ է քրթմնջում, և Կվազիմոդոն բերում է շիշը: Հետո, ոտքերին ամուր հենված, գլուխը հետ է գցում և գինին դանդաղ, մի երկար շնչով լցնում կոկորդը: Ինձ թվում է՝ սուտակներ է կուլ տալիս: Նրա պահվածքի մեջ մի բան կա, որ լիովին հափշտակում է ինձ: Ասես մարդկային կարեկցանքն է մինչև մրուրը խմում, ասես աշխարհի ամբողջ սերն ու գութն է էդպես՝ մի շնչով, կլանում, ամեն ինչ, որ հավաքվել է օր օրի: Էս մարդը մի ճագարի չափ էլ չկա. էդկերպ են դարձրել: Իրերի ընդհանուր կարգի մեջ նա տառեխի աղաջուրն էլ չարժի: Թրիքի կտոր է, ուրիշ ոչինչ: Ու ինքն էլ գիտի: Երբ խմելուց հետո հայացքը պտտեցնում է ու ժպտում մեզ, կարծես աշխարհը քարուքանդ լինի: Դա անդունդի մյուս եզրից նետված ժպիտ է: Մեր ամբողջ նեխահոտ քաղաքակրթությունը ճահճի պես պճպճում է վիհի հատակին, իսկ դրա վերևում, տեսիլքի նման, էս անվստահ ժպիտն է թևածում:

Նույն ժպիտն էր ինձ դիմավորում գիշերը՝ թափառումներից վերադառնալիս: Հիշում եմ, մի գիշեր, երբ փակ դարպասի մոտ կանգնած, սպասում էի, թե ծերուկը, իր պտույտն ավարտելով, կգա, հոգուս էնպիսի հանգստություն իջավ, որ կարող էի ընդմիշտ սպասել: Երևի մի կես ժամ մնացի՝ մինչև նա դուռը կբացեր: Հանդարտ ու անխռով շուրջս էի նայում ու ամեն ինչ առնում էի իմ մեջ՝ ուսումնարանի դիմացի չորացած ծառը՝ պարանի պես խճճված իր ճյուղերով, փողոցի մյուս կողմի տները, որ գունափոխվում էին գիշերը, ավելի նկատելիորեն կքվում, սիբիրյան ամայքներում գալարվող գնացքի խուլ փնչոցը, Ուտրիլոյի նկարած ճաղաշարը, երկինքը, ճանապարհի խոր աղուրները: Հանկարծ, չգիտես որտեղից, սիրահարների մի զույգ հայտնվեց. ամեն քայլափոխի նրանք կանգնում էին ու գրկախառնվում, և երբ աչքս էլ չէր տեսնում նրանց, ոտնաձայներն էին ականջիս հասնում. ունկ էի դնում, թե ինչպես էին կանգնում շեշտակի, իսկ հետո, անշտապ, ման գալով, քայլում: Ջգում էի նրանց մարմինների կուչուձիգը ճաղին հենվելիս, լսում կոշիկների ճռճռոցը, երբ մկանները լարվում էին գրկախառնության համար: Քաղաքի ոլոր-մոլոր փողոցներով նրանք գնում էին սառած ջրանցքի կողմը, որի ջուրը ածխի պես սև էր: Ինչ-որ արտասովոր բան կար տեսածիս մեջ: Ամբողջ Դիժոնում նրանց նմանը չէիր գտնի:

Մինչդեռ ծերուկն իր պտույտն էր տալիս. նրա բանալիների զնգոցը, ճտքակոշիկների ճռինչը, համաչափ, մեքենայական քայլքը հասնում էին ինձ: Վերջապես ականջիս ընկավ, որ շքամուտքի ծառուղով մոտենում է դարպասին՝ մի վիթխարի, ամրոցին սազական կամարակապ կառույց, որին խրամն էր միայն պակաս: Լսեմ՝ փականքն է բզբզում. ձեռքերը փայտացել էին, ուղեղը՝ թմրել: Երբ դարպասը բացեց, նրա գլխավերևում մատուռը պսակած վառ համաստեղություն տեսա: Բոլոր դռները կողպ էին, բոլոր տողնակները՝ գոց: Գրքերը փակ էին: Գիշերն էր կախվել աստղերի սրաշեղբ դաշույններով, մոլագարի պես արբեցած: Ահա թե որտեղ էր դատարկ անսահմանությունը: Մատուռի գլխին, եպիսկոպոսի խույրի պես, համաստեղությունն էր շողում. ամեն գիշեր, ձմռան բոլոր ամիսներին,

թվայնացրել է 1915.info կայքը

համաստեղությունը ցածուկ կախված էր մատուռի գլխին: Մի բուռ սրաշեղը դաշույն՝ ցածուկ ու պսպղուն, լիակատար դատարկության փայլ: Ծերուկն ինձ ուղեկցեց մինչև ծառուղու վերջը: Դարպասն անաղմուկ փակվեց: Բարի գիշեր մաղթելիս ես նորից որսացի ծերուկի սրտաբեկ, անհույս ժպիտը, կարծես ասուպ փայլատակեր կորուսյալ աշխարհի եզերքին: Եվ նա նորից աչքիս առաջ եկավ ճաշարանում կանգնած, գլուխը հետ գցած և սուտակները կոկորդը լցնելիս: Ասես ամբողջ Միջերկրականն էր թաղված նրա մեջ. նարնջի անտառակները, կիպարիսները, թևավոր արձանները, փայտաշեն տաճարները, կապուտակ ծովը, քարացած դիմակները, խորհրդավոր թվերը, դիցական թռչունները, շափյուղյա երկինքները, արծվաձագերը, արևոտ ծովածոցիկները, կույր տաղասացները, մորուքավոր հերոսները: Ինչ որ կա-չկա՝ կորել գնացել է, հյուսիսից վրա հասած հեղեղի բաժին դարձել, թաղվել է, ընդմիշտ կործանվել: Հուշ: Անխոհեմ հույս:

Մի պահ վարանում եմ կանգնածս տեղում: Պատան, մոայլ քող, ամեն բանի անասելի, սրտակեղեք դատարկություն: Հետո արագ արագ քայլում եմ պատատակի խճաճածկ արահետով, անցնում կամարների ու այուների, երկաթե սանդուղքների մոտով, մի քառանկյուն շինությունից՝ մյուսը: Ամեն ինչ պինդ փակ է, ձմռան ընթացքում կողպված: Գտնում եմ հանրակացարան տանող անցուղին: Մրոտ, եղյամապատ պատուհաններից վտիտ լույս է ընկնում աստիճանների վրա: Ծեփն ամենուր թափվում է: Քարերը փոս են, բազրիքը ճոճոում է, խոնավությունը, գոլորշու նման ելնելով հատակից, անգույն, անորոշ մլար է դառնում, որի միջից պլպլում է սանդուղքի գլխի կարմիր, թույլ ճրագը: Վերջին սանդղաբազուկն ու հարթակը քրտնաթաթախ և ահը սրտումս եմ հաղթահարում: Թանձր խավարի մեջ, խարխափելով, անցնում եմ ամայի միջանցքը. բոլոր սենյակները դատարկ են, փակ, բորբոսակալած: Ձեռքս սահում է պատի վրայով. բանալու անցքն եմ փնտրում: Բայց բռնակը շոշափելուն պես խուճապի եմ մատնվում: Միշտ մի ձեռք կա, որ պատրաստ է բռնել իմ օձիքից ու հետ քաշել: Սենյակ եմ մտնում թե չէ՝

թվայնացրել է 1915.info կայքը

դռան սողնակը գցում եմ: Հրաշք է, հրաշք, որ ամեն գիշեր գալիս, տեղ եմ հասնում, ու ոչ ոք խեղդամահ չի անում ինձ կամ կացնով գլուխս բացում: Լսում եմ՝ առնետներն են վազվզում միջանցքով, գլխավերևիս հաստ գերանների արանքում ինչ-որ բան կրծոտում: Լամպը վառվում է այրվող ծծումբի դեղնականաչ լույսով, ու երբեք չօդափոխվող սենյակում քաղցրավուն, սրտախառնիչ հոտ է բռնել: Անկյունում քարածխի արկղն է, ինչպես որ եղել է: Կրակը հանգել է: Քար լռություն է, մի լռություն, որ թնդում է ականջիս Նիագարայի ջրվեժի պես:

Մենակ եմ անապ ու դատարկ կարոտի և սարսափի հետ: Ամբողջ սենյակում ես եմ ու մտքերս: Ուրիշ ոչինչ, բացի ինձնից, բացի իմ մտքերից ու իմ վախից: Կարող եմ ամենաարտառոց բաները մտածել, կարող եմ պարել, թքել, ծամածռություններ անել, հայհոյել, ոռնալ. ոչ ոք չի իմանա, ոչ ոք չի լսի: Նման բացարձակ առանձնության միտքը հերիք է ինձ գժվեցնելու համար: Իսկը ծննդաբերության նման է: Ամեն ինչ կտրվել է: Անջատ է, մերկ, մեկուսի: Երանություն է ու հոգեվարք միաժամանակ: Ինչքան ասես ժամանակ ունես: Ամեն վայրկյանը լեռան պես ծանրանում է գլխիդ: Խեղդվում ես: Անապատներ, ծովեր, լճեր, օվկիանոսներ: Ժամանակը վրա է գալիս մսագործի կացնի պես: Անէություն: Աշխարհ: Ես եմ ու չեմ: *Ոսահարամոսա:* Ամեն ինչ պետք է անուն ունենա: Ամեն ինչ պետք է սովորել, փորձել, ճաշակել: *«Faites comme chez vous, chéri»*[1]:

Լռությունը վրա է հասնում հրաբխի ժայթքման պես: Հեռվում՝ լերկ բլուրների մեջ, շոգեքարշներն իրենց ծախու ապրանքն են տանում դեպի մետալուրգիական մեծ կենտրոնները: Նրանք սահում են պողպատե ու երկաթե պաստառի, խարամով, մոխրով և մանուշակագույն հանքանյութով շաղախված գետնի վրայով: Բեռնավագոններում գորշ ջրիմուռ է, ծայրակցման մակադիրներ, գլանվածք, փայտակոճեր, մետաղե սռնիներ, թերթավոր երկաթ, մամլակաղապարված արտադրանք, գլոցածո օղակապեր, պահանակներ, ականանետի հրետասայլեր ու հանքաքար: 80 կամ ավելի միլիմետրանոց

[1] Քեզ ազատ զգա, սիրելիս (ֆրանս.):

թվայնացրել է 1915.info կայքը

անիվներ: Կողքից մեկը մյուսին են հաջորդում անգլո-նորմանդական ճարտարապետության հոյակերտ նմուշներ, գնում-գալիս են ոտավորներ ու որձամոլներ, երևում ու կորչում են մարտենյան վառարաններ, բեսեմերյան մետալուրգիական գործարաններ, դինամոմեքենաներ ու փոխակերպիչներ, թուջե ձուլվածքներ ու պողպատի ձույլեր: Լայն հասարակությունն է՝ ոտավորներ ու որձամոլներ, ոսկե ձկնիկներ ու արհեստական մանրաթելից պատրաստված արմավենիներ, հեծկլտացող ավանակներ. բոլորն ազատ ու արձակ շրջում են հինգ ուղղությամբ ճյուղավորվող փողոցներով: Նարդոսագույն աչք՝ Բրազիլիայի հրապարակում:

Հետադարձ հայացք եմ գցում իմ ճանաչած բոլոր կանանց վրա: Ասես շղթա լինի, որ կռել եմ սեփական տառապանքից: Ամեն մեկը կապված է մյուսին: Անջատ ապրելու, ծնված լինելու վախ: Արգանդի դուռը միայն սողնակով է փակ: Սարսափ և կարոտ: Դրախտի ծառրավը մեր արյան մեջ է: Անդենի ծարավը: Միշտ՝ անդենի: Երևի ամեն ինչ պորտից է սկսվում: Կտրում են պորտալարդ, շպպացնում տուտուզիդ, ու քեզ տեսնենք. արդեն աշխարհում ես, բախտի քմահաճույքին մնացած, անղեկ նավ: Նայում ես աստղերին, իսկ հետո պորտիդ ես նայում: Ամեն տեղ աչքեր են դուրս գալիս. թևատակերիդ, շուրթերիդ արանքում, մազարմատներիդ, ներբաններիդ: Ինչ որ հեռու է՝ դառնում է մոտ, ինչ որ մոտ է՝ հեռու է դառնում: Ներսդ ու դուրսդ, հարափոփոխ շարժում, մաշկափոխություն, աստառը՝ երես: Տարիներ շարունակ դեսուդեն ես քշվում, մինչև հայտնվում ես մեռյալ կենտրոնում, որտեղ և դանդաղ սկսում ես փտել, դանդաղ քայքայվել, նորից անհետանալ: Միայն անունդ է մնում:

15

Գարնանն էր, որ հաջողվեց փախչել տաժանավայրից, էն էլ՝ ուղղակի բախտի բերմամբ: Մի օր Կարլից հեռագիր եկավ, թե «վերնահարկում» տեղ է ազատվել. գրել էր, որ ճանապարհածախսը

կուղարկի, եթե համաձայնեմ: Ես անմիջապես պատասխան հեռագիր ուղարկեցի, ու հենց որ փողը տեղ հասավ, պոկվեցի կայարան: Ոչ մի բառ պարոն Տնօրենին կամ մեկնումեկին: Հրաժեշտ անգլիական ձևով, ինչպես ասում են:

Միանգամից գնացի հյուրանոց, Կարլի մոտ: Նա դուռը տիփտկլոր բաց արեց: Ազատ օրն էր, անկողնում էլ, սովորականի պես, պուց կար: «Հաշվի մի առ,– ասաց Կարլը,– քնած է: Թե սիրտդ ուզում է՝ հագցրու: Վատը չի»: Նա ծածկոցը հետ քաշեց, որ ցույց տա: Բայց ի՞նչ հագցնել, իմ ուշքն ուրիշ տեղ էր: Գլուխս կորցրել էի: Բանտից նոր փախած մարդու նման: Ուզում էի ամեն ինչ տեսնել, լսել: Կայարանից գալ-հասնելը երկար երազ թվաց աչքիս: Կարծես տարիներով բացակայած լինեի:

Նստելուց ու սենյակը մի լավ տնտղելուց հետո էր, որ հասկացա. Փարիզ էի վերադարձել: Կասկած չկար. Կարլի սենյակն էր: Սկյուռի վանդակի ու քաքանոցի խառնուրդ: Փոքրիկ գրամեքենան սեղանին հազիվ էր տեղավորվել: Նրա մոտ միշտ էս վիճակն է՝ պցի հետ լինի, թե չէ: Բաց բառարանը միշտ դրված է ոսկեզր «Ֆաուստ»-ի վրա, միշտ ծխախոտի քսակն է, բերետը, մի շիշ կարմիր գինի, նամակներ, ձեռագրեր, հին թերթեր, ջրաներկ, թեյնիկը, կեղտոտ գուլպաներ, ատամի խոզանակներ, անգլիական աղ, պահպանակներ և այլն: Բիդեում էլ նարնջի կճեպներ ու խոզապուխտով բրդուճի մնացորդներ էին:

– Պահարանում ուտելիք կա,– ասաց Կարլը:– Կեր: Ես էլ սրսկվեմ ապահովության համար:

Մի բրդուճ բան գտա, մի կտոր էլ՝ կողքից կծոտած պանիր: Քանի դեռ նա, անկողնու եզրին նստած, արգիրոլ էր իրեն ներարկում, ես բրդուճն ու պանիրը հուպ տվեցի մի քիչ գինու հետ:

– Գյոթեի մասին գրած նամակդ հավանեցի,– ասաց նա, երբ արդեն պլոր-մլորն էր սրբում կեղտոտ ոտաշորով:– Էս րոպեիս պատասխանը ցույց կտամ. գրքիս մեջ եմ դնում: Վատ է, որ դու գերմանացի չես: Գյոթեին հասկանալու համար պիտի գերմանացի լինես: Դե լավ, գլուխը քարը, հիմա ի՞նչ նստեմ, բացատրեմ: Գրքիս մեջ ամեն ինչ կլինի... Իմիջիայլոց, նոր պուց եմ ճարել. էս մեկը չի,

թվայնացրել է 1915.info կայքը

սա խելառ անտեր է: Համենայն դեպս, մի քանի օր առաջ դեռ մոտս էր: Բայց արդեն չգիտեմ՝ հետ կգա, թե չէ: Քո բացակայության ժամանակ էստեղ էր, հետս էր ապրում: Էն էլ ծնողներն եկան էս քանի օրն ու տարան: Ասում են՝ ընդամենը տասնհինգ տարեկան է: Պատկերացրու, է՛: Վախից տակս լցրել էի...

Ես սկսեցի ծիծաղել: Գլխին փորձանք բերելը հատուկ էր Կարլին:

– Ի՞նչ ես ծիծաղում,– վրա բերեց նա:– Բա որ բանտ ընկնե՞մ: Բախտս բերեց՝ փորը չէի լցրել: Այ քեզ բան, ախր չէր էլ պաշտպանվում: Բայց գիտե՞ս՝ ինչը փրկեց ինձ: Ամեն դեպքում, ես էդ կարծիքին եմ: «Ֆաուստը»: Հա՛: Պատահմամբ հոր աչքը ընկավ սեղանին: Հարցրեց, թե գերմաներեն գիտե՞մ: Խոսք՝ խոսքի վրա, մեկ էլ տեսնեմ՝ գրքերս է աչքի անցկացնում: Բախտի բերմամբ, Շեքսպիրն էլ էր բաց: Դա նրա վրա մահացու տպավորություն գործեց: Թե՝ երևում է՝ շատ լուրջ տղա ես:

– Բա աղջի՞կը: Նա՞ ինչ էր ասում:

– Սրտաճաք էր եղել: Դե, մի փոքրիկ ժամացույց ուներ, որ եկավ: Խառնվել էինք իրար՝ ժամացույցը չէինք գտնում, մերն էլ կպել է, թե՝ կամ ժամացույցը գտեք, կամ էլ ոստիկանություն եմ կանչում: Դե տեսնում ես՝ ինձ մոտ ինչ է կատարվում: Ամբողջ տունը տակնուվրա արեցի, բայց էդ անտեր ժամացույցը չգտա: Մոր կատաղությունը բռնել էր: Բայց, չնայած դրան, աչքս մտավ: Աղջկանից էլ լավ տեսք ուներ: Հա, ցույց կտամ քեզ, նամակ եմ գրում նրան: Սիրահարվել եմ...

– Մո՞րը:

– Հա, էլի: Ի՞նչ կա որ: Եթե սկզբում մորը տեսնեի, աղջկա երեսին չէի էլ նայի: Ի՞նչ իմանայի, որ տասնհինգ տարեկան է: Էդ ո՞ր մի քածին ես բրթելուց առաջ տարիքը հարցնում, հը՞:

– Ջո, մի հաշիվ կա: Չլինի՞ հեքիաթներ ես պատմում, այ քաքլան:

– Ի՞նչ հեքիաթներ, ի՞նչ քաքլան: Հրես, քո աչքով տես:– Եվ նա ցույց տվեց աղջկա ջրաներկ աշխատանքները՝ փոքրիկ, դուրեկան բաներ. բոքոն՝ դանակի հետ, թեյնիկ սեղանին, բոլորը՝ վերևի դիտակետից:– Սիրտը կպել էր ինձ,– պատմեց Կարլը:– Լրիվ երեխա

էր: Ես էի ասում, թե երբ ատամները լվար, ոնց գլխարկը դներ: Տես, սառնաշաքար է: Ամեն օր մի քանի հատ առնում էի. շատ էր սիրում:

– Լավ, բա ի՞նչ արեց, երբ ծնողներն եկան տանելու: Լեզվակոիվ չտվե՞ց:

– Մի քիչ լաց եղավ ու վերջ: Ի՞նչ պիտի աներ: Անչափահաս է... Ստիպված խոստացա, որ էլ երբեք չեմ հանդիպի նրան, ոչ էլ նամակ կգրեմ: Հիմա սպասում եմ տեսնեմ՝ հետ կգա՞, թե՞ չէ: Կույս էր, որ եկավ մոտս: Հետաքրքիր է՝ ինչքան կդիմանա առանց տղամարդու: Սիրտը չէր կշտանում շինվելուց: Հոգիս արդեն բերանս էր բերել:

Էս արանքում քնածը արթնացել, աչքերն էր տրորում: Շատ ջահել թվաց ինձ: Տեսքից վատը չէր իրոք, բայց գլխում խելքի կտոր չկար, բամբակը նոսր էր: Տեղնուտեղը հետաքրքրվեց, թե ինչից էինք խոսում:

– Էստեղ էլ ապրում է,– ասաց Կարլը,– մեր հյուրանոցի երրորդ հարկում: Կուզե՞ս՝ գնա մոտը: Ես կդասավորեմ:

Չգիտեի՝ ուզում եմ, թե չէ, բայց երբ Կարլը էլի վրա ընկավ, գործի կպան, մտածեցի, որ ուզում եմ: Հարցրի՝ չի՞ հոգնել: Ավելորդ հարց: Պոռնիկը երբեք էլ չի հոգնում ոտքերը չռելուց: Ոմանք քնով են անցնում, քանի դու խրելու բանին ես: Մի խոսքով, որոշեցինք, որ կիջնեմ նրա մոտ: Էդպես հյուրանոցատիրոջը փող չէի տա գիշերելու համար:

Առավոտյան սենյակ վարձեցի, որի պատուհանը նայում էր մի փոքրիկ զբոսայգու, ուր կենդանի գովազդ ծառայող մարդիկ գալիս էին նախաճաշի: Կեսօրին մտա Կարլի մոտ, որ գնանք ուտելու: Վան Նորդենն ու նա իմ բացակայության ընթացքում նոր սովորույթ էին ձեռք բերել. ամեն օր «Կուպոլ»-ում էին նախաճաշում:

– Բայց ինչի՞ հենց «Կուպոլ»-ում,– հարցրի:

– Ինչի հենց «Կուպոլ»-ո՞ւմ,– կրկնեց Կարլը:– Որովհետև էնտեղ ամեն օր վարսակի շիլա են տալիս, իսկ վարսակի շիլան փորդ բացում է:

– Պարզ է,– ասացի:

Ու հիմա ամեն ինչ առաջվա պես է: Երեքով գնում ենք աշխատանքի, գալիս: Մանր վեճեր, մանր մրցակցություն: Վան Նորդենի

թվայնացրել է 1915.info կայքը

դարդ ու ցավն էլի իր բոզերն են, մեկ էլ ներսի կեղտից մաքրվելը: Բայց մի նոր զբաղմունք է գտել: Հայտնաբերել է, որ ինքնաբավարարումն ավելի ձեռնտու է. գլխացավանքը քիչ է: Ապշած մնացի, երբ էդ լուրն ինձ հայտնեց: Մտքովս չէր անցնի, թե նրա պես մարդը ժաժ տալուց հաճույք կստանա: Էլ ավելի ապուշ կտրեցի, երբ բացատրեց, թե ոնց է դա անում: Նոր ձև էր «հայտնաբերել»՝ իր ասածով: «Մի խնձոր ես վերցնում,– բացատրեց նա,– մեջտեղը ծակ բացում: Ներսից քոլդկրեմ ես քսում, բայց որ խնձորը շուտ չկակղի: Մի օր փորձի՛: Գժվելու բան է, մանավանդ սկզբից: Համենայն դեպս, էժան է նստում, շատ ժամանակ էլ չես վատնում:

Իմիջիայլոց,– շարունակեց նա՝ թեման փոխելով,– ընկերդ՝ Ֆիլմորը, հիվանդանոցում է: Իմ կարծիքով՝ խելքը հետ է տվել: Ինչ որ է, ընկերուհին է ասել ինձ: Քանի դեռ էստեղ չէիր, նա մի ֆրանսուհու հետ է կապվել: Անընդհատ իրար ուտում էին: Բոյով-բուսով, պինդ քած է, կատաղածի մեկը: Ես էլ դեմ չէի լինի, կարելի էր մի լավ հունցել, բայց վախենում եմ աչքերս հանի: Ֆիլմորը մռութն ու ձեռքերը ճանկոտած էր ման գալիս: Բայց էդ քածի աչքն էլ էր մի գլուխ կապտած: Դե ֆրանսիացի պցերին հո գիտես. սիրահարվելիս խելքները մաղվում է»:

Ուրեմն իմ բացակայության ընթացքում ինչ-ինչ բաներ էին կատարվել: Սիրտս ցավեց Ֆիլմորի համար: Շատ լավություն էր ինձ արել: Վան Նորդենին թողնելով՝ թռա մի ավտոբուս ու գնացի ուղիղ հիվանդանոց:

Ինչքան հասկացա, դեռ չէր որոշվել՝ Ֆիլմորը վերջնականապես խանգարվել է, թե չէ, որովհետև նրան գտա վերևի առանձին հիվանդասենյակում, ուր ազատ ելումուտ կար, ինչպես որ սովորական հիվանդներին են տեսության գնում: Ինձ տեսավ թե չէ՝ փղձկաց:

– Վերջ ամեն ինչին,– վրա բերեց միանգամից:– Ասում են՝ գժվել եմ, վայ թե սիֆիլիս էլ ունեմ: Ասում են՝ հետն էլ՝ մեծամոլություն:– Նա ընկավ մահճակալին ու կամացուկ արտասվում էր: Որոշ ժամանակ լաց լինելուց հետո գլուխը բարձրացրեց և ժպտաց՝ քնից արթնացած թռչունի նման:– Թե ինչի՞ են էս թանկ տեղը բերել,– հարցրեց:–

Փոխանակ ընդհանուր հիվանդասենյակ տանեն կամ էլ գժանոց: Ես սրա տակից դուրս եկողը չեմ: Վերջին հինգ հարյուր դոլարն է մոտս մնացել:

– Դրա համար էլ էստեղ են պահում,– ասացի ես:– Հենց որ փողդ վերջանա, վռազ կտեղափոխեն:

Իմ ասածն ազդեց Ֆիլմորի վրա: Խոսքը դեռ բերանիս՝ շղթայով ժամացույցը, դրամապանակը, կրծքանշանն ու մնացածը տվեց ինձ:

– Թող մոտդ մնան,– ասաց:– Թե չէ էս տականքներն ունեցածչունեցածս կկլպեն:– Իսկ հետո հանկարծ սկսեց քրքջալ. ով էլ էդպես փոթկար տարօրինակ, անուրախ ծիծաղով, խելքը կորցրածի տպավորություն կթողներ:– Գիտեմ, կարծում ես՝ ցնդել եմ,– ասաց նա,– բայց ուզում եմ մեղքս քավել: Ուզում եմ ամուսնանալ: Ախր չգիտեի, որ սուսանակ եմ: Վարակել եմ նրան, ինքն էլ փորը լիքն է: Բժշկին ասել եմ՝ ինչ ուզում է ինձ լինի, մեկ է, գոնե թողնի, որ ամուսնանամ հետը: Նա էլ պնդում է, որ սպասեմ մինչև լավանալս, բայց ես գիտեմ, չեմ լավանալու: Սա վերջն է:

Էս խոսքերը լսելով՝ չկարողացա ծիծաղս զսպել: Չէի հասկանում՝ ինչ է նրան եղել: Ինչևէ, ստիպված էի խոստանալ, թե կտեսնվեմ ընկերուհու հետ ու ամեն ինչ կբացատրեմ: Ֆիլմորն ուզում էր, որ տիրություն անեի նրան, մխիթարեի: Ասաց՝ վստահում է ինձ և այլն: Հանգստացնելու համար խոստացա բոլոր ասածներն ասել: Աչքիս գիժ չերևաց, ուղղակի՝ մի թեթև շեղված: Տիպիկ անգլոսաքսոնական տագնապ էր. բարոյականության պոռթկում: Հետաքրքիր էր տեսնել Ֆիլմորի ընկերուհուն, եղած-չեղածը ջրի երես հանել:

Մյուս օրը գտա նրան: Լատինական թաղամասում էր ապրում: Հենց որ իմացավ՝ ով եմ, արտակարգ սիրալիր դարձավ: Անունը Ժինետ էր: Բավական խոշոր, ոսկրոտ, ամրակազմ, գեղջկուհու տիպի աղջիկ էր, առջևի ատամներն էլ՝ կիսամաշ: Կյանքով լի էր, իսկ աչքերի մեջ մի տեսակ խենթ կրակ կար: Նախ և առաջ, սկսեց հեծկլտալ: Հետո, պարզելով, որ իր Ժո-Ժոյի (անունն էդպես էր կնքել) մոտ ընկերն եմ, վազեց ցած ու երկու շիշ սպիտակ գինի բերեց: Ստիպված էի մնալ նրա հետ ճաշելու, շատ թախանձեց:

Գինին մերթ զվարթ էր դարձնում Ժինետին, մերթ լացկան: Հարց տալու կարիք չկար. ասես լարել, բաց էին թողել: Նրան առավելապես մտահոգում էր մի խնդիր. Ֆիլմորը նորից իր գործին կանցնե՞ր հիվանդանոցից դուրս գրվելուց հետո: Նրա պատմելով՝ ծնողներն ունևոր էին, բայց դժգոհ իրենից: Հավանություն չէին տալիս իր աննսանձ վարքուբարքին: Իսկ Ֆիլմորին ընդհանրապես չէին հավանում. շենք-շնորհք չուներ, ինքն էլ ամերիկացի էր: Ժինետն ինձ աղաչում էր երաշխավորել, թե Ֆիլմորն էլի իր գործին կանցներ, մի բան, որ ես անվարան արեցի: Իսկ նա մի ուրիշ աղաչանքի պոչը բռնեց. ուզում էր իմանալ, թե հավատա՞ Ֆիլմորի խոստումին, որ կամուսնանա իր հետ: Դե, երեխան փորում, սուսանակով էլ վարակված՝ ինքն ի վիճակի չէր փեսացու ճարել, մանավանդ ֆրանսիացու: Պարզ է, չէ՞: Իհարկե, հավաստիացրի ես: Ինձ համար ամեն ինչ պարզից էլ պարզ էր, միայն, Աստծու սիրուն, խելքս չէր մտնում, թե Ֆիլմորի սիրտը ոնց է սրան կպել: Բայց ամեն ինչ՝ հերթով: Հիմա իմ պարտքը Ժինետին մխիթարելն էր, ու ես ապուշություններով նրա գլուխը լցրի, համոզեցի, որ բան բան չկա, լավ կլինի, ես էլ երեխայի կնքահայրը կդառնամ և այլն: Հետո հանկարծ միտք ծագեց. ախր տարօրինակ է, որ նա ուզում է ծննդաբերել. մեկ էլ տեսար՝ երեխան կույր ծնվեց: Հնարավորին չափ նրբանկատորեն ակնարկեցի:

- Մեկ է,- ասաց:- Ուզում եմ երեխա ունենալ նրանից:

- Նույնիսկ եթե կույր լինի՞,- հարցրի:

- Mon Dieu, ne dites pas ça!.- հառաչեց նա:- Ne dites pas ça[1]!

Ամեն դեպքում, իմ կարծիքով՝ պարտավոր էի դա ասել: Նա հիստերիկայի գիրկն ընկավ, սկսեց աղի արտասուք թափել, էլի գինի լցնել: Իսկ մի քանի վայրկյանից արդեն քահ-քահ ծիծաղում էր: Միտքն էր բերել, թե ոնց էին կոիվ տալիս անկողնում: «Նրան դուր էր գալիս, որ հետը կռվշտում եմ,- վրա բերեց Ժինետը:- Վայրենի անասուն է»:

Հենց որ նստեցինք ճաշելու, հայտնվեց Ժինետի ընկերուհին՝ մի փոքր-մոքր պոռնիկ, որը միջանցքի ծայրին էր ապրում: Ժինետն

[1] Աստված իմ, էդպես մի՛ ասեք: Մի՛ ասեք (ֆրանս.):

անմիջապես ինձ ներքև ուղարկեց՝ էլի գինի բերելու: Երբ վերադարձա, նրանք ակնհայտորեն ամեն ինչ քննարկել էին արդեն: Ընկերուհին՝ Իվետը, ոստիկանության աշխատակից էր: Ինչքան գլխի ընկա, գործ տվող էր, մի մեծ բան չէր: Համենայն դեպս, ինքն էր հավատացնում, թե ամեն ինչից տեղյակ է: Բայց պարզ երևում էր, որ ընդամենը մանր բոզ է: Ուղղակի խելքը գնում էր ոստիկանությունից, սրա գործերից խոսելու համար: Ճաշելու ընթացքում երկուսով ինձ համոզում էին, որ իրենց հետ պարելու գնամ: Ուզում էին զվարճանալ. Ժինետն իրեն մենակ էր զգում, քանի դեռ Ժո-Ժոն հիվանդանոցում էր: Ասացի՝ աշխատանքի եմ, բայց հանգստյան օրս կգամ հետևներից, կտանեմ պարելու: Չնայած պարզ ու հստակ ավելացրի, որ ծախսելու փող չունեմ: Ժինետը, որ շանթահար եղավ՝ սա լսելով, ձև տվեց իրեն, թե դա, ի վերջո, նշանակություն չունի: Ըստ էության, իր մեծահոգությունը ցուցադրելու համար, պնդեց, որ ինձ տաքսիով աշխատանքի տանեն: Բա իհարկե, Ժո-Ժոյի ընկերն էի: Ուրեմն իր ընկերն էլ էի: «Ո՛նց չէ,- մտածեցի,- եթե Ժո-Ժոյիդ մի բան պատահի, վազեվազ գալու ես մոտս: Ա՛յ, էն ժամանակ կտեսնես, թե ինչ ընկեր եմ»: Ես փափուկ բամբակ էի նրա հետ: Երբ խմբագրատան առաջ իջանք տաքսիից, տեղի տվեցի նրանց հորդորներին, որ գնայինք պեռնոյի վերջին բաժակը խմելու: Իվետը հարցրեց, թե կարո՞ղ է իմ հետևից գալ, երբ գործս վերջացնեմ: Իր խոսքերով՝ առանձին ասելու շատ բան ուներ: Ինձ հաջողվեց մերժել՝ առանց նրա սրտին կպչելու: Բայց, ցավոք, հաստատակամությունս չհերիքեց, որ հասցես չտայի:

Ասում եմ՝ *ցավոք*: Իսկ իրականում, անցած-դարձածը ծանրութեթև անելիս, ուրախ եմ, որ էդպես ստացվեց: Որովհետև հենց հաջորդ օրը նոր բաներ կատարվեցին: Դեռ անկողնուց վեր էլ չէի կացել, երբ երկուսով հայտնվեցին ինձ մոտ: Ժո-Ժոյին հիվանդանոցից տեղափոխել էին գյուղ, Փարիզից մի քանի մղոն հեռավորության վրա գտնվող ինչ-որ փոքրիկ դաստակերտ: Իրենք էին «դաստակերտ» ասում: «Գժանոցի» մեղմ ձևն էր: Ուզում էին, որ հապշտապ հագնվեմ ու գնամ իրենց հետ: Խուճապի մեջ էին:

Գուցեև գնայի մենակ, բայց էս երկուսի հետ սիրտ չէի անում: Խնդրեցի, որ ներքևում սպասեն՝ մինչև հագնվեմ. կարծում էի՝ ժամանակ կշահեմ ու ինչ-որ պատրվակ կմոգոնեմ չգնալու համար: Բայց նրանք դուրս չեկան սենյակից: Նստած՝ նայում էին, թե ոնց եմ լվացվում ու հագնվում, կարծես սովորական, առօրյա բան լիներ: Էս արանքում Կարլը լույս ընկավ: Ես իրավիճակը համառոտակի բացատրեցի նրան՝ անցնելով անգլերենին, ու մենք բատրեցինք, թե, դու մի ասա, կարևոր գործ է բացվել ինձ համար: Ինչևէ, բանը հարթելու նպատակով, գինի բերեցինք իմ սենյակն ու սկսեցինք նրանց զբաղեցնել՝ անվայել նկարների ալբոմ ցույց տալով: Դաստակերտ գնալու Իվետի ցանկությունը միանգամից կորավ: Կարլն ու նա շատ լավ լեզու գտան: Երբ ճանապարհվելու ժամանակն եկավ, Կարլը հանձն առավ նրանց դաստակերտ ուղեկցել: Մտածում էր, որ զվարճալի կլինի Ֆիլմորին հանդիպել՝ գժերով շրջապատված: Ուզում էր տեսնել, թե գժանոցն ինչ տեսք ունի ներսից: Մի խոսքով, ճամփա ընկան՝ մի քիչ կոնծած ու բարձր տրամադրությամբ:

Քանի դեռ Ֆիլմորը դաստակերտում էր, ես ոչ մի անգամ այցի չգնացի նրան: Դրա անհրաժեշտությունը չկար, որովհետև Ժինետը կանոնավորապես գնում էր տեսության ու բոլոր լուրերն ինձ հայտնում: Նրա ասելով՝ բժիշկները հույս ունեին, որ մի քանի ամսից Ֆիլմորն իրեն կհավաքի: Եղածն ալկոհոլային թունավորում էին համարում, ոչ ավելին: Ինչ խոսք, սուսանակն էլ կար. բայց դա դժվար չէր բուժել: Ինչքան հասկացել էին, Ֆիլմորը սիֆիլիս չուներ: Էլի լավ էր: Սկզբում նրան ստամոքսի լվացումներ էին արել: Ամբողջ օրգանիզմը մաքրել էին: Միաժամանակ Ֆիլմորը շատ թույլ էր, անկողնուց վեր չէր կենում: Ու վիատության գիրկն էր ընկել նաև: Ասել էր՝ չի ուզում բուժվել, ուզում է մեռնել: Էնքան համառորեն էր էդ բարբաջանքը կրկնել, որ բժիշկները, ի վերջո, անհանգստացել էին: Ըստերևույթին, նրանց բուժարանին պատիվ չէր բերի, եթե Ֆիլմորն ինքնասպանություն գործեր: Էսպես թե էնպես, անցել էին նրա հոգեկան աշխարհի բուժմանը: Դրա հետ էլ ատամներն էին հանում, մեկը մյուսի հետևից, մինչև որ Ֆիլմորի

բերանում ատամ չէր մնացել: Նախատեսվում էր, թե դրանից հետո նա պիտի լավ զգար իրեն, մինչդեռ, որքան էլ տարօրինակ էր, բարելավում չկար: Հակառակը, Ֆիլմորն ավելի էր ընկճվել: Մազերն էլ սկսել էին թափվել: Վերջիվերջո, հայտնաբերվել էր, որ նա խելագարության հակում ունի. ամեն բանի համար մեղադրում էր բժիշկներին, հարցնում, թե ինչ իրավունքով են իրեն փակի տակ պահում, ինչ է արել, որ գժանոց են գցել և այլն: Ընկճվածության ահավոր նոպաներից հետո Ֆիլմորը հանկարծ դառնում էր եռանդուն և սպառնում պայթեցնել դաստակերտը, եթե իրեն բաց չթողնեն: Իսկ, որ ամենավատն էր Ժինետի համար, նա ամբողջովին ձեռ էր քաշել ամուսնանալու մտքից: Շիփ-շիտակ ասել էր Ժինետի երեսին, թե պսակվելու մտադրություն չունի, ու եթե նա էնքան խելքը կորցրել է, որ ուզում է երեխա ունենալ, ուրեմն՝ մեղքն իր վիզը:

Բժիշկները սա լավ նշան էին որակել: Նրանց ասելով՝ Ֆիլմորը խելքի էր գալիս: Իսկ Ժինետը, իհարկե, համարում էր, որ նա ավելի է գժվել, բայց խնդրում էր ազատ արձակել, որպեսզի տաներ գյուղ, ուր հանգիստ ու խաղաղ պայմաններում նրա խելքը, իրոք, գլուխը կգար: Էս ընթացքում Ժինետի ծնողները եկել էին Փարիզ՝ աղջկան տեսնելու, և բանը նույնիսկ էնտեղ էր հասել, որ գնացել էին դաստակերտ՝ ապագա փեսային հիվանդատես: Գեղջուկի շրջահայացությամբ երևի գցել-բռնել էին, որ ավելի լավ է իրենց աղջիկը գժի հետ ամուսնանա, քան թե ընդհանրապես անմարդ մնա: Հայրը կարծում էր, որ ագարակում Ֆիլմորի համար անելիք կգտնի: Ասել էր՝ Ֆիլմորը բոլորովին էլ վատ տղա չի: Իսկ երբ Ժինետից իմացել էր, որ Ֆիլմորի ծնողները փող ունեն, էլ ավելի ներողամիտ ու ընկալունակ էր դարձել:

Ամեն ինչ իր տեղով գնում էր: Ժինետը, առժամանակ, ծնողների հետ մեկնեց գավառ: Իվետը հաճախակի գալիս էր հյուրանոց՝ Կարլի մոտ: Կարծում էր՝ նա է թերթի խմբագիրը: Եվ կամաց-կամաց լեզվի կապերը բացվեցին: Մի օր, թաթ ու կրունկ խմած, մեզ հայտնեց, որ Ժինետը բոզի մեկն է, ուրիշ ոչինչ, տեղով՝ տզրուկ, երբեք չի հղիանում, ոչ էլ հիմա է հղի: Կարլն ու ես առանձնակի կասկած

թվայնացրել է 1915.info կայքը

չունեինք մյուս մեղադրանքների վերաբերյալ, բայց հղի չլինելու վրա վստահ չէինք:

– Բա էդ մեծ փորը որտեղի՞ց,– հարցրեց Կարլը:

Իվետը փոթկաց:

– Երևի հեծանվի պոմպով է փչում-ուռցնում,– ասաց:– Չէ, կատակը՝ մի կողմ,– ավելացրեց,– փորը լակելուց է: Ձիու պես խմում է մեր Ժինետը: Այ, կտեսնեք, գյուղից ավելի ուռած-փքված կգա: Հայրը հարբեցող է: Ժինետն էլ՝ նույնը: Սուսանակը հնարավոր է, բան չունեմ ասելու, բայց հղիությունը՝ չէ:

– Իսկ ինչի՞ համար է ուզում ամուսնանալ Ֆիլմորի հետ: Իրո՞ք սիրահարվել է նրան:

– *Սիրահարվե՞լ*: Պա՛հ, չէ մի: Ո՞ւր է Ժինետին սիրտ: Ուղղակի հոգսը քաշող է պետք: Ոչ մի ֆրանսիացի հետը չի ամուսնանա. ոստիկանությունում հաշվառման տակ է: Իսկ ձեր Ֆիլմորը ձեռ է տալիս. էնքան դմբո է, որ ոչ մի բան չի պարզել Ժինետի մասին: Ծնողները չէին ուզում երեսը տեսնել. սրանց խայտառակ էր արել: Բայց եթե ամուսնանա հարուստ ամերիկացու հետ, ամեն ինչ տեղը կընկնի, ծածկադմփոց կանեն... Ձեր կարծիքով՝ Ֆիլմորին հավանում է, հա՞: Լավ չգիտեք նրան: Հյուրանոցում միասին ապրելու ժամանակ, հենց որ Ֆիլմորը ոտքը քաշում էր, գնում գործի, Ժինետիս մոտ տղամարդիկ էին գալիս: Բողոքում էր, որ Ֆիլմորը ծախսի փող չի տալիս կարգին, ժլատ սատկում է: Ֆիլմորին ասել է, թե ուսերին գցած էն մորթին ծնողներն են նվիրել, չէ՞: Հիմարի տե՛ղ է դրել մաքուր: Նվիրել են, բա չէ. ես տեսա, թե ոնց մի տղամարդու բերեց հյուրանոց, Ֆիլմորն էլ՝ հյուրանոցում: Ներքևի հարկ էր բերել: Իմ աչքո՛վ տեսա: Տղամարդ էլ ասո՛ւմ եմ. հայհայը գնացած, վայվայը մնացած քոփա՛կ էր: Անտերը չէր էլ կանգնել:

Եթե Ֆիլմորը, դաստակերտից ազատվելուց հետո, վերադառնար Փարիզ, գուցեև տեղյակ պահեի իր Ժինետի մասին: Իսկ քանի դեռ հսկողության տակ էր, մտածում էի, որ ճիշտ չէր լինի նրան տակնուվրա անել, Իվետի բամբասանքներով միտքը պղտորել: Բայց էնպես ստացվեց, որ դուրս գրվելուց հետո նա միանգամից

մեկնեց Ժինետի ծնողների մոտ: Դե, սրանք էլ պատին էին դեմ արել, խելքից հանել, որ հրապարակայնորեն հայտնի նշանադրության մասին: Առաջիկա ամուսնության հայտարարությունը տպվել էր տեղական թերթերում, և ընտանիքի բարեկամների համար հրավերք կազմակերպվել: Ֆիլմորը, օգտվելով իր վիճակի առավելությունից, տեսակ-տեսակ օյիններ էր խաղում: Շատ լավ հաշիվ էր տալիս իրեն, որ ուղղակի դեռ մի քիչ ցնդած է ձևանում: Ասենք, վերցնում էր աներոջ մեքենան ու ինքնագլուխ սուրում գյուղական ճամփաներին: Եթե ինչ-որ փոքրիկ քաղաք աչքին գալիս էր, իջևանում էր, իր համար ժամանակ անցկացնում, մինչև որ Ժինետը գար, գտներ: Երբեմն էլ աներոջ հետ էր գնում՝ իբր ձկնորսության, ու մի քանի օր ձեն-ձուն չկար, անհետ կորչում էին: Ֆիլմորը դարձել էր անչափ քմահաճ ու բծախնդիր: Երևի որոշել էր իր վիճակից առավելագույն օգուտ քաղել:

Երբ նա Ժինետի հետ վերադարձավ Փարիզ, հագուստ-կապուստը նոփ-նոր էր, իսկ գրպանում լիքը փող կար: Ջվարթ ու առողջ տեսք ուներ, լավ էլ արևահարվել էր: Աչքիս խելքը լրիվ տեղն էր: Բայց Ժինետին գլխից ցանեց թե չէ՝ սիրտը բաց արեց: Գործից զրկվել էր, ունեցած փողն էլ մինչև վերջ ծախսել: Մի ամսից պիտի ամուսնանար: Առայժմ Ժինետի ծնողներն էին փողով ապահովում: «Երբ որ լրիվ ճանկներն ընկնեմ,- պատմեց նա,- դրանց ստրուկը կդառնամ: Հոր մտքով անցել է, որ ինձ համար գրենական պիտույքների խանութ բացի: Ժինետը հաճախորդներին կընդունի, փողը կստանա և այլն, ես էլ, խանութի հետնասենյակում նստած, կգրեմ-կջնջեմ կամ նման մի բան: Պատկերացրու, է՛. մինչև կյանքիս վերջը պիտի նստեմ գրենական պիտույքների խանութի հետնասենյակում: Ժինետի կարծիքով՝ հոյակապ միտք է: Դե, ինքը սիրում է փող տալառնել: Իսկ ես, ավելի լավ է, հետ դառնամ դաստակերտ, քան թե հլու-հնազանդ ենթարկվեմ գլխիս գալիքին»:

Միաժամանակ նա, իհարկե, ձև էր տալիս իրեն, թե ամեն ինչ չտեսնված է: Ես փորձեցի համոզել, որ վերադառնա Ամերիկա, բայց դրա մասին լսել էլ չէր ուզում: Ասաց՝ էդ էր պակաս, որ մի քանի

թվայնացրել է 1915.info կայքը

անգրագետ գյուղացու պատճառով Ֆրանսիայից դատարկուն լինի: Մտքին դրել էր մի որոշ ժամանակ աչքից անհետանալ, բնակարան վարձել քաղաքի ինչ-որ հեռավոր մասում, որտեղ Ժինետը չէր գտնի իրեն: Բայց շուտով մենք հասկացանք, որ դա անհնար էր. Ֆրանսիայում չես կարող թաքնվել, ինչպես Ամերիկայում:

– Միգուցե ժամանակավորապես Բելգիա գնաս,– առաջարկեցի ես:

– Բա փողի հա՞րցը,– իսկույն վրա բերեց նա:– Էդ անտեր երկրներում աշխատանք չես ճարի:

– Իսկ չի՞ լինի, որ ամուսնանաս, հետո էլ բաժանվես,– հարցրի:

– Արդեն երեխա կբերի: Ո՞վ պիտի փոքրիկի հոգսը քաշի, հը՞:

– Ի՞նչ գիտես, թե կբերի,– ասացի՝ որոշելով, որ գաղտնիքը ջրի երես հանելու պահը վրա է հասել:

– Ո՞նց թե՝ ինչ գիտեմ,– հարցրեց նա: Ակնարկս տեղ չէր հասել:

Ես Իվետի ասածը համառոտակի շարադրեցի: Շվարած լսում էր: Իսկ հետո ընդհատեց:

– Չարժի շարունակել,– ասաց:– Երեխա է ունենալու, հաստատ: Զգացել եմ՝ շարժվում է ներսում: Իվետը կեղտոտ պոռնիկի մեկն է: Գիտե՞ս, չէի ուզում քեզ ասել, բայց մինչև հիվանդանոց ընկնելս Իվետի ձեռքն էլ էի փող դնում: Իսկ սնանկանալուց հետո արդեն ի վիճակի չէի: Մտածեցի, որ ինչ արել եմ էդ երկուսի համար, հերիք է... Որոշեցի, առաջին հերթին, իմ գլուխը պահել: Սա Իվետի սրտին եկավ: Ժինետին ասել էր՝ քթից հանելու է... Չէ, ես շատ կուզեի, որ նրա ասածը ճիշտ լիներ: Էս փորձանքից ավելի հեշտ կազատվեի: Իսկ հիմա ծուղակն եմ ընկել: Խոսք եմ տվել, որ կամուսնանամ ու պիտի խոսքիս տերը լինեմ: Չգիտեմ, թե դրանից հետո ինչ կգա գլխիս: Բայց էս րոպեին ձվերս բռնել, բաց չեն թողնում:

Երբ Ֆիլմորը համար վարձեց նույն հյուրանոցում, ինչ ես, ուզած-չուզած, պիտի նրանց հաճախակի տեսնեի: Համարյա ամեն իրիկուն միասին էինք ճաշում՝ իհարկե, նախ մի քանի բաժակ պեռնո խմելով: Ամբողջ ճաշի ընթացքում նրանք բարձրաձայն կռվշտում էին: Անհարմար բան էր, որովհետև պիտի մերթ մեկի կողմը բռնեի,

մերթ մյուսի: Օրինակ, մի կիրակի, երեքով նախաճաշելուց հետո, գնացինք Էդգար Քինե բուլվարի անկյունում գտնվող սրճարան: Էս անգամ ամեն ինչ լավ էր, այ քեզ անսովոր բան: Նստել էինք ներսում, կողք կողքի դրված սեղաններից մեկին, մեջքով՝ դեպի հայելին: Մեկ էլ Ժինետի սիրաքստիկը բռնեց, թե ինչ, հիմա սիրտը փափկել է, հալվել, մի գգվել է գգվում, պաչպչում սիրեցյալին բոլորի աչքի առաջ. դե, ֆրանսիացիների համար դա շատ բնական է: Բուռն գրկախառնությունը նոր էր ավարտվել, երբ Ֆիլմորը Ժինետի ծնողների մասին ինչ-որ բան ասաց, որը սա, վիրավորանքի տեղ դնելով, սրտին առավ: Միանգամից կաս-կարմիր կտրեց: Փորձեցինք հանգստացնել, բացատրել, որ սխալ է հասկացել, իսկ հետո Ֆիլմորն ինձ անգլերեն երկու խոսք փսփսաց, թե պիտի փափուկ բարձ դնել գլխի տակ: Սա հերիք եղավ, որպեսզի նա ափերից դուրս գար: Վրա պրծավ մեզ, թե՝ ձեռ եք առնում: Ես ինչ-որ խայթիչ պատասխան տվեցի, ավելի գազազեց, Ֆիլմորն էլ ջանում էր գոնե մի բառ մեջ գցել: «Ախր շատ դյուրաբորբոք ես»,– վերջապես ասաց ու փորձեց Ժինետի այտը շոյել: Բայց սա, կարծելով, թե նա ձեռքը բարձրացրել է ապտակելու համար, տարավ-բերեց ու գյուղացու իր ծանր ձեռքով տուր թե կտաս մռութին: Մի պահ Ֆիլմորը շշմած մնաց: Չէր սպասում նման հարված, վիրավորական էր: Գույնը գցեց, իսկ հաջորդ պահին վեր թռավ տեղից ու ձեռքի ափով հո չշրմփացրե՞ց Ժինետին. մազ մնաց, որ սա ընկներ աթոռից: «Ա՛ռ: Թող դաս լինի, որ քեզ պահե՛լ իմանաս»,– ասաց նա իր կոտրտված ֆրանսերենով: Մի վայրկյան քար լռություն տիրեց: Հետո Ժինետը, պայթած փոթորկի պես, ճանկեց իր կոնյակի բաժակն ու ամբողջ ուժով շպրտեց Ֆիլմորի վրա: Բաժակը մեր հետևի հայելուն դիպավ: Ֆիլմորն արդեն բռնել էր Ժինետի թևը, բայց նա ազատ ձեռքով սուրճի բաժակն էլ ճանկեց ու գետնով տվեց: Բռնած տեղը խելագարի պես գալար-գալար էր գալիս: Մի կերպ պահում էինք: Դե իհարկե, վրա հասավ սրճարանատերն ու սկսեց մեզ դուրս անել: «Անբաննե՛ր»,– բղավեց նա: «Այո՛, անբաններ: Շա՛տ ճիշտ է,– ծղրտաց Ժինետը:– Կեղտոտ օտարականնե՛ր: Մարդասպաննե՛ր: Գանգստերնե՛ր: Հղի կնո՛ջն է խփում»:

թվայնացրել է 1915.info կայքը

Չորս կողմից թարս-թարս նայում էին մեզ. խեղճ ֆրանսուհի, երկու բոի ամերիկացու ձեռքն է ընկել: Գանգստերների: Արդեն մտածում էի, թե առանց կռիվ տալու՝ ոնց ենք գլուխներս էստեղից պրծացնելու: Ֆիլմորը պապանձվել մնացել էր: Ժինետը դուրս թռավ սրճարանից՝ թողնելով, որ իր բրդածը մենք խրթենք: Ճողոպրելիս էլ շուռ եկավ և բռունցքը բարձրացնելով՝ աղաղակեց. «Քթիցդ կբերե՛մ, անասուն: Ա՛յ, կտեսնես: Օտարականը քանի՛ գլխանի է, որ պարկեշտ ֆրանսուհուն էս օրը գցի: Չէ՛: Ո՛չ մի դեպքում»:

Սա լսելով՝ սրճարանատերը, որին արդեն վճարվել էր խմիչքի և ջարդված բաժակների համար, պարտքը համարեց ի դեմս Ժինետի՝ իր կնամեծարությունը ցուցադրել ֆրանսիացի մայրերի հիասքանչ ներկայացուցչի նկատմամբ և առանց դեսուդեն ընկնելու՝ թքեց ոտքներիս տակ ու մեզ դուրս վռնդեց: «Դե օդը մաքրե՛ք, լղպոր անբաններ»,– ֆշշացրեց նա կամ էլ սրա պես հաճելի խոսքեր:

Երբ հայտնվեցինք փողոցում ու տեսանք, որ ոչ ոք մեզ վրա բան չի շպրտում, նոր զգացի կատարվածի ծիծաղելի կողմը: Ի՛նչ հոյակապ կլիներ, մտածեցի ինձ ու ինձ, եթե էս ամենը դատաքննության նյութ դառնար: *Ծպրտից ծայր*: Իվետի պատմածներն էլ՝ վրադիր: Ի վերջո, ֆրանսիացիները հումորի զգացում ունեն: Միգուցե դատավորը, Ֆիլմորի ցուցմունքները լսելով, նրան ազատեր ամուսնանալու պարտավորությունից:

Մինչդեռ Ժինետը, դիմացի մայթին ցցված, բռունցքն էր թափ տալիս ու կոկորդով մեկ ճղավում: Անցորդները կանգ էին առնում լսելու, կամ մեկի, կամ մյուսի կողմն անցնում, ինչպես և լինում է փողոցային վեճերի ժամանակ: Ֆիլմորն անելիքը չգիտեր. թողներ գնա՞ր, թե՞ մոտենար Ժինետին ու փորձեր հանգստացնել: Փողոցի մեջտեղում ձեռքերը տարածած՝ կանգնել, ջանում էր գոնե մի խոսք ասել: Իսկ Ժինետը գոռում-գոչում էր. «Gangster! Brute! Tu verras, salaud!»[1] ու նման հաճոյախոսություններ: Վերջապես, Ֆիլմորը մի քայլ արեց դեպի նա, բայց Ժինետը, երևի կարծելով, թե նոր հարված կուտի, սկսեց արագ-արագ քայլել փողոցով: Ֆիլմորը հետ եկավ

[1] Գանգստե՛ր: Անասո՛ւն: Դու դեռ կտեսնես, խուժա՛ն (ֆրանս.):

ինձ մոտ, ասում է. «Արի սուսուփուս հետևից գնանք»: Ճամփա ընկանք, մի խումբ պարապ-սարապներ էլ՝ մեր պոչից: Մերթընդմերթ Ժինետը շուռ էր գալիս ու բռունցքը թափահարում: Մենք չէինք փորձում նրան հավասարվել, ուղղակի հետևում էինք անշտապ, որ տեսնեինք՝ ինչ է անելու: Վերջիվերջո, նա քայլքը դանդաղեցրեց, ու մենք անցանք փողոցի մյուս կողմը: Արդեն խաղաղվել էր: Մենք շարունակում էինք գնալ նրա հետևից՝ ավելի ու ավելի մոտենալով: Մի տասը հոգի դեռ կպած էին մեր պոչից. մյուսների հետաքրքրությունը կորել էր: Հենց հասանք անկյունին, Ժինետը, աննպաստելիորեն կանգնելով, սպասեց, որ մոտ գնանք իրեն:

– Ես կխոսեմ,– ասաց Ֆիլմորը,– խելքի բերելու ձևը գիտեմ:

Երբ մոտեցանք Ժինետին, արցունքները հոսում էին աչքերից: Անձամբ ես գաղափար չունեի, թե ինչ կարելի էր նրանից սպասել: Մի քիչ զարմացա, երբ Ֆիլմորը մոտիկացավ ու նեղացած ձայնով վրա բերեց.

– Դա անելու բա՞ն էր: Ինչի՞ քեզ էդպես պահեցիր:

Ժինետն իսկույն ևեթ նրա վզով ընկավ ու սկսեց երեխայի պես հեծկլտալ՝ փաղաքշական անուններ տալով Ֆիլմորին: Հետո ի՛նձ դարձավ աղերսագին:

– Տեսա՞ր՝ ոնց հասցրեց,– ասում է:– Բա կնոջն էդպես կվերաբերվե՞ն:

Ուր որ է պիտի վրա բերեի՝ հա, երբ Ֆիլմորը նրա թևը բռնեց ու մի կողմ տարավ:

– Հերիք եղավ,– ասաց:– Էլ չսկսես, թե չէ հենց փողոցի մեջտեղում կշրմփացնեմ:

Ես կարծեցի՝ ամեն ինչ նորից կսկսվի: Ժինետի աչքերը բոցկլտում էին: Բայց երևում էր՝ մի քիչ էլ վախենում է, որովհետև շուտ սակվեց: Ինչևէ, երբ էլի նստեցինք սրճարանում, նա հանգիստ անտրոքությամբ տեղյակ պահեց, որ թող Ֆիլմորը իզուր չհամարի, թե ամեն ինչ մոռացվեց, անցավ-գնաց, հետո՛ կերևա... միգուցե հենց էս իրիկուն:

Եվ իհարկե, խոսքի տերն եղավ: Մյուս օրը, երբ Ֆիլմորին տեսա, դեմքն ու ձեռքերը լրիվ ճանկոտված էին: Պարզվեց՝ Ժինետը

թվայնացրել է 1915.info կայքը

ապասել է, մինչև որ նա անկողին մտնի, իսկ հետո, առանց մի խոսք ասելու, մոտեցել է հանդերձապահարանին և Ֆիլմորի ունեցած-չունեցածը թափելով հատակին՝ մեկ առ մեկ վերցրել է ու բզիկ-բզիկ արել: Քանի որ նախկինում մի քանի անգամ նման բան է եղել, ու Ժինետը հետո իր պատռածը միշտ կարել է, Ֆիլմորն առանձնապես չի ընդդիմացել: Իսկ Ժինետը դրանից ավելի է գազազել: Սիրտը հովացնելու համար ճանկոտել է նրան ու շատ տեղը տեղին: Հղիությունը որոշակի առավելություն էր տալիս:

Խե՛ղճ Ֆիլմոր: Սա արդեն ծիծաղելի չէր: Ժինետը նրա ահ ու սարսափն էր դարձել: Եթե սպառնում էր, թե կփախչի, Ժինետն ի պատասխան սպառնում էր, որ նրան կսպանի: Եվ կասկած չէր թողնում, որ խոստումը կիրագործի: «Գնաս Ամերիկա,– ասում էր Ժինետը,– հետևիցդ կգա՛մ: Իմ ձեռքից չես պրծնի: Ֆրանսուհին միշտ էլ գիտի, թե ոնց վրեժ լուծի»: Իսկ հաջորդ պահին հորդորում էր «խոհեմ» լինել, «խելոք» մնալ և այլն: Կյանքն արտակարգ լավ կդասավորվի, երբ գրենական պիտույքների խանութ ունենան: Ֆիլմորը մատը մատին էլ չի խփի: Ամեն ինչ Ժինետն ինքը կանի: Իսկ նա, հետնասենյակում նստած, իր համար կգրի, կամ էլ ինչ սիրտը տա՝ թող դրանով զբաղվի:

Էս կռվշտոցն ու քաշքշուկը շարունակվեցին մի քանի շաբաթ: Ես ամեն կերպ խույս էի տալիս նրանցից. արդեն զզվել էի ու երկուսից էլ կշտացել: Հետո, մի լավ ամառային օր, երբ անցնում էի «Կրեդի Լիոնե» բանկի մոտով, մեկ էլ ո՛ւմ տեսնեմ աստիճաններից իջնելիս. Ֆիլմորին: Ջերմ բարևեցի՝ ինձ մեղավոր զգալով, որ երկար ժամանակ անտեսել եմ նրան: Պարզ հետաքրքրասիրությունը գերազանցող մտահոգությամբ հարցրի, թե ոնց են գործերը: Ֆիլմորը պատասխանեց բավական անորոշ եղանակով, իսկ ձայնի մեջ հուսահատության երանգ կար:

– Թույլ է տվել, որ բանկ գամ,– ասաց մի տեսակ տարօրինակ, վիատ, խեղճացած ձևով:– Ընդամենը մի կես ժամ ունեմ: Անընդհատ հետևում է ինձ:– Եվ նա թևս բռնեց՝ ասես ջանալով շուտափույթ մի կողմ տանել էդտեղից:

Մենք քայլեցինք դեպի Ռիվոլի փողոցը: Հիանալի օր էր՝ տաք, ջինջ, արևոտ, էն օրերից մեկը, երբ Փարիզը փայլում է իր ամբողջ շուքով: Մեղմ, հաճելի հով էր փչում, նեխահոտը քթիդ տակից քշում տանում: Ֆիլմորն առանց գլխարկի էր: Արտաքուստ առողջության մարմնացյալ պատկերն էր՝ սովորական ամերիկացի զբոսաշրջիկի նման, որը ման է գալիս փողից տոզած գրպաններով:

– Էլ չգիտեմ՝ գլուխս որ պատին տամ,– ասաց նա կամացուկ:– Մի բան արա, օգնիր: Ճար չունեմ: Ի վիճակի էլ չեմ, որ ուշքս գլուխս հավաքեմ: Եթե գոնե մի կարճ ժամանակով նրանից պրծնեի, խելքի կգայի: Բայց աչքը չի հեռացնում ինձնից: Հազիվ թույլ տվեց, որ բանկ գամ. փող պիտի հանեի: Մի քիչ քայլեմ հետդ ու վազեմ գնամ. սպասում է, որ ճաշենք:

Ես լուռումունջ լսում էի Ֆիլմորին ու մտածում. մեկնումեկը պետք է, որ նրան դուրս քաշի էս փոսից, խրվել մնացել է: Նա ամբողջովին անձնատուր էր եղել, արիության ոչ մի նշույլ չէր մնացել: Ասես երեխա լիներ, երեխա, որին ամեն օր ծեծ են տալիս, և նա արդեն չգիտի, թե ինչպես իրեն պահի, միայն կծկվում է վախից ու քծնում: Երբ մտանք Ռիվոլի փողոցի սյունաշարի տակ, նա մի երկարաշունչ հակաֆրանսիական ճառ պոռթկաց: Կուշտ էր ֆրանսիացիներից:

– Մի ժամանակ խելքս գնում էր սրանց համար,– ասաց,– բայց էդ բոլորը գրականություն էր: Իսկ հիմա լավ եմ ճանաչում... Գիտեմ՝ ինչ են իրականում: Անգութ ու շահամոլ մարդիկ են: Սկզբում ամեն ինչ թվում է հրաշալի, որովհետև ազատության զգացում ես ունենում: Իսկ որոշ ժամանակ անց դա արդեն զզվեցնում է: Ներքուստ ամեն ինչ մեռած է էստեղ. ոչ զգացմունք կա, ոչ կարեկցանք, ոչ ըներություն: Ֆրանսիացիները մինչև ուղնուծուծը եսամոլ են: Ամենաեսամո՛լ ժողովուրդն է աշխարհի երեսին: Սրանց մտքին միայն փողն է. փող, փող: Բա ինչքա՛ն էլ ձևապաշտ են ու բուրժուա: Այ, դա է ինձ հունից հանում: Երբ նրան տեսնում եմ վերնաշապիկներս կարկատելիս, ջարդը տալու ցանկություն է առաջանում: Անընդհատ՝ կար ու կարկատան: Խնայողություն, հա խնայողություն:

թվայնացրել է 1915.info կայքը

Faut faire des économies[1]! Ամբողջ օրը նրա բերանից սա եմ լսում: Չորս կողմս էլ: Sois raisonnable, mon chéri! Sois raisonnable[2]! Ես չեմ ուզում խոհեմ ու խելամիտ լինել: Ատելով ատո՛ւմ եմ: Ես ուզում եմ փողը քամուն տալ, կյանքը վայելել: Ուզում եմ մի բան անել: Չեմ ուզում նստել արճարանում ու առավոտից իրիկուն դատարկ-մատարկ դուրս տալ: Տեր Աստված, ճիշտ է, թերություններ ունենք, բայց մեր մեջ խանդավառություն էլ կա, չէ՞: Ավելի լավ է սխալվես, քան թե ոչինչ չանես: Թող ես թափառաշրջիկ լինեմ Ամերիկայում, քան թե, էստեղ նստած, հետևս մաշեմ: Միգուցե որ յանկի եմ, դա է պատճառը: Նոր Անգլիայում եմ ծնվել, իմ տեղը ծննդավայրս է: Միանգամից եվրոպացի չես դառնա: Արյանդ մեջ մի բան կա, որը քեզ ուրիշ է դարձնում: Կլիմայից է... ու մնացած բաներից: Մենք ամեն ինչ ուրիշ աչքերով ենք տեսնում: Չենք վերափոխվի, ինչքան էլ որ հիանանք ֆրանսիացիներով: Մենք ամերիկացի ենք ու ամերիկացի էլ կմնանք: Հա, ես աչքով աչք չունեմ մեր երկրի պուրիտան շների հետ, ատում եմ ամբողջ հոգով: Բայց ես էլ եմ նրանցից: Սա իմ տեղը չի: Զզվում եմ:

Ամբողջ կամարաշարքն անցնելիս Ֆիլմորը շարունակում էր էս ոգով: Ես ծպտուն չէի հանում: Թող դուրս թափեր հոգում կուտակվածը, սիրտը դատարկեր. նրան օգուտ էր: Բայց, մեկ է, մտածում էի, թե ինչ տարօրինակ է, որ մի տարի առաջ էս նույն տղան գորիլլայի պես խփում էր կրծքին ու ճչում. «Ի՛նչ հոյակապ օր է: Ի՛նչ երկիր: Ի՛նչ ժողովուրդ»: Եթե մի ամերիկացի պատահմամբ թթու խոսք ասեր Ֆրանսիայի հասցեին, Ֆիլմորը նրա քիթումռութը կջարդեր: Մի տարի առաջ պատրաստ էր մեռնել Ֆրանսիայի համար: Երբեք չէի տեսել, որ մարդ էդպես գլխակորույս սիրահարված լինի ինչ-որ երկրի, էդպես երջանիկ լինի օտար երկնքի տակ: Անբնական բան էր: Երբ նա «Ֆրանսիա» էր ասում, դա նշանակում էր գինի, կանայք, փող գրպանում, ջրի բերածն ու ջրի տարածը: Նշանակում էր ցոփություն, տոն: Իսկ հետո, երբ Ֆիլմորն արդեն մի լավ կյանք էր քաշել, երբ քամին պոկել էր վրանի ծածկը, ու

---

[1] Պետք է տնտեսե՛լ (ֆրանս.):

[2] Խոհեմ եղիր, սիրելիս, խոհե՛մ (ֆրանս):

երկինքն էր բացվել, նա տեսել էր, որ դա ոչ թե կրկես է, այլ ասպարեզ, ինչպես ամենուրեք: Եվ դաժան ասպարեզ, գրողը տանի: Փառահեղ Ֆրանսիային, ազատությանն ու մնացած քար ու քացախին ձոնված ֆիլմորյան ներբողները լսելիս ես հաճախ էի մտածում, թե ինչ կարծիք կկազմեր ֆրանսիացի աշխատավորը, եթե հասկանար նրա խոսքերը: Զարմանալի չի, որ ֆրանսիացիները մեզ խելառի տեղ են դնում: Մենք, իրոք, խելառ ենք նրանց աչքին: Անխելք երեխեք: Տարիքն առած ապուշներ: Մեր պատկերացրած կյանքը կրպակից ջրի գնով առած ռոմանտիկա է: Իսկ մեր խանդավառությո՞ւնն ինչ է: Կամ էժանագին ռոմանտիզմը, որից ամեն մի եվրոպացու սիրտը խառնում է: Պատրանք է: Չէ, «պատրանքը» շատ լավ բառ է դրա համար: Պատրանքն ինչ-որ նշանակություն ունի: Խոսքը ոչ թե պատրանքի մասին է, այլ *խաբկանքի:* Իսկական խաբկանքի, ահա թե ինչ: Մենք նման ենք վայրի ձիերի երամակի, ակնակալները՝ աչքներիս: Մոլեգնահար: Խուճապավազ: Անդունդի եզրին: Ի վա՛ր: Ինչ ուզում է լինի, միայն թե թափ ու խռովք բերի: Առա՛ջ: Առա՛ջ: Մեկ է, թե ուր: Եվ միշտ՝ փրփուրը բերանին: «Ալելո՛ւյա» կանչելով: *Ալելո՛ւյա:* Ինչի՞ համար: Աստծուն է հայտնի: Սա մեր արյան մեջ է: Կլիմայից է: Հազար ու մի բանից: Սա նաև վերջն է: Մենք փուլ ենք ածում ամբողջ աշխարհը: Բայց չգիտենք՝ ինչի համար: Մեր ճակատագիրն է: Իսկ մնացածը քաք է սովորական...

«Պալե Ռուայալ»-ի մոտ ես առաջարկեցի դադար առնել ու մի բան խմել: Ֆիլմորը մի պահ տատանվեց: Տեսա՝ ժինետն է մտքում, ճաշը, թուքումուրը, որ պիտի ուտի:

– Աստծու սիրուն,– ասացի,– գոնե մի րոպե մտքիցդ հանիր նրան: Մի բան պատվիրեմ, խմենք, ուզում եմ, որ խմես: Չանհանգստանաս, ես քեզ կազատեմ էդ ոռի պատմությունից:– Ու ես երկու բաժակ թունդ վիսկի պատվիրեցի:

Երբ վիսկին բերեցին, Ֆիլմորն ինձ ժպտաց էլի երեխայի պես:

– Գլխիդ քաշիր,– ասացի,– մեկն էլ կպատվիրենք: Օգուտ է քեզ: Թքած, թե բժիշներն ինչ են բարբաջում. սա է, որ կա, լավ կլինի: Դե, գլխիդ քաշիր:

թվայնացրել է 1915.info կայքը

Ֆիլմորը դատարկեց բաժակը, և երբ մատուցողը գնաց ևս մեկը բերելու, նա արտասվակալած աչքերով ինձ նայեց, կարծես ես վերջին ընկերը լինեի, որ մնացել էի աշխարհում: Շրթունքները մի թեթև դողում էին: Նա ինչ-որ բան էր ուզում ինձ ասել ու չգիտեր, թե ինչից սկսեր: Ես հանգիստ նայում էի նրան, ասես չնկատեի լուռ թախանձանքը, իսկ հետո, ափսեները մի կողմ հրելով, կոթնեցի սեղանին ու լրջորեն հարցրի.

– Լսիր, Ֆիլմոր, *միգուցե* ի՞նչ է ուզում, որ անես: Ասա ինձ:

Արցունքները ցայտեցին նրա աչքերից, տարավ-բերեց՝ թե.

– Ուզում եմ տուն գնալ, մերոնց մոտ: Ուզում եմ, որ չորս կողմս անգլերեն խոսեն:

Արտասուքը հոսում էր երեսն ի վար: Սրբելու փորձ էլ չէր անում: Թողնում էր, որ կուտակվածը դուրս հորդեր: Տեր Աստված, մտածեցի ինձ ու ինձ, ինչ լավ է էապես թեթևանալը: Ինչ լավ է կյանքում գոնե մի անգամ կատարյալ վախկոտ լինելը: Ինքն իրեն էապես բաց թողնելը: Հոյակապ է, հոյակա՛պ: Արտասվախեղդ Ֆիլմորի տեսքը ինձ մի տեսակ ուժ ներշնչեց, հանկարծ զգացի, որ ուզածդ խնդիրն ի վիճակի եմ լուծել: Քաջ ու վճռական դարձա: Հազարավոր մտքեր էին գլխումս պտտվում:

– Լսիր,– ասացի՝ էլ ավելի թեքվելով նրա կողմը,– եթե մտքինդ իրոք դա է, էդպես էլ արա... Ինչո՞ւ չես գնում: Գիտե՞ս՝ ինչ կանեի, եթե քո տեղը լինեի: Հենց էսօր էլ կգնայի: Հա, արևս վկա, հաստատ բան եմ ասում... Հենց հիմա էլ կպոկվեի՝ առանց նույնիսկ հրաժեշտ տալու նրան: Ըստ էության, քո հեռանալու միակ ձևը դա է. նա երբեք չի թողնի, որ իրեն հրաժեշտ տաս: Դու էլ գիտես:

Մատուցողը վիսկին բերեց: Ես տեսա, թե Ֆիլմորն ինչ հախուռն անհամբերությամբ ձեռքը մեկնեց ու բաժակը տարավ շուրթերին: Տեսա հույսի ցոլքը նրա աչքերում՝ դեռ հեռավոր, խոլ, անխոհեմ: Գուցե նա արդեն տեսնում էր իրեն Ատլանտիկան անցնելիս: Իսկ ինձ ամեն ինչ հեշտից էլ հեշտ էր թվում, դատարկ բան: Մեր անելիքը միանգամից գծագրվեց իմ գլխում: Քայլ առ քայլ: Պարզ ու հստակ:

– Ո՞ւմ փողն է բանկում,– հարցրի,– հո՞ր փողը, թե՞ քոնը:

թվայնացրել է 1915.info կայքը

– Իմն է,– բացականչեց նա:– Մայրս է ուղարկել: Նրա քնձոտ փողն ինձ պետք չի:

– Շատ լավ,– ասացի:– Դե լսիր, ուրեմն տաքսի ենք նստում ու վերադառնում բանկ: Փողը մինչև վերջին սենթը հանում ես: Հետո գնում ենք Բրիտանիայի հյուպատոսարան ու վիզա ստանում: Էսօր ևեթ նստում ես գնացք ու մեկնում Լոնդոն: Իսկ Լոնդոնից հենց առաջին նավով ճանապարհվում ես Ամերիկա: Էս դեպքում անհանգստանալու հարկ չկա, թե նա հետքդ կգտնի: Մտքով երբեք էլ չի անցնի, թե դու Լոնդոնով ես գնացել: Եթե սկսի փնտրել քեզ, իհարկե, նախ՝ Հավր կնետվի կամ Շերբուր... Մի բան էլ. ունեցածչունեցածդ չես վերցնի: Թող ամեն ինչ էստեղ մնա: Նրա մոտ: Ֆրանսիացու իր մտածելակերպով նա կյանքում չի պատկերացնի, թե դու կճողոպրես՝ առանց պայուսակի կամ ուղեբեռի: Հավատը չի գա: Ֆրանսիացու խելքին երբեք չի փչի նման բան անել... եթե քեզ պես ցնդած չլինի:

– Ճի՛շտ է,– գոչեց Ֆիլմորը:– Ո՞նց գլխի չեմ ընկել: Դու ունեցածչունեցածս հետո կուղարկես, էլի... եթե տա՛: Ասենք, կարևոր չի արդեն: Տեր Աստված, գլխարկ էլ չեմ վերցրել:

– Գլխարկն ինչի՞դ է պետք: Կհասնես Լոնդոն, ինչ որ պետք է՝ կառնես: Իսկ հիմա քեզ մնում է շտապել: Պիտի պարզենք, թե գնացքը երբ է շարժվում:

– Լսիր,– ասաց նա՝ դրամապանակը հանելով,– բեր ամեն բան թողնեմ քեզ վրա, հա՞: Առ, վերցրու սա ու ինչ պետք է՝ արա: Ես ուժ չունեմ... Գլուխս պտտվում է:

Ես վերցրի դրամապանակն ու դատարկեցի ամբողջ պարունակությունը, որ Ֆիլմորը նոր էր հանել բանկից: Մայթեզրին տաքսի էր կանգնած: Նստեցինք: Գնացքը Հյուսիսային կայարանից շարժվում էր ժամը չորսի մոտերքը: Սկսեցի գցել-բռնել. բանկ, հյուպատոսարան, «Ամերիքըն էքսպրես», կայարան: Ընտի՛ր է: Կհասցնենք:

– Քեզ թափ տուր,– ասացի:– Վեր-վեր էլ չթռչես: Վայ, քո, մի քանի ժամից Լա Մանշը անցնելիս կլինես: Իրիկունը ման կգաս Լոնդոնում ու մի կուշտ անգլերեն կլսես: Իսկ վաղն արդեն բաց ծով կմտնես,

թվայնացրել է 1915.info կայքը

ու պրծավ գնաց, ազատ մարդ ես, ոչ մի բանն էլ տանձիդ չես դնի: Մինչև հասնես Նյու Յորք, սա արդեն վատ երազ կթվա, ուրիշ ոչինչ:

Ֆիլմորը հուզմունքից իրեն կորցրեց, ոտքերն էր ջղաձգորեն շարժում, ասես միտք ուներ տաքսու մեջ վազել: Բանկում ձեռքն էնպես էր դողում, որ հազիվ ստորագրեց: Միակ բանը, որ չէի կարող նրա համար անել, իր տեղը ստորագրելն էր: Բայց, իմ կարծիքով, եթե պետք լիներ, զուգարան էլ կնստեցնեի ու քամակը կսրբեի: Հաստատ որոշել էի նրան ուղարկել, թեկուզ ստիպված լինեի երկու տակ ծալել ու ճամպրուկում տեղավորել:

Ընդմիջման ժամ էր, երբ Բրիտանիայի հյուպատոսարան հասանք, դրա համար էլ փակ էր: Պիտի մինչև երկուսը սպասեինք: Ժամանակը սպանելու համար, ուտելուց բացի, միտքս ուրիշ բան չեկավ: Ֆիլմորը, իհարկե, սոված չէր: Նա կողմ էր, որ մի-մի բրդուճ բան ուտեինք: «Ի՞նչ ծայրիս բրդուճ,– վրա տվեցի:– Մի կարգին պատիվ կտաս ինձ: Քո վերջին ճաշկերույթը կլինի Փարիզում, միգուցե երկար հիշես»: Նրան տարա մի հարմարավետ փոքրիկ ռեստորան ու ճոխ սեղան պատվիրեցի, ճաշացուցակի լավագույն գինիներն էլ հետը՝ անկախ գնից ու համից: Նրա ամբողջ փողը գրպանումս էր, մի կույտ փող, ինչպես թվում էր ինձ: Ինչ խոսք, առաջ երբեք էսքան փող ձեռքս չէր ընկել: Հազար ֆրանկանոց մանրելը իսկական վայելք էր: Նախ՝ պահեցի լույսի դեմ, որ գեղեցիկ ջրանիշը տեսնեմ: Այ, սիրուն փո՛ղ: Հազվագյուտ բաներից մեկը, որ ֆրանսիացիները փառավորապես են անում ու գեղարվեստական շնչով՝ ասես խոր խանդաղատանք տածելով անգամ խորհրդանիշի հանդեպ:

Ճաշից հետո գնացինք սրճարան: Շարտրյոզ պատվիրեցի և սուրճ: Ի՞նչ կա որ: Մի թղթադրամ էլ մանրեցի՝ էս անգամ հինգ հարյուր ֆրանկանոց: Մաս-մաքուր էր, նոփ-նոր ու ճոճոռան: Հաճույք էր նման փողի հետ գործ ունենալը: Իսկ մատուցողի բերած մանրը կեղտոտ, հին թղթադրամներ էին՝ սոսնձած թղթի շերտիկների կարկատաններով: Մի խուրձ հինգ ու տասը ֆրանկանոցներ հավաքվեցին, ահագին էլ՝ մանրուք: Մեջտեղը ծակ չինական փող: Արդեն չգիտեի, թե որ գրպանս դնեի: Շալվարս տրաքվում էր մետաղադրամներից

ու թուղթ փողից: Մի քիչ անհարմար էի զգում էդ ամբողջ հարստությունը մարդկանց աչքի առաջ հանելիս: Վախենում էի, որ մեզ խարդախների տեղ դնեին:

Երբ «Ամերիքըն էքսպրես» հասանք, անտեր մնացածն արդեն քիչ ժամանակ ունեինք: Անգլիացիներին հատուկ թաթսան դանդաղկոտության պատճառով փշերի վրա էինք նստած: Իսկ էստեղ բոլորն ասես սահեին անվաչմուշկներով: Էնքան վոազկոտ էին, որ ամեն բան երկու անգամ էր արվում: Երբ ինչքան կտրոն կար՝ ստորագրված էր ու մի կոկիկ, փոքր թղթապանակի մեջ իրար կցված, պարզվեց, որ Ֆիլմորը սխալ տեղ է ստորագրել: Ամեն ինչ նորից սկսելուց բացի, ոչինչ չէր մնում: Ես, նրա գլխավերևում կանգնած, մի աչքս՝ ժամացույցին, հետևում էի գրչի բոլոր շարժումներին: Փողից բաժանվելը ցավոտ էր: Փառք Աստծու, ամբողջը չտվեցինք, բայց՝ մեծ մասը: Գրպանումս մնաց մոտ 2 հազար 500 ֆրանկ: Ասում եմ՝ մոտ, որովհետև փողն արդեն ֆրանկով չէի հաշվում: Հարյուր, երկու հարյուր ավել կամ պակաս՝ արդեն նշանակություն չուներ, հեչ պետքս էլ չէր: Ինչ վերաբերում է Ֆիլմորին, էս ամբողջ ընթացքում նա շլմորած էր: Չգիտեր էլ՝ ինչքան փող ուներ: Միայն գիտեր, որ պիտի մի բան թողնի Ժինետին: Դեռ վստահ չէր՝ ինչքան. դա կայարանի ճամփին էինք հաշվարկելու:

Հուզմունքից մոռացանք ամբողջ փողը փոխել: Բայց արդեն տաքսիում էինք, էլ կորցնելու ժամանակ չկար: Հարկավոր էր պարզել մեր վիճակը: Երկուսս էլ հապշտապ դատարկեցինք գրպաններս ու սկսեցինք փողը բաժին անել: Մի մասը թափվել էր հատակին, մյուս մասն էլ նստատեղին էր: Շշկլվել էինք. էլ ֆրանսիական փող, էլ ամերիկյան, էլ անգլիական: Մանր-մունրն էլ՝ վրադիր: Քիչ էր մնում մետաղադրամները հավաքեի ու պատուհանից դուրս լցնեի. գործը հեշտացնելու համար: Վերջը ամեն ինչ ջոկջկեցինք. անգլիական ու ամերիկյան փողը նա՛ վերցրեց, իսկ ես՝ ֆրանսիականը:

Ժինետի հարցը պիտի շուտափույթ լուծվեր. ինչքան ենք թողնում նրան, ինչ ենք ասում և այլն: Ֆիլմորն անկապ բաներ էր դուրս տալիս, որ նրան փոխանցեի. իբր սիրտը կոտրելու միտք չի ունեցել ու չգիտես, թե ինչ: Ստիպված էի ընդհատել:

թվայնացրել է 1915.info կայքը

– Նրան ասելու հաշվով դու անհոգ մնա,– վրա բերեցի:– Դա կմնա ինձ: Ավելի լավ է ասա՝ ինչքան ես *թողնում* նրան: Չնայած ինչի՞ ես թողնում որ:

Ֆիլմորի քամակի տակ կարծես ռումբ պայթեր: Մի հեկեկո՜ց դրեց: Ի՞նչ աղի արտասուք է թափում: Առաջվանից էլ՝ վերան: Կարծեցի՝ ուր որ է ուշաթափ կընկնի ձեռքերիս: Առանց երկար-բարակ մտածելու՝ առաջարկեցի.

– Լավ, լավ, արի ամբողջ ֆրանսիական փողն իրեն տանք: Միառժամանակ հերիք կանի:

– Իսկ ինչքա՞ն է,– հարցրեց Ֆիլմորը նվաղուն ձայնով:

– Ի՞նչ իմանամ, մի 2 հազար կլինի, էլի: Ամեն դեպքում, նրան էդքանն էլ է շատ:

– Աստծու սիրուն, էդպես մի՛ ասա,– աղերսեց Ֆիլմորը:– Վերջի-վերջո, ես ստորություն եմ անում նրա հանդեպ: Ծնողները է՛լ չեն ընդունի նրան: Չէ, տուր իրեն: Ինչ կա-չկա՝ տուր մինչև վերջ... Թքած՝ ինչքան էլ որ լինի:– Նա թաշկինակ հանեց արցունքները սրբելու համար:– Ի՞նչ անեմ:– ասաց:– Չեմ դիմանում:

Ես լուռ մնացի: Հանկարծ Ֆիլմորն ամբողջ հասակով ձգվեց,– մտածեցի՝ նոպա բռնեց, թե ինչ,– ասում է.

– Տեր Աստված, իմ կարծիքով՝ պիտի հետ դառնամ: Հա, հետ դառնամ, թեկուզ աչքերս հանի: Եթե նրան մի բան պատահի, ինձ երբեք չեմ ների:

Ես քար կտրեցի:

– Մեղա՛ քեզ, Աստված,– բացականչեցի,– չլինեմ-չիմանա՛մ: Էլ ի՞նչ: Արդեն շատ ուշ է: Դու պիտի գնացք նստես, իսկ նրա հոգսը ես կքաշեմ: Հենց քեզ ճանապարհեմ, անմիջապես կգնամ մոտը: Այ խելքի տոպրակ, չե՞ս հասկանում. նա վերջդ կտա, եթե իմանա, որ փորձել ես փախչել: Էլ չես կարող հետ դառնալ: Որոշված է:

Իբր ի՞նչ *պիտի* լինի որ, հարցրի ինքս ինձ: Ինքնասպա՞ն է լինելու: Tant mieux[1].

[1] Ավելի լավ (ֆրանս.):

Երբ հասանք կայարան, դեռ մի քսան րոպե կար մլուլ տալու: Սիրտ չէի անում Ֆիլմորին գնաս բարով ասել: Դատելով նրա վիճակից՝ վերջին պահին, մեկ էլ տեսար, ցած թռավ գնացքից ու վազեց Ժինետի մոտ: Ամեն ինչ կարող էր նրան ճամփից շեղել: Թեկուզ մի ծեղ: Դրա համար էլ քարշ տվեցի տարա դիմացի բարն ու ասացի.

– Այ, հիմա պեռնո կխմես, *վերջին* պեռնոդ, ես էլ կվճարեմ... քո փողով:

Էս խոսքերիս վրա նա տարակուսանքով նայեց ինձ: Մի մեծ կում արեց պեռնոյից, իսկ հետո, ծեծված շան պես դառնալով իմ կողմը, ասաց.

– Գիտեմ, իզուր եմ էդ ամբողջ փողը վստահում քեզ, բայց... բայց... Ահ, դե լավ, քո իմացածն արա: Ուղղակի չեմ ուզում, որ նա ինքնասպան լինի, էդքան բան:

– *Ինքնասպան լինի՞*,– հարցրի:– Նրանից ի՞նչ ինքնասպան: Շատ մեծ կարծիքի ես քո մասին, եթե հավատում ես դրան, հա: Ինչ մնում է փողին, հեչ չէի ուզի նրա ձեռքը տալ, բայց խոստանում եմ, կգնամ ուղիղ փոստատուն ու հեռագրով կուղարկեմ: Ոչ մի վայրկյան ավել մոտս չեմ պահի:– Էստեղ աչքս բացիկներով պտտանին ընկավ: Մեկը պոկեցի, Էյֆելյան աշտարակի նկարն էր, ու Ֆիլմորին ստիպեցի, որ մի երկու խոսք գրի:– Ասա, որ արդեն նավի վրա ես: Ասա՝ սիրում ես իրեն ու տեղ հասնելուն պես կկանչես... Դա էլ օդաճնշական փոստով կուղարկեմ: Իսկ իրիկունը կհանդիպեմ նրան: Ամեն ինչ կարգի կընկնի, այ, կտեսնես:

Փողոցն անցնելով՝ վերադարձանք կայարան: Գնացքի շարժվելուն ընդամենը երկու րոպե էր մնացել: Ջգում էի. արդեն վտանգ չկար: Ուղեփակոցի մոտ թփթփացրի նրա ուսին ու գնացքը մատնացույց արի: Ձեռքը չսեղմեցի. կսկսեր թնգթնգալ, կառչել ինձ: Պարզապես ասացի.

– Շո՛ւտ արա: Մի րոպեից կշարժվի:

Եվ տեղնուտեղը շուռ գալով՝ հեռացա: Նույնիսկ հետ չնայեցի, որ տեսնեմ՝ գնացք նստեց, թե չէ: Վախենում էի:

թվայնացրել է 1915.info կայքը

Ֆիլմորին ճանապարհ գցելիս չէի մտածում, թե ինչ պիտի անեի նրա գնալուց հետո: Շատ խոստումներ էի տվել նրան, բայց միայն հանգստացնելու համար: Իսկ Ժինետին երես առ երես հանդիպելուց պակաս ահ չունեի, քան Ֆիլմորը: Ավելին, խուճապի էի մատնվում: Ամեն ինչ էնքան արագ կատարվեց, որ բանի էությունը անհնար էր լիովին ըմբռնել: Կայարանից դուրս եկա մի տեսակ հաճելի ընդարմացման մեջ՝ բացիկը ձեռքիս: Կանգնեցի մի լապտերասյան մոտ ու կարդացի: Անմտություն էր: Նորից կարդացի՝ համոզվելու համար, որ երազ չեմ տեսնում, իսկ հետո պատռեցի բացիկն ու գցեցի առուն:

Շուտ եկա անհանգիստ, ասես սպասում էի, թե Ժինետը՝ տոմսահավկը ձեռքին, վրա կհասնի: Ոչ ոք չկար թիկունքիս: Անշտապ քայլեցի դեպի Լաֆայետ հրապարակ: Հիանալի օր էր, ինչպես ասել եմ արդեն: Երկնքում թեթև ամպաքուլաներ էին լողում: Սրճարանների հովանիները փոփոում էին քամուց: Փարիզը երբեք էապես հրապուրիչ չէր թվացել ինձ: Համարյա ափսոս եկավ, որ էն խեղճին ճանապարհ էի դրել էստեղից: Լաֆայետ հրապարակում նստեցի եկեղեցու դիմաց ու աչքերս հառեցի ժամացուցավոր աշտարակին: Ճարտարապետության հրաշակերտ նմուշ չէր, բայց թվատախտակի կապույտը միշտ թովում էր ինձ: Էսօր է՛լ ավելի լուրթ էր, քան երբևէ: Աչք կտրել չէր լինում:

Եթե Ֆիլմորի գժությունը չբռներ, ու նա Ժինետին նամակ չգրեր՝ ամեն ինչ բացատրելով, բնավ հարկ չկար, որ սա կատարվածն իմանար: Թեկուզև պարզեր, թե Ֆիլմորը 2 հազար 500 ֆրանկ է թողել իրեն, չէր կարող ապացուցել: Ես միշտ էլ կպնդեի, որ դա Ֆիլմորի մոգոնածն է: Եթե մարդ էնքան խելքից թեթև է, որ վեր է կենում ու նույնիսկ առանց գլխարկի՝ ճամփա ընկնում Ամերիկա, ուրեմն 2 հազար 500 ֆրանկի պատմություն էլ կբստրի, ինչ ասես էլ: Բայց տեսնես ինչքա՞ն է թողել: Գրպաններս կախ էին ընկել ծանրությունից: Հանեցի ամբողջ փողն ու սկսեցի ուշի-ուշով հաշվել: Ուղիղ 2 հազար 875 ֆրանկ էր և 35 սանտիմ: Իմ կարծածից էլ շատ էր: Հարկավոր էր ազատվել 75 ֆրանկ 35 սանտիմից: Թող կլորիկ գումար լիներ՝ մաքուր 2 հազար 800 ֆրանկ: Հենց էդ պահին տաքսի մոտեցավ

մայթեզրին: Մի կին դուրս եկավ՝ սպիտակ պուդելը ձեռքին. շունն էլ չիշիկ էր անում նրա մետաքսե զգեստին: Շանը մեքենայով ման տալու միտքը վրդովեց ինձ: Մտածեցի՝ ես սրա շնից ինչո՞վ եմ պակաս, ու նշան անելով տաքսիստին՝ պատվիրեցի, որ ինձ տանի Բուլոնյան անտառ: Հարցրեց՝ կոնկրետ որտե՞ղ: «Մեկ է,- ասացի:- Քշեք, պտույտներ կտանք, ու մի շտապեք, ես վռազելու բան չունեմ»: Հետ ընկա ինձ համար, սկսեցի նայել կողքովս սահող շենքերին, ելուստավոր տանիքներին, ծխնելույզներին, ներկված պատերին, միզաններին, գլխապտույտ խաչմերուկներին: «Ռոն Պուեն»-ի մոտով անցնելիս որոշեցի իջնել, ջուր թափել էնտեղ: Էլ չեմ ասում, որ միգուցե մեկնումեկը պատահեր: Վարորդին խնդրեցի սպասել: Կյանքումս առաջին անգամ ինձ մեքենա էր սպասում, մինչև ջուր կթափեի: Ինչքա՞ն է ծախսվում որ: Մի մեծ բան չի: Գրպանիս փողով երկու տաքսի էլ հանգիստ կսպասեցնեի:

Չորս կողմը պրպտեցի, բայց ոչ մի պիտանի բան աչքովս չընկավ: Իմ ուզածը դեռ ձեռնեձեռ չընկած թարմություն էր, ասենք, Ալյասկայից կամ Վիրգինյան կղզիներից եկած աղջիկ: Մաքուր, թարմ մորթ՝ իր բնական բուրմունքով: Ինչ ասել կուզի, նման բան շուրջը չէր երևում: Դե, շատ չհիասթափվեցի: Տանձիս՝ կգտնեմ, թե չէ: Կարևորը՝ մարդ քիթը չկախի: Ամեն ինչի ժամանակն էլ կգա:

Հաղթական կամարն էլ անցանք: Տեսարժան վայրերի մի քանի սիրահար պտտվում էին Անհայտ զինվորի աճյունի շուրջը: Բուլոնյան անտառում աչքս լիմուզիններով շրջող հարուստ պցերի վրա էր: Վզվզում էին կողքովդ. կարծես թե գնալու տեղ ունեին: Դա, իհարկե, երևելի տեսք ընդունելու համար էր, մեկ էլ՝ արար աշխարհին ցույց տալու, թե ինչ սահուն են ընթանում իրենց «ռոլս ռոյս»-երն ու «իսպանո սյուիզա»-ները: Իսկ իմ ներսում ամեն ինչ շատ ավելի սահուն էր ընթանում, քան ուզածդ «ռոլս ռոյս»: Ուղղակի թավշապատ էի ներքուստ: Գլխուղեղի թավշե կեղև, թավշե ողեր: Եվ նույնիսկ թավշե անվաքսուք, ա՛յ քեզ բան: Ինչ լավ է, որ թեկուզ կես ժամով փողի տեր ես դառնում ու հարբած նավաստու պես ունեցածդ մսխում: Ասես աշխարհը քեզ տան: Իսկ որ ամենաերանելին է, չգիտես էլ՝ ինչ անես: Կուզես՝ թիկն տուր քեզ համար, ու թող հաշվիչն աշխատի

թվայնացրել է 1915.info կայքը

կատաղի արագությամբ, թող քամին մազերդ խառնշտի, կուզես՝ տաքսին կանգնեցրու, մի բաժակ բան գցիր, կուզես՝ ահագին թեյափող տուր ու քեզնից գոհ գնա, իբր սովորական բան է: Բայց հեղաշրջում չես անի: Ներսիդ *ամբողջ* կեղտը չես մաքրի:

Երբ հասանք Պորտ դ'Օթոյ, քշել տվեցի Սենի կողմը: Սևրի կամրջին իջա և գետափով քայլեցի դեպի Օթոյի ուղանցույցը: Էստեղ Սենը վտակի չափ նեղանում է, և ծառերն աճում են հենց ափեզրին: Ջուրը կանաչ էր ու հայելանման, մանավանդ մյուս ափի մոտ: Երբեմն առ երբեմն գետանավ էր փնչալով անցնում: Կիպ վարտիքներով լողորդները, կանաչին կանգնած, արևահարվում էին: Ամեն ինչ մոտ էր ու տրոփուն, թրթռում էր վառ լույսի տակ:

Բացօթյա գարեջրատան մոտով անցնելիս սեղան նստած մի խումբ հեծանվորդների տեսա: Տեղավորվեցի կողքի սեղանին, մի բաժակ գարեջուր էլ ե՛ս պատվիրեցի: Նրանց շաղակրատանքը լսելիս մի պահ Ժինետը միտքս եկավ: Պատկերացրի՝ ոնց է սենյակում իրեն պատեպատ տալիս, մազերը փետում, հեծեծում ու բառաչում կենդանու նման: Պատկերացրի Ֆիլմորի գլխարկը կախիչին: Տեսնես նրա հագուստ-կապուստը ինձ վրա կլինի՞: Մի ռեգլան վերարկու ուներ՝ շատ էի հավանում: Է՛, Ֆիլմորն արդեն հեռու է: Շատ չանցած՝ նավը կճոճվի ոտքի տակ: Անգլերե՞ն: Սիրտն անգլերե՞ն էր ուզում: Բա՞ն է մտածել:

Հանկարծ գլխի ընկա, որ եթե ցանկություն ունենայի, ես էլ կարող էի Ամերիկա գնալ: Առաջին անգամ էր նման առիթ ներկայանում: Հարցրի ինձ. «Կուզե՞ս գնալ»: Պատասխան չեղավ: Մտքերս թռան դեպի ծովը, այլ եզերք, որտեղ, մի վերջին հետադարձ հայացք նետելով, տեսել էի ձյան փաթիլների տարափի տակ անհետացող երկնաքերները: Պատկերացրի, որ նորից են նշմարվում բանդագուշանքի նման, ինչպես իմ հեռանալիս: Տեսա դրանց կողերի արանքից սողոսկող լույսերը: Տեսա իմ առաջ սփռված ամբողջ քաղաքը՝ Հարլեմից մինչև Բաթերի, մրջյուններով ծեփ տված փողոցները, սուրացող վերգետնյա գնացքները, ամբոխից դատարկվող թատրոնները: Ցրված մտածեցի՝ տեսնես կի՞նս ինչ եղավ:

Երբ ամեն բան մաղվեց հուշիկ ու գլխովս անցավ գնաց, մեծ խաղաղություն իջավ իմ հոգուն: Էստեղ, ուր գետն անխռով ու ոլոր-ոլոր հոսում է բլրաշարքի միջով, հողն անցյալով է հագեցած. ինչքան էլ միտքդ հեռուն գնա, անկարելի է էս հողը մարդկության ակունքներից տարանջատել: Տեր Աստված, ի՛նչ ոսկեշող անդորր է ցոլում աչքիս առաջ, միայն ջղագարի խելքին կփչի գլուխը շրջել: Սեննն էնքան հուշիկ է հոսում, որ հազիվ ես գետի ներկայությունը նկատում: Նա միշտ էստեղ է՝ հուշիկ ու աննշմար, մարդու մարմնով անցնող մեծ զարկերակի նման: Հրաշալի անդորրով պարուրված՝ ինձ թվում էր, թե բարձր լեռան կատարն եմ մագլցել և, վերջապես, ի վիճակի եմ մի պահ շուրջս նայել, հասկանալ բնապատկերի իմաստը:

Մարդ արարածները տարօրինակ ֆլորա և ֆաունա են կազմել: Հեռվից աննշան են երևում, իսկ մոտիկից կարող են այլանդակ ու չարակամ երևալ: Նրանք ամենից շատ բավարար տարածությամբ շրջապատված լինելու կարիք ունեն. տարածությունը ժամանակից էլ շատ է կարևորվում:

Մայրամուտ է: Զգում եմ այս գետի հոսքը իմ միջով՝ նրա անցյալը, հինավուրց հողը, փոփոխական կլիման: Բլուրներն անխռով շարվել են գետի շուրջը. նրա ընթացքը մշտատև է:

թվայնացրել է 1915.info կայքը

Ման Ռեյ. «Հենրի Միլերը և Մարգարեթ Նայմանը», 1942

ՎԵՐՋԱԲԱՆ

1934-ին Փարիզում հրապարակվելուց հետո «Խեցգետնի արևադարձին» վիճակված էր ամբողջ երեսուն տարի, պոռնոգրաֆիայի իարանով, պաշտոնապես մերժված մնալ ինչպես Միացյալ Նահանգներում, այնպես էլ Մեծ Բրիտանիայում և Կանադայում:

Ճիշտ է, ԱՄՆ-ի մաքսային ծառայությունը արգելել էր գրքի ներմուծումը երկրի տարածք, բայց Միլերի վեպի հազարավոր օրինակներ, մասնավորապես ուսանողների ջանքերով, մաքսանենգորեն մուտք էին գործում գրողի հայրենիք: 30-ականներին նույն մաքսանենգ ճանապարհով Փարիզից բերված վեպը վաճառվում էր Մանհեթենի Graham Book Mart հայտնի գրախանութում, որի տնօրենի՝ Ֆրենսիս Սրեդովը, ի վերջո, կանգնեց դատարանի առաջ: Իսկ 1940-ին գրավաճառ և հրապարակիչ Ջեյքոբ Բրաուերը համարձակվեց, թեև հեղինակային իրավունքի խախտմամբ, լույս ընծայել գիրքը, որի վերջին էջում որպես հրապարակության վայր նշված էր ոչ թե Նյու Յորքը, այլ Մեխիկոն: Բայց այս ապակողմնորոշիչ խորամանակությունը չփրկեց Բրաուերին. «Խեցգետնի արևադարձի» և օրալ սեքսի ձեռնարկի՝ Գերշոու Լեգմանի «Օրագենիտալիզմ» գրքի առաջին մասի տպագրության համար նա դատապարտվեց եռամյա բանտարկության:

Բրաուերի անփառունակ փորձից մեկ տասնամյակ անց Սան Ֆրանցիսկոյի Քաղաքացիական ազատությունների ամերիկյան միության փնօրեն Էռնեստ Բեսիգը, փորձելով ԱՄՆ ներքերել ոչ միայն «Խեցգետնի արևադարձը», այլև Միլերի մյուս վեպը՝ «Այծեղջյուրի արևադարձը», կեղիք կվեց այս վեպերի դեմ հարուցված առաջին դատավարությանը: Երբ մաքսավորները, վկայակոչելով ԱՄՆ-ի

թվայնացվել է 1915.info կայքի

օրենսդրության 1305-րդ հոդվածը, բռնագրավեցին գրքերը. Բեսիգը հայց ներկայացրեց կառավարությանը: Մինչ գործը կհասներ դատարան, նա թույլտվություն խնդրեց օգտագործել 19 գրականագետների վկայությունները, որոնք հաստատում էին «վեպերի գրական արժեքը և Միլերի վարկը՝ որպես լուրջ գրողի»: Բայց դատավոր Լուիս Գուդմանը մերժեց միջնորդությունը, և 1951-ին դատարանը՝ նրա նախագահությամբ, Միլերի գրքերը համարեց անպարկեշտ: Գուդմանի եզրափակիչ հայտարարության մեջ ասվում էր, որ «եթե նման գրականությունը կարելի լինի երկիր ներմուծել, ապա մարդկային արժանապատվությունն ու անաղարտ ընտանեկան արժեքները՝ այն հենքը, որի վրա խարխսվում է հասարակությունը, կորստի կմատնվեն»: Բեսիգը, իհարկե, դատավճիռը բողոքարկեց վճռաբեկ դատարանում, մինչդեռ ապարդյուն. 1953-ին Միլերի վեպերը վերստին «անպարկեշտ» պիտակին արժանացան: Շրջանային դատավոր Ալբերտ Լի Ստիվենսն այս գործերը կոչեց «բարոյապես անանկ նվաստացյալ մարդու անվայել լրտանք»:

Բնավ հաշվի չնստելով ամերիկյան արդարադատության այրերի անվերապահ կարծիքի հետ՝ Grove Press հրատարակչությունը 1961-ին, վերջիվերջո, տպագրեց «Խեցգետնի արևադարձը» լիովին օրինական ճանապարհով: (Փաստորեն Հենրի Միլերն արդեն 70 տարին էր բոլորում, երբ նրա առաջին վեպը լույս տեսավ իր հայրենի երկրում): Մոտ երկու միլիոն օրինակ վաճառվեց, բայց շուրջ երեք քառորդ միլիոն էլ վերադարձվեց հրատարակչությանը: Ավելի քան վաթսուն դատական գործեր հարուցվեցին և՛ հրատարակչության, և՛ գրավաճառների դեմ տասնյակ նահանգներում, իսկ վեպն արգելելու պահանջով ներկայացված քաղաքացիական հայցերին, ասում են, թիվ ու հաշիվ չկար: Որոշ վայրերում գիրքն իբր հոժարակամ, բայց իրականում սպառնալիքների ազդեցության տակ հանվում էր վաճառքից: Ի պատիվ Grove Press-ի պետք է ասել, որ հրատարակչությունը սատար էր կանգնում բոլոր մեղադրված գրավաճառներին: Մինչ Կալիֆորնիայում, Մասաչուսեթսում, Նյու Ջերսիում կամ Վիսքոնսինում «Խեցգետնի արևադարձը» անվայել չճանաչվեց,

Փենսիլվանիայի գերագույն դատավոր Մայքլ Մաուլաուն միջնադարյան հավատաքննիչի անողոքությամբ ազդարարեց, թե Միլերի վեպը «գիրք չէ, աղբահոր է, բաց կոյուղի, քայքայման անդունդ, ամեն զազրանքի նողկալի հավաքածուն մարդկային անառակության թափոնքի մեջ»:

Միայն 1964-ի հունիսի 22-ին էր, որ ԱՄՆ-ի Գերագույն դատարանի վճռով (հինգ ձայն՝ ընդդեմ չորսի) անպարկշաճության մեղադրանքը վերջապես հանվեց «Խեցգետնի արևադարձի» վրայից: Դատավոր Ուիլյամ Ջ. Բերնանը հայտարարեց, թե «սեքսի հետ կապված նյութերը, որոնք գաղափարների քարոզման նպատակ ունեն, գեղարվեստական, գիտական արժեք կամ հասարակական նշանակություն, չեն կարող դատապարտվել որպես անպարկշաճ»:

«Խեցգետնի արևադարձի» դատական ողիսականը հասավ իր ավարտին՝ սկիզբ դնելով 20-րդ դարի ամենաուշագրավ գրական գործերից մեկի լեգենդին, որի աղմուկը չի մարել մինչև օրս:

Հարգելի ընթերցող, այս գրքի էլեկտրոնային տարբերակը ստեղծել է 1915.info կայքը: Եթե ցանկանում եք որևէ գրքի էլեկտրոնային տարբերակ և չեք կարողանում գտնել այն, կարող եք դիմել մեզ:

Ջ. Բ.

թվայնացրել է 1915.info կայքը

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Էջ 3

Էմիլ Շնելոք (1890 – 1958) – գերմանական ծագումով ամերիկացի նկարիչ. Միլերի մտերիմ ընկերը դեռ պատանեկան տարիքից: Թեև ընդամենը մեկ տարով էր մեծ Միլերից, ավելի շատ ուսուցչի դեր է խաղացել նրա կյանքում: Շնելոքը, որ Եվրոպայում էր արվեստ ուսանել, նպաստել է Միլերի գեղագիտական հայացքների ընդլայնմանը, նրան ոգեշնչել Փարիզով, գրելաոճի հղկման ջատագովն ու գրաքննադատը եղել: Նրանք միասին էին շախմատ խաղում, միասին գնում սիրային ժամադրությունների, իսկ երբ Միլերը, բրուքլինյան մի հանրախանութի ցուցափեղկում Ուիլյամ Թըրների նկարների վերատպությունները տեսնելով, համակվեց նկարելու ցանկությամբ, Շնելոքն սկսեց նրան նկարչական դասեր տալ և ամեն կերպ խրախուսել: «Խեցգետնի արևադարձի» առաջին էսքիզը Միլերը Փարիզից հենց Շնելոքին է ուղարկել ի պահ: Նա հարյուրավոր նամակներ է գրել ընկերոջը, որտեղ հաճախ ուրվագծվել են միլերյան ապագա գրքերի մտահղացումները: 1922-34 թթ. գրված փարիզյան ուղերձները հրատարակվել են Միլերի «Նամակներ Էմիլին» գրքով (1989): Ավելի քան քառասուն տարվա այս ընկերությունն ընդհատեց Շնելոքի մահը: Նրա համեստ հուշագրությունը Միլերի մասին՝ «Ուղղակի բրուքլինցի տղա» վերնագրով, տպագրվել էր դեռ մահից առաջ՝ 1945-ին:

«Մղոնք կամ Այս հեթանոս աշխարհը» – Միլերի առաջին գիրքը (1927), որը մնացել է անտիպ մինչև 1992-ը: Ջունը՝ Միլերի կինը, հարուստ երկրպագու էր գտել, որը համաձայն էր ֆինանսավորել նրա ամուսնու գրքերը՝ ճիշտ է, կարծելով, թե հեղինակը Ջունն է: Դրա համար էլ Միլերը «Մողոք»-ի համահեղինակությունը զիջեց Ջունին: Ձեռք բերած փողով նրանք մեկնեցին Կանադա՝ Քվեբեկում և Մոնրեալում շրջելու:

«Ուեսթերն Յունիոն» - դրամական փոխանցման ծառայություններ մատուցող ամերիկյան ընկերություն:

«Գժված աքլորը» - Միլերի երկրորդ գիրքը, որ գրվել է 1928-30 թթ., բայց մնացել անտիպ մինչև 1960 թ.: Այս ինքնակենսագրական վեպում դրսևորվել է Միլերի արտնեղանքն ու զայրույթը երկրորդ կնոջ՝ Ջունի և բոհեմական միջավայրում Մառա անունով հայտնի նկարչուհի ու բանաստեղծուհի Ջին Կրոնսկու լեսբիական կապի առնչությամբ, որը սկիզբ առավ 1926-ին: Նյու Յորքում Մառան սկսեց ապրել Միլերների հետ, իսկ 1927-ի ապրիլին Ջունի հետ փախավ Փարիզ, որտեղից երկու ամիս անց Ջունն ամուսնու մոտ վերադարձավ՝ առանց ընկերուհու: Հենց Ջունն էլ Միլերին համոզեց սկսած վեպն ավարտելու համար մեկնել Փարիզ:

Ջուն Էդիթ Սմիթ կամ Ջուն Մենաֆիլդ Միլեր (իսկական անուն ազգանունը՝ Ջուլիետ Շմերտ, 1902 - 1979) - Հենրի Միլերի երկրորդ կինն ու մուսան, որը գրողի ձևավորման վրա ունեցած իր ազդեցությամբ դարձել էր նրա «էներգետիկ համահեղինակը»: Ծնվել է Բուկովինայում (Ավստրո-Հունգարիա), թերևս հրեական ծագում ունի: Հինգ տարեկանում ծնողների հետ տեղափոխվել է Նյու Յորք (հենց այստեղ էլ նրանց ազգանունը, ամերիկանացվելով, վերածվել է Սմիթի): Տասնմեկ տարով փոքր էր Միլերից, նրանք ծանոթացել էին պարասրահում, որտեղ ուսումը կիսատ թողած Ջունը վարձու պարընկերուհի էր: Համայված Միլերը, 1924-ին բաժանվելով առաջին կնոջից՝ Բեատրիս Սիլվազ Ուիքենզից, ամուսնացավ Ջունի հետ: Բոհեմական կյանքով ապրող այս հախուռն զույգի ամուսնությունը պաշտոնապես շարունակվեց մինչև 1934-ը, երբ Միլերին արդեն լիովին գրավել էր Անայիս Նինը: «Խեցգետնի արևադարձի» հրատարակման տարին Մեքսիկայում լիազորագրով ձևակերպված ապահարզանը ողբերգություն էր Ջունի համար: Երկրորդ ամուսինը՝ զիվորական սպա Սթրեթֆորդ Քորբեթը, 1947-ին լքեց նրան՝ մատնելով ծանր կացության: Ըստ էության, նախկին կնոջը նյութապես օգնում էր արդեն ճանաչման հասած Միլերը: 50-ականներին Ջունը բուժվում էր հոգեկան խանգարումներից: 1961-ին երբեմնի ամուսինները նորից հանդիպեցին, բայց այդ հանդիպումը ծանր տպավորություն թողեց Միլերի վրա. երբեմնի ճակատագրական կնոջից ավերակ էր մնացել: 60-ականների վերջին Ջունը փոխադրվեց եղբոր մոտ՝ Արիզոնա, որտեղ էլ գոյատևեց մինչև կյանքի վերջը:

Մարսել Պրուստ (1871 - 1922) - ֆրանսիացի գրող, 20-րդ դարի գրականության խոշորագույն դեմքերից մեկը:

թվայնացրել է 1915.info կայքը

Բրուքլին – Նյու Յորքի ամենախիտ բնակեցված շրջանը Լոնգ Այլենդ կղզու արևմտյան մասում, որտեղ, տարագիրների խայտաբղետ միջավայրում, անցել է Հենրի Միլերի մանկությունը:

Էջ 4

Քուինս – Նյու Յորքի ամենամեծատարած շրջանը՝ Լոնգ Այլենդ կղզու վրա:

«Դիցանուշների թագուհին» – անգլիացի բանաստեղծ, Շեքսպիրի ժամանակակից Էդմունդ Սփենսերի (1552 – 1599) այլաբանական ասպետական պոեմը (1590):

Էջ 5

«Այծեղջյուրի արևադարձը» – Միլերի վեպը (հրատարակվել է 1938-ին Փարիզում, մինչև 1964-ը արգելված եղել ԱՄՆ-ում), որ ինքնակենսագրական եռերգություն է կազմում «Խեցգետնի արևադարձի» (1934) և «Սև գարնան» (1936) հետ:

«Վարդաբեղ խաչելություն» – Միլերի երկրորդ եռերգությունը, որի մեջ մտնում են «Սեքսուս» (1949), «Պլեքսուս» (1953) և «Նեքսուս» (1960) գործերը:

Էջ 6

«Երիտասարդ արվեստագետի դիմանկարը» – Ջեյմս Ջոյսի (1882 – 1941) անդրանիկ, կիսաինքնակենսագրական վեպը, որ գրվել է 1907-14 թթ.:

«Ի որոնումն կորսուցյալ ժամանակի» – Մարսել Պրուստի գլխավոր ստեղծագործությունը, յոթ վեպից կազմված վիպաշար, որը տպագրվել է 1913-27 թթ., 16 հատորով, ընդսմին՝ վերջին 6-ը՝ հեղինակի մահից հետո:

Էջ 7

Անայիս Նին (լրիվ անունը՝ Անիեզա Անայիս Խուանա Անտոլինա Ռոսա Էդելմիրա Նին-ի-Կուլմել, 1903 – 1977) – ֆրանսիական և ամերիկյան գրող, էրոտիկ երկերի հեղինակ, հայտնի է նաև իր օրագրով, որը վարել է ավելի քան 60 տարի: Ծնվել է Փարիզի մոտակայքում, կուբացի ծնողներից (հայրը դաշնակահար և կոմպոզիտոր Խոակին Նինն էր, որի հետ Անայիսն արյունապիղծ կապ է ունեցել, մայրը՝ ֆրանս-դանիական ծագումով երգչուհի Ռոսա Կուլմելը): Դեռատի տարիներին Նյու Յորքում բնորդուհի է եղել: 1923-ին Հավանայում ամուսնացել է բանկիր Հյու Փարքեր Գիլերի՝ հետագայում փորձարարական ֆիլմերի հեղինակ Ջան Հյուգոյի հետ, տարվել գրական գործունեությամբ: 1931-34 թթ. մեծ դեր է խաղացել Հենրի Միլերի կյանքում, դարձել նրա սիրուհին, հովանավորն ու մուսան: «Խեցգետնի արևադարձը» առաջին անգամ լույս է տեսել ոչ միայն Նինի գործուն

մասնակցությամբ, այլև նախաբանով: Երկրորդ աշխարհամարտի շեմին ամուսնու հետ տեղափոխվել է Նյու Յորք, որտեղ, ի դեպ, նկարահանվել է մի քանի ֆիլմում: 1955-ին նորից է ամուսնացել, այս անգամ՝ իրենից 16 տարով փոքր գրական գործակալ Ռութերթ Փոլի հետ, ընդ որում՝ առանց առաջին ամուսնուց բաժանվելու: Նինի ստեղծագործությունների զգալի մասը, այդ թվում՝ 40-ականներին գրված «Վեներայի դելտան», «Թռչնակները» էրոտիկ պատմվածքների ժողովածուները, նամակագրությունը Հենրի Միլերի հետ, ինչպես նաև «Հենրին և Ջունը» օրագրությունը՝ իր, Միլերի ու նրա կնոջ սիրային եռանկյունու մասին, տպագրվել են հետմահու, իսկ վերջինս 1990-ին նույն վերնագրով էկրանավորվել է ամերիկացի ռեժիսոր Ֆիլ Քաուֆմանի կողմից:

Ռիչարդ Օզբորն - Հենրի Միլերը ընկերը, փաստաբան, National City ամերիկյան բանկի փարիզյան մասնաճյուղի աշխատակից, որը 1930-ին նրան ապաստան էր տվել Օգյուստ Բերթոլդի փողոցի իր բնակարանում: Օզբորնը «Խեցգետնի արևադարձում» հանդես է գալիս Ֆիլմոր ազգանվամբ, որը Միլերի բրուքլինյան մանկության տարիներին նրա սիրած փողոցի՝ Ֆիլմոր Փլեյսի անունն է: Անայիս Նինը, որի հետ Օզբորնը ծանոթացրեց Միլերին, բանկի նրա տնօրենի՝ Հյու Գիլերի կինն էր:

Դեյվիդ Հերբերթ Լորենս (1885 – 1930) – անգլիացի գրող, 20-րդ դարի առաջին կեսի խոշորագույն գրական դեմքերից: Նրա հոգեբանական վեպերը՝ «Ծիածանը» (1915), «Սիրահարված կանայք» (1917), գրաքննչական արգելքների բախվեցին, և հիասթափված Լորենսն ընդմիշտ հեռացավ հայրենիքից: 1928-ին հրապարակված նրա վերջին վեպը՝ «Լեդի Չաթըրլիի սիրեկանը», անվայել գրքի համարում ձեռք բերեց և Մեծ Բրիտանիայում լույս տեսավ միայն 1960-ին: Հենրի Միլերին Լորենսի ստեղծագործության հետ ծանոթացրել է Անայիս Նինը: 1932-ին հրատարակած նրա առաջին գիրքը, որ գրվել էր 16 օրում, «Դ. Հ. Լորենս. ոչ մասնագիտական ուսումնասիրություն» վերնագիրն ուներ:

Միլերն ինքը հենց նոր քննախուզություն էր կատարել Լուիս Բունյուելի «Ոսկեդարի» վերաբերյալ... - խոսքը Սամյուել Փաթնեմի («Խեցգետնի արևադարձում» հայտնվում է հարբեցող Մարլոուի կերպարանքով) խմբագրությամբ Փարիզում լույս տեսնող «Նյու ռևյու» գրական հանդեսում 1931-ին տպագրված «Բունյուել, կամ Արդ ամենուր վրա հասավ ոսկեդարի ավարտը» պաշտպանական հոդվածի մասին է: Հենց այս հրապարակման շնորհիվ էլ Միլերն ու Նինը հանդիպեցին: Ռիչարդ Օզբորնը Միլերի հոդվածը ցույց

թվայնացրել է 1915.info կայքը

տվեց Անայիսին, որն իր ստացած մեծ տպավորության մասին օրագրում գրեց. «Դա նման էր Տյուիլրիի այգիների մեջտեղում կատաղի թմբկահարություն լսելուն»: Նա հոդվածագրին և Օզբորնին հրավիրեց իր տուն:

«Ոսկեդարը»՝ իսպանացի մեծ ռեժիսորի (1900 - 1983) երկրորդ սյուրռեալիստական կինոնկարը (1930, մասամբ մարքիզ դը Սադի «Սոդոմի 120 օրը» վեպի հիման վրա), Սալվադոր Դալիի հետ ձեռնարկած նրա երկրորդ նախագիծն էր «Անդալուսյան շունը» համատեղ ժապավենից (1929) հետո, բայց մինչև բանը կհասներ նկարահանմանը, նրանք գժտվեցին, և Դալին չմասնակցեց ֆիլմի ստեղծմանը: «Ոսկեդարը», ընկալվելով որպես հակակղերական գրոհ, էլ ավելի մեծ սկանդալի տեղիք տվեց, քան «Անդալուսյան շունը», և ոստիկանությունն արգելք դրեց ցուցադրության վրա, մի արգելք, որը ձգվեց կես դար:

Էջ 8

Ռընե Ֆեյիքս Էժեն Ալանդի (1889 - 1942) - ֆրանսիացի հոմեոպաթ բժիշկ և հոգեվերլուծող, Փարիզի հոգեվերլուծական ընկերության հիմնադիրներից, մի շարք աշխատությունների հեղինակ: Թատրոնի մեծ նորարար Անտոնեն Արտոյի բարեկամն էր ու բժիշկը, իսկ Ալանդիի մյուս խնամյալներից էին սյուրռեալիստ գրող Ռընե Կրևելը և Անայիս Նինը, որը նրան մանրամասն նկարագրել է իր օրագրում:

Օտտո Ռանք (իսկական ազգանունը՝ Ռոզենֆելդ, 1884 - 1939) - հրեական ծագումով ավստրիացի հոգեվերլուծող, Զիգմունդ Ֆրոյդի հետևորդներից մեկն ու նրա մերձավոր բարեկամը, որին Ֆրոյդը վերաբերվում էր որպես որդու: Զբաղվել է երազների տեսությամբ՝ վերջինս համադրելով դիցաբանության և գեղարվեստական ստեղծագործության հետ: Ֆրոյդի հետ գժտվելուց հետո 30-ականների սկզբին հոգեվերլուծող է աշխատել Փարիզում, 1935-ին տեղափոխվել ԱՄՆ:

Մոնա - Միլերի կինը՝ Ջունը, այս անվամբ է հանդես գալիս «Խեցգետնի արևադարձում»: Մոնա անունը, ամենայն հավանականությամբ, Միլերը քաղել է աստվածիմացական ուսմունքի մեծ տիկնոջ՝ Ելենա Բլավատսկայայի (1831 - 1891) գլխավոր գրքից՝ «Գաղտնի վարդապետությունից» (1888), որով հիացած էր: Այստեղ արծարծվող հիմնական թեմաներից մեկը գաղտնախորհուրդ բուդդայականության մեջ արտացոլված վերամարմնավորման գաղափարն է և սրա հետ կապված «մոնադ» հասկացությունը: Մոնադն այն միավորյալ ինքնությունն է, որը պահպանվում է բազմակի վերամարմնավորումների շղթայում: Շարունակ վերամարմնավորվելով՝ մենք

տարբեր կյանքեր ենք ապրում և տարբեր անհատականություններ ստանում: Իսկ մոնադը մեր նախորդ կյանքերի համակցությունն է մեկ ինքնության մեջ, բայց ոչ հոգին, այլ միայն մեր հոգու հաջորդական երկրային մարմնավորումների հավաքական ինքնությունը: Հոգու նպատակը, վերամարմնավորումների շրջապտույտից ազատվելով, աստվածայինին վերամիանալն է: Դրան հասնելու համար հոգին պետք է անջատվի մոնադից: Բլավատսկայան բոլոր տեսակի մոնադներից բարձր է դասում «լուսնային մոնադը», որն ամենից շատ է իրավասու իբրև մարդ արարած մարմնավորվելու՝ ի տարբերություն առավել ցածրակարգ կենդանական, բուսական կամ հանքային ձևերի: Այսպիսով, ավելի հավանական է, որ «լուսնային մոնադի» հոգևոր զարգացումը, ի վերջո, հանգեցնի հոգու ազատմանն ու վերադարձին դեպի աստվածայինը: Բայց Մոնայի և մոնադի համահնչյունության հետ մեկտեղ՝ վեպի հերոսուհու անունը հնչյունական նմանություն ունի և moon (լուսին) բառին: Աննկատ չի մնացել, որ Միլերի վեպերում շատ հատվածներ կան, որտեղ նա կնոջը լուսնի հետ է կապակցում, և հաճախ լուսնի այդ հիշատակումները զուգորդվում են մահվանը. լուսինն անկենդան երկնային մարմին է, սեփական լույսը չունի, այլ միայն արևի գունատ արտացոլքը: Բլավատսկայայի ուսմունքի համաձայն՝ վերամարմնավորման շղթայի մեջ բանտվելը նման է հոգևոր մահվան, մինչդեռ այդ շղթայից ազատվելը բերում է հոգևոր կյանքի: Սա միլերյան այլաբանության մեկնաբաններին դրդել է եզրակացնել, թե Ջունի կամ Մոնայի կերպարի խորհրդանշական իմաստն այն է, որ նա խոչընդոտում է Միլերի հոգևոր ազատագրմանը, հետևաբար մահվան մարմնացումն է: Հետաքրքիր է, որ Ջունի ազգանունը ևս առնչվում է մահվանը. նրա իսկական ազգանունը Շմերտ էր, որը, ինչպես ինքն է նշել, հիշեցնում է «մահ» լեհերեն բառը: Ջունը Մենսֆիլդ (Mansfield) ազգանունն էր ընտրել իր համար, քանի որ դա գերեզմանատան իմաստին ամենից մոտ բառն էր անգլերենում. man's field բառացիորեն նշանակում է «մարդու դաշտահովիտ»: (Մեկ այլ մեկնակերպով՝ ազգանվան փոփոխության էր դրդել Գրինիչ Վիլիջի արվեստագետների շրջանում պաշտամունքային գրող դարձած նորզելանդուհի Քեթրին Մենսֆիլդի մահը 1923-ի սկզբին): Ինչևէ, Ջունն անչափ վրդովված էր «Խեցգետնի արևադարձում» ամուսնու կերպարանագծած իր դիմանկարից: «Ես հիշում եմ, թե ինչպես ցնցվեցիր գրքի առաջին էջերը կարդալուց հետո,- գրել է Միլերը վեպի վերջնական տարբերակից դուրս թողնված մի հատվածում:- Դու չցնցվեցիր միայն.

թվայնացրել է 1915.info կայքը

ոռնացիր: Ամենակեղտոտ, ամենադաժան խոսքերն արտասանեցիր, որ երբևէ լսել էի: Դու ինձ կսպաներիր քո ասածներով, եթե շարունակեիր ևս հինգ րոպե խոսել: Դու ճչացիր, որ կուզենայիր մի դանակ վերցնել ու վերջս տալ, որ դանակը դեռ լավ էր ինձ համար...»:

Էջ 9

... *Միլերի արեղծած կերպարը շատ բանով իր հակոտնյան է:* – Գրողը ինքն էլ է խոստովանել, որ իր դիմանկարը ճշմարտացի չէ: Անայիս Նինին ուղղված մի նամակում Միլերը գրել է. «Ես մի հրեշավոր կերպար եմ ստեղծել իմ գրքերում և նրան անունս տվել. նա դև է, անտաշ, սրիկա... Դա առավելապես չափազանցություն է և հոխորտանք, հասկանո՞ւմ ես: Այդ կերպարը ես եմ ու ես չեմ: Ասես երկու Հենրի Միլեր կան»:

Ումբլի Բոլդ (1902 - 1990) - ամերիկացի լրագրող և արձակագիր, որը դարձել է «Խեցգետնի արևադարձի» տպավորիչ կերպարներից մեկը: Հայրենի Չիկագոյի համալսարանն ավարտած Բոլդը թափառել էր երկրով մեկ, մերթընդմերթ լրագրությամբ զբաղվել, իսկ 1929-ին, հայտնվելով Փարիզում, որպես սրբագրիչ ընդունվեց «Չիկագո Թրիբյուն» թերթի եվրոպական հրատարակության խմբագրատուն, որտեղ նրա գործընկերը Հենրի Միլերն էր: Շուտով Բոլդն սկսեց հանդես գալ «Բոհեմի կյանքը (Ձախ ափին ապրելիս)» ամենշաբաթյա խորագրով, որը հեգնոտ սրամտությամբ ու նրբաոճ մեկնաբանություններով անդրադառնում էր ավանգարդի դեմքերին ու գրողներին, ցուցահանդեսներին, պարային ելույթներին ու երեկույթներին: Սամյուել Փաթնեմի (որը վեպում Մարլոուն է. տե՛ս էջ 61-ի ծանոթագրությունը) բնորոշմամբ, «ոչ մի այունակագրի երևի այնքան ագահորեն չեն կարդացել, որքան Բոլդին: Նրա ոճը «Տղամարդիկ գերադասում են շիկահերներին» ֆիլմի և «Նյու Յորքեր»-ի միջև ինչ-որ տեղ էր՝ մերթ-մերթ Ջեյմս Ջոյսին և այուրեալիստներին հատուկ պոռթկումներով: Դա, իրոք, արտասովոր խառնուրդ էր, որի նմանը ոչ նախկինում է եղել, ոչ էլ՝ հետագայում»: Փաթնեմի նկարագրությամբ, Ումբլի Բոլդը շարունակ շրջում էր «թեթևակի հարբած ուրվականի պես, ոչինչ չտեսնելով, ոչինչ չլսելով, բայց ամեն ինչի մասին գրելով»: Նրա ամենահայտնի հոդվածը թերևս Միլերի դիմանկարն է, որ հրապարակվել է 1931-ին: Երբեմն Միլերը ինքն էր Բոլդի փոխարեն գրում նրա այունակը, բայց անկախ դրանից, սա առաջին հրատարակված գրառումն է Միլերի մասին և որսացել է նրա անհատականությունը. «Միլերը կատակախոսության որդին չէ: Նա Մոնպառնասի օրինական զավակն է, թաղամասի աղը: Նա ներկայացնում է

այդ թաղամասի դասական գույնը, որը չի խամրել Մյուրժեից (19-րդ դարի ֆրանսիացի գրող, «Տեսարաններ բոհեմի կյանքից» գրքի հեղնակը.- Ջ. Բ.) և մյուս լավատեսներից հետո: Լավ բառ է՝ esprit[1]»: Ումբլի Բոլդն իր խորագիրը վարեց մինչև 1933-ը. երբ «Թրիբյունը» ձուլվեց «Նյու Յորք հերալդ»-ի եվրոպական հրատարակությանը, նա վերադարձավ ԱՄՆ: 1987-ին Օհայոյում լույս տեսավ Բոլդի երբեմնի հոդվածների ժողովածուն՝ «Ձախ ափին. 1929-1933» վերտառությամբ՝ կրկին հավաստելով նրա սուր դիտողականությունն ու բոհեմական Փարիզի էությունը յուրօրինակ լեզվով դրոշմելու ձիրքը: Ինչ վերաբերում է իր գրոտեսկային պատկերմանը «Խեցգետնի արևադարձում», 60-ականներին, երբ վեպի վրա դրված արգելքը հանվեց Ամերիկայում, Բոլդը հայտարարեց Միլերի մասին. «Ես պետք է իրոք դատի տայի նրան Վան Նորդենի կերպարանքի տակ ինձ տարփամոլ ներկայացնելու համար»:

Մայքլ Ֆրենքել (1896 – 1957) – ամերիկացի գրող, հրատարակիչ, Միլերի փարիզյան շրջանի ընկերներից և բարերարներից, որի մոտ՝ Սյորա վիլլայում, նա առժամանակ ապաստանել էր 1931-ին և 1934-ին: «Խեցգետնի արևադարձում» Ֆրենքելը Բորիսի կերպարի նախատիպն է: Ծնվել է Լիտվայում, հրեական ծագումով ծնողներից, 6 տարեկանում Նյու Յորք տեղափոխվել: 1916-ից զբաղվել է գրավաճառությամբ, կարողության տեր դարձել և գրելու ցանկությամբ տարված՝ 1926-ին մեկնել է Փարիզ: Չորս տարի անց հայրենակցի՝ Ուոլթեր Լոուենֆելզի հետ (որը, իր հերթին, Քրոնստադտի նախատիպն է «Խեցգետնի արևադարձում». տե՛ս էջ 17-ի ծանոթագրությունը) հիմնել է «Կարֆուր պրես» ինքնաֆինանսավորվող հրատարակչությունը: Նրանց տպագրած առաջին գրքույկը «Անանուն հեղինակ. անանունության անհրաժեշտությունը» վերնագրով մանիֆեստ էր, որտեղ հավաստիացվում էր, թե գրողը պետք է թաքնվի իր բառերի հետևում: Սրան հաջորդեց Ֆրենքելի ստեղծագործությունը՝ «Վերթերի կրտսեր եղբայրը», որը լույս տեսավ հենց անանուն: Միլերը տպավորված էր այս գործից և հետաքրքրվում էր Ֆրենքելի մահվան տեսությամբ, իսկ Ֆրենքելը դեռ 1929-ից սևեռված էր մահվան թեմայի վրա և շարունակ խոսում էր դրա մասին: 1936-ին լույս տեսած նրա բանաստեղծությունների ժողովածուն վերնագրված էր «Մահը սենյակում»: Նույն տարի հրատարակվեց և «Պոռնկորդի մահը. մի գաղափարի ինքնակենսագրություն»-ը, որին, ինչպես և, ի դեպ, «Խեցգետնի արևադարձին», գրախոսությամբ արձագանքեց հետագայում

---

[1] Ոգի (ֆրանս.):

թվայնացրել է 1915.info կայքը

նշանավոր գրող Ջորջ Օրուելը: 1939-ին այս շարքը համալրեց «Մահը բավական չէ. գործուն բացատման փորձեր» գիրքը, իսկ 1946-ին՝ "Death" («Մահ») գրական հանդեսը, որը Ֆրենքելը տպագրում էր Հարի Հերշկովիցի համագործակցությամբ: Նա համատեղ գրական նախագիծ ուներ և Միլերի ու Ալֆրեդ Փերլեսի հետ. 1935-ին, սեպտեմբերյան մի օր խմելիս, նրանք հղացան իրենց հազար էջանոց «Համլետը», որը պիտի կազմված լիներ նամակներից: Նոյեմբերին սկիզբ առած նամակագրությունն ընդհատվեց 1938-ին՝ ճեղքվածք թողնելով Միլերի և Ֆրենքելի հարաբերությունների մեջ: Այդ նամականին ամբողջությամբ հրատարակվեց տասնմեկ տարի անց: Իսկ 1932-ին Անայիս Նինը դիմեց Ֆրենքելին՝ առաջարկելով, որ նրա «Կարֆուր պրես»-ը ֆիննասվորի «Խեցգետնի արևադարձի» հրատարակությունը, մինչդեռ Ֆրենքելի ֆիննասներն սպառվել էին՝ դրդելով նրան նորից դիմելու գրավաճառության: Նա Միլերին խոստացավ գիրքը Բելգիայում տպագրել, բայց Լոուենֆելզի հետ ծագած գժտության պատճառով այդ միտքը մոռացվեց: Անկախ այս ամենից. Միլերը ջերմությամբ ու հիացմունքով է արտահայտվել Ֆրենքելի մասին. որն «այնքան արհամարհված էր, թյուր հասկացված, այնքան տանջահար ու անբաժան իր ներքին հակասություններից»: Ըստ Միլերի՝ «Ֆրենքելը շատ կենդանի մարդ» էր՝ «Սուրբ հոգին ներսում», և «եթե նույնիսկ մահվան փիլիսոփա» էր, «ավելի շատ» էր կյանքով շնչում, քան «այդ ամբողջ ամբոխը՝ միասին վերցրած»: Ուոլթեր Լոուենֆելզի և Հաուարդ Մքքորդսի գիրքը նրա մասին վերնագրված է նույն ոգով՝ «Ֆրենքելի մահվան կյանքը. կենսագրական հետաքննություն» (1970):

Էջ 11

Քնութ Համսուն (իսկական անուն ազգանունը՝ Քնուդ Պեդերսեն, 1859 – 1952) – հոչակավոր նորվեգացի գրող, Նոբելյան մցանակի դափնեկիր (1920):

Բրաասայ (իսկական անուն ազգանունը՝ Դյուլա Հալաս, 1899 – 1984) – 1924-ից Փարիզում հաստատված հունգարացի լուսանկարիչ, քանդակագործ, նկարիչ, որի մայրը հայուհի էր: Հարել է սյուրռեալիստներին: Միլերի բարեկամ Բրասային մեծ ճանաչում բերեց առաջին իսկ լուսանկարչական ալբոմը՝ 1933-ին լույս տեսած «Գիշերային Փարիզը», որտեղ զետեղված 60 գործերում նրան հաջողվել էր որսալ քաղաքի էությունը: Միլերին հոգեհարազատ էր Բրասայի սերը գիշերային Փարիզի հանդեպ, և նա հոդված տպագրեց ալբոմի մասին: «Ի դեմս սիրելի Հալասի ես գտել եմ իմ նմանակին,–

մի առիթով ասել է Միլերը,- ինձ նման շրջմոլիկի»: Բրասայը հուշերի երկու գիրք է լույս ընծայել նրա մասին:

Սյունգա - կերպարվեստի ուկիյո-է ուղղության էրոտիկ փորագրանկար, որը տարածված էր Էդո դարաշրջանի միջնադարյան Ճապոնիայում: «Սյունգա»-ն թարգմանաբար նշանակում է «գարնանային նկար». «գարուն» հիերոգլիֆը Ճապոնիայում մեղմասացություն էր սեռական ոլորտը մատնանշելու համար:

Ասամբլաժ - այս տերմինը գրականագիտության մեջ կիրառվում է՝ մատնանշելով տեքստի կառուցման կոլաժային սկզբունքը, երբ համակցվում են արդեն գոյություն ունեցող կամ մեջբերվող տեքստեր՝ գոյացնելով գրողին անհրաժեշտ նոր համատեքստ:

Ջեք Քահան (1887 - 1939) - Ռումինիայում ծնված տարագիրների ընտանիքից սերող անգլիացի հրատարակիչ և գրող: 1929-ին Փարիզում հիմնել է Obelisk Press հրատարակչությունը՝ մասնագիտանալով «կեղտոտ գրքերի» լույսընծայման մեջ, ընդ որում՝ լուրջ գործերը համատեղելով ակնհայտ գրական աղբի հետ: Ի տարբերություն մյուս հրատարակիչների չվախենալով դատական հետապնդումից՝ Քահանը, «Խեցգետնի արևադարձից» բացի, հրատարակել է Լորենսի «Լեդի Չաթըրլիի սիրեկանը» և Ջեյմս Ջոյսի որոշ ստեղծագործություններ:

Լուիզ Դե Սալվո (ծն. 1942) - Նյու Ջերսիում ապրող ամերիկացի գրականագետ, խմբագիր, պրոֆեսոր: Զբաղվել է իտալա-ամերիկյան մշակույթով և Վիրջինիա Վուլֆի ստեղծագործությամբ, բազմաթիվ գրքերի հեղինակ է: Նրա ամենաճանաչված աշխատանքներից մեկը «Գրելը՝ որպես ամոքման միջոց. թե ինչպես են մեր արած պատմությունները վերափոխում մեր կյանքը» ուղեցույցն է գրողների համար (2000):

Էջ 13

Ռալֆ Ուոլդո Էմերսոն (1803 - 1882) - ամերիկացի դասական գրող և փիլիսոփա, տրանսցենդենտալիզմի հետևորդ:

Էջ 14

Ման Ռեյ (իսկական անուն ազգանունը՝ Էմանուել Ռադնիցկի. 1890 - 1976) - ամերիկացի մոդեռնիստ լուսանկարիչ, ինչպես և նկարիչ ու կինոռեժիսոր: Սերում է Ռուսաստանից գաղթած հրեաների ընտանիքից. ստեղծագործական կյանքի մեծ մասն անցկացրել է Փարիզում: Թեև ամենից առաջ իրեն համարում էր նկարիչ և նշանակալից նպաստ է բերել դադաիզմին ու սյուրռեալիզմին, ավելի շատ ճանաչված է իր

թվայնացրել է 1915.info կայքը

ավանգարդիստական լուսանկարչությամբ: 40-ականների սկզբին Լոս Անջելեսում շփվել է Հենրի Միլերի հետ, լուսանկարել նրան և հետագայում նամակագրություն ունեցել:

Մարգարեթ Նայման (1912 – 1993) – ամերիկացի գրող Գիլբերթ Նայմանի (1912 – 1993) կինը, ջրանկարչուհի: Նայման ամուսինները Միլերի բարեկամներն էին, 1944-ին նրա երրորդ ամուսնության (լեհուհի Ցանինա Մարթա Լեպսկայի հետ) վկաները, որոնց էլ ձոնված է Միլերի «Օդափոխվող մղձավանջ» ճամփորդական նոթերի գիրքը (1945): Այդ ընծայականում Միլերը նրանց աստվածներից էլ վեր է դասել «արտակարգ ու լիովին մարդկային» լինելու համար, իսկ մի նամակում երկուսին էլ բնորոշել որպես «աղքատ, խանդավառ և աստվածորեն այս աշխարհից դուրս»: Միլերը քանիցս հյուրընկալվել է Նայմանների հարկի տակ, իսկ 1941-ին Լոս Անջելեսում այս երեքին երբեմն ընկերակցում էր Նայմանների բարեկամ ու հարևան Ման Ռեյը՝ կնոջ հետ, և նրանք հաճախ էին խոսում արվեստի մասին: Նայմանների դուստրը՝ Արիան Գուդուինը, պնդում է իր հուշերում, թե հենց մայրը՝ Մարգարեթն է սովորեցրել Միլերին նկարել, թեև հայտնի է, որ Միլերի նկարչության ուսուցիչը եղել է նրա մերձավոր ընկերը՝ Էմիլ Շնելոքը: Ինչևէ, Արիանի վկայությամբ, Միլերը նամակներում առաջարկել է Մարգարեթին իր ստորագրությունը դնել նրա նկարների տակ՝ փող վաստակելու համար, բայց դստեր ծնվելուց հետո Մարգարեթը թողել է նկարչությունը:

Էջ 15

Մենք մեն-մենակ ենք էարեղ ու մեռած: – Այս արտահայտությունը, ինչպես և քիչ անց հաջորդող միտքը մահվան բանտ ընթանալու մասին, ներշնչված են «մահվան փիլիսոփա» Մայքլ Ֆրենքելի խոսքերից (տե՛ս էջ 9-ի ծանոթագրությունը):

Էջ 16

Տանյա – այս կերպարի նախատիպը Բերթա Շրանքն է, որը 30-ականների սկզբին ամուսնացած էր Ջոզեֆ Շրանքի հետ և ապրում էր Փարիզում: 1931-ի գարնանը և ամռանը Հենրի Միլերն ամեն երկուշաբթի ճաշում էր Շրանքների մոտ և, ի վերջո, բուռն, թեև կարճատև սիրավեպի մեջ մտավ Բերթայի հետ, որն արտաքուստ շատ նման էր նրա կնոջը՝ Ջունին: Այդ կապը խզեց Բերթան, հենց որ հեռվում գտնվող Ջունի լուսանկարը հայտնաբերելով Միլերի հյուրանոցային համարում՝ հասկացավ, որ նրա կապվածությունը մակերեսային է: Շրանքները դուրս մնացին Միլերի կյանքից,

երբ կոմունիստական գաղափարներով հափշտակված՝ 1931-ի աշնանը մեկնեցին Խորհրդային Ռուսաստան: Հետագայում Բերթան բաժանվեց ամուսնուց, անվանափոխվեց Բերթա Քեյսի և դարձավ Բերթոլթ Բրեխթի ու Կուրտ Վայլի ժառանգության գրական գործակալը: Միլերը նրան թախանձում էր վերադարձնել իր գրած նամակները, բայց Բերթան այդպես էլ չվերադարձրեց: Միլերը կարծում էր, թե ոչնչացրել է, մինչդեռ նրա նախկին սիրուհին նամակները տվել էր դերասանուհի Դոլորես Սաթոնին, վերջինս էլ դրանք վաճառեց Նյու Յորքի հանրային գրադարանին, քանի որ «գրական և պատմական մեծ նշանակություն ունեին»: Բայց «Խեցգետնի արևադարձը» գրելիս Միլերը թունդ սիրավեպի բռնվեց և Անայիս Նինի հետ, ուստի Տանյայի կերպարը ավելի շատ Բերթայի և Անայիսի խառնուրդն է: Սիրեկանին ուղղած կրքոտ նամակներից մեկում Նինը մեջբերում է «Օ, Տանյա, ո՛ւր են հիմա...» խոսքերով սկսվող միլերյան էրոտիկ էքստազի նշանավոր հատվածը (տե՛ս էջ 19): Ուշադրության է արժանացել նաև այն հանգամանքը, որ Տանյա անվան S-ն U-ի փոխելիս, գրաշրջության դեպքում, Տանյայից ստացվում է Անայիս. Tania – Sania – Anais.

Ռեմի դը Գուրմոն (1858 – 1815) – ժամանակին ազդեցիկ ֆրանսիացի գրող, էսսեիստ և քննադատ:

Էջ 17

Բորովսկի - կերպարի բնօրինակը հայտնի քանդակագործ և նկարիչ Օսիպ Ցադկինն է (1890 – 1967): Նա ծնվել էր Վիտեբսկ բելառուսական քաղաքում (հայրը ուղղափառություն ընդունած հրեա էր, մայրը շոտլանդական ծագում ուներ), Մարկ Շագալի դասընկերը եղել, իսկ 20 տարեկանից հաստատվել էր Փարիզում: 1914-25 թթ. Ցադկինը դարձել է կուբիստական շարժման մասնակից, ապա, աֆրիկյան արվեստի ազդեցության տակ, իր ոճը մշակել, որը մոտ է և էքսպրեսիոնիզմին:

Կարլ – «Խեցգետնի արևադարձի» հիշարժան դեմքերից մեկի կերպարն ստեղծելիս Միլերի ոգեշնչման աղբյուրն է եղել մտերիմ ընկերը՝ գրող Ալֆրեդ Փերլեսը (1897 – 1990): Նա ծնվել է Վիեննայում, չեխ ծնողներից (իրականում հայրը հրեական ծագում ուներ, մայրը՝ ֆրանսիական), Ավստրիայի կայզերական բանակի կազմում մասնակցել Առաջին աշխարհամարտին, թունավորվել գազերով: 1926-27 թթ. Փերլեսը մամուլի գործակալ էր և լուսանկարիչ Բրասայի օգնականը: Դեռ 1927-ին Փարիզում հանդիպել էր Ջուն Մենսֆիլդ Միլերին, որը նրան այնքան էլ դուր չէր եկել (թեև Ջունը պնդում էր, թե Կարլը հետաքրքրված էր իրենով), ապա Ջին Կրոնսկու՝ տիկին Միլերի

թվայնացրել է 1915.info կայքը

սիրուհու հետ ճողոպրել Հյուսիսային Աֆրիկա: Իրեն՝ Միլերին, Փերլեսն առաջին անգամ հանդիպել էր մեկ տարի անց, դարձյալ Փարիզում, իսկ 1930-ին, երբ Միլերը վերադարձավ Փարիզ, Ալֆրեդը նրան թևի տակ առավ՝ աղքատության մեջ գլուխը պահելու սեփական փորձը փոխանցելով նրան: Երկուսով մի կատակ-մանիֆեստ գրեցին՝ «Նոր բնազդայնություն (Ստեղծագործ մոլեգնության զուգերգ)»: «Չիկագո թրիբյուն» թերթի փարիզյան մասնաճյուղի աշխատակից Փերլեսի շնորհիվ էր, որ Միլերին՝ որպես սրբագրիչի, 1931-ին գործի ընդունեցին այստեղ, և նա, օգտվելով առիթից, մի քանի հոդված տպագրեց ընկերոջ անվան տակ, քանի որ միայն խմբագրակազմի լրագրողներն իրավունք ունեին թերթում հրատարակվել: Միլերն ապաստանել էր Ֆրեդի հյուրանոցային համարում, իսկ 1932-34 թթ. նրանք միասին էին ապրում Կլիշի բանվորական արվարձանում, որտեղ Միլերը տքնում էր «Խեցգետնի արևադարձի» վրա, Փերլեսը՝ «զուգահեռ գրքի» («Հետևելու իրավունք» վերնագրով այդ կենսագրական վեպը, որտեղ Հենրին հանդես էր գալիս հենց իր անունով, նա ապարդյուն փորձեց տպագրել 1934-ին): Միլերի «Խաղաղ օրեր Կլիշիում» գիրքը, որ գրվել է 1940-ին, հրատարակվել 1956-ին և նույնիսկ էկրանավորվել, պատմում է այս շրջանի մասին: Նույն տարի լույս է տեսել և Փերլեսի «Իմ ընկեր Հենրի Միլերը» հուշագրությունը, որ ծնվել էր 1954-55 թթ., երբ Ալֆրեդն արդեն մի քանի ֆրանսերեն և անգլերեն վեպերի հեղինակ էր: Դեռ դրանից առաջ էլ՝ 1945-ին, Փերլեսը գրել էր ընկերոջ մասին («Հենրի Միլերը և Սյորա վիլլան»): Երկրորդ աշխարհամարտի շեմին նա տեղափոխվեց Անգլիա, որտեղ 1947-ին բրիտանական քաղաքացիություն ընդունեց: Միլերի ընկերությունը նրա հետ շարունակվեց ամբողջ կյանքում:

Քրոնպրատյր – այս կերպարի նախատիպը՝ ամերիկացի բանաստեղծ Ուոլթեր Լոուենֆելզը (1897 – 1976), այն տարագիր ամերիկացիների համայնքից էր, որոնք զորավիգ էին Միլերին նրա փարիզյան կյանքի առաջին տարիներին: Լոուենֆելզը ծնունդով Նյու Յորքից էր: Առաջին աշխարհամարտի ժամանակ կարճատև զինծառայությունից հետո սկսել էր բանաստեղծություններ գրել, 1925-ին հրատարակել իր առաջին ժողովածուն: Մեկ տարի անց նա, խույս տալով հոր կարագի բիզնեսից, սիրած աղջկա հետ փախել էր Փարիզ և ամուսնացել: Այստեղ արդեն Ուոլթերն սկսեց լրջորեն զբաղվել պոեզիայով: 1930-ին հանդիպեց Մայքլ Ֆրենքելին, որի հետ հիմնեց «Կարֆուր պրես» հրատարակչությունը՝ կիսելով նաև նրա «ապրելով մեռնելու» գաղափարը: Լոուենֆելզի հանդիպումը Միլերի

հետ կայացավ 1931-ին, երբ նա աշխատում էր «Եղերերգ Դ. Հ. Լորենսի համար» ստեղծագործության վրա, որը լույս տեսավ հաջորդ տարի: Հենց նույն տարի էլ Լոուենֆելզը դատի տվեց կոմպոզիտոր Ջորջ Գերշվինին՝ անանուն տպված իր «ԱՄՆ-ը՝ երաժշտությամբ. օպերային ողբեգություն» պիեսից գրագողություն անելու մեղադրանքով («Քեզ եմ երգում» ստեղծագործությունը Գերշվինին Փուլիցերյան մրցանակ էր բերել), բայց գործը տանուլ տվեց և ստիպված էր վճարել դատական ծախսերը: 1934-ին իր «Ինքնասպանությունը» հրատարակելուց հետո նա կնոջ և Փարիզում ծնված երեխաների հետ վերադարձավ ԱՄՆ: Լոուենֆելզի հարաճուն քաղաքական ակտիվությունը չսահմանափակվեց կոմունիստական մամուլին թղթակցելով. 1953-ին, «ֆիլադելֆիական իննյակի» կազմում, նա ձերբակալվեց Միացյալ Նահանգների կառավարությունը տապալելու դավադրության մեղադրանքով: 50-ականների վերջին Լոուենֆելզը պոեզիայի մի շարք անթոլոգիաներ կազմեց, 1967-ին վիետնամական պատերազմի դեմ ուղղված բողոքի շարժման ակտիվիստ էր, իսկ 1968-ին հրատարակեց «Իմ շատ կյանքերը» ինքնակենսագրական գիրքը:

Սիլվեստր – Տանյայի ամուսնու իրական նախօրինակը՝ Ջոզեֆ Շրանքը (1900 – 1984), ամերիկացի դրամատուրգ էր, որի պիեսներից մի քանիսը բեմադրվեցին Բրոդվեյում, իսկ 30-40-ականներին նա հանդես եկավ նաև որպես սցենարիստ, բայց մեծ հաջողության չհասավ Հոլիվուդում: 50-ականների սկզբից Շրանքն անցավ հեռուստատեսություն՝ կինոկարիերան ավարտելով 1966-ին: Դատերը քննելիս իր արած պատմությունների հիման վրա նա հրատարակեց մի քանի մանկական գիրք:

Քոնի Այլենդ – թերակղզի Նյու Յորքի Բրուքլին շրջանում:

Էջ 18

Իրեն – այս անվան տակ Միլերը նկատի է ունեցել ամերիկացի կին գրող Գրեյս Ֆլանդրոյին (1886 – 1971), որը ստեղծագործել է հիմնականում 20-40-ականներին, վեց գիրք և տասնյակ պատմվածքներ հրապարակել, իսկ հետո, վիատության ու ընկճախտի գիրկն ընկնելով, գրեթե հեռացել է ասպարեզից:

«Պաթետիկ սոնատ» – Լյուդվիգ վան Բեթհովենի ամենաճանաչված դաշնամուրային գործերից մեկը (1798-99):

Էջ 20

Օրանժրի թանգարան – Փարիզի Կոնկորդ հրապարակում գտնվող պատկերասրահ, որտեղ ներկայացված են իմպրեսիոնիստների և պոստիմպրեսիոնիստների գործերը:

թվայնացրել է 1915.info կայքը

Սոմերսեթ Մոեմ (1874 – 1965) – ճանաչված անգլիացի գրող, որի կյանքը ներտորեն առնչվել է Ֆրանսիային. ծնվել է Փարիզում, վախճանվել Նիսում, 1928-ից ի վեր մինչև կյանքի վերջը նրա տունը մեծ մասամբ եղել է Կապ Ֆեռայի իր Մորեսք վիլլան ֆրանսիական Ռիվիերայում:

Ջորջ Մուր (1852 – 1933) – անգլիացի արձակագիր, բանաստեղծ, դրամատուրգ և քննադատ: Երիտասարդության տարիներին գեղանկարչություն է ուսանել Փարիզում, շփվել իմպրեսիոնիստ նկարիչների և սիմվոլիստ բանաստեղծների հետ:

Մրսածում եմ էն սպասափելի իսպանացու մասին, որն ապշեցնում էր աշխարհին... – խոսքը վերաբերում է Պաբլո Պիկասոյին:

Օսվալդ Շպենգլեր (1880 – 1936) – գերմանացի փիլիսոփա և պատմաբան, «կյանքի փիլիսոփայության» ներկայացուցիչ, որի «Եվրոպայի մայրամուտը» երկհատոր աշխատությունը (1921-23) ժամանակին մեծ արձագանք գտավ:

Էջ 21

Պորտ դը Լա Վիկեր – փարիզյան մետրոյի կայարան:

Ելք – նկատի ունի իսրայելցիների ելքը Եգիպտոսից՝ ըստ Հին կտակարանի Ելից գրքի:

Էջ 23

Բենեդիկտ (Բարուխ) Սպինոզա (1632 – 1677) – հրեական ծագումով հոլանդացի ռացիոնալիստ փիլիսոփա: Իր հիմնական խնդիրն էր համարում «բարոյական փիլիսոփայության» մշակումը:

Էջ 24

Բրիտանական թանգարան – Մեծ Բրիտանիայի գլխավոր պատմահնագիտական թանգարանը, որը հիմնվել է 1753-ին: Աշխարհի խոշորագույն թանգարաններից է (ավելի քան 7 միլիոն ցուցանմուշ):

Էջ 25

«Հավերժական ամուսինը» – Ֆյոդոր Դոստոևսկու պատմվածքը (1870), որը գրողի հոգեբանական արվեստի գլուխգործոցի համարում ունի:

Էջ 28

Տիկին Դլորմ – ի դեմս այս դրվագային կերպարի Միլերը նկատի է ունեցել ֆրանսիական կինոավանգարդի գլխավոր դեմքերից մեկին՝ ռեժիսոր, սցենարիստ և տեսաբան Ժերմեն Դյուլակին (իսկական ազգանունը՝ Սեսե-Շնայդեր, 1882 – 1942): 1930-ին, Փարիզ գալուն պես, Միլերին վիճակվել էր տեսնել Դյուլակի «Թեմա և վարիացիաներ» իմպրեսիոնիստական

կարճամետրաժը (1929)՝ Կլոդ Դեբյուսիի երաժշտությամբ: Հենց այդ ժամանակ էլ նրան հաջողվեց տեսնել և Դյուլակի նախկին գործերից՝ «Ժպտացող տիկին Բյոդեն» (1922), որը հետագայում դասեց իր տեսած ամենաուշագրավ ֆիլմերի թվին: Միլերը դրվատալի նամակ գրեց տիկին Դյուլակին՝ ծածուկ հույս փայփայելով նաև, թե նրա միջոցով գուցե շփման մեջ մտնի Փարիզի արտիստական շրջանակների հետ: «Եթե այդ կինն ինձ շաբաթական 15 դոլար տար, կգնայի նրա մոտ աշխատելու,- գրել է Միլերը Էմիլ Շնելոքին ուղղված նամակում:- Ես հպարտ կլինեի մասնակցելու այնպիսի ֆիլմերի ստեղծմանը, ինչպիսիք նա է նկարահանում»: 1930-ին Ժերմեն Դյուլակը ոչ միայն վերացական պլաստիկ ձևերի ռիթմին ապավինող «ինտեգրալ կինոյի» ջատագովն էր և «Խեցիներն ու քահանան» ֆրանսիական առաջին սյուրռեալիստական ֆիլմի (1928) ռեժիսորը, այլև Կինոակումբների միավորման տնօրենն ու ֆեմինիստական ակտիվիստ: Հնչյունի գալուստը, վերջ դնելով խաղարկային կինոյի ռեժիսորի նրա կարիերային, սկիզբ դրեց Դյուլակի գործունեությանը կինոխրոնիկայի ասպարեզում, քանի որ նա հասկացել էր, թե ինչ կարևոր դեր է վերապահված հնչյունին վավերագրության մեջ: Հազիվ ֆրանսերեն խոսող անփող ամերիկացու հանդիպումը կինոյի հեղինակավոր տիկնոջ հետ կայացավ 1930-ի մայիսին: Այրանման «մեծ լեսբուհին»՝ Միլերի արտահայտությամբ, բարյացակամորեն վերաբերվեց նրան, հարցուփորձ արեց Նյու Յորքում տեսած «խոսուն» ժապավենների մասին: Միլերն այն տպավորությունն ստացավ, թե տիկին Դյուլակն իր առաջին հնչուն ֆիլմը մտադիր է նկարահանել անգլերեն: Քանի որ Ջունը դերասանուհի դառնալու հավակնություն ուներ, Հենրին ջանք չխնայեց Դյուլակին համոզելու, որ «ամերիկացի մեծ դերասանուհի» Ջուն Մենսֆլդին ընդգրկի իր առաջիկա ֆիլմում: Նրան հաջողվեց խոստում կորզել, բայց բանը հունվարից շուտ չէր կարող գլուխ գալ: Այնինչ մեծ հույսերով Փարիզ եկած Ջունը, հիասթափված, Նյու Յորք վերադարձավ: Միլերի և Դյուլակի ծանոթությունից այդպես էլ ոչինչ դուրս չեկավ, միայն «Խեցգետնի արևադարձում» տեղ գտած դրվագը: 1934-ին, երբ Միլերը վերստին հաստատվեց Սյորա վիլլայում, նրա սենյակի նախորդ բնակիչը եղել էր Անտոնեն Արտոն՝ Դյուլակի «Խեցիները և քահանան» ֆիլմի սցենարի հեղինակն ու «դաժանության թատրոնի» հիմնադիրը: Միլերի և Դյուլակի ուղիներն այլևս երբեք չխաչվեցին: 1942-ին նացիստների կողմից օկուպացված Փարիզում տիկին Դյուլակը վախճանվեց սրտի նոպայից:

թվայնացրել է 1915.info կայքը

Էջ 29

Սուրբ Վիտուսի կայթ – նյարդային հիվանդություն, դրսևորվում է շարժումների ջղաձիգ խանգարմամբ:

Էջ 30

Անատոլ Ֆրանս (իսկական անուն ազգանունը՝ Անատոլ Ֆրանսուա Թիբո, 1844 – 1924) – ֆրանսիացի դասական գրող, 1896-ից՝ Ֆրանսիական ակադեմիայի անդամ, Նոբելյան մրցանակի դափնեկիր (1921):

Էջ 34

«Ամեր Պիկոն» – նարնջահամ, քաղցրադառն լիկյոր, որ ժամանակին տարածված է եղել որպես ապերիտիվ: Խմիչքը հորինել է Գաետան Պիկոնը 1837-ին:

«Ջիգզագ» – արճարան:

Էջ 35

Շառլ (Մորիս) Դյուֆրեն (1876 – 1938) – ֆրանսիացի նկարիչ, այլաբանական կոմպոզիցիաների հեղինակ:

Էջ 37

...գերմանացիք Բելգիայի հաշիվն էին մաքրում... – նկատի ունի Բելգիային բաժին ընկած ծանր փորձությունները Առաջին աշխարհամարտի հենց սկզբին, երբ 1914-ի օգոստոսի 3-ին Գերմանիան պատերազմ հայտարարեց այդ չեզոք երկրին, իսկ օգոստոսի 4-ին գերմանական զորքերը ներխուժեցին Բելգիա:

Հուգո Վոլֆ (1860 – 1903) – ավստրիացի կոմպոզիտոր, ուշ շրջանի ռոմանտիզմի ներկայացուցիչ, 19-րդ դարի կամերային-վոկալ ժանրի խոշորագույն վարպետ:

Էջ 38

«Ջեքինգենի շեփորահարը» – Վիկտոր Նեսլերի օպերան (1884), որի լիբրետտոն հենված է գերմանացի ռոմանտիկ պոետ Յոզեֆ Վիկտոր ֆոն Շեֆելի համանուն վեպի վրա: Լիբրետտոյում տեղ է գտել նաև մի երգ՝ Շեֆելի «Երիտասարդ Վերթերի հրաժեշտը» բանաստեղծության խոսքերով: Միլերի մեջբերած գերմաներեն արտահայտությունն այդ երգի կրկներգից է:

Շվաբեն Հալե – 1888-ին Բրուքլինում (Նյու Յորք) հիմնված գերմանական ակումբ:

Վիկեռմ Շտեկել (1868 – 1940) – հրեական ծագումով ավստրիացի հոգեբույժ, հոգերվերլուծության ռահվիրաներից մեկը, որը Ֆրոյդի մոտ բուժվելուց հետո դարձել է նրա առաջին հետևորդներից: Քանի որ կասկածի տակ

էր առնում, թե Էդիպի բարդույթն ու ամորձատման վախն են նևրոզների մեծ մասի ելակետը, 1922-ին Ֆրոյդի և նրա հարաբերությունները խզվեցին: Շտեկելի հիմնարար գաղափարներից մեկը բոլոր մարդկանց ծածուկ միասեռականությունն է: 1920-ին արդեն աշխատություն է հրապարակել օնանիզմի մասին՝ շեշտադրելով դրա օգտակարությունը սեռական լիցքաթափման առումով: Մինչդեռ երիտասարդության տարիներին, ինչպես պատմել է Շտեկելն իր ինքնակենսագրության մեջ, հաճախ է զբաղվել ձեռնաշարժությամբ և դրա պատճառով ապրումների մեջ ընկել: Հենց այդ հողի վրա էլ սեռական անկարություն է առաջացել և ապա՝ ուժեղ նևրոզ:

Վեգա - Քնար համաստեղության ամենապայծառ աստղը:

Լոպե դե Վեգա (1562 - 1635) - Վերածնության շրջանի իսպանացի դրամատուրգ, բանաստեղծ և արձակագիր: Հսկայածավալ գրական ժառանգություն է թողել, որտեղ միայն պիեսների թիվը 2 հազարից ավելին է:

Պարսիֆալ - ասպետ, միջնադարյան պալատական էպոսի և Ռիխարդ Վագների նույնանուն օպերայի (1882) հերոսը:

Էջ 40

Գարգույլ - վիշապանման օձ, որը, ավանդության համաձայն, ապրում էր Սենում և ջուր ժայթքելով՝ շուռ տալիս ձկնորսական նավակները: Հետագայում գարգույլների կերպարանքներ էին դրվում ջրհորդանների բերաններին՝ անձրևաջուրը շենքի պատերից հեռացնելու համար: Գոթական ոճի ճարտարապետության մեջ գարգույլները դարձել են տաճարների զարդաքանդակներից:

Էջ 41

Ավգուստ Սթրինդբերգ (1849 - 1912) - շվեդ մեծ արձակագիր և դրամատուրգ: Տուրք է տվել մոդեռնիզմին, սիմվոլիզմին և էքսպրեսիոնիզմին, նշանակալից ազդեցություն գործել եվրոպական մշակույթի վրա:

Էջ 43

Սթեֆան Մալարմե (1942 - 1898) - ֆրանսիացի բանաստեղծ, սիմվոլիզմի ականառու դեմքերից:

Էջ 44

Պիեռ Պյուվի դը Շավան (1824 - 1896) - ակադեմիական ոճի ֆրանսիացի նկարիչ, դեկորատիվ և մոնումենտալ գեղանկարների հեղինակ:

Մորիս Ուտրիլո (1883 - 1955) - ֆրանսիացի նկարիչ, որի գործերը համատեղում են պոստիմպրեսիոնիզմի և պրիմիտիվիզմի հատկանիշները:

թվայնացրել է 1915.info կայքը

Էջ 50

Թոմաս Սթըրնս Էլիոթ (1888 – 1965) – անգլո-ամերիկյան մոդեռնիստ բանաստեղծ և քննադատ, Նոբելյան մրցանակի դափնեկիր (1948):

Մարի Լորանսեն (1883 – 1956) – ֆրանսիացի նկարչուհի և փորագրիչ, 20-ականների Փարիզի եռուն գեղարվեստական կյանքի դեմքերից: 1907-12 թթ. սիրային կապի մեջ է եղել Գիյոմ Ապոլիների հետ, որը բանաստեղծություններ է ձոնել նրան և ոգեշնչել «Ապոլիներն ու իր ընկերները» կտավն ստեղծելու (1912): Լորանսենը համագործակցել է Անդրե Ժիդի, Ժան Կոկտոյի, Մաքս Ժակոբի, Սեն-Ժոն Պերսի, Սոմերսեթ Մոեմի և այլ գրողների հետ, նկարազարդել նրանց գործերը:

Ռաուլ Դյուֆի (1877 – 1953) – ֆրանսիացի նկարիչ, որն իր գործերում տուրք է տվել ֆովիզմին և կուբիզմին:

Խուան (Ժուան) Միրո (1893 – 1983) – Կատալոնիայում ծնված իսպանացի մոդեռնիստ նկարիչ և քանդակագործ, 1919-ից հաստատվել էր Փարիզում:

Էջ 51

«Մարդը՝ կտոր առ կտոր» – հետագայում Վերքոր կեղծանունն ընդունած ֆրանսիացի գրող Ժան Բրյուլեի (1902 – 1991) վեպը («Un homme coupé en tranches»), լույս է տեսել 1929-ին, երբ նա ավելի շատ հայտնի էր որպես գիրք պատկերազարդող ծաղրանկարիչ: Երեք տարի առաջ տպագրվել էր նրա «Բոնի մահվան 21 եղանակ» ալբոմը, որը պատկերում էր վեպերում նկարագրված ինքնասպանության 21 ձև: 1930-ի մարտին Փարիզ գալուց մեկ շաբաթ անց Միլերը, քաղաքում պտտելիս, իսկապես հայտնվել էր Մալաքե առափնյակի «Օնորե Շամպիոն» գրախանութի ցուցափեղկի առաջ, որտեղ գրքերի ու ավանգարդիստական արվեստի տպավորիչ հավաքածու էր ներկայացված, այդ թվում՝ Ռաուլ Դյուֆիի նկարների ընտրանին, Միրոյի փիլիսոփայությանը նվիրված աշխատություն և «Ծովի լռությունը» ապագա վեպի (1942) հեղինակ Ժան Բրյուլե - Վերքորի «Մարդը՝ կտոր առ կտոր» գիրքը:

Էջ 52

Յունիոն Սքուեր – Մանհեթենի գլխավոր հրապարակներից մեկը:

Բաուերի – նյույորքյան փողոց, որի անվամբ է կոչվում և կից շրջանը:

«Մեթրոպոլիս» – ավստրիական ծագումով գերմանացի ականավոր կինոռեժիսոր Ֆրից Լանգի (1890 – 1976) լավագույն գործերից մեկը (1926), էկրան բարձրանալիս՝ աշխարհի ամենամեծածախս համր ֆիլմը:

Էջ 53

Կարլոս VI Խելագար (1368 – 1422) – Ֆրանսիայի թագավոր 1380-ից, սերել է Վալուաների դինաստիայից: Հոգեկան հիվանդ է եղել՝ իշխելով լոկ անվանապես:

Չմոռանամ և Ռոդենին՝ «Թափառական հրեայի» չար ոգուն... – ֆրանսիացի վիպասան Էժեն Սյուի (1804 - 1957)՝ ժամանակին հոչակավոր վեպի (1844) հերոսներից:

Ժան Կաբոշ – միջնադարյան Ֆրանսիայի պատմական դեմքերից: Կարլոս VI-ի օրոք 15-րդ դարի առաջին տասնամյակներին իշխանության համար անողոք պայքար էին մղում երկու ֆեոդալական խմբավորումներ՝ արմանյակներն ու բուրգինյոնները: Եթե արմանյակներին աջակցում էր բարձր խավը, բուգինյոնները հենվում էին հասարակ ժողովրդի վրա: Ամբոխը գլխավորում էր կաշեգործ Ժան Կաբոշը, որի անվամբ բուրգինյոններին կոչում էին նաև կաբոշյաններ: 1412-ին և 1413-ին Փարիզն անցավ վերջիններիս տնօրինության տակ, մինչդեռ սրանց վայրագություններն այնքան անզուսպ էին, որ երկչոտներին անգամ հունից հանեցին՝ դրդելով ապստամբության: Արմանյակները նորից մտան Փարիզ, բայց նրանց բռնակալությունն ու դավերն անգլիացիների հետ պակաս նողկալի չէին, և 1418-ին, բուրգինյոնները հետ կանչվելով, վերադարձան Ժան Կաբոշի գլխավորած կողոպտիչների ու մարդասպանների հրոսակախմբով:

Էջ 56

Լուի Ֆիլիպ (1773 – 1850) – Ֆրանսիայի թագավոր 1830-48 թթ., Բուրբոնների դինաստիայի Օռլեանյան ճյուղից: Գահընկեց է արվել 1848-ի Փետրվարյան հեղափոխությամբ և փախել մեծ Բրիտանիա:

Էջ 59

Ուոլթեր Փաչ (1883 - 1958) - ամերիկացի արվեստաբան, քննադատ, նկարիչ, բազմաթիվ գրքերի, հոդվածների, թարգմանությունների հեղինակ, մոդեռնիզմի ջատագով և քարոզիչ: Եվրոպական ավանգարդը ներկայացրել է անգլիախոս հանրությանը, նամակագրություն ունեցել XX դարի արվեստի երևելի դեմքերի հետ: 1907-ին մեկնել է Փարիզ, դարձել Գերտրուդ և Լեո Սթայնների խմբակի անդամ, շփվել ավանգարդիստների հետ և գրել նրանց մասին:

Էջ 61

Մարլոու – հանձին այս կերպարի Միլերը նկատի է ունեցել ամերիկացի ճանաչված թարգմանիչ և ռոմանական լեզուների գիտակ Սամյուել

թվայնացրել է 1915.info կայքը

Փաթնեմին (1892 – 1950): Նրա ամենահայտնի գործը Սերվանտեսի «Դոն Կիխոտ»-ի թարգմանությունն է, որի վրա աշխատել է 12 տարի, նախքան 1949-ին հրատարակելը: Փաթնեմը հայտնի է նաև որպես Ֆրանսուա Ռաբլեի թարգմանիչ: ժամանակին Փարիզում հրատարակել է «Նյու ռևյու» փոքրիկ հանդեսը, որտեղ իր արձակ գործերն է տպագրել նաև «Խեցգետնի արևադարձում» Վան Նորդեն դարձած Ումբլի Բոլդը (տե՛ս էջ 9-ի ծանոթագրությունը): Փաթնեմը ամերիկացի փիլիսոփա Հիլըրի Փաթնեմի հայրն է:

Էջ 63

«Ֆեռնեպ-Բրանկա» – խոտաբույսերից պատրաստված իտալական դառնահամ խմիչք, որը բժիշկ Ֆեռնետի բաղադրատոմսով ստացել է Մարիա Բրանկան 1845-ին Միլանում: Մարսողությունը կարգավորող միջոց է համարվում սննդի կամ ալկոհոլի չարաշահումից հետո:

Էջ 66

Չադ լիճ – անհոսք լիճ է Աֆրիկայում՝ Նիգերիայում, Նիգերում, Չադում և Կամերունում:

Էջ 67

Բարիկ – կտորը նախշելու եղանակ. զարդանկարը մոմի բարակ շերտով անելուց հետո կտորը մտցվում է ներկի մեջ, որը չի գունավորում մոմածածկ մասերը:

Էջ 68

Յուջին Օ'Նիլ (1888 – 1953) – ամերիկացի ականավոր դրամատուրգ, Նոբելյան մրցանակի դափնեկիր (1936):

Արենտիներ – ավշային գոյացության՝ քթաբմպանային նշագեղձի այտուցում, որը դժվարացնում է շնչառությունը քթով:

Էջ 72

Կնոսոս – հինավուրց քաղաք Հյուսիսային Կրետեի կենտրոնական մասում, Էգեյան մշակույթի կենտրոններից մեկը: Լեգենդի համաձայն՝ Կնոսոսի արվարձանում էր գտնվում Դեդալոսի լաբիրինթոսը, որտեղ ապրում էր հրեշավոր Մինոտավրոսը:

Էջ 73

Ջովաննի Պապինի (1881 – 1956) – իտալացի գրող, գեղարվեստական, հրապարակախոսական և արվեստագիտական երկերի հեղինակ: Նրա «Փիլիսոփաների մայրամուտը» (1906), «Ողբերգական առօրյա» (1906) գործերին հաջորդած «Վերջացած մարդը» (1912) հուսախաբ, խռովահար

անհատի հոգեբանական դիմանկարն է: 1921-ին հրապարակել է «Քրիստոսի պատմությունը»: «Գոգ» գրքում (1931) տուրք է տվել կյանքի և մշակույթի հոռետեսական ընկալմանը: 1953-ին լույս տեսած «Սատանան», որտեղ Պապինին արծարծել է Աստծու կողմից սատանայի վերջնական ներման դրույթը, բուռն վեճեր է առաջացրել և արժանացել Վատիկանի դատապարտմանը:

Էպիկտետոս (Ք. հ. մոտ 50 – 138) – հին հույն փիլիսոփա, որն ստրուկ է եղել Հռոմում, ապա՝ ազատ արձակվել և փիլիսոփայական դպրոց հիմնել Նիկոպոլիսում:

Ջոզուե Կարդուչչի (1835 – 1907) – իտալացի նշանավոր բանաստեղծ և բանասեր, Նոբելյան մրցանակի դափնեկիր (1906):

Ալեսսանդրո Մանձոնի (1785 – 1873) – իտալական գրականության դասական, «Նշանվածները» (1827) հայտնի վեպի հեղինակը:

Հերբերթ Սփենսեր (1820 – 1903) – անգլիացի փիլիսոփա և սոցիոլոգ, պոզիտիվիզմի հիմնադիրներից մեկն ու էվոլյուցիոնիզմի տեսության հեղինակը:

Օլդոս Հաքսլի (1894 – 1963) – անգլիացի մեծ գրող, որի ամենաճանաչված գործը «Սքանչելի նոր աշխարհ» երգիծական «հակաուտոպիան» է (1932):

Էջ 76

«Գալրի Լաֆայեր» – ժամանակին Փարիզի խոշորագույն և ամենամոդայիկ խանութը, որ բացվել է 1893-ին, հետագայում վերածվել հանրախանութների ցանցի:

Պասի – փարիզյան թաղամաս՝ Սենի աջ ափին, Բուլոնյան անտառին կից:

Էջ 78

«Ֆոլի Բերժեր» – հռչակավոր փարիզյան կաբարե:

Էջ 81

Բարոն դը Շառլյուս – ֆրանսիական գրականության հայտնի հերոսներից մեկը, Մարսել Պրուստի «Ի որոնումն կորուսյալ ժամանակի» վիպաշարի կերպարներից, միասեռական սիրո կողմնակից:

«Գումոն Պալաս» – Փարիզի ամենամեծ կինոթատրոններից մեկը:

Էջ 82

Փեքուվեր – այս կերպարը ներկայացված է որպես սրբագրիչ և ինքն էլ՝ անգլիացի, մինչդեռ նրա իրական նախատիպը սպորտային մեկնաբան

թվայնացրել է 1915.info կայքը

Մեդիսոն Քըրբին է, որը Սան Ֆրանցիսկոյի և Նյու Յորքի թերթերում աշխատելուց հետո գործի էր անցել «Չիկագո Թրիբյուն»-ի փարիզյան խմբագրատանը: Նյույորքյան երկնաքերներից մեկում աշխատելիս նա զվարճանում էր՝ գործընկերներին վախեցնելով. դուրս էր սողում գրասենյակի լուսամուտից, կախվում՝ մատներով պատի եզրին կառչած, և մի քանի րոպեից ներս սողոսկում: Փարիզում Քըրբին սովորություն էր դարձրել իր ատլետիկ համարի մի ուրիշ տարբերակն անել. դուրս ելնելով լուսամուտից՝ զգուշորեն անցնում էր պատի նեղ քիվի վրայով և մի ուրիշ լուսամուտից ներս գալիս: 1931-ի օգոստոսյան մի օր էլ Քըրբին դուրս ելավ լուսամուտից ու այլևս ներս չեկավ: Հենց որ նա հասել էր մյուս լուսամուտին՝ քամու հանկարծական պոռթկումը լուսամուտի փեղկերը շրխկացրել էր ձեռքին: Քըրբին ճիչ էր արձակել ու գահավիժել գետնահարկ: Վեպում Միլերն ու Վան Նորդենն այս լուրն իմանում են թերթի աշխատակցից (միջադեպի մասին տե՛ս էջ 138-39): Թեև Միլերը սենյակի լուսամուտը փոխարինել է վերելակի հորով, Փեքովերի ստացած վնասվածքները՝ ի հետևանս գահավիժման, մնացել են ճիշտ նույնը: «Թրիբյուն»-ի խմբագիր Ուեյվըրլի Ռութի վկայությամբ, ոտքերն ու կողոսկրերը ջարդած Քըրբին, իսկապես, չորեքթաթ արած, դնովի ատամներն է փնտրելիս եղել, այնպես որ Միլերը այստեղ ոչինչ չի հորինել: Շտապօգնությամբ հիվանդանոց հասցված Քըրբին մահացել է նույն երեկոյան: «Հույս ունեմ՝ խմբագիրը չի նեղանա, որ էս իրիկուն չեմ աշխատում», սրանք էին նրա վերջին խոսքերը: «Խեցգետնի արևադարձում» Փեքովեր - Քըրբիի աշխատանքն անցնում է Միլերին: Իրականում նա երբեք սպորտային մեկնաբան չի եղել. Միլերի «ամենամեծ նվաճումը» թերթում ֆիննանսների խմբագրի օգնական կարգվելն էր, որ պարզապես նշանակում էր բորսայական գների էջի սրբագրիչ: Իսկ Քըրբիին փոխարինեց Սթերլինգ Նոելը, որին հենց նա էլ համոզել էր գալ Փարիզ՝ «Թրիբյուն»-ում աշխատելու: Նավ նստելուց քիչ առաջ էր միայն Նոելն իմացել Քըրբիի մահվան բոթը: Փարիզ հասնելուն պես նա անմիջապես աշխատանքի նշանակվեց՝ գրավելով հանգուցյալի հին աթոռը:

Էջ 85

Վերթեր - Յոհան Վոլֆգանգ Գյոթեի «Երիտասարդ Վերթերի տառապանքները» (1774) հռչակավոր վեպի հերոսը:

Ասես բնորդում է Ռոդենի «Բալզակի» համար: - 1898-ի Սալոնում մեծ քանդակագործ Ռոդենը ցուցադրեց մեծ գրող Բալզակի յուրօրինակ արձանը, որի վրա աշխատել էր յոթ տարի:

Էջ 86

Բաֆալո Բիլ (իսկական անուն ազգանունը՝ Ուիլյամ Ֆրեդերիկ Քոդի, 1846 – 1917) – ամերիկացի լեգենդար զինվորական և որսորդ, որի «Վայրի Արևմուտք» շոուն՝ կովբոյների և հնդկացիների մասնակցությամբ (ռոդեո, հրաձգության մրցույթ, ռազմական պարեր և այլն) ժամանակին մեծ ժողովրդականություն էր վայելում: Բաֆալո Բիլն իր մականունն ստացել է այն պայմանագիրը կնքելուց հետո, որով պարտավորվում էր Քանզասյան և Խաղաղօվկիանոսյան երկաթուղային ընկերության աշխատողներին ապահովել բիզոնի մսով: 1867-68 թթ., 18 ամսվա ընթացքում, նա 4 հազար 280 բիզոն է կոտորել:

... երբ կարապը բեղմնավորեց Լեդային, նա աշխարհ բերեց երկվորյակների: – Հին հունական առասպելի համաձայն, Զևսն այնքան էր գերված Էտոլիայի Թեստիոս թագավորի դստեր՝ Լեդայի գեղեցկությամբ, որ հայտնվեց նրան կարապի կերպարանքով, երբ Լեդան լողանում էր Եվրոտաս գետում: Այս միությունից ծնվեցին Պոլիդևկեսը և Հեղինեն:

Զանզիբար – Տանզանիային պատկանող կղզի Հնդկական օվկիանոսում, Աֆրիկայի արևելյան ափի մոտ:

Ալկասար – այսպես են կոչվել միջնադարյան Իսպանիայի քաղաքային ամրոցները:

Գվադալկվիվիր – գետ Իսպանիայում. սկիզբ առնելով Անդալուսյան լեռներից՝ հոսում է Անդալուսյան դաշտավայրով և թափվում Կադիսի ծոցը:

Էջ 87

Գրինիչ Վիլիջ – նյույորքյան թաղամաս Մանհեթենում, 20-րդ դարի սկզբից դարձել է բոհեմական արվեստագետների բնակատեղին:

Էջ 88

Դարջիլինգ – քաղաք Հնդկաստանում, արևելյան Հիմալայներում:

Էջ 89

Հինգերորդ պողպատ – Նյու Յորքի գլխավոր փողոցը՝ Մանհեթենի կենտրոնում:

Էջ 95

Կրիշնա – հինդուիզմի աստվածներից, որի կերպարն արտացոլվել է հնդկական գրականության մեջ և արվեստում: «Բհագավադ-գիթա»-ում (XIII դ.) հերոս-կիսաստված է՝ բնության ուժի և սիրո մարմնացումը:

թվայնացրել է 1915.info կայքը

Էջ 97

Գանդիի հետևորդներից էր, դեպի ծովն ուղղված պատմական «աղի արշավի» մասնակիցներից: – 1930-ի մարտի 12-ից մինչև ապրիլի 5-ը Մահաթմա Գանդին և նրա 79 կողմնակիցները, քարոզչական նպատակով, Հուջարաթի Ահմադաբադ քաղաքից (Արևմտյան Հնդկաստան) ոտքով հասան Արաբական ծովի ափին գտնվող Դանդի գյուղը, որտեղ, ի նշան բողոքի ընդդեմ աղի արդյունահանման գաղութային մենաշնորհի, երեք շաբաթ գոլորշիացմամբ աղ էին ստանում ծովի ջրից:

Էջ 98

«Կոտյակ» – լուսանկարչական սարք:

Էջ 100

Դանդի ընթացող երթի ժամանակ... – տե՛ս էջ 97-ի ծանոթագրությունն «աղի արշավի» վերաբերյալ:

Նա պատմում է ճախարակի մասին. թե ինչպես է Գանդիի հետևորդների խոսքն ընդօրինակել մանող ուսուցչի ջերմեռանդությունը: – Ճախարակը ի նպաստ ազգային արդյունաբերության զարգացման՝ Հնդկաստանի անկախության համար իմպերիալիզմի դեմ մղվող պայքարի խորհրդանիշն էր: 1931-ին, Մահաթմա Գանդիի առաջարկով, պետական դրոշը համալրվեց հենց ճախարակի պատկերով, որին, սակայն, հետագայում փոխարինեց դհարմայի բուդդայական խորհրդանիշը՝ «Աշոկա Չակրա» անիվը: Ճախարակը կարևոր դեր ուներ Գանդիի կյանքում: Պետական գործերից կտրվելով՝ նա վերադառնում էր իր համեստ կացարանը և, ըստ հնդկական սովորույթի, հատակին նստած, զբաղվում բուրդ մանելով, որից պատրաստված էր նրա հագուստը: Հարի Մաքդոնալդն իր «Ինչպես կարգավորել ներաշխարհը» գրքում հետաքրքիր բացատրություն է տվել Գանդիի տնային զբաղմունքին. «Նա կյանքում հավասարության մեծ ջատագովն էր: Եվ երբ վերադառնում էր մեծ հասարակական գործերից. ճախարակով աշխատելը վերականգնում էր նրա մեջ համամասնության անհրաժեշտ զգացումը, որպեսզի նա սխալմամբ չփքվեր մարդկանց ծափահարությունների առաջացրած հպարտությունից: Երբ Գանդին թագավորների կամ կառավարությունների ղեկավարների հետ տեղի ունեցած հանդիպումից անցնում էր թել մանելուն, դա օգնում էր նրան պահպանելու ճիշտ պատկերացումն իր անձի և գործունեության մասին: Ճախարակը միշտ հիշեցնում էր Գանդիին, թե ինքն ով է, և կյանքում ինչ է շրջապատում իրեն: Զբաղվելով այդ կանոնավոր վարժությամբ՝ նա

դիմադրում էր սեփական ներաշխարհի այն բոլոր ուժերին, որոնք փորձում էին աղավաղել իր էությունը»:

Էջ 101

Երիտասարդների քրիստոնեական միություն (YMCA) – երիտասարդությանը միավորող խոշորագույն կրոնական կազմակերպություններից մեկը, որ հիմնադրվել է 1844-ին Լոնդոնում: Այս միջազգային կազմակերպության առաքելությունը մարդու բոլոր կողմերի ներդաշնակ զարգացումն է:

Քվակերներ, ունիտարյաններ, թեոսոֆներ, «Նոր մտքի» կողմնակիցներ, Յոթերորդ օրվա ադվենտիստներ – քրիստոնեական տարբեր աղանդների և ուսմունքների հետևորդներ:

Էջ 102

Օբերվիկյե – Փարիզի հյուսիս-արևելյան արվարձանը:

Էջ 103

Գաուրաման – Սիդդհարթհա Գաուտաման Բուդդայի կնքանունն է:

Էջ 108

Ռիվիերա – միջերկրածովյան առափնյա գոտի, որը ձգվում է Կաննից (Ֆրանսիա) մինչև Սպեցիա (Իտալիա), հայտնի հանգստավայր:

Էջ 111

Հևլոք Էլիս (1859 – 1939) – անգլիացի բժիշկ և հոգեբան, սեռագիտության հիմնադիրներից: Նրա գլխավոր աշխատությունը «Սեռի հոգեբանության ուսումասիրություններ» հանրագիտարանն է, որի առաջին հատորը, 1897-ին լույս տեսնելով վիկտորյան Անգլիայում, աղմկոտ դատավարության տեղիք տվեց: Հաջորդ վեց հատորները, մինչև 1928 թ., հրատարակվեցին ԱՄՆ-ում: Էլիսը հանգամանորեն քննել է մարդու սեքսուալ վարքագիծը, ընդ որում՝ հակումն իր սեռի անձանց հանդեպ, ձեռնաշարժությունն ու սեռական շեղումները: 1897-ին նա Ջոն Էդինգթոն Սայմոնդսի հետ հրապարակել է անգլերեն առաջին բժշկական ձեռնարկը միասեռականության մասին, իսկ 1928-ից գլխավորում էր Սեռական բարեփոխումների համաշխարհային լիգան: Էլիսը 1891-ից ամուսնացած էր սուֆրաժիստուհի Էդիթ Լիսի հետ, որը չէր թաքցնում իր լեսբիական հակումները: Ինչպես խոստովանել է Էլիսը հուշերում, ամուսնությունը գլխավորապես ձևական բնույթ ուներ, և ինքը մինչև 60 տարեկանը սեռապես անկարող է եղել:

Էջ 112

Պետրոնիուս, Գայուս Պետրոնիուս Դատավոր (ծն. թ. անհայտ – Ք. հ. 66) – հռոմեացի գրող, որին Ներոնի պալատում «դատավոր նրբագեղության»

թվայնացրել է 1915.info կայքը

են կոչել: Նրան է վերագրվում հռոմեական հասարակության բարոյական անկումն ու զեխ բարքերը պատկերող «Սատիրիկոն» երգիծական վեպը, որը միայն մասամբ է հասել մեր օրերը:

Էջ 116

Բոռնեո (Կալիմանտան) – Մալայան արշիպելագի ամենախոշոր կղզին:

Էջ 130

Էուգեն Զանդով (հայտնի է նաև որպես Ցուջին Սենդոու, իսկական անուն ազգանունը՝ Ֆրիդրիխ Վիլհելմ Մյուլեր, 1867 – 1925) – գերմանացի ատլետ, ժամանակակից կուլտուրիզմի հիմնադիրը: 1894-ին մեկնել է Ամերիկա, որտեղ ներկայացվել է իբրև «աշխարհի ամենաուժեղ մարդը»: Ֆիզիկական վարժությունների սեփական համակարգն էր մշակել, որը տեղ է գտել նրա մեթոդաբանական ձեռնարկներում: 1897-ից հաստատվել է Անգլիայում, որտեղ 1911-ին Գեորգ V թագավորը նրան ֆիզիկական զարգացման պրոֆեսորի կոչում է շնորհել:

Էջ 136

Էզրա Փաունդ (1885 – 1972) – ամերիկացի բանաստեղծ և քննադատ: 1925-ից հրապարակել է իր «Երգերի» ժողովածուները («Cantos»), որտեղ մոդեռնիստական եղանակով նմանակել է Դանտեի «Աստվածային կատակերգությունը»: Մարդկության պատմությունը վաղնջական դարերից մինչև նոր ժամանակներն արտացոլող այդ մանվածապատ ստեղծագործություններում հեգնանքը համատեղվում է Կոնֆուցիոսին հատուկ բարոյախոսության հետ (Փաունդը չին մեծ մտածողի թարգմանիչն ու ջատագովն էր):

Էջ 150

Թրիր – քաղաք Գերմանիայում, Մոզել գետի ափին, Կարլ Մարքսի ծննդավայրը:

Հայդ պարկ – Լոնդոնի կենտրոնի ամենամեծ զբոսայգիներից մեկը:

Տիկին Քուլիջ – նկատի ունի ԱՄՆ-ի 30-րդ նախագահ (1923-29) Քալվին Քուլիջի կնոջը՝ Գրեյս Քուլիջին:

Էջ 151

Դերբի – ձիարշավի մրցումներ, որոնք 1778-ին լորդ Դերբին է առաջին անգամ կազմակերպել Անգլիայում:

Էջ 160

«Պարի-Սուար» – ժամանակին տարածված օրաթերթ, լույս է տեսել Փարիզում 1923–44 թթ.:

Ռուդոլֆ Վալենտինո (1895 - 1926) - համր կինոյի ամենամեծ աստղերից մեկը, որի «լատինական սիրահարի» տարաշխարհիկ ամպլուան նրան դարձրել էր Հոլիվուդի սեքս խորհրդանիշ և կանանց տենչալի կուռք:

Էջ 162

Չապուլտեպեկ - Մեխիկոյի կենտրոնում գտնվող մեծ զբոսայգի, որի տեսարժան վայրերից մեկը համանուն գազանանոցն է:

Էջ 163

... ծաղկուն աղջիկների հովանու տակ... - ակնարկում է Մարսել Պրուստին ճանաչում բերած «Ծաղկուն աղջիկների հովանու տակ» վեպը (1918, Գոնկուրյան մրցանակ), որը գրողի «Ի որոնումն կորուսյալ ժամանակի» վիպաշարի երկրորդ գործն է:

Բալբեկ - մտացածին քաղաք Պրուստի վիպաշարում:

Էջ 164

Ալբերտին Սիմոնե - Պրուստի հերոսուհիներից, որն առաջին անգամ հայտնվում է «Ծաղկուն աղջիկների հովանու տակ» վեպում: Նրան կարևոր դեր է վերապահված «Ի որոնումն կորուսյալ ժամանակի» վիպաշարում:

Էջ 165

Բելուջպրան - Պակիստանի այն մասը, որտեղ բելուջներ են բնակվում:

Տիմբուկտու - քաղաք Մալիում:

Անգկոր - պալատների, տաճարների, ջրանցքների և ջրամբարների հսկայական համալիր Կամբոջայում՝ Սիեմ-Ռեապ քաղաքի մոտ: Կառուցվել է IX– XIII դդ. կիմերական պետության ծաղկման շրջանում:

Հրո երկիր - արշիպելագ Հարավային Ամերիկայի հարավում:

Էջ 173

Սակրե Կյոր բազիլիկ - ճարտարապետ Պոլ Աբադիի նախագծով և հռոմեա-բյուզանդական ոճով 1876-1910 թթ. կառուցված փարիզյան տաճար, որը տեղավորված է Մոնմարտրի բարձունքին, քաղաքի ամենաբարձր կետում:

Էջ 180

Լուի Սալավեն - ֆրանսիացի գրող, Ֆրանսիական ակադեմիայի անդամ Ժորժ Դյուամելի (1884 - 1966) «Սալավենի կյանքն ու արկածները» ինգահատոր վիպաշարի (1920-32) հերոսն է: Գրասենյակային ծառայող Սալավենը, որի հակասական ներաշխարհը պատկերված է Պրուստի արձակի ոգով, Դոստոևսկու «ընդհատակյա մարդու» ցեղակիցն է և Սարտրի ու Կամյուի հակահերոսների նախակարապետը: Վիպաշարը նեկայացնում է

թվայնացրել է 1915.info կայքը

«փոքր մարդուն»՝ «քաղաքակրթության զոհին» բաժին ընկած հիասթափություններն ու մոլորվածությունը:

Էջ 181

Մենք մահվան պար բռնեցինք... – ակնարկում է Ավգուստ Ստրինդբերգի «քնարական» կամ «կամերային» դրամաներից մեկը՝ «Մահվան պարը» (1901):

... պոետը թևածում է երկրի երեսին, իսկ հետո ասես սահմանված է. որ, վերահաղարկելով վաղեմի դրաման, հերոսականորեն իջնի հողի ամենախոր ընդերքը, մթին ու ահագոռ օթևան գտնի կերպածկան որովայնում... – նկատի ունի օձի խայթոցից մահացած կնոջը՝ Եվրիդիկեին վերադարձնելու համար Հադեսի ստորգետնյա թագավորություն իջած դիցական երգիչ Օրփեոսին և բիբլիական մարգարե Հովնանին, որը, ալեկոծության ժամանակ ծովը նետվելով, կլլվեց կետածկան կողմից և երեք օր ու գիշեր մնաց նրա որովայնում, մինչև որ ձուկը Հովնանին փսխեց ի ցամաք:

Էջ 182

Նինվե – Ասորեստանի մայրաքաղաքը Ք. ա. VIII դ. վերջին – VII դ., Տիգրիսի ձախ ափին:

Էջ 183

Թերմոպիլե – լեռնանցք Թեսալիայի և Միջին Հունաստանի սահմանին, որտեղ Ք. ա. 480-ին տեղի ունեցավ հույն-պարսկական պատերազմի կարևոր ճակատամարտերից մեկը: 300 սպարտացիներ՝ Լեոնիդաս թագավորի գլխավորությամբ, դիմադրելով Պարսից արքա Քսերքսեսի զորքին, հերոսաբար զոհվեցին:

Էջ 186

Գուգենհայմի թոշակ – 1925-ից Ջոն Սայմոն Գուգենհայմի անվան հիմնադրամի կողմից տրվող ամենամյա դրամաշնորհ, որը հատկացվում է «նրանց, ովքեր բացառիկ ընդունակություններ են ցուցաբերել արգասավոր գիտության մեջ կամ բացառիկ ստեղծագործական կարողություններ արվեստում»:

Էջ 189

Հոհենշտաուֆեններ – հարավգերմանական թագավորների և Սրբազան Հռոմեական կայսրության միապետերի դինաստիա (1138 – 1254):

Քյուզեր – այս կերպարի համար բնորդ է ծառայել ավանգարդիստ նկարիչ Ֆրեդերիկ Քանը (1884 – 1965)՝ Միլերի մոտ ընկերներից ու բարերարներից մեկը նրա փարիզյան կյանքի առաջին տարիներին: Քանը, որն ազդեցություն է թողել եվրոպական և ամերիկյան աբստրակտ արվեստ

զարգացման վրա, ծնվել և կրթություն էր ստացել Չեխիայում, Մյունխենում հարել էքսպրեսիոնիստներին, 1910-ին անցել Նյու Յորք, իսկ 1928-36 թթ. հաստատվել էր Փարիզում՝ միանալով սյուրռեալիստների հովանու տակ գործող աբստրակցիոնիստների խմբին, որի կազմում էին Կանդինսկին, Դելոնեն, Միրոն, Պիկաբիան և այլք: 1930-ին Բրասայն էր Միլերին ծանոթացրել Քանի հետ, և այդ տարվա աշնանը Միլերը մի քանի շաբաթ ապաստանեց Ֆրուադվո փողոցի նրա արվեստանոցում, որից տեսարան էր բացվում Մոնպառնասի գերեզմանատան վրա: «Խեցգետնի արևադարձում» հեղինակը Քրյուգերին՝ որպես արվեստագետի, հավասարեցնում է գրոյի, բայց այլ գրվածքներում Միլերը գնահատանքով է արտահայտվել Քանի տաղանդի մասին: Նրանց միավորում էր նաև հետաքրքրությունը աստվածիմացության և աստղագուշակության հանդեպ:

«Կախարդական լեռը» – Թոմաս Մանի լավագույն գործերից մեկը (1924), որ 20-րդ դարի մեծ վեպերից է:

Փեփերքորն – «Կախարդական լեռան» հերոսներից:

Էջ 190

Անալ տիպ – հոգեվերլուծության դասական տերմին: Ըստ Ֆրոյդի գենետիկական հայեցակարգի, անհատի հոգեֆիզիկական զարգացման մեջ կարևորվում են երեք հաջորդական փուլ՝ օրալ, անալ և էդիպյան: Այս փուլերը բնականոն հունով չանցած մարդը սևեռվում է դրանցից մեկնումեկի վրա, ըստ այդմ էլ՝ կարելի է տարբերակել անհատականության երեք տիպ կամ տեսակ՝ անալ, օրալ, էդիպյան: Անալ տիպի բնորոշ հատկանիշներից են մաքրասիրությունը, ճշտապահությունը, ազնվությունը, համառությունը, կատարելության ձգտումը, ավանդապահությունը, զսպվածությունը, ժլատության հակումը, դաժանության դրսևորումները և այլն:

Ուպանիշադներ – հնդկական հնագույն կրոնափիլիսոփայական ժողովածու՝ կազմված 108 տեքստից, որոնք առաջացել են տարբեր ժամանակներում (Ք. ա. VI – III դդ.-ից մինչև XIV – XV դդ.): Ուպանիշադները վեդայական գրականության փիլիսոփայական մասն են:

Պլոտինոս (մոտ 205 – մոտ 270) – հույն փիլիսոփա, նեոպլատոնականության հիմնադիր, որը Պլատոնի, Արիստոտելի, ստոիկների և Պյութագորասի գաղափարները համատեղել է Արևելքի կրոնամիստիկական ուսմունքների հետ:

Ջիդդու Կրիշնամուրտի (1895 – 1986) – նշանավոր հնդիկ հոգևոր, որի նախընտրած փիլիսոփայական և հոգևոր թեմաներից էին հոգեբանական

թվայնացրել է 1915.info կայքը

վերափոխությունը, գիտակցության բնույթը, խոկումը, մարդկանց փոխհարաբերությունները և այլն: Կրիշնամուրտիի մասին մի քանի գիրք հրապարակած Մերի Լաթյենսի բնորոշմամբ, նրա ուսումունքի նպատակը «մարդկանց մեկ-մեկուց առանձնացնող այնպիսի կապանքներից ազատելն է, ինչպիսիք են ռասան, կրոնը, ազգությունը, դասակարգային բաժանումը, ավանդույթները՝ մարդու հոգին այդ եղանակով փոխակերպելու համար»:

«Սֆինքս» – 30-ականների Փարիզի ամենաճանաչված ու թանկարժեք հասարակաց տներից մեկը:

Սենտ-Ապոլին փողոց – փարիզյան այս փողոցը հայտնի է նաև որպես «պոռնիկների ծառուղի»:

Էջ 191

«Բալ Բյուլյե» – արճճարան:

Մարկ Սվիֆթ – այս անվան տակ Միլերը պատկերել է ամերիկացի նկարիչ Ջոն Նիքոլզին (1899 – 1963): Չիկագոյում, Նյու Յորքում և Սանտա Ֆեում կրթություն ստանալուց հետո 20-ականներին Նիքոլզը Ջոն Քերոլի, Ուիլյամ Ջորաչի, Յուջին Սփայչերի և այլոց հետ հաստատվել էր Վուդսթոքի արվեստագետների ավանում: 1930-ի հոկտեմբերին նա եկավ Փարիզ, որտեղ ամեն օր Լուվր էր գնում՝ վարպետների գործերն ուսումնասիրելու: Նիքոլզը մտերմացավ Միլերի հետ, երբ սկսեց նրա դիմանկարն անել, օգնում էր նրան, ժամանակ առ ժամանակ կերակրում: Միլերը գրել է Էմիլ Շնելոքին ուղղված նամակում. «Նրա հետ խոսելիս համոզվում եմ, որ հանճարի առաջ եմ կանգնած: Ի դեմս նրա տեսնում եմ մի ուրիշ Վան Գոգի կամ ավելին»: Միլերը նշում է Նիքոլզի «հմայիչ «ես»-ը, հմայիչ անամոթությունը»՝ բնութագրելով որպես «տղամարդ-երեխա, հրաշք մարդ», «ջերմ, մարդկային անհատականություն, մտածող, արվեստագետ, գիտակ», համեմատության եզրեր գտնում Ռուբենսի, Ռենուարի, Սեզանի հետ: Նիքոլզի ձեռնարկած դիմանկարի համար Միլերը, նրա խորհրդով, մի կարճ շրջան բոհեմական մորուք էր պահել՝ սեփական խոստովանությամբ, իրեն Դոստոևսկի զգալով: Դիմանկարը, ինչպես Միլերը ինքն է գրել, «ռենուարյան էր՝ Գրոսին հիշեցնող ծաղրանկարի թեթև երանգով»: Բայց Նիքոլզը երկար չմնաց Փարիզում. 1932-ին նա վերադարձավ Ամերիկա: Չնայած փոխըմբռնմանն ու մեծ համակրանքին, Միլերն ու Նիլքոլզը հետագայում այլևս չառնչվեցին: 1936-ին Նյու Յորքի Ժամանակակից արվեստի թանգարանը (MoMA) Նիքոլզին ընդգրկեց «Ամերիկյան արվեստի նոր հորիզոններ» ցուցահանդեսում: 40-ականներից ի վեր Նիլքոլզն անցավ

դասավանդման: Թեև Միլերի կարծիքով՝ «ապագան նրա ձեռքերում էր», Նիքոլզն այդպես էլ մեծ անունների շարքը չդասվեց:

Մի հրեա բնորդուհի ուներ, որ հեգ ապրել էր երկար տարիներ... – խոսքը Մայք Նիքոլզի կողակցի՝ ամերիկացի նկարչուհի Ֆրենսիս Վուդի (ծնյալ Գինզբուրգ, 1899 – 1984) մասին է, որի գործերը 1927-ից մինչև 70-ականների վերջը բազմիցս ցուցադրվել են ամերիկյան թանգարաններում ու պատկերասրահներում, իսկ 1933-35 թթ. Վուդն անհատական ցուհանդեսներ է ունեցել Ֆրանսիայում: Մարկ Սվիֆթից բաժանվելուց հետո Ֆրենսիսն ամուսնացավ անգլիացի նկարիչ և թանգարանային գործիչ Ֆրենք Մքյուենի հետ, որի հետ ապրեց Փարիզում 1931-37 թթ.: Ֆրենսիս Վուդը, ինչպես և Մայք Նիլքոլզը, նկարել է Միլերին: 1931-ի մարտին Էմիլ Շնելոքին գրած նամակում նա հիշատակում է, որ երկուսն էլ աշխատում են իր նոր դիմանկարի վրա. «Ֆրենսին զարկում է կտավին Տիցիանի պես, մինչև որ սա երգի իր մահակի հարվածների տակ»:

Էջ 192

Կոնաձև գեղձ (մարմին) կամ էպիֆիզ – մարդու արյան մեջ որոշ հորմոններ ներզատող և «քուն-արթնություն» բիոռիթմերը կարգավորող գորշակարմիր փոքրիկ գոյացություն ուղեղի կենտրոնում, երկու կիսագնդի միջև: Քանի որ էպիֆիզի նշանակությունն այնքան էլ ուսումնասիրված չէ, այս «առեղծվածային» գեղձը գաղտնախորհուրդ, մետաֆիզիկական պատկերացումների տեղիք է տվել՝ կապակցվելով հոգու հետ (ըստ Լեոնարդո դա Վինչիի՝ այն գնդակերպ ոլորտն է, որտեղ զետեղված է հոգին, իսկ Դեկարտի բնորոշմամբ՝ «հոգու թամբն» է) և համարվելով «երրորդ աչք», որը մարդուն օժտում է էքստրասենսորային հատկանիշներով (յոգայի մեջ նիրհող օրգան է, որը պետք է աթնացնել պայծառատեսի ընդունակություն ձեռք բերելու համար):

Էջ 193

Ջոզեֆ Կոնրադ (իսկական անուն ազգանունը՝ Յուզեֆ Թեոդոր Կոնրադ Կոժենյովսկի, 1857 – 1924) – լեհական ծագումով անգլիացի նեոռոմանտիկ գրող:

Քոլինզ – հաշվի առնելով այս հերոսի բիսեքսուալ հակումները, թուլությունը մի սիրունատես տղայի և Պրուստի արվասեր հերոսի՝ բարոն դը Շառլյուսի հանդեպ, ինչպես նաև «Խեցգետնի արևադարձի» հեղինակի բացահայտ համակրանքը Քոլինզի նկատմամբ, որը նրան առնում է իր հովանու տակ՝ հիվանդ ժամանակ նույնիսկ անկողին դնելով և սիրտը սփոփելով՝ ամերիկացի հետազոտող Մայքլ Հարդինն այդ դրվագը

թվայնացրել է 1915.info կայքը

մեկնաբանել է որպես Միլերի հոմոէրոտիկ ցանկության վկայություն: Քննելով հոմոֆոբիայի թեման վեպում՝ Հարդինը եզրակացրել է, որ «խորապես ճնշված» այդ ցանկությունը «պարբերաբար ջրի երես է ելնում»: Նա նկատել է, թե այստեղ «ամենաինտիմ հարաբերությունները տղամարդկանց միջև են և արտահայտվում են (հետերոսեքսուալ) սեքսի մասին պատմություններ անելով, կանանց դերը վեպում սա է. կնոջ հետ սեքսով են զբաղվում ոչ թե սեռական գործողության հաճույքի, այլ մյուս տղամարդկանց դրա պատմությունն անելու բավականության համար»: Այս ամենը մատնանշելով՝ Հարդինը նպատակ չի ունեցել ժխտելու Միլերի բացահայտ հոմոֆոբիան և սեքսիզմը, այլ փորձել է ցույց տալ, թե «ինչ բարդ բնույթ ունի սեռազգացությունը, նույնիսկ եթե խոսքը մի հերոսի մասին է, որը խիստ ընդգծված հետերոսեքսուալություն է ցուցաբերում»:

Բադեն-Բադեն, Վիշի, Էքս-լե-Բեն – բալնեոլոգիական հայտնի առողջարաններ Գերմանիայում և Ֆրանսիայում:

Էջ 196

Ցանցգի – Չինաստանի և Եվրասիայի ամենամեծ գետը:

Հանկոու – այն երեք քաղաքներից մեկը, որոնք կազմում են Ցանցգի և Հանշույ գետերի միացման տեղում հառնող ներկայիս Ուհանը՝ Չինաստանի Հուբեյ գավառի վարչական կենտրոնը:

Էջ 197

Հուլիսի 4 – ԱՄՆ-ի անկախության օրը, երբ 1776-ին ստորագրվեց Անկախության հռչակագիրը՝ ազդարարելով Միացյալ Նահանգների անկախությունը Մեծ Բրիտանիայի Թագավորությունից: Ամերիկացիներն այս ազգային տոնը կոչում են պարզապես Հուլիսի 4 և նշում շքահանդեսներով, հրավառությամբ, կառնավալներով, տոնավաճառներով, համերգներով և այլն:

Էջ 198

Հավր – քաղաք Սենի գետաբերանի մոտ, Փարիզի նավահանգիստը:

Էջ 201

Ոտքեր Քոտց – Ջոզեֆ Կոնրադի ամենաազդեցիկ ստեղծագործության՝ «Խավարի սիրտը» (1902) վիպակի հերոսներից:

Էջ 202

«Պիկարդիայի վարդերը» – 1916-ին՝ Առաջին աշխարհամարտի ժամանակ, Հեյդեն Վուդի գրած հայտնի երգը: Խաղաղ օրերի կարոտով լի այս բալլադը երգել է Տինո Ռոսսին, հետագայում՝ Իվ Մոնտանը, իսկ դաշնակահար Էլբերթ Էմոնզը՝ վերածել սրընթաց բուգիի:

Էջ 211

Անրի Բորդո (1870 – 1963) – ֆրանսիացի վիպասան, ավելի քան հարյուր հատորի հեղինակ, 1919-ից՝ Ֆրանսիական ակադեմիայի անդամ:

Էջ 215

Լաբրադոր – թերակղզի Կանադայում, տարածքի մեծ մասում գերիշխում է բազմամյա սառածությունը:

Էջ 224

«Բրիքթոփի մուր» (Bricktop's) – 20-ականներից մինչև Երկրորդ աշխարհամարտի սկիզբը Փարիզում մեծ ճանաչում վայելող գիշերային ակումբ. արվեստագետների, նշանավոր անձանց և փարիզաբնակ ամերիկացիների ժամանցարան: Այս զվարճատեղին բացել էր սևամորթ ամերիկուհի Ադա Սմիթը և կոմպոզիտոր Քոլ Փորթերի խորհրդով կոչել իր մականունով, որը վաստակել էր ժամանակին կարմրաշեկ մազերի համար (Bricktop բառացիորեն նշանակում է «կղմինդրե գլուխ»), երբ երգում-պարում էր էստրադային ներկայացումներում:

Էջ 226

«Կենդանի դիակ» – Լև Տոլստոյի պիեսը (1900, հրատարակվել է 1911-ին, հետմահու, քանի որ հեղինակը ավարտուն գործ չէր համարում), որտեղ գլխավոր հերոսը՝ Ֆյոդոր Պրոտասովը, սիրահարվում է հրաշալի երգերով իր սիրտը շահած գնչուհի Մաշային:

Էջ 238

Ժորժ Կյուվյե (1769 – 1832) – ֆրանսիացի անվանի կենդանաբան, համեմատական անատոմիայի, հնէաբանության և կենդանիների կարգաբանության բարեփոխիչներից մեկը:

Էջ 239

Ֆիլիպ Դաց – այսօր մոռացված ֆրանսիացի գրող:

Ես բացում եմ գիրքը, որը Նիցշեն «լավագույն գերմաներեն գիրքն» է անվանել... – խոսքը վերաբերում է Յոհան Պետեր Էքերմանի (1792 – 1854) «Զրույցներ Գյոթեի հետ (Նրա կյանքի վերջին տարիներին. 1823 – 1832)» գրքին (3 հատոր, 1836-48), որը թարգմանվել է նաև հայերեն (Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1975): Միլերի մեջբերած հատվածը ներկայացվում է Հակոբ Հակոբյանի այդ թարգմանությամբ, որտեղ, մասնակի խմբագրական միջամտությունից զատ, շտկվել է մի էական վրիպակ. «...երբ մարդկությունը կդադարի Աստծուն բավականություն պատճառելուց...» հատվածում «Աստծուն» բառի փոխարեն հայերեն հրատարակության մեջ տպագրվել է «մարդուն»:

թվայնացրել է 1915.info կայքը

Էջ 241

Կրակով – քաղաք Լեհաստանում, բնակչությամբ երրորդը:

Դորդոն – դեպարտամենտ Ֆրանսիայի հարավ-արևմուտքում, Աքվիտանիայի դեպարտամենտներից:

Մոլի Բլում – Ջեյմս Ջոյսի «Ուլիսես» նշանավոր վեպի (1922) հերոսուհին:

Էջ 250

Նիկոլայ Ստավրոգին – Ֆյոդոր Դոստոևսկու «Դևեր» վեպի (1871-72) գլխավոր հերոսը:

Էջ 252

Ջոն Միլթոն (1608 - 1674) – անգլիացի բանաստեղծ, մտածող և քաղաքական գործիչ:

Մորավաժին – ազգությամբ շվեյցարացի ֆրանսիական գրող Բլեզ Սանդրարի (1887 – 1961) համանուն վեպի (1926) հերոսը: Հոգեպես ու մարմնապես հրեշավոր Մորավաժինը, որ մեծահարուստ ժառանգորդ է, իր բոլոր ցանկություններն արդարացնող տեսություն ունի: Ազատ արձակվելով հանցագործ խելագարների հոգեբուժարանից, նա դաշնակցի՝ փառասեր բժշկի հետ, Մոսկվայից ուղևորվում է դեպի Ամազոնիայի խորքերը՝ իր դավերին ու խարդախություններին հետամուտ. մերթ ահաբեկիչ է, մերթ ոսկեխույզ, մերթ շահավաճառ և այլն, հաճույքով բռնանում է ու սպանություններ գործում: Մորավաժինն ու նրա ընկերակիցը Եվրոպա են վերադառնում Առաջին աշխարհամարտի նախօրեին, երբ արդեն «ամբողջ աշխարհն էր զբաղված մորավաժինությամբ»: Այս հղումը Սանդրարին պատահական չէ: Միլերն ու Սանդրարը փոխադարձ հիացմունքով և խանդավառությամբ են արտահայտվել մեկմեկու մասին: Փարիզում նրանք շուտով ընկերացան (ընդհանրություն ունեին. երկուսն էլ ներկայանում էին ավելի շատ որպես ցոփասեր, քան արվեստագետ) և 45 տարի կանոնավոր նամակագրական կապի մեջ էին: «Խեցգետնի արևադարձի» լույսընծայմանը Սանդրարն արձագանքեց դրվատական գրախոսությամբ, որը Միլերի վեպի առաջին տպագիր գնահատանքն է:

Էջ 257

Փրկության բանակ – XIX դ. կեսից բողոքական-ավետարանականների աջակցությամբ գործող միսիոներական, բարեգործական կազմակերպություն:

Էջ 260

...ասում է Ուոլթը: – Նկատի ունի ամերիկյան պոեզիայի դասական Ուոլթ Ուիթմենին:

Էջ 261

Գոնոկոկներ - զուգավոր ախտահարույց մանրէներ, որոնք առաջացնում են մարդու միզասեռական ուղիների լորձաթաղանթի և աչքերի թարախային հիվանդություններ (սուսանակ, բլեննոռեա):

Ստրեպտոկոկներ - մանրէների տեսակ, որ հանդիպում է հողում, բույսերի, մարդու և կենդանիների մաշկի վրա: Հիվանդածին ստրեպտոկոկները ախտահարում են մարդուն ստրեպտոկոկային վարակով (քութեշ, նշկաբորբ, ստրեպտոդերմիա, սեպսիս և այլն):

Էջ 262

Սմերդյակով - Ֆյոդոր Դոստոևսկու «Կարամազով եղբայրներ» (1879-80) վեպի հերոսներից:

Էջ 266

Կվազիմոդո - Վիկտոր Հյուգոյի «Փարիզի Աստվածամոր տաճարը» վեպի (1831) ժամկոչը, որի անվամբ բնորոշում են սապատավոր, անճոռնի մարդուն:

Ալբրեխտ Դյուրեր (1471 - 1528) - գերմանացի նկարիչ, գերմանական Վերածնության խոշորագույն դեմքը: Աստվածաշնչի հայերեն անդրանիկ հրատարակությունը (Ամստերդամ, 1666) լույս է տեսել Դյուրերի նկարազարդմամբ:

Պիեռ դը Ռոնսար (1524 - 1585) - ֆրանսիացի բանաստեղծ, Վերածնության շրջանի «Պլեյադ» բանաստեղծական դպրոցի առաջնորդը:

Էջ 267

Եվկլիդես (ծն. և մահ. թթ. անհայտ) - հին հույն երևելի մաթեմատիկոս:

Էջ 268

...«Գարգանտյուա»-ից մեջբերում նկատեցի: - Նկատի ունի Ֆրանսուա Ռաբլեի հոչակավոր վեպը (1534)՝ ֆրանսիական գրականության կոթողներից մեկը:

...Ջոն Գիլփինի ձիավարման վրա էին ճոռում ... - խոսքը անգլիացի բանաստեղծ, ռոմանտիկական պոեզիայի նախակարապետներից մեկի՝ Ուիլյամ Քուփերի (1731 - 1800) «Ջոն Գիլփինի զվարճալի պատմությունը» կոմիկական բալլադի (1782) մասին է, որի մահուդավաճառ հերոսի հեծնած ձին խրտնում է ու գլխակորույս սլանում:

«Հերման և Դորոթեա» - Յոհան Վոլֆգանգ Գյոթեի պոեմը (1797):

Էջ 269

«Խոտի տերևները» - Ուոլթ Ուիթմենի բանաստեղծությունների աշխարհահռչակ ժողովածուն (1855):

թվայնացրել է 1915.info կայքը

Էջ 271

«Կենատրախ այրին» – հունգարացի կոմպոզիտոր Ֆերենց (Ֆրանց) Լեհարի օպերետը (1905):

Ժան Ռասին (1639 – 1699) – ֆրանսիացի դրամատուրգ, 1673-ից՝ Ֆրանսիական ակադեմիայի անդամ, համարվում է կլասիցիզմի խոշորագույն պոետը:

Պիեռ Կոռնեյլ (1606 – 1684) – ֆրանսիացի դրամատուրգ, 1647-ից՝ Ֆրանսիական ակադեմիայի անդամ, եվրոպական կլասիցիզմի ռահվիրաներից մեկը:

Էջ 273

Դանցիգի միջանցք կամ Լեհական միջանցք – այն նեղ հողակտորը, որը Առաջին աշխարհամարտից հետո վերադարձվեց Լեհաստանին 1919-ի Վերսալի հաշտության պայմանագրով և ելք էր տալիս երկրին դեպի Բալթիկ ծով: Այդ տարածքը Արևելյան Պրուսիան և Ազգերի լիգայի հովանու տակ գտնվող «Դանցիգ ազատ քաղաքը» (լեհական Գդանսկը) անջատում էր հետպատերազմյան Գերմանիայի մնացած մասից:

Էջ 274

Յոհան Գոթլիբ Ֆիխտե (1762 – 1814) – մեծանուն փիլիսոփա, գերմանական դասական իդեալիզմի ներկայացուցիչ:

Յուկպտան – Մեքսիկային, Գվատեմալային և Բելիզին պատկանող թերակղզի Կենտրոնական Ամերիկայում, Մեքսիկական ծոցի և Կարիբյան ծովի միջև:

Էջ 276

Այաքս – նկատի ունի հին հունական էպոսի տրոյական շարքի ահեղ հերոսներից մեկին՝ Աքիլլեսի զարմիկ, Սալամինի թագավոր Այաքս Տելամոնիդին, որը հայտնի էր իր ամեհի ուժով, քաջությամբ ու հաղթ հասակով: Ի նշան մեծարանքի՝ Սալամին քաղաքում նրա պատվին տաճար էր կառուցվել:

...կարծես Վերդիի օպերայից լինի, զնդանով խմբերգի տեսարանը... – խոսքը վերաբերում է «Տրուբադուր» օպերային (1850), որի 2-րդ արարվածում իսպանական գնչուների աշխատանքային խմբերգն արշալույսին ուղեկցվում է զնդանին իջնող մուրճի հնչեղ հարվածներով, որոնք Վերդին ընդգրկել է պարտիտուրում:

Էջ 308

Պորտ դ'Օթյոյ – փարիզյան մետրոյի կայարան:

թվայնացրել է 1915.info կայքը

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան. 3

Խեցգետնի արևադարձը. 13

Վերջաբան. 311

Ծանոթագրություններ. 314

ՀԵՆՐԻ ՄԻԼԵՐ

ԽԵՑԳԵՏՆԻ ԱՐԵՎԱԴԱՐՁԸ

HENRY MILLER

TROPIC OF CANCER

Թարգմանությունն անգլերենից
և ծանոթագրությունները՝
Ջավեն Բոյաջյանի

Տեխնիկական խմբագիր՝
Արարատ Թովմասյան
Սրբագրիչներ՝
Արմեն Օհանյան
Սարգիս Դավթյան
Համակարգչային էջադրումը՝
Մարիամ Էդիլյանի
Կազմը՝
«Անտարես» մեդիա հոլդինգի

«ԱՆՏԱՐԵՍ» հրատարակչատուն
Երևան 0009, Մաշտոցի 50ա/1
Հեռ.՝ +(374) 58 10 59, 56 15 26
Հեռ./ֆաքս՝ +(374) 58 76 69
antares@antares.am
www.antares.am